ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

ՀՀ ՊՆ Դ. ԿԱՆԱՅԱՆԻ ԱՆՎ. ԱԶԳԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ISSN 1829-0108

3 – 4 (81 – 82). 2014



«ՀԱՅԱՍՏԱՆԸ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԻ ՊԱՐՏՎԵԼՈՒ ԵՎ ՈՉ ՄԻ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ»

«АРМЕНИИ НЕ ДАНО ПРОИГРАТЬ НИ ОДНОЙ ВОЙНЫ»

«ARMENIA CAN NOT AFFORD TO LOSE ANY WAR»

ՊԱՅՔԱՐ ԱՐԱՏԱՎՈՐ ԲԱՐՔԵՐԻ ԴԵՄ

БОРЬБА С ПОРОЧНЫМИ НРАВАМИ

STRUGGLE AGAINST VICIOUS HABITS

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ՝ ԿԱՅՈՒՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՄԲ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈԽԼՐԱՑՄԱՄԲ

ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ ՌԴ Նախագահ Վլադիմիր Պուտինի հրավերով
ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի և Ադրբեջանի Նախագահ Իլհամ Ալիևի հանդիպումը.

Սոչի, 2014 թ. օգոստոսի 10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴՐԱՍՏԱՄԱՏ ԿԱՆԱՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

Լույս է տեսնում 1995 թվականից տարին չորս անգամ

3–4(81–82). **2014**

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Քոթանջյան Հ. Ս.
քաղաքական գիտությունների դոկտոր (ՌԴ), ՌԴ Ռազմական գիտությունների ակադեմիայի ընտրված իսկական անդամ, հակաահաբեկչության գծով գիտական փորձագետ (ԱՄՆ) (նախագահ)

Չիլինգարյան Դ. Ս.
(գլխավոր խմբագիր)

Ալեքսանյան Ա. Ջ.
Այդինյան Ռ. Ա.
Այվազյան Լ. Գ.
Ապրիամով Է. Ա.
Ավետիսյան Վ. Ն.
Դավթյան Ա. Մ.
Իսախանյան Մ. Ռ.
Խաչատրյան Տ. Վ.
Խաչատուրով Յու. Գ.
Կարապետյան Մ. Ն.
Մարգարյան Վ. Հ.
Մարտիրոսով Լ. Ա.
Միրզաբեկյան Ա. Ռ.
Մուրադյան Կ. Ռ.
Յալանուզյան Ա. Կ.
(գլխ. խմբագրի տեղակալ)
Յոլչյան Ն. Ի.
Նազարյան Ա. Ս.
Շիրինյան Մ. Ա.
Սեդրակյան Ս. Գ.
Վարդանյան Ա. Գ.
Տեր-Գրիգորյանց Ն. Գ.
Տոնոյան Դ. Է.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՊԱՅՔԱՐ ԱՐԱՏԱՎՈՐ ԲԱՐՔԵՐԻ ԴԵՄ

Ս. Մ. Օհանյան, Պաշտպանական բարեփոխումների համատեքստում զինվորական կարգապահության ամրապնդումը պետութենաշինության ու բանակաշինության արդիական տեսությունների հաշվառմամբ 9

Վ. Մ. Ավետիսյան, Քայքայիչ պաշտամունքների և փողոցային արատավոր բարքերի դեմ պայքարի ընդհանուր մեթոդաբանության հարցի շուրջ . 18

Ա. Ջ. Ալեքսանյան, Ա. Ռ. Գրիգորյան, ՀՀ ԶՈՒ-ում զինվորական կարգապահության ամրապնդման և դրա վրա բացասաբար ազդող երևույթների դեմ պայքարի հարցի շուրջ 27

Կ. Գ. Նահապետյան, Զինվորական կարգապահության ամրապնդման օրենսդրական միջոցառումները պաշտպանական բարեփոխումների շրջանակներում 35

Ա. Ռ. Ավետիսյան, Զինվորական կարգապահության ամրապնդման, զինվորական կառավարման համակարգի բարելավման և զինված ուժերում իրավակարգի պաշտպանության որոշ հարցեր՝ միջազգային անվտանգային զարգացումների համատեքստում 43

Ա. Ս. Բեգլարյան, Զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողությունը և զինվորական կարգապահությունը 53

Վրթանես եպիսկոպոս Աբրահամյան, Ռաֆայել սարկավագ Պետրոսյան, Արատավոր բարքերի խոցումն աստվածաբանական տեսանկյունից . . 65

Բ. Վ. Վարթանյան, Մաքրվել, կազդուրվել, զորանալ՝ սրբագործմամբ 72

Վ. Հ. Մարգարյան, ՀՀ ԶՈՒ-ում ոչ կանոնադրական հարաբերությունների համակարգի կենսունակությունը պայմանավորող գործոնների հարցի շուրջ 77

Զ. Դ. Ասատրյան, Պարտադիր զինվորական ծառայության զինծառայողների հոգեբանական ախտորոշման և կարգապահական խախտումների կանխարգելման հարցի շուրջ 88

Մ. Ա. Խաչատրյան, Հասարակական կազմակերպությունների դերը փողոցային արատավոր բարքերի դեմ պայքարում 97
Ե. Ռ. Ասատրյան, Է. Ա. Մանուկյան, Փորձաքննությունների համար ելակետային տվյալներ ձեռք բերելու պարտականություններ և փորձաքննություններ նշանակելու լիազորություն ունեցող ՀՀ ՊՆ իրավասու մարմինների աշխատողների վերապատրաստման որոշ հարցեր 103
Կ. Ե. Վարդանյան, Ջինծառայողների ինքնախեղիչ վարքի կանխարգելման ուղիները 111
Ա. Կ. Յալանուզյան, Պետական գաղափարախոսությունը՝ որպես հասարակության մեջ և բանակում հայրենասիրության սերմանմանը նպաստող գործոն 119

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Մ. Ս. Ավետիսյան, Ռազմավարական խաղերի էությունը և կազմակերպումը 133
Դ. Մ. Մանասյան, Նոր իրողություններ Մերձավոր Արևելքում. «Իսլամական պետությունը» և նրա արմատները, գաղափարախոսությունը, ռեսուրսները 139

ՀՈԳԵՎՈՐ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Բ. Վ. Վարթանյան, Հայոց բանակի ծխախոտազերծումը և հայ ազգային գաղափարախոսությունը 153

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Ա. Ռ. Ղալեչյան, Տեղեկատվական պայքարի հիմնական հասկացությունների հարցի շուրջ 159
Ա. Գ. Էլիբեգովա, Ադրբեջանում հայատեցության արմատավորումը՝ որպես միջազգային նորմերի խախտում Նախագահ Իլհամ Ալիևի պաշտոնական հայտարարությունների օրինակով 168

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Հ. Յ. Սայադյան, Ա. Ս. Սարդարյան, Ռադիոակտիվությունը կենսոլորտում ու նրա ազդեցությունը մարդու և շրջակա միջավայրի վրա 178

ՌԱԶՄԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ

Ռ. Գ. Խաչատրյան, Ռազմաբժշկական համակարգում միասնական տեղեկատվական ցանցի ներդրման արդիականությունը 185
Ս. Գ. Գալստյան, Ա. Վ. Նազարյան, Գ. Ռ. Վարդանյան, Կ. Մ. Աթոյան, Տեղային պատերազմներում ՀՀ ԶՈՒ-ի և այլ պետական կառույցների բուժծառայությունների համագործակցության հարցի շուրջ 192

ՌԱԶՄԱԿԱՆ ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Մ. Վ. Եփրեմյան, Հ. Ա. Մելքոնյան, Ցածր ամպամածության կանխատեսումը եղանակագիտական-վիճակագրական մեթոդով («Էրեբունի» օդանավակայանի օրինակով) 203

ՌԱԶՄԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Մ. Լ. Կարապետյան, Հայերի մասնակցությունը առաջին համաշխարհային պատերազմին 210
Ա. Կ. Հովհաննիսյան, Պատմահամեմատական մեթոդի կիրառման որոշ հարցեր . . 226
Հ. Հ. Հատիկյան, «Հատուկ կազմակերպության» հայաջինջ գործունեությունը հայոց Մեծ Եղեռնի տարիներին 235

ՌԱԶՄԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Դ. Ս. Չիլինգարյան, Ն. Ս. Մկրտչյան, Լ. Հ. Պապիկյան, Համարի բառարան . . 248

«АЙКАКАН БАНАК» («АРМЯНСКАЯ АРМИЯ»)
ВОЕННО-НАУЧНЫЙ ЖУРНАЛ ИНСТИТУТА
НАЦИОНАЛЬНЫХ СТРАТЕГИЧЕСКИХ ИССЛЕДОВАНИЙ
ИМЕНИ ДРАСТАМАТА КАНАЯНА
МИНИСТЕРСТВА ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
№ 3–4 (81–82)**. 2014**
Издается 4 раза в год

РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ

Котанджян Г. С., доктор политических наук (РФ), действительный избранный член Академии военных наук РФ, научный эксперт по контртерроризму (США) (председатель), *Чилингарян Д. С.* (гл. редактор), *Аветисян В. Н.*, *Айвазян Л. Г.*, *Айдинян Р. А.*, *Алексанян А. Дж.*, *Априамов Э. А.*, *Варданян А. Г.*, *Давтян А. М.*, *Елчян Н. И.*, *Исаханян М. Р.*, *Карапетян М. Н.*, *Маргарян В. Г.*, *Мартиросов Л. А.*, *Мирзабекян А. Р.*, *Мурадян К. Р.*, *Назарян А. С.*, *Седракян С. Г.*, *Тер-Григорьянц Н. Г.*, *Тоноян Д. Э.*, *Хачатрян Т. В.*, *Хачатуров Ю. Г.*, *Ширинян М. А.*, *Яланузян А. К.* (зам. глав. ред.)

СОДЕРЖАНИЕ

БОРЬБА С ПОРОЧНЫМИ НРАВАМИ

С. М. Оганян. Укрепление воинской дисциплины в контексте оборонных реформ с учетом современных теорий строительства государства и Вооруженных сил . . . . . 9 (16)*

В. М. Аветисян. К вопросу общности методологии борьбы с деструктивными культами и порочными уличными нравами 18 (26)

А. Дж. Алексанян, А. Р. Григорян. К вопросу укрепления воинской дисциплины в ВС РА и борьбы с негативно влияющими на нее явлениями 27 (32)

К. Г. Наапетян. Законодательные мероприятия по укреплению воинской дисциплины в рамках оборонных реформ 35 (41)

А. Р. Аветисян. Некоторые вопросы укрепления воинской дисциплины, совершенствования системы военного управления и защиты правопорядка в Вооруженных силах в контексте международных безопасностных развитий 43 (51)

А. С. Бегларян. Гражданский контроль над Вооруженными силами и воинская дисциплина 53 (62)

Епископ Вртанес Абраамян, дьякон Рафаел Петросян. Богословский аспект борьбы с порочными нравами 65 (71)

Б. В. Вартанян. Очиститься, выздороветь, укрепиться через освящение 72 (76)

В. Г. Маргарян. К вопросу о факторах, обусловливающих живучесть системы неуставных взаимоотношений в ВС РА 77 (86)

З. Д. Асатрян. К вопросу психологической диагностики и предотвращения дисциплинарных нарушений среди военнослужащих срочной службы 88 (95)

М. А. Хачатрян. Роль общественных организаций в борьбе против уличных порочных нравов 97 (102)

* Цифры в скобках обозначают страницу, с которой начинается текст на русском языке.

Е. Р. Асатрян, Э. А. Манукян. Некоторые вопросы квалификации работников правомочных органов МО РА, имеющих обязательства приобрести исходные данные для экспертиз и полномочия назначить экспертизу 103 (109)

К. Е. Варданян. Профилактика аутодеструктивного поведения военнослужащих 111 (117)

А. К. Яланузян. Государственная идеология как фактор, способствующий распространению патриотизма в обществе и армии 119 (131)

ПОЛИТОЛОГИЯ

М. С. Аветисян. Сущность и организация стратегических игр 133 (148)

Д. М. Манасян. Новые реалии на Ближнем Востоке — «Исламское государство»: корни, идеология, ресурсы 139 (149)

ДУХОВНАЯ БЕЗОПАСНОСТЬ

Б. В. Вартанян. Избавление от курения в Армянской армии и Армянская национальная идеология 153 (157)

ИНФОРМАЦИОННАЯ БЕЗОПАСНОСТЬ

А. Р. Галечян. К вопросу об основных понятиях информационной борьбы 159 (175)

А. Г. Элибегова. Насаждение арменофобии в Азербайджане как нарушение международных норм на примере официальных высказываний президента Ильхама Алиева 168 (176)

ЭКОЛОГИЧЕСКАЯ БЕЗОПАСНОСТЬ

А. Я. Саядян, А. С. Сардарян. Радиоактивность в биосфере и ее воздействие на человека и на окружающую среду 178 (183)

ВОЕННАЯ МЕДИЦИНА

Р. Г. Хачатрян. Актуальность внедрения в военно-медицинской системе единой информационной сети 185 (199)

С. Г. Галстян, А. В. Назарян, Г. Р. Варданян, К. М. Атоян. К проблеме взаимодействия медицинских служб ВС и других государственных структур РА в локальных войнах 192 (200)

ВОЕННАЯ МЕТЕОРОЛОГИЯ

М. В. Епремян, Г. А. Мелконян. Прогноз низкой облачности по синоптико-статистическому методу (на примере аэродрома «Эребуни») . 203 (208)

ВОЕННАЯ ИСТОРИЯ

М. Л. Карапетян. Участие армян в Первой мировой войне 210 (243)

А. К. Оганесян. Некоторые вопросы применения сравнительно-исторического метода 226 (244)

А. А. Атикян. Арменоцидная деятельность «Особой организации» в годы Геноцида армян 235 (245)

ВОЕННАЯ ТЕРМИНОЛОГИЯ

Д. С. Чилингарян, Н. С. Мкртчян, Л. Г. Папикян. Словарь номера . . 248 (252)

«HAIKAKAN BANAK» («ARMENIAN ARMY»)
DEFENSE-ACADEMIC JOURNAL,
DRASTAMAT KANAYAN INSTITUTE FOR NATIONAL STRATEGIC STUDIES,
MINISTRY OF DEFENSE, REPUBLIC OF ARMENIA

№ 3–4 (81–82)**. 2014**
Is published 4 times a year

EDITORIAL BOARD

Kotanjian H. S., Doctor of Political Sciences (RF), Fellow Member of the Academy of Military Sciences (RF), Counterterrorism Fellow (USA) (Chairman), *Chilingaryan D. S.* (Editor-in-Chief), *Alexanyan A. J.*, *Apreamov E. A.*, *Avetisyan V. N.*, *Ayvazyan L. G.*, *Davtyan A. M.*, *Idinyan R. A.*, *Isakhanyan M. R.*, *Karapetyan M. N.*, *Khachatourov Yu. G.*, *Khachatryan T. V.*, *Margaryan V. H.*, *Martirossov L. A.*, *Mirzabekyan A. R.*, *Muradyan K. R.*, *Nazaryan A. S.*, *Sedrakyan S. G.*, *Shirinyan M. A.*, *Ter-Grigoryants N. G.*, *Tonoyan D. E.*, *Vardanyan A. G.*, *Yalanuzyan A. K.* (Deputy Editor-in-Chief), *Yolchyan N. I.*

CONTENTS

STRUGGLE AGAINST VICIOUS HABITS

S. M. Ohanyan. Reinforcement of the military discipline in the context of defense reforms in view of modern theories of the development of the Armed Forces and state-building . . . . . 9 (17)*

V. M. Avetisyan. To the issue of commonality of the methodology of the struggle against destructive cults and vicious street habits 18 (26)

A. J. Alexanyan, A. R. Grigoryan. To the issue of strengthening military discipline in the RA Armed Forces and the struggle against phenomena having a negative influence on it 27 (33)

K. G. Nahapetyan. Legislative measures to strengthen military discipline within the defense reforms 35 (42)

A. R. Avetisyan. Some issues of military discipline strengthening, military management system improvement and protection of legal order in the Armed Forces within the context of international security developments 43 (52)

A. S. Beglaryan. Civilian control of the military and military discipline . . 53 (63)

Bishop Vrtanes Abrahamyan, Deacon Raphael Petrosyan. The theological aspect of the struggle against vicious habits 65 (71)

B. V. Vartanyan. To cleanse, heal and strengthen through consecration . . 72 (76)

V. H. Margaryan. On the factors providing the viability of the system of non-statutory relations in the RA Armed Forces 77 (87)

Z. D. Asatryan. To the issue of psychological diagnosis and prevention of disciplinary offenses among the conscripts 88 (96)

M. A. Khachatryan. The role of NGOs in the struggle against street vicious habits 97 (102)

* Numbers in brackets mean the page of the text in English.

Ye. R. Asatryan, E. A. Manukyan. Some issues on qualifying the employees of competent bodies of the MOD, RA having commitments for acquiring initial data for expertise and authorities for scheduling expertise 103 (110)

K. Ye. Vardanyan. The prevention of servicemen's self-destructive behavior 111 (118)

A. K. Yalanuzyan. State ideology as a factor contributing to dissemination of patriotism in the society and the army 119 (132)

POLITICAL SCIENCE

M. S. Avetisyan. The essence and organization of strategic games 133 (151)

D. M. Manasyan. New realities in the Middle East – «Islamic State»: roots, ideology, resources 139 (151)

SPIRITUAL SECURITY

B. V. Vartanyan. Getting rid of smoking in the Armenian Army and the Armenian national ideology 153 (158)

INFORMATION SECURITY

A. R. Ghalechyan. To the issue of main notions of information warfare . 159 (176)

A. G. Elibegova. Cultivation of Armenophobia in Azerbaijan as a violation of international norms in terms of President Ilham Aliyev's official statements 168 (177)

ECOLOGICAL SECURITY

A. Y. Sayadyan, A. S. Sardaryan. Radioactivity in the biosphere and its impact on the man and the environment 178 (183)

MILITARY MEDICINE

R. G. Khachatryan. The urgency of adopting an integrated information network in the Military Medical System 185 (201)

S. G. Galstyan, A. V. Nazaryan, G. R. Vardanyan, K. M. Atoyan. The problem of coordination between medical services of the Armed Forces and other RA state structures in local wars 192 (201)

MILITARY METEOROLOGY

M. V. Yepremyan, H. A. Melqonyan. The forecast of low cloudiness by the synoptic-statistical method (by the example of «Erebuni» airdrome) 203 (209)

MILITARY HISTORY

M. L. Karapetyan. The participation of the Armenians in the World War I 210 (245)

A. K. Hovhannisyan. Some issues of applying the comparative historical method 226 (246)

H. H. Hatikyan. The Armenocidal activity of the «Special Organization» in the years of the Armenian Genocide 235 (247)

MILITARY TERMINOLOGY

D. S. Chilingaryan, N. S. Mkrtchyan, L. H. Papikyan. Volume Dictionary . 248 (256)

ՊԱՅՔԱՐ
ԱՐԱՏԱՎՈՐ ԲԱՐՔԵՐԻ ԴԵՄ

БОРЬБА
С ПОРОЧНЫМИ НРАВАМИ

STRUGGLE
AGAINST VICIOUS HABITS

ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ ՊԵՏՈՒԹԵՆԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՈՒ ԲԱՆԱԿԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՄԲ

Ս. Մ. ՕՀԱՆՅԱՆ, քաղաքական գիտությունների թեկնածու, պաշտոնաթող գեներալ-գնդապետ, ՀՀ Պաշտպանության նախարար

Զինվորական կարգապահության ամրապնդումը և դրա ապահովման համակարգի զարգացումը յուրաքանչյուր կայացած բանակի առօրյա գործունեության կարևոր ուղղություններից են: «Բանակ» հասկացությունն առաջին հերթին զուգորդվում է հենց «կարգապահության» հետ: Հնագույն հասարակարգից մինչև մեր օրերը զինված ուժերի սոցիալական հաստատության կայացածության ու զարգացածության հիմնական ցուցիչը եղել է զինվորական կարգապահությունը: Թերևս սա է պատճառներից մեկը, թե ինչու համաշխարհային գիտական միտքը մշտապես հատուկ ուշադրություն է հատկացնում զինվորական կարգապահության և ընդհանրապես կարգապահության հարցերին՝ այն դիտելով որպես մարդկության կայուն առաջադիմական զարգացման շարժիչ ուժ:

Պատահական չէ, որ պետութենաշինության Վեբերի հայտնի տեսության ակունքներում այն գաղափարն է, որ զինվորական կարգապահությունը այսօրեական պետութենատիպ կազմակերպությունների ձևավորման ու գործառման հիմքն է: Ընդսմին այն պետք է լինի գիտակցական: Վեբերը, մասնավորապես, գրում է. «…այժմ ենթակայությունը հիմնված է ոչ թե քարիզմատիկ անձնավորության, մարգարեի, հերոսի կամ ավանդույթով սրբագործված տիրակալի անձնավորության նկատմամբ հավատի ու հավատարմության, … այլ անձնական բնույթից զուրկ օբյեկտիվ «ծառայողական պարտքի» վրա, որը, ինչպես և տիրապետելու իրավունքը, «իրավասությունը», որոշված է ռացիոնալ կերպով հաստատված նորմերի (օրենքների, հրահանգների, կանոնների) միջոցով այնպես, որ տիրապետության օրինականությունն արտահայտվում է ընդհանուր, նպատակաուղղված կերպով մտածված, ճշգրտորեն ձևակերպված ու հրապարակված կանոնների լեգալությամբ»: Խոսելով տիրապետության և ենթակայության հիմքերի մասին՝ Վեբերն ավելացնում է. «…. տիրապետություն, որն իրականանում է «լեգալության», իրավական *կարգի* վավերականության և ռացիոնալ կերպով ձևավորված կանոններով հիմնավորված առարկայական «բանիմացության» նկատմամբ հավատի ուժով, այսինքն՝ կողմնորոշում՝ անվերապահորեն կատարելու օրինական կարգով սահմանված պարտականությունները, տիրապետություն, որն իրականացնում են ժամանակակից «պետության ծառան» և բոլոր նրան նմանվող իշխանավորները: Հասկանալի է, իհարկե, որ իրականում վախի և

հույսի ծայրահեղ զորեղ գործոններն են (վախ մոգական ուժերի և իշխանավորների վրեժից, և հույս՝ կապված այնկողմնային կամ այսկողմային վարձատրության հետ), որ այլևայլ շահերի հետ մեկտեղ ապահովում են խոնարհությունը: .... Բայց երբ մարդ հարց է տալիս խոնարհությունը «լեգիտիմացնող» հիմքերի մասին, ամեն դեպքում հանդիպում է այդ երեք «մաքուր» տիպերին: Եվ այդ լեգիտիմացնող պատկերացումներն ու դրանց ներքին հիմնավորումը մեծագույն նշանակություն ունեն տիրապետության կառուցվածքի համար»[1]: Ըստ այդմ՝ գիտակցական զինվորական կարգապահության սկզբունքների վրա խարսխվող կառավարման մոդելը, Վեբերի կարծիքով, ցանկացած պետութենատիպ կազմակերպության գործունեության արդյունավետության մեծացման անհրաժեշտ պայմանն է[2]:

Սրանից բխում է, որ զինվորական կարգապահության ամրապնդումը, լինելով պաշտպանական բարեփոխումների կարևոր նպատակներից մեկը, պետք է մշտապես լինի զինվորական կառույցի ղեկավար կազմի հոգածության առարկա և պայմանավորված չլինի բարեփոխումների որևէ փուլով: Ի վերջո, պետք է ընդունել, որ առանց զինվորական կարգապահության անիմաստ է խոսել ինչ-որ բան բարեփոխելու մասին, քանի որ յուրաքանչյուր բարեփոխում առաջին հերթին ենթադրում է եղածի հիմքի վրա կարողությունների կամ երևույթների համալրում նոր արժեքային հատկանիշներով:

Այս իմաստով թերևս անհրաժեշտություն կա քննարկելու «զինվորական կարգապահություն» հասկացության որոշ առանձնահատկություններ: Իրավական տեսանկյունից, «զինվորական կարգապահության» սահմանումը կարծես թե հստակ է: Համաձայն «Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ Օրենքի երկրորդ հոդվածի առաջին մասի՝ զինվորական կարգապահությունը «յուրաքանչյուր զինծառայողի կողմից Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, սույն օրենքով, այլ օրենքներով ու Զինված ուժերում գործող այլ կանոնագրքերով, ինչպես նաև հրամանատարների (պետերի)՝ իրենց լիազորությունների շրջանակներում տված հրամաններով սահմանված պարտականությունների և կարգուկանոնի խստիվ ու ճշգրիտ պահպանումն է»[3]: Նույն հոդվածի երկրորդ մասում սահմանվում է, որ «զինվորական կարգապահությունը հիմնվում է օրինականության, մարդու իրավունքների և ազատությունների հարգման, հրապարակայնության, խրախուսման ու կարգապահական պատասխանատվության անխուսափելիության և անհատականաց-

[1] *Max Weber*. Wirtschaft und Gesellschaft Grundriss der Verstehenden Soziologie. Thübingen: Mohr, 1980, SS. 822–823 (շնորհակալություն եմ հայտնում ԳԴՀ-ում և Ավստրիայում ՀՀ նախկին դեսպան, փիլիսոփայական գիտությունների թեկնածու Ա. Ոսկանյանին այս հատվածի թարգմանության համար):

[2] Տես նույն տեղում:

[3] «Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ 2012 թ. ապրիլի 10-ի հմ. ՀՕ-91 օրենքը (http://parliament.am/legislation.php?sel=show&ID=4510&lang=arm):

ման, զինծառայողների զինվորական, իրավական ու բարոյական դաստիարակության սկզբունքների վրա»[4]:

Զինվորական կարգապահության այս սահմանումից երևում է, որ մենք գործ ունենք զինվորական կարգապահության սոսկ իրավական, կամ պայմանականորեն՝ «նեղ իմաստով», սահմանման հետ, որի առանցքում կանոնների հստակ պահպանումն ու կատարումն են և իրավական որոշակիությունը: Անշուշտ, սա չի նշանակում, թե իրավական, կամ «նեղ իմաստով», սահմանումը նվազ կարևոր է: Բնականաբար, զինվորական կարգապահության ապահովման հիմնական չափանիշները բխում են հենց այս դրույթից, և դրանց ապահովման հարցում թերացումները կարող են հանգեցնել զինված ուժերի գործունեության արդյունավետության նվազման լուրջ վտանգի:

Սակայն, ինչպես վերը նշվեց, Զինված ուժերի բնականոն կենսագործունեության համար առանցքային նշանակություն ունի ոչ միայն զինվորական կարգապահության համակարգի ամրապնդումը, այլև զարգացումը, որն առավելապես սոցիալական գործընթաց է: Եվ քանի որ զինվորական կարգապահության համակարգի զարգացումն ապահովելու համար առկա իրավական սահմանումը բավարար սոցիալ-գաղափարական հիմք չի ապահովում, անհրաժեշտ է զինվորական կարգապահությունը դիտարկել ավելի լայն իմաստով:

Լայն իմաստով զինվորական կարգապահությունը թերևս պետք է դիտել որպես մի համակարգային երևույթ, որը ներառում է իրավական, սոցիալական, քաղաքական, հոգեբանական, բարոյական գործոններ ու բաղադրիչներ, և որոնց սիներգիկ համադրման միջոցով է հնարավոր կարգապահության մակարդակը համապատասխանեցնել ժամանակի մարտահրավերներին ու պահանջներին:

Հետարդյունաբերական հասարակությանը բնորոշ հարափոփոխ անվտանգային միջավայրում զինվորականների սոցիալական խմբի արդյունավետ կառավարման համար կարևոր է դառնում զինվորական կարգապահության մասին ավանդական պատկերացումները լրացնել նոր գաղափարներով և անգամ էապես վերանայել դրանք: Այնպիսի ավանդական կարգապահական խնդիրների լուծումը, ինչպիսիք են՝ համազգեստի կրման կանոնների կատարումը, զինվորական ողջույնը, հրամաններին անվերապահ ենթարկումը, օրվա կարգացուցակի պահպանումը և այլն, կարող են բավարար չլինել արդի անվտանգային միջավայրում ծագող խնդիրների լուծման համար: ՈՒստի անհրաժեշտություն է առաջանում ի հայտ բերելու զինվորական կարգապահության ամրապնդման պահանջ զգացող, ինչպես նաև այդ համակարգի զարգացմանը խոչընդոտող բոլոր խնդիրները և փորձելու տալ դրանց լուծման եղանակները: Իսկ դա հնարավոր է միայն զինվորական կառավարման համակարգում կառավարման նոր տեսությունների կիրառմամբ և զինված ուժերի պահանջներին դրանց համապատասխանեցմամբ, ինչին էլ ձեռնամուխ են եղել ՀՀ Զինված ուժերը:

Առաջին հերթին պետք է հաշվի առնել, որ զինվորական կարգապահության համակարգի զարգացման համար անհրաժեշտ է պրոֆեսիոնալիզմ: Իսկ զինված

[4] Նույն տեղում:

ուժերի՝ որպես սոցիալական հաստատության կայացման ու զինվորական մասնագիտության պատմական ձևավորման ընթացքից բխում է, որ զինվորական պրոֆեսիոնալիզմը ձևավորվում է առաջին հերթին սպայակազմի միջավայրում (սերժանտական/ենթասպայական կազմի պրոֆեսիոնալացմանը զուգընթաց այս կազմը ևս սկսում է դիտվել որպես սպայակազմին համարժեք): Դա ունի իր պատճառները: Սպայակազմի ներկայացուցիչները՝

– զինվորական գործի հետ կապված են առավել կայուն կերպով, քանի որ այն նրանց համար մշտական զբաղվածության տեսակ է,

– ի տարբերություն զորակոչիկներից՝ կամավոր են ընտրել այդ մասնագիտությունը և հստակ կերպով գիտակցում են (կամ պարտավոր են գիտակցել) իրենց դերը այդ կառույցի զարգացման գործում,

– ի տարբերություն զորակոչիկներից՝ նրանց մասնագիտության հիմնական խնդիրը ոչ թե հակառակորդի նկատմամբ բռնության կիրառումն է, այլ բռնության կիրառման կառավարումը:

Սրանից հետևում է, որ զինվորական կարգապահության զարգացման պատասխանատվությունը հիմնականում դրված է սպայակազմի վրա: Ընդ որում, կարգապահության ամրապնդումը չի ենթադրում միայն զորակոչիկների կողմից զինվորական կարգուկանոնի պահպանման նկատմամբ խիստ հսկողություն կամ կարգապահական խախտումների կանխարգելում: Զինվորական կարգապահությունն սկսվում է իր «ես»-ի նկատմամբ սպայի հատուկ պահանջների սահմանումից: Այս պարագայում զինվորական կարգապահության զարգացումն ընկալվում է որպես շարունակական ինքնազարգացմամբ ու հմտությամբ կարողությունների անընդհատ կատարելագործման չավարտվող շրջան: Դա նպաստում է ինքնատիրապետման, առաջին հերթին՝ իր անձի և դրա միջոցով նաև շրջապատի նկատմամբ հարգանքի ձևավորմանը, անձի գործունեության արդյունավետության մեծացմանը և խմբային ընդհանուր շահերին այդ ամենի համապատասխանեցմանը: Այսինքն՝ զինվորական կարգապահությունն ապահովվում է իր անձի նկատմամբ հստակ չափանիշների սահմանման, դրանց պարբերական կատարելագործման և խմբային շահին դրա ծառայեցմանն ուղղված գործողությունների համախմբի միջոցով: Բնականաբար, յուրաքանչյուր անձ, լինի նա սպա, թե այլ մասնագիտության տեր մարդ, առաջին հերթին անհատականություն է, որը կարող է ունենալ նաև այնպիսի անձնային ուղղվածություն ու արժեհամակարգ, որոնք ոչ միայն հարիր չեն սպային, այլև կարող են վտանգավոր լինել զինվորական խմբի համար: Ահա այստեղ է, որ նման սպային օգնության պետք է գան լայն իմաստով զինվորական կարգապահության մասին նրա պատկերացումները (առաջին հերթին՝ կարգասիրությունը)՝ որպես նրա բացասական ձգտումները զսպող շապիկ: Ընդսմին կարևոր է, որ իր անձի համար կարգապահական շրջանակների՝ սպայի հստակեցումը չվերածվի ինքնանպատակի, այլ անհրաժեշտ բարենպաստ ազդեցություն գործի խմբային կարգապահության ամրապնդման դինամիկայի վրա: Բացի այդ, սպայի «Ես»-ի և «ՈՒրիշի անդադրում պայքարի» պայմաններում հույժ կարևոր է, որ ինքնազարգացումը և կարգասիրության ձևավորումը ուղղորդվում են հայրենասիրական կողմնորոշումներով ձևավորված

արժեհամակարգով ու համապատասխան աշխարհայացքով: Դա իր հերթին ենթադրում է զինվորական կրթության համակարգի արդիականացմամբ և զինվորական վարքականոնների, զինվորական առաջնորդության ու զինվորական իրավունքի ուսուցմամբ իրենց էությամբ ազգային, ձևով՝ արդիական սոցիալ-բարոյական նորմերի արմատավորում:

Վերը նշված մոտեցումները հստակ կերպով արտացոլվում են վերջին մի քանի տարիներին ՊՆ իրականացրած բարեփոխումների ծրագրերում և դրված են նոր զինվորական մշակույթի ձևավորմանը նպատակաուղղված քաղաքականության հիմքում[5]: Գործընկեր միջազգային և հասարակական կազմակերպությունների աջակցությամբ և նրանց փորձագիտական ներուժի անկաշկանդ ներգրավմամբ վերջին մի քանի տարիներին իրականացվել և իրականացվում են մի շարք փորձարարական ծրագրեր, որոնց դրական ազդեցությունն արդեն տեսանելի է:

2012 թ. մշակվեց «Զինվորական առաջնորդություն. Զինվորական կոլեկտիվի արդյունավետ կառավարման հիմնախնդիրներ» ձեռնարկը[6], որը հիմք է ծառայել ՀՀ ՊՆ ռազմաուսումնական հաստատություններում հատուկ ուսումնական դասընթացի ներդրման համար: Պետք է նշել, որ նախքան դասընթացի ներդրումը մենք կատարեցինք հատուկ գիտափորձ, որի նպատակն էր զինվորական առաջնորդության կարճաժամկետ դասընթացների միջոցով պարզել, թե կենտրոնական ապարատից դուրս՝ զորամիավորումների և հեռավոր վայրերում գտնվող զորամասերի անձնակազմը ինչպես է ընկալում զինվորական կառավարման ու զինվորական կարգապահության ամրապնդման նոր մեթոդներն ու միջոցները, որոնք առաջին հայացքից թե՛ բովանդակությամբ և թե՛ ձևով տարբերվում էին ավանդականներից: Արդյունքներն ընդհանուր առմամբ զոհացուցիչ էին: Անգամ բարձրաստիճան սպաները և ստաժավոր զինծառայողները, որոնք, թվում է, թե պետք է ավելի կառչած լինեին զինվորական հաստատությանը բնորոշ կառավարման կարծրատիպային ձևերից, աստիճանաբար ձերբազատվելով սկզբնական թերահավատությունից, սկսում էին շեշտված հետաքրքրություն ցուցաբերել նոր մոտեցումների նկատմամբ: Սակայն նրանք մտահոգություն էին հայտնում, որ կարգապահության մակարդակի ամրապնդման նկատմամբ առաջարկվող մոտեցումներով բավական բարդ կլինի աշխատելը, քանի որ դրանք իրենց բնույթով ավելի մեղմ են՝ գերազանցապես հիմնված համոզման մեթոդի վրա: Հիմնական բացատրությունն այն էր, որ զորակոչիկների իրավագիտակցությունն ու ընդհանուր հասարակական գիտակցությունը ցածր մակարդակի են, նրանք դժվար են հարմարվում զինվորական կարգուկանոնին, քանի որ նույնիսկ քաղաքացիական կյանքում հասարակական համակեցության սովորական կանոններին պատշաճ

[5] Տես «ՀՀ ռազմական դոկտրին»: «Աշխատանքային տետրեր», 2007, հմ. 4, «Պաշտպանության ռազմավարական վերանայում 2011–2015», հանրային օգտագործման համար (http://www.mil.am/files/SDR-Arm.pdf):

[6] Տես *Ա. Վ. Աբանեսյան, Ա. Կ. Շաքարյան, Վ. Հ. Ավետիքյան, Ա. Ռ. Ավետիսյան, Դ. Կ. Հարությունյան,* Զինվորական առաջնորդություն. Զինվորական կոլեկտիվի արդյունավետ կառավարման հիմնախնդիրներ: Ձեռնարկ: Ե., 2012:

կերպով չեն ենթարկվում, և դա կապում էին դպրոցի, ընտանիքի ու հասարակական ոչ պաշտոնական վարքականոնների, կամ այսպես կոչված «արժեհամակարգի» հետ:

Նման մոտեցումը մեզ համար բացարձակապես ընդունելի չէ: Կարգապահական խնդիրները զորակոչիկների ցածր անձնային-որակական հատկանիշներով պայմանավորելը ոչ այլ ինչ է, եթե ոչ սպայակազմի կողմից իր անզորության ընդունում: Չէ՞ որ, մյուս կողմից, կարող է հարց ծագել, թե արդյոք սպայակազմի անդամները բավարար չափով են պատրաստված, ձգտում են ինքնակատարելագործման ու իրենց ներքին կարգապահության ամրապնդման, թե՝ ո՛չ: Հետևաբար, վերադառնալով «լայն իմաստով» զինվորական կարգապահությանը, մեկ անգամ ևս պետք է փաստել, որ կարգապահության ամրապնդման խնդիրների առկայության պայմաններում, նախքան մեղավորներ փնտրելը, պետք է սկսել իր «Ես»-ի որակական կարողությունների մանրակրկիտ վերլուծությունից:

Կարգապահության ամրապնդման մյուս կարևոր ուղղությունը զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության ապահովումն է: Մարդը, նրա իրավունքները, ազատությունները և անվտանգությունը այն հիմնարար և անկյունաքարային երևույթներն են, որոնք ձևավորում են հասարակության և պետության հիմքը, և որոնց հիման վրա են կառուցվում վերնաշենքի սոցիալ-քաղաքական հաստատությունները: Ուստի այդ հաստատությունների համար մեկ խնդիրը, անկախ դրանց գործառույթների շրջանից, մարդու իրավունքների երաշխավորումն է: Եվ բանակն այստեղ բացառություն չէ: Հաճախ հնչում են կարծիքներ, թե «բանակը հասարակության հայելին է», հետևաբար՝ հասարակության մեջ կուտակված բացասական էներգիան բանակի նման «փակ» համակարգում խտացվելով՝ հանգեցնում է մարդու իրավունքների խախտումների: Սա մենք համարում ենք առնվազն անհեթեթ արդարացում: Ճիշտ է, պետք չէ ժխտել, որ զորակոչի հիման վրա ձևավորվող բանակն ամեն դեպքում կրում է հասարակության ազդեցությունը, լինի դա վատ, թե՝ լավ: Սակայն բանակի «փակ» կառույց լինելու հանգամանքն այս դեպքում պետք է ոչ թե ծառայեցնել անպատասխանատու մարդկանց թերի աշխատանքի արդարացմանը, այլ հասարակությունից ներթափանցող վատ երևույթների դեմ պայքարում օգտագործել որպես հաղթաթուղթ:

2014 թ. մեր կողմից հռչակվել է «Զինված ուժերում փողոցային բարքերի դեմ պայքարի» տարի[7]: Դրա շրջանակներում փորձ է արվում բանակին բնորոշ խիստ կարգուկանոնն ու առօրյան զուգորդելու փոխհարաբերությունների, շփման վարքականոնների և մտածողության վրա համալիր ազդեցության միջոցներով: Այլ կերպ ասած՝ բանակը, լինելով «փակ» կառույց, կարող է օգտագործվել որպես զտիչ, որով անցնելով՝ երիտասարդները վերահիմաստավորեն իրենց առօրեական աշխարհընկալումը և հասարակություն վերադառնան քրեական «ռոմանտիկայից», «կեղծ տղամարդկային» արժեհամակարգային մոլորություններից ձերբազատված: Սա դժվար իրագործելի ծրագիր է, քանի որ հասարակության բավական ստվար զանգված չափից ավելի շատ է ներծծված այս «քվազիհանցավոր» գա-

[7] Տես «ՀՀ Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի 2014 թվականի տարեմուտի ուղերձը»:

ղափարախոսությամբ, և անգամ ուժային կառույցների (այդ թվում նաև բանակի) սպայակազմը հաճախ ապավինում է հարաբերությունների կազմակերպման կամ խնդիրների լուծման տվյալ վտանգավոր մշակույթին: Սակայն դրա դեմ պայքարը աստիճանաբար տալիս է իր պտուղները, քանի որ Զինված ուժերում կարգապահության ամրապնդման և մարդու իրավունքների պաշտպանության նպատակով հարաբերությունների նոր մշակույթին անցումը կատարվում է դինամիկ տեմպերով և հիմնավորապես ուղղորդվում ու զարգացվում է մեր կողմից:

Պետք է նշել, որ հաստատութենական մակարդակի վրա է դրված թե՛ նախազորակոչիկների, թե՛ կուրսանտների, թե՛ պարտադիր ժամկետային զինծառայողների, թե՛ սպայակազմի շրջանում մարդու իրավունքների ուսուցումը: Պատրաստվել են ուսումնական ձեռնարկ և ուսումնական մեթոդիկա, լրացուցիչ դասընթացներ են կազմակերպվում ու անցկացվում նախազորակոչիկի ռազմահոգեբանական ու սոցիալական պատրաստման ուղղությամբ: ՈՒշադրությունից դուրս չեն մնում անգամ հանրակրթական դպրոցների նախազորակոչային պատրաստման ուսուցիչները, որոնց համար հատուկ վարժանք-պարապմունքներ են անցկացվում նախազորակոչիկներին զինվորական կարգապահությանն ու զինվորական կարգուկանոնին աստիճանաբար մոտեցնելու, բանակը և բանակային մշակույթը ճիշտ ներկայացնելու համար: Գործընկեր կազմակերպությունների հոգեբանների և իրավաբանների խմբի կողմից ավագ դպրոցներում անցկացվում է «նախազորակոչային տարիքի երիտասարդների զինվորական հոգեբանական և սոցիալ-իրավական պատրաստման» ծրագիր: Վերջին մի քանի տարիներին զորամիավորումներում, ՌՈՒՀ-երում և զինվորական ոստիկանության անձնակազմի համար կազմակերպվում են «Մարդու իրավունքները զինված ուժերում» թեմայով դասընթաց-պարապմունքներ: Հատուկ ուշադրություն է դարձվում տարբեր մակարդակի ստորաբաժանումների հրամանատարների՝ անձնակազմի հետ տարվող աշխատանքների գծով տեղակալների վերապատրաստմանը, քանի որ նրանք են ուսուցման ու սոցիալ-գաղափարախոսական աշխատանքի միջոցով զինվորական կարգապահության ամրապնդման հիմնական պատասխանատու օղակը:

Ամփոփելով վերը նշվածը՝ պետք է փաստել, որ, չնայած օբյեկտիվ և սուբյեկտիվ բարդություններին ու խնդիրներին, ՊՆ-ն մշտապես դիտում է Զինված ուժերում կարգապահության ամրապնդումը, մարդու իրավունքների երաշխավորումն ու պաշտպանությունը որպես առաջնահերթություն, որին ուղղված է բարեփոխումային ծրագրերի առյուծի բաժինը:

ՀՀ պաշտպանության նախարարությունը որպես ՀՀ պաշտպանական կառույցի ապագայի տեսլական է դիտում արդեն իրագործվող «մարդակենտրոն» բանակի ստեղծման հայեցակարգը, մի բանակի, որում զինվորը համարվում է ոչ թե սպառման ենթակա ռեսուրս, այլ գլխավոր արժեքը:

УКРЕПЛЕНИЕ ВОИНСКОЙ ДИСЦИПЛИНЫ В КОНТЕКСТЕ ОБОРОННЫХ РЕФОРМ С УЧЕТОМ СОВРЕМЕННЫХ ТЕОРИЙ СТРОИТЕЛЬСТВА ГОСУДАРСТВА И ВООРУЖЕННЫХ СИЛ

С. М. ОГАНЯН, кандидат политических наук, генерал-полковник в отставке, Министр обороны РА

РЕЗЮМЕ

Укрепление воинской дисциплины и развитие системы ее обеспечения являются важными направлениями повседневной деятельности каждой состоявшейся армии. Мировая научная мысль постоянно уделяет особое внимание вопросам дисциплины и воинской дисциплины, в частности, рассматривая их в качестве движущей силы устойчивого прогрессивного развития человечества. В данном аспекте дисциплину можно рассматривать и через призму основополагающей концепции теории строительства бюрократического государства М. Вебера, согласно которой воинская дисциплина является основой формирования и функционирования государствоподобных организаций.

Воинская дисциплина как системное явление включает правовые, социальные, политические, психологические и нравственные факторы и составляющие, и только посредством их синергического синтезирования возможно привести уровень дисциплины в соответствие с вызовами времени и требованиями решаемых задач.

МО РА рассматривает проблему укрепления дисциплины в Вооруженных силах в свете гарантирования и защиты прав человека. Это означает, что дисциплина должна стать для солдата осознанной необходимостью. В связи с этим растут и требования, предъявляемые к офицерскому составу как ответственному за укрепление воинской дисциплины и выполняющему функции воспитателя, а именно: служба офицера должна являться непрерывным процессом повышения профессиональных возможностей путем саморазвития и углубления специальных навыков.

Таким образом, МО РА видит конечную цель оборонных реформ в создании по уже осуществляемой концепции «антропоцентричной» армии, где солдат является не растрачиваемым ресурсом, а самой главной ценностью.

REINFORCEMENT OF THE MILITARY DISCIPLINE IN THE CONTEXT OF DEFENSE REFORMS IN VIEW OF MODERN THEORIES OF THE DEVELOPMENT OF THE ARMED FORCES AND STATE-BUILDING

S. M. OHANYAN, PhD in Political Science, Colonel General (ret.),
Minister of Defense, RA

SUMMARY

Reinforcement of the military discipline and development of its support system are key directions in the routine activity of every established army. A particular attention has constantly been paid to the questions of discipline and military discipline by the world scholars and academicians, particularly, regarding them as a driving force for the stable progressive development of the humanity. In this aspect the discipline may be considered also through the prism of fundamental concepts of Max Weber's theory of bureaucratic state-building, according to which the military discipline is the basis for the formation and functioning of state-like organizations.

As a systemic phenomenon the military discipline embraces legal, social, political, psychological and moral factors and components, and only by means of their synergistic synthesis the level of the discipline is possible to ensure in compliance with the challenges of the time and requirements of the tasks to be handled with.

The Defense Ministry of Armenia considers the problem of reinforcement of the discipline in the Armed Forces in the light of guaranteeing and protecting human rights. This means that the discipline should become a perceived necessity for a soldier. In this regard, the requirements imposed on the officers, as the personnel responsible for the reinforcement of the military discipline and for carrying out the mentors' functions, multiply. Notably, a serving officer should be in the continuous process of improving professional capabilities by means of self-development and enhancing special skills.

Thus, the Defense Ministry of Armenia anticipates the ultimate target of defense reforms in the formation of «anthropocentric army» according to the conception already in practice, where a soldier is not a wasted resource but rather the most important value.

ՔԱՅՔԱՅԻՉ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՓՈՂՈՑԱՅԻՆ ԱՐԱՏԱՎՈՐ ԲԱՐՔԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Վ. Մ. ԱՎԵՏԻՍՅԱՆ, ՀՀ ՊՆ Տ և ՀԿ վարչության պետ,
ՔՀՃ առաջին դասի պետական խորհրդական

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության» համաձայն՝ «Ազգային անվտանգության դեմ ուղղված սպառնալիքներն են՝ պետության, հասարակության, ընտանիքի և անհատի գոյության դեմ ուղղված, դրանց հիմքերը խարխլող կամ հեռանկարային վտանգ ներկայացնող երևույթները, գործողություններն ու անգործությունը: Այդպիսի սպառնալիքներ կարող են ծագել երկրի ներսում (ներքին սպառնալիքներ) և երկրի սահմաններից դուրս (արտաքին սպառնալիքներ)»:

Ներքին սպառնալիքներից է բարոյահոգեբանական և հայրենասիրական դաստիարակության թերի վիճակը: ՈՒստի «հասարակության և անհատի բարոյահոգեբանական ու հայրենասիրական դաստիարակությունը պետք է սկսվի ընտանիքում և շարունակվի կրթության բոլոր մակարդակներում: Պետականության հանդեպ պատշաճ հարգանքի, առողջ ապրելակերպի, ընտանիքի ավանդական դերի նկատմամբ վերաբերմունքի դաստիարակության դեռևս ոչ բավարար մակարդակը և ազգային ինքնության աղավաղումը սպառնալիքներ են ազգային անվտանգության համար»[1]:

Քանի որ այսպես կոչված «քայքայիչ պաշտամունքների» քարոզած արժեքներն ուղղված են հենց անհատի, ընտանիքի և պետության դեմ[2], դրանց գործունեությունն ազգային անվտանգության դեմ ուղղված անմիջական սպառնալիք է:

Քայքայիչ պաշտամունքները լուրջ խոչընդոտներ են ստեղծում ՁՈՒ-ում կոլեկտիվների համախմբման և կարգապահության ամրապնդման համար: Մտահոգիչ են հետևյալ տվյալները. 2012 թվականի առաջին զորակոչով հայկական բանակ է զորակոչվել 28 աղանդավոր զինվոր, 2013 թվականի առաջին զորակոչով՝ 109, իսկ երկրորդ զորակոչով՝ արդեն 148: Նորակոչիկների շրջանում ընդամենը մեկուկես տարվա ընթացքում բացահայտ աղանդավորների թիվն աճել է ավելի քան հինգ անգամ:

2012–2013 թվականներին կրոնական համոզմունքների պատճառով 53 պատանի հրաժարվել է զինվորական ծառայության մեկնելուց, նրանցից 18-ը դատա-

---

[1] Տես «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն»: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, 2007, էջ 21–22:

[2] Տես, օրինակ՝ *Александр Дворкин*. Сектоведение. Нижний Новгород, 2000:

պարտվել է ազատազրկման: Անցյալ տարի այդ նույն պատճառով քրեակատարողական հիմնարկներում իրենց պատիժն էին կրում 33 երիտասարդ, որոնցից 20-ը «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունից[3] հետո ազատազրկման վայրից դիմել էին այլընտրանքային ծառայության անցնելու խնդրանքով, և նրանց խնդրանքը բավարարվել է:

2013 թվականի սկզբին՝ ընդամենը մեկ ամսվա ընթացքում, քայքայիչ ենթամշակույթների ազդեցությամբ ինքնասպան է եղել երկու զինվոր: Նրանց անձնական իրերի մեջ հայտնաբերվել են սատանայապաշտական խորհրդանիշներ:

Այսպիսով՝ պրոբլեմը հրատապ է:

Հրատապ է նաև փողոցային արատավոր բարքերի դեմ պայքարի պրոբլեմը: ՀՀ Պաշտպանության նախարար Ս. Օհանյանը 2014 թվականի «Բանակը մեր տունն է, մեր ամրոցը» տարեմուտի ուղերձում նշում է, որ այդ երևույթների «պատճառը՝ չարիքի արմատը, հայրենասիրության պակասն է»[4]: Հետազոտությունները հաստատում են այս պնդումը: ՀՀ ՊՆ տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչությունը դեռ 2013 թվականի ամռանը 1500 երիտասարդների շրջանում անցկացրեց «Երիտասարդական հայացք» սոցիոլոգիական հարցում: Պարզվեց, որ հարցվողներից և ոչ մեկի կյանքի կարգախոսը չի առնչվում Հայրենիքին կամ հայրենասիրությանը, իսկ հարցվողների 58,5 %-ն իդեալ չունի:

Մեր հասարակության գրեթե բոլոր շերտերում (ցավոք, նաև բանակում) կան մարդիկ, որոնք, չլինելով հանցագործ, կրկնօրինակում կամ փորձում են կրկնօրինակել այսպես կոչված «քրեական ենթամշակույթի» կրողներին, ընդսմին այս շերտը բավական բազմամարդ է: Նրանք սիրում են լսել քրեական ենթամշակույթին բնորոշ երաժշտություն, խոսելիս գործածում են այդ ենթամշակույթին բնորոշ բառապաշար, ժարգոնային բառեր, իդեալականացնում են այդ ենթամշակույթի գաղափարախոսությունն ու ռոմանտիզմ փնտրում դրա մեջ[5]: Սա նույնպես ազգային անվտանգության դեմ ուղղված ներքին սպառնալիք է:

Նշված երկու պրոբլեմները՝ քայքայիչ պաշտամունքների և քրեական ենթամշակույթի դեմ պայքարը, այս հոդվածում քննության են առնվում միասնական հայեցակետից. երկուսն էլ լուրջ խոչընդոտներ են ստեղծում ԶՈՒ-ում կարգապահության ամրապնդման համար, և այդ երևույթների միջև կա էական նմանություն:

---

[3] Տես ««Այլընտրանքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ 2013 թ. մայիսի 2-ի հմ. ՀՕ-31-Ն օրենքը («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2013, հմ. 28 (968)):

[4] Տես «ՀՀ Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի 2014 թվականի տարեմուտի ուղերձը», էջ 23:

[5] Տես *Վահրամ Միրաքյան*, Գողական ենթամշակույթի սոցիալ-մշակութային դրսևորումները Հայաստանում. «Բանակ և հասարակություն. փողոցային արատավոր բարքերի դեմ պայքարի արդիական հիմնախնդիրը» հոդվածների ժողովածու: Ե., 2014:

«ՔՐԵԱԿԱՆ» ԵՆԹԱՄՇԱԿՈՒՅԹԸ՝ ՈՐՊԵՍ ՔԱՅՔԱՅԻՉ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ ՏԵՍԱԿ

Քայքայիչ պաշտամունքի հետևորդները մեկ կամ մի քանի մարդկանց կողմից բռնատիրաբար ղեկավարվող մարդկանց խումբ են: Քայքայիչ պաշտամունքի հիմնական առանձնահատկությունն այն է, որ դրա ղեկավարը խմբի անդամներին իրեն ենթարկելու համար գործադրում է գիտակցության վերահսկման և մարդու կամքին բռնանալու հոգեբանական հնարներ[6]: Քայքայիչ պաշտամունքի ավելի ճշգրիտ սահմանումը տալու համար անհրաժեշտ է հաշվի առնել, որ[7].

1. այդ գաղափարախոսությունը ներառում է հետևյալ հիմնական դրույթները.

– կատարյալ հնազանդություն ղեկավարությանը,

– երկու բևեռների վրա հիմնված աշխարհընկալում. «մենք լավն ենք, մյուսները՝ վատը»,

– նպատակն արդարացնում է միջոցները,

– խմբի շահն առաջնային է, անհատինը՝ երկրորդական,

– խմբին անդամակցումը կատարվում է ծեսի միջոցով, անդամներն ընտրյալներ են,

– պաշտամունքից հեռացողները խստորեն կպատժվեն,

– անդամները պետք է կապերը խզեն իրենց ընտանիքի, ընկերների հետ, հրաժարվեն նախկին նպատակներից ու հետաքրքրություններից, պարզ ասած՝ անցյալից,

– անդամներից պահանջվում է գաղտնապահություն,

– խմբի հավատալիքները բացարձակ ճշմարտություն են՝ ավելի բարձր, քան աշխարհիկ օրենքները,

– խմբին անդամակցելով՝ մարդն ստանում է արտոնություններ:

2. Անդամների թվաքանակը՝ 3-4 հոգուց մինչև հազարներ:

3. Խմբին հատուկ լեզու:

4. Խմբին հատուկ կենսակերպ:

5. Անդամների ֆինանսական պարտավորություն խմբի և նրա ղեկավարների նկատմամբ:

6. Խումբը նոր անդամներով համալրելուն ուղղված գործունեություն:

7. Խմբի անդամների գիտակցության վերահսկման հնարների կիրառում, մասնավորապես՝

– ժամանակի և վարքի վերահսկում ֆիզիկական ծանրաբեռնվածության, հոգնածության և սոցիալ-հոգեբանական ազդեցության միջոցով. խմբի անդամներին և, հատկապես՝ «նորադարձներին», առանձնանալու և խորհրդածելու հնարավորությունից զրկում, ինչի հետևանքով թուլանում է նրանց հոգեբանական

[6] Տես *Стивен Хассен*. Освобождение от психологического насилия: деструктивные культы, контроль сознания, методы защиты. СПб; 2003, сс. 47–49:

[7] Տես *Дж. К. Росс, М. Д. Лангоуин*. Культы: что родители должны знать. Практическое руководство для оказания помощи родителям, чьи дети оказались в деструктивных группах. Нижний Новгород, 1996:

պաշտպանունակությունը, ուշադրությունը ցրվում է, նվազում է քննադատաբար մտածելու կարողությունը, մարդը ֆիզիկապես և հոգեպես հյուծվում է ու դառնում ներշնչման ենթակա,

– մեկուսացում հասարակությունից կամ սովորական շրջապատից, ինչի հետևանքով մարդը կարող է կորցնել իրականության զգացումը,

– սոցիալական խմբային ճնշում. մեծամասնության կարծիքին հակառակվելու կարողության թուլացում,

– մատնության խրախուսում. խմբի անդամները պարտավոր են հետևել միմյանց, միմյանց սխալների մասին հայտնել խմբի ղեկավարին,

– տեղեկատվության աղբյուրներից խմբի անդամի մեկուսացում կամ այդ աղբյուրների վարկաբեկում, նրան խմբի մասին միակողմանի տեղեկության մատուցում, ինչը խանգարում է կշռադատված որոշումների ընդունմանը և խմբի վերաբերյալ քննադատական եզրակացությունների հանգելուն,

– զգացմունքների վերահսկում՝ վախի, խմբակիցների նկատմամբ «սիրո» և մեղքի զգացումի շահարկմամբ, խմբի ղեկավարին մեղքերի խոստովանություն, ինչի միջոցով խմբի անդամը խիստ անձնական տեղեկույթ է տրամադրում, որը հարկ եղած դեպքում օգտագործվում է իր իսկ դեմ,

– մտածողության վերահսկում խմբին հատուկ լեզվի միջոցով. հատուկ հասկացություններն ու բառապաշարը կաղապարում են խմբի անդամի մտածողությունը, քննադատվում է ռացիոնալիզմը՝ որպես ճանաչողության մեթոդ, առաջնայնությունը տրվում է զգացմունքներին[8]:

Ժամանակակից մասնագիտական գրականության մեջ նշվում են չորս հիմնական տեսակի քայքայիչ պաշտամունքներ՝ կրոնական, կամ հոգևոր, խմբեր (օրինակ՝ մորմոնների աղանդը), քաղաքական-ահաբեկչական խմբեր (օրինակ՝ «Թալիբանը»), զանգվածային հոգեթերապիայի խմբեր (որոնց ղեկավար է դառնում հոգեթերապևտը) և առևտրային խմբեր (դրա օրինակ է «Հերբալայֆ» կազմակերպությունը, որն զբաղվում է իբր առողջարար արտադրանքի վաճառքով)[9]: Քայքայիչ պաշտամունքի տեսակ են համարվում նաև որոշ ավազակախմբեր[10]:

Մեր վերլուծությունը ցույց է տալիս, որ նախկին ԽՍՀՄ-ում առաջացած քրեական ենթամշակույթը, հետխորհրդային ժամանակաշրջանում կերպափոխվելով, այսօր փողոցային արատավոր բարքերի գլխավոր պատճառն է և իր հիմնական գծերով նման է քայքայիչ պաշտամունքի: Հիմնավորման համար բավական է քայքայիչ պաշտամունքների վերոնշյալ բնութագիրը համեմատել այսպես կոչված «գողական օրենքների»[11] հետ[*]:

---

[8] Ավելի հանգամանորեն տես՝ *Սթիվեն Հասեն*, Նշ. աշխ., *Ալեքսանդր Դվորկին*, Նշ. աշխ.:

[9] Նույն տեղում:

[10] Տես *Ջ. Կ. Ռոս, Մ. Դ. Լանգոուին*, Նշ. աշխ.:

[11] Տես «Воровской закон». «www.wikipedia.org» (http://ru.wikipedia.org/wiki/%D0%92%D0%BE%D1%80%D0%BE%D0%B2%D1%81%D0%BA%D0%BE%D0%B9_%D0%B7%D0%B0%D0%BA%D0%BE%D0%BD); «Воровские законы и понятия». «www.proza.ru» (http://www.proza.ru/2013/08/05/1269):

[*] Թվարկենք «քրեական ենթամշակույթի» հիմնական հատկանիշները, որոնք համապա-

Անշուշտ, «գողական օրենքների» վրա հիմնված ենթամշակույթի և քայքայիչ պաշտամունքների միջև կան նաև կարևոր տարբերություններ (օրինակ՝ քրեական ենթամշակույթում չկա «սրբազան տեքստ», չկան հոգեֆիզիոլոգիական հատուկ հնարներ (օրինակ՝ հիպնոս), որոնց միջոցով մարդու գիտակցությունը հայտնվում է այսպես կոչված «սահմանային» վիճակներում («տրանս») և այլն, թեպետ «գողական աշխարհի» առանձին ներկայացուցիչներ կիրառում են նաև այդ եղանակները): Այդուհանդերձ, որոշ վերապահումներով կարելի է ասել, որ քրեական ենթամշակույթը քայքայիչ պաշտամունքի տեսակ է*:

ՓՈՂՈՑԱՅԻՆ ԱՐԱՏԱՎՈՐ ԲԱՐՔԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վերջին եզրակացությունից բխում է, որ քայքայիչ պաշտամունքների դեմ պայքարի սկզբունքներն ու մեթոդները կարելի է կիրառել նաև փողոցային արատավոր բարքերի դեմ պայքարում: Ստորև ներկայացնենք պայքարի մի քանի ուղղություն և առաջարկություններ:

Նախ. քայքայիչ պաշտամունքի՝ որպես կազմակերպության դեմ պայքարի նախապայմանը դրա գաղափարախոսության, կառուցվածքի, գործունեության եղանակների, առանձնահատկությունների ուսումնասիրությունն է: Նույնը վերաբերում է քրեական ենթամշակույթին, որը ցայսօր քիչ է ուսումնասիրված:

Երկրորդ. պատմությունը վկայում է, որ քայքայիչ պաշտամունքները և աղանդները, որպես կանոն, վերանում են իրենց պարագլուխների մահից հետո, եթե նրանց հաջորդողներ չեն հայտնվում: Հետևաբար՝ փողոցային արատավոր բարքերի դեմ պայքարի արդյունավետության մեծացմանը կնպաստի քրեական աշխարհում «օրենքով գողերի» վերացումը: Կարծում ենք, որ սա դժվարին, պետության ակտիվ միջամտությունը պահանջող, սակայն լուծելի պրոբլեմ է:

տասխանում են քայքայիչ պաշտամունքների վերոնշյալ բնութագրին. հնազանդություն «օրենքով գողին», տարբերակված վերաբերմունք յուրայիններին (օրինակ՝ յուրայիններից գողանալ չի կարելի, իսկ մյուսներից՝ կարելի է, յուրայիններին խաբել չի կարելի, իսկ մյուսներին՝ կարելի է), գողական ժարգոն, հատուկ կենսակերպ՝ ընտանիք ունենալու արգելանք, հակասոցիալական վարք, ներխմբային աստիճանակարգությանը համապատասխան պահվածք, տարբերանշաններ (դաջվածք) և այլն, եկամտից պարտադիր մասհանում ընդհանուր գանձանակին, պարտադիր կերպով հատկապես երիտասարդների ներգրավում խմբում, նրանց մեջ «գողական արժեքների» սերմանում, խմբի անդամների ժամանակի և վարքի վերահսկում, մեկուսացում, նրանց նկատմամբ սոցիալական խմբային ճնշում հատկապես ազատազրկման վայրերում, մատնության խրախուսում՝ գողը պարտավոր է խմբակիցներին հայտնել յուրայինների կողմից «գողական օրենքի» ցանկացած խախտման մասին, մեղքերի յուրահատուկ խոստովանություն՝ ըստ «օրենքով գողին խաբել չի կարելի» կանոնի, և այլն: «Օրենքով գող» կարգվում են հատուկ ծեսի միջոցով, ծիսական բնույթ ունի նաև աստիճանազրկումը (որպես պատիժ): Պարտադիր է նվիրվածությունը «գողականության գաղափարին»: Խմբի անդամը պարտավոր է պարբերաբար հանցագործություն կատարել և հայտնվել բանտում, այսինքն՝ խրախուսվում է կրկնահանցագործությունը, ինչը նվազեցնում է խմբից դուրս գալու հնարավորությունը: Արգելվում է որևէ կերպ, այդ թվում՝ տեղեկություն տալով, համագործակցել պետական որևէ մարմնի հետ:

* Այս հայեցակետից կարելի է ուսումնասիրել նաև երիտասարդական այլ ենթամշակույթները (էմոներ, գոթեր և այլն)՝ պարզելու համար, թե դրանք ինչով են նման և ինչով են տարբերվում քայքայիչ պաշտամունքներից:

Երրորդ. քայքայիչ պաշտամունքները կարողանում են իրենց ցանցը գցել այն մարդկանց, որոնք ոչինչ չգիտեն աղանդի քայքայիչ գործունեության մասին: Ցավոք, մեր երեխաները փողոցում իրենց հասակակիցների հետ շփվելիս հաճախ ծանոթանում են նախ «գողական օրենքներին», և հետո միայն՝ հասարակության ու պետության օրենքներին: Այսինքն՝ հակապետական քայքայիչ քարոզչությունը նախորդում է պետութենամետ քարոզչությանը և, բնականաբար, երեխայի հոգում ավելի խոր արմատներ է գցում: Իրերի այս վիճակը պետք է փոխել: Երեխան նախքան փողոց դուրս գալը պետք է պատկերացում ունենա, թե ինչ են պետությունն ու հասարակությունը, և ինչ՝ քրեական ենթամշակույթը, և որ առաջինը դրական արժեքներ են, իսկ երկրորդը՝ բացասական: Այս նպատակի իրագործումը ենթադրում է պետական մակարդակով ռազմահայրենասիրական քարոզչություն, որում առանձնահատուկ դեր ունեն ՁԼՄ-ները:

Տարբեր մակարդակներում քննարկումների ժամանակ և՛ մանկավարժները, և՛ հասարակայնության ներկայացուցիչները մատնացույց են անում այն տխուր իրողությունը, որ վերջին տարիներին Հայաստանի բազմաթիվ հեռուստաընկերությունների եթերը վերածվել է արատավոր ու մերժելի ապրելակերպ քարոզող ցածրակարգ հեռուստասերիալների ու նմանաբովանդակ հաղորդումների անվերջանալի մի շղթայի: ՈՒստի անհրաժեշտություն է դարձել ՁԼՄ-ների, հատկապես՝ հեռուստաընկերությունների հետ համագործակցության նոր ձևաչափերի մշակումը՝ ՀՀ օրենսդրությամբ ընձեռված հնարավորությունների հաշվառմամբ:

Չորրորդ. հազվադեպ է պատահում, որ քայքայիչ աղանդների խմբերում հայտնված մարդիկ կարողանան ինքնուրույն կերպով ազատվել դրանց իշխանությունից: Այդ մարդիկ հոգեբանական հատուկ օգնության կարիք ունեն: Մեր կարծիքով՝ նույնը վերաբերում է քրեական ենթամշակույթի ազդեցության տակ հայտնվածներին: Հոգեբանական ծառայություն կարող է գործել, մասնավորապես, դպրոցում ու բուհում, իսկ բանակում պետք է կարողանան աջակցել հոգեբան սպաները:

Հինգերորդ. մարդիկ դառնում են աղանդի անդամ, որովհետև կարծում են, թե դրանով կբավարարեն իրենց մի շարք հոգևոր ու նյութական պահանջմունքներ, այդ թվում՝ կյանքի իմաստավորման, հոգու ընկեր ունենալու, մահվան վախի հաղթահարման պահանջմունքները: Հետևաբար՝ աղանդավորության շարքերում մարդու հայտնվելը կանխելու համար պետք է նրան ընձեռել այդ պահանջմունքները բավարարող այլընտրանքային կազմակերպությանն անդամակցելու հնարավորություն: Այդպիսի կազմակերպություն է Հայ Առաքելական Եկեղեցին: Իսկ ահա փողոցային արատավոր բարքերի դեմ պայքարի հայեցակետից պետք է ստեղծել այնպիսի կազմակերպություն, որին անդամակցելով՝ դեռահասները բավարարեն իրենց այն պահանջմունքները (ուժեղ ու հարգված լինելու), որոնք բավարարվում են քրեական ենթամշակույթի կրող դառնալով: Կարծում ենք, որ վաղուց արդեն օրախնդիր է մանկապատանեկան ու երիտասարդական, ապակուսակցական, պետութենամետ, ռազմահայրենասիրական զանգվածային շարժման* ստեղծումը: Մեր կարծիքով՝ Հայաստանում այդպիսի շարժում կարելի է ստեղծել

* Նախկին ԽՍՀՄ-ում այդպիսիք էին պիոներական ու կոմերիտական շարժումները:

«Պատանի երկրապահ» մանկապատանեկան ռազմահայրենասիրական ակումբի հենքի վրա:

Այսօր երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակության ուղղությամբ կատարվող նշանակալի աշխատանքը լուրջ նախադրյալներ է ստեղծում այդ նպատակի իրագործման համար: Այսպես. «Հայրենասիրական դաստիարակության 2014–2019 թվականների միջոցառումների ծրագրով» և Պաշտպանության նախարարի հանձնարարությամբ բանակ–հասարակություն կապի ամրապնդման շրջանակներում ռազմահայրենասիրական դաստիարակության նպատակով կազմակերպվել են մի քանի հազար աշակերտների և զինծառայողների այցելություններ «Մայր Հայաստան» զինվորական թանգարան, «Սարդարապատ» հուշահամալիր, «Եռաբլուր» զինվորական պանթեոն և այլ հուշահամալիրներ, թանգարաններ ու եկեղեցիներ: Նման այցելությունները կրում են շարունակական բնույթ: Մեծ է այդ միջոցառումների դաստիարակչական նշանակությունը:

Բանակի օրվա առթիվ անցկացվել է «Բանակը մեր տունն է, մեր բերդ-ամրոցը» թեմայով ստեղծագործական շարադրության համաբանակային ու համադպրոցական մրցույթ, որին մասնակցել են տասնյակ հազարավոր պատանիներ ու աղջիկներ: Պաշտպանության նախարարության և Զինված ուժերի Գլխավոր շտաբի ղեկավար կազմը և բոլոր զորամասերի ու զորամիավորումների հրամանատարները հարյուրավոր հանդիպումներ են ունեցել դպրոցներում ու բարձրագույն ուսումնական հաստատություններում, անցկացրել են «Արիության դասեր», որոնք աշակերտներին և ուսանողներին օգնում են տարբերակելու հերոսությունն ու կեղծ պատվախնդրությունը, իրական զինվորական արժեքներն ու կիսաքրեական ըմբռնումները, օտարամուտ ու մեզ խորթ գաղափարների բոլոր վտանգները:

ՁՈՒ-ում արատավոր բարքերի դեմ պայքարի ծավալման համար անգնահատելի նշանակություն ունեցան տարեսկզբին Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարար Ս. Օհանյանի հանդիպումները վաշտ-մարտկոց օղակի հրամանատարների, նրանց պատասխանատվության գոտում գտնվող մարզպետարանների կրթության վարչությունների աշխատողների և դպրոցների տնօրենների հետ: Այդ հանդիպումներն ու Պաշտպանության նախարարի 2014 թվականի տարեմուտի ուղերձը լայն արձագանք ստացան ոչ միայն Զինված ուժերում, այլև պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմիններում, հասարակական կազմակերպություններում և ուսումնական հաստատություններում: Ամենուրեք կազմակերպվեցին ուղերձի քննարկումներ, հստակեցվեցին անելիքները, ինչը Պաշտպանության նախարարի այս նախաձեռնությանը հասարակության բոլոր շերտերի աջակցության վկայությունն է:

Զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության քաղաքականության շրջանակներում պաշտպանության նախարարությունը ակտիվորեն համագործակցում է նաև զորամասերում և ուսումնական հաստատություններում տարբեր ծրագրեր իրականացնող հասարակական կազմակերպությունների, գիտնականների, իրավապաշտպանների հետ: Այս տարվա ապրիլի 9-ին Գյումրիում, ապա նաև Վանաձորում «Պայքար փողոցային արատավոր բարքերի դեմ» թե-

մայով ներկայացուցչական գիտաժողով կազմակերպեց «Զարգացման ծրագրերի հայկական կենտրոնը»:

1997 թվականից պաշտպանության նախարարությունը համագործակցում է Հայ Առաքելական Եկեղեցու հետ: Այդ համագործակցությունն իրավական ամրագրում ստացավ 2000 թվականի սեպտեմբերի 14-ին, երբ հաստատվեց «ՀՀ Զինված ուժերում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հոգևոր ծառայության կանոնադրությունը»[12]: ՀՀ ԶՈՒ-ի հոգևոր առաջնորդությունն անգնահատելի դեր ունի բանակում քայքայիչ պաշտամունքների և փողոցային արատավոր բարքերի դեմ պայքարի գործում:

Վեցերորդ. հոդվածում արծարծված հրատապ պրոբլեմների լուծմանն անմիջականորեն կնպաստի դեռահասների ու պատանիների, ՀՀ յուրաքանչյուր քաղաքացու իրավագիտակցության մակարդակի բարձրացումը: Մարդու ազատություններն ու իրավունքները պաշտպանության նախարարության ղեկավարության համար հիմնարար հասկացություններ են: Բանակը նաև մարդու իրավունքների ու ժողովրդավարության երաշխավորն է, որովհետև թույլ ու չպաշտպանված, արտաքին ամեն սպառնալիքից երերացող պետությունում ժողովրդավարություն պարզապես չի կարող լինել:

Ո՞րն է այսօր իրավունքի ու ազատության մեր ընկալումը: Հնարավոր չէ մոռանալ պատերազմի տարիներին Արցախի հրետակոծվող ու գնդակոծվող գյուղերում դպրոց գնացող երեխաներին: Նրանք այդ կերպ էին պաշտպանում իրենց ազատություններն ու հայկական հողի վրա ապրելով հայկական դպրոց գնալու իրավունքը: Ազատամարտիկներս էլ կարողացանք պաշտպանել նրանց ու չենք ուզում, որ պաշտպանված խաղաղության պայմաններում պատանիների նոր սերունդը «կայանա» թունելներում ու հետնախորշերում անբարոյական կյանք վարելով, մտածի գողանալու և սպանելու, ինքնասպանության փորձ կատարելու մասին, կամ էլ սատանայի պատկերը դաջի իր մարմնին:

Պաշտպանության նախարար Ս. Օհանյանը նշում է, որ հատկապես արատավոր բարքերի պատճառով յուրաքանչյուր զինվորի մահվան դեպքում պետությունը սասանվում է, բանակը դուրս է գալիս իր հունից, ընտանիքներում մի տան ճրագ է մարում, իսկ ամենից շատ ճրագներ մարում են մեր մեծ ընտանիքում՝ Հայկական բանակում*:

Կարծում ենք՝ մեր երկրում ընթացող համալիր բարեփոխումների և հատկապես՝ պաշտպանական բարեփոխումների շրջանակներում նշված պրոբլեմների լուծման նկատմամբ պատշաճ մոտեցումը և առաջարկվող ուղղություններով միջոցառումների հետևողական իրականացումը էապես կմեծացնեն քայքայիչ պաշտամունքների և փողոցային արատավոր բարքերի դեմ պայքարի արդյունավետությունը:

---

[12] Տես *Արշեն աբեղա Սանոսյան,* Բանակային քահանաների հաստատությունը ՀՀ Զինված ուժերում: «ՀԲ», 2001, հմ. 1–2:

* 2014 թ. հունվարին բանակային կորպուսների սպայակազմի, զինդատախազության, ռազմական ոստիկանության, զինկոմիսարիատների ու մարզվետարանների ղեկավարների հետ ՀՀ Պաշտպանության նախարար Ս. Օհանյանի հանդիպումներից մեկի ժամանակ նրա ելույթից:

К ВОПРОСУ ОБЩНОСТИ МЕТОДОЛОГИИ БОРЬБЫ С ДЕСТРУКТИВНЫМИ КУЛЬТАМИ И ПОРОЧНЫМИ УЛИЧНЫМИ НРАВАМИ

В. М. АВЕТИСЯН, государственный советник 1-го класса СГС, начальник Управления информации и по связям с общественностью МО РА

РЕЗЮМЕ

Актуальность борьбы против деструктивных культов и порочных уличных нравов обусловлена их непосредственным отрицательным влиянием на дисциплину в ВС, а также требованиями национальной безопасности. Путем сопоставления общих признаков деструктивных культов с особенностями криминальной субкультуры делается вывод о том, что последняя является разновидностью деструктивного культа. Соответственно, в борьбе против порочных уличных нравов, являющихся производными воровской субкультуры, предлагается применять принципы борьбы с деструктивными культами. Ее возможными направлениями являются борьба против «воров в законе», военно-патриотическое воспитание детей с раннего возраста и их массовое вовлечение в предлагаемое для учреждения непартийное патриотическое юношеское движение, организация психологической помощи в школах, вузах и армии, повышение уровня правосознания юношей и каждого гражданина.

TO THE ISSUE OF COMMONALITY OF THE METHODOLOGY OF THE STRUGGLE AGAINST DESTRUCTIVE CULTS AND VICIOUS STREET HABITS

V. M. AVETISYAN, 1st Class State Advisor of Special Civil Service, Chief of the Branch of Information and Public Affairs, MOD, RA

SUMMARY

The urgency of the struggle against destructive cults and vicious street habits is conditioned by their direct negative impact on the discipline in the Armed Forces, as well as by the national security requirements. It is concluded (through the comparison of common features of destructive cults with peculiarities of the criminal subculture) that the latter is a kind of a destructive cult. Accordingly, it is suggested applying the principles of the struggle against destructive cults during the struggle against vicious street habits that are derivatives of the subculture of the underworld. Its possible directions are: the struggle against the «lords of the underworld»; children's military-patriotic education from the early age and their mass involvement in establishment of a non-partisan patriotic youth movement proposed for the establishment; the organization of psychological care in schools, universities and the army; the increase of the level of the adolescents' and each citizen's legal awareness.

ՀՀ ԶՈՒ-ՈՒՄ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅԱՆ* ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԲԱՑԱՍԱԲԱՐ ԱԶԴՈՂ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Ա. Զ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ, գեներալ-մայոր, ՀՀ ԶՈՒ-ի ԱՀՏԱ վարչության պետ,
Ա. Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, մայոր, ՀՀ ԶՈՒ-ի ԱՀՏԱ վարչության զինվորական կարգապահության և սոցիալ-իրավական աշխատանքների բաժնի սպա-իրավաբան

Տարածաշրջանում տիրող բարդ ռազմաքաղաքական իրադրությունը ՀՀ Զինված ուժերից պահանջում է բարձր մակարդակի մարտունակություն ու մարտական պատրաստություն, որոնց ապահովման կարևոր գործոններից է զինվորական կարգապահությունը[1]: Ընդսմին մեր Զինված ուժերը պետք է կարողանան ոչ միայն պատշաճ կերպով արձագանքել մարտահրավերներին ու սպառնալիքներին, այլև որոշակիորեն ազդել տարածաշրջանում ձևավորվող անվտանգային-ռազմաքաղաքական միջավայրի վրա[2]:

Մինչդեռ տարեցտարի աճում է ՀՀ Զինված ուժեր զորակոչվող այն երիտասարդների թվաքանակը, որոնք ընդօրինակում են հանցագործ աշխարհի բարքերը և ձգտում են իրենց արատավոր սովորույթները պահպանելու նաև զորամասում: Սա խիստ բացասաբար է ազդում զինվորական կոլեկտիվների կարգապահության, ընդհանուր բարոյահոգեբանական մթնոլորտի, հետևաբար նաև մարտունակության վրա: Այդ երևույթի դեմ պայքարը ենթադրում է դրա ծագման պատճառների գիտական ուսումնասիրություն:

Մեր կատարած ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ զինծառայողների շրջանում արատավոր բարքերի առաջացմանն ու տարածմանը հիմնա-

---

* Զինվորական կարգապահությունը յուրաքանչյուր զինծառայողի կողմից օրենքներով, զինվորական կանոնագրքերով և հրամանատարների (պետերի) հրամաններով հաստատված կարգուկանոնի խստիվ և ճշգրիտ պահպանումն է: Զինվորական կարգապահությունն ապահովվում է յուրաքանչյուր զինծառայողի կողմից ՀՀ պաշտպանության, զինվորական պարտքի և իր պարտականությունների կատարման համար անձնական պատասխանատվության գիտակցմամբ, ինչպես նաև հրամանատարների (պետերի) կողմից իրենց լիազորությունների շրջանակներում տրված հրամանների ճշգրիտ ու ժամանակին կատարմամբ (տես «Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի կարգապահական կանոնագիրք», ՀՀ 2012 թ. մարտի 21-ի հմ. ՀՕ-91 օրենք, հոդ. 2 (http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=4510)):

[1] Տես «Военный энциклопедический словарь». М., 2002, с. 516:

[2] Տես *Ս. Ս. Օհանյան,* Հայաստանի Հանրապետության պաշտպանական բարեփոխումները. երկրորդ փուլ: «Հայկական բանակ», 2008, հմ. 2–3:

կանում նպաստում են հետևյալ սոցիալական, կազմակերպական և անձնային գործոնները.

– ոչ այնքան բարվոք սոցիալ-տնտեսական վիճակը,

– ընտանիքում և դպրոցում դաստիարակության և կրթության թերությունները,

– հասարակության արժեքային համակարգում հոգևոր-գաղափարական արժեքների ոչ բավարար շեշտվածությունը,

– մեր պետության և հասարակության նկատմամբ ապակառուցողական դիրքորոշում սերմանող, գերազանցապես դրսից ներմուծվող սոցիալական ենթամշակույթների, ոչ ավանդական կրոնական կազմավորումների գործունեությունը, որոնք ձգտում են տարածելու երկպառակություն և այնպիսի արատավոր երևույթներ, ինչպիսիք են հարբեցողությունը, թմրամոլությունը, համասեռամոլությունը և այլն,

– ԶԼՄ-ներում քրեական աշխարհի վերաբերյալ նյութերի անբավարար քննադատականությունն ու փաստացի անուղղակի քարոզչությունը, բռնության տեսարանների հաճախակի ցուցադրմամբ սովորական երևույթի դրանց վերածումը և այլն,

– զորակոչային տարիքի առանձնահատկությունները, մասնավորապես այն, որ այդ տարիքի պատանիները արատավոր բարքերը դարձնում են իրենց ինքնահաստատման արժեհամակարգի հենք, ինչը ուղեկցվում է հասակակիցների շրջանում «հեղինակություն» վայելելու ձգտումներով,

– արատավոր բարքերի դեմ պայքարի ոչ համակարգվածությունը,

– զինծառայողների իրավական գիտակցության ոչ պատշաճ մակարդակը,

– արատավոր (միմյանց մականուններով դիմելու, հայհոյանքով երդում տալու, հակառակորդի լեզվից փոխառված բառերով միմյանց պիտակելու, «կարգախախտ» զինծառայողների նկատմամբ ինքնուրույն պատժամիջոցներ կիրառելու և այլ) սովորությունների փոխանցումը պարտադիր ժամկետային ծառայության մի զորակոչի զինծառայողներից հաջորդ զորակոչի զինծառայողներին,

– պարտադիր զինվորական ծառայության զինծառայողներով համալրված սերժանտական կազմի առայժմ ոչ բավարար մասնագիտական պատրաստականությունը*,

– հրամանատարական կազմի անբավարար ուշադրությունը ենթակաների կարիքների, պահանջմունքների, նրանց հուզող հարցերի նկատմամբ,

– որոշ հրամանատարների կողմից զինվորական կոլեկտիվի դաստիարակչական դերի, ենթակաների շրջանում անհատական առանձնահատկությունների հաշվառմամբ կատարվող աշխատանքի** կարևորության թերագնահատումը կամ նման աշխատանք կատարելու անկարողությունը, և այլն:

---

* Այս խնդրի լուծմանն է միտված ՀՀ Պաշտպանության նախարարի 2008 թ. մայիսի 6-ի հմ. 519 հրամանով ստեղծված պրոֆեսիոնալ պայմանագրային սերժանտների հաստատության կայացումը:

** Կարգազանցության հակում ունեցող (դժվար դաստիարակվող) զինծառայողների հաշվառումը հստակեցնելու նպատակով ՀՀ ԶՈՒ-ի ԱՀՏԱ վարչությունը և ՀՀ ՊՆ զինվորական ոստիկանությունը համատեղ մշակել են միասնական չափորոշիչներ:

Զորամասերի հրամանատարական կազմը պարտավոր է կանխարգելիչ աշխատանքներ պլանավորելիս ու կատարելիս հաշվի առնել այս գործոնները:

Թեև արատավոր երևույթներն ունեն խոր սոցիալ-հոգեբանական արմատներ և հաճախ պայմանավորված են լինում օբյեկտիվ գործոններով, սակայն զինվորական կոլեկտիվների կենսագործունեության հատուկ պայմանները, բանակում վերահսկողության խիստ համակարգը, բանակ–հասարակություն սերտացող կապը հնարավոր են դարձնում ստորաբաժանումում զինծառայողների նպատակաուղղված դաստիարակության համար նախադրյալների ստեղծումը:

Արատավոր երևույթների կանխարգելմանը նպատակաուղղված կազմակերպական և դաստիարակչական աշխատանքը պետք է իրականացվի միաժամանակ մի քանի հիմնական ուղղություններով՝

ա) միջազգային լավագույն փորձի ուսումնասիրում ու ներբերում՝ էթնոհոգեբանական առանձնահատկությունների և տեղային պայմանների հաշվառմամբ,

բ) զինծառայողների կենսագործունեության պատշաճ կազմակերպում, յուրաքանչյուր ստորաբաժանումում խիստ կանոնադրական կարգուկանոնի ապահովում,

գ) զինծառայողների առանձնահատկությունների մշտական ուսումնասիրում և այդ տվյալների հիման վրա նրանց վարքագծի կանխատեսում, նրանց վրա հոգեբանական ներգործության համապատասխան մեթոդների ու միջոցների ընտրություն, դրանց կիրառման անհրաժեշտ ուղղությունների նախանշում (պլանավորում), արդյունավետ անհատական դաստիարակչական աշխատանքի կազմակերպում,

դ) մշտական հոգածություն զինծառայողների ֆիզիկական ու հոգեկան առողջության պահպանման, հանգստի, կենցաղի կազմակերպման նկատմամբ, նրանց սոցիալական պաշտպանության ապահովում:

ՀՀ ԶՈՒ-ում զինվորական կարգապահության վիճակի, անձնակազմի հետ տարվող աշխատանքների արդյունքների վերլուծության հիման վրա ՀՀ ԶՈՒ-ի ԱՀՏԱ վարչության նախաձեռնությամբ ու համադասմամբ իրականացվում են զինծառայողների շրջանում արատավոր բարքերը կանխարգելող հետևյալ հիմնական միջոցառումները.

– ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ զինծառայողների իրավունքների ու նրանց միջև կանոնագրքային հարաբերությունների ապահովում,

– ՀՀ-ում զինվորական հոգեբանների պատրաստման համակարգի կատարելագործում*,

– ԱՀՏԱ-ի գծով սպաների (գումարտակ–գունդ օղակների) վերապատրաստ-

* Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում բակալավրիատի և մագիստրոսական կրթական ծրագրերով իրականացվում է զինվորական հոգեբանների պատրաստում՝ ելնելով ՀՀ ԶՈՒ-ի պահանջներից: Կարծում ենք՝ նպատակահարմար է Համալսարանի հետ համատեղ մշակել և լրացումներ կատարել դասավանդվող առարկայական և անցկացվող գիտաուսումնական պրակտիկայի ծրագրերում, ընդունելությունը կազմակերպել նաև նպատակային ուղեգրերով, ընդ որում, տեղում (զինկոմիսարիատների մասնակցությամբ) նախօրոք հետազոտելով դիմորդների առողջությունը և ֆիզիկական պատրաստությունը:

ման նպատակով կիրառական հոգեբանության և մանկավարժության դասընթացների կազմակերպում (քանի որ անձնակազմի դաստիարակության, զինվորական կարգապահության և բարոյահոգեբանական վիճակի համար պատասխանատու են բոլոր խմբերի հրամանատարները, նպատակահարմար է բոլոր սպաների վերապատրաստման ուսումնական ծրագրերում պարտադիր կերպով ներառել նշված առարկաները*),

– ենթակա հրամանատարներին մշտական օգնության ցուցաբերում իրավախախտումների պայմանների ու պատճառների պարզման ու վերացման գործում,

– զինվորական կոլեկտիվներում արատավոր երևույթների կանխարգելմանն ուղղված աշխատանքների մշտական վերլուծություն և արդյունավետության գնահատում, արատավոր երևույթների հայտնաբերման նպատակով արդյունավետ միջոցների ձեռնարկում**,

– անհատական դաստիարակչական աշխատանքներում «Հայրենիքի պաշտպանի անհատական գրքույկի» ներդրում, որի միջոցով հաշվի է առնվում դպրոցի, տարածքային իրավապահ մարմինների կողմից նախազորակոչային և զորակոչային տարիքում զինծառայողի վերաբերյալ ներկայացված ամփոփ տեղեկույթը,

– կարգազանց զինծառայողների պատժման անխուսափելիության ապահովում[3],

– զինվորական կոլեկտիվներում առողջ բարոյահոգեբանական մթնոլորտի ապահովման, ոչ կանոնագրքային հարաբերությունների ձևավորման, արատավոր բարքերի ու երևույթների կանխարգելմանն ուղղված աշխատանքներում նաև զինծառայողների ծնողների ներգրավում,

– զորամասերում արտահաստիքային հանձնաժողովների, հասարակական ակտիվների*** ձևավորում զինծառայողի որակական բնութագրի (նրա կրթական մակարդակի և ունակությունների) վերլուծության հիման վրա,

– զինվորական կոլեկտիվներում ընկերական ոգու ձևավորում, ստորաբաժանումների միջև առողջ մրցակցության խթանում,

– զինծառայողներին իրավական գիտելիքների հաղորդում,

– ՀՀ ԶՈՒ-ի Հոգևոր առաջնորդության կողմից իրականացվող հոգևոր դաստիարակություն, որի կարևոր խնդիրն է զինծառայողների մեջ առ Աստված հավատի սերմանումը և նրանց միջանձնային հարաբերություններում քրիստոնեական բարոյական արժեքներին համապատասխանող վարքագծի ձևավորումը,

---

* Կարելի է վերապատրաստման դասընթացներ անցկացնել նաև սպաներին ծառայությունից չկտրելով, օրինակ՝ *SKYPE* համակարգչային ծրագրի միջոցով՝ առցանց:

** Արատավոր երևույթների արագ հայտնաբերման, զինծառայողների վարքի արդյունավետ վերահսկման նպատակով զորամասերում զինծառայողների հավանական կուտակումների (զորանոցներ, ծխարաններ), ինչպես նաև հրամանատարության տեսադաշտից դուրս գտնվող վայրերում կարելի է տեղադրել տեսախցիկներ:

[3] Տես «ՀՀ Զինված ուժերի կարգապահական կանոնագիրք», հոդ. 22, մաս 2:

*** Զինվորական կոլեկտիվի խնդիրներն օպերատիվորեն լուծելու համար վաշտերում ձևավորվում է ակտիվ՝ որպես համախմբող և կազմակերպական օղակ:

– զորամասերի հրամանատարության համագործակցություն զինվորական իրավապահ մարմինների հետ, մասնավորապես՝ իրավախախտումների, հանցագործությունների դեմ պայքարի, դրանց կանխարգելման գործում զորամասերի հրամանատարության և զինվորական իրավապահ մարմինների ջանքերի համախմբում, կանխարգելիչ աշխատանքների արդյունավետ կատարման նպատակով զորամասերում զինվորական իրավապահ մարմինների հենակետերի ստեղծում, համատեղ միջոցառումների պլանների մշակում և իրականացում, իրավախախտումների պատճառների և պայմանների, ինչպես նաև ծառայության կազմակերպմանն առնչվող թերությունների վերաբերյալ իրավապահ մարմինների կողմից զորամասի հրամանատարությանը ներկայացվող միջնորդագրերի քննարկում և ընդունված համապատասխան որոշումների իրագործում,

– «թեժ գծերի» միջոցով պաշտպանության նախարարության, զինվորական իրավապահ մարմինների, զինվորական դատախազության հետ զինծառայողների և քաղաքացիների ուղիղ կապի ապահովում, զորամասերի հրամանատարների նախաձեռնությամբ «բաց դռների օրերի» անցկացում, ՀՀ պաշտպանության նախարարին անմիջականորեն դիմելու հնարավորությունների ընդլայնում (Նախարարին հասցեագրված նամակների համար հատուկ փոստարկղերի ստեղծում և հասցեատիրոջը այդ նամակների հասցման վերահսկման մեխանիզմների կատարելագործում):

Առաջիկայում ակնկալում ենք այս համալիր միջոցառումների իրականացման շնորհիվ ՀՀ ԶՈՒ-ում կարգապահության մակարդակի ընդհանուր բարձրացում: Սակայն կարծում ենք, որ այս միջոցառումները, ընդհանուր առմամբ, գերազանցապես կոչված են լուծելու ընթացիկ և մոտ ապագայի պրոբլեմները, մինչդեռ պաշտպանական համակարգի բարեփոխումները մեզ հուշում են, որ պետք է ունենալ նաև առնվազն միջնաժամկետ պլաններ: Մեր վարչությունում կուտակվում են համապատասխան աշխատանքներ, որոնք հիմնված են հետևյալ երկու, ըստ մեզ՝ հույժ կարևոր սկզբունքների վրա.

• զինվորական կոլեկտիվի շահերի և նրա յուրաքանչյուր անդամի շահերի ներդաշնակ միավորման ապահովում[4],

• կարգապահություն՝ որպես յուրաքանչյուր անդամի կողմից գիտակցված անհրաժեշտություն[5]:

Միևնույն ժամանակ, պետք է ևս մեկ անգամ նշենք, որ ԶՈՒ-ում արատավոր բարքերի առաջացման ու տարածման դեմ պայքարը ենթադրում է հասարակական, պետական գերատեսչությունների և զորային կառույցի բոլոր օղակների փոխհամաձայնեցված ու նպատակաուղղված աշխատանք ըստ գիտականորեն

[4] Տես *С. И. Денисенко.* Развитие педагогической теории и практики поддержания воинской дисциплины в частях, на кораблях. Автореф. докт. дисс. на соискание уч. степени док. педагог. наук. М. (dissercat.com/content/razvitie-pedogogicheskoi-teorii-i-praktiki-podderzhaniya-voinskoi-distsioliny):

[5] Տես *М. Кутц.* Innere Führung – руководство и гражданское образование в Вооруженных силах Германии (http://www.pfpconsortium.org/file/2198/view):

հիմնավորված ծրագրերի: Տվյալ աշխատանքը կարող է հաջողությամբ պսակվել միայն այն դեպքում, եթե դառնա հասարակության յուրաքանչյուր անդամի ուշադրության առարկան:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «ՀՀ Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի 2014 թվականի տարեմուտի ուղերձը»:
2. *Զ. Ասլրյան,* Զինվորական կարգապահության ամրապնդման հիմնախնդիրները: Ե., 2013:
3. *Վ. Մարգարյան,* Մարտական գործունեության հոգեբանություն: Ե., 2009:
4. «Морально-психологические предпосылки укрепления воинской дисциплины, сплочения воинских коллективов». Методические рекомендации. Под общей ред. Н. И. Чукарина (http://armyrus.ru/index.php?option=com_content&task=view&id=826).
5. *Evan Munsing.* The Times They Are A-Changing: A Few Thoughts on American Military Discipline and Organization. «SMALL WARS JOURNAL», 22 March 2013 (http://smallwarsjournal.com/jrnl/art/the-times-they-are-a-changing-a-few-thoughts-on-american-military-discipline-and-organizati).
6. «In the 1970s, the U.S. military struggled with morale», 4 July 2013 (http://www.usatoday.com/story/nation/2013/07/03/afghanistan-advisers-george-lepre-haynes-vietnam-conrad-crane/2484665/).

К ВОПРОСУ УКРЕПЛЕНИЯ ВОИНСКОЙ ДИСЦИПЛИНЫ В ВС РА И БОРЬБЫ С НЕГАТИВНО ВЛИЯЮЩИМИ НА НЕЕ ЯВЛЕНИЯМИ

А. ДЖ. АЛЕКСАНЯН, генерал-майор, начальник Управления по работе с личным составом ВС РА, А. Р. ГРИГОРЯН, майор, офицер-юрист Отдела воинской дисциплины и социально-правовых работ Управления по работе с личным составом ВС РА

РЕЗЮМЕ

Управление по работе с личным составом ВС РА проводит в войсках исследования с целью выявления основных социальных, организационных и личностных факторов, негативно влияющих на уровень воинской дисциплины. К числу подобных факторов следует отнести: недостатки в процессах воспитания и образования в семье и школе; недостаточная акцентированность духовно-идейных составляющих принятой в обществе ценностной системы; деятельность преимущественно насаждаемых извне социальных субкультур и нетрадиционных религиозных формирований, распространяющих деструктивное отношение к нашему государству и обществу; несистематизированность борьбы с порочными нравами и т. д.

Хотя подобные негативные явления и имеют глубокие социально-психологические корни и подчас бывают обусловлены объективными факто-

рами, в ВС РА есть все условия для воспитания военнослужащих в духе высокого патриотизма и служения Отечеству, а также повышения уровня дисциплины. Нацеленная на это организационно-воспитательная работа должна проводиться одновременно по следующим основным направлениям: изучение прогрессивного международного опыта и его привнесение с учетом этнопсихологических особенностей и местных условий; безоговорочное обеспечение требований военных уставов при организации жизнедеятельности военнослужащих; постоянное изучение личностных особенностей военнослужащих и на этой основе прогнозирование их поведения; постоянная забота о физическом и психологическом здоровье и социальной защите военнослужащих, организации их быта и досуга. При этом необходимо обеспечить взаимосогласованную работу государственных и войсковых структур и общественных организаций для пресечения распространения в ВС порочных нравов.

TO THE ISSUE OF STRENGTHENING MILITARY DISCIPLINE IN THE RA ARMED FORCES AND THE STRUGGLE AGAINST PHENOMENA HAVING A NEGATIVE INFLUENCE ON IT

A. J. ALEXANYAN, Major General, Chief of the Department of Personnel, RA Armed Forces,
A. R. GRIGORYAN, Major, Officer-lawyer at the Branch of Military Discipline and Social and Legal Works of the Department of Personnel, RA Armed Forces

SUMMARY

The Department of Personnel of the RA Armed Forces is carrying out studies in troops for detecting key social, organizational and personal factors having a negative influence on the level of military discipline. Among these factors are the following: shortcomings in the processes of education and training in the family and school; insufficient accentuation of spiritual and ideological constituents of the value system accepted by the society; the activity of social subcultures and non-traditional religious groups mainly propagated from outside and spreading destructive attitude towards our state and society; unsystematized struggle against vicious habits, etc.

Although such negative phenomena have deep social and psychological roots and are often conditioned by objective factors there are all the conditions in the RA Armed Forces for educating servicemen in the spirit of high patriotism and service to the Fatherland, as well as for increasing the level of discipline. An organizational and educational work targeted at it should be implemented simultaneously in the following main directions: the study of the advanced international practice and its introduction taking into account ethno-psychological

peculiarities and local conditions; unconditional ensuring of requirements in army regulations while organizing servicemen's vital activity; constant study of servicemen's personality traits and prediction of their behavior based upon it; constant concern for the servicemen's physical and psychological health and social protection, the organization of their life and leisure. It is necessary to ensure interconsistent work of state and military structures and public organizations for preventing the spread of vicious habits in the Armed Forces.

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Կ. Գ. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ, ՀՀ ԱԺ պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի մշտական հանձնաժողովի նախագահ

ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Կարգապահությունը զինված ուժերում ունի առանձնակի կարևորություն, քանի որ անհատը, անցնելով զինվորական ծառայության, սովորում է կրել ու կիրառել մարտական զենք և գործել մեծ պատասխանատվության պայմաններում: Պատշաճ զինվորական կարգապահությունը զինված ուժերի անկյունաքարային երաշխիքներից է, որը հիմնվում է օրինակելի ղեկավարության նկատմամբ հարգանքի վրա: Միևնույն ժամանակ, կարգապահությունը չի սահմանափակվում միայն ստորադասի կողմից պարտականությունների կատարմամբ: Ոչ պակաս կարևոր ու շատ հաճախ առաջնային նշանակություն ունեն հրամանատարական կազմի կարգապահությունն ու ենթակաների նկատմամբ պատշաճ վերաբերմունքը՝ ոչ թե վախի, այլ հարգանքի մթնոլորտում:

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ԱՅԴ ՈԼՈՐՏՈՒՄ ԽՈՐՀՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

Հայաստանի Հանրապետության Զինված ուժերում կարգապահական իրավահարաբերությունները կարգավորվում են ՀՀ Սահմանադրությամբ, «Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» (այսուհետև՝ Կարգապահական կանոնագիրք), ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» (այսուհետև՝ Ներքին ծառայության կանոնագիրք) ՀՀ օրենքներով: Կարգապահական կանոնագիրքը տալիս է զինվորական կարգապահության սահմանումը, ըստ որի՝ այն «յուրաքանչյուր զինծառայողի կողմից Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, ՀՀ Զինված ուժերի կարգապահական կանոնագրքով, այլ օրենքներով ու Զինված ուժերում գործող այլ կանոնագրքերով, ինչպես նաև հրամանատարների (պետերի)՝ իրենց լիազորությունների շրջանակներում տված հրամաններով սահմանված պարտականությունների և կարգուկանոնի խստիվ ու ճշգրիտ պահպանումն է: Զինվորական կարգապահությունը հիմնվում է օրինականության, մարդու իրավունքների և ազատությունների հարգման, հրապարակայնության, խրախուսման ու կարգապահական պատաս-

խանատվության անխուսափելիության և անհատականացման, զինծառայողների զինվորական, իրավական ու բարոյական դաստիարակության սկզբունքների վրա»[1]:

Կարգապահական կանոնագիրքը հստակ կերպով սահմանում է զինվորական կարգապահության ապահովման և ամրապնդման գործում հրամանատարի դերն ու զինծառայողների կարգապահական իրավունքները և պարտականությունները, նախատեսում է զինծառայողներին տրվող խրախուսանքի տեսակները և կիրառման կարգը: Կանոնագրքով սահմանված են կարգապահական իրավախախտումների տեսակները, զինծառայողներին տրվող կարգապահական տույժերի տեսակները, ինչպես նաև կարգապահական տույժեր տալու, կիրառելու և հանելու կարգը: Սահմանված է, որ զինծառայողը չի կարող ենթարկվել կարգապահական պատասխանատվության այլ կերպ, քան օրենքով սահմանված հիմքերով ու կարգով:

Խորհրդարանում պարբերաբար անդրադարձ է արվում ՀՀ Զինված ուժերում կարգապահության խնդիրներին: 2013 թ. դեկտեմբերին ԱԺ պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի մշտական հանձնաժողովի նախաձեռնությամբ և Զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության ԺՆևի կենտրոնի աջակցությամբ անցկացվեց «Մարդու իրավունքները զինված ուժերում» եռօրյա միջոցառումների շարք, որն սկսվեց համանուն թեմայով միջազգային սեմինարով: Միջոցառման ժամանակ բարձրացվել են այնպիսի արդիական հարցեր, ինչպիսիք են ԶՈՒ-ի անձնակազմի նկատմամբ վերաբերմունքի բարոյական ու իրավական առումները, զինվորի իրավունքներն ու հիմնարար ազատությունները, օրենքի կատարման նկատմամբ իրավասու մարմինների ու կազմակերպությունների պատշաճ վերահսկողությունը, ժողովրդավարական վերահսկողության ակտիվացումը, միջազգային պարտավորությունների և միջազգային փորձի հաշվառմամբ օրենսդրական դաշտի կատարելագործումը, խորհրդարանի, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և մարդու իրավունքների պաշտպանի դերի մեծացումն ու նրանց կողմից մշտազննումների արդյունավետությունը, ինչպես նաև զինված ուժերի հետ կապված այլ հարցեր[2]: Միջոցառումների շարքն ավարտվեց խորհրդարանական լսումներով՝ միջազգային կառույցների մեծ ներգրավվածությամբ: Լսումների ժամանակ բարձրաձայնվեց կարգապահության, թափանցիկության և վերահսկելիության միջազգային չափանիշներին ՀՀ Զինված ուժերի համապատասխանեցման անհրաժեշտությունը, ՀՀ Զինված ուժերի կարգապահական կանոնագրքի կիրառման, բանակ–խորհրդարան–հասարակություն համագործակցության, ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտի կատարելագործման կարևորությունը

[1] «Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի կարգապահական կանոնագիրք», ՀՀ 2012 թ. մարտի 21-ի հմ. ՀՕ-91-Ն օրենքը («ՀՀ Պաշտոնական տեղեկագիր», 2012, հմ. 20 (894)):

[2] Տես «ԱԺ մշտական հանձնաժողովի նախաձեռնությամբ տեղի ունեցավ միջազգային սեմինար»: «ՀՀ Ազգային ժողով», 2013 թ. դեկտեմբերի 10 (http://www.parliament.am/news.php?cat_id=2&NewsID=6336&year=2013&month=12&day=10):

խորհրդարանական վերահսկողության և արդյունավետ համագործակցության առումով[3]:

ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ ԵՎ ԿԱՐԳԱԶԱՆՑՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Ընդհանուր առմամբ կարգապահության վրա ազդում են երկու խումբ գործոններ՝ արտաքին ազդեցության խնդիրները ու զինված ուժերում առկա ներքին խնդիրները[4]: Արտաքին ազդեցության խնդիրների խմբին է պատկանում հասարակության սոցիալական մշակույթի, արժեքների, նորմերի և այսպես կոչված «փողոցային կյանքի» ներթափանցումը բանակ: Քաղաքացիական կյանքում ձևավորված կարծրատիպները համապատասխան դաստիարակություն չստացած նորակոչիկների միջոցով ներթափանցում են նոր միջավայր՝ բանակ, որտեղ հարուցում են միջանձնային հարաբերություններում նոր կանոնների հաստատման փորձեր: Բանակ փողոցային կյանքի ներթափանցման ևս մեկ ճանապարհ է զինծառայողների կապն արտաքին աշխարհի հետ: Բնականաբար, նրանք ունեն զորամասից դուրս գալու, իրենց ընտանիքների, մտերիմների, ընկերների հետ շփվելու հնարավորություն: Արտաքին աշխարհի հետ շփումը երբեմն կարող է բացասաբար անդրադառնալ զինծառայողի վրա: Ընտանեկան խնդիրները, ընկերների հետ չկարգավորված հարցերը և այլ գործոններ ազդում են զինվորների վարքագծի ու կարգապահության վրա: Արտաքին գործոնների շարքը դասվող փողոցային բարքերն ու պաշտամունքները մեխանիկորեն անցնում են բանակ՝ բացասական գաղափարներով վարակելով բանակի հոգեպես առողջ անձնակազմն ու վտանգելով մթնոլորտը:

Զինված ուժերում երբեմն հանդիպում են նաև անհավասարության և անարդարության դեպքեր, երբ անտեսվում են զինծառայողների ընդհանուր սոցիալական, մասնավորապես՝ ընտանեկան առանձնահատկությունները: Երբեմն խնդիրների ծագումը կապված է հրամանատարական կազմի հետ, այն է՝ սպայակազմի կողմից խնդիրների անտեսում, խտրականության դրսևորում, լիազորությունների չարաշահում, ինչի հետևանքով սպաները կորցնում են զինվորների վստահությունը, և առաջ են գալիս կարգապահական խնդիրներ:

Կարգապահական խախտումների պատճառ կարող են լինել նաև այլ ներքին խնդիրներ, օրինակ՝ առողջական, գերծանրաբեռնվածության խնդիրները և այլն:

Կարգապահական խախտումների տարածված պատճառներից է նաև ոչ բավարար մակարդակի իրավական իրազեկվածությունը: Առանձին դեպքերում

[3] Տես «Մարդու իրավունքները զինված ուժերում» թեմայով եռօրյա միջոցառումների շարքը եզրափակվեց խորհրդարանական լսումներով»: «ՀՀ Ազգային ժողով», 2013 թ. դեկտեմբերի 12 (http://www.parliament.am/news.php?cat_id=2&NewsID=6342&year=2013&month=12&day=12):

[4] Տես «Կարգապահական քաղաքականության հիմնախնդիրները ՀՀ Զինված ուժերում», զեկույց: Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների: Ե., 2014:

զինծառայողները տեղեկացված չեն լինում զինվորական ծառայության ընդհանուր կարգի, իրենց իրավունքների և պարտականությունների, իրենց վարքագծի հետևանքների ու պատասխանատվության մասին:

Կարգապահական խախտման յուրաքանչյուր տեսակին համապատասխան՝ օրենքով սահմանվում է պատասխանատվության կոնկրետ միջոց՝ տույժ: Օրինակ՝ հրամանատարի հրամանը չկատարելու դեպքում կարող է նշանակվել արտահերթ աշխատանքային վերակարգ կամ զինծառայողը կարող է զրկվել զորամասի տեղաբաշխման վայրից հերթական արձակումից կամ տեղափոխվել կարգապահական վաշտ: Բացի տույժերից, նախատեսվում է նաև քրեական պատասխանատվություն, եթե հրամանը չկատարելու հետևանքով ծառայության շահերին հասցվել է էական վնաս:

ԻՐԱՎԱԿԻՐԱՌԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱ

2009–2013 թթ. քրեական գործերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ զինվորական հանցագործությունների թիվը շարունակաբար աճել է, իսկ կարգապահական պատասխանատվության՝ տույժերի թիվը նվազել[5]: Ասվածը վկայում է, որ ոչ բոլոր կարգապահական տույժերն են արդյունավետ կերպով իրացվում: Օրինակ՝ սահմանված 10 օրից մինչև մեկ ամիս ժամկետով կարգապահական վաշտ ուղարկելու կարգապահական տույժը բոլոր զորամասերում չէր, որ հնարավոր էր իրագործել, քանի որ 2013 թ. դրությամբ կար ընդամենը երկու կարգապահական վաշտ[6]: Վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ 2009–2013 թթ. ընթացքում առավել հաճախ կիրառվող կարգապահական տույժը նկատողությունն էր, ապա՝ խիստ նկատողությունը[7]:

Ավելի խիստ տույժ է արձակուրդի տրամադրման հետաձգումը կամ հերթական արձակուրդից զրկումը: «Կարգապահական կանոնագրքով» նախատեսված կարգապահական պատասխանատվության ևս մեկ միջոց է «այլ զորանոցային վիճակի բերել» տույժը: Զինծառայողի կատարած ակնհայտ կոպիտ կարգապահական կամ այլ իրավախախտման դեպքում նրա հետագա հակահիրավական վարքագիծը կանխելու կամ խափանելու նպատակով մինչև վերջինիս արարքին իրավական գնահատական տալը զորամասի հրամանատարը զինծառայողին կարող է մինչև երեք օր տևողությամբ փոխադրել այլ զորանոցային վիճակի՝ կասեցնելով զինծառայողի պաշտոնով նախատեսված զինվորական պարտականությունների կատարումը:

Զինված ուժերում տեղի ունեցած իրավախախտումների համար, կարգապահական պատասխանատվությունից բացի, օրենսդրությամբ սահմանվում է նաև քրեական պատասխանատվություն: ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածով (զինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնները խախտելը՝ նրանց միջև ենթակարգության հարաբերություններ չլինելու դեպքում) հարուցված գործերի թիվը 2008 թ. համեմատությամբ 2012 թ. աճել է մոտ հինգ ան-

[5] Տես նույն տեղում, էջ 25:

[6] Տես նույն տեղում, էջ 30:

[7] Տես նույն տեղում:

գամ: Գրեթե նույն չափով աճել է նաև ՀՀ քրեական օրենսգրքի 360-րդ (զինծառայողին վիրավորանք հասցնելը), 375-րդ (իշխանությունը չարաշահելը, իշխանազանցությունը կամ իշխանության անգործությունը), 376-րդ (ծառայության նկատմամբ անփույթ վերաբերմունք) հոդվածներով հարուցված գործերի թիվը[8]:

Զինվորական հանցագործությունների ցանկում մեծ է հատկապես 361-րդ հոդվածով[*] և 359-րդ հոդվածով դատապարտումների թիվը: Դրա պատճառն այն է, որ, օրինակ, 359-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում զինվորական փոխհարաբերությունների կանոնակարգային կանոնները խախտելու համար, ինչը պրակտիկայում տարածվում է գրեթե բոլոր այն տեսակի խախտումների վրա, որտեղ զինվորները անհանդուրժողականություն են դրսևորել[9]:

«Զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը» զինծառայողների կատարած հակաիրավական գործողությունների համար նախատեսում է ևս երկու տեսակի պատասխանատվություն՝ վարչական ու քաղաքացիաիրավական: Զինծառայողները վարչական պատասխանատվություն կրում են ընդհանուր հիմունքներով՝ վարչական իրավախախտումների մասին օրենսդրությանը համապատասխան: Քաղաքացիաիրավական պատասխանատվություն նրանք կրում են քաղաքացիական օրենսդրությամբ նախատեսված պարտականությունները չկատարելու կամ անբարեխիղճ կերպով կատարելու, պետությանը, իրավաբանական անձանց, քաղաքացիներին վնաս հասցնելու և օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՈՒ ԻՐԱՎԱԿԻՐԱՌՄԱՆ ՄԵՋ ԱՌԿԱ ԲԱՑԹՈՂՈՒՄՆԵՐԸ

Բանակում կարգապահական խնդիրների մի մասը բացատրվում է հրամանատարության և ենթակաների հարաբերություններում ծագող խնդիրներով: Իրավախախտումները երբեմն ի հայտ են գալիս իրավակիրառական պրակտիկայում բացթողումների պատճառով:

Առաջին հերթին տարածված չէ ժամկետային զինծառայողների կողմից կարգապահական տույժերի բողոքարկման պրակտիկան: Թեև «Կարգապահական կանոնագիրքը» զինծառայողներին տալիս է այդ հնարավորությունը, նրանք հիմնականում չեն օգտվում հիշյալ իրավունքից: Այսպես՝ ՀՀ Զինված ուժերում պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած և 2012 թ. զորացրվածների շրջանում անցկացված սոցիոլոգիական հարցմամբ պարզվել է, որ կարգապահական կալանք կրելու մասին որոշումը բողոքարկել է հարցման ենթարկվածների միայն 8 %-ը, կալանքի ենթարկված զինծառայողների 91,9 %-ը

[8] Տես «Կարգապահական քաղաքականության հիմնախնդիրները ՀՀ Զինված ուժերում», զեկույց: Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների: Ե., 2014, էջ 26:

[*] Զորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելը:

[9] Տես «Կարգապահական քաղաքականության հիմնախնդիրները ՀՀ զինված ուժերում», զեկույց: Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների: Ե., 2014, էջ 26:

կարգապահական կալանք կրելու մասին որոշումը չի բողոքարկել, մինչդեռ բողոքարկվողների մոտ 60 %-ը դիմել է վերադաս հրամանատարին, 20 %-ը՝ դատարան, իսկ 20 %-ը դիմել է արտաքին ոչ պաշտոնական կամ ոչ իրավական միջոցների[10]:

Բողոքարկելու իրավունքից չօգտվելու հիմնական պատճառներից է հրամանատարական կազմի հետ հարաբերությունները չվատթարացնելու և ավելի խիստ տույժերից խուսափելու ձգտումը: Այս առումով անհրաժեշտ է ուշադրություն դարձնել բանակում բողոքարկման ընթացակարգի արդյունավետությունը մեծացնելու վրա: Բացի այն բանից, որ խնդիրների մի մասը առնչվում է իրավակիրառական պրակտիկային, կան նաև իրավական ձևակերպումների հետ կապված որոշ խնդիրներ: Օրինակ՝ «Կարգապահական կանոնագիրքը» սահմանում է, որ այն հրամանատարը, որի իրավասությունների մեջ չի մտնում զեկուցագրում նշված հարցերի լուծումը, 3-օրյա ժամկետում զեկուցագիրն ուղարկում է վերադաս կամ այդ խնդիրները լուծելու իրավասություն ունեցող հրամանատարին՝ այդ մասին տեղյակ պահելով զեկուցողին: Զեկուցագիրը չի կարող ուղարկվել այն հրամանատարի (պետի) քննարկմանն ու կարծիքին, որի գործողությունները կամ անգործությունը բողոքարկվում են զեկուցագրում[11]: Մինչդեռ մեր իրականության մեջ հաճախակի են այն դեպքերը, երբ զինծառայողը բողոքարկում է, օրինակ, գումարտակի հրամանատարի հրամանը և հետագայում տեղեկացվում է, որ իր բողոքի հարցը լուծելու համար հանձնարարություն է տրվել հենց այն սպային, որի գործողություններից զինծառայողը դժգոհում էր[12]:

Երկրորդ՝ Զինված ուժերում դեռևս կիրառվում են ոչ պաշտոնական պատիժները, օրինակ՝ զինծառայողի պատիվն ու արժանապատվությունը նսեմացնելը, թեև դրանց կիրառումն ունի նվազման միտում:

Այսպիսով՝ Զինված ուժերում կարգապահական խնդիրներն ունեն ավելի մեծ ուշադրության պահանջ, եթե հաշվի առնենք այն փաստը, որ խիստ ու միևնույն ժամանակ ինքնագիտակցության վրա հիմնված կարգապահությունը նպաստում է Զինված ուժերի հեղինակությանը, հասարակություն–բանակ կապի ամրապնդմանը և բանակի՝ որպես հաստատության կայացմանը: Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է շարունակել այս դաշտում օրենսդրական բարեփոխումները, ապահովել գործող օրենսդրության անվերապահ կատարումը և, ամենակարևորը, հավասար ձևով դրա կիրառման տարածումը թե՛ զինծառայողների, թե՛ հրամանատարական կազմի վրա:

Թեև օրենսդրական դաշտում դեռևս կան բացթողումներ, այնուամենայնիվ, առկա են և մշակված մեխանիզմներ, որոնք գործարկելու համար անհրաժեշտ է իրավակիրառական պրակտիկայի ամրապնդում: Մյուս կողմից՝ բանակում կար-

[10] Տես «Մարդու իրավունքների պաշտպանության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետության Զինված ուժերում», զեկույց, էջ 54:

[11] «Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի կարգապահական կանոնագիրք», ՀՀ 2012 թ. մարտի 21-ի հմ. ՀՕ-91-Ն օրենքը («ՀՀ Պաշտոնական տեղեկագիր», 2012, հմ. 20 (894)):

[12] Տես «Մարդու իրավունքների պաշտպանության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետության զինված ուժերում», զեկույց, էջ 32:

գապահության ամրապնդման և հանցավորության մակարդակի նվազեցման համար անհրաժեշտ է ոչ թե պատիժների խստացում, այլ կադրային խնդիրների լուծում, սպայական կազմի պատրաստականության աստիճանի բարձրացում, ուժեղացում: Այսօրվա դրությամբ դեռ ամրապնդված չէ այն պրակտիկան, որ հրամանատարները և՛ պատասխանատվություն կրեն, և՛ հաշվետու լինեն զինծառայողների գործողությունների համար: Բնականաբար, հրամանատարը չի կարող տեղեկացված լինել զինծառայողի յուրաքանչյուր քայլի մասին, սակայն դա նրան չի ազատում պատասխանատվությունից: Հրամանատարը պարտավոր է պատրաստել զինծառայողներին այնպես, որ նրանք ունակ լինեն գործելու ինքնուրույնաբար և անկախ՝ միևնույն ժամանակ մնալով հրամանատարի վերահսկողության շրջանակներում: Կարգապահական կանոնագրքով ևս նախատեսված է, որ զինվորական կարգապահության և կանոնադրական կարգի ամրապնդման համար պատասխանատու են բոլոր խմբերի հրամանատարները, սպայական ու ենթասպայական անձնակազմերը:

Այսպիսով՝ կարգապահությունը բանակի կայացման ու ամրապնդման կարևոր բաղադրիչն է, թեև միակը չէ: Բանակը՝ որպես հաստատություն, անհատը՝ որպես բանակի մասնիկ, զինվորների ու հրամանատարների նվիրվածությունը, ղեկավարություն – զինվոր փոխադարձ հարգանքը, ծառայության ընթացքում զգոնությունն ու սթափ գիտակցությունը Զինված ուժերի կայացման ոչ պակաս կարևոր բաղադրիչներն են, որոնք ևս այս կամ այն չափով առնչվում են կարգապահության հետ:

ЗАКОНОДАТЕЛЬНЫЕ МЕРОПРИЯТИЯ ПО УКРЕПЛЕНИЮ ВОИНСКОЙ ДИСЦИПЛИНЫ В РАМКАХ ОБОРОННЫХ РЕФОРМ

К. Г. НААПЕТЯН, председатель Комиссии по обороне, национальной безопасности и внутренним делам НС РА

РЕЗЮМЕ

Рассматриваются правовые основы воинской дисциплины и рамки деятельности Парламента в данной сфере, внутриармейские и внешние факторы, влияющие на воинскую дисциплину. На основе изучения уголовных дел и правонарушений в ВС за последние 4 года анализируется практика правоприменения закона РА «Дисциплинарный устав ВС РА». Отдельно рассматриваются правонарушения со стороны командирского состава ВС. Отмечаются упущения в законодательстве, регулирующего вопросы воинской дисциплины, в том числе, отсутствие четких механизмов защиты прав военнослужащих, в частности – по опротестованию приказа командира о наказании. Отмечается, что для снижения уровня преступности в ВС необходимо не ужесточение наказаний, а решение кадровых вопросов и повышение уровня подготовки офицерского состава, осознание им своей ответственности за любые действия или бездействие подчиненных.

LEGISLATIVE MEASURES TO STRENGTHEN MILITARY DISCIPLINE WITHIN THE DEFENSE REFORMS

K. G. NAHAPETYAN, Chairman of the RA NA Standing Committee on Defense, National Security and Internal Affairs

SUMMARY

The legal bases of military discipline and the scope of the parliamentary activities in the given sphere, as well as the intra-army and external factors affecting the military discipline are considered in this article. The practice of enforcing the «Disciplinary Regulations of the RA Armed Forces» Law is analyzed based upon the study of criminal cases and offenses in the Armed Forces for the last four years. The offenses by the commanding staff of the Armed Forces are dealt with separately. Omissions in the legislation regulating the issues of military discipline, including the lack of efficient mechanisms to protect servicemen's rights, particularly the ones to protest the commander's order, are earmarked. The article points out that in order to reduce the crime rate in the Armed Forces it is necessary not to toughen the punishments but to solve personnel matters and raise the level of training of the commissioned staff, the awareness of their responsibility for any action or inaction of the subordinates.

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ, ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԵՎ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ԻՐԱՎԱԿԱՐԳԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ա. Ռ. ԱՎԵՏԻՍՅԱՆ, փոխգնդապետ, ՀՀ ՊՆ պաշտպանական քաղաքականության վարչության ՄՊԻԱ բաժնի պետի տեղակալ, ԵՊՀ կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի դասախոս, ԵՊԼՀ կրթության կառավարման և պլանավորման ամբիոնի դասախոս

Կարգապահությունը սոցիալական խմբի և դրա կազմի մեջ մտնող անհատների վարքագծի թույլատրելի և անհրաժեշտ չափն է ու վիճակը, որն ապահովում է հաստատության պատշաճ գործառումը*: Ընդ որում, եթե սոցիալ-քաղաքական հաստատությունների բնականոն գործառման համար կարգապահությունը դիտվում է որպես առաջնային կարևորության խնդիր, ապա զինված ուժերի գործունեության արդյունավետության ապահովման համար այն ունի նաև հիմնարար նշանակություն: Նախ. անկախ զինված ուժերի գործունեության ոլորտից կամ բնույթից (պետության անվտանգության ապահովում, սահմանների պաշտպանություն, խաղաղապահություն և այլն), կարգապահական խնդիրների առկայությունը հանգեցնում է զինվորական համակարգի գործառական շրջանի ձևախախտման, դրա անհարկի ճյուղավորման և ռեսուրսների վատնման, քանի որ զինված ուժերի հիմնական գործառույթներին զուգահեռաբար, ժամանակի և միջոցների մի մասն ուղղվում է զինվորական կոլեկտիվներում կարգապահության ամրապնդմանը:

Թեև զինված ուժերում կարգապահության խնդիրը նոր մարտահրավեր չէ և տարբեր դրսևորումներով միշտ եղել է ուսումնասիրության առարկա, պետք է ընդունել, որ պատմության զարգացման ընթացքում այն ենթարկվել է լուրջ փոփոխությունների: Մեր դիտարկումները ցույց են տալիս, որ զինված ուժերում կարգապահության ապահովման խնդրի պատմական ձևափոխումները սերտորեն կապված են միջազգային անվտանգային ուսմունքների զարգացման հետ:

Պետութենագիտության և քաղաքագիտության համար առանձնակի կարևորություն ունեցող տեսություններում գրեթե միշտ հատուկ կերպով արծարծվում են զինվորական հաստատության հետ կապված հարցեր, որոնք շատ դեպքերում ունենում են համահաստատութենական նշանակություն: Այսպես. ըստ Մաքս Վեբերի՝ զինվորական կարգապահությունից են բխում մյուս բոլոր տեսակների կարգապահությունները, քանի որ զինվորական կարգապահությունն իր ռացիոնա-

* Սահմանումը հեղինակինն է:

լացմամբ դառնում է այդ ժամանակների եվրոպական պետությունների բյուրոկրատական կազմակերպությունների հենքը[1]: Այսինքն՝ Վեբերն է՛լ ավելի է կարևորում զինվորական կարգապահության դերը և այն դիտում է ոչ միայն որպես զինվորական կառավարման արդյունավետ համակարգի համար հիմնարար, այլև որպես բյուրոկրատական պետությունների կերտման գործում համակարգաստեղծ: Այս եզրակացությունն ունի իր հիմնավոր պատճառները: Բանն այն է, որ Վեբերի ակտիվ գործունեության տարիներին ձևարկված հաստատությունները (հստակ կանոնակարգով, ձևարկված կառավարմամբ) դեռ լայն տարածում չունեին, իսկ աշխատանքի կազմակերպման հիմքում ընկած էր հայրիշխանական (պատրիարխիկ) կառավարումը: Կազմակերպությունների փաստացի կառավարումն իրականացնում էր գրեթե անսահմանափակ իշխանությամբ օժտված «ղեկավար հայրը», որն իր ցանկությամբ կարող էր պատժել, խրախուսել, հեռացնել կամ առաջ քաշել աշխատողներին[*]: ՈՒստի, վերլուծելով 19-րդ դարի վերջին սկիզբ առած գործընթացները, Վեբերն առաջարկում է «մենիշխանական բյուրոկրատիայի» մոդելը, որի հիմքում դրված են հետևյալ հիմնական հատկությունները.

– աշխատանքի հստակ բաժանում,

– ստորաբաժանումների աստիճանակարգվածություն,

– աշխատանքի իրականացումը կառավարող նորմերի/կանոնների համախումբ,

– անձնակազմի ընտրության հարցում տեխնիկական որակավորումների հաշվառում (ոչ թե ընտանեկան կապերի կամ ընկերության վրա հիմնված համալրում),

– աշխատանքը՝ որպես հիմնական զբաղմունքի տեսակ, և երկարատև կարիերա ունենալու հնարավորություն[2]:

Այս համախումբը հստակ կերպով արտացոլում է Վեբերի հայեցակարգում զինվորական կարգապահությանը վերապահված առանձնակի դերը, քանի որ նշված հատկություններից յուրաքանչյուրն առաջին հերթին բնորոշ է զինվորական խմբին:

---

[1] Տես *S. Malesevic.* The sociology of war and violence. Cambridge University Press: New York, 2010, P. 26:

[*] ՈՒշագրավ է, որ «ղեկավար հոր» այս հայեցակարգը, որն անգամ 19-րդ դարում դիտվում էր որպես հետադիմական, 1990-ական թթ. կեսերին անսպասելիորեն տարածում է ստանում ՀՀ Զինված ուժերում որպես կարգապահության և զինված ուժերի անձնակազմի կառավարման արդյունավետության աստիճանի բարձրացման միջոց: Մասնավորապես՝ սոցիալական գովազդներ էին պատրաստվում, որոնցում լայն տարածում էր ստացել «Հրամանատա՛ր, որդուս հետ վարվիր, ինչպես կվարվես քո որդու հետ» կոչը: Կոչը զինվորական որոշ շրջանների կողմից ընկալվեց ուղղակիորեն, և տարածվեց հրամկազմի կողմից ենթակա անձնակազմի նկատմամբ այսպես կոչված «հայրական դաստիարակության» մեթոդները, որոնք ոչ այլ ինչ էին, եթե ոչ զինված ուժեր ընտանեկան բռնության որոշ տարրերի ներբերում: ՈՒստի այս սոցիալական գովազդի բացասական կողմերը շատ արագ ի հայտ են գալիս, և այն շրջանառությունից դուրս է բերվում ՀՀ ՊՆ կոլեգիայի նիստերից մեկի որոշմամբ:

[2] Տես *L. G. Bolman, T. E. Deal.* Reframing organizations, artistry, choice and leadership. Jossey-Bass: San Francisco, 2008, P. 48:

ՈՒշագրավ է, որ Վեբերը չի սահմանափակվում կարգապահության ձևական սահմանների ուրվագծմամբ, այլև կարգապահությունը սերտորեն փոխկապում է օրինականության հետ: Մասնավորապես՝ նա պետությունը դիտում է որպես մի մարդկային հանրույթ, որը որոշակի տարածքում հաջողությամբ իրականացնում է բռնության օրինական կիրառման մենաշնորհային իրավունքը[3]: Այստեղ հույժ կարևոր է «օրինական» տերմինի կիրառումը, քանի որ բռնության մենաշնորհայնացման պայմաններում դրա միջոցով են ըստ էության սահմանափակվում պետության (կամ տվյալ դեպքում՝ դրա գործակալը հանդես եկող զինված ուժերի) կողմից բռնության անվերապահ ու անվերահսկելի կիրառման հնարավորությունները: Որոշակի արտածմամբ կարող ենք ասել, որ Վեբերը, հաստատությունների կառուցվածքագործառական զարգացման հիմքում դնելով զինվորական կարգապահությունը, այն դիտում է ոչ միայն որպես վերջնաարդյունքին ամեն գնով հասնելու գործիք կամ միջոց, այլև կապում է օրինականության գաղափարի հետ, ինչով մեղմում է զինվորական կարգապահության խիստ բնույթը և բացառում զինվորական կարգապահության ապահովման նպատակով հակաօրինական կամ ոչ օրինական միջոցների կիրառումը:

Սակայն Վեբերի տեսությունն իր համընդգրկունությամբ հանդերձ բավարար չէ զինվորական կարգապահության և դրա միջոցով զինվորական համակարգում իրավակարգի պահպանման հարցերը ամենայն խորությամբ մեկնաբանելու համար: Վեբերը, ձևարկված հաստատությունների զարգացումը կապելով զինվորական կարգապահության մոդելի ներդրման հետ, չի մանրամասնել բուն զինվորական կառավարման, հետևաբար նաև՝ զինվորական կարգապահության կազմակերպման պրոբլեմները:

Այս բացը լրացնելու փորձ են անում այլ՝ հիմնականում ամերիկյան, սոցիոլոգիական-քաղաքագիտական դպրոցի ներկայացուցիչները: Հատկապես ուշադրության են արժանի զինվորական պրոֆեսիոնալիզմի տեսանկյունից հանրահայտ գիտնականներ Ս. Հանտինգտոնի[4] և Մ. Յանովիցի[5] կատարած դիտարկումները, ինչպես նաև Ջ. Միլսի «ընտրյալապաշտական» («էլիտարիստական») եզրահանգումները[6]:

Նշված հեղինակների կարծիքների ընդհանուր վերլուծությունը հնարավորություն է տալիս պնդելու, որ այլ անվտանգային-ուժային կառույցներից տարբերվող, հատկապես՝ ոստիկանական գործառույթներից հնարավորինս զերծ զինվորականների սոցիալական խմբի և սոցիալական հաստատության ձևավորման համար կարևոր նշանակություն ունի զինվորական մասնագիտացվածության ձևավորումը: Ընդ որում, զինվորական խմբի սոցիալական հենքը կազմում է պրո-

[3] Տես *A. Ghani, C. Lockhart.* Fixing failed states. A framework for rebuilding a fractured world. Oxford University Press: New York, 2008, P. 116:

[4] Տես *S. Hantington.* The soldier and the state. The theory and politics of civil-military relations. The Belknap press of Harvard University Press: Cambridge, Massachusetts, 1959:

[5] Տես *M. Janowitz.* The Professional Soldier: A Social and Political Portrait. The Free Press: New York, 1960:

[6] Տես «Handbook of the Sociology of Military». Ed. by G. Caforio. New York, 2003:

ֆեսիոնալ կրթություն ստացած զինվորականությունը (ներառյալ՝ ոչ զորակոչի միջոցով զորքերը համալրող շարքային կազմը), որի շուրջ էլ ձևավորվում է զինված ուժերի սոցիալական հաստատությունը:

Իսկ զինվորական պրոֆեսիոնալիզմի ստեղծումը հիմնվում է արևմտյան արժեհամակարգում լուսավորչականության գաղափարների ամրապնդման, ինչպես նաև քիչ թե շատ կայուն աշխարհակարգի ու անվտանգային համակարգի (Վեստֆալյան համակարգ) ստեղծման վրա: Այդ գործընթացի համար իրական խթան են բուրժուաժողովրդական հեղափոխությունները և դրանց ուղեկցող պատերազմները կամ, որ ավելի ճիշտ է, այդ պատերազմներում անհաջողությունների դառը փորձը, որն այդ ժամանակաշրջանին բնորոշ ռազմաքաղաքական սերտաճած վերնախավին ստիպում էր վերանայել բանակաշինության ու պատերազմների վարման քաղաքականությունը՝ պետության կառավարմանն արդեն անմիջական մասնակցություն բերող զանգվածների (բուրժուազիայի) կարծիքի և ցանկությունների հաշվառմամբ: Այլ կերպ ասած՝ կենտրոնացված իշխանության առկայությունը, տարածքայնության վրա հիմնված ազգ-պետությունների վերջնական ձևավորումը, բնակչության թվի աճումը, արդյունաբերականացումը ու դրանից բխող տնտեսական-ռեսուրսային պահանջմունքները և, վերջապես, ժողովրդավարացումը նպաստավոր պայմաններ էին ձևավորում զինվորական պրոֆեսիոնալիզմի հիմքերի ստեղծման համար:

Թերևս ժողովրդավարացումն է առավելապես նպաստում ժամանակակից ընկալմամբ կազմակերպված և պրոֆեսիոնալ զինված ուժերի ստեղծմանը: Նախ. ժողովրդավարության ամրապնդման շնորհիվ ընդլայնվում է զինված ուժերի համալրման սոցիալական հենքը: Մինչ այդ, ծագման, սոցիալական կամ այլ պատճառներով զինվորական ղեկավար պաշտոններ զբաղեցնելու իրավունք չունեցող անձինք ձեռք են բերում կրթություն ստանալու, աշխատանքի ազատ ընտրության և ծառայողական առաջխաղացման հավասար հնարավորություններ: Ռազմամասնագիտական ուսումնական հաստատություններում կրթություն ստանալով՝ նրանք իրական մրցակցության պայմաններում աստիճանաբար դուրս են մղում զինվորական համակարգում բացառապես սոցիալական դիրքի շնորհիվ ղեկավար պաշտոններ զբաղեցնող անձանց՝ այդպիսով հիմք դնելով պրոֆեսիոնալ սպայակազմի, զինվորական կառավարման մշակույթի, զինվորական պրոֆեսիայի ձևավորմանը և դրա միջոցով կարգապահության ու իրավակարգի ապահովման երաշխիքների համակարգի ստեղծմանը:

Ժողովրդավարացումը նպաստավոր պայմաններ է ստեղծում նաև զինված ուժերում սոցիալական շերտավորման արատավոր երևույթից ձերբազատվելու համար, և ժողովրդավարություն չլինելու հանգամանքը կարելի է դիտել որպես զինվորական գործի արդյունավետության համար հիմնական խոչընդոտներից մեկը: Դրա փոխարեն ձևավորվում է բյուրոկրատական, աստիճանակարգային համակարգ, որի կառավարման հիմքում բոլորի համար պարտադիր կանոնակարգն է: Սոցիալական շերտավորման ու ներխմբային հարաբերություններում սոցիալ-դասակարգային լարվածության թուլացմանը նպաստում է զինվորական կառավարման համակարգի քաղաքական չեզոքության հաստատումը, որը թեև

զինված ուժերի ամբողջական ապաքաղաքականացում չի ենթադրում, սակայն պայմաններ է ստեղծում զինված ուժերի կողմից ժողովրդաիշխանությունը փաստացի կրող, միակ օրինական պետական-քաղաքական ուժին հավատարիմ լինելու համար: Այլ կերպ ասած՝ զինծառայողները, անկախ իրենց քաղաքական կամ սոցիալական համակրանքից, պարտավորվում են պաշտպանել այն քաղաքական ուժի շահերը, որն այդ պահին մարմնավորում է պետական իշխանությունը, այսինքն՝ ծառայել պետությանը: Դրանից բխում է, որ պրոֆեսիոնալիզմը զարգացնում է նաև պատասխանատվություն և քաղաքականությանը ենթարկվելու մշակույթ[7]:

Այս զարգացումները, հիմնված լինելով պատմական էմպիրիկ փորձի վրա, փաստացի հիմք են դառնում ժամանակակից զինված ուժերի հաստատության վերջնական ձևավորման համար: Բնականաբար, լուրջ փոփոխությունների է ենթարկվում նաև զինվորականների ներքին կառավարման մշակույթը: Օրինակ՝ ըստ ամերիկացի ռազմական սոցիոլոգ Մորիս Յանովիչի.

– որպես հասարակական զարգացման արդյունք՝ ընդլայնվում է զինվորականների առջև դրված այն հատուկ մասնագիտական խնդիրների շրջանակը, որոնց լուծման համար պահանջվում է զինված ուժեր հասարակության լայն շրջանների ներգրավում: Դա կատարվում է կամավորության հիման վրա, ուստի և հանգեցնում է զինվորական մշակույթի հետ հասարակական այլ շերտերի սերտ շփմանը և փոխադարձ ազդեցությանը,

– զինված ուժերի կառավարման ոլորտում աստիճանական զարգացման հետևանքով պրոֆեսիոնալիզմի ընկալման դասական պատկերացումներում «**հերոս սպայի**» կերպարին փոխարինելու են գալիս նախ «**սպա-կառավարիչները**», ապա նաև «**սպա-տեխնոլոգները**», որոնք համադրում են զինվորական և քաղաքացիական մասնագիտությունների վերաբերյալ պատկերացումները,

– ակտիվանում է զինվորականների վերաինտեգրումը հասարակությանը, քանի որ զինվորականի նոր դերի ստանձնման և նոր խնդիրների կատարման նպատակով անհրաժեշտ է լինում հանգել հասարակության հետ փոխզիջումային որոշման[8]:

Այսպիսով՝ կարելի է փաստել, որ բավական կարճ պատմական ժամանակահատվածում (19–20-րդ դարի վերջ) ամփոփ տեսք է ստանում ներկայիս զինված ուժերի սոցիալական հաստատությունը, ձևավորվում են զինվորական կառավարման մշակույթի և զինվորականների մասնագիտության անկյունաքարային բաղադրատարրերը, որոնց շրջանակում հատուկ տեղ են զբաղեցնում զինվորական ծառայության կազմակերպման իրավական սկզբունքների ու զինվորական կարգապահության ապահովման դասական մոդելները:

Սակայն «սառը պատերազմի» ավարտը կանխորոշում է այս ոլորտում միջազգային անվտանգային զարգացումների և փոփոխությունների մի նոր հոսք,

[7] Տես *W. C. McWilliams.* Garrisons and Governments. Politics and the Military in new states. Chandler Publishing Company: San Francisco, 1967, PP. 51–52:

[8] Տես «Handbook of the Sociology of Military», PP. 17–18:

որը, տուրք տալով պատմության զարգացման արագացման սկզբունքին[*], շատ ավելի դինամիկ փոփոխություններ է ենթադրում զինված ուժերի հետ կապված ոլորտներում: Միջազգային անվտանգային միջավայրի փոփոխությունների, սպառնալիքների և դրանց հակազդեցության միջոցների դինամիկ զարգացման շնորհիվ ձևավորվում են մի շարք նոր միջազգային եզրույթներ, որոնցից որպես զինվորական կառավարման մշակույթի և կարգապահության հետ սերտորեն առնչվող հասկացություններ առանձնացնում ենք «մարդու անվտանգությունը» (*Human Security*), «խելամիտ պաշտպանությունը» (*smart defense*) և «համազգեստով քաղաքացիները» (*citizen in uniform*): Ընդհանուր իմաստով դրանք սերում են մարդու իրավունքների ընդհանուր գաղափարից, միևնույն ժամանակ, միջազգային անվտանգության ապահովման այլընտրանքային փորձերի գործիքներ են: Այլ կերպ ասած՝ փորձ է արվում մարդու իրավունքների վրա հիմնված արժեհամակարգային երևույթների խրախուսման միջոցով լուծելու նաև անվտանգային խնդիրները:

Մարդու անվտանգությունը ենթադրում է անհատի մասով ազգային անվտանգության սկզբունքների զուգակցում մարդու իրավունքների պաշտպանության հետ, որի միջոցով զինված ուժերի գործունեության շրջանակը սահմանափակվում է առավելապես խաղաղության պահպանման գործառույթներով: Այս հասկացության կարևորությունն այն է, որ մարդու անվտանգության հայեցակարգը ենթադրում է ոչ միայն վտանգված բնակչության կամ մարդկային բարեկեցության ապահովման արժեքների հատուկ պաշտպանություն, այլ պաշտպանության տակ է առնում նաև այդ անվտանգությունն ապահովող զինված ուժերի անձնակազմի անդամներին[9]:

Խելամիտ պաշտպանությունը ենթադրում է քիչ ռեսուրսներով ավելի մեծ արդյունավետության ապահովում: Սա իր հերթին ունի երկու դրսևորում: Այն, մի կողմից, խթանում է համագործակցային կարողություններին ապավինելու պետությունների միտվածությունը, երբ փոխլրացման ու փոխօգնության միջոցով ապահովվում են մի քանիսի կենսական շահերն ու այդ փոխշահավետության միջոցով նվազագույնի են հասցվում պաշտպանական ծախսերը, մյուս կողմից՝ կարող է ենթադրել նաև անվտանգային նպատակին հասնելու համար հնարավորինս քիչ մարդկային ռեսուրսների ընդգրկում և վտանգում:

---

[*] Հումանիտար գիտությունների բնագավառում, հատկապես՝ սոցիոլոգիայում, լայն տարածում ստացած տեսակետ, որի համաձայն՝ պատմական զարգացման յուրաքանչյուր հաջորդ պայմանական փուլ ավելի կարճատև է, քան նախորդը:

[9] Ձևական տեսանկյունից «մարդու անվտանգության» ձևակերպումը կապվում է 1994 թ. ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (*UNDP*) նախաձեռնության հետ, որի նպատակն էր տարածքային պաշտպանության, ազգային շահերի, միջուկային զսպման իմաստ արտահայտող «անվտանգություն» հասկացության սահմանների ընդարձակումը՝ «համընդհանուր բնույթի մտահոգությունների», հակամարտությունների կանխարգելման, ինչպես նաև աղքատության և թերզարգացման վերացման ներառմամբ, ինչը ենթադրում էր ազգ–պետությունների անվտանգային շահերից անցում դեպի «ժողովրդակենտրոն» անվտանգություն (տես *B. Buzan, L. Hansen.* The evolution of International Security Studies. Cambridge, 2009, P. 202):

Համազգեստով քաղաքացիներ[10] հասկացությունը նույնպես համեմատաբար նոր է մուտք գործել միջազգային սոցիոլոգիական-քաղաքագիտական ուսումնասիրությունների ոլորտ: Սա իրավունքների տեսակետից զինծառայողին այլ քաղաքացիներից չառանձնացնելու մոտեցում է, որը մեղմում է զինծառայողի կարգավիճակով պայմանավորված սահմանափակումների բնույթը՝ հատկապես նվազագույնի հասցնելով զինծառայողի սահմանափակվող իրավունքների շրջանակը: «Համազգեստով քաղաքացիներ» հայեցակարգով[11] զինված ուժերի անձնակազմի համար նախատեսվում է մյուս բոլոր քաղաքացիներին հավասար իրավունքներից օգտվելու հնարավորություն, ներառյալ՝ ակտիվ քաղաքական իրավունքները[12]:

Նշված երեք հասկացությունների ամփոփ ուսումնասիրությունից երևում է, որ միջազգային անվտանգային խնդիրներում «մարդկային» գործոնի կարևորության մեծացմանը զուգահեռաբար զինված ուժերի անձնակազմը նույնպես սկսում է դիտվել որպես պաշտպանության հատուկ սուբյեկտ: Գործի են դրվում «խելամիտ պաշտպանություն» և «համազգեստով քաղաքացիներ» հայեցակարգերը, որոնք, համապատասխանաբար, ուղղված են համագործակցային և կառավարային կարողությունների զարգացման միջոցով մարդկային ռեսուրսները հնարավորինս նվազագույն վտանգի ենթարկելուն, ինչպես նաև զինծառայողների պատշաճ կենսապայմանների ու սոցիալ-քաղաքական պահանջմունքների բավարարման նպատակով սահմանափակումների շրջանակը առավելագույնս նեղացնելուն:

Հետարդյունաբերական հասարակության շրջանում անվտանգային ընկալումների փոփոխության ու դրանց շրջանակի դինամիկ ընդլայնման հետևանքով փոփոխություններ են կրում նաև զինված ուժերի գործառույթները (խաղաղապահական գործողություններ, ահաբեկչության դեմ պայքար, կազմակերպված հանցավորության դեմ պայքար, արտակարգ իրավիճակների հետևանքների վերացում, կիբեռհանցավորության դեմ պայքար և այլն), որոնք պահանջում են հասարակության տարբեր շերտերի հետ ակտիվ փոխգործության ապահովում, ինչպես նաև քաղաքական որոշումների կայացման ընթացքում զինված ուժերի

[10] «Համազգեստով քաղաքացիներ» հայեցակարգը ենթադրում է, որ զինված ուժերի անձնակազմը, թե՛ պրոֆեսիոնալ և թե՛ զորակոչված, օժտված է այն նույն իրավունքներով և պաշտպանության երաշխիքներով, ինչ և բոլոր անձինք, և դրանք ենթակա են զինվորական կյանքով պայմանավորված որոշակի սահմանափակումների (տես «Ձեռնարկ զինված ուժերի անձնակազմի մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին»: ԵԱՀԿ երևանյան գրասենյակ (http://www.osce.org/hy/odihr/88572?download=true)):

[11] Տես *J. O. Koltermann.* Citizen in Uniform: Democratic Germany and the Chenging Bundeswehr (http://strategicstudiesinstitute.army.mil/pubs/parameters/articles/2012summer/koltermann.pdf):

[12] Այս մոտեցումն ակտիվորեն քննարկվեց 2006 թ. սեպտեմբերի 7-ից 8-ը Բեռլինում կայացած «Համազգեստով քաղաքացիներ. մարդու իրավունքների պաշտպանությունը զինված ուժերում» համաժողովի ընթացքում, որում ՀՀ ՊՆ-ն ներկայացրել է սույն հոդվածի հեղինակը (տես «Citizen in Uniform: Implementing Human Rights in the Armed Forces». Berlin 7–8 September. Conference Report (http://www.osce.org/odihr/22130?download=true)):

մասնագիտական-փորձագիտական կարծիքների առավելագույնս հաշվառում: Բացի այդ, ժողովրդավարական արժեհամակարգի հիմնարար սկզբունքների մեկնաբանությունների ազատականացմանը զուգընթաց աճում են զինծառայողների համար նախկինում սովորական համարվող սահմանափակումների վերացման տեմպերը: Օրինակ՝ Գերմանիայի Զինված ուժերի գործունեության հիմքում ընկած «Ներքին ղեկավարում» (*Innere Fuhrung*), հայեցակարգը նույնպես կառուցվում է «համազգեստով քաղաքացիներ» հասկացության վրա, որը զինված ուժերի անձնակազմի համար նախատեսում է մյուս բոլոր քաղաքացիներին հավասար իրավունքներից օգտվելու հնարավորություն, ներառյալ՝ ակտիվ քաղաքական իրավունքները[13]:

Մեծ թափ է ստանում այլընտրանքային ծառայության հայեցակարգը, որը կրոնական կամ այլ գաղափարական հենքի (օրինակ՝ խաղաղապաշտություն, կամ պացիֆիզմ) հիման վրա անձին հնարավորություն է տալիս ազատվելու սովորական զինվորական ծառայությունից կամ ծառայություն անցնելու հատուկ ու տարբերվող պայմաններով: Զինված ուժերում տարածում են ստանում նաև միասեռականների ազատությունների դրսևորումները, որոնք նախկինում «Մի՛ հարցրեք, մի՛ պատասխանեք» (*Don't ask, don't tell*) հատուկ հայեցակարգի շրջանակում սահմանափակված էին անգամ ազատականության տարածման մեկնակետ համարվող ԱՄՆ-ում[14]: Այսինքն՝ անձի իրավունքների և հիմնարար ազատությունների ներթափանցումը զինված ուժեր բնականաբար հանգեցնում է զինվորականների քաղաքական սոցիալականացման մակարդակի բարձրացմանը, ինչպես նաև նպաստում է զինվորական արհմիությունների, միությունների, զինվորական օմբուդսմենների հաստատությունների կամ այլ լոբբինգային խմբերի հասարակական-քաղաքական ակտիվացմանը:

Բնականաբար, նման պայմաններում կարիք կա լրջորեն վերանայելու զինվորական կարգապահության ապահովման ավանդական միջոցները: Ի հայտ է գալիս անձնակազմի հետ աշխատանքի նոր մեխանիզմների մշակման պահանջմունք, ընդսմին դրա արժեքավորությունը առավել ազատ, ինքնաբավ և պաշտպանված իրավունքներով զինվորականների սոցիալական խմբերում իրավակարգի պաշտպանության և կարգապահության ամրապնդման նպատակով զինվորական կառավարման մշակույթի նոր մեխանիզմների ներդրման մեջ է: Բազմաշերտ և ճկուն կառավարման համակարգի ձևավորման նպատակով տարածում են ստանում զինվորական առաջնորդության նոր հայեցակարգերը, որոնք զինվորական ավանդական աստիճանակարգային և կոշտ իրավահարաբերությունները լրացնում են արժեքային այլ ուղղվածություն ունեցող բաղադրիչներով:

[13] Տես *Ջ. Օ. Կոլպերման,* Նշ. աշխ.:

[14] Այս հայեցակարգի հիմքում դրված էր ոչ ավանդական սեռական կողմնորոշում ունեցող անձանց «սեռական կարգավիճակի» և «սեռական վարվելակերպի» առանձնացումը, որը բացառում էր սեռական կողմնորոշման վերաբերյալ հարցեր տալու հնարավորությունը, սակայն նման կատեգորիայի անձանց չէր արգելում դրսևորել իրենց կողմնորոշումը ծառայությունից դուրս ժամանակահատվածում (տես «Lesbians and Gay Men in the U.S. Military: Terminology and Key Concepts» (http://psychology.ucdavis.edu/rainbow/html/military_terms.html)):

Պետք է փաստել, որ ՀՀ Զինված ուժերը դուրս չեն մնացել այս զարգացումներից: 2012 թ. ԵԱՀԿ երևանյան գրասենյակի օժանդակությամբ հրատարակվեց զինվորական առաջնորդության վերաբերյալ ձեռնարկ[15], որում կառավարման տեսությունների մաս կազմող՝ կազմակերպությունների կառավարման կերպի վերակազմակերպման հայեցակարգը հարմարեցվել է ընդհանրապես զինվորական կառավարման տեսության և, մասնավորապես, ՀՀ ԶՈՒ-ի կառավարման պահանջներին, ընդ որում, առանձնացվել են փոխլրացնող տիպերի կառավարման չորս կերպ՝ կանոնադրական, մարդասիրական, մրցակցային և խորհրդանշական[16]: Զինված ուժերում իրավակարգի ու զինվորական կարգապահության ապահովման և զինվորական կառավարման նկատմամբ հնացած կարծրատիպային մոտեցումները դուրս մղելու համար այս նոր մեխանիզմի լիակատար ներդրումը, անշուշտ, ժամանակ է պահանջում, սակայն 2012–2013 թթ. ընթացքում ՀՀ ԶՈՒ-ի զորամիավորումներում և ՌՈՒՀ-երում նշված ձեռնարկի հիման վրա զինվորական առաջնորդության դասընթացների վերաբերյալ դրական արձագանքները վկայում են, որ այն դանդաղ, բայց հաստատուն քայլերով ներբերվում է ՀՀ զինվորական կառավարման մշակույթի մեջ:

[15] Տես *Ա. Աթանեսյան, Ա. Ավետիսյան, Վ. Ավետիքյան, Ա. Շաքարյան, Դ. Հարությունյան,* Զինվորական առաջնորդություն. զինվորական կոլեկտիվի արդյունավետ կառավարման հիմնախնդիրներ: Ձեռնարկ: Ե., 2012:

[16] Մշակվել է հոդվածի հեղինակի կողմից: Ավելի հանգամանորեն տես նույն տեղում:

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ УКРЕПЛЕНИЯ ВОИНСКОЙ ДИСЦИПЛИНЫ, СОВЕРШЕНСТВОВАНИЯ СИСТЕМЫ ВОЕННОГО УПРАВЛЕНИЯ И ЗАЩИТЫ ПРАВОПОРЯДКА В ВООРУЖЕННЫХ СИЛАХ В КОНТЕКСТЕ МЕЖДУНАРОДНЫХ БЕЗОПАСНОСТНЫХ РАЗВИТИЙ

А. Р. АВЕТИСЯН, подполковник, заместитель начальника отдела МДПО Управления оборонной политики МО РА, лектор кафедры прикладной социологии ЕГУ, лектор кафедры управления и планирования образования ЕГЛУ

РЕЗЮМЕ

В контексте рассматриваемых вопросов отмечается, что для формирования социального института военнослужащих, максимально огражденных от выполнения полицейских функций, важное значение имеет их профессионализация как предусловие качественного управления и дисциплины. Подчеркивается важность теории строительства бюрократического государства М. Вебера и концепций развития военной профессии С. Хантингтона и М. Яновича как теоретических основ функционирования современной системы военного управления и воинской дисциплины. Вместе с тем выявляются основные недостатки указанных теорий и концепций, обусловленные со-

циально-политическими и историческими изменениями, происходящими в мировой политике и архитектуре международной безопасности.

Развитие системы военного управления и воинской дисциплины рассматривается через призму понятий «безопасность человека», «умная оборона» и «гражданин в военной форме». Констатируется, что в рамках оборонных реформ РА учитываются тенденции изменений международной безопасности в контексте их влияния на военное управление и воинскую дисциплину. Новые концептуальные подходы, в частности, аспекты военного лидерства и прав человека в ВС, внедряются в военно-учебные программы и планы общего развития ВС РА.

SOME ISSUES OF MILITARY DISCIPLINE STRENGTHENING, MILITARY MANAGEMENT SYSTEM IMPROVEMENT AND PROTECTION OF LEGAL ORDER IN THE ARMED FORCES WITHIN THE CONTEXT OF INTERNATIONAL SECURITY DEVELOPMENTS

A. R. AVETISYAN, Lieutenant Colonel, Deputy Head of the Treaty legal Support Desk, Defence Policy Directorate, MOD, RA, Lecturer, Chair of Applied Sociology, Yerevan State University, Lecturer, Chair of Education Management and Planning, Yerevan State Linguistic University

SUMMARY

Within the context of the issues concerned it is earmarked that in order to form a social institute of servicemen maximally shielded from performing policing roles, their professionalization is essential as a prerequisite of good governance and discipline. The article stresses the importance of bureaucratic state-building theory of M. Weber and military profession development concepts of S. Huntington and M. Janowitz as theoretical grounds for modern military management and discipline system functioning. However, it also identifies main gaps and shortcomings of the above-mentioned theories and concepts, conditioned by socio-political and historical changes occurring in world politics and international security architecture.

The development of the military management and discipline system is examined in the light of the concepts of «human security», «smart defense» and «citizen in military uniform». It is noted that the trends of international security shifts in terms of their influence on military management and discipline are addressed within the framework of the Armenian defense reforms. New conceptual approaches, particularly the aspects of military leadership and human rights in the armed forces are integrated in teaching, training curricula and general developmental plans of the Armenian Armed Forces.

ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Ս. ԲԵԳԼԱՐՅԱՆ, ՀՀ Ազգային անվտանգության խորհրդի աշխատակազմի տեղեկատվական անվտանգության և ռազմավարական վերլուծությունների վարչության գլխավոր մասնագետ, ՀՔԾ 2-րդ դասի խորհրդական, ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի հայցորդ

Ներկայիս տարածաշրջանային և աշխարհաքաղաքական իրողության պայմաններում մարտունակ ու մարտապատրաստ Զինված ուժեր ունենալը Հայաստանին պարտադրված առաջնահերթություն է: Զինված ուժերի կատարելագործումը, նոր մարտահրավերներին նրանց հնարավորությունների համապատասխանեցումը շարունակական ու դինամիկ գործընթաց է, որի հաջողությունը մեծապես պայմանավորված է զինծառայողների բարձր մակարդակի կարգապահությամբ: «Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» օրենքի համաձայն՝ «Զինվորական կարգապահությունը հիմնվում է օրինականության, մարդու իրավունքների և ազատությունների հարգման, հրապարակայնության, խրախուսման ու կարգապահական պատասխանատվության անխուսափելիության և անհատականացման, զինծառայողների զինվորական, իրավական ու բարոյական դաստիարակության սկզբունքների վրա (ընդգծումը մերն է.– *Ա. Բ.*)»[1]: Դա է ՀՀ ԶՈՒ-ի շարունակվող բարեփոխումների, մասնավորապես՝ ԶՈՒ-ի նկատմամբ համակողմանի ժողովրդավարական վերահսկողության մեխանիզմների կատարելագործման գլխավոր նպատակներից մեկը:

Զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության անհրաժեշտությունն ամրագրված է ՀՀ Սահմանադրության մեջ, այն է՝ ՀՀ Զինված ուժերը քաղաքական հարցերում պահպանում են չեզոքություն և գտնվում են քաղաքացիական վերահսկողության ներքո[2]: «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության» 2-րդ բաժնի «Բանակաշինություն» գլխում նշվում է, որ

[1] Տես «Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ 2012 թ. ապրիլի 10-ի հմ. ՀՕ-91 օրենք, գ. 1, հոդ. 2, կետ 2 (http://parliament.am/legislation.php?sel=show&ID=4510&lang=arm):

[2] Տես «Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (փոփոխություններով)», հոդ. 8.2 (http://www.parliament.am/parliament.php?id=constitution):

«Հայաստանի Հանրապետությունը հետևողական է զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության և ռազմական բյուջեի պլանավորման ժողովրդավարական հիմնարար սկզբունքների ապահովման խնդրում»[3]: ՀՀ-ում պաշտպանության ոլորտի նկատմամբ քաղաքացիական վերահսկողությունը 2007 թ. ընդունված «ՀՀ ռազմական դոկտրինի» 46-րդ հոդվածում նշված է որպես ռազմական անվտանգության ժամանակակից համակարգի ստեղծման համար անհրաժեշտ սկզբունք[4]: 2008 թ. ընդունված «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածում ևս ամրագրված է, որ ուժերի գործունեության հիմնական սկզբունքներից է դրա նկատմամբ քաղաքացիական վերահսկողությունը[5]:

ՀՀ Զինված ուժերի և հասարակության փոխհարաբերություններում առկա խնդիրները մշտապես գտնվում են ՀՀ պաշտպանության նախարարության ուշադրության կենտրոնում: ՀՀ Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի խոսքով, «Պաշտպանության նախարարության վերջին տարիների գործունեության հիմնական ուղղություններից մեկը եղել է բանակ–հասարակություն կապի ամրապնդումը: Կարևոր դեր խաղաց բանակի դռները հասարակության առջև բացելը, որը, զինվորի առօրյային ծանոթանալու հնարավորություն ստանալով, իրական պատկերացում կազմեց զինծառայության մասին: Առաջիկայում էլ ձգտելու ենք է՛լ ավելի թափանցիկ լինել, կատարելագործել և արդյունավետ դարձնել բանակի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության մեխանիզմները՝ առանձնահատուկ ուշադրության արժանացնելով մարդու իրավունքների պաշտպանությունը»[6]: Փաստորեն, ՀՀ Զինված ուժերում մարդու իրավունքների վիճակի շարունակական բարելավումը և Զինված ուժերը արհեստավարժության, կարգապահության, թափանցիկության ու վերահսկելիության արդիական չափանիշներին համապատասխանեցնելը պաշտպանության ոլորտում գործունեության գերակա ուղղություն են:

Զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության ամենալայն տարածում ստացած և հեղինակություն վայելող հայեցակարգը մշակել է Ս. Հանտինգտոնը: Նա քաղաքացիական վերահսկողությունը բաժանում է երկու տեսակի՝ սուբյեկտիվ և օբյեկտիվ[7]: Սուբյեկտիվ քաղաքացիական վերահսկո-

[3] Տես «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն»: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, 2007, էջ 24:

[4] Տես «ՀՀ ռազմական դոկտրին», հոդ. 46: «Աշխատանքային տետրեր», 2007, հմ. 4:

[5] Տես «Պաշտպանության մասին» ՀՀ 2008 թ. նոյեմբերի 27-ի հմ. ՀՕ-198-Ն օրենքը, հոդ. 4 («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2008, հմ. 73 (663)):

[6] «ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի ելույթը ՀՀ Զինված ուժերի կազմավորման 20-րդ տարեդարձին նվիրված հանդիսավոր միջոցառման ժամանակ», 27.01. 2012 (http://www.mil.am/1327666346):

[7] Տես *С. П. Хантингтон*. Вооруженные силы и демократия: реформирование военно-гражданских отношений. «Русский Журнал», 29.04.1999 (http://old.russ.ru/ist_sovr/99-04-29/hantin.htm):

ղությունը հիմնվում է քաղաքացիական իշխանության ուժեղացման հաշվին զինվորական իշխանությունը նվազագույնի հասցնելու, իսկ օբյեկտիվ քաղաքացիական վերահսկողությունը՝ ռազմական պրոֆեսիոնալիզմը առավելագույնի հասցնելով նույն նպատակին հասնելու սկզբունքների վրա: Հանտինգտոնի տեսության մեջ գերակայությունը տրվում է օբյեկտիվ քաղաքացիական վերահսկողությանը, քանի որ սուբյեկտիվ քաղաքացիական վերահսկողության դեպքում զինվորականի նկատմամբ քաղաքացիական իշխանության մեծացումը նշանակում է ոչ թե ամբողջ քաղաքացիական հասարակության, այլ առանձին քաղաքացիական խմբի կամ խմբերի իշխանության մեծացում, մինչդեռ օբյեկտիվ քաղաքացիական վերահսկողությունն արդյունքի է հասնում՝ զինվորականների գործունեությունը սահմանափակելով մասնագիտական շրջանակում, նրանց դարձնելով զուտ պրոֆեսիոնալներ, որպեսզի հեռու մնան քաղաքական խնդիրներին և քաղաքական որոշումների ընդունմանը միջամտելուց, քանի դեռ պետությունը չունի քաղաքականության մեջ նրանց մասնակցության ակտիվացման կարիքը: Հանտինգտոնը սպայական կազմի պրոֆեսիոնալիզմի մակարդակի բարձրացումը համարում է զինված ուժերի նկատմամբ արդյունավետ քաղաքացիական վերահսկողության հիմնական միջոց:

Օբյեկտիվ քաղաքացիական վերահսկողությունը անմիջական դրական ազդեցություն է գործում նաև զինվորական կարգապահության ամրապնդման վրա: Պատճառն այն է, որ կարգապահությունը պրոֆեսիոնալ զինվորականին բնորոշ հատկանիշ է, հետևաբար՝ զինվորականների պրոֆեսիոնալացման աստիճանի մեծացումը ինքնաբերաբար հանգեցնում է գիտակցված կարգապահության ամրապնդման: Այս տեսանկյունից ևս օբյեկտիվ քաղաքացիական վերահսկողությունը Հայաստանի համար նախընտրելի է քաղաքացիական սուբյեկտիվ վերահսկողությունից:

Քաղաքացիական-զինվորական հարաբերությունների ոլորտի շատ մասնագետներ, դիտարկելով զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության պրոբլեմը, այն համարում են գործադիրի նկատմամբ պետական քաղաքական վերահսկողության խնդիր, ոմանք՝ խորհրդարանական վերահսկողության, և միայն շատ քչերն են կարծում, որ դա ամբողջ հասարակության խնդիրն է: Մեր կարծիքով՝ այդ հարցի պատասխանը կախված է պետական հաստատությունների կայացածության և հասարակության ժողովրդավարացման ու իրավագիտակցության աստիճանից: Որքան բարձր է այդ աստիճանը, այնքան հասարակության ավելի ստվար շերտերն են մասնակցում զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողությանը:

Քաղաքացիական վերահսկողությունը լայն հասկացություն է և ներառում է զինված ուժերի նկատմամբ, մի կողմից, ժողովրդավարական ճանապարհով ընտրված մարմինների ու նրանց նշանակած պաշտոնատար անձանց (այսպես կոչված «պետական-քաղաքական վերահսկողություն»), մյուս կողմից՝ հասարակական կառույցների՝ միավորումների, իրավապաշտպան կազմակերպություն-

ների, լրատվամիջոցների, անհատ քաղաքացիների վերահսկողությունը[8]: Դրանք կոչվում են զինված ուժերի նկատմամբ, համապատասխանաբար, քաղաքացիական ժողովրդավարական վերահսկողություն և քաղաքացիական հասարակական վերահսկողություն:

Զինված ուժերի նկատմամբ վերահսկողության արդյունավետ միջոց կարող է լինել այդ գործընթացում նաև անհատ քաղաքացիների ներգրավումը: Թեև քաղաքացիներն իրենց սահմանադրական իրավունքներն իրականացնելիս արդեն իսկ հանդես են գալիս քաղաքացիական վերահսկողություն իրականացնող սուբյեկտի դերում, սակայն որոշ երկրներում սահմանվում են նաև անմիջական վերահսկողության մեխանիզմներ[9]: Օրինակ՝ Լատվիայում ԶՈՒ-ի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության շրջանակում յուրաքանչյուր քաղաքացի իրավունք ունի համապատասխան կարգով այցելելու զորամասեր՝ ծանոթանալու զինծառայողների կյանքի պայմաններին[10]:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիները Զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության հնարավորություն ունեն կա՛մ որպես հասարակական կազմակերպության անդամ, կա՛մ ներկայացուցչական մարմինների պատգամավորների միջոցով, կա՛մ էլ անմիջականորեն դիմելով Մարդու իրավունքների պաշտպանին և այլ պետական մարմինների, այդ թվում՝ Զինված ուժերին՝ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքին համապատասխան իրենց հետաքրքրող տեղեկությունը ստանալու համար: Տեղեկություն ստանալու ազատությունը սերտորեն կապված է ՀՀ ՊՆ գործունեության թափանցիկության սկզբունքի հետ[11]:

Այս առումով կարևոր քայլ է 2010 թ. դեկտեմբերի 9-ին ՀՀ Պաշտպանության նախարարի հաստատած «Հանրային իրազեկման հայեցակարգը», որը կոչված է սահմանելու ՀՀ պաշտպանության նախարարության և Գլխավոր շտաբի գործունեության մասին հանրային իրազեկման քաղաքականության իրականացման ուղիներն ու միջոցները, նպաստելու պաշտպանության բնագավառի կատարելագործմանն ու արդիականացմանն ուղղված ծրագրերի վերաբերյալ հանրության տեղեկացվածության աստիճանի բարձրացմանը[12]: ՀՀ պաշտպանության նախարարությունը պետական կառավարման միակ մարմինն է, որն ունի հանրային

[8] Տես *М. Гауко.* Гражданский контроль над вооруженными силами России. «Обозреватель», 2007, № 1:

[9] Տես *Ա. Ավետիսյան*, «Ժողովրդավարությունն ու Զինված ուժերի քաղաքացիական-ժողովրդավարական վերահսկողությունը», «Բանակ և հասարակություն. ժամանակակից հիմնախնդիրներ ուսումնական ձեռնարկ», Ե., 2013, էջ 140–142:

[10] Տես «Civil-Military Relations in Post-Communist Europe: Reviewing the Transition». Ed. by Timothy Edmunds, Andrew Cottey, Anthony Forster. New York, 2006, P. 52:

[11] Տես *Laura R. Cleary and Teri McConville.* Managing Defence in a Democracy. Chap. 5. «Transparency and accountability». London and New York, 2006, PP. 29, 59–60:

[12] Տես «ՀՀ ՊՆ Հանրային իրազեկման հայեցակարգ», Նախաբան (http://www.mil.am/1320692449):

իրազեկման հայեցակարգ: ՀՀ ՊՆ-ն, կարևորելով անկախ և մասնագիտացված լրատվամիջոցների դերը թափանցիկության սկզբունքի արդյունավետ կիրառման գործում, հասարակությանը իրազեկում է նաև ՀՀ ՊՆ տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության, «Զինուժ» հեռուստածրագրի, «Հայ զինվոր» շաբաթաթերթի, ինչպես նաև ԱՌՀԻ-ի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի, ՁԼՄ-ների միջոցով:

Գործունեության թափանցիկությունը նպաստում է հանրային կառավարման մարմինների նկատմամբ հասարակության վստահության մեծացմանը: Հասարակության մեջ բանակի նկատմամբ վստահությունը բանակ–հասարակություն հարաբերությունների արդյունավետության չափանիշներից է[13]: ՀՌԿԿ կենտրոնի 2013 թ. իրականացրած հետազոտության տվյալների համաձայն՝ հասարակության համար ամենավստահելի հաստատությունը բանակն է (տես գծապատկեր 1)[14]:

Գծապատկեր 1

ՀՀ ՊՆ-ն կարևորում է նաև սոցիոլոգիական հետազոտությունները՝ հասարակության տրամադրությունները և Զինված ուժերից նրա ակնկալիքները պարզելու համար: 2009 թվականից ՊՆ-ն կազմակերպական աջակցություն է ցուցաբերում զորակոչի օրինականությունն ապահովելու նպատակով հասարակական կազմակերպությունների մշտազննմանը, պարբերաբար կատարվում են բանակային տարբեր խնդիրների վերաբերյալ հասարակական կարծիքի ուսումնասիրություններ[15]:

[13] Տես *Ա. Վ. Աբրահամյան,* Բանակի և զինծառայողների հեղինակության ապահովման հիմնախնդիրները ժամանակակից հասարակություններում: «Բանակ և հասարակություն. ժամանակակից հիմնախնդիրներ: ՈՒսումնական ձեռնարկ»: Ե., 2013, էջ 277:

[14] Տես «Հայաստան 2013. Լրատվամիջոցների վերաբերյալ կարծիքների և նախընտրությունների հետազոտություն»: Ե., 2013 (http://www.crrc.am/hosting/file/_static_content/projects/armedia%202013/ARM_PPT_ARM.pdf):

[15] Տես «Հասարակական ներգրավվածություն. Հասարակական և քաղաքական կազմակերպություններ» (http://www.mil.am/1296046596):

ՊՆ գործունեության թափանցիկությունը նպաստում է Զինված ուժերում մարդու իրավունքների ոտնահարման և պաշտպանական ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետության մեծացմանը, միջանձնային հարաբերություններում արդարության սկզբունքի պահպանմանը, հետևաբար, նաև Զինված ուժերում կարգապահության ամրապնդմանը: Իր հերթին, կարգապահության ամրապնդումը ոչ միայն մեծացնում է բանակի նկատմամբ հասարակության վստահությունը, այլև կանխում կամ առնվազն սահմանափակում է հասարակությունից արատավոր երևույթների ներթափանցումը բանակ: Հիմնվելով այդ վստահության վրա՝ ՊՆ ղեկավարությունը կարող է ավելի արդյունավետորեն բարեփոխել համակարգը և այնտեղ ներբերել Զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության ավելի գործուն մեխանիզմներ, ինչն ի վերջո կրկնապատկելու է ՊՆ գործունեության թափանցիկության աստիճանը և նպաստելու է կարգապահության ամրապնդմանը:

Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ զինված ուժերում կոռուպցիոն երևույթների, մարդու իրավունքների ոտնահարման դեպքերի, դրանց դեմ ձեռնարկվող միջոցառումների, կարգապահական խախտումների դեմ պայքարի վերաբերյալ հենց ՊՆ նախաձեռնությամբ տեղեկությունների հրապարակումը նպաստում է բանակի նկատմամբ հասարակության վստահության աճմանը և դրանով՝ բանակում կարգապահության ամրապնդմանը: Այդ պատճառով ՀՀ Զինված ուժերում կանոնագրքային հարաբերությունների խախտումների և դրանց դեմ ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ ՀՀ ՊՆ-ի կողմից տրամադրվող տեղեկությունը պետք է հնարավորինս մատչելի լինի: Իր հերթին, այդ տեղեկությունն ավելի մեծ հնարավորություն կընձեռի Զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության վիճակի արդյունավետ վերահսկման համար:

Տվյալ համատեքստում կարևորվում է զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանի (ՄԻՊ) գործունեությունը, որը քաղաքացիական վերահսկողության օղակներից մեկն է: Տարբեր երկրներում այդ պաշտոնն ունի տարբեր անվանումներ. Սկանդինավյան պետություններում կոչվում է «օմբուդսմեն», Իսպանիայում և Կոլումբիայում՝ «ազգային պաշտպան», Ֆրանսիայում՝ «միջնորդ», Ռումինիայում՝ «ժողովրդական փաստաբան» և այլն[16]: Մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունը վաղուց իր ուրույն տեղն ունի կայուն ժողովրդավարությամբ մի շարք երկրների իրավական համակարգերում: Փաստաբանների միջազգային ասոցիացիան ընդունել է «օմբուդսմեն» հասկացության հետևյալ սահմանումը. «Սահմանադրությամբ կամ օրենսդիր իշխանության ակտով նախատեսված, խորհրդարանին հաշվետու բարձրաստիճան հասարակական պաշտոնատար անձի կողմից ղեկավարվող ծառայություն, որը տուժած անձանցից ընդունում է պետական մարմինների, ծառայողների, գործատուների դեմ ուղղված դիմումբողոքներ կամ գործում է իր նախաձեռնությամբ և իրավասու է հետա-

[16] Տես «Энциклопедический юридический словарь», изд. 2. М., 1998, с. 210:

քննություն իրականացնելու, առաջարկելու ուղղորդվող քայլեր և ներկայացնելու զեկույցներ»[17]:

Որոշ երկրներ զարգացրել են մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունը՝ ստեղծելով զինվորական օմբուդսմենի հաստատություն: Շվեդիայում այն ստեղծվել է դեռ 1915 թ.: Զինվորական օմբուդսմենի հաստատությունը գործում է նաև Գերմանիայում (այլ անվանմամբ), Նիդերլանդներում, Չեխիայում, Նորվեգիայում և այլ երկրներում: Այսպես. Բունդեստագի՝ պաշտպանության բնագավառում լիազոր անձի հաստատությունը գերմանական իրավական համակարգում ներդրվել է 1956 թ. մարտի 19-ին Գերմանիայի Դաշնային Հանրապետության կանցլեր Ադենաուերի ջանքերով Գերմանիայի հիմնական օրենքում կատարված երկրորդ փոփոխությամբ: Այդ պաշտոնյայի հիմնական առանձնահատկություններն են՝ գործադիր իշխանության մարմիններից, պաշտպանության նախարարությունից և զինվորական կառավարման այլ մարմիններից անկախությունը, օրենսդրության ճշգրիտ պահպանումն ու կիրառումը, զինվորական կառավարման մարմինների գործունեության վրա ներգործելու իրական իշխանական ու իրավական լիազորությունները[18]:

Զինվորական օմբուդսմենի հաստատությունը պաշտպանական ոլորտի գործունեության նկատմամբ հսկողական և վերահսկողական գործառույթներ իրականացնող մարմին է, որը նպաստում է այդ ոլորտում ժողովրդավարության ընդհանուր սկզբունքների իրագործմանն ու արժեքների պահպանմանը: Զինվորական օմբուդսմենը քննում է զինված ուժերում մարդու իրավունքների խախտման հետ կապված բողոքները, ներկայացնում է առաջարկություններ խախտումների ու չարաշահումների վերացման վերաբերյալ: Միևնույն ժամանակ, զինվորական օմբուդսմենը չի մասնակցում զինված ուժերի ընդհանուր քաղաքականության մշակմանը և չի կարող ազդել օպերատիվ բնույթ ունեցող հարցերի լուծման վրա:

ՀՀ Զինված ուժերում Մարդու իրավունքների պաշտպանը (ՄԻՊ) օժտված է լայն լիազորություններով, մասնավորապես, իրավասու է անարգել այցելելու զորամիավորումներ, նախնական կալանքի և ազատազրկման վայրեր, ստանալու իրեն հասցեագրված բողոքին առնչվող անհրաժեշտ նյութեր, փաստաթղթեր և պարզաբանումներ: Պետական մարմինները, այդ թվում՝ Զինված ուժերի ստորաբաժանումները, պարտավոր են պաշտպանին տրամադրել պահանջվող նյութերն ու փաստաթղթերը, ինչպես նաև անհրաժեշտ ցանկացած տեղեկություն:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում գործում է զինծառայողների և քրեադատավարական իրավունքների վերականգնման խումբ, որը, համապատասխան ահազանգեր ստանալով, մեկնում է զորամասեր, տեղում ուսումնասիրում իրավիճակը: ՄԻՊ-ի գրասենյակը սերտորեն համա-

[17] Տես *Տ. Տ. Քոչարյան*, Ժողովրդավարական վերահսկողության ինստիտուտները ՀՀ Զինված ուժերում, էջ 100 (http://lraber.asj-oa.am/6131/1/2012-4_(94).pdf):

[18] Տես *К. Б. Трумпель*. Уполномоченный Бундестага ФРГ по обороне как пример деятельности военного омбудсмена. «Правоведение», 1998, № 4:

գործակցում է նաև հասարակական կազմակերպությունների հետ. 2011 թ. ստեղծվել է մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի արագ արձագանքման խումբ՝ իրավապաշտպան հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ: Այն կոչված է ցանկացած պահի ընթացք տալու յուրաքանչյուր դիմումի և ահազանգի, զորամասեր այցելելու, համապատասխան զննումներ կատարելու և այլ քայլեր ձեռնարկելու:

ՄԻՊ-ի աշխատակազմում 2007 թ. ստեղծվել է նաև զինծառայողների և զինվորական հարցերով խորհրդականի պաշտոն, որը մարդու իրավունքների պաշտպանին օգնում է զինծառայողների իրավունքների պաշտպանության գործում: Սկզբում միտում է եղել ստեղծելու առանձին զինվորական օմբուդսմենի հաստատություն, սակայն, քանի որ ՀՀ Սահմանադրությամբ, ի տարբերություն որոշ պետություններից (Լեհաստան, Լիտվա և այլն), մասնագիտացված օմբուդսմենի հաստատություն չի նախատեսվում, ստեղծվել է նշված խորհրդականի հաստիքը[19]: Դրանից հետո ՄԻՊ-ի աշխատակազմում ստեղծվել է «Մարդու իրավունքների պաշտպանի տեղակալ՝ զինծառայողների իրավունքների պաշտպանության հարցերով» պաշտոնը: Զինծառայողների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող անձի կարգավիճակի այս փոփոխությունն արտացոլում է ինչպես քաղաքացիական հասարակության մեջ, այնպես էլ ՄԻՊ-ի աշխատակազմում զինծառայողների իրավունքների պաշտպանության նկատմամբ ուշադրության մեծացումը, որը տեղի է ունեցել վերջին տարիներին: Քանի որ այսօր ՀՀ իշխանությունը հանդես է գալիս սահմանադրական բարեփոխումների նախաձեռնությամբ, կարծում ենք, կարելի է ՀՀ Սահմանադրության մեջ նախատեսել նաև մասնագիտացված օմբուդսմենի հաստատություն և վերջապես ստեղծել ՀՀ զինվորական օմբուդսմենի հաստատություն, ինչը լիովին համապատասխանում է մեր հասարակության մեջ զինծառայողների իրավունքների պաշտպանության նկատմամբ հասարակական ուշադրության աստիճանի աճմանը:

ՀՀ ՊՆ և Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի միջև համագործակցությունն ուղղված է բողոքների քննարկման, առկա խնդիրների լուծման և զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ իրազեկության աստիճանի բարձրացման հարցերին[20]:

Զինված ուժերում մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտության հաշվառմամբ՝ ՀՀ Պաշտպանության նախարարի հրամանով 2009 թ. ստեղծվել է Պաշտպանության նախարարին առընթեր հասարակական խորհուրդ՝ կոչված ապահովելու ՀՀ պաշտպանության նախարարության և քաղաքացիների համագործակցությունը, բանակաշինության, ՀՀ ԶՈՒ-ի

[19] Տես *Ռ. Զ. Մախմուդյան*, Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության դերը Զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության գործում: «ՀԲ», 2010, հմ. 2:

[20] Տես «2013 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին»: Ե., 2014, էջ 358:

նկատմամբ քաղաքացիական վերահսկողության սկզբունքների զարգացման հարցերում հասարակական կազմակերպությունների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության փոխհամաձայնեցումը: Դա խորհրդակցական մարմին է և ձևավորվում է կամավորության սկզբունքով՝ հասարակական նախաձեռնությամբ ներկայացված հայտերի հիման վրա: Հասարակական խուրհուրդն իր առաքելությունն իրականացնում է Զինված ուժերի ստորաբաժանումներ կատարվող այցելությունների, ստուգայցերի, մշտազննումների և շրջայցերի միջոցով: Դրանք իրականացվում են տարբեր ոլորտի մասնագետների հանձնախմբերով:

ՀՀ ՊՆ-ն բանակ-հասարակություն կապն ապահովելիս աշխատում է հասարակության ամենատարբեր շերտերի՝ հանրակրթական դպրոցների աշակերտների, ուսանողական կազմակերպությունների, բուհերի պրոֆեսորադասախոսական կազմի, ՊՆ-ի հետ համագործակցող շուրջ 75 հասարակական կազմակերպությունների, տարբեր գիտական, կրթամշակութային ու քարոզչական կենտրոնների, արհեստակցական միությունների, և այլ կազմակերպությունների հետ[21]:

ՀՀ պաշտպանության նախարարության հետ համագործակցող հասարակական կազմակերպությունները պայքարում են Զինված ուժերում մարդու իրավունքների ոտնահարումների դեմ: Նրանք հիմնականում զբաղվում են ինչպես զորակոչի, այնպես էլ բուն զինծառայության փուլերում, զինծառայողների իրավունքների պաշտպանության հիմնախնդիրներով կատարում են սննդի մշտազննում, ազատ մուտք են գործում զորամասեր, հանդիպում զինվորների հետ, ի հայտ են բերում ոչ կանոնագրքային հարաբերությունների դեպքերը, կատարում են զինվորի մահվան դեպքի առնչությամբ հասարակական քննություն:

ՀՀ Պաշտպանության նախարարի առաջին տեղակալ Դավիթ Տոնոյանի խոսքով, «…ԵՄ ինստիտուտները պատշաճ գնահատական են տվել զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական և ժողովրդավարական վերահսկողության կարողությունների զարգացմանն ուղղված ՊՆ քաղաքականությանը: Այն արտահայտվում է թե՛ ազգային անվտանգության թույլատրելի սահմաններում թափանցիկության ապահովման, թե՛ քաղաքացիական հասարակության ինստիտուտների հետ բաց համագործակցության, և թե՛ մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների ու դրանց վերաբերյալ իրազեկության բարձրացման հարցերում: ...Մոտեցումը հետևյալն է. չկա ժողովրդավարական արժեքներին այլընտրանք նաև պաշտպանության և անվտանգության ապահովման գործում»[22]:

Այսպիսով՝ վերջին տարիներին ՀՀ Զինված ուժերում կարգապահության ամրապնդման գործում նշանակալի է օբյեկտիվ քաղաքացիական վերահսկողության դերը, որը դառնում է ավելի ու ավելի ազդեցիկ: Ընդ որում, առայժմ ավելի մեծ

[21] Տես «Հասարակական ներգրավվածություն. Հասարակական և քաղաքական կազմակերպություններ» (http://www.mil.am/1296046596):

[22] Տես «Չկա ժողովրդավարական արժեքներին այլընտրանք նաև պաշտպանության ապահովման գործում. Դ. Տոնոյան», 17.05.2012 (http://haynews.am/hy/pn-1337247352):

է քաղաքացիական հասարակական վերահսկողության դերը՝ ի տարբերություն քաղաքացիական ժողովրդավարական վերահսկողությունից: Պատճառն այն է, որ քաղաքացիական հասարակական վերահսկողության մեխանիզմներն ավելի են զարգացած, և այդ մեխանիզմների արդյունավետությունն առայժմ ավելի մեծ է: Քաղաքացիական ժողովրդավարական վերահսկողության մեխանիզմները զարգացնելու համար անհրաժեշտ է, մասնավորապես, փոփոխելով ՀՀ Սահմանադրությունը՝ ներդրել զինվորական օմբուդսմենի հաստատությունը, զարգացնել խորհրդարանական վերահսկողության մեխանիզմները, մեծացնել պետական կառավարման համակարգի՝ գործունեության թափանցիկությունը, զուգահեռաբար մեծացնել նաև Զինված ուժերի պրոֆեսիոնալացման աստիճանը՝ դրանով իսկ էլ ավելի ամրապնդելով կարգապահությունը, ուստի և ԶՈՒ-ի մարտունակությունը:

ГРАЖДАНСКИЙ КОНТРОЛЬ НАД ВООРУЖЕННЫМИ СИЛАМИ И ВОИНСКАЯ ДИСЦИПЛИНА

А. С. БЕГЛАРЯН, главный специалист Управления информационной безопасности и стратегического анализа администрации Совета национальной безопасности РА, советник 2-го класса СГС, соискатель факультета международных отношений ЕГУ

РЕЗЮМЕ

Важными предпосылками для укрепления дисциплины в армии являются уважение прав человека военнослужащих, соблюдение социальной справедливости, повышение эффективности борьбы с коррупцией, что предполагает укоренение в ВС демократических ценностей и механизмов обеспечения их доминирования. Одними из важных средств достижения этой цели являются демократический гражданский контроль над ВС и обеспечение транспарентности их жизнедеятельности. Гражданский контроль включает как контроль со стороны демократическим путем избираемых институтов государственной власти и назначаемых ими должностных лиц («государственно-политический контроль»), так и контроль со стороны общественных структур: различных объединений, правозащитных организаций, СМИ, отдельных граждан («гражданский общественный контроль»).

Согласно наиболее распространенной и авторитетной концепции С. Хантингтона, гражданский контроль бывает двух видов: субъективный и объективный. Субъективный гражданский контроль основан на принципе минимизации военной власти за счет усиления гражданской, но при этом доминирующим становится не гражданское общество, а отдельная гражданская группа или группы. Более эффективным является объективный гражданский контроль, когда военные за счет повышения уровня своего профессионализма отказывается от вмешательства «не в свои дела».

В обеспечении гражданского контроля над ВС и их транспарентности в РА за последние годы проделана существенная работа: укрепляется связь армия–общество с привлечением значительного числа общественных организаций, действует Общественный совет при Министре обороны, в 2010 г. была утверждена Концепция общественного информирования, статус советника омбудсмена по вопросам военнослужащих был повышен до уровня заместителя омбудсмена, в МО и ВС активизируется борьба против коррупции, с порочными нравами, за соблюдение социальной справедливости. Все это способствует укреплению дисциплины и повышению доверия общества к армии.

CIVILIAN CONTROL OF THE MILITARY AND MILITARY DISCIPLINE

A. S. BEGLARYAN, Chief Specialist, Information Security and Strategic Analysis Department, RA National Security Council Administration, 2nd Class Advisor of the Special Civil Service, Graduate Student at the Faculty of International Relations, YSU

SUMMARY

Respect for human rights of the military, adherence to social justice, and increase of the efficiency of struggle against corruption are major prerequisites for strengthening the discipline in the army, that assumes rooting democratic values and mechanisms for ensuring their dominance in the Armed Forces. One of the most important means of achieving that goal is the democratic civilian control of the military and ensuring the transparency of their activities. Civilian control comprises both the control of the democratically elected government institutions and officials appointed by them («state-political control»), and the control of the public structures: various associations, human rights organizations, the mass media, private citizens («civilian public control»).

According to the most widespread and influential concept of Samuel Huntington, the civilian control is of two types: subjective and objective. The subjective civilian control is based on the principle of minimizing the military authority by enhancing the civilian one, but at the same time, a separate civil group or groups and not civil society becomes dominant. The objective civilian control is more efficient, when the military refuse to interfere in «other people's affairs» due to raising the level of their professionalism.

Significant work has been done during recent years in ensuring civilian control of the military and their transparency in the Republic of Armenia: the army–society relationship becomes stronger with the involvement of a large number of non-governmental organizations; the Public Council functions under

the Defense Minister; the Public Information Concept was approved in 2010; the status of the Advisor to the Ombudsman for the Military was advanced to the level of Deputy Ombudsman; the struggle against corruption, vicious habits, and for adhering to social justice is intensified in the Defense Ministry and the Armed Forces. All this contributes to strengthening the discipline, and boosting public confidence in the army.

ԱՐԱՏԱՎՈՐ ԲԱՐՔԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐ. ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ, ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ, ՆՎԻՐՈՒՄ

ՀՀ Պաշտպանության նախարար Ս. Օհանյանը պարգևատրում է
ժամկետային զինծառայող Ռ. Թորոսյանին
հակառակորդի դիվերսիոն գործողությունը կասեցնելու ժամանակ
ցուցաբերած խիզախության համար.
2014 թ. հուլիսի 18

ՀՀ Պաշտպանության նախարար Ս. Օհանյանը
Մոնթե Մելքոնյանի անվան ռազմական վարժարանի սաներին է հանձնում
Ազգային հերոս Մոնթե Մելքոնյանի ավտոմատը.
2013 թ. նոյեմբեր

Ռազմաուսումնական պարապմունքներ

ՀՀ ՊՆ Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարանի շրջանավարտների քայլերթը

Զորամասի սարկավագ Ռաֆիկ Խաչատրյանի առաջնորդությամբ զինծառայողների այցելությունը Արմավիրի մարզի Սբ. Գևորգ եկեղեցի.
2013 թ. մարտի 28

«Տանկային բիատլոն-2014» միջազգային մրցույթում 2-րդ տեղը գրաված հայկական անգնակազմի տանկը մրցուղում.

Ռուսաստանի Դաշնություն, «Ալաբինո» ուսումնական զորավարժարան, 2014 թ. օգոստոս

Մարտական հենակետում.
2014 թ. հունիս

ԱՐԱՏԱՎՈՐ ԲԱՐՔԵՐԻ ԽՈՅՈՒՄՆ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

ՎՐԹԱՆԵՍ եպիսկոպոս ԱԲՐԱՀԱՄՅԱՆ, ՀՀ ԶՈՒ-ի հոգևոր առաջնորդ,
ՌԱՖԱՅԵԼ սարկավագ ՊԵՏՐՈՍՅԱՆ, ՀՀ ԶՈՒ-ի հոգևոր սպասավոր

«Թույլ մի՛ տուր, որ չարը հաղթի քեզ,
այլ բարիով հաղթի՛ր չարին»
(Հռովմ. 12:21)

Արատավոր բարքերի մասին խոսելու համար առաջին հերթին փորձենք հասկանալ դրանց էությունը և այն սահմանումը, որ դարեր շարունակ աստվածաբանական, փիլիսոփայական, հոգեբանական և առհասարակ մարդասիրական գաղափարների տեր երևելիները տվել են այդ քաղցկեղատիպ երևույթին: Ամեն անգամ, երբ փորձ է արվել սահմանելու այդ երևույթը, ստացվել է մի սահմանում, որը հստակ կերպով տարբերվել է նախորդ դարաշրջանում տրված սահմանումից: Այնուամենայնիվ, այսօր մարդկային հասարակությունն անգամ չի փորձում քողարկել իր արատները և նորանոր հարթակներ է գտնում իրեն ի ցույց դնելու և ճանաչելի դարձնելու համար: ՈՒստի արատը տարբերակելը այսօր էլ նույնքան դյուրին է, որքան Քրիստոսի ապրած ժամանակներում, «Որովհետև չկա բարի ծառ, որ չար պտուղ տա, և դարձյալ՝ չկա չար ծառ, որ բարի պտուղ տա, որովհետև յուրաքանչյուր ծառ իր պտղից է ճանաչվում: Փշերից թուզ չեն քաղում և ոչ էլ մորենուց՝ խաղող: Բարի մարդն իր սրտի բարի գանձերից բարին է բխեցնում, իսկ չար մարդը՝ չարն է բխեցնում. որովհետև սրտի ավելցուկից է, որ խոսում է նրա բերանը» (Ղուկ. 6:43-45): ՈՒստի աղոթենք, որ Աստված հայտնի մեզ Իրեն և հեռու պահի չար սրտից, քանի որ «միայն Աստված կարող է հայտնի դարձնել Իրեն»[1]:

Միանգամայն պարզ է, որ, անկախ իր արտահայտչաձևից, «արատավոր բարքն» ուղղված է «աստվածահաճո վարքին» հակառակ և վտանգ է ներկայացնում այնպիսի նվիրական արժեքների համար, ինչպիսիք են հայրենիքը, բանակը, եկեղեցին, ընտանիքը, դպրոցը և, առհասարակ, մարդ կոչվածը: Բազում են արատավոր բարքերի դրսևորումները: Դրանք աչքի են ընկնում իրենց գայթակղիչ, կախվածություն առաջացնող, բացասական արարքի դրդող ազդակներով, որոնք տեղեկատվական տեխնոլոգիաների դարաշրջանում ինչ-ինչ ուժերի կողմից տարածվում են մեծ արագությամբ: Բոլորիս քաջ հայտնի է, որ մինչ նախորդ դարի իննսունական թվականները «արատավոր բարքերի կաթսա» եղել է փողոցը, սա-

[1] *Գարեգին Ա,* Աստվածաբանություն: Կանադա, 2005, էջ 38:

կայն մեր օրերում դրանք շրջանցում են փողոցներն ու մտնում մեր տները, շրջապատում մեզ և դարձնում է՛լ ավելի խոցելի:

Հեռուստատեսությունը, համացանցը, բջջային հեռախոսներն ու թվային տեխնոլոգիաներով աշխատող այլ սարքեր, որոնք ստեղծվել են մարդու բարի նպատակներին ծառայելու միտումով, մեզ համար դառնում են վտանգի աղբյուր, քանի որ դրանց միջոցով արատավոր բարքերը կարողանում են ներթափանցել մարդու մեջ դեռ մանուկ հասակում: Սակայն այս ամենը չի նշանակում, որ Աստծո կողմից բանականությամբ օժտված մարդը պիտի պատերազմ հայտարարի իր ստեղծած սարքերին և վերջնականապես հրաժարվի դրանցից: Ընդհակառակը, մարդն ամեն կերպ պիտի փորձի ճիշտ օգտվել այս սարքերից և դրանք ծառայեցնի արատի ու մեղքի դեմ հայտարարված սրբազան պատերազմին, որի առաջամարտիկներն են այսօր Հայաստանի Հանրապետությունում Առաքելական Մայր Եկեղեցին, պաշտպանության, մշակույթի, կրթության և գիտության նախարարությունները ու ազգանվեր այլ կառույցներ, որոնց փոխհամագործակցության պտուղները մեր իրականության մեջ օր օրի ավելի ցայտուն և հյութալի են դառնում:

Այս ամենը քաջ գիտակցելով՝ բոլորս մեր պարտքը պետք է համարենք բարին գտնելը և չարի, արատի ու մեղքի դեմ պայքարելը:

ԱՐԱՏԱՎՈՐ ԲԱՐՔԵՐ

Արատավոր բարքերն ունեն բազում տարատեսակներ և արտահայտչաձևեր, սակայն դրանցից մի քանիսը դարձել են իրական մարդկային ողբերգություն: Դրանք են.

1. ծխախոտի օգտագործումը,
2. ալկոհոլի օգտագործումը,
3. թմրամոլությունը,
4. խաղամոլությունը,

ինչպես նաև՝

5. հայհոյանքը,
6. փողոցային բառապաշարը,
7. փողոցային ժեստիկուլացիան և միմիկան,
8. կախվածությունը սոցիալական ցանցերից և առհասարակ՝ համացանցից:

Արատավոր բարքերի այս երկու խմբերը բաժանված են մեր հասարակության մեջ տարածված այն թյուր կարծիքի հաշվառմամբ, թե հայհոյանքը, փողոցային բառապաշարը, տարատեսակ արատավոր ժեստերն ու միմիկան, ինչպես նաև համացանցից և ժամանակակից տեխնոլոգիաներից կախվածությունը պակաս արատներ են, քան ծխելը, ալկոհոլի և թմրանյութերի օգտագործումը կամ, ասենք, խաղամոլությունը: Նման կարծիքի են թույլ բնավորության, թույլ սկզբունքների և թույլ կամքի տեր մարդիկ, որոնք ակամա դառնում են արատավոր բարքերի «քարոզիչ պաշտպաններ»: Հայ իրականության մեջ հաճախ կարելի է

հանդիպել այնպիսի տհաճ տեսարանների, երբ փոքր տղան հայհոյանք է արտաբերում կամ հայհոյանք արտահայտող ժեստ անում, իսկ նրա հարազատները ցնծություն են ապրում: Այդ «արատավոր սերմերը» մի օր տալիս են իրենց չարաբաստիկ պտուղները: Նման հարազատների և ծնողների որդիներին է, որ Աստվածաշունչ մատյանը պատգամում է. «Արդ, դուք վախեցե՛ք Տիրոջից, ծառայեցե՛ք նրան շիտակությամբ և արդարությամբ, հեռացրե՛ք օտար «աստվածներին», որոնց պաշտեցին ձեր հայրերը» (Հես. Նավի 24:14):

Աստվածաշունչ մատյանը մեզ հստակ կերպով ցույց է տալիս, թե «արատավոր բարքերի» դեմ բարձրացված կացինն ինչին պետք է ուղղել. «Բայց ահավասիկ կացինը ծառերի արմատի վրա է. ամեն ծառ, որ բարի պտուղ չի տալիս, կտրվում և կրակն է նետվում» (Ղուկ. 3:9): ՈՒստի «արատավոր բարքերի» դեմ պայքարելիս մենք, միևնույն ժամանակ, պետք է աշխատենք երկու ուղղությամբ. նախ բուժելու վարակի աղբյուր դարձած «ծառը», ապա նոր՝ վարակված պտուղը:

Անշուշտ, տարբեր էին բարոյագիտական հայացքները Հին և Նոր կտակարաններում, սակայն «այն ամենը, ինչ ասվեց Հին Կտակարանում, մարմին և ձև առավ Նոր Կտակարանում. Քրիստոս այդ ամենն իրականացրեց ճշտիվ և մի առ մի յուր կյանքով և յուր անձի մեջ»[2]:

Հոգեբանները, խոսելով արատավոր բարքերի տարատեսակների մասին, ասում են, որ դրանք աչքի են ընկնում ինքնաբերաբար, ավտոմատ կերպով կրկնվող, հաճույքի չափաբաժին պարունակող գործողություններով, որոնք, ըստ մշակութաբանների, ստեղծում են տվյալ սուբյեկտի հոգեկանում բնավորության գծի վերաճող «կեղծ մշակույթ»: Ամեն անգամ արատին դառնալով՝ մարդը պիտի հիշի, որ «Քրիստոսն է միակ Տերը, որից բացի այլ տերեր չկան»[3]:

ՈՒշագրավ է, որ գերմանացի նշանավոր փիլիսոփա Ի. Կանտը բնավորությունը սահմանում է որպես «ընդունակություն, որը հնարավորություն կտա շարժվելու սկզբունքների համաձայն»[4]: Այստեղ արդեն հարց է առաջանում, թե արատավոր բարքերով տարված մարդն ինչ սկզբունքների համաձայն է քայլ կատարում, եթե, իհարկե, դրանք կան:

Ցավոք, հայերս բազում ազգերի զիջում ենք քանակապես, ուստի, եթե որոշ ազգեր կարող են իրենց թույլ տալ ազգի ինքնամաքրման գործը հանձնել ժամանակին՝ հույս ունենալով, որ սերնդափոխությունը կշտկի «վարակված ծառի» հետ կապված խնդիրը, և իրենց կմնա միայն պտղի հետ տարվող աշխատանքը, ապա մեր դեպքում դա անթույլատրելի է:

Հաշվի առնելով աշխարհաքաղաքական խաղերն ու պատերազմները, որոնք տեղի են ունենում հայի ու Հայաստանի շուրջ և վերջինիս ակամա ներքաշում իրենց շրջապտույտի մեջ, ապա ամեն գնով, օր առաջ պետք է հայ օջախներից կտրել արատավոր բարքերի արմատը:

---

[2] *Արշակ Տեր-Միքելյան*, Հայաստանյայց Սուրբ Եկեղեցու Քրիստոնեականը: Էջմիածին, 2007, էջ 220:

[3] *Զարեհ արք. Ազնավուրյան*, Մեկնություն Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ Հավատամքին: Հալեպ, 2008, էջ 112:

[4] *Ի. Կանտ*, Զուտ բանականության քննադատություն: Ե., 2006, էջ 187:

ԻՆՉՊԵՍ ՀԱՂԹԱՀԱՐԵԼ ԱՐԱՏԸ

Բանակը, լինելով հավաքական հասկացություն, ներառում է տարբեր խավեր, տարբեր աշխարհայացքների և տարբեր խառնվածքի տեր անհատների, որոնք վերջին հաշվով ձևավորում են այդ հավաքական ամբողջության՝ բանակի կերպարը: Հայոց բանակը և աշխարհազորը՝ սկսած Հայկ նահապետից մինչև մեր օրերը, կանգնած է եղել անբարոյականության, կեղծիքի, արատի, հավատափոխության կամ անհավատության դեմ պայքարի դիրքերում: Սակայն մեր օրերում արատները ներթափանցել են նաև մեր պետության սրբություն սրբոց՝ Բանակ:

1997 թվականի նոյեմբերի 13-ին լուսահոգի Գարեգին Առաջինն ու Պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանը սկիզբ դրեցին ՀՀ ԶՈՒ-ի հոգևոր առաջնորդությանը, և այսօր արդեն շուրջ 50 սարկավագ ու քահանա իրենց հոգևոր ծառայությունն են բերում ազգիս բանակին և հայ զինվորին:

Հոգևոր սպասավորի դերն սկսվում, բայց չի ավարտվում Աստծո Խոսքի քարոզչությամբ: Հոգևոր սպասավորների քարոզչությունը նախ և առաջ ձևավորվում է նրանց անձերում, և հոգևոր սպասավորը դառնում է օրինակ թե՛ զինվորի, թե՛ սպայի համար. «Աստված «ձև» է ստանում, այսինքն՝ Աստված դառնում է ոչ միայն մտքի ու սրտի, այլև փորձի օբյեկտ, քանի որ հավատը կախված է հայտնությունից, առանց որի չկա աստվածաճանաչողություն»[5]: Հոգևոր սպասավորը դառնում է զինվորի և Աստծու միջև միջնորդ, ինչով էլ իրագործվում է զինվորի աստվածաճանաչողության ընթացքը:

Հաճախ կազմակերպվող քրիստոնեական դասերը, միջոցառումները, եկեղեցիներ կատարվող այցելությունները, պատարագներին մասնակցությունը զինվորին հնարավորություն են տալիս հետադարձ հայացքով քննելու իր ճանապարհը և զերծ մնալու արատից ու չարից: Զորամասերի տարածքում և մարտական դիրքերում հոգևոր սպասավորների ներկայությունը օգնում է բարձր պահելու զինվորների մարտական ոգին և դրական ազդեցություն է գործում բարոյահոգեբանական վիճակի վրա: Թերևս սխալ չի լինի ասել, որ արատավոր բարքերի դեմ պայքարում ակտիվ օղակներից են եկեղեցին և զորամասերի հոգևոր սպասավորները, որոնք աշխատանք են տանում ոչ միայն զինվորների, այլև սպաների հետ՝ նպատակ ունենալով բանակից դուրս մղել այնպիսի չարաբաստիկ արատներ, ինչպիսիք են հայհոյանքը, փողոցային բառապաշարը, ծխելը և վերը հիշատակված մյուս արատները: Եզակի չեն դեպքերը, երբ հոգևոր սպասավորների միջամտությամբ կանխվել են ինքնասպանություններն ու ինքնախեղումները, որոնց թիվը մեր բանակում տարեցտարի նվազում է:

Ծննդոց գիրքը ասում է, որ մարդն Աստծո կողմից ստեղծվեց կատարյալ՝ Իր նմանությամբ և կերպարանքով, սակայն մարդկության պատմությունն ամենևին էլ կատարյալ չընթացավ, և մարդը կորցրեց իր կատարելությունն ու աստվածային նմանությունը: Մարդը հետզհետե որդեգրեց բարքեր, որոնք դեմ էին Աստծուն և աստվածային այն պատվիրաններին, որոնք դարձան պահապան կենաց և զեն

[5] *K. Barth*. Anselm: Fides quaerens intellectum. Anselm's Proof of the Existence of God in the Context of his Theological Scheme. Richmond: John Knox, 1960, P. 15.

հավատո: Երկրորդ պատվիրանը մարդուն ասում է. «Վերևում՝ երկնքում, ներքևում՝ երկրի վրա և երկրի խորքի ջրերի մեջ եղած որևէ բանի նմանությամբ քեզ կուռքեր չպիտի կերտես» (Ելք. 20:4): Այդ պատվիրանն ստանալուց հետո մարդ արարածն այն խախտել է բազում անգամ և խճճվել արատների մեջ, և այսօր էլ «արատավոր բարքերը» մարդկության թշնամին են և ամենուր հետևում են նրան՝ շեղելով աստվածահաճո ընթացքից:

Մենք պետք է դառնանք դեպի քրիստոնեական հիմքերը, որտեղ «Քրիստոս հիմքն է մեր բարքերի և քրիստոնեական ավանդույթի»[6]: Ահա այս պատվիրանի խախտումն էր, որ մարդուն գցեց կախվածության մեջ, կախվածություն մի բանից, որը նրա համար դարձել է կուռք՝ լինի դա ծխախոտը, ալկոհոլային խմիչքը, թմրանյութը, համակարգչային խաղերը, սոցիալական ցանցերը կամ էլ դրամ շահելու մոլուցքը: Հենց երկրորդ պատվիրանի շարունակությունն էր, որ Քրիստոս ասաց. «Չեք կարող և՛ Աստծուն ծառայել, և՛ մամոնային», բայց այսօր քանի-քանի հայորդի աստվածամերժ դարձած մամոնային է պաշտում իր բագինում՝ խաղատուն կոչվածում, երբ Աստծո Սուրբ Տաճարում իր տեղը թափուր է, և Աստված սպասում է իր կորուսյալ զավակի վերադարձին:

Չարին հակառակ է բարին, և չարի դեմ պայքարը չի կարող այլ բանով լինել, քան բարությամբ, իսկ Ղուկասի ավետարանում ասվեց. «Ոչ ոք բարի չէ, այլ միայն Աստված» (Ղուկ. 18:19): Սակայն ժամանակակից մարդը բավականին հեռացել է Աստծուց, և Աստծո գաղափարը նրա համար դարձել է երկրորդական, իսկ «Աստված ծնվեց, որպեսզի մարդն ապրի առանց չարիքի»[7]:

Ցավով պիտի նշենք, որ ժամանակակից մարդու համար դրամն ավելի կարևոր է, քան Աստված: Մարդիկ սկսել են այցելել ավելի հաճախ բանկեր, քան եկեղեցիներ: Նրանք փողի դիմաց վաճառում են ծխախոտ, ալկոհոլ, թմրանյութ և դիզում ահռելի հարստություն, ինչով դժվարացնում են իրենց մուտքը երկնային արքայություն («Ավելի հեշտ է, որ պարանն ասեղի անցքից անցնի, քան հարուստը մտնի երկնքի արքայություն» (Ղուկ. 18:25)) և խախտում աստվածային պատվիրաններից ևս մեկը՝ «Մի՛ սպանիր» (Ելք. 20:13):

Անկատար մարդը, մարտնչելով չարաբաստիկ երևույթների և արատավոր բարքերի դեմ, ում պիտի կանչի օգնության, եթե ոչ՝ Աստծուն: Ի՞նչ օրենքներով պիտի պայքարի դրանց դեմ, եթե ոչ աստվածային: Մի՞թե մարդկային բանականությունը վերջնականապես կուրացրել է այն հավատքի աչքերը, որոնք սերունդների համար լուսավոր են դարձրել երկիրը, մի՞թե բարին պիտի պարտվի չարին, և արատավոր բարքերը պիտի վերջնականապես հաստատվեն մարդու հոգեկան համակարգում: «Թույլ մի՛ տուր, որ չարը հաղթի քեզ, այլ բարիով հաղթի՛ր չարին» (Հռովմ. 12:21):

Աստծո կողմից սահմանված և մարդկանց փոխանցված յուրաքանչյուր պատվիրանի խախտում անհնազանդություն է Աստծո առաջ: Մեղքի և արատի

[6] *Շնորհք եպս. Գալուստեան*, Տեղիք Աստվածաբանութեան: Երուսաղեմ, 1993, էջ 5:

[7] *Ансельм Кентерберийский.* Почему бог стал человеком и искупление. Материалы 2-го международного симпозиума христианских философов. СПб., 1999, сс. 19–133.

կողմից վրա հասած մահը ավելին է, քան ֆիզիկական գոյության դադարումը: Արատն է, որ մարդու մեջ բույն է շինում չարի, կեղծիքի և ապակառուցողական վարքի համար: Սակայն չպետք է մոռանանք նաև, որ մեղքն է արատի արմատը, և արատի դեմ մղվող պայքարը պիտի առաջնորդվի Աստծո կողմից, քանի որ մեղքն այն է, ինչը մարդուն բաժանում է Աստծուց և նույն մարդուն միացնում չարին: Հարկ է միշտ հիշել, որ Աստվածաշնչում ասվում է. «Մեղքի վարձը մահն է, իսկ Աստծո շնորհը՝ հավիտենական կյանք՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի միջոցով» (Հռովմ. 6:23):

Քրիստոսի հարության գաղափարն այն միակ բանաձևն է, որը սահմանում է մարդու անմահությունն ու անարատությունը, քանի որ մեր Տիրոջ կյանքը զուրկ էր մեղքից, արատից ու կրքից: Ցավ ի սիրտ՝ նույնը չենք կարող ասել քրիստոնեաներիս համար, քանի որ լի ենք մեղքով և արատներով, ինչը մեզ համար ոչ թե դատավճիռ է, այլ ընթացք, որը պիտի շեղենք դեպի Քրիստոս, դեպի աստվածահաճո կյանք: Ամեն անգամ, երբ մենք հայտնվում ենք մեղքի կամ արատի մեջ, Քրիստոս մեզ հարց է ուղղում՝ ասելով. *Ես ձեր մեղքերն իմ վրա առա և խաչը բարձրացա, որպեսզի ձեր մեղքերը խաչի վրա գամված մնան, իսկ դուք ինձ հետ նորովի կյանք ունենաք և հարության հույսի լույսով ընթանաք այն ճանապարհով, որը Ես գծեցի ձեզ համար, իսկ դու՞ք, ի՞նչ եք անում դուք ձեր մեղքերը խաչի վրա գամված պահելու համար, և ի՞նչ եք անում դուք հարության հույսի ջահը վառ պահելու համար:* Սրանք աստվածաշնչյան տողեր չեն, սրանք այն բանավոր խոսքերն են, որ Քրիստոս, խոսելով մեղքի մեջ խարխափողներիս հետ, ասում է որպես ազդակ, որը պետք է մեզ սթափեցնի և հետ պահի այն ճանապարհից, որն սպանում է թե՛ մարմինը, թե՛ հոգին: Նոր Կտակարանն ասում է. «Չգիտե՞ք, թէ ձեր մարմինները տաճար են Սուրբ Հոգու, որ ձեր մէջ է, և որն ստացել էք Աստծուց. և դուք ձեր տէրը չէք, քանզի մե՛ծ գնով գնուեցիք: Փառաւորեցէ՛ք Աստծուն ձեր մարմինների մէջ» (Ա. Կորնթ. 6:19,20): Ինչպես ժամանակակից աստվածաբաններն են նկատում. «մարդը շրջապատվեց արատներով, քանի որ դադարեց հավատալ Սբ. Գրքի հայտնություններին»[8]:

Ա՛րդ, մեր Տիրոջ կողմից մեզ տրված Սուրբ Հոգու տաճարները՝ մեր մարմինները, և դրանցում բնակվող Սուրբ Հոգին արատներով պատելու փոխարեն դառնանք դեպի Աստված, ընթանանք Սուրբ Գրքի պատվիրաններին համաձայն և միշտ գիտակցենք, որ արատն ապականում է անգամ այն ամենանվիրական արժեքները, որոնք պատմության ընթացքում եղել են մեր ազգի գոյության ամենաամուր սյուները՝ հավատք, եկեղեցի, բանակ, միասնություն և ՍԵՐ: Թող Տիրոջ Աջը մեզ հովանի լինի արատի և արատավոր բարքերի դեմ հայտարարված այս սրբազան պայքարի բոլոր օրերին:

[8] *Г. Гартфельд.* Немецкое богословие Нового Времени: школы, персоналии, идеи. М., 2005, с. 195.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Մաղաքիա արք. Օրմանեան*, Հայոց Եկեղեցին: Ե., 1993:

БОГОСЛОВСКИЙ АСПЕКТ БОРЬБЫ С ПОРОЧНЫМИ НРАВАМИ

Епископ ВРТАНЕС АБРААМЯН, Духовный предводитель ВС РА,
дьякон РАФАЕЛ ПЕТРОСЯН, капеллан ВС РА

РЕЗЮМЕ

Хотя проявления порочных нравов меняются от эпохи к эпохе, суть их остается неизменной – противопоставление богоугодному поведению. К сожалению, порочные нравы проникают также в священную для армянского народа сферу – армию. В борьбе с порочными явлениями прежде всего необходимо ориентироваться не на изжитие плодов, а искоренение причин зла. Корень же зла заключается в безверии современного человека. Единственным путем преодоления греховности, пороков и страстей – это вера в воскресение Христа и упорная борьба со злом под водительством самого Бога. Всенародное обращение к христианским истокам – вот путь к оздоровлению нравов общества и армии. Особая миссия в этом деле принадлежит Армянской Апостольской Церкви и ее Духовному предводительству ВС.

THE THEOLOGICAL ASPECT OF THE STRUGGLE AGGAINST VICIOUS HABITS

Bishop VRTANES ABRAHAMYAM, Spiritual Leader, Armed Forces, RA,
Deacon RAPHAEL PETROSYAN, Chaplain, Armed Forces, RA

SUMMARY

Although manifestations of vicious morals vary from epoch to epoch, their essence – opposition to the god-pleasing mode of conduct – remains unchanged. Unfortunately, the vicious habits penetrate also into the army – a sacred sphere for the Armenian nation. In the struggle against the vicious phenomena first of all one should focus not on the elimination of the fruits, but rather on the eradication of the causes of evil. The root of evil is in unbelief of a present-day man. The only way of overcoming the sin, vices and passions is to believe in Jesus Christ's resurrection and to persistently fight against the evil under God's guidance. A nationwide conversion to the Christian origins – here is the way to heal the society and the army. The Armenian Apostolic Church and its Spiritual Leadership in the Armed Forces have got a special mission in this cause.

ՄԱՔՐՎԵԼ, ԿԱԶԴՈՒՐՎԵԼ, ԶՈՐԱՆԱԼ՝ ՍՐԲԱԳՈՐԾՄԱՄԲ

Բ. Վ. ՎԱՐԹԱՆՅԱՆ, ՀՀ Պաշտպանության նախարարի ավագ խորհրդական, «Հայք» գիտահետազոտական-ծրագրային հասարակության հիմնադիր տնօրեն

Հավատազրկությամբ՝ արատ, կեղտ, ապականություն =
= այլասերում = կորուստ և մահ.
Հավատքով ազնվություն, մաքրություն, կենսունակություն =
= սրբություն = փրկություն և կյանք

Հիրավի, արատավոր երևույթները, որոնք համամարդկային են, գոյություն ունեն թե՛ հայաստանյան, և թե՛ համայն հայության իրականության ազգային-հասարակական ու անձնական հարաբերություններում, սակայն տվյալ դեպքում մեզ անմիջականորեն հետաքրքրողը այդ արատավոր երևույթների մուտքն ու առկայությունն է Հայոց բանակում, ու եթե դրանց ուրույն հայացքով և չափանիշներով մոտենանք, ակնհայտ է դառնում, որ դրանք առաջին հերթին ու մեծ չափով հետևանք են մեր ազգի, հասարակության և մեզանից շատերի մեջ բազում տարիների ընթացքում որոշ չափով տեղի ունեցած հոգեղենության, գաղափարականության ու բարոյականության աղավաղման, խախտման, նվազման:

Այսինքն՝ որոշ չափով աղավաղման, խախտման ու նվազման

– մեր հոգեղենության և հավատքի, ***որը մեր ազգի համար քրիստոնեությունն է,***

– դրանից բխող ու դրա վրա հիմնված գաղափարականության, ***որը Հայ Ազգային Գաղափարախոսությունն է*** և

– դրանցից գոյացող բարոյականության, որի հիմքում ***հայ ազգի բարոյական տոհմիկ արժեհամակարգն է:***

Եվ դրանց այդ աղավաղումը, խախտումն ու նվազումը, առաջացնելով որոշակի հոգեբարոյական կոռումպացում, ըստ այնմ՝ անդրադառնում են հայ մարդու և հասարակության մտածելակերպի, սովորությունների, հարաբերությունների, կենցաղավարության ու երկարատև պայմաններում՝ ընդհուպ մեր հոգեկերտվածքի վրա՝ տանելով մեզ դեպի փաստացի հեթանոսություն: Եվ մեր ներքին աղավաղումների այս վիճակից օգտվելով՝ կատարված արտաքին (և մասամբ ներքին) միջոցով նախահարձակ ոտնձգությունները, խրախուսելով և տարածելով հավատազրկությունը, գաղափարազրկությունը, սովորական երևույթ են դարձնում որոշակի բարոյազրկությունը, եսակենտրոնությունը և, ի վերջո, նյութապաշտությունը: Իսկ դրանց վատագույնի՝ նյութապաշտության, պարագայում անձերի, հաստատությունների, կազմակերպությունների և ընդհանրապես հասարակութ-

յան ու ազգի մեջ որոշ չափով ցամաքում, նվաստանում և մինչև իսկ ծիծաղելի են ներկայացվում և ընկալվում հոգեղենությունը, ազնվությունը, առաքինությունը, անկեղծությունը, օրինապահությունը, հայրենասիրությունը, մարդասիրությունը և նույնիսկ Աստվածասիրությունը՝ որպես ոչ իրապաշտական, միամիտ, թույլ և նույնիսկ վնասակար հատկություններ և կամ երևույթներ:

Ահա հիմնական պատճառները հայ ազգի (հայաստանաբնակ ու արտերկրի հայության), հայրենիք Հայաստանի, պետականության ու պետության և մեր պարագայում հայոց Զինված ուժերի մեջ երբեմն առաջացող արատավոր երևույթների: Իսկ այդ երևույթներն առաջացնող պատճառները կարո՞ղ են նվազել և մինչև իսկ հիմնովին ու իսպառ վերանա՛լ, անվերադարձ չքանա՛լ հայության մեջ, և դա պե՛տք է լինի, սակայն ճիշտ, արդար ու օրինաչափ կլինի, որ դա առաջին հերթին տեղի ունենա հայոց բանակում: Ինչո՞ւ: Որովհետև հայ զինվորականությունը, սպայությունը պետք է և պարտավո՛ր է առաջատար լինել ազգի համար էապես անհրաժեշտ՝ ***հոգևոր, գաղափարական ու բարոյական լիարժե՛ք վերածնունդի մեջ***:

ՈՒրեմն՝ նախ մեր մեղանչումներից առաջացած (արտադրված) ու առավել չափով նաև դրսերից ներմուծված հասարակական (փողոցային իմաստ ստացած) արատներից, որոնցով և մեր ու մեր մատաղ սերնդի և, մասնավորապես, մեր զինվորականների բնականոն կյանքը խաթարող որոշակի այլասերումից ձերբազատվելու՝ մաքրվելու, առողջանալու, կենսունակությամբ զորանալու ու վարակամերժ կարողությամբ պաշտպանվելու համար մեր ազգային օրգանիզմին, ինչպես օդը, պե՛տք է, կենսականորեն անհրաժեշտ է այն, ինչը մեր ազգի մեծերի, սրբերի, նահատակների կողմից մեզ պատգամ ու ժառանգություն է թողնված՝ **սրբացում**:

Սակայն նախքան այդ ասելը, մտածում եմ ասածիս ***հավանական անդրադարձի*** մասին, որպես առնվազն ոչ գիտական և ոչ առարկայական հաստատումի, քանի որ հավատքով՝ Ավետարանակա՛ն հաստատում է: Սակայն ես պիտի ասեմ ու դարձյալ հաստատեմ, որովհետև ավելի քան համոզված եմ, քանի որ հավատացած եմ, որ Ավետարանական խոսքը, լինելով նաև կյանքի սահմանադրություն, առավե՛լ քան գիտություն է, ինչպես այլ առիթներով էլ եմ ասել՝ այն գե՛րգիտություն է: ՈՒ այս պարագային վերաբերող ***ավետարանական*** խոսքերից է նաև հետևյալը. ***«Արդարև Նրա Աստվածային զորությունը մեզ շնորհեց ամեն ինչ, որ վերաբերում է կյանքին և Աստվածապաշտությանը՝ ճանաչեցնելով մեզ Նրան, Ով կանչեց մեզ Իր փառքին ու առաքինությանը: Դրանցով մեծամեծ և թանկագին խոստումներ պարգևվեցին մեզ, որպեսզի դրանցով հաղորդակից լինեք Աստվածային բնությանը և հեռու մնաք այս աշխարհի ցանկություններից և ապականություններից: Եվ այս բանի համար իսկ ամեն ջանք գործադրելով ձեր հավատով առաքինություն ձեռք բերեք, առաքինությամբ՝ գիտություն, գիտությամբ՝ ժուժկալություն, ժուժկալությամբ՝ համբերատարություն, համբերատարությամբ՝ Աստվածապաշտություն, Աստվածապաշտությամբ՝ եղբայրասիրություն, եղբայրասիրությամբ էլ՝ սեր: Երբ դուք այս շնորհներն ունեցաք և սրանցով հարստացաք, սրանք ձեզ դատարկ և անպտուղ չեն թողնի մեր Տեր Հիսուս Քրիստոսի մասին ձեր ունեցած գիտության մեջ: Իսկ***

նա, ում մեջ այս բաները չկան, կույր է կամ կարճատես և մոռացության տված իր նախկին հանցանքներից մաքրված լինելը: ՈՒստի, եղբայրնե՛ր, առավե՛լ ջանացեք, որպեսզի բարի գործերով ձեր կոչումը և ընտրությունը հաստատ պահեք: Այս բանն անելով երբեք հանցանքի մեջ չեք ընկնի, քանի որ այսպիսով լայնորեն մուտք պիտի շնորհվի ձեզ դեպի մեր Տեր Տիրոջ և Փրկչի Հիսուս Քրիստոսի հավիտենական արքայությունը» (Պետրոս առաքյալի Ընդհանրական երկրորդ թուղթ 1:3-11):

ՈՒրեմն՝ ոչ ոք թող չերկմտի, չկասկածի, առավել ևս՝ չվախենա՛, որ տվյալ խնդիրը՝ մեզ համար խոցելի, արատավոր երևույթների, հարաբերությունների վերացումը, ի վերջո և հիմնականում կարող է լինել մեր, այսինքն՝ հայության, հայ ազգի և կոտորակված հայրենիք Հայաստանի, փա՜ռք Աստուծո, այս մնացած մասի, նրա պետության և մեր մասով՝ զինվորականության, սպայության **սրբացմամբ**:

Ափսո՜ս, որ հարկ եմ համարում նորից նշել չվախենալու մասին սրբացումից՝ ազգային (մասնավորապես՝ մեր զինվորականության) սրբացման խնդիր կատարելուց: Ի՜նչ օրի ենք հասել, որ, ըստ երևույթին, չենք վախենում մեր հոգիները կորցնելուց և բաց ենք չարի կողմից այլասերմամբ նրան ենթակա ու ստրուկ դառնալու վտանգներին, սակայն փակ ենք Աստվածաշնորհի՝ Քրիստոսաբուխ սրբության համար և կարող ենք վախենալ սրբանալու մասին խոսելուց, առավե՛լ ևս՝ դրան ձգտելուց, ու նաև տարակույս ունենալ, թե արդյոք պե՞տք է կամ կարո՞ղ ենք հասնել սրբության:

Սակայն ինչ է սրբությունը, եթե ոչ, ի վերջո, ընդհանուր առմամբ ազնվություն: Այն, ինչ որ ունեին ոչ միշտ դիպլոմներ ունեցող և մեծ մասամբ ոչ գրաճանաչ կամ էլ կիսագրագետ և համեստ կյանքով ապրող մեր նախնիները՝ պապերն ու տատերը: Բայց քանի որ նրանք ազնվություն ունեին, որով և ազնվական էին՝ անկախ իրենց ուսումից, հագնվածքից, սոցիալական կարգավիճակից (իսկ ազնվականության հետ նախևառաջ կար հոգեղենություն և դրանով՝ նաև անկեղծություն, հավատարմություն և այլն, և այլն), լինում էր և սրբություն ու նաև՝ սո՛ւրբ ասպետականություն: ***Իսկ ինչը կարող է ավելի վայելել հայ զինվորականին, հայ սպային, քան այս կերպարը,*** որի ձեռքբերումը փող, զենք ու զինամթերք չի պահանջում, այլ միայն ***իրազեկություն ու ըստ այնմ՝ հավատարմություն մեր հայրերի հավատամքին և դրանից բխող ու դրա վրա հիմնված գաղափարին, բարոյականությանը և ըստ այնմ՝ կենցաղավարությանը:***

Եվ հենց դրանով էլ պաշտպանված կլինենք ամեն տեսակի հոգեբարոյական, գաղափարական ու կենցաղային, կոռումպացման տանող փորձություններից՝ պահպանելով մեր զինվորականության հոգիները, գաղափարները ու բարոյականությունը՝ որպես անառիկ ամրոց և կործանիչ բռունցք այդ փորձությունների դեմ: Եվ Հայոց բանակը կդառնա միշտ, ամենուր և բոլոր պայմաններում կենսականորեն օգտակար ու օրինակելի մեր ամբողջ ազգի ու նաև աշխարհի համար ու ամենաէականը՝ կդառնա օրհնյալ՝ Աստուծո կողմից:

Վերոնշյալ անդրադարձը ելնում է ակնհայտ այն հավանականությունից, որ մեր ազգակիցներից ոմանք կարող են ասել կամ մտածել. «Սա ի՞նչ նորություն

է… բոլոր «խաղերը խաղացինք», հիմա էլ սրբությո՞ն: Դա՞ է մեզ պակասում», և սկսեն դեմքի «խորամիտ» արտահայտությամբ փորձել ապացուցել մեր ազգի, երկրի և պետության համար քաղաքակա՜ն, տնտեսակա՜ն, սոցիալակա՜ն, պաշտպանակա՜ն, կրթակա՜ն, գիտակա՜ն, մշակութայի՜ն ու այլ բնագավառների մեջ մեր առաջադիմության կարևորությունը՝ առանց սպասելու, որ մեկն իրենց ասի, թե այդ բոլորն ինքնըստինքյան շատ կարևոր են, ինչպես հաց հանապազօրյա, սակայն դրանք կմնան անզոր՝ «ձայն բարբառո հանապատի» ու անիրականանալի, եթե դրանք իրականացնել ուզողները՝ ղեկավարություն, հասարակություն, ազգ թե անհատ, սնված, զինված ու ամրապնդված չլինեն՝

– ***հոգեղենությամբ***, այսինքն՝ Աստուծո խոսքով ու հավատքով՝ Ավետարանի և Խաչի, ու ըստ այնմ՝
– ***գաղափարականությամբ***, որն է Հայ Ազգային Գաղափարախոսությունը և
– ***բարոյականությամբ***՝ Հայ Ազգային բարոյական արժեհամակարգի,

ու այս երեքին (հավատք, գաղափարականություն և բարոյականություն, նմանությամբ մեր հավատքի Երրորդության՝ Հայր, Որդի և Սուրբ Հոգի) համապատասխան ***կենցաղավարությամբ*** (առանց մեղավոր, այլասերող շռայլությունների), ***կյանքի ապրումով:***

ՈՒ այնժամ, եթե այդ լինի, թե՛ հայաստանյան, թե՛ արտերկրի հայ կյանքում «փախ կտա ձմեռը, ծիծառը կդառնա յուր բույն, ծառերը կհագնեն տերև» և կիրականանա ձևով ամենաարդիական, սակայն բովանդակությամբ՝ մեր նախնիների՝ մեծերի, սրբերի հիմնադրած հայկյան ցեղի իմաստավորմամբ, արժանապատիվ ու բարգավաճ կյանքը, որը՝ հօգուտ նաև մարդկության ու ի փառս Սուրբ Երրորդության՝ Աստուծո:

Եվ ուրեմն արատավոր երևույթների՝ կեղտի, ապականության և այլասերման և կենսազրկման կասեցումն ու վերացումը, վերջին հաշվով, կարող է իրականանալ սրբությամբ:

Դրա համար էլ ա՛յդ ուղղությամբ և դրա՛ մասին՝ սրբացմա՛ն մասին, սրբությա՛մբ պետք է մտածենք, խոսենք, վարվենք, գործենք ու նվաճումներ արձանագրենք՝ յուրաքանչյուրս, բոլորս ու ազգովին, թե՛ հասարակական կարգով, և թե՛ պետականորեն:

ՈՒ այդ դեպքում դրված խնդրի կատարումը՝ Հայոց բանակից «փողոցային բարքերի» արմատախիլ վերացումը, արագորեն կդառնա բացարձակ իրականություն:

Ովքեր պատրաստ են մասնակցելու այդ իրականության կերտմանը, լծվեն հետևողական ու հարատև սո՛ւրբ աշխատանքի՝ հավատքի և գաղափարի անընկրկուն հաստատակամությամբ:

Եվ սա ի՞նչ է: Նաև կո՞չ է:

- Այո՛:
- Նաև համոզմո՞ւնք է:
- Դարձյալ այո՛:
- ՈՒ նաև մասնակցության վկայությո՞ւն է:
- Անպայմա՛ն այո, վկայություն է և ***ՈՒԽՏ ՀԱՅԿԱԶՅԱՆ***:

ОЧИСТИТЬСЯ, ВЫЗДОРОВЕТЬ, УКРЕПИТЬСЯ ЧЕРЕЗ ОСВЯЩЕНИЕ

Б. В. ВАРТАНЯН, Старший советник Министра Обороны РА, Директор-учредитель Научно-исследовательского программного института «Айк»

РЕЗЮМЕ

В статье отражены социальные явления порочных нравов и пути их преодоления, в частности, в ВС РА.

Отмечается, что подобные явления проистекают вследствие извращения и упадка духовности–базы идейности и моральности. Следовательно, эти негативные явления могут быть преодолены и даже полностью искоренены, внедряя в жизнь нации, начиная с Вооруженных сил РА, и в особенности с офицерства, духовность–христианскую истинную веру, и истекающую из нее идейность–в нашем случае Армянскую национальную идеологию, и моральность–армянскую национальную моральную систему ценностей.

TO CLEANSE, HEAL AND STRENGTHEN THROUGH CONSECRATION

B. V. VARTANYAN, Senior Advisor to the RA Minister of Defense, Founding Director, «Haik» Research-Academic Program Institute

SUMMARY

The article reflects a social phenomenon of inherited vicious habits and the ways to overcome them, namely in the Armenian Armed Forces.

It is noted that such a phenomenon results from a particular decline of spirituality–the basis of ideology and morality. These negative after effects can be overcome and even completely eliminated in the society and, particularly, in the Armenian Armed Forces headed by its commanding staff, by spiritualization, in the Armenian case–the Christian true faith, and according to it–the Armenian ideology and morality.

ՀՀ ԶՈՒ-ՈՒՄ ՈՉ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԵՆՍՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Վ. Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ, գնդապետ, հոգեբանական գիտությունների դոկտոր, դոցենտ, ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի պետի՝ ուսումնական մասի գծով տեղակալ

Բարձր մակարդակի կարգապահության պահպանումը զորային կառույցի գերակա խնդիրներից է: Թեև ՀՀ ԶՈՒ-ում այդ ուղղությամբ մեծ ջանքեր են գործադրվում, այդուհանդերձ, որոշ ստորաբաժանումներում դեռ շարունակում են դրսևորվել ոչ կանոնադրական հարաբերությունները՝ բացասաբար ազդելով զինվորական կոլեկտիվում բարոյահոգեբանական մթնոլորտի, անձնակազմի բարոյահոգեբանական վիճակի, հետևաբար և ԶՈՒ-ի հեղինակության վրա:

Հարց է ծագում. ինչու՞ զորային կառույցում այսպես կոչված փողոցային արատավոր երևույթները, որոնք դրսևորվում են գերազանցապես ոչ կանոնադրական հարաբերությունների ձևով, ունեն շարունակական բնույթ, հատկապես որ բանակային առօրեական կացութաձևի խիստ կանոնակարգվածությունը պետք է որ բացառեր դրանք: Այս հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է վերլուծել ոչ միայն ՀՀ ԶՈՒ-ի անձնակազմի միջանձնային հարաբերությունների յուրօրինակությունը պայմանավորող գործոնները, այլև հասարակությունում տեղի ունեցող համընդհանուր բնույթի սոցիալ-հոգեբանական երևույթների ու գործընթացների զարգացման դինամիկան և միտումները: Կարևոր է նաև տվյալ պրոբլեմի ուսումնասիրության տիրույթում վերլուծության առարկա դարձնել նախազորակոչային ու զորակոչային տարիքի անձանց ռազմահայրենասիրական դաստիարակության համակարգը:

Առաջին. ներկայացնենք հասարակությունում տեղի ունեցող սոցիալ-հոգեբանական այն զարգացումները, որոնք անմիջական ազդեցություն են գործում երիտասարդ սերնդի արժեհամակարգի ձևավորման վրա: Մեր դիտարկումները ցույց են տալիս, որ հասարակության կենսագործունեության բոլոր ոլորտներում համընդհանրացմամբ պայմանավորված զարգացումները հանգեցնում են ազգային սոցիալական և մշակութային* համակարգերի ձևախախտմանը, երիտասարդ սե-

* Ազգային սոցիալական համակարգ ասելով նկատի ունենք այն ամբողջական միասնությունը, որի հիմնական տարրերն են մարդիկ, ինչպես նաև նրանց միջև հարաբերություններն ու կապերը, փոխգործությունները: Մարդկանց միջև հարաբերություններն ու կապերը, փոխգործությունները ունեն հաստատուն բնույթ և պատմության ընթացքում վերարտադրվում են մարդկանց համատեղ գործունեության հիման վրա՝ փոխանցվելով սերնդից սերունդ:

ռունդների դաստիարակության և կրթման համակարգերի խարխլմանը, ինչպես նաև ազգային մտածելակերպից, բարոյական նորմերից և սկզբունքներից, ազգային մշակույթից, ազգային-պատմական ավանդույթներից ու ծեսերից, հայ ժողովրդի դրական ավանդական բարքերից հրաժարմանը: Ազգային ավանդույթներին անհարիր սոցիալական, մշակութային, հոգևոր, կենցաղային արժեքների՝ համընդհանրացմամբ պայմանավորված տարածումն սպառնալիք է ազգային ինքնության, այսինքն՝ հային բնորոշ հատուկ գծերի ամբողջության պահպանմանը:

Ներկայումս հասարակությունում խորանում են արատավոր երևույթները, տարածում են ստանում նորանոր բացասական, վնասակար ու դատապարտելի սովորություններ: Խոսքը վերաբերում է հարբեցողությանը, քրեածին վարքին ու բնակչության քրեականացմանը, մարմնավաճառությանը, համասեռամոլությանը, թմրամոլությանը, խաղամոլությանը, անհատապաշտությանը և այլն[1]: Հասարակությունում ի հայտ եկող այդ երևույթները չեն կարող մասամբ չդրսևորվել նաև բանակային կենսակերպում: Այս տեսակետից թեև ոլորտային նախաձեռնությունները, որոնք ուղղված են փողոցային արատավոր բարքերի դեմ պայքարին, անշուշտ, խիստ կարևոր են, սակայն առաջին հերթին անհրաժեշտ է ցուցաբերել համապետական մոտեցում, ինչը ներակայորեն ենթադրում է ՀՀ հասարակությունում տեղի ունեցող սոցիալ-հոգեբանական երևույթների ու գործընթացների զարգացման դինամիկայի և միտումների վերլուծություն, այդ վերլուծության արդյունքների հաշվառմամբ համակողմանիորեն հիմնավորված քաղաքականության մշակում և այդ քաղաքականության պլանաչափ իրականացում: Միայն այդպես հնարավոր կլինի արդյունավետ պայքար մղել արատավոր երևույթների, օտարածին, փոխառված և խեղաթյուրված գաղափարախոսությունների, կրոնադավանական և հայ ազգին ոչ հարիր այլ բարոյախոսությունների ներթափանցման ու տարածման դեմ:

Երկրորդ. պարզենք ու վերլուծենք զինվորական ստորաբաժանումներում ոչ կանոնադրական հարաբերությունների համակարգի կենսունակությունը պայմանավորող գործոնները:

Ոչ կանոնադրական հարաբերությունների ծագման ու դրանց խորացման անմիջական պատճառները կարելի է ներկայացնել երկու խմբով.

1. պատճառներ, որոնք պայմանավորված են մինչ զորակոչը անձնավորուբ-

---

Ազգային մշակույթ ասելով նկատի ունենք տվյալ ազգի նյութական և հոգևոր արժեքների համախումբը: Ազգային մշակույթը դրսևորվում է հասարակության, պետության, վերջինիս սոցիալական հաստատությունների գործունեությունում, ինչպես նաև ազգային ավանդույթներում, հոգևոր արժեքներում, մտածելակերպում և դիրքորոշումներում, բարոյական նորմերում, կարծրատիպներում, միջանձնային ու միջխմբային վարքագծի ու ինքնաարտահայտման ռազմավարություններում, լեզվի ու կացութաձևի առանձնահատկություններում:

[1] Տես *Ա. Գաբուզյան*, Անչափահասների հանցավորության դեմ պայքարի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում: «Հոգեբանության և իրավունքի խաչմերուկները»: Միջազգային գիտաժողովի նյութեր: Ե., 2012, էջ 280, *նաև՝ Լ. Մինասյան*, Հանցանք կատարած անձի ուղղման ուղղությամբ աշխատանքների կարևորությունը Հայաստանում: «Հոգեբանության և իրավունքի խաչմերուկները», էջ 350:

յան սոցիալականացման ընթացքում բարոյական նորմատիվության* ձևավորման անարդյունավետությամբ,

2. պատճառներ, որոնք պայմանավորված են ստորաբաժանումներում գործող քողարկված ոչ կանոնադրական հարաբերությունների համակարգով[2]:

Ոչ պաշտոնական համակարգի ներկայացուցիչները համապատասխան ջանքեր են գործադրում ոչ կանոնադրական հարաբերությունների մեջ ներքաշելու նոր զինծառայողների՝ նրանց ևս դարձնելով կարգազանց: Բարոյահոգեբանական կլիման, որը զինվորական ստորաբաժանումում ձևավորում են հենց այդ թելադրող կատեգորիայի զինծառայողները, հանգեցնում է այն բանին, որ զորամասը համալրած զորակոչիկներին սկսում է թվալ, թե այդ ամենի դեմ պայքարը անիմաստ ու անհնար է: Եվ այդպես սկիզբ է առնում նոր կարգազանցների «վերարտադրությունը», այսինքն՝ այն պահից, երբ նոր հանրույթում հայտնված անձնավորությունը ենթարկվում է ավելի երկար ծառայող անձի՝ կանոնադրական նորմերին հակասող պահանջներին:

Վերարտադրման տվյալ օրինաչափությունը ցայտունորեն արտահայտված է ԱՊՀ մի շարք երկրների ԶՈՒ-երի ստորաբաժանումներում, այդ թվում նաև ՌԴ ԶՈՒ-ում[3]: Ընդ որում, ժամկետային զինծառայողների մի զգալի մասը ԶՈՒ-ի ստորաբաժանումներում արմատավորված բացասական երևույթները դիտում է որպես բնականոն սոցիալ-հոգեբանական երևույթ, ինչը դժվարացնում է այդ քողարկված համակարգի դեմ պայքարի կազմակերպումը, իսկ մյուս մասը գործնականում ստիպված է ենթարկվել այդ կանոններին՝ առաջնորդվելով ինքնապահպանման բնազդով:

Ներկայացնենք զինվորական ծառայության այն առանձնահատկությունները, որոնք, մեր կարծիքով, կարող են հանգեցնել միջանձնային հարաբերություններում բացասական երևույթների առաջացմանն ու խորացմանը:

1. Հարաբերությունների որոշակի համակարգում զինծառայողի ներառված լինելը ոչ թե նրա նախասիրությունների, համակրանքի-հակակրանքի հիման վրա, այլ ըստ զինվորական գործունեության տարբեր սուբյեկտների հետ խիստ կեր-

* Նշենք, որ բարոյական նորմատիվության ձևավորվածության մակարդակով է որոշվում անձնավորության ունակությունը՝ համարժեքորեն ընկալելու իրեն առաջարկվող որոշակի սոցիալական դերերը (ավելի հանգամանորեն տես «Многоуровневый личностный опросник «Адаптивность» (МЛО-АМ) А. Г. Маклакова и С. В. Чермянина». «Практическая психодиагностика. Методика и тесты». Под ред. Д. Я. Райгородского. Самара, 2001, сс. 549–558 (http://www.psyoffice.ru/212-rajjgorodskijj-d.ja.-prakticheskaja.html)): Այս տեսակետից շատ կարևոր է, թե որքանով է անձնավորությունը ընկալում վարքի բարոյական նորմերը, և ինչպիսին է նրա վերաբերմունքը անմիջական սոցիալական շրջապատի պահանջների նկատմամբ:

[2] Տես *Վ. Հ. Մարգարյան, Հ. Ա. Մարտիրոսյան*, Զինվորական կոլեկտիվներում ոչ կանոնադրական հարաբերությունների սոցիալ-հոգեբանական պատճառները: «ՀԲ», 2010, հմ. 2:

[3] Այդ մասին ավելի հանգամանորեն տես *Α. Калюжный*. Основы организации и проведения воспитательных работ в подразделении, воинской части. «Ориентир», 2006, № 8; *նույնի՝* Психологические факторы формирования группового лидерства среди военнослужащих, проходящих военную службу по призыву. «Ориентир», 2006, № 6:

պով կանոնակարգված համատեղ գործողություններ կատարելու և շփվելու անհրաժեշտության,

2. զինվորական կոլեկտիվի անդամների միջև հարաբերությունների տևականությունն ու անընդհատությունը,

3. զինծառայողի հարաբերական մեկուսացվածությունը արտաքին միջավայրից,

4. զինվորական կոլեկտիվի համատարրությունն ըստ սեռի[4]:

Փակ սոցիալական համակարգը նպաստավոր պայմաններ է ստեղծում ոչ կանոնադրական հարաբերությունների ձևավորման համար: Այդ հարաբերությունների հիմքում դրված են ցանկացած հանրույթի համար միանգամայն բնական իշխողական հարաբերությունները[5]: Այս հանգամանքը կարող է դիտվել որպես ոչ կանոնադրական հարաբերությունների համակարգի կենսունակությունը պայմանավորող գործոն: Ի վերջո, ցանկացած սոցիալական կառույցին բնորոշ է իր միավորների որոշակի աստիճանակարգության ստեղծում՝ ըստ «առաջավար – հիմնական զանգված – իրավազուրկ» մոդելի: Ընդսմին աստիճանակարգությունը կարող է հիմնվել ինչպես դրական (վաստակ, գիտելիք, ունակություններ, հմտություններ, ֆիզիկական ուժ, անձնային դրական գծեր), այնպես էլ բացասական (ենթգություն, ագրեսիվություն, դաժանություն, խորամանկություն և այլն) բնութագրիչների վրա[6]:

Քրեաբանական գիտության ոլորտում կատարվել է մի հետաքրքիր գիտափորձ: Բանտում բոլոր այն անձանց, որոնք ենթարկվում էին նսեմացման ու ծաղրուծանակի, հավաքել էին մի տեղ՝ մեկուսացնելով իրենց հալածողներից, սակայն մեկուսացվածների միջավայրում շուտով ձևավորվեցին այն նույն միջավայրի բարքերը, որից նրանց մեկուսացրել էին[7]: Այսինքն՝ դա փակ սոցիալական համակարգի առանձնահատկությունն է:

Ըստ Ե. Ա. Մարգուլենկոյի՝ «ավագ – կրտսեր» բնական իշխողական հարաբերությունները* կոնկրետ պայմաններում վերածվում են ոչ բնական հարաբե-

---

[4] Տես *Վ. Հ. Մարգարյան, Հ. Ա. Մարտիրոսյան,* Նշ. աշխ.:

[5] Տես *Е. А. Моргуленко.* Неуставные взаимоотношения военнослужащих: теория и практика антикриминального воздействия. М., 2006, с. 61:

[6] Տես *П. А. Сорокин.* Человек. Цивилизация. Общество. М., 1992 (http://www.gumer.info/bibliotek_Buks/Sociolog/Sorok2/index.php):

[7] Տես *В. Т. Шаманов.* Очерки преступного мира. М., 2009 (http://www.tyurem.net/books/shalamov/ocherki/index.htm):

* Բոլոր հանրույթներն իրենց կազմակերպվածքի բնական անհամաչափության պատճառով պարունակում են հակամարտայնություն: Իշխողական հարաբերություններ կան և՛ քաղաքացիական հասարակությունում, և՛ պրոֆեսիոնալ բանակներում: Դրանք եղել են անգամ ցարական բանակի ընտրյալ զորամասերում: Իշխողական հարաբերությունները՝ որպես կրտսերի նկատմամբ ավագի բնական իշխում, կոնկրետ պայմաններում հեշտությամբ վերածվում են ոչ բնական իշխման: Ընդսմին դա տեղի է ունենում այնտեղ, որտեղ անձնավորությունը զուրկ է ազատ տեղաշարժման հնարավորությունից՝ կապված իր համար կենսագործունեության միջավայրի ընտրության հետ, այսինքն՝ այնտեղ, որտեղ մարդիկ ստիպված են իրենց հարաբերությունների համակարգը կառուցել այն պատճառով, որ այդ միջավայրից հեռանալու հնարա-

ռությունների, ինչը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով. 1) իր կենսագործունեության համար միջավայր ընտրելու անհնարինությամբ, 2) միջանձնային հարաբերությունների համակարգը կոնկրետ շփումներից զերծ մնալու անհնարինության պայմաններում կառուցելու անհրաժեշտությամբ[8]:

Ոչ կանոնադրական հարաբերությունների համակարգի գոյատևմանը նպաստում է նաև այն, որ անձնավորության մեջ դեռ մանուկ տարիքում ձևավորված հոգեբանական կարծրատիպները, օրինակ՝ «խաբարբզիկությունը լավ բան չէ» բարոյախրատական բանաձևը, առավելագույնս արդիական են դառնում զինվորական կոլեկտիվի փակ միջավայրում՝ ներառելով նաև այն երևույթները, որոնց, ըստ էության, չեն վերաբերում: Այս դեպքում հակասություն է առաջանում զինվորական կոլեկտիվի համախմբվածության և տեղի ունեցածի կամ հնարավոր զարգացումների մասին հրամանատարական կազմին զեկուցման կանոնադրական պահանջի միջև: Տվյալ հակասությունը զինվորական կոլեկտիվի անդամները լուծում են ըստ բերված իմաստափոխված կարծրատիպի՝ առաջնորդվելով համախմբվելու և միասնական վարքագիծ դրսևորելու սկզբունքով: ՈՒստի գիտակցաբար թաքցվում են միջանձնային հարաբերությունների տիրույթում տեղի ունեցող բացասական երևույթներն ու ոչ ցանկալի զարգացումները: Տվյալ հանգամանքը ևս նվազեցնում է ոչ պաշտոնական միջանձնային հարաբերությունների համակարգի դեմ պայքարի արդյունավետությունը:

Երրորդ. նախազորակոչային ու զորակոչային տարիքի անձանց ռազմահայրենասիրական դաստիարակության համակարգի վերլուծության կարևորությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ բանակ զորակոչվածին մեծ արդյունավետությամբ պատրաստել Հայրենիքի պաշտպանի գործառույթների կատարմանը հնարավոր է միայն նրա մեջ ՀՀ իսկական քաղաքացու և հայրենասերի անձնավորությանը բնորոշ արժեհամակարգի ու հայացքների, ինչպես նաև դիրքորոշումների, գործունեության և վարքի շարժառիթների ձևավորմամբ: Չմոռանանք, որ զինծառայողների մարտական ոգին և բարոյական ուժը ինչպես ամբողջ ժողովրդի, այնպես էլ առանձին քաղաքացիների աշխարհայացքի, մտածողության, բարոյականի ու հոգեկանի վրա նպատակաուղղված ու համակարգված ներգործության արդյունք են: Այդ հատկությունները ձևավորվում են ոչ թե մի խումբ մասնագետների կողմից, որոնք նախանշանակված են մարդկանց դաստիարակելու համար, այլ ընտանիքում, իսկ հետո խրախուսվում ու կատարելագործվում են պետության մի շարք հաստատությունների, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների կողմից[9]:

Նախազորակոչային և զորակոչային տարիքի անձանց շրջանում գիտականորեն հիմնավորված ռազմահայրենասիրական դաստիարակչական աշխատանքների միջոցով պետք է ձևավորվեն ապագա զորակոչիկներին անհրաժեշտ այն հո-

---

վորություն չունեն (ավելի հանգամանորեն տես *Կ. Լ. Банников.* Антропология экстремальных групп. Доминантные отношения среди военнослужащих срочной службы Российской армии. М., 2002 (http://lit.lib.ru/d/dedovshchina/bannikov-01-antropolog.shtml)):

[8] Տես *Ե. Ա. Մարգուլեանկ*, Նշ. աշխ.:

[9] Տես *Վ. Հ. Մարգարյան*, Մարտի հոգեբանություն: Ե., 2009, էջ 166:

գեբանական նախադրյալները և բանակային առօրեական կենսակերպի առանձնահատկությունների մասին ռեալ պատկերացումները, որոնք արդեն զորային կառույցում հնարավորություն կտան կասեցնելու կամ նվազագույնի հասցնելու հոգեկան ապահարմարման զարգացումը, առավելագույնս մեծացնելու զինվորական կոլեկտիվին ինտեգրման հնարավորությունը, հետևաբար և մեծ արդյունավետությամբ ու սեղմ ժամկետներում նրանց մեջ ձևավորելու ոչ միայն մարտական հատկություններ, այլև միջանձնային հարաբերություններում կանոնադրական նորմերի պահպանման նկատմամբ գիտակցված մոտեցում դրսևորելու սովորություն: Խոսքը նախազորակոչային և զորակոչային տարիքի անձանց մեջ զինվորական ծառայությանը հոգեբանական պատրաստության ձևավորման մասին է:

Զինվորական ծառայությանը հոգեբանական պատրաստություն ասելով՝ նկատի ունենք այն անձնային նորագոյացությունները, որոնք 18 տարեկանում մեծապես կանխորոշում են մտածողության, բարոյական, շարժառիթային և կամային ոլորտների զարգացման բարձր մակարդակը: Թվարկված որևէ բաղադրիչի զարգացման ցածր մակարդակը հանգեցնում է մյուսների խեղաթյուրմանը: Այդ ուղղությամբ գիտական հետազոտություններ կատարած Ն. Գ. Բոնդարը կարևորում է անձնավորության իմացական ունակությունները, նյարդահոգեկան կայունությունը, ագրեսիվությունը, իշխելու-ենթարկվելու հակումը, իրադրային և անձնային տագնապախռովությունը[10]:

Ի՞նչ վիճակում է այսօր ռազմահայրենասիրական դաստիարակության ոլորտը ՀՀ-ում: Վերջին տարիներին նկատելի են այդ ոլորտում որոշակի դրական տեղաշարժեր: Պարբերաբար կատարելագործվում և ժամանակակից ստանդարտներին է համապատասխանեցվում ուսումնանյութական բազան, բացի այդ, հետևողական աշխատանք է կատարվում նախնական զինվորական պատրաստության ուսուցիչների՝ զինղեկների կարողությունների ու հմտությունների մակարդակի բարձրացման ուղղությամբ[11]:

Այդ ոլորտում 2004–2012 թթ. կատարված վերլուծությունների արդյունքները ցույց են տալիս, որ թեև ներկայումս ՀՀ ռազմաքաղաքական ղեկավարությունը ռազմահայրենասիրական դաստիարակությանը մեծ կարևորություն է տալիս, այդուհանդերձ, կատարվող աշխատանքը դեռևս համակարգված չէ, և դեռ շատ անելիքներ կան հատկապես իրավական այն հիմքերի ստեղծման ուղղությամբ,

[10] Տես *Н. Г. Бондарь.* Психологическая готовность юношей к службе в вооруженных силах Российской Федерации. «Гуманитарные науки», 2008, № 6; նաև՝ *Л. Э. Кузнецова.* Формирование психологической готовности юношей к прохождению обязательной военной службы в ВС РФ с точки зрения ресурсного подхода. «Молодой ученый», 2012, № 3:

[11] Տես «Սեյրան Օհանյանը ներկա է գտնվել Գիտելիքի օրվան նվիրված տոնական միջոցառմանը» (http://www.mil.am/1353319729), *նաև*՝ «Սեյրան Օհանյան. Երիտասարդ սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակությունը ՀՀ ռազմական պոտենցիալի բաղադրիչն է», 22 դեկտեմբերի 2010 (http://www.panarmenian.net/arm/news/58872/), նաև՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 25-ի հմ. 532 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 2011 թվականի հունվարի 20-ի հմ. 32–Ն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումը:

որոնցով պետք է կարգավորվի այդ ոլորտում ՀՀ գործադիր իշխանության, պետական և տարածքային կառավարման մարմինների գործունեությունը:

Նշենք նաև, որ միջնակարգ կրթություն իրականացնող եռաստիճան հանրակրթական համակարգում՝ թե՛ տարրական դպրոցում (1-4-րդ դասարաններ), թե՛ միջին դպրոցում (5-9-րդ դասարաններ), թե՛ ավագ դպրոցում (10-12-րդ դասարաններ), հետին պլան են մղված ռազմահայրենասիրական դաստիարակության շրջանակում բանակային կենսագործունեությանը նպատակային սոցիալ-հոգեբանական պատրաստման աշխատանքները: Այդ ամենին գումարվում է նաև այն, որ նախազորակոչային և զորակոչային տարիքի անձանց շրջանում մանկավարժական-հոգեբանական ներգործության միջոցով անհրաժեշտ հատկությունների ձևավորմանն ուղղված տեխնոլոգիական հնարները մշակված չեն:

Ռազմահայրենասիրական դաստիարակության համակարգը չի կարող լինել արդյունավետ, եթե դրա նկատմամբ չդրսևորվի համապետական մոտեցում:

ՈՒսումնասիրելով, օրինակ, Իսրայելի զինվորի ռազմահայրենասիրական դաստիարակության ընդհանուր սկզբունքները՝ կարելի է տեսնել պետական աջակցության գերակայությունը: «Իսրայելում երիտասարդության դաստիարակության գործում կարևորվում է պետական աջակցությունը հրեա ժողովրդի պատմության պաշտոնական մեկնակերպին և առաքելությանը»[12]: Համաձայն վերջերս անցկացված սոցիոլոգիական հարցումների՝ Իսրայելի հրեաների ավելի քան 94 %-ը պատրաստ է կամավոր կերպով զինվորագրվելու ՑԱՀԱԼ-ին և կյանքը զոհելու հանուն հայրենիքի: Այդ ցուցանիշը ԱՄՆ-ի քաղաքացիների շրջանում 63 % է[13]:

ՀՀ-ում ռազմահայրենասիրական դաստիարակության ոլորտում առկա պրոբլեմների լուծման առավել արդյունավետ ուղիները որոշելու համար կարևոր է առանձնացնել դրանցից երկուսը, որոնց համալիր լուծմամբ է միայն հնարավոր հասնել արագ դրական փոփոխությունների: Մշակված չեն նախ՝ ռազմահայրենասիրական դաստիարակության հայեցակարգային հիմքերը, երկրորդ՝ ռազմահայրենասիրական դաստիարակության պետական համակարգի կառավարման ալգորիթմը:

Հիմնախնդրին վերաբերող մասով միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առաջատար երկրների ԶՈՒ-ում ոչ կանոնադրական հարաբերությունների դրսևորումների սահմանափակությունը պայմանավորված է հետևյալ գործոններով՝

1. բանակի համալրման պայմանագրային սկզբունքը՝ ծառայության անցնող անձանց ընտրազատմամբ: Ծառայության են անցնում ոչ միայն դպրոցը ավարտած պատանիները, այլև ավելի մեծ տարիքի անձինք, որոնց նկատմամբ զինվորական կոլեկտիվում վերաբերմունքը միանգամայն այլ է,

2. զորանոցում ինտերնետի, բջջային հեռախոսների, տեսախցիկների առկայությունը գործնականում նվազագույնի է հասցնում այդ երևույթի դրսևորումը,

[12] *Հ. Ս. Քոթանջյան*, Անվտանգության քաղաքագիտական պրոբլեմներ. ԽՍՀՄ վերակառուցում – Ղարաբաղ, Հայաստան, Անդրկովկաս – Աֆղանստան: Ե., 2009, էջ 99:

[13] Տես նույն տեղում, էջ 102:

3. օրենսդիր մարմնի նպատակաուղղված պայքարը (Ֆրանսիա[14], ԱՄՆ[15]),

4. եռամյա բանակային ծառայության առաջին մի քանի ամիսները (6-16 ամիս) յուրաքանչյուր զորակոչիկ անցկացնում է ոչ թե մարտական, այլ ուսումնական վաշտում՝ միայն իր զորակոչի ծառայողների հետ: Մարտական վաշտում զորակոչիկը հայտնվում է ուսումնական վաշտում ուսումն ավարտելուն պես (Իսրայել[16]):

Ինչպես նշվեց, ոչ կանոնադրական հարաբերությունները բոլոր երկրների բանակային կացութաձևում եղել են ու ներկայումս էլ շարունակում են դրսևորվել տարբեր աստիճանի արտահայտվածությամբ[17]:

Այսպիսով՝ ՀՀ հասարակությունում արատավոր բարքերի դեմ արդյունավետ պայքար մղելու համար նպատակահարմար է.

1. ստեղծել ՀՀ Նախագահի ղեկավարությամբ գործող հանձնաժողով՝ կազմվված ՀՀ բոլոր գերատեսչությունների, հեղինակավոր հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից, գիտության, կրթության, մշակույթի, քարոզչության ոլորտի առաջատար գործիչներից: Այդ հանձնաժողովը պետք է համակարգի՝

ա) ազգային գաղափարախոսության մշակման աշխատանքները, ընդ որում, հանրաքվեով հաստատված փաստաթղթի դրույթները ինտենսիվ քարոզչության միջոցով պետք է արմատավորվեն հասարակության մեջ՝ աճող սերնդի սոցիալականացման յուրաքանչյուր փուլում համապատասխան կիրառմամբ,

բ) ռազմահայրենասիրական դաստիարակության հայեցակարգի մշակման աշխատանքները: Հայեցակարգի մշակմամբ կնախանշվեն ռազմահայրենասիրական դաստիարակության պետական համակարգի գործառման ալգորիթմը, ինչպես նաև այդ ոլորտում ՀՀ գործադիր իշխանության, պետական և տարածքային կառավարման մարմինների գործունեության կարգավորման ուղիները,

գ) ազգային բոլոր (հատկապես՝ հոգևոր-մշակութային) ռեսուրսները սերնդից սերունդ փոխանցելու քաղաքականության մշակման և այն իրագործելու աշխատանքները,

2. Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմին կից տեղեկատվության և հասարակական կապերի կենտրոնին՝ մշակել ծրագիր՝ ՀՀ հա-

---

[14] Տես *Р. Паклин.* На глупости времени нет. «Российская газета», 16 января 2008 г., № 4563:

[15] Տես *А. Шитов.* Муштра, но по уставу. «Российская газета», 16 января 2008 г., № 4563:

[16] Տես *З. Гельман.* Зато здесь столько секс-скандалов. «Российская газета», 16 января 2008 г., № 4563:

[17] Տես *В. Нестеркин.* О дезертирстве в ВС США. «Зарубежное военное обозрение» («ЗВО»), 2006, № 4, *նույնի՝* Проблемы взаимоотношений военнослужащих за рубежом. «ЗВО», № 5, նաև՝ *В. Гнитеев.* Социально-психологические аспекты преступности американских военнослужащих в Японии и Республике Корея. «ЗВО», 2006, № 3; «Military encroachment». «Varieties of Encroachment» (http://www.laetusinpraesens.org/docs00s/encroacv.php#mili2):

սարակությունը հակառակորդի բացասական տեղեկութահոգեբանական ներգործությունից պաշտպանելու նպատակով, ընդ որում, մշակվող ծրագրում նպատակահարմար է հաշվի առնել հասարակության բոլոր շերտերի «իմունացման*» առանձնահատկությունները, ինչը կնպաստի հոգեբանական օպերացիաների տիրույթում պաշտպանական գործողությունների արդյունավետության մակարդակի բարձրացմանը,

3. ՀՀ կրթության և գիտության նախարարությանը՝ մշակել ու հանրակրթական դպրոցի միջոցով իրականացնել բարոյահոգեբանական և սոցիալ-հոգեբանական պատրաստման ծրագրեր՝ նախազորակոչային և զորակոչային տարիքի անձանց զինվորական ծառայությանը նախապատրաստելու նպատակով,

4. ՀՀ Պաշտպանության նախարարությանը.

ա) ՀՀ ՊՆ տարածքային զինկոմիսարիատներին՝ մշակել և տարեկան երկու անգամ մեկշաբաթյա դասընթացների միջոցով իրագործել ուսումնաքարոզչական ծրագրեր նախազորակոչային տարիքի պատանիների մեջ զինվորական ծառայության նկատմամբ դրական դիրքորոշման ձևավորման, ինչպես նաև նրանց մասնագիտական կողմնորոշման նպատակով: Այս դասընթացներին պարտադիր կերպով պետք է մասնակցեն նաև միջին և ավագ դպրոցում կրթական գործընթացից դուրս մնացած արական սեռի ներկայացուցիչները,

բ) ռազմակրթական օջախներից մեկում, օրինակ՝ Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտում, ստեղծել ռազմական հոգեբանության ամբիոն և պատրաստել կադրային սպա–ռազմական հոգեբանների, որոնք ունակ լինեն միջանձնային հարաբերություններում պատեհաժամորեն հայտնաբերելու ցանկացած բացասական սոցիալ-հոգեբանական միտում, և դեռ սաղմնային վիճակում համարժեք միջոցառումների նախաձեռնմամբ կասեցնելու ոչ ցանկալի զարգացումները, կազմակերպելու զորային կառույցում անձնակազմի մարտական պատրաստման բարոյահոգեբանական ապահովումը, ինչպես նաև լուծելու մի շարք այլ հոգեբանական խնդիրներ, որոնք բնորոշ են բանակային կացութաձևին: Ընդ որում, նպատակահարմար է մշակել «Զինվորական հոգեբան» մասնագիտությամբ ԲՌՈՒՀ-ի դիմորդների ընդունելության ճկուն մեխանիզմ, ըստ որի՝ արտոնություններ տրամադրել 1 տարի ՀՀ ԶՈՒ-ի շարքերում պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունը անցած և հրամանատարական կազմի կողմից երաշխավորված զինծառայողներին,

---

* «Իմունացում» արտահայտությունը կիրառել է Չինաստանի Ժողովրդական Հանրապետության ռազմաքաղաքական ղեկավարությունը, որն իր շահերը տեղեկութահոգեբանական ոլորտում պաշտպանելու նպատակով ձեռնամուխ եղավ համապատասխան ռազմավարության մշակմանը: Այդ ռազմավարությունը պետք է նպաստի Չինաստանի քաղաքացիների գիտակցության տեղեկութահոգեբանական արդյունավետ պաշտպանությանը, ինչը պետք է հիմնվի Չինաստանի ամբողջ բնակչության «իմունացման» վրա: Այդ գործընթացը ենթադրում է, մի կողմից, արտաքին աշխարհից փոխառված գաղափարների հետ հաղորդակցման արգելքի վերացում և, մյուս կողմից՝ այդ գաղափարների սխալականության ու վտանգավորության պարզաբանում (ավելի հանգամանորեն տես *А. Авраменко, А. Сатурнский*. Психологические операции Народно-освободительной армии Китая. «ЗВО», 2005, № 4):

գ) զորային կառույցում դաստիարակչական աշխատանքն ուղղել ոչ թե զինծառայողի բնավորության գծերի վերափոխմանը, այլ նրա արժեհամակարգի, նրա աշխարհայացքի փոփոխմանը՝ անձնավորության ուղղվածության բաղադրիչների էության փոփոխմամբ:

К ВОПРОСУ О ФАКТОРАХ, ОБУСЛОВЛИВАЮЩИХ ЖИВУЧЕСТЬ СИСТЕМЫ НЕУСТАВНЫХ ВЗАИМООТНОШЕНИЙ В ВС РА

В. Г. МАРГАРЯН, полковник, доктор психологических наук, доцент,
заместитель Начальника ИНСИ МО РА по учебной части

РЕЗЮМЕ

Автором выделены две группы основных причин возникновения неуставных взаимоотношений в армейской среде: 1) причины, обусловленные неэффективностью формирования в личности моральной нормативности поведения в процессе социализации до призыва в армию, 2) причины, обусловленные наличием в подразделении скрытой неформальной системы воинских взаимоотношений. Отмечается, что в условиях военной службы, представляющей замкнутую социальную среду, многие общесоциальные явления и процессы, в частности, межличностные взаимоотношения, претерпевают специфические деформации.

Представлены особенности военной службы, способствующие живучести системы неуставных взаимоотношений,– вовлечение военнослужащего в систему межличностных отношений на основе не собственных интересов и симпатий, а необходимости выполнения совместных действий с различными субъектами воинской деятельности; постоянство (непрерываемость) и длительность взаимоотношений между членами воинского коллектива; относительная изолированность военнослужащих от внешней среды; принадлежность членов воинского коллектива к одному полу и т. д.

С целью повышения уровня социально-психологической готовности юношей допризывного возраста к службе в армии, а следовательно, и повышения эффективности борьбы с порочными явлениями предложен комплекс взаимосвязанных мероприятий, в частности, разаработка национальной идеологии и применение ее положений на каждом этапе социализации молодежи; разработка концепции военно-патриотического воспитания; разработка политики передачи духовно-культурных ресурсов из поколения в поколение; разработка программы защиты населения от негативного информационно-психологического воздействия с учетом особенностей иммунизации всех слоев населения.

ON THE FACTORS PROVIDING THE VIABILITY OF THE SYSTEM OF NON-STATUTORY RELATIONS IN THE RA ARMED FORCES

V. H. MARGARYAN, Lieutenant Colonel, Doctor in Psychology, Associate Professor, Deputy Head for Educational Affairs, INSS, MOD, RA

SUMMARY

The author has pinpointed two main groups of origin of non-statutory relations in the army environment: 1) reasons which are due to the inefficiency of the formation of behavioral moral norms during the socialization process before the recruitment, 2) reasons, which are due to the existence of the latent informal system of servicemen's interrelations. In terms of the military service, as is noted, which is a closed social environment, most general social phenomena and processes, and the interpersonal relations in particular, undergo specific deformations.

Peculiarities of the military service, facilitating the viability of the system of non-statutory relations, are submitted by the author – engaging the servicemen into the system of interpersonal relations not on the basis of personal interests and sympathies, but rather on the necessity of carrying out joint actions with various subjects of military activity; the permanency (continuity) and duration of relationship among the members of the military team; relative isolation of servicemen from the external environment; the same-sex members in the military collective, etc.

Aiming to raise the level of the pre-conscription age teens' socio-psychological preparedness for the military service, and correspondingly, raising the efficiency of the struggle against the vicious phenomena, a complex of interrelated activities is suggested, namely, the elaboration of a national ideology and the use of its provisions on every stage of the youth's socialization; elaboration of the conception of a military patriotic upbringing; working out a policy of delegation of spiritual and cultural resources from one generation to another; elaboration of a program for the protection of the people from negative informational and psychological impact with the account of peculiarities of the immunization of all the strata of population.

ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱԽՏՈՐՈՇՄԱՆ ԵՎ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Զ. Դ. ԱՍԱՏՐՅԱՆ, փոխգնդապետ, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի ռազմագիտական խմբագրման բաժնի պետ

Զինված ուժերում կարգապահությունը մարտունակության ապահովման կարևոր նախադրյալներից է: ՀՀ Պաշտպանության նախարար Ս. Օհանյանը 2014 թվականի տարեմուտի ուղերձում նշում է. «Ազգային բանակի վերջնական ձևավորումը՝ մի կողմից հիմնված է հայ ազգային ավանդույթների, մեր և միջազգային փորձի վրա, մյուս կողմից՝ մարդկային գործոնի, որը հնարավորություն կտա հաստատելու միջանձնային հարաբերությունների առողջ մթնոլորտ, բարձր մարտական ոգի, և մեկընդմիշտ ամրապնդելու բանակի կարգապահությունը»[1]: Այս առումով առանձնակի կարևոր է դառնում կարգապահական խախտումներին զինծառայողների հակվածության հոգեբանական ախտորոշումը և այդ խախտումների կանխարգելումը, ինչը պետք է արվի գիտականության հիմքի վրա, ուստի անհրաժեշտ է համապատասխան գիտահետազոտական աշխատանքներ կազմակերպել:

ՈՒսումնասիրությունները ցույց են տալիս, որ զինվորական ստորաբաժանումներում պարտադիր զինվորական ծառայության զինծառայողների (այսուհետև՝ զինծառայողներ) կարգապահական խախտումները հիմնականում պայմանավորված են ծառայության նկատմամբ նրանց ունեցած բացասական դիրքորոշումներով, շարժառիթներով, տարբեր արատավոր ենթամշակույթների (քրեական, էմոներ, գոթեր և այլն) նկատմամբ հակվածությամբ, ինչը ծառայության յուրահատուկ պայմաններում հաճախ դառնում է դասալքության, ապահարմարման, դյուրագրգռության, սանձարձակ վարքի, ագրեսիվության, շահերի եսասիրական ուղղվածության, ինքնամփոփության, անդամախեղման, առաջադրանքների ոչ ճիշտ կատարման և այլ բացասական երևույթների պատճառ[2]: Որպես ծառայության յուրահատուկ պայմաններ կարելի է առանձնացնել խիստ ենթակարգությունն ու գործողությունների կանոնակարգվածությունը, ամենօրյա ֆիզի-

---

[1] Տես «ՀՀ Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի 2014 թվականի տարեմուտի ուղերձը», էջ 1:

[2] Այդ մասին ավելի հանգամանորեն տես *Զ. Դ. Ասատրյան,* Ժամկետային զինծառայողների քրեածին վարքի սոցիալ-հոգեբանական պատճառները և դրանց հաղթահարման ուղիները: Հոգեբ. գիտ. թեկ. գիտական աստիճանի հայցման ատենախոսություն: Ե., 2007:

կական ծանրաբեռնվածությունը, սոցիալական դերերի ընտրության սահմանափակությունը և այլն: Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ այդ գործոնները տարբեր կերպ են ազդում զինծառայողների վարքի վրա. մի զինծառայողի համար դառնում են կարգապահական խախտման պատճառ, իսկ մյուսների համար՝ ո՛չ: Ուստի, կարգապահական խախտումները պայմանավորված են ինչպես արտաքին գործոններով, այնպես էլ անձնային առանձնահատկություններով: Հետևաբար՝ կարգապահական խախտումների կանխարգելման արդյունավետության ապահովման համար կարևոր է հոգեբանական հետազոտությունների միջոցով պարզել դրանք և ըստ այդմ ընտրել ներգործության համապատասխան գործիքարան:

Քանի որ հոգեբանական հետազոտությունների առարկան մարդն է՝ իր բարդ ներաշխարհով ու միջանձնային կապերով, հույժ կարևոր է հետազոտությունը կատարել զգուշորեն, նախ՝ արդյունքների վրա կիրառվող գործիքարանի ազդեցությունը նվազարկելու, երկրորդ՝ հետազոտման առարկայի վրա հնարավոր բացասական ազդեցությունը կանխելու համար: Այս տեսակետից ԶՈՒ-ում հոգեբանական հետազոտությունները պետք է կատարվեն հրամանատարական կազմի հետ համագործակցությամբ, քանի որ նրանք են հիմնականում պատասխանատու իրենց ենթակա անձնակազմի բարոյահոգեբանական վիճակի (ԲՀՎ) համար, որը բարոյահոգեբանական ապահովման (ԲՀԱ) արդյունք է: «Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենքի համաձայն՝ հրամանատարը պարտավոր է՝

– հատուկ ուշադրություն դարձնել ենթակաների անհատական հատկանիշների ուսումնասիրության, զինվորական կոլեկտիվի համախմբման վրա,

– ժամանակին ի հայտ բերել կատարված կարգապահական խախտումների պատճառները,

– հետևողականորեն վերլուծել ենթակա անձնակազմի զինվորական կարգապահության ու բարոյահոգեբանական վիճակը,

– ենթակա անձնակազմին դաստիարակել զինվորական կարգապահության պահանջները անշեղորեն կատարելու ոգով,

– ենթակաների մեջ զարգացնել ու պահպանել անձնական արժանապատվության և զորային ընկերականության զգացում, զինվորական պարտքի ու պատվի գիտակցում և այլն[3]:

Այսպիսով՝ հոգեբան մասնագետների կատարած հետազոտությունը պետք է լինի ոչ թե ինքնանպատակ, այլ հրամանատարական կազմին ցուցաբերվող մասնագիտական օգնություն:

Նախքան ԶՈՒ-ում հոգեբանական հետազոտություններ անցկացնելը նպատակահարմար է ուսումնասիրել երևույթի՝ կարգապահության խախտման պատճառների և կոնկրետ զինվորական ծառայության առանձնահատկությունների (գործոնների) փոխադարձ կապը՝ ախտորոշման և կանխարգելման միասնական

[3] «Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ 2012 թ. ապրիլի 10-ի հմ. ՀՕ-91 օրենքը (http://parliament.am/legislation.php?sel=show&ID=4510&lang=arm):

համակարգի կիրառման ապահովմամբ: Օրինակ՝ հետազոտության ընթացքում պետք է արդեն նկատելի լինեն հետազոտվողի վարքում դրական փոփոխությունների միտումները:

Հոգեբանական հետազոտությունները հիմնականում անցկացվում են մի քանի փուլով (նախապատրաստություն, բուն հետազոտություն, արդյունքների վերլուծություն և այլն): Օրինակ՝ նախապատրաստման փուլում ոչ միայն վերջնական ձևակերպում է ստանում հետազոտության նպատակը, հստակեցվում է անցկացման սցենարը, այլև հետազոտվողների նյարդահոգեկան կայունության և մտավոր կարողությունների մակարդակին համապատասխան ընտրվում են հետազոտման մեթոդները:

Կարծում ենք՝ նպատակահարմար է վերլուծությունը կատարել կոնկրետ բացասական երևույթների օրինակի, մասնավորապես՝ քրեածին դրսևորումների հիման վրա: Փորձը ցույց է տալիս, որ զինծառայողների շրջանում քրեածին վարքի* պատճառականության հետազոտությունների ժամանակ առավել նպատակահարմար է կիրառել նրանց համար ոչ ժամանակատար և հնարավորինս «պարզ ընթացակարգ» ունեցող մեթոդներ: Զինծառայողները, որպես կանոն, խուսափում են մի քանի հարյուր հարցանի, բազմագործոն անձնային հատկանիշների ախտորոշման թեստերին պատասխանելուց: ՈՒստի ավելի նպատակահարմար է կիրառել փաստաթղթային հոգեբանական վերլուծության, գժտությունների հետադարձ վերլուծության, պրոյեկտիվ թեստերի, քննազրույցի (զրույցի), դիտման մեթոդները և Անցուպովի մոդուլային մեթոդիկան[4], որոնք հնարավորություն են տալիս ստանալու անհրաժեշտ տեղեկություններ: Առավել ևս, որ հոգեբանության մեջ այդ մեթոդները համարվում են ախտորոշման և կանխարգելման առումով բավական արդյունավետ: Այստեղ պետք է հաշվի առնել նաև այն, որ զինվորական գործունեությունն իր մարտավարական (օպերատիվ) առանձնահատկություններով ժամանակատար է, իսկ այդ մեթոդների կիրառության համար հետազոտվող զինծառայողներից շատ ժամանակ չի պահանջվի:

Հոգեբանական հետազոտությունը նպատակահարմար է սկսել փաստաթղթային հոգեբանական վերլուծությամբ: Պարտադիր զինվորական ծառայության զինծառայողների շրջանում քրեածին դրսևորումների պատճառների վերլուծության համար անհրաժեշտ է անձնական տեղեկություններ պարունակող փաստաթղթերից հավաքել տեղեկություններ ընտանեկան դրության, տարած հիվանդությունների, գիտելիքների, կրթվածության աստիճանի, կարգապահական ցուցանիշների, բացասական հակումների մասին: Դրանք հետազոտողին հնարավորություն են տալիս որոշակի պատկերացում կազմելու զինծառայողների քրեածին վարքի ձևավորման արտաքին և ներքին պայմանների վերաբերյալ: Տվյալ տեղեկությունները կարևոր են հետագայում հոգեբանական հետազոտութ-

* ՈՒսումնասիրությունները ցույց են տալիս, որ գժտային իրավիճակներում քրեածին վարքի հակումներ ունեցող անձանց բնորոշ է իրենց զսպելու և իրենց արարքի հետևանքները կանխատեսելու անկարողություն:

[4] Այս մասին ավելի հանգամանորեն տես *А. Я. Анцупов*, *А. И. Шипилов*. Конфликтология. М., 1999, сс. 539–544:

յունները արդյունավետ կերպով շարունակելու և կանխարգելման ծրագրեր մշակելու համար:

Քննազրույցը ոչ միայն ախտորոշիչ, այլև հոգեշտկողական (հոգեթերապևտիկ) նշանակություն ունեցող մեթոդներից է: Այն կարգազանց զինծառայողին հնարավորություն է տալիս վերագնահատելու իր վարքի հետևանքները, վերահմաստավորելու նպատակներն ու դիրքորոշումները: Քննազրույցը կարող է անցկացվել մի քանի փուլով և տարբեր ձևաչափերով: Ներգործության արդյունավետությամբ պայմանավորված՝ որոշակի փուլում զրույցին կարող են մասնակցել նաև անմիջական հրամանատարը և հարազատներից որևէ մեկը: Մեթոդի կիրառման նպատակից ելնելով՝ նրանք կարող են նաև առանձին զրույցներ ունենալ տվյալ զինծառայողի հետ: Այստեղ կարևոր է, որ հոգեբանը հրամանատարի և հարազատի համար հստակեցնի քննազրույցի անցկացման նպատակը, բովանդակությունը, ուղղվածությունը՝ ճշգրտելով հոգեբանական ներգործության վեկտորը, որը պետք է հետազոտվողի դիրքորոշումներում ու արժեքային համակարգում առաջացնի փոփոխություններ: Զինծառայողների հետ քննազրույցի ժամանակ պետք է պահպանվեն հոգեբանության մեջ ընդունված[5] հետևյալ կանոնները.

1. նախքան քննազրույցն սկսելը ծանոթանալ հետազոտվողի կենսագրական ու նրան բնութագրող այլ փաստաթղթերի հետ և որոշել այն կետերը, որոնք հատուկ ուշադրություն կամ լրացուցիչ ճշտում են պահանջում,

2. քննազրույցը պետք է տեղի ունենա առանձին սենյակում, առանց կողմնակի անձանց ներկայության, հետազոտվողի նկատմամբ առավելագույն տակտի և ուշադրության ցուցաբերմամբ,

3. քննազրույցը պետք է կրի ոչ պաշտոնական բնույթ,

4. ինտիմ բնույթի հարցերը տրվում են անուղղակի ձևով,

5. քննազրույցի ընթացքում հետազոտվողի պատասխաններին որևէ գնահատական չի տրվում, տրված հարցերի պատասխանների նկատմամբ չի ցուցաբերվում որևէ վերաբերմունք,

6. հետազոտվողին պետք չէ պարտադրել պատասխանել այն հարցերին, որոնց մասին նա չի ցանկանում խոսել, զրույցի ընթացքում ուշադրություն պետք է դարձնել զինծառայողների նյարդահոգեկան անկայունության հատկանիշների վրա, որոնք նկատվել են նրա հաղորդումներում կամ զրույցի ընթացքում նրա պահվածքում:

Դիտման մեթոդը կարելի է կիրառել ըստ ռուսաստանյան մասնագետների ներկայացրած սկզբունքների (տես գծապատկեր 1)[6]:

Փաստաթղթային հոգեբանական վերլուծության, քննազրույցի և դիտման մեթոդների կիրառման ժամանակ պետք է ուշադրություն դարձնել զինծառայողների

[5] Տես, օրինակ, *Laurie Reeves.* How to Handle a Psychological Interview (http://work.chron.com/handle-psychological-interview-14334.html), նաև՝ *S. A. McLeod.* The Interview Method, 2014 (http://www.simplypsychology.org/interviews.html):

[6] Տես *А. Г. Караяни, И. В. Сыромятников.* Прикладная военная психология. М., 2006, сс. 457–458:

Գծապատկեր 1

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈԼԵԿՏԻՎՈՒՄ ԴԻՏՄԱՆ ՄԵԹՈԴԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՎԱԾՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

անձնային հատկանիշների ձևավորման սոցիալ-հոգեբանական պայմանների, նյարդահոգեկան անկայունության և որոշ վարքային դրսևորումների վրա, որոնք կարող են մեծացնել զինվորական կարգապահության խախտման հավանականությունը, մասնավորապես՝

– անառողջ ընտանեկան մթնոլորտ,

– դաստիարակչական ներգործությունների նկատմամբ բացասական դիրքորոշում,

– անպատժելիության զգացում,

– ուշադրության կենտրոնացման դժվարություն,

– սևեռուն մտքեր և մտավախություններ,
– սուղ և քրեաբնույթ բառապաշար,
– հակվածություն սանձարձակ վարքի,
– ջղաձգություններ ու մկանային կծկումներ, ոչ ճկուն շարժումներ և այլն:

Վերը թվարկված երևույթները պարունակում են ակնհայտ գժտածին և քրեածին տարրեր:

Կարգապահության ապահովման խնդիրները մեծապես պայմանավորված են նաև այն փոփոխություններով, որոնք տեղի են ունենում զինծառայողների սոցիալական դիրքորոշումներում: Այդ փոփոխությունների ուղղվածությունը (բացասական կամ դրական) հնարավոր է պարզել, եթե ուշադրություն դարձվի հանգստի և տարբեր առաջադրանքների կատարման ժամանակ զինծառայողների գնահատումային դատողություններին, կարծիքներին, արտահայտություններին, տրամադրություններին, հարաբերություններին ու հուզական վիճակներին: Եթե հրամանատարը ցանկանում է կանխել զինծառայողների կարգազանցությունը, ապա պետք է կարողանա փոփոխության ենթարկել նրանց արժեքային համակարգը: Անձնավորության արժեքային համակարգի ձևավորման համար մեծ նշանակություն ունի սոցիալական դիրքորոշումը, որը գիտակցության բովանդակային մասն է, այսինքն՝ արժեքային համակարգի փոփոխման համար առաջին հերթին պետք է փոխել սոցիալական դիրքորոշումը: Նախ՝ անհրաժեշտ է ստեղծել այնպիսի մթնոլորտ, որ կանխվի բացասական դիրքորոշման դրսևորման հնարավորությունը: Հետագայում վստահություն ձեռք բերել զինվորների շրջանում և հասնել այն բանին, որ զինվորն ինքը ցանկանա փոփոխության ենթարկել արդեն ոչ համապատասխան դարձած արժեքային կողմնորոշումները:

Զորամասերում (ստորաբաժանումներում) գժտությունների վաղ կանխման համար նպատակահարմար է կիրառել նաև Անցուպովի առաջարկած, այսպես կոչված, *մոդուլային մեթոդիկան*[7]: Այն ունի հարցման մոդուլային կառուցվածք, որը ներառում է երկու հիմքային ու մի քանի լրացուցիչ չափողական սանդղակներ: Հիմքային մոդուլները հնարավորություն են տալիս գնահատելու դրանց նկատմամբ յուրաքանչյուր զինծառայողի ունեցած վերաբերմունքը: Առաջին երկու հարցին տրված պատասխանների առաղրումը հնարավորություն է տալիս բացահայտելու ոչ միայն խմբում առկա ռեալ գժտային երկյակային փոխհարաբերությունները, այլև այն փոխհարաբերությունները, որոնք գժտածին են: Բացի այդ, դրանք հնարավորություն են տալիս քանակապես գնահատելու գժտության այնպիսի կարևոր հատկանիշը, ինչպիսին է ինտենսիվությունը (սրությունը):

Լրացուցիչ մոդուլները հնարավորություն են տալիս գնահատելու խմբի յուրաքանչյուր զինծառայողի ծառայության որակը, նրա բարոյական հատկությունները, մասնագիտական պատրաստականության մակարդակը, մյուս զինծառայողներին ցուցաբերվող օգնության աստիճանը, անձնական և խմբային շահերին ու նպատակներին հասնելու համար գործադրած ջանքերը և այլ առանձնահատկություններ:

[7] Այս մասին ավելի հանգամանորեն տես *Ա. Յա. Անցուպով, Ա. Ի. Շիպիլով,* Նշ. աշխ.:

Զինծառայողների շրջանում գժտությունների, քրեածին վարքի կանխման գործում առանձնահատուկ դեր է վերապահված հրամանատարական կազմին: ՈՒստի դաստիարակչական աշխատանքների կազմակերպման համար սպաները մասնագիտական գիտելիքների հետ մեկտեղ պետք է ունենան նաև հոգեբանի ու մանկավարժի որոշակի հմտություններ, որոնք նպաստեն զինվորական կոլեկտիվներում բարոյահոգեբանական մթնոլորտի ձևավորմանն ու կանոնադրական հարաբերությունների պահպանմանը:

ՈՒսումնասիրությունները ցույց են տալիս, որ ենթակաների հետ հրամանատարների աշխատանքը կարող է արդյունավետ լինել միայն այն դեպքում, եթե նրանք զինվորների շրջանում հեղինակություն են վայելում: Ղեկավարին հեղինակությունը չի տրվում պաշտոնի հետ, այլ ձեռք է բերվում մասնագիտական գործունեության ընթացքում դրսևորած մշտական հոգատարության շնորհիվ: Հեղինակությունը կախված է նաև ենթակաների հետ փոխհարաբերությունները կառուցելու ունակությունից: Դրան նպաստում է հրամանատարի՝ ենթակաների բնավորության և հակումների լավ իմացությունը:

Զորամասերում (ստորաբաժանումներում) կարգապահական խախտումների կանխման համար անհրաժեշտ է.

1. զորամասերում (ստորաբաժանումներում) պարբերաբար անցկացնել բարոյահոգեբանական վիճակի ախտորոշման աշխատանքներ՝ զինծառայողների այն վարքային դրսևորումների, բնութագրերի ու առանձնահատկությունների առանձնացմամբ, որոնք գժտածին և քրեածին հակումների ձևավորման տեսանկյունից ռիսկային են,

2. զինկոմիսարիատներում բժշկական հետազոտությունների հետ մեկտեղ անցկացնել նախնական սոցիալ-հոգեբանական հետազոտություններ՝ պարզելով զորակոչիկների անձնային առանձնահատկությունները, հանրակրթական ու մասնագիտական պատրաստականության մակարդակը, ոստիկանության հետ առնչության դեպքերը (զանցանքներ, թմրանյութերի, ալկոհոլային խմիչքների օգտագործման փաստեր), և այլն:

Զորակոչիկների վերաբերյալ հետազոտությունների արդյունքները անհրաժեշտ է գրանցել նրանց անձնական գործերում, ինչը լուրջ օգնություն կլինի զորամասի հրամանատարական կազմի համար՝ նորակոչիկների հարմարման դժվարությունների հաղթահարման աշխատանքների կազմակերպման առումով,

3. քանի որ կարգապահական խախտումներն զգալի չափով պայմանավորված են բանակի մասին զորակոչիկների ոչ ճիշտ պատկերացումներով, ուստի տեղեկատվության բոլոր միջոցներով անհրաժեշտ է զորակոչիկներին տրամադրել տեղեկություններ ծառայության՝ կարգապահական կանոնադրության դրույթների, բանակում մարտական պատրաստման բովանդակության, ծառայության հետ կապված ռիսկի ու վտանգների, արձակուրդի տրամադրման կարգի մասին,

4. զինծառայողների շրջանում կարգապահական խախտումները նաև զինվորական կոլեկտիվներում սպայական կազմի ոչ պրոֆեսիոնալ հոգեբանամանկավարժական վերահսկողության հետևանք են: ՈՒստի դաստիարակչական աշխատանքների կազմակերպման համար սպաները մասնագիտական գիտելիքնե-

րի հետ մեկտեղ պետք է ունենան նաև հոգեբանին և մանկավարժին անհրաժեշտ հմտություններ: Նպատակահարմար է, որ ռազմակրթական հաստատություններում կուրսանտները պետական որակավորման քննություն հանձնեն նաև հոգեբանություն և մանկավարժություն առարկաներից:

5. Այսօր համացանցը հնարավորություն է տալիս կազմակերպելու դասընթացներ նաև հեռավորության վրա: Կարծում ենք՝ կարելի է օգտագործել այդ հնարավորությունը և հրամանատարական կազմի համար նախօրոք հաստատված ծրագրով՝ առանց զինվորական ծառայությունից կտրելու, կազմակերպել հոգեբանության և մանկավարժության դասընթացներ:

К ВОПРОСУ ПСИХОЛОГИЧЕСКОЙ ДИАГНОСТИКИ И ПРЕДОТВРАЩЕНИЯ ДИСЦИПЛИНАРНЫХ НАРУШЕНИЙ СРЕДИ ВОЕННОСЛУЖАЩИХ СРОЧНОЙ СЛУЖБЫ

З. Д. АСАТРЯН, подполковник, кандидат психологических наук, доцент, начальник Отдела военно-научного редактирования военно-научного журнала «Айкакан банак» ИНСИ МО РА

РЕЗЮМЕ

При проведении психологических исследований в ВС должны учитываться степень сложности стоящих перед военнослужащими боевых задач, социально-психологические особенности военной службы и личного состава подразделения, тем самым обеспечивая применение единой системы диагностики дисциплинарных нарушений. В статье рассматриваются некоторые методологические особенности психологического анализа документов, собеседования, методы наблюдения и применения модульной методики Анцупова. Отмечается, что психологические исследования в ВС должны осуществляться в сотрудничестве с командным составом. Подчеркивается важность профессионализма офицеров и владения ими психолого-педагогическими навыками для предотвращения дисциплинарных нарушений.

Выдвинут ряд предложений по предотвращению дисциплинарных нарушений, в частности, предлагается периодически проводить диагностику морально-психологического состояния войск, организовывать для офицерского состава онлайн-курсы дистанционного обучения по психологии и педагогике, призывников заблаговременно психологически подготавливать к армейской службе, знакомя их с особенностями военной службы и т. д.

TO THE ISSUE OF PSYCHOLOGICAL DIAGNOSIS AND PREVENTION OF DISCIPLINARY OFFENSES AMONG THE CONSCRIPTS

Z. D. ASATRYAN, Lieutenant Colonel, PhD in Psychology, Associate Professor, Head of the Defense-Academic Editing Department, «Haikakan Banak» Defense-Academic Journal, INSS, MOD, RA

SUMMARY

While conducting psychological studies in the Armed Forces a researcher should bear in mind the level of difficulty of the military tasks that servicemen might face, the socio-psychological peculiarities of the military service and unit personnel, thus ensuring the application of an integrated diagnosis system for disciplinary offenses. The article considers some methodological peculiarities of the psychological analysis of documents, conversations, observation methods and application of Antsupov's modular methodology. It is noted that psychological studies in the Armed Forces ought to be carried out in cooperation with the commanding officers. The importance of the officers' professional competence and psycho-pedagogical skills for preventing disciplinary offenses is highlighted.

A set of suggestions to prevent disciplinary offenses has been put forward, namely, it is suggested to regularly make a diagnosis of moral and psychological state of the forces, organize online distant learning courses on psychology and pedagogy for the officers' personnel, psychologically prepare the conscripts for the service in advance by introducing them to the peculiarities of the service, etc.

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐԸ ՓՈՂՈՑԱՅԻՆ ԱՐԱՏԱՎՈՐ ԲԱՐՔԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐՈՒՄ

Մ. Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ, «Զինվոր» հասարակական կազմակերպությունների համակարգող խորհրդի նախագահ

ՀՀ Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը 2014 թվականի տարեմուտի «Բանակը մեր տունն է, մեր ամրոցը: Մեր ամրոցում՝ մեր օրենքներով, կամ միասնական պայքար փողոցային արատավոր բարքերի դեմ» իր ուղերձում նշում է նաև բանակին առնչվող հասարակական կազմակերպությունների գործունեության առաջնահերթությունները:

Զինված ուժերում միջանձնային հարաբերությունների կանոնակարգումը և կանոնադրական դաշտ տեղափոխումը եղել է և կմնա պաշտպանական գերատեսչության ղեկավարության և սպայական անձնակազմի կարևոր, ու միևնույն ժամանակ, դժվարին խնդիրներից մեկը:

Այդ գործում առանձնակի դեր ունեն հասարակական կազմակերպությունները: Նախ. դրանք կարող են և պետք է նպաստեն երիտասարդների ռազմահայրենասիրական, բարոյական դաստիարակությանը: Օրինակ՝ «Զինվոր» հասարակական կազմակերպությունների համակարգող խորհուրդն այս տարվա աշխատանքային ծրագրում առանձնահատուկ տեղ է հատկացրել դպրոցներում, բուհերում և այլ կրթօջախներում կազմակերպվող միջոցառումներին: Եթե նախկինում այդ միջոցառումները հիմնականում ուղղված էին երիտասարդների ռազմահայրենասիրական դաստիարակությանը, ապա այս տարի շեշտը դրվել է ընդհանուր բարոյական դաստիարակության վրա: Ընդ որում, միջոցառումներում ընդգրկվում են նաև աշակերտների ծնողները: Հասարակական կազմակերպության անդամները և հրավիրյալ անձինք՝ մտավորականներ, հոգեբաններ, ազատամարտիկներ, զրուցում են աշակերտների և ուսանողների հետ՝ փորձելով բացատրել, թե որտեղից են բանակում ծագում միջանձնային ոչ կանոնադրական հարաբերությունները, որն է ճնշումների ու բռնությունների ակունքը, և թե ինչ կործանարար ազդեցություն կարող են ունենալ բանակի մարտունակության վրա անհանդուրժողությունը, անմիաբանությունը:

Երկրորդ. հասարակական կազմակերպությունները կարող են հանդես գալ տվյալ խնդրի լուծմանն ուղղված օգտակար նախաձեռնություններով, մշակել ծրագրեր, կազմակերպել դրանց հասարակական քննարկումներ և, ի վերջո, ներկայացնել Կառավարությանը: Մեր կարծիքով՝ դպրոցում և բուհում իրականացվող կրթադաստիարակչական ծրագրերում պետք է առաջին պլան մղվի հայեցի դաստիարակության խնդիրը: Հայ մարդու բարոյական վարքականոնը պետք է ամբողջանա, հիմնվի մեր ազգային հոգեկերտվածքի առանձնահատկությունների վրա: Հարկ է պատասխանել մեկ հարցի. ո՞վ է եղել հայն իր բազմադարյա կեն-

սագրության ընթացքում, և ո՞վ է նա լինելու 21-րդ դարում: Այսինքն՝ մենք պետք է դպրոցից երեխայի մեջ սերմանենք այն առաքինությունները, որոնք մեր պետության քաղաքացուն անհրաժեշտ են ներքին և արտաքին մարտահրավերներին դիմակայելիս: Կարծում ենք, որ այսօր հայ ժողովուրդը խնդիր ունի վերադառնալու իր ավանդական արժեքներին: Բանակում արատավոր երևույթների դեմ պայքարի տեսանկյունից կարևոր են հատկապես գերդաստանի անդամի, գերդաստանը շարունակողի գիտակցություն ունենալն ու հարգանքը մեծի նկատմամբ:

Գերդաստանը շարունակողի գիտակցություն ունենալն անհատի մեջ ինքնաբերաբար ձևավորում է «մենքի» գաղափարը: Մենք՝ մեր տոհմը, մեր տունը, մեր շենքը, մեր բակը, մեր թաղը, մեր գյուղը, մեր քաղաքը, մեր երկիրը, իսկ բանակում արդեն՝ մեր ջոկը, մեր դասակը, մեր վաշտը… Եվ այդ փոքր ու մեծ «մենքերը» դառնում են միասնության, յուրայինին սիրելու գաղափարի և զգացմունքի հիմք: Եթե «մենքի» գաղափարը մարդու մեջ թույլ է, այնտեղ գերիշխում է «եսի» գաղափարը, որը բանակում դրսևորվում է կողքինին օտարի նման վերաբերվելու, ինքնապաշտպանության սուր ձգտման, անհանդուրժողականության, հակակրանքի, նույնիսկ դաժանության ձևով: «Մենքի» գիտակցությամբ շատ բան կարելի է ներել:

Մեր մյուս ավանդական արժեքը՝ մեծի, նրա վաստակի նկատմամբ հարգանքը, նրա կարծիքը կարևորելու և հաշվի առնելու ունակությունը, երեխայի հոգում պետք է արմատավորվի փոքր տարիքից: Երբ դա չի լինում, բանակում որոշակի խնդիրներ են առաջանում հատկապես սպա–զինվոր հարաբերություններում: Չէ՞ որ հրամանատար նշանակում է ավագ, մեծ, մեկը, որ զինվորից բարձր է իր գործառույթների, պատասխանատվության ընդգրկմամբ, նրանից հասուն է, խելացի, նրանից ավելի լավ գիտի, թե ինչ է անհրաժեշտ տվյալ իրավիճակում՝ զինվորին պաշտպանելու համար: Այսինքն՝ դեռ մինչև զորակոչվելը պատանու մեջ պետք է սերմանել սպայի՝ որպես ավագ ընկերոջ գաղափարը: «Զինվոր» հասարակական խորհրդի կազմակերպած հանդիպումների ժամանակ մենք փորձում ենք այս մոտեցումը հասցնել և՛ դպրոցականներին, և՛ ուսանողներին, և՛ զինվորներին: Առաջարկում ենք, որ և՛ դպրոցում, և՛ բուհում, և՛ ռազմական կրթօջախներում դասավանդվի «Հայության ազգագրություն» առարկա, ինչը հնարավորություն կտա ճանաչելու իր ազգի բարոյական ավանդույթները, հոգեկերտվածքը, դարերով ձևավորված բարոյական արժեհամակարգը:

Առաջարկում ենք նաև մշակել զինվոր դաստիարակելու պետական ծրագիր: Մենք փոքր ազգ ենք, և յուրաքանչյուր հայ տղամարդ (ինչու ոչ՝ նաև կին) պետք է դաստիարակվի որպես ապագա զինվոր: Այս ծրագրի տարրերից մեկը, Իսրայելի օրինակով, պետության աջակցությունը վայելող երիտասարդական շարժումների ստեղծումն է: 2005 թ. տվյալներով՝ իսրայելական երիտասարդական շարժումների անդամների թիվը 250 հազարից ավելի էր, իսկ հրահանգիչների թիվը՝ մի քանի հազար: Դպրոցում սովորած իսրայելցիների կեսը անդամակցում է որևէ երիտասարդական շարժման: Երկրում գործում է երիտասարդական կազմակերպությունների մոտ 1000 բաժանմունք: Երիտասարդական կազմակերպությունները 10-18 տարեկան իսրայելցի պատանիների դաստիարակության համակարգի ան-

քակտելի մասն են: Դրանց խնդիրը երիտասարդների ժամանցի, մշակութային միջոցառումների, կամավոր հասարակական գործունեության կազմակերպումն է: Երիտասարդական շարժումներին մասնակցությունը նպաստում է դեռահասների մտավոր-հոգեկան հասունացմանը, վեհ բարոյական ու սոցիալական արժեքների ձևավորմանը, հայրենիքի նկատմամբ սիրո արմատավորմանը, համակեցության հմտությունների, իրականության նկատմամբ քննադատական վերաբերմունքի, աշխատելու սովորության յուրացմանը: Բոլոր տարիքային խմբերի համար նախատեսվում են էքսկուրսիաներ, ամառային ճամբարներ, սկաուտական խաղեր: Դեռահասը տարբեր հանձնարարություններ կատարելու և փոխօգնության փորձ է ստանում, ինչի շնորհիվ նա ձեռք է բերում պատասխանատվության զգացում և կազմակերպչական ունակություններ: Ավագ տարիքային խմբերում անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել ընդհանուր և հրատապ թեմաներով բանավեճերին, ինչը նպաստում է իրականության նկատմամբ գիտակցական վերաբերմունքի ձևավորմանը:

Երիտասարդական շարժումներին անդամակցում են կամավորության հիմունքներով. դեռահասն ինքն է որոշում, թե որ կազմակերպությանն անդամակցի: Կրթության և մշակույթի նախարարությունը Իսրայելի համարյա բոլոր երիտասարդական շարժումները միավորող Երիտասարդական շարժումների խորհրդի միջոցով համակարգում է դրանց աշխատանքը: Խորհուրդը նախարարությանն առաջարկում է այս կամ այն շարժմանը հասարակական կամ ֆինանսական օգնություն ցուցաբերելու կոնկրետ ձևը: Իր հերթին, նախարարությունը պետական դպրոցներում արտոնում է այն կազմակերպությունների գործունեությունը, որոնք բավարարում են երկու գլխավոր պահանջի. երիտասարդության դաստիարակություն սիոնիզմի ոգով և այս կամ այն կուսակցության քաղաքական ձեռնարկումներում տարրական դասարանների աշակերտների ընդգրկման բացառում[1]:

Կարծում ենք, որ Հայաստանի Հանրապետությունում նույնպես անհրաժեշտ է ստեղծել պետության հովանավորությունը վայելող երիտասարդական շարժումներ, որոնց նպատակը լինի հայրենիքի զինվոր դաստիարակելը:

Երրորդ. հասարակական կազմակերպությունները կարող են հանդես գալ որպես հասարակական կարծիքը բյուրեղացնող և ուղղորդող ուժ: Այսպես. մեր հասարակության մեջ հայ սպայի վեհ կերպարը կերտելու և նրա գործն արժեքավորելու կարիք կա: Այդ գործում մեծ դեր ունեն և՛ հասարակական կազմակերպությունները, և՛ կրթօջախները, և՛ մտավորականներն ու արվեստագետները: Խորհրդային տարիներին արվեստի մատուցած կերպարներն այնքան շատ էին ու այնքան գերակա, որ աճող սերունդն ակամա ապրում էր արվեստի ձևավորած իդեալներով և բարոյական չափանիշներով: Ցավոք, անկախ Հայաստանի Հանրապետությունում դեռ չի ստեղծվել հայրենիքի պաշտպանի հավաքական կերպար ո՛չ գրականության մեջ, ո՛չ թատրոնում, ո՛չ կինոյում:

[1] Տես «Государство Израиль: молодежные движения». «Краткая еврейская энциклопедия», т. 3 (http://www.eleven.co.il/article/11745):

Պաշտպանության նախարարը գրում է. «յուրաքանչյուր պետության, ժողովրդի փառքը կերտողը բանակն է»[2]: Սակայն հարկ է ճշգրտել պետության և ժողովրդի փառքը կերտողի կերպարը: Ո՞վ պիտի ներշնչի սպային այդ փառքը, ո՞վ նրան ստիպի զգալ իր գործի վեհությունը, պատասխանատվությունը և հենց դրանով էլ ուղղորդի նրա վարքը: Եթե մարդը հասկանում է, որ իր մասնագիտությունը հերոսական է, հերոսի պես է պահում իրեն: Ո՞վ պետք է բացատրի զինվորին, որ նա հայրենիքի ամենակարևոր մարդն է, երբ հագնում է զինվորական համազգեստը, ու հենց դրանով հուշի այն մեծ պատասխանատվությունը, որ դրված է զինվորի ուսերին:

Մենք զորամասեր շրջայցերի ենք գնում մշակույթի գործիչների և մտավորականների ուղեկցությամբ, որոնք զրուցում են զինվորների ու սպաների հետ: Բայց սա խնդրի հիմնավոր լուծում չէ, կարծում ենք, որ պետությունը պետք է դառնա ռազմահայրենասիրական արվեստի պատվիրատու: Պետք է մշակվի մշակութային քաղաքականության նոր ծրագիր:

Խորհրդային պետության գաղափարախոսության ամենամեծ քարոզիչը արվեստն էր: Պետության բարոյական արժեհամակարգը դրված էր արվեստի հիմքում և ուղղորդում էր հասարակության միտքն ու բարոյականությունը: Այսօր հայ հասարակությանը ևս պետք է նաև արվեստի միջոցով համոզել, որ բարոյական ամենավեհ որակները հատուկ են իր սպային ու զինվորին:

Չորրորդ. հասարակական կազմակերպությունները կարող են միավորել իրենց ջանքերը աղանդավորության դեմ պայքարում: Դա ոչ միայն եկեղեցու, այլև պետության ու հասարակության գործն է: Մենք մեծապես կարևորում ենք քրիստոնեական դաստիարակությունը և՛ կրթօջախներում, և՛ բանակում: Աղանդավորական շարժումը այսօր մեծ վտանգ է ներկայացնում մեր երկրի համար: Աղանդավորների աճող թվաքանակը խոսում է այն մասին, որ մենք լուրջ բացթողումներ ունենք հոգևոր դաստիարակության ասպարեզում: Քրիստոնեությունը առաջին հերթին բարոյական արժեհամակարգ է, և դպրոցներում այդ արժեհամակարգը պետք է ներդրվի արդեն տարրական դասարաններից: Քրիստոնեական արժեհամակարգը կարող է հաջողությամբ դուրս մղել այնպիսի բարոյական «խեղումներ», ինչպիսիք են բռնությունը, դաժանությունը, անտարբերությունը, փոքրոգությունը, ստորաքարշությունը, կեղծիքը:

Մեր հասարակական կազմակերպությունը փորձում է զորամասերում նախաձեռնել զինծառայող–հոգևոր սպասավոր կապը ամրապնդող միջոցառումներ, օրինակ՝ մկրտության արարողություններ, բայց առիթից առիթ կազմակերպված միջոցառումների արդյունավետությունը չի կարող համեմատվել հոգևորականի ամենօրյա ներկայության հետ: Պետք է արվի հնարավոր ամեն ինչ, որ հոգևոր սպասավորը զորքերում իր սրտացավ աշխատանքով նպաստի բարոյահոգեբանական մթնոլորտի առողջացմանը, զինվոր-սպա փոխադարձ վստահության ու հարգանքի վրա հիմնված հարաբերությունների հաստատմանը: Հասարակական

[2] «ՀՀ Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի 2014 թվականի տարեմուտի ուղերձը», էջ 26:

կազմակերպությունները կարող են նաև սոցիալական և կազմակերպական աջակցություն ցուցաբերել զորամասերի հոգևոր սպասավորներին:

Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը իր ուղերձում խոսում է զինվորների շրջանում առկա մի արատավոր երևույթի՝ հայհոյանքով երդվելու մասին ու բացատրում, որ երդվելը արդեն վիրավորական է, առավել ևս՝ հայհոյանքով երդվելը, որովհետև մարդ պետք է այնքան վստահելի լինի, խոսքը պետք է այնքան արժեք ունենա, որ երդման կարիք չլինի: Ինչպես Աստվածաշունչն է ասում՝ «Ձեր խոսքը թող լինի այո-ն՝ այո, ոչ-ը՝ ոչ: Սրանից ավելին չարից է» (Մատթեոս 5:37): Աստվածաշնչում չերդվելու հստակ հորդոր կա: Ո՞վ, եթե ոչ քահանան, պիտի բացատրի դա զինվորներին: Ի՞նչ է նշանակում՝ սրանից ավելին չարից է: Խոսքը երդվելու վտանգավոր՝ չար հետևանքների մասին է: Սա ընդամենը մեկ օրինակ է: Մինչդեռ Նոր կտակարանը պարունակում է մարդու վարքի ամբողջ բարոյական հենքը, ինչը պետք է հասու դարձնել զինծառայողներին:

Հինգերորդ. հասարակական կազմակերպությունները կարող են դառնալ հոգեբանական օգնության կազմակերպիչներ ինչպես դպրոցներում, այնպես էլ բանակում: Բանակում հոգեբանների հաստատությունը, մեր կարծիքով, դեռ չի կայացել: Զորքերում հոգեբանի առկայությունը չպետք է կրի ձևական բնույթ, հոգեբանը շատ կարևոր դեր ունի միջանձնային հարաբերությունները կարգավորելու գործում: Բանակը պետք է համալրվի մասնագիտական կրթություն ստացած հոգեբաններով, վատ մասնագետը օգնելու փոխարեն նույնիսկ կարող է վնասել իր անհարկի ու սխալ միջամտությամբ: Համոզված ենք, որ կան բազմաթիվ մասնագետներ, որոնք պատրաստ են հասարակական հիմունքներով իրենց գիտելիքն ու փորձը ծառայեցնելու երիտասարդ սերնդի ու բանակի դաստիարակության գործին:

Այս թվարկումը կարելի է շարունակել ու գտնել գործունեության նորանոր ասպարեզներ, որտեղ կարող ենք նպաստել տվյալ խնդրի լուծմանը: Գլխավորը համոզմունքն է, որ փողոցային արատավոր երևույթները հասարակությունից ու բանակից արմատախիլ անելու գործում մեծ առաքելություն ունեն հասարակական կազմակերպությունները:

Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձին նվիրված զորահանդեսի ժամանակ ՀՀ Գերագույն գլխավոր հրամանատար Սերժ Սարգսյանը նշեց. «Ամենաթանկը, որ ունենք, Անկախության սերունդն է»[3]: Անկախության սերունդը վաղվա Հայաստան կառուցողն է: Ինչպես կդաստիարակենք այդ սերնդին այսօր, այդպիսի Հայաստան էլ կունենանք ապագայում: ՈՒստի անհրաժեշտ է, ընտանիքներից, նախակրթարանից սկսած մինչև բուհ ու բանակ հետևողականորեն ամրագրել մեր ազգային արժեքների ու գաղափարների համակարգը:

[3] Տես նույն տեղում, էջ 27:

РОЛЬ ОБЩЕСТВЕННЫХ ОРГАНИЗАЦИЙ В БОРЬБЕ ПРОТИВ УЛИЧНЫХ ПОРОЧНЫХ НРАВОВ

М. А. ХАЧАТРЯН, Председатель Координационного совета общественных организаций «Зинвор»

РЕЗЮМЕ

Особая роль в оздоровлении межличностных отношений в ВС принадлежит неправительственным организациям (НПО). В статье рассматриваются некоторые направления их соответствующей деятельности. В частности, НПО могут: способствовать военно-патриотическому, морально-этическому воспитанию молодежи; выступать с инициативами по разработке и организации публичных обсуждений программы, нацеленной на решение данной проблемы, с представлением окончательного варианта Правительству; с привлечением средств литературы и искусства выступать в качестве кристаллизующей и направляющей силы для формирования в общественном мнении образа армянского воина как высоконравственного патриота своей нации и государства; объединять усилия здоровой части общества в борьбе против деструктивного религиозного сектантства; способствовать оказанию молодому поколению морально-психологической помощи как в учебных заведениях, так и в армии, мобилизуя специалистов, готовых на общественных началах вносить свой вклад в решение проблемы.

THE ROLE OF NGOs IN THE STRUGGLE AGAINST STREET VICIOUS HABITS

M. A. KHACHATRYAN, Chairman, «Zinvor» Coordination Council of Public Organizations

SUMMARY

NGO's have a special role in improving the interpersonal relations in the Armed Forces. The article considers several aspects of their relevant activity. Namely, the NGOs can contribute to the military patriotic and moral ethical education of the youth; initiate the elaboration and organization of public debates on programs targeted at the solution of the given problem presenting the final version to the Government; engaging literature and art pieces be as a crystallizing and guiding force in the formation of the public opinion and image of the Armenian soldier as a high-moral patriot of his nation and the state; combine the efforts by the healthy part of the society in the fight against destructive religious sectarianism; promote the moral and psychological support given to the younger generation both in educational institutions and the Army, mobilizing experts ready in a voluntary capacity to contribute to the solution of the problem.

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՀՀ ՊՆ ԻՐԱՎԱՍՈՒ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

Ե. Ռ. ԱՍԱՏՐՅԱՆ, ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ին կից Քրեաբանության կիրառական հիմնախնդիրների գիտահետազոտական կենտրոնի պետ, Է. Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ, ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի Ռեսումնակրթական բաժնի պետ

Պետության պաշտպանունակությունը մեծապես պայմանավորված է նրա զինված ուժերի մարտունակությամբ, որն ապահովվում է ոչ միայն դրանց թվաքանակով, զինվածությամբ և պատրաստականությամբ, այլև կարգապահությամբ: Զինվորական կարգապահության մակարդակի նվազումը, զինված ուժերում մարդու իրավունքների ու ազատությունների ոտնահարումը հղի են ծանր հետևանքներով: Սակայն զինված ուժերում ամենավտանգավոր երևույթը հանցավորությունն է: Այն ոչ միայն ֆիզիկական և նյութական վնաս է պատճառում, այլև կարող է նպաստել զինված ուժերում բարոյահոգեբանական մթնոլորտի ապականմանը, բարոյազրկել զինծառայողներին և վերջին հաշվով բացասական ազդեցություն ունենալ զինված ուժերի մարտունակության վրա: Ռեստի զինված ուժերում խիստ հրատապ խնդիրներ են հանցավորությանը նպաստող գործոնների պարզումը և դրանց չեզոքացմանը կամ ազդեցության թուլացմանը, ինչպես նաև արդեն կատարված հանցագործությունների արագ և արդյունավետ բացահայտմանն ուղղված միջոցառումների մշակումը և իրականացումը[1]:

Հանցավորության կանխումը ներառում է պետության, հասարակության, դրանց հաստատությունների գործունեությունը՝ նպատակաուղղված տնտեսական ու սոցիալական կյանքում, բարոյահոգեբանական ոլորտում եղած հակասությունների լուծմանը: Զինված ուժերում դա բանակի կենսագործունեության պայմանների բարելավման, զինծառայողների հետ տարվող գաղափարախոսա-

[1] Տես *Ա. Գաբուզյան, Ս. Մխիթարյան, Ա. Թերզյան,* Հայաստանի Հանրապետության զինված ուժերում հանցավորությանը նպաստող գործոնները և հանցավորության կանխմանն ուղղված միջոցառումները: Քրեաբանական հետազոտություն: Ե., 2011, էջ 3:

կան և դաստիարակչական աշխատանքների արդյունավետության ապահովման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումներն են:

Հանցագործությունների նախազգուշացմանն ու կանխարգելմանն ուղղված միջոցառումները իրականացվում են մինչև հանցագործությունների կատարումը՝ հանցագործությունը նախապատրաստելու և փորձ կատարելու փուլերում, հանցանքի կատարման ընթացքում՝ մինչև ավարտին հասցնելը, ինչպես նաև մեղավոր անձանց քրեական պատասխանատվության ենթարկելուց հետո՝ հանցանքի կրկնումը կանխելու նպատակով: Կանխիչ միջոցառումները, օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացնում են բանակի հրամանատարությունը, զինվորական դատախազությունը, դատարանները, իրավապահ մարմինները, առանձին զինծառայողներ ու քաղաքացիներ[2]: Հանցավորության դեմ պայքարի քաղաքականության մասին խոսելիս պետք է կարևորել ոչ միայն հանցագործությունների նախազգուշացումն ու կանխարգելումը, այլև կատարված հանցագործությունների արագ և օբյեկտիվ բացահայտումը: Այս առումով հանցագործությունների բացահայտման գործում անգնահատելի է դատական փորձաքննության դերը:

ՀՀ Քրեական դատավարության օրենսգիրքը հստակ կերպով սահմանում է, որ, եթե քրեական գործով նշանակություն ունեցող հանգամանքները պարզելու համար անհրաժեշտ են գիտության, տեխնիկայի, արվեստի կամ արհեստի բնագավառների հատուկ գիտելիքներ, ապա պետք է նշանակել և կատարել փորձաքննություն: Այդ տեսակետից դատական փորձաքննությունը տարաբնույթ հանցագործությունների բացահայտման կարևոր և անհրաժեշտ նախադրյալներից մեկն է:

Փորձը ցույց է տալիս, որ փորձաքննություն նշանակելիս ոչ միայն երիտասարդ մասնագետները, այլև լավ տեսական պատրաստականություն ունեցող աշխատողները կարիք ունեն ձեռք բերելու մեծ գործնական հմտություններ: Քիչ չեն դեպքերը, երբ քննիչները, հետաքննություն վարող մարմնի աշխատողները փորձաքննություն նշանակելու մասին որոշումներում չեն նշում դրա հիմքերը, հարցերը ձևակերպում են ոչ հստակ կամ ոչ լրիվ կերպով, իսկ փորձաքննության խնդրի իրավական ձևակերպումը թողնում են փորձագետին:

Փորձաքննության կատարման համար նյութեր նախապատրաստելիս՝ այդ նպատակով նմուշներ ստանալու, հանցագործության հետքերն ամրագրելու, փորձաքննություն նշանակելու ընթացքում, քրեական վարույթն իրականացնող մարմինը հաճախ թույլ է տալիս բազմաթիվ և անընդհատ կրկնվող սխալներ: Այսպես. հաճախ դեպքի վայրում մատնահետքեր կամ այլ հետքեր են թողնում քննիչը, հետաքննություն վարող մարմնի աշխատողը կամ դեպքի վայրում գտնվող այլ անձինք, սպանության դեպքերում չեն առգրավվում տուժողի հագուստները, դիակը տեղափոխելիս միջոցներ չեն ձեռնարկվում հագուստի վրա մանրաթելերը

[2] Տես *А. В. Савкин*. Значение предупредительно-профилактических мер в борьбе с преступлениями против порядка воинских уставных взаимоотношений в войсках: Профилактическая деятельность государства как одно из основных средств сдерживания преступности в Российской Федерации: материалы Международной научно-практической конференции (14–16 декабря 2005 г.). М., 2006, с. 585:

պահպանելու ուղղությամբ[3]: Որոշ դեպքերում, օրինակ՝ զորամասի տարածքում կամ մարտական դիրքերում կատարված հանցագործություններից հետո, իրավասու անձինք, մինչև քննչի կամ փորձագետ-քրեագետի կողմից դեպքի վայրի զննությունը և հանցագործության հետքերի ամրագրումը, պատշաճ միջոցներ չեն ձեռնարկում դեպքի վայրը պահպանելու, դեպքի վայր այլ անձանց մուտքն արգելելու ուղղությամբ, ինչը կարող է խոչընդոտել դեպքի վայրում իրեղեն ապացույցների ճիշտ հավաքմանը, հանգեցնել հանցագործության հետքերի աղավաղմանը: Նման սխալների պատճառով ոչ միայն նշանակվում են լրացուցիչ, կամ կրկնակի, փորձաքննություններ՝ քրեական գործի նախաքննության ժամկետների չհիմնավորված և արհեստական ձգձգմամբ, այլև ստեղծվում է կարևոր ապացույցների կորստի իրական վտանգ:

Հաշվի առնելով հանցագործությունների բացահայտման գործում նախաքննություն և հետաքննություն կատարող, ինչպես նաև ելակետային տվյալներ ձեռք բերելու պարտականություններ ունեցող մարմինների այլ աշխատողների կողմից դեպքի վայրի պահպանման, իրեղեն ապացույցների հավաքման ճիշտ կազմակերպման կարևորությունը, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ը 2005 թվականից կազմակերպում է կատարելագործման և վերապատրաստման ուսուցողական դասընթացներ, որոնց մասնակցում են փորձաքննությունների համար ելակետային տվյալներ ձեռք բերելու պարտականություններ և փորձաքննություններ նշանակելու լիազորություն ունեցող իրավասու մարմինների աշխատողներ:

Դասընթացների նպատակն է նշված կատեգորիաների աշխատողներին ապահովել փորձաքննությունների վերաբերյալ որոշակի տեսական գիտելիքներով, ներկայացնել տարբեր տեսակի փորձաքննությունների առանձնահատկությունները, դեպքի վայրի պահպանման կանոններ, հետազոտության համար նմուշներ վերցնելու կարգը և այլն:

Տվյալ դասընթացների շրջանակներում 2005 թ. սկսած ամեն տարի վերապատրաստում և ուսուցում են անցել քննիչներ և ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության իրավասու ծառայողներ:

Հիմք ընդունելով ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի 2-րդ կետը, որով զինվորական հանցագործությունների վերաբերյալ գործերով, ինչպես նաև զորամասի տարածքում կատարված կամ ժամկետային ծառայության զինծառայողներին վերագրվող արարքների վերաբերյալ գործերով հետաքննություն վարող մարմին են համարվում նաև զորամասերի, զորամիավորումների հրամանատարներն ու զինվորական հիմնարկների պետերը[4]: «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ը 2009 թվականից վերապատրաստման և ուսուցողական դասընթացներ է կազմակերպում նաև տեղակայված ՀՀ ԶՈՒ-ի

[3] Տես *Մ. Ալեքսանյան*, Փորձաքննությունը քրեական դատավարությունում, մաս 1, «Փորձաքննություն նշանակելը և կատարելը, հետազոտման համար նմուշներ ստանալը»: Ե., 2009, էջ 24:

[4] Տես «ՀՀ Քրեական դատավարության օրենսգիրք», հոդ. 56, կետ 2 (http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1450):

բարձր սպայական և հրամանատարական կազմի և իրավասու սպաների համար: Ընդսմին այս դասընթացները կազմակերպվում են ինչպես կազմակերպությունում, այնպես էլ արտագնա եղանակով: Դասընթացների յուրաքանչյուր փուլի ավարտից հետո ունկնդիրները հանձնում են բանավոր ստուգարք, ընդսմին հանձնաժողովի կազմում պարտադիր կերպով ընդգրկվում է տվյալ կազմակերպության ղեկավար կազմի ներկայացուցիչը: Ստուգարքի դրական արդյունքների դեպքում յուրաքանչյուր ունկնդիր ստանում է ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կնիքով հաստատված վկայագիր:

Հետագա դասընթացների արդյունավետությունը մեծացնելու նպատակով դրանց ավարտից հետո ունկնդիրները գրավոր ներկայացնում են կազմակերպման և անցկացման վերաբերյալ իրենց կարծիքները, որոնք ուսումնասիրվում են ուսումնակրթական բաժնի կողմից: Համաձայն այդ կարծիքների՝ ունկնդիրների գերակշռող մեծամասնությունը նշում է դասընթացների օգտակարությունը, քանի որ ստացած գիտելիքները հնարավորություն են տալիս ապահովելու նախաքննության դրական արդյունքները, առավելագույնս օգտագործելու փորձաքննության ընձեռած հնարավորությունները:

Քննիչների և ռազմական ոստիկանության իրավասու ծառայողների, ինչպես նաև զորամասերի ու զորամիավորումների հրամանատարական և սպայական կազմի հետ անցկացվող դասընթացների ուսումնական ծրագրում ընդգրկված են 80-ից ավելի թեմաներ: Նշված թեմաները, որոնցում լիարժեք կերպով արտացոլված են գիտության ժամանակակից նվաճումները, փորձաքննություններում կիրառվող արդի մեթոդներն ու մեթոդիկաները մանրակրկիտ կերպով մշակում են կազմակերպության առաջատար փորձագետներն ու ուսումնակրթական բաժնի աշխատողները, այնուհետև հաստատում է Փորձաքննությունների ազգային բյուրոյի գիտխորհուրդը:

ՀՀ ՋՈՒ-ի զորամասերի ու զորամիավորումների հրամանատարական և սպայական կազմի համար դասընթացները կազմակերպելիս հատկապես մեծ ուշադրություն է դարձվում դեպքի վայրի զննությանը: Խնդրահարույց են հատկապես այն դեպքերը, երբ զորամասերում, մարտական հենակետերում տեղի են ունենում սպանություններ կամ մահվան ելքով այլ պատահարներ, որոնց դեպքում խիստ անհրաժեշտ է ոչ միայն դեպքի վայրի զննությունը, այլև դեպքի վայրի պատշաճ պահպանումը:

ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 217 հոդվածը սահմանում է, որ հանցագործության հետքերը, այլ նյութական օբյեկտներ հայտնաբերելու, հանցագործության դեպքը, ինչպես նաև գործի համար նշանակություն ունեցող մյուս հանգամանքները պարզելու նպատակով քննիչը կատարում է տեղանքի, շինությունների, առարկաների, փաստաթղթերի, կենդանիների, մարդու կամ կենդանու դիակի զննում: Դեպքի վայրի զննությունը անհետաձգելի քննչական գործողություն է, քանի որ տեղազննության հապաղումը կարող է հանգեցնել դեպքի վայրի անվերականգնելի փոփոխությունների: Օրինակ՝ կողմնակի անձանց կողմից դեպքի վայր մուտք գործելը, դիակը տեղաշարժելը, իրեղեն ապացույցներին դիպչելը կարող են ոչ միայն հանգեցնել հետքերի և ապացույցների կորստի, այլև

երրորդ անձանց հետքերի առաջացման, ինչը հետագայում կարող է խոչընդոտներ ստեղծել գործի արագ և ճիշտ բացահայտման համար: Բացի այդ, դեպքի վայրի պահպանության և զննության ժամանակ հաճախակի առաջանում է մասնագիտական տարբեր, այդ թվում և քրեագիտության բնագավառի, գիտելիքների կիրառման անհրաժեշտություն:

Զորամասերի և զորամիավորումների հրամանատարական և սպայական կազմին դեպքի վայրի պատշաճ պահպանման ու զննության վերաբերյալ անհրաժեշտ գիտելիքներով ապահովելու համար կազմակերպվում են դասախոսություններ այնպիսի թեմաներով, ինչպիսիք են՝ «Դիակի զննում նրա հայտնաբերման վայրում: Դիակի զննման առանձնահատկությունները որոշ տեսակների մահվան դեպքում», «Իրավասու անձանց կողմից դեպքի վայրի զննության ընթացքում փաստական տվյալների ձեռքբերմանն ուղղված իրեղեն ապացույցների և հետքերի հայտնաբերման, ֆիքսման, ստուգման և փաթեթավորման փորձագիտական (մասնագիտական) մեթոդների առանձնահատկությունները», «Դեպքի վայրի զննության ժամանակ հետքերը և ապացույցները ֆիքսելու, վերցնելու, փաթեթավորելու մեթոդներ և այդ գործողությունների արձանագրումը», «Հագուստների վրա առկա հետքերի և վնասվածքների հետազոտություն», «Մատնահետքերի դերն ու նշանակությունը քրեագիտական ոլորտում: Մատնահետքերի հայտնաբերում և նույնականացում» և այլ թեմաներ, որոնք, ինչպես արդեն նշել ենք, հիմնված են գիտության արդի նվաճումների և փորձագիտական ժամանակակից մեթոդների ու մեթոդիկաների վրա:

Զինվորական ծառայության ընթացքում, հատկապես երբ գործ ունենք զենք-զինամթերքի, տարբեր ռազմական սարքերի ու սարքավորանքի, ականապատ տարածքների հետ, հնարավոր չէ խուսափել պայթյուններից, ինչպես նաև զենքի հետ անզգույշ վարվելու հետևանքով տեղի ունեցած զանազան պատահարներից: Հատկապես պայթյունների դեպքում ի հայտ են գալիս պարզման ենթակա մի շարք խնդիրներ, ինչպիսիք են՝ պայթյունի պատճառները պարզելու, պայթյունի փաստի հաստատման, դեպքի վայրում իրավիճակի, առարկաների վրա պայթյունային ազդեցության հետքերի հայտնաբերման, պայթյունի հետքերի տեղակայման և պայթյունից առաջացած ավերածությունների մասշտաբի, պայթած սարքավորանքի առանձին բեկորների, հանգույցների, դետալների և առարկաների հնարավոր պատկանելության հաստատման, պայթած սարքավորանքի կառուցվածքի, տեսակի պարզման, պայթյունատեխնիկական փորձաքննության (ՊՏՓ) առարկաների որոշակի խմբին՝ ռազմամթերքին, պայթուցիկ սարքավորումներին դրանց պատկանելության և լիցքի նյութի տեսակի ու զանգվածի որոշման, պայթեցման եղանակի ու միջոցների, գործարկման եղանակի և այլ բնութագրերի պարզման, ինչպես նաև պայթյունի նախապատրաստման և կատարման հանգամանքների, դրա իրական և հնարավոր հետևանքների (պայթյունի օջախի, տուժածների և իրավիճակի առանձին առարկաների գտնվելու հնարավոր վայրի, պայթյունի դեպքում վտանգավոր խոցման բնույթի և շառավղի, ինքնաբերական պայթյունի հնարավորության որոշում և այլն) պարզման խնդիրները:

Տվյալ խնդիրների լուծման համար անհրաժեշտ են պայթյունատեխնիկական

փորձաքննություն և հատուկ գիտելիքների ու հետազոտության հատուկ մեթոդների կիրառում: ՈՒստի պայթյունների դեպքում ևս շատ կարևոր է պայթյունի վայրի պատշաճ պահպանումը, որպեսզի փորձագետը կարողանա լուծել իր առջև դրված խնդիրները: Այս խնդիրները լուծելու համար մեր դասընթացների ծրագրում ներառված են այնպիսի թեմաներ, ինչպիսիք են՝ «Պայթյունատեխնիկական փորձաքննությունների առանձնահատկությունները» և «Պայթյունի և հրդեհի վայրերի զննության կազմակերպման և դրանց պահպանման առանձնահատկությունները» թեմաները: Բացի նշվածներից, քննիչների և ռազմական ոստիկանության իրավասու ծառայողների, ինչպես նաև զորամասերի ու զորամիավորումների հրամանատարական և սպայական կազմի համար կազմակերպվող դասընթացների ուսումնական ծրագրում ներառված են նաև «Փորձաքննություններ ազգային բյուրոյի» կատարած տարբեր տեսակների փորձաքննություններին վերաբերող այլ թեմաներ:

Բացի այդ, ծրագրում ներառված են նաև արդի քրեագիտության պրոբլեմներին նվիրված թեմաներ, մասնավորապես՝ զինվորական հանցագործություններին, դրանց պատճառներին ու պայմաններին, այդ հանցագործությունների նախազգուշացմանն ու կանխմանը վերաբերող թեմաներ: Դրանցից են՝ «Զինվորական հանցագործությունների քրեագիտական բնութագիրը և կանխումը», «Հայաստանի Հանրապետության Զինված ուժերում հանցավորությանը նպաստող գործոնները և հանցավորության կանխմանն ուղղված միջոցառումները» թեմաները, որոնք արտացոլում են քրեագիտության արդի նվաճումները և կատարված քրեագիտական հետազոտությունները: Այս թեմաների նպատակն է ունկնդիրներին ներկայացնել քրեագիտության ուսումնասիրության առարկան, զինվորական հանցագործությունների հասկացությունը, քրեագիտական բնութագիրն ու հետազոտությունների մեթոդիկան, ՀՀ-ում զինվորական հանցագործություններին նպաստող պատճառներն ու պայմանները, ինչպես նաև զինվորական հանցագործությունների կանխման պրոբլեմները:

Այսպիսով՝ կարող ենք փաստել, որ ուսումնակրթական ոլորտում ՀՀ Պաշտպանության նախարարության և ՀՀ ԳԱԱ Փորձաքննությունների ազգային բյուրոյի համագործակցությունը գտնվում է բավական բարձր մակարդակի վրա: Այդ համագործակցությունը պետք է կրի շարունակական բնույթ և ավելի կատարելագործվի: Զինված ուժերում հանցավորության կանխման խնդիրներին պետք է ուշադրություն հատկացնել ոչ միայն քրեական գործերի նախնական և դատական քննության ընթացքում դրանց պատճառներն ու նպաստող պայմանները բացահայտելիս, այլև ավելի ընդհանուր խնդիրներ լուծելիս՝ կապված հանցավորության կանխման գործում իրավապահ մարմինների գործունեության իրավական կարգավորման, տեղեկատվական ապահովման, գործողությունների պլանավորման և ծրագրման, զինծառայողների իրավական ուսուցման և դաստիարակության հետ:

Համոզված ենք, որ այս գործի ճիշտ և արդյունավետ կազմակերպումն էապես կնպաստի բանակում կարգապահության մակարդակի բարձրացմանը, արատավոր բարքերի և հանցավորության վերացմանը, ուստի և Զինված ուժերի մարտունակության մակարդակի բարձրացմանը:

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ КВАЛИФИКАЦИИ РАБОТНИКОВ ПРАВОМОЧНЫХ ОРГАНОВ МО РА, ИМЕЮЩИХ ОБЯЗАТЕЛЬСТВА ПРИОБРЕСТИ ИСХОДНЫЕ ДАННЫЕ ДЛЯ ЭКСПЕРТИЗ И ПОЛНОМОЧИЯ НАЗНАЧИТЬ ЭКСПЕРТИЗУ

Е. Р. АСАТРЯН, начальник научно-исследовательского центра прикладных проблем криминологии при ГНКО, «Национальное бюро экспертиз» НАН РА,
Э. А. МАНУКЯН, начальник учебно-образовательного отдела ГНКО «Национальное бюро экспертиз» НАН РА

РЕЗЮМЕ

Снижение уровня дисциплины, ущемление прав и свобод личности в вооружённых силах чревато тяжёлыми последствиями. Наиболее опасным явлением, угрожающим боеспособности вооружённых сил, является преступность. Она причиняет не только материальный и физический ущерб, но и может способствовать ухудшению морально-психологического климата, деморализации военнослужащих, и, в конечном счёте, снижению боеспособности. Поэтому обнаружение факторов, способствующих преступности в вооружённых силах, их нейтрализация или уменьшение их влияния, как и разработка мероприятий, направленных на своевременное и успешное раскрытие уже совершённых преступлений, являются актуальной задачей. В борьбе с преступностью важны не только профилактика и предупреждение преступлений, но и быстрое и объективное раскрытие уже совершённых преступлений. В этом плане неоценима роль судебной экспертизы.

С учетом важности работ, осуществляемых органами дознания и следствия, а также лицами, имеющими обязанности по сбору исходных данных для экспертиз, по сохранению места происшествия, правильно организованному сбору вещественных доказательств, ГНКО «Национальное бюро экспертиз» Национальной Академии наук Республики Армения с 2005 г. организует занятия по повышению квалификации и усовершенствованию для лиц, имеющих правомочия по назначению экспертиз, а также командного и офицерского состава воинских частей и отдельных подразделений. Цель этих занятий – обеспечить работников органов дознания определёнными теоретическими знаниями, касающимися проведения экспертиз, ознакомить их с особенностями различных видов экспертиз, с правилами сохранения места происшествия, порядком изъятия образцов материала для исследований.

SOME ISSUES ON QUALIFYING THE EMPLOYEES OF COMPETENT BODIES OF THE MOD, RA HAVING COMMITMENTS FOR ACQUIRING INITIAL DATA FOR EXPERTISE AND AUTHORITIES FOR SCHEDULING EXPERTISE

Ye. R. ASATRYAN, Head of the Research Center of Applied Problems in Criminology, «National Bureau of Expertises» SNPO, NAS, RA,
E. A. MANUKYAN, Head of the Educational and Training Department, «National Bureau of Expertises» SNPO, NAS, RA

SUMMARY

The decline of the level of discipline, violation of the rights and freedoms of the individual in the Armed Forces are fraught with serious consequences. Crime is the most dangerous phenomenon threatening the fighting efficiency of the armed forces. It causes not only material and physical damage, but also can contribute to the deterioration of moral and psychological atmosphere, demoralization of the servicemen, and, finally, reduction of fighting efficiency. Therefore, the identification of the factors promoting crime in the Armed Forces, their neutralization or reduction of their influence, as well as the development of activities targeted at the timely and successful detection of the crimes that have already been committed, are an urgent problem. Not only the prevention of crimes, but also rapid and objective detection of committed crimes are important in the struggle against the crime. In these terms, the role of forensic expertise is invaluable.

Given the importance of the work implemented by investigation bodies, as well as by persons responsible for gaining initial data for expertise, on keeping the scene, collecting material evidences that are correctly organized, the «National Bureau of Expertises» SNPO of the National Academy of Sciences of the Republic of Armenia has been organizing extension and refresher courses for persons with powers for scheduling an expertise, as well as for the officers and commissioned staff of military units and separate sub-units since 2005. The goal of these courses is to provide employees of investigation bodies with certain theoretical knowledge regarding the implementation of expertise, to acquaint them with the peculiarities of different types of expertise, with the rules on keeping the scene, the order of confiscating specimens of the investigation material.

ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԻՆՔՆԱԽԵՂԻՉ ՎԱՐՔԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Կ. Ե. ՎԱՐԴԱՆՅԱՆ, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, ինքնասպանագետ, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտահետազոտական կենտրոնի տնօրեն

ԶՈՒ-ում արդյունավետ մասնագիտական գործունեության ծավալման և մարդկային ներուժի լիարժեք օգտագործման համար մեծ նշանակություն ունեն զինծառայողների հոգեկան ու մարմնական առողջության ապահովումը և կազմակերպված պայքարը առողջությանը վնասող տարբեր գործոնների դեմ: Այս տեսակետից կարևոր է մշակել և իրագործել այնպիսի անառողջ երևույթի հոգեբանական կանխարգելման ծրագրեր, ինչպիսին է ինքնախեղիչ (աուտոդեստրուկտիվ), կամ ինքնագրեսիվ (աուտոագրեսիվ), վարքը, մասնավորապես՝ ինքնավնասումը: Միևնույն ժամանակ, պետք է նկատի ունենալ, որ ընդհանուր առմամբ զինվորական միջավայրն իր յուրահատկություններով հանդերձ կոչված է, այլ նպատակների հետ մեկտեղ, զինծառայողների մեջ ձևավորելու այնպիսի հոգեբանական հատկություններ, որոնք հնարավորություն տան ոչ միայն հաղթահարելու բանակային կյանքի դժվարությունները, այլև, անհրաժեշտության դեպքում, դրսևորելու ստրեսակայունություն և հանդուրժողություն, իսկ պատերազմի ժամանակ՝ հակառակորդի նկատմամբ դատողական ագրեսիվություն:

Ինքնագրեսիվ վարքը համեմատաբար քիչ ուսումնասիրված հիմնախնդիր է: Այս ոլորտում հետազոտությունները հիմնականում վերաբերում են դրա ծայրահեղ տեսակին՝ ինքնասպանությանը: Ըստ ժամանակակից հոգեբանական տեսությունների՝ ինքնագրեսիվ վարքը իր անձի վրա ագրեսիայի պրոյեկցիան է: Ընդունված է համարել, որ ագրեսիան և ինքնագրեսիան ունեն ծագման ու ձևավորման միատեսակ մեխանիզմներ: Ինքնագրեսիան դրսևորվում է այն ժամանակ, երբ ագրեսիվ միտումներն ուղղվում են ոչ թե շրջապատին, այլ իր անձին:

Մեր կարծիքով՝ ինքնագրեսիան տարբեր հոգեվիճակներում (հարաբերական հանգիստ, սահմանային, ախտաբանական), տարբեր նպատակներով (ավանդույթային, ծիսական, ինքնապատժում) իր անձի դեմ իրագործված տարբեր խորությամբ (մակերեսային, քրոնիկական, ընդհուպ մինչև մահ) ագրեսիայի այնպիսի դրսևորում է, որի բնույթն ու աստիճանը կախված են տվյալ անձնավորության դիրքորոշումներից, օրգանիզմի անհատական կենսաբանական հակազդումներից, կոնկրետ իրադրային պայմաններից, պաշտպանական մեխանիզմներից:

Բանակում ինքնագրեսիվ վարքային դրսևորումներից է դաջվածքը, որը կտրող-ծակող գործիքներով մաշկային ծածկույթի ամբողջականության գիտակցված արհեստական խախտումն է, ապա վերքի մակերեսին ներկող նյութերի անց-

կացումը՝ կայուն, չվերացող պատկերներ ստանալու նպատակով: Այս երևույթը հայտնի է շատ վաղուց: Աշխարհի շատ բանակներում դաջվածքը համարվում է այդ սոցիալական միջավայրին բնորոշ ենթամշակույթ: Ինքնագրեսիայի յուրահատուկ տեսակներից է նաև արհեստական ու շինծու հիվանդությունների կեղծագործումը (սիմուլյացիա), երբ, օրինակ, մաշկի մի հատվածը ներկվում է՝ «հիվանդագին կապտության» առաջացմամբ, կամ ընկնավորության նոպայի ձևացումը:

Կանխամտածված ինքնավնասումը, կամ ինքնախեղումը, տարբեր միջոցներով ու եղանակներով ինքնուրույնաբար կամ այլ անձանց օգնությամբ իր առողջությանը վնաս հասցնելն է: Ինքնավնասումները կարող են հասցվել մեխանիկական, քիմիական, ֆիզիկական կամ այլ եղանակներով: Դրանցից է մակերեսային, կամ ձևական (սիմվոլիկ) ինքնախեղումը, երբ մարմնի տարբեր հատվածներին հասցվում են ոչ խորը, կյանքի համար ոչ վտանգավոր վնասվածքներ: Այս տեսակի ինքնավնասումները կարող են հանդիպել անձնավորության հակասոցիալական և սահմանային խանգարումների, հետվնասվածքային ստրեսային և մտացրումային (դիսոցիացիվ) խանգարումների ժամանակ: Մակերեսային ինքնավնասումները ամենատարածված վնասումներն են:

Բանակում զինծառայողների ինքնախեղիչ վարքի մի շարք դրսևորումներ նախկինում ոչ կառուցողական աղանդավորական կազմակերպություններին և տարբեր ենթամշակութային (էմոներ, գոթեր և այլն) խմբերին անդամակցելու հետևանք են: Օրինակ՝ զինծառայող Կ. Հ.-ն փոքր հասակից մոր հետ մասնակցել էր աղանդավորական կազմակերպության հավաքներին: Մայրը որդուն ներշնչել էր, որ ցանկացած մեղք գործելու դեպքում այն քավելու համար արդարացված քայլ է իր մարմնի կտտանքը: Մոր «պատգամը» զուր չէր անցել. յուրաքանչյուր այդպիսի դեպքից հետո տղան ասեղներով ծակծկել է իր մարմինը, հետագայում նաև հրաժարվել սննդից: Այդ կարգի ճնշման ենթարկված անձանց հետ հոգեբանական վերականգնողական աշխատանքներն ուղեկցվում են որոշակի դժվարություններով, քանի որ նման անձինք անհանդուրժողական են այլ կրոնների և համոզմունքների նկատմամբ: Այդպիսի անձնավորությունների հետ սպայական կազմի վարած դաստիարակչական աշխատանքը հանդիպում է լուրջ խոչընդոտների, և անհրաժեշտություն է ստեղծվում ներգրավելու նաև հոգեբանների, մանկավարժների:

Ինքնագրեսիվ վարքի ծայրահեղ ձև է ինքնասպանությունը: Ինքնասպանությունը հոգեբանական ապահարմարման հետևանք է, երբ անձը հոգեկանի ախտաբանական կամ սահմանային վիճակում ինքնակամ (ներքին կամ արտաքին ազդակներից դրդված) դիմում է մահացու ավարտով ինքնախեղման գործողությունների: Սա ինքնասպանության ընդհանրացված սահմանումն է, որը վերաբերում է և՛ հոգեկան հիվանդների, և՛ հոգեպես առողջ անձանց ինքնասպանություններին: Հոգեպես առողջ անձանց ինքնասպանությունը մենք սահմանում ենք որպես շարունակական ապահարմարման կամ աֆեկտի հետևանքով, անձնավորության սահմանային հոգեվիճակում, մահացու ավարտով այնպիսի ինքնախեղիչ գործողություն, որի դեպքում այն դիտվում է որպես իրավիճակից դուրս գալու ելք, դիմացինին պատժելու միջոց, ուշադրություն գրավելու եղանակ..., սակայն

ոչ որպես անգիտակից և անվերապահ ձգտում դեպի մահ: Հարկ է նշել, որ այս երևույթը վերածվում է սոցիալական համաճարակի, ուստի ամբողջ աշխարհում մեծ հրատապություն է ձեռք բերում կանխարգելման աշխատանքի կազմակերպման անհրաժեշտությունը: Ընդ որում, դրդապատճառները լինում են տարբեր:

ՈՒսումնասիրությունները ցույց են տալիս, որ ԶՈՒ-ում կարգապահական կանոնակարգային հարաբերությունները կանխում են ինքնասպանության վարքային դրսևորումները, իսկ եթե այդ հարաբերությունները կերպափոխվում են ոչ կանոնակարգային հարաբերությունների, ապա սկսում են ակտիվացնել ապահարմարումային գործընթացները՝ հանգեցնելով անձնավորության դեպրեսիվ հոգեվիճակների, որոնք էլ նախահինքնասպանության փուլն են:

Այն կարծիքը, թե ինքնասպանության որոշում կայացրած մարդկանց հնարավոր չէ հետ պահել այդ մտադրությունից, հիմնվում է այն սխալ տեսակետի վրա, ըստ որի՝ ինքնասպանության որոշումն անհաղթահարելի է: Սակայն, ինչպես նշում է Վ. Մ. Բեխտերևը, ինքնաոչնչացման պահանջմունքը, որն ունենում է մարդկանց մեծ մասը, միայն ժամանակավոր երևույթ է: Հաճախ ինքնասպանության անհաջող փորձը նորից վերադարձնում է կյանքի բնազդը, ապրելու ցանկությունը: Ամերիկացի ինքնասպանագետներ Ն. Ֆարբերոուի և Է. Շնեյդմանի աշխատություններում ինքնասպանությունը դիտարկվում է որպես օգնության մի յուրահատուկ կանչ՝ ուղղված շրջապատին: ՈՒստի նման որոշում ընդունած անձնավորության հիմնախնդիրների լուծմանը շրջապատի մասնակցությունը, ցուցաբերված օգնությունն ընդունելու նրա պատրաստակամությունը այն հիմքն են, որի վրա կարելի է կազմակերպել ինքնասպանությունների կանխարգելումը: Բացի այդ, շատ կարևոր է հաշվի առնել այն փաստը, որ հաճախ ինքնասպանության փորձ կատարող անձնավորության զգացմունքները երկարժեք են. նա և՛ ցանկանում է ապրել, և՛ չի ցանկանում, մի կողմից՝ հուսալքված է, բայց, մյուս կողմից, փրկության հույս է տածում: Հաճախ ինքնասպանության դիմելու կո՛ղմ և դե՛մ ցանկություններն այնչափ են հավասարակշռված, որ ճիշտ կազմակերպված կանխարգելիչ աշխատանքները կարող են «կշեռքի նժարը» թեքել դեպի ապրելու ցանկություն:

Եվ այսպես. ճիշտ չէ, որ ինքնասպանության ձգտող մարդիկ չեն ուզում ապրել: Նրանք շատ են ուզում, բայց արդեն չեն կարող: Բոլորն էլ մինչև վերջին վայրկյանը հույսը չեն կորցնում. բաց են թողնում դուռը կամ գրում են հրաժեշտի երկտողեր՝ հույս ունենալով, որ ինչ-որ մեկը մի փոքր շուտ կմիջամտի: Ինքնասպանությունը նրանց համար կարծես վերջին հնարավորությունն է ինչ-որ մեկին ինչ-որ բան հասկացնելու կամ ապացուցելու:

Գոյություն ունեն մի շարք նշաններ (կամ ցուցիչներ), որոնց հիման վրա կարելի է բացահայտել ինքնասպանության հակված անձնավորությանը և կանխել ողբերգությունը: Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գրեթե յուրաքանչյուր ոք, որ մտածում է ինքնաոչնչացման մասին, շրջապատին ինչ-որ ձևով հայտնում է իր որոշման մասին, նրանց 70-75 %-ը բացահայտում է իր ձգտումները, փնտրում է արտահայտվելու հնարավորություն, ցանկանում է, որ իրեն լսեն: Այդ ձգտումները կարող են արտահայտվել տարբեր ձևերով, օրինակ՝

«ավելի լավ է մահանալ, քան շարունակել այսպես ապրել», «ես հոգնել եմ կյանքից», «ես այլևս չեմ կարող դիմանալ» և այլն: Հաճախ դատողությունները լինում են ոչ թե ուղղակի, այլ քողարկված ու խճճված, օրինակ՝ «դուք չպետք է անհանգստանաք ինձ համար, ես չեմ ցանկանում ձեզ համար պրոբլեմներ ստեղծել», «ես ուզում եմ քնել և երբեք չարթնանալ», «շուտով, շատ շուտով այս ցավն ինձ կլքի»…:

Սկզբում այս արտահայտությունները կարող են լինել օգնության, պաշտպանության, միջամտության չգիտակցված աղերս: Սակայն եթե չի հայտնվում մեկը, որ կարող է և ուզում է օգնել տվյալ անձին, այս կանչը կարող է վերածվել որոշման, ապա և գործողության: Այդ իսկ պատճառով, անկախ այն բանից՝ ունեն արտահայտություններն իրական հիմք, թե ոչ, պետք չէ մնալ անտարբեր: Երբեմն ինքնասպանության նախանշանները կարող են կրել ոչ բանավոր բնույթ: Որպես կանոն, ինքնասպանության նախապատրաստվելը առաջին հերթին «գործերի կարգավորումն» է. մեկի համար դա պրոբլեմային հարցերի լուծումն է, մյուսի համար՝ մտերիմներին իրենց համար արժեքավոր անձնական իրերը թողնելը, հրաժեշտի նամակներ գրելը: Ինքնասպանությանը նախապատրաստումը կարող է կատարվել շատ արագ, և դրան անմիջապես հաջորդի գործողությունը, հետևաբար նշված երևույթները պետք չէ մատնել անուշադրության: Պետք է ուշադրություն դարձնել նաև ինքնասպանության փորձերին, քանի որ, վիճակագրական տվյալների համաձայն, ինքնասպանության փորձ կատարածների 12 %-ը հետագա երկու տարիների ընթացքում կրկնում է այն և հասնում իր նպատակին:

Ինքնասպանության նախանշաններ են նաև տագնապներով ուղեկցվող դեպրեսիաները, քանի որ դրանց հետևանքով առաջանում է անձնավորության ֆիզիկական և հոգեկան հյուծվածություն, գիտակցական դաշտի նեղացում, հետաքրքրությունների, արժեքների կորուստ, դժբախտության զգացում, հուսահատություն, սոցիալական մեկուսացածություն, օտարացում, որոնք նպաստում են ինքնասպանության մտքի ձևավորմանը:

Ինքնասպանության դեմ պայքարն առաջին հերթին պայքար է անհուսության դեմ, պայքար կյանքի իմաստի վերականգնման համար: Հետևաբար՝ կանխարգելիչ աշխատանքների բովանդակությունը պետք է լինի կյանքի վերաարժեքավորումը, կյանքի նկատմամբ համապատասխան դիրքորոշումների ձևավորումը, հոգեծին ազդեցությունների նկատմամբ հանդուրժողության մակարդակի բարձրացումը, հոգեախտաբանական հետևանքների վերացումը: Տվյալ աշխատանքը հատկապես կարևորվում է անչափահասության շրջանում, քանի որ այս տարիքային փուլում են ձևավորվում մարդու աշխարհայացքը, կայուն արժեքներն ու հետաքրքրությունները, բարոյագիտակցությունն ու իրավագիտակցությունը: Անբարենպաստ պայմանների հետևանքով անձնավորության ձևավորման գործընթացը շեղվում է սխալ ուղղությամբ, ինչը կարող է ունենալ տարբեր հետևանքներ՝ հանցավոր վարքից մինչև հակվածություն ինքնասպանությանը:

Ցանկացած պետական կառույցում ինքնասպանության դեպքերի նվազումը կախված է այն բանից, թե ինչ կանխարգելիչ աշխատանքներ են կազմակերպվում բնակչության շրջանում: Ինքնասպանության կանխման վերաբերյալ կա բա-

վական հարուստ միջազգային փորձ, որը կարելի է նաև կիրառել մեր բնակչության առանձնահատկությունների հաշվառմամբ: Օրինակ՝ 60000 բնակչություն ունեցող շվեդական Գոտլանդ կղզում, չնայած մարդկանց բարձր կենսամակարդակին ու հոգեպարար բնությանը, շատ մեծ էր դաժանաբար կատարվող ինքնասպանությունների թիվը: Այդ պատճառով այստեղ 1980–1990 թթ. ժամանակահատվածում կատարվեց ինքնասպանությունների վերլուծություն, որից հետո մինչև 1998 թվականը ներդրվեց վարժանքային աջակցության ծրագիրը: Որոշվեց իրականացնել մի կրթական ծրագիր, որով սպասարկման ոլորտի մասնագետներին ուսուցանվեցին դեպրեսիայի դեմ պայքարի մեթոդները, անձնավորության ինքնասպանության մտադրությունների կանխատեսումը, նման անձանց առաջնային օգնության ցուցաբերումը: Այս ամենի շնորհիվ ինքնասպանությունների թիվը նվազեց 2/3-ով: Նման ծրագրեր նպատակահարմար է ներդրել նաև զինված ուժերում:

Շվեդ գիտնականներն առաջարկեցին մեկ այլ ծրագրով դպրոցներում ինքնասպանության դեմ պայքարել եռաստիճան ընթացակարգով՝ կանխարգելում, միջամտում և դիտարկում: Ծրագրում ընդգրկվել էին 330000 դպրոցականներ: Կրտսեր դպրոցականների համար դասավանդումը կազմակերպվեց այնպես, որ զարգանան նրանց ինքնագիտակցությունը և հաղորդակցման կարողությունները, գժտությունների լուծման այլընտրանքային ունակությունները, ստրեսները հաղթահարելու և խմբակային ճնշումներին դիմակայելու հմտությունները: Ավագ դպրոցականների ծրագիրը ավելի խորացված էր: Վերը նշվածից բացի, նրանց տրվել էին գիտելիքներ հոգեբանական պաշտպանական մեխանիզմների, ինչպես նաև այն մասին, թե որտեղ և ինչպես կարելի է այդ նպատակով օգնություն ստանալ: Բացի այդ, յուրաքանչյուր դպրոցում ստեղծվել էին ճգնաժամային թիմեր, որոնցում ընդգրկվել էին սոցիալական աշխատողներ, հոգեբաններ, դպրոցական սոցիալական մանկավարժներ, ուսուցիչներ: Այդ խմբերի համար մշակվել էին գործունեության ուղեցույցներ: Իսկ աշակերտներին ինքնասպանության մասին պատկերացումներ նախատեսված էր տալ 15-ից բարձր տարիքում: Կարծում ենք՝ մեր դպրոցներում, նախազորակոչիկների շրջանում, բանակում արտասահմանյան առաջավոր փորձը տեղայնացված և համալիր ձևով ներդրելու դեպքում ինքնասպանությունների դեպքերը կնվազեն, արդյունքները նույնպես բավարար կլինեն:

Գիտափորձերը ցույց են տվել, որ զանգվածային լրատվամիջոցներով հաղորդված սենսացիոն և անպատասխանատու տեղեկությունները նույնպես կարող են պատճառ դառնալ ընդօրինակվող ինքնասպանական գործողությունների համար: Այս հանգամանքը նկատի ունենալով՝ Համաշխարհային առողջապահական կազմակերպությունը մշակել է ինքնասպանության դեպքերի լուսաբանման համար հատուկ ցուցումներ, որոնցից են.

- Անհրաժեշտ է խուսափել ինքնասպանության փաստի այնպիսի մեկնաբանումից, որը կհանգեցնի զոհին՝ որպես հերոսի և առաջնորդի ներկայացնելուն:
- Չի կարելի ցուցադրել ինքնասպանություն գործած անձնավորության լուսանկարը, մանրամասն կերպով շարադրել ինքնասպանության ձևը, ռոմանտիկ և խորհրդավոր շարժառիթները:

• Կարևոր է լուսաբանել մահվան որոշում կայացնելու սոցիալ-հոգեբանական հանգամանքները:

• Լուսաբանման ժամանակ անհրաժեշտ է հատկապես նշել, որ ինքնասպանությունը կարող է լինել նաև հոգեկան հիվանդության, դեպրեսիայի, հարբեցողության ու թմրամոլության հետևանք, և որ նման անձանց կարելի էր բուժել:

• Ապահովել տեղեկատվություն հոգեբանական աջակցության և օգնության այլ հասանելի միջոցների վերաբերյալ:

• Շատ կարևոր է խուսափել ինքնասպանություն գործած մարդուն տառապյալի կարգավիճակով ներկայացնելուց, ինչպես նաև ինքնասպանության փաստը «փառաբանելուց»:

• Ինքնախեղման դեպքերի վերաբերյալ տեղեկույթը պետք է հաղորդեն պրոֆեսիոնալ և փորձառու մասնագետները կամ հոգեբանները:

Է. Գրոլմանը առաջարկում է կիրառել ինքնասպանությունների կանխման հետևյալ կանոնները. գնահատել ինքնասպանություն գործելու ռիսկի աստիճանը, դրսևորել հոգատարություն, տալ բազմաթիվ հարցեր, չվիճել, հուսադրել, միայնակ չթողնել, առաջարկել պրոբլեմների լուծման կառուցողական մոտեցումներ, դիմել համապատասխան մասնագետների օգնությանը և այլն:

ՁՈՒ-ում ինքնասպանությունների կանխարգելման աշխատանքի կազմակերպման համար անհրաժեշտ է՝ անցկացնել դասընթացներ նախօրոք մշակված ուսումնական ծրագրերով, որոնց շնորհիվ հրամանատարական կազմը կարողանա ի հայտ բերել ինքնասպանությանը նպաստող գործոնները, վարքային նախանշանները և հոգեվիճակները (թաքնված, կամ քողարկված, դեպրեսիաներ, հետվնասվածքային ստրեսային խանգարումներ, մեկուսացվածություն և այլն), մշակել ինքնասպանության կանխարգելման ուղեցույցներ, հաշվառել նախկինում ինքնասպանության փորձ կատարած զինծառայողներին և կատարել անհատական ծրագրով հոգեթերապևտիկ աշխատանք, ստեղծել ճգնաժամային հոգեբանական ծառայություններ, որտեղ պետք է անցկացվեն հոգեթերապևտիկ և վերականգնողական աշխատանքներ, զինկոմիսարիատներից ստանալ տեղեկություններ զորակոչիկի ինքնախեղիչ վարքի մասին:

Այսպիսով՝ ՁՈՒ-ում ինքնախեղիչ վարքի, մասնավորապես՝ ինքնասպանության կանխարգելմանն ուղղված աշխատանքի արդյունավետությունը պայմանավորված է միջազգային փորձի հաշվառմամբ գիտականորեն հիմնավորված համալիր միջոցառումների կազմակերպմամբ, ինչը ենթադրում է ճանաչված գիտնականների, հասարակական կազմակերպությունների, պետական գերատեսչությունների, Հայ Առաքելական Եկեղեցու և զորային կառույցի բոլոր օղակների փոխհամաձայնեցված ու նպատակաուղղված աշխատանք:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Կ. Ե. Վարդանյան,* Անձի հոգեբանական առանձնահատկությունների դերը սուիցիդալ վարքի պատճառականության շղթայում (ինքնասպանի հոգեբանական նկարագիրը): Ե., 2008:
2. *Կ. Ե. Վարդանյան,* Ինքնասպանության վիճակագրական մեկնաբանումը: «Կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները»: ԵՊՀ Միջբուհական գիտական հոդվածների ժողովածու: Ե., 2007:
3. *Շ. Վարդանյան, Կ. Նազարեթյան,* Դատական բժշկություն: Ե., 1995:

4. *Ю. М. Антонян.* Преступная жестокость. М., 1994.
5. *Э. Гроллман.* Суицид: превенция, интервенция, поственция. М., 2001.
6. *N. L. Farberow.* Adult survivors after suicide: Research problems and needs. «Life span perspectives of suicide: Time-lines in the suicide process». Ed. by A. A. Leenaars. New York, 1991.
7. «Preventing suicide: A resource for media professionals». Department of Mental Health. World Health Organization. Geneva, 2000.
8. *E. S. Shneidman and N. Farberow.* The Suicide Prevention Center of Los Angeles. «Suicidal behaviours: Diagnosis and management». Ed. by H. L. P. Resnick. Boston, 1968.

ПРОФИЛАКТИКА АУТОДЕСТРУКТИВНОГО ПОВЕДЕНИЯ ВОЕННОСЛУЖАЩИХ

К. Е. ВАРДАНЯН, кандидат психологических наук, доцент, суицидолог, директор Научно-исследовательского центра Армянского государственного педагогического университета им. Х. Абовяна

РЕЗЮМЕ

Для обеспечения эффективной жизнедеятельности ВС необходимым условием является обеспечение физического и духовного здоровья личного состава. В этом плане важно правильно организовать борьбу с различными факторами, наносящими вред здоровью, в частности, с аутодеструктивными (аутоагрессивными) явлениями, т. е. с причинением увечий самому себе, и в особенности, их крайней формой – самоубийствами (суицид), являющимися следствием «саморазрушающего поведения человека».

В проблеме суицида следует учесть два обстоятельства: 1) по мнению ведущих психологов (в частности Бехтерева), суицидальные наклонности присущи большинству человечества; 2) суицид имеет свойство распространяться. По мнению американских суицидологов Н. Фарбероу и Э. Шнейдмана, самоубийство – это своеобразный призыв к помощи, обращенный к обществу. А это значит, что борьба с суицидом – это прежде всего борьба с отчаянием, безнадежностью, борьба за восстановление смысла жизни. Уменьшение числа самоубийств зависит в значительной мере от эффективности профилактических работ среди населения, в частности, подростков. В этом контексте рассматривается опыт шведских ученых. Они предложили трехуровневую программу борьбы с суицидом в школах: профилактика, вмешательство и наблюдение. Эту программу можно осуществить также в Армении – с учетом местной специфики. Для предотвращения случаев суицида важное значение имеет также форма освещения этих случаев в СМИ: она должна строго соответствовать инструкциям специалистов-психологов.

Для профилактики суицидов в ВС целесообразно: организовать специальные учебные курсы для командиров, на которых они научились бы

выявлять факторы, способствующие суициду, поведенческие признаки и психологические состояния, характерные для лиц, склонных к этому; создать методическое пособие по профилактике суицидов; создать кризисные психологические службы для проведения психотерапевтических и психореабилитационных работ и т. д.

THE PREVENTION OF SERVICEMEN'S SELF-DESTRUCTIVE BEHAVIOR

K. Ye. VARDANYAN, PhD in Psychology, Associate Professor, Suicidologist,
Director of the Scientific-Research Center, Armenian State Pedagogical University
after Kh. Abovyan

SUMMARY

A necessary condition for ensuring efficient life activities in the Armed Forces is the provision of physical and mental health of the personnel. In these terms it is important to correctly organize the struggle against different factors harmful to the health, in particular, against self-destructive (autoaggressive) phenomena, i. e. maiming themselves, and especially its extreme form – suicides, which are a consequence of «a man's self-destructive behavior».

Considering the suicide problem two circumstances should be taken into account: 1) according to leading psychologists (particularly Bekhterev), suicidal propensities are common to the majority of mankind; 2) suicide tends to spread. According to the American suicidologists N. Farberow and E. Schneidman, suicide is a kind of a call for the society to help. This means that the struggle against suicide is primarily a struggle against despair, hopelessness, a struggle for the restoration of the meaning of life. Decrease in the number of suicides depends largely on the efficiency of preventive activities among the population, in particular the adolescents. In this context the experience of Swedish scientists is considered. They proposed a three-level program of the struggle against suicide in schools: prevention, intervention and observation. This program can also be implemented in Armenia given the local specificity. To prevent the cases of suicide the way of press coverage is also important: it should strictly conform to the instructions of professional psychologists.

For preventing suicides in the Armed Forces it is expedient: to organize special training courses for commanders, where they would learn to reveal the factors contributing to suicides, the behavioral symptoms and psychological states, which are typical of persons inclined to commit them; create a manual on suicide prevention; establish crisis psychological services for conducting psychotherapeutic and psychorehabilitation activities, etc.

ՊԵՏԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԵՎ ԲԱՆԱԿՈՒՄ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՍԵՐՄԱՆՄԱՆԸ ՆՊԱՍՏՈՂ ԳՈՐԾՈՆ

Ա. Կ. ՅԱԼԱՆՈՒՋՅԱՆ, գնդապետ, ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի գլխավոր խմբագրի տեղակալ

Զինված ուժերում արտակարգ պատահարների կանխարգելման և կարգապահության ամրապնդման գործում գերազանց արդյունքի հասնելը հրատապ խնդիր է[1]: Դրա լուծումը ենթադրում է, մասնավորապես, ոչ կանոնադրական միջանձնային հարաբերությունների կանխում և պայքար «բանակ «ներխուժած» փողոցային արատավոր բարքերի[*]» դեմ[2]: Վերջիններիս բուն «պատճառը՝ չարիքի արմատը, հայրենասիրության պակասն է»[3]: Հետևաբար՝ հասարակության մեջ և բանակում հայրենասիրության սերմանման խնդիրը կարևոր է նաև զինված ուժերում կարգապահության ապահովման տեսանկյունից:

Նշված խնդրի լուծման համար օգտակար է հիմնվել միջազգային փորձի վրա[4]: Ուստի հոդվածում կփորձենք պարզել Իսրայելի հասարակության՝ հայրենասիրությամբ տոգորվելուն նպաստող հիմնական գործոնները և Իսրայելի դրական փորձից հետևություններ անել Հայաստանի ու Հայոց բանակի համար:

ԻՍՐԱՅԵԼԻ ԲԱՆԱԿՈՒՄ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՏԻՐՈՂ ԲԱՐՈՅԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՄԹՆՈԼՈՐՏԸ

Մի շարք ռազմական փորձագետների կարծիքով՝ Իսրայելի պաշտպանության բանակը՝ Ցահալը, անձնակազմի մարտական և բարոյահոգեբանական պատրաստման, հրամանատարության իրազեկության ու նախաձեռնողականության մակարդակներով, ինչպես նաև մի շարք այլ ցուցանիշներով աշխարհում լավագույնն է[5]:

---

[1] Տես «ՀՀ Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի 2014 թվականի տարեմուտի ուղերձը», էջ 7–9:

[*] «Փողոցային արատավոր բարքերը» ՀՀ ՁՈՒ-ի կանոնագրքերի պահանջներին հակասող՝ դեռահասների և պատանիների շրջանում ընդունված այն արատավոր սովորությունների ամբողջությունն են, որոնք ձևավորվում են որպես սոցիալական ենթամշակույթի տարր:

[2] Տես նույն տեղում, էջ 8:

[3] Տես նույն տեղում, էջ 23:

[4] Տես նույն տեղում, էջ 1:

[5] Տես *Александр Храмчихин*. Армия под звездой Давида. «Частный Корреспондент», 15 января 2009 (http://www.chaskor.ru/p.php?id=2600):

Իսրայելի բանակը համալրվում է պարտադիր ժամկետային զինծառայողներով՝ ինչպես տղամարդկանցով (ծառայության տևողությունը՝ 3 տարի), այնպես էլ կանանցով (ծառայության տևողությունը՝ 2 տարի): Պարտադիր է նաև պահեստազորում գտնվողների մասնակցությունը ամենամյա ռազմահավաքներին (տարեկան մինչև 39 օր)[6]: Այսպիսով՝ Իսրայելի բնակչության մեծ մասն անմիջականորեն առնչվում է զինվորական ծառայությանը. 1949–1952 թթ. Ցահալի Գերագույն շտաբի պետ Իգալ Յադինի բնորոշմամբ՝ «իսրայելցին զինվոր է, որը տարվա մեջ 11 ամիս արձակուրդում է»[7]:

Զորակոչիկների մեծ մասը ցանկություն է հայտնում ծառայելու մարտական (այսինքն՝ մարտական գործողություններ վարող) զորամասերում: Թեպետ վերջին տարիներին այդ զորամասերում ծառայել ցանկացողների բաժնեմասը (որն Իսրայելում ընդունվում է որպես զորակոչիկների շարժառիթավորման մակարդակ) փոքր-ինչ նվազել է, այն 70 %-ից ավելի է (2013 թ. մարտին՝ 71,6 %): Աշխարհի բոլոր երկրներում տվյալ ցուցանիշը առնվազն 1,7–2 անգամ փոքր է[8]: 2013 թ. հուլիսին մարտական զորամասերում ծառայելու ցանկություն է հայտնել նաև իգական սեռի զորակոչիկների 43 %-ը, ինչը աշխարհում աննախադեպ ցուցանիշ է: Մարտական զորամասերում ծառայել ցանկացողների բաժնեմասի գտնվելը 70–76 % միջակայքում Ցահալի ներկայացուցիչները համարում են նորմալ ցուցանիշ[9]:

Ցահալում ծառայելու են ներկայանում նաև 18 տարին լրացած այն հրեա պատանիներն ու աղջիկները, որոնք իրենց ընտանիքների հետ ապրում են ԱՄՆ-ում կամ Եվրոպայում[10]:

Ցահալում կամավոր հիմունքով և հպարտությամբ ծառայում են նույնիսկ հաշմանդամները, որոնք ազատված են զինծառայությունից: Նրանց սովորեցնում են կարողություններին համապատասխանող որևէ զինվորական մասնագիտություն[11]: Ծառայում են նաև Դաունի ախտանշանով հիվանդները[12]: 2013 թ. ծառայությունից ազատված թույլ լսողությամբ զորակոչիկների 85 %-ը պահանջում էր,

---

[6] Տես «Государство Израиль. Вооруженные силы Израиля». «Электронная еврейская энциклопедия» («ЭЕЭ»), т. 3 (http://www.eleven.co.il/article/11734):

[7] Տես *Александр Шульман.* Как становятся солдатами ЦАХАЛ. «Национальная оборона», февраль 2014, № 2 (http://www.oborona.ru/includes/periodics/armedforces/2012/1115/17209534/ detail.shtml):

[8] Տես *Влад Ландау*. Призыв на службу в ЦАХАЛ – боевые части получат пополнение. «STOP-NEWS», 21.07.2013 (http://stop-news.com/3028-prizyv-na-sluzhbu-v-cahal-boevye-chasti-poluchat-popolnenie.html):

[9] Տես նույն տեղում:

[10] Տես *Иван Максимов*. В ЦАХАЛ никто не знает, что такое муштра. «НЕВСКОЕ ВРЕМЯ», 18 декабря 2012 (http://nvspb.ru/stories/v-cahal-nikto-ne-znaet-chto-takoe-mushtra-50132):

[11] Տես նույն տեղում:

[12] Տես «Многообразный ЦАХАЛ. Истинное лицо Израиля», 24 февраля 2014 (http://www.translarium.info/2014/02/idf-diversity-week-the-true-face-of-israel.html#axzz2uyT5NfIY):

որ իրենց ծառայության ընդունեն նման զորակոչիկների համար նախատեսված 130 հաստիքներից մեկում[13]:

Իսրայելում դպրոցականներին Ցահալում ծառայության պատրաստելիս սովորեցնում են աշխատել նույնիսկ ՌԷՊ-ի տեխնիկայով: Որպես արդյունք՝ պարտադիր ժամկետային զինծառայողները բանակում կատարում են այն աշխատանքը, որն այլ երկրներում հանձնարարվում է սպաներին[14]:

Իսրայելում նախազորակոչային տարիքի անձանց համար գործում են նաև ռազմական ուսումնարաններ[15]: Այդ վարժարաններում, որոնց սաների մեծ մասը համալրում է Ցահալի ընտրյալ ստորաբաժանումները, մեծ ուշադրություն է դարձվում կրոնական դաստիարակությանն ու կրթությանը: Գլխավորն է համարվում գաղափարի նվիրված անհատների ձևավորումը, որոնց անհատականությունը հիմնված է «երեք սյուների վրա՝ հրեական, սիոնիստական և ռազմական»[16]: Իսրայելում գործում է 42 ռազմական ուսումնարան, որոնցից 19-ը՝ կրոնական: ՈՒսումնարանների շրջանավարտների 80 %-ը ձգտում է ծառայությունը շարունակելու Ցահալի մարտական զորամասերում[17]:

Նշված փաստերը վկայում են, որ Իսրայելում նախազորակոչային տարիքի անձինք, նրանց ընտանիքների անդամները, բնականաբար նաև զինծառայողները տոգորված են հայրենասիրությամբ: Ավելին. հասարակական կարծիքը խրախուսում է և առաքինություն համարում զինծառայությունը:

Նշված հանգամանքը միայն դրական ազդեցություն կարող է ունենալ բանակում կարգապահության մակարդակի վրա: Որոշ հեղինակներ պնդում են, որ ոչ կանոնադրական հարաբերություններն իսրայելական բանակին բնորոշ չեն, և որ Ցահալում չկա դրա այնպիսի դրսևորում, ինչպիսին «դեդովշչինան» է: Նրանք դա բացատրում են այն բանով, որ իսրայելական բանակը գտնվում է նաև հասարակության խիստ հսկողության տակ, և զինծառայողի իրավունքների խախտման ոչ մի դեպք չի վրիպում բանակի հրամանատարության, ԶԼՄ-ների, խորհրդարանի և հասարակական կազմակերպությունների ուշադրությունից: Ոչ կանոնադրական հարաբերությունների դրսևորման սակավաթիվ դեպքերում ռազմական ոստիկանությունն արձագանքում է կտրուկ կերպով, և մեղավորները

[13] Տես «ЦАХАЛ проводит призыв людей с нарушением слуха». «JEWISH.RU», 29. 05.2013 (http://www.jewish.ru/news/israel/2013/05/news994318125.php):

[14] Տես *Михаил Ваннах*. ЦАХАЛ и «большие данные»: как Армия обороны Израиля экономит бюджетные средства, одновременно способствуя развитию высокотехнологической индустрии, 15 июля 2013 (http://www.computerra.ru/74841/tsahal-i-bolshie-dannyie-kak-armiya-oboronyi-izrailya-ekonomit-byudzhetnyie-sredstva-odnovremenno-sposobstvuya-razvitiyu-vyisokotehnologicheskoy-industrii/):

[15] Տես *Александр Баршай, Элазар Гуш-Эцион*. Курс очень молодого бойца: рассказ о военном интернате «Ор Эцион» (http://isrageo.wordpress.com/2013/05/15/licey987/):

[16] Նույն տեղում:

[17] Տես *Олег Орловский*. Израильские военные училища выпускают боевых офицеров. «STOP-NEWS», 27.05.2013 (http://stop-news.com/2798-izrailskie-voennye-uchilischa-vypuskayut-boevyh-oficerov.html):

խստիվ պատժվում են՝ անկախ պաշտոնից ու կոչումից[18]: Բացի այդ, ոչ կանոնադրական հարաբերությունները կանխող գործոններ են բարոյականության մասին բանակում ընդունված վեհ պատկերացումները և այն, որ փորձառու և նորակոչիկ զինծառայողները միասին են կատարում մարտական առաջադրանքները, ինչը նպաստում է մարտական ընկերության ձևավորմանն ու նվազեցնում նրանց միջև լարվածությունը[19]:

Ցահալում բարձր մակարդակի կարգապահության վկայություն է հետևյալ փաստը. իրենց բնակության վայրին մոտ ծառայող զինվորներին աշխատանքային շաբաթվա վերջում՝ հինգշաբթի երեկոյան, թույլ է տրվում երկու օրով տուն գնալ (ծառայության են ներկայանում կիրակի առավոտյան): Եվ քանի որ նրանց կարող են ամեն պահի կանչել զորամաս ու տալ շտապ մարտական առաջադրանք, շատերը զենքն իրենց հետ տուն են տանում: Այսպիսով՝ ամեն շաբաթ ամբողջ երկրում տասնյակ հազարավոր զինվորներ առանց որևէ միջադեպի մարտական զենքերով շրջում են հասարակության մեջ[20]:

Հարկ ենք համարում նշել, որ Իսրայելի բանակում բարձր աստիճանի կարգապահության ապահովման համակարգն առավելությունների հետ մեկտեղ ունի առանձնահատկություններ, որոնց ընդօրինակումը կարող է վնասակար լինել: Այսպես. բրիտանական և ամերիկյան բանակներում ծառայած գնդապետ Ռոբերտ Հենրիկեսը զարմանքով նկատում է, որ «թեպետ զինվորական շքերթների ժամանակ իսրայելական ստորաբաժանումները կարող են ծայրահեղորեն խելացի կերպով գործել, դրանցում սովորական իմաստով կարգապահությունը շատ ցածր է»[21]: Նա գրում է, որ իսրայելական բանակում կարելի է տեսնել բազմաթիվ չսափրված զինծառայողների, որ ինչպես սպաները, այնպես էլ զինվորները սպաներին հաճախ անունով են դիմում, իսկ «պարոն» բառի եբրայերեն համարժեքը չկա, որ Ցահալում զինվորական ողջույն հազվադեպ են տալիս ու վերադասի նկատմամբ հարգանքի արտաքին նշաններ չկան, որ իսրայելցի զինվորն իրեն համարում է սպային հավասար: Այդուհանդերձ, «մարտադաշտում զինվորն անվերապահորեն ընդունում է սպայի հեղինակությունը»: Հենրիկեսը գրում է, որ

[18] Տես *Александр Шульман*. В Израильской армии нет дедовщины (http://www.alefmagazine.com/pub852.html): Հայաստանում հրեական համայնքի անդամ Ադելինա Լիֆշիցը, որի որդին՝ Միքայելը, վերջերս է ավարտել ծառայությունը Ցահալում, մեզ հետ հանդիպման ժամանակ պատմեց Միքայելի ծառայության ընթացքում տեղի ունեցած մի դեպքի մասին: Շուտով զորացրվելու ենթակա մի խումբ զինվորներ, իսրայելական բանակում ընդունված սովորույթի համաձայն, իրենց բանակային իրերը հանձնում են նորակոչիկներին և հանձնելիս էլ մի թեթև «ապտակ» հասցնում նրանց: Նորակոչիկներից մեկն ընդվզում է դրա դեմ, առաջանում է միջանձնային բախում: Զորացրվելու ենթակա զինծառայողները պատժվում են՝ զորացրվում են ժամկետից 20 օր ուշ (օգտվելով առիթից՝ հեղինակն իր երախտագիտությունն է հայտնում Ադելինա Լիֆշիցին և Հայաստանում հրեական համայնքի ղեկավար Ռիմա Վարժապետյանին՝ Ցահալի մասին տեղեկություններ հաղորդելու համար):

[19] Տես *Владимир Гольдшмидт*. Еще раз о дедовщине (http://world.lib.ru/g/golxdshmidt_w_i/dedov1doc.shtml):

[20] Տես *Իվան Մաքսիմով*, Նշ. աշխ.:

[21] Տես *Yigal Allon*. The Making of Israel's Army. New York, 1970, P. 50:

չի կարող բացատրել, չի կարող հասկանալ, թե ինչու կամ ինչպես է աշխատում այդ համակարգը: «Բրիտանական և ամերիկյան բանակներում իմ ծառայության ամբողջ փորձն ինձ մտածել է տալիս, որ ճակատամարտում բարձր մակարդակի կարգապահությունը կախված է զորանոցում ամուր կարգապահությունից, գրում է գնդապետը: Իսրայելի բանակը կարծես թե հերքում է այս դասը»[22]:

Իսրայելի բանակի այս յուրահատկությունը միգուցե բացատրվում է հետևյալ հանգամանքով. ի տարբերություն Հայաստանից, Ռուսաստանից և այն երկրներից, որտեղ կարելի է սպա դառնալ՝ առանց որպես շարքային ծառայելու (ավագ դպրոցն ավարտելուց հետո բարձրագույն ռազմական ուսումնական հաստատություն ընդունվելով), Իսրայելում սպայական դասընթացի թեկնածուներին ընտրում են բացառապես պարտադիր ժամկետային ծառայության զինվորներից ու սերժանտներից[23]: Դա իսրայելական բանակի կարևոր սկզբունքներից է. սպան պետք է որպես զինվոր ծառայելու փորձ ունենա[24]: Դրա շնորհիվ Իսրայելի ԶՈՒ-ն մասնագիտական «փակ կորպորացիա» չի ձևավորում, այլ բառիս բուն իմաստով համաժողովրդական բանակ է[25]: Իսրայելի ԶՈՒ-ի կանոնագրքի հոդվածներից մեկում գրված է. «Իսրայելը բանակն է, և բանակը Իսրայելն է»[26]:

Վերոնշյալ փաստերը վկայում են, որ՝ ա) Ցահալում կարգապահության և անձնակազմի բարոյահոգեբանական պատրաստության մակարդակը բարձր է, բ) Ցահալը վայելում է Իսրայելի հասարակության վստահությունը, գ) այդ հասարակության մեծ մասն առաջնորդվում է հայրենասիրական մղումներով: ՈՒստի ինչպես բանակում կարգապահության ամրապնդման և արատավոր բարքերի դեմ պայքարի, այնպես էլ հասարակության հայրենասիրական դաստիարակության հարցում Իսրայելի փորձը միանգամայն ուսանելի է[*]:

Փորձենք հասկանալ Իսրայելի հասարակության մեջ և բանակում հայրենասիրության մեծապես տարածված լինելու հիմնական պատճառները: Մեր կարծիքով՝ դրանք պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ սոցիալ-իրավական և գաղափարական:

---

[22] Նույն տեղում:

[23] Տես «ЦАХАЛ – Армия Обороны Израиля» (http://www.jewniverse.ru/biher/AShulman/54.htm):

[24] Տես *Ալեքսանդր Բարշայ, Էլազար Գուշ-Էցիոն,* Նշ. աշխ.:

[25] Տես «Государство Израиль. Вооружённые силы Израиля». «ЭЕЭ», т. 3 (http://www.eleven.co.il/article/11734):

[26] Տես *Իվան Մաքսիմով,* Նշ. աշխ.:

[*] Բաց աղբյուրների հիման վրա կատարված վերլուծությունը ցույց է տալիս, որ իսրայելական բանակում նույնպես կան ոչ կանոնադրական հարաբերություններ. տեղի են ունենում դասալքություններ, ինքնասպանություններ, սեռական հողի վրա հանցագործություններ, պետական գույքի յուրացումներ: Բավական է ասել, որ Ցահալում մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնի հիմնման օրից անցած 40 տարիների ընթացքում՝ մինչև 2012 թվականը, ստացվել է զինծառայողների 330000 բողոք, որոնց 55 %-ը (այսինքն՝ միջինում տարեկան 4500-ից ավելին) ճանաչվել է արդարացի (տես *Влад Ландау*. ЦАХАЛ: 55 % жалоб военнослужащих оправданны. «STOP-NEWS», 02.11.2012 (http://stop-news.com/1923-cahal-55-zhalob-voennoslu zhaschih-opravdanny.html)): Սակայն բոլոր այդ արատավոր երևույթների դեմ մղվում է անզիջում և արդյունավետ պայքար, այդ թվում՝ «կոշտ» օրենսդրական ճանապարհով:

Սոցիալ-իրավական պատճառներն են. ա) Իսրայելում զինծառայության ոլորտը կարգավորող խիստ օրենսդրությունը, օրինակ՝ զինծառայության մասին օրենքի 20-րդ հոդվածով Իսրայելի յուրաքանչյուր քաղաքացի, որի 18 տարին լրացել է, պարտավոր է ներկայանալ զորահավաքական նույնիսկ այն դեպքում, եթե նախորդող 24 ամիսների ընթացքում զորակոչի ծանուցագիր չի ստացել: Զորակոչից խուսափելը, ինչպես նաև խուսափողի մասին կեղծ տեղեկություններ տրամադրելը համարվում են քրեական հանցագործություն. ռազմական ոստիկանությունը պարբերաբար կազմակերպում է շուրջկալներ՝ խուսափողներին և դասալիքներին բռնելու նպատակով: Այդ բոլոր մարդկանց մասին տեղեկույթը պահվում է տվյալների շտեմարանում, և նրանք հետագայում մեծ խնդիրներ են ունենում աշխատանքի տեղավորվելիս, բանկերում գործարքներ կատարելիս և բազմաթիվ այլ կենսական հարցերում[27], բ) զինծառայություն անցածներին տրվող սոցիալ-իրավական բազմաթիվ արտոնությունները (օրինակ՝ աշխատանքի ընդունվելիս, կրթություն ստանալիս)[28], գ) զինծառայողների սոցիալական ու կենցաղային կարիքների բարձր մակարդակի բավարարումը (օրինակ՝ բուսակեր և հավատացյալ զինծառայողների համար առանձին ճաշացանկերի ապահովումը)[29] և այլն:

«Գաղափարական» պատճառ ասելով՝ նկատի ունենք բանակում ծառայելու, հայրենիքը պաշտպանելու գաղափարական-հոգևոր շարժառիթների ամբողջությունը: Մեր կարծիքով՝ դա հայրենասիրության տարածման ավելի էական պատճառ է, քան սոցիալ-իրավականը, ուստի այն քննության կառնենք ավելի հանգամանորեն:

ՊԵՏԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԽԹԱՆՈՂ ԳՈՐԾՈՆ

Ռուս հայտնի ռազմագետ, կայսերական Նիկոլայյան զինվորական ակադեմիայի պրոֆեսոր գեներալ Նիկոլայ Գոլովինը (1875–1944) ռազմական պատմության վերլուծության հիման վրա եզրակացնում է. «Բոլոր վճռական և հաղթական պատերազմներն իրենց հիմքում ունեցել են մի այնպիսի գաղափար, որը մարտիկի սրտին մոտ է եղել» (օրինակ՝ Պարսկաստանի նվաճման գաղափարը՝ Ալեքսանդր Մակեդոնացու ժամանակակից հույների համար, համապարփակ կայսրության գաղափարը՝ հին հռոմեացիների համար, Գերմանիայի միավորման գաղափարը՝ ֆրանս-պրուսական պատերազմի մասնակից գերմանացու համար, Ռուսաստանի դեմ պատերազմի անհրաժեշտության գաղափարը՝ 20-րդ դարի սկզբի ճապոնացու համար, և այլն)[30]:

---

[27] Տես *Александр Шульман.* Как становятся солдатами ЦАХАЛ:

[28] Տես *Влад Ландау*. 12 призывников на одно место в десантных войсках ЦАХАЛ. «STOP-NEWS», 25.07.2013 (http://stop-news.com/3049-12-prizyvnikov-na-odno-mesto-v-desantnyh-voyskah-cahal.html):

[29] Տես *Леонид Смиловицкий*. Сын пошёл служить в Цахал. Часть 2. «Lib.ru, Библиотека Максима Мошкова» (http://world.lib.ru/s/smilowickij_l/zahal2.shtml):

[30] Տես *Ն. Ն. Գոլովին*, Մարտի հետազոտություն. մարդու՝ որպես մարտիկի գործունեության և հատկությունների հետազոտություն: «ՀԲ», հմ. 1–2, 1997:

Ըստ Գոլովինի՝ այդ գաղափարը մարտի դաշտում հաղթանակի ձգտման վերածվելու համար պետք է տեղափոխվի «զգացմունքների ոլորտ», որտեղ դրա ուժը բազմապատկվում է[31]: «Բայց որպեսզի միտքը դանդաղ մշակման միջոցով իջնի զգացմունքների ոլորտ, անհրաժեշտ է բազմաթիվ սերունդների աշխատանք, այսինքն՝ այդ գաղափարը պետք է դառնա ժողովրդական բնավորության սեփականություն»[32]: Այլ կերպ ասած՝ «այն պետք է հիմնված լինի ազգային զգացմունքի վրա, այսինքն՝ հայրենասիրության վրա, կամ կազմի նրա անմիջական բաղադրիչ մասը…. Այսպիսով՝ մարտիկի հաղթական ձգտումն ամբողջովին հայրենասիրության զգացմունքի ածանցյալն է»[33]:

Ահա թե ինչու, Գոլովինի կարծիքով, «որ պետությունն էլ վերցնենք, նրա ամեն մի փառապանծ դարաշրջանին նախորդում է հսկայական ներքին աշխատանք՝ ուղղված ազգային ինքնագիտակցության ստեղծմանը»[34]:

Ժամանակակից հեղինակներն ընդհանուր առմամբ ընդունում են Գոլովինի տեսակետը: Այսպես. ժամանակակից սահմանման համաձայն՝ հայրենասիրությունը մարդու խորը հարգանքն է և սերը իր երկրի, նրա պատմության, մշակութային ավանդույթների, ժողովրդի նկատմամբ[35]: Որպես կայուն բարոյական զգացում՝ հայրենասիրությունն առաջանում է տվյալ էթնոսի կենսակերպի և մշակույթի առանձնահատկությունների ազդեցությամբ, ձևավորվում լեզվին և մտածողության ընդունված ձևերին, մշակույթի նորմերին ու չափանիշներին տիրապետելիս և ամրապնդվում ավագ սերնդի ներկայացուցիչների հետ շփման (Գոլովինի նշած «բազմաթիվ սերունդների աշխատանքի») շնորհիվ[36]: Հայրենասիրության հատկապես ձևավորման փուլում մեծ նշանակություն ունի պետական գաղափարախոսությունը[*], որի տարածումը Գոլովինի նշած «հսկայական ներքին աշխատանքի» կարևոր մասն է:

---

[31] Տես *Ն. Ն. Գոլովին*, Մարտի հետազոտություն. Մարդու՝ որպես մարտիկի գործունեության և հատկությունների հետազոտություն: «ՀԲ», հմ. 3, 1997:

[32] Նույն տեղում:

[33] Նույն տեղում:

[34] Նույն տեղում:

[35] Տես *Б. И. Кононенко*. Большой толковый словарь по культурологии, 2003 (http://dic.academic.ru/dic.nsf/encculture/2096/%D0%9F%D0%B0%D1%82%D1%80%D0%B8%D0%BE%D1%82%D0%B8%D0%B7%D0%BC):

[36] Նույն տեղում:

[*] Պետական ասելով մենք հասկանում ենք այն գաղափարախոսությունը, որն իշխանությունը հրապարակավ և պետական լծակների օգտագործմամբ փորձում է ընդունելի դարձնել պետության բոլոր քաղաքացիների համար՝ որպես իդեալական վերջնանպատակ: Պետական գաղափարախոսությունը ներառում է ոչ միայն որոշակի արժեքներ, այլև ունի նորմատիվային բնույթ. պետության Սահմանադրությունը և այլ օրենսդրական ակտեր հասարակության ինչ-որ մասի, սոցիալական խմբերի, իշխանության սուբյեկտների, իսկ իդեալական տարբերակում՝ ամբողջ հասարակության գաղափարախոսության որոշակի դրույթների նյութականացումն են (տես *Алексей Буховец*. Идеологическая функция государства. Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук. М., 2002 (http://www.dissers.ru/avtoreferati-kandidatskih-dissertatsii-yuridicheskie/a207.php)): Հայրենասիրությանը հանգեցնող գաղափարները, որպես կանոն, պետական գաղափարախոսության տարրերից են:

Իսկապես. գաղափարախոսությունը՝ որպես գիտելիքների ու տեսակետների համակարգ, ունի հետևյալ գործառույթները՝ աշխարհայացքի ձևավորման (մասնավորապես՝ հասարակության համար կեցության իմաստի հստակեցում), նույնականացման (տալիս է «ո՞վ ենք մենք» հարցի պատասխանը), ինտեգրման (անհատներին միավորում է որպես մեկ ժողովրդի ներկայացուցիչների), սոցիալականացման (ձևավորում է վերաբերմունք մարդու, հասարակության, կյանքի նկատմամբ, և նույնիսկ հակադրվելով պետական գաղափարախոսությանը՝ մարդիկ ձևավորվում են որպես անհատներ)[37]: Ակնհայտ է, որ նշված գործառույթներից յուրաքանչյուրի իրականացումն ուղղակիորեն կամ անուղղակիորեն նպաստում է հայրենասիրության ձևավորմանը:

Ավելին. ոչ մի պետություն չի կարող գոյություն ունենալ առանց երեք հիմնարար բաղադրիչների՝ տարածքի, բնակչության և հրապարակային իշխանության[38]: Գաղափարախոսության շնորհիվ է, որ այս երեք բաղադրիչները անքակտելիորեն կապվում են միմյանց, քանի որ թե՛ պետության տարածքային միասնականության ու ամբողջականության հիմնավորումը, թե՛ բնակչության (ժողովրդի) հոգևոր-գաղափարական գործունեության շարժառիթավորումը, թե՛ պետական իշխանության համար ռազմավարական նպատակադրումը կատարվում են գաղափարախոսության միջոցով[39]: ՈՒստի գաղափարախոսությունը՝ որպես գաղափարների, առասպելների և խորհրդանշանների համակարգ, պետության կարևոր հայտանիշներից է[40]:

Պետության հիմնական գաղափարախոսական գործառույթը հասարակական զարգացման նպատակների և դրանց հասնելու միջոցների ընտրությունն է[41]: Գաղափարախոսության միջոցով է կատարվում նաև ընտրված նպատակների իրականացման համար ժողովրդի մոբիլիզացումը[42]:

Պետական գաղափարախոսության առկայությունը բարենպաստ ազդեցություն է ունենում երկրում հանցավորության ընդհանուր մակարդակի նվազեցման վրա[43], իսկ դա էլ, իր հերթին, նվազեցնում է հանցավորության մակարդակը բանակում[44]:

---

[37] Տես *Вардан Багдасарян*. Идеология как фактор государственной успешности: сравнительный, исторический, страновый анализ (http://refdb.ru/look/3062076.html):

[38] Տես նույն տեղում:

[39] Տես նույն տեղում:

[40] Տես *Ալեքսեյ Բուխովեց,* Նշ. աշխ.:

[41] Տես նույն տեղում:

[42] Տես *Վարդան Բաղդասարյան,* Նշ. աշխ.:

[43] Տես նույն տեղում: Հեղինակը նախկին ԽՍՀՄ և ՌԴ օրինակով ցույց է տալիս, որ պատմության այն փուլերում, երբ տեղի է ունենում երկրի ապագաղափարախոսականացում, հանցավորության դինամիկայի վեկտորի ուղղությունը կտրուկ կերպով փոխվում է դեպի հանցավորության սրընթաց աճում: Նույն եզրահանգումն է արվում նաև հետևյալ հոդվածում. *М. В. Бавсун*. Влияние идеологии на формирование уголовной политики государства. «Вопросы управления», 2012, вып. 18 (http://vestnik.uapa.ru/ru-ru/issue/2012/01/01/):

[44] Տես *И. М. Мацкевич*. Причины и условия преступности военнослужащих (по материалам криминологического исследования). «Правоведение», 1999, № 2, сс. 165–173 (http://www.law.edu.ru/article/article.asp?articleID=149072):

Հետազոտություններն անմիջական կապ են հայտնաբերում պետության գաղափարախոսականության աստիճանի և բնակչության հայրենասիրության աստիճանի (տարածվածության) միջև: «Ուորլդ Վելյուզ» («*World Valuese*»)[45] միջազգային սոցիոլոգիական նախագծի շրջանակում անցկացված սոցիոլոգիական հարցումն ի հայտ է բերել հանուն հայրենիքի մարտնչելու՝ տարբեր երկրների քաղաքացիների պատրաստակամության աստիճանը:

Հարցման արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ պետական գաղափարախոսությամբ առաջնորդվող երկրների քաղաքացիների ավելի մեծ բաժնեմասն է հայրենասեր (այսինքն՝ պատրաստ մարտնչելու հանուն հայրենիքի), քան ապագաղափարախոսական երկրներինը[46] (տես նկ. 1[*]): Սա ևս մի վկայություն է, որ պետական գաղափարախոսությունը նպաստում է հայրենասիրության սերմանմանը:



Նկ. 1. «Համաշխարհային արժեքներ» նախագծի շրջանակում անցկացված սոցհարցումը. հանուն հայրենիքի մարտնչելու պատրաստ բնակչության բաժնեմասը, %:

[45] Տես «World Values Survey» (http://www.worldvaluessurvey.org/index_html):

[46] Տես *Վարդան Բաղդասարյան,* Նշ. աշխ.: Նկատենք, որ նկարում Ռուսաստանի Դաշնությունը պետք է լիներ ապագաղափարախոսական պետությունների թվում, քանի որ այդ երկրի Սահմանադրության 13-րդ հոդվածի 2-րդ կետում գրված է. «Ոչ մի գաղափարախոսություն չի կարող հաստատվել որպես պետական կամ պարտադիր» (տես «Конституция Российской Федерации». Принята всенародным голосованием 12 декабря 1993 г. (http://constitution.kremlin.ru/)): Փաստորեն, այս հարցում Ռուսաստանը շեղվում է Վ. Բաղդասարյանի նկատած օրինաչափությունից:

[*] Թեև Իսրայելի վերաբերյալ տվյալներ բերված չեն, սակայն ըստ այլ աղբյուրի, Իսրայելի հրեաների ավելի քան 94 %-ը պատրաստ է կամավոր կերպով զինվորագրվելու Ցահալին (տես *Հ. Ս. Քոթանջյան*, Անվտանգության քաղաքագիտական պրոբլեմներ. ԽՍՀՄ վերակառուցում – Ղարաբաղ, Հայաստան, Անդրկովկաս – Աֆղանստան: Ե., 2009, էջ 99): Այսինքն՝ նկարում Իսրայելը կզբաղեցներ ձախից 3-րդ տեղը:

Քանի որ Իսրայելը պետական գաղափարախոսությամբ առաջնորդվող երկիր է[47], ապա կարելի է եզրակացնել, որ Իսրայելի հասարակության մեջ և բանակում հայրենասիրության տարածված լինելու պատճառներից մեկը հենց այդ հանգամանքն է:

Մեր կարծիքով՝ մյուս պատճառը Իսրայելի պետական գաղափարախոսության՝ սիոնիզմի հետևյալ առանձնահատկությունն է. դրա որոշ դրույթներ իրենց կրոնական ենթատեքստի շնորհիվ հայրենասիրական շարժառիթը հրեական հասարակության մեծ մասի համար դարձնում են գերակա:

Իսկապես. Իսրայելում երիտասարդության հայրենասիրական դաստիարակության գործում կարևորվում է պետական աջակցությունը հրեա ժողովրդի՝ պատմության պաշտոնական մեկնակերպին և առաքելությանը, որոնք կառուցված են մի շարք հիմնադրույթների վրա[48]: Դրանցից է սիոնիզմը՝ որպես Իսրայելի Պետության վերաստեղծման ճանապարհով հրեության փրկության ռազմավարություն. 19-րդ դարի վերջին եվրոպական հրեության վերնախավը գիտակցեց, որ Իսրայելի Պետության ստեղծման նպատակով հրեաների Պաղեստին վերադարձը նախընտրելի է փրկչի (մեսիայի) պասիվ սպասումից[49]: Սա հիրավի հեղափոխություն էր հրեական կրոնափիլիսոփայության մեջ, որովհետև մինչ այդ հրեական կրոնի ուսուցիչները, հիմնվելով Սուրբ Գրքի վրա, համարում էին, որ հրեաների ազգային ազատագրումը (իմաստը տես ստորև) ամբողջովին կախված է Աստծո կամքից, որի արտահայտիչը փրկիչն է, և որ այն չի կարող կատարվել առանձին մարդու կամ մարդկանց խմբի նախաձեռնությամբ[50]: Սիոնիզմի հիմնադիրները, վերանայելով հուդայականության վախճանաբանական պատկերացումները, դրանք փոխարինեցին (լրացրին)* «ժողովրդի բնական, Աստծո կամքից չկախված ինքնաազատագրման» հայեցակարգով[51]:

Հրեական կրոնի մեջ «ազատագրումը» («գեուլլա») մի հասկացություն է, որ նշանակում է «փրկություն մարդու և մարդկության գոյությանն սպառնացող չա-

[47] Իսրայելի պետական գաղափարախոսությունը սիոնիզմն է (տես, օրինակ, «Всемирная история». Справочник. М., 2010, с. 454):

[48] Տես *Հ. Ս. Քոթանջյան*, Իսրայելի Պաշտպանության բանակում զինվորի մարտական ոգու ձևավորման փորձի մասին՝ ՀՀ պաշտպանական բարեփոխումների լույսի ներքո: «ՀԲ», հմ. 1–2, 2009:

[49] Տես նույն տեղում:

[50] Տես «Сионизм». «ЭЕЭ», т. 7 (http://www.eleven.co.il/?mode=article&id=13819&query=%D1%C8%CE%CD%C8%C7%CC):

* Մեր կարծիքով՝ այսպիսի կրոնափիլիսոփայական «հեղափոխությունը» հնարավոր է դարձել այն պատճառով (բացի սոցիալ-քաղաքականից), որ Թալմուդում (հրեաների իրավական ու կրոնաբարոյական դրույթների ժողովածուում) չկա մարդու ազատ կամքի և աստվածային նախախնամության փոխազդեցության հստակ հայեցակարգ: Հրեա մտածողները, չկարողանալով հաշտեցնել այդ երկու սկզբունքները, գիտակցաբար ընդունել են երկուսն էլ. ընդսմին նրանց թվում եղել են ինչպես կամքի ազատության, այնպես էլ ճակատագրապաշտության կողմնակիցներ (տես «Свобода воли». «ЭЕЭ», т. 7 (http://www.eleven.co.il/?mode=article&id=13722&query=%D1%C2%CE%C1%CE%C4%C0+%C2%CE%CB%C8)):

[51] Տես «Антисионизм». «ЭЕЭ», т. 7 (http://www.eleven.co.il/?mode=article&id=15542&query=%C0%CD%D2%C8%D1%C8%CE%CD%C8%C7%CC):

րիքից՝ աղետից, հալածանքից, մահվանից, հիվանդությունից, մեղքից»[52]: Նոր ժամանակներում հրեական կրոնափիլիսոփայական միտքը ազատագրմանը տվել է տարբեր մեկնաբանություններ՝ այն համարելով «չարի նկատմամբ բարու վերջնական հաղթանակ», «անձնական կատարելության ձեռքբերում» կամ «իդեալական հասարակարգի ստեղծում»: Ընդ որում, համարվում է, որ Իսրայելի (հրեա ժողովրդի) ազատագրումը կազատագրի նաև ամբողջ աշխարհը, հետևաբար յուրաքանչյուր հրեա ունի աշխարհը փրկելու տիեզերական առաքելություն: Սիոնիզմի հիմնադիրներն առաջ քաշեցին այն գաղափարը, որ ազատագրումը և դրան հասնելու միջոցը հրեական ինքնիշխան պետության վերաստեղծումն է և հրեա ժողովրդի վերադարձը Էրեց-Իսրայել (Իսրայելի երկիր): Ընդ որում, սիոնիզմի «ոչ կրոնական տարբերակում» նույնպես ներառված են մեսիական սպասումի, ազատագրման, բարու հաղթանակի կրոնական գաղափարները[53]:

Այսպիսով՝ հրեայի համար ազգային պետականության կերտումը սոսկ աշխարհիկ նպատակ չէ, այլ կրոնական իմաստով նաև փրկության միջոց և տիեզերական առաքելություն[*]: Կրոնական և աշխարհիկ նպատակների այսօրինակ համընկնումը, ինչպես նաև իր տիեզերական առաքելության գիտակցումը կտրուկ կերպով ուժեղացնում են հրեայի ազգանպաստ գործունեության շարժառիթները և նրան տոգորում հայրենասիրությամբ[**]:

---

[52] Տես «Избавление». «ЭЕЭ» (http://www.eleven.co.il/?mode=article&id=11722&query=%C8%C7%C1%C0%C2%CB%C5%CD%C8%C5):

[53] Տես նույն տեղում:

[*] 1920–1948 թթ. հրեաների ռազմականացված կազմակերպության՝ Հագանահի (որը հետագայում դարձավ Ցահալի միջուկը) մարտիկի երդման տեքստի անգլերեն տարբերակը ավարտվում էր հետևյալ տողերով. «I hereby swear that I will dedicate all my strength, and if necessary give my life, for the defence of my people and my homeland, for the freedom of Israel and the ***redemption*** of Zion» (տես *Ցիգալ Ալոն*, Նշ. աշխ., էջ 135, ընդգծումը մերն է): Թարգմանությունը՝ «Երդվում եմ, որ բոլոր ուժերս և եթե անհրաժեշտ է՝ կյանքս կնվիրեմ իմ ժողովրդի ու հայրենիքի պաշտպանության, Իսրայելի ազատության և Սիոնի փրկության գործին» (ըստ Հրեական համառոտ հանրագիտարանի՝ Սիոնը բլուր է Երուսաղեմում, որը խորհրդանշում է այդ քաղաքն ու Իսրայելի երկիրը): Այստեղ ուշագրավն այն է, որ անգլերեն «redemption» բառը նշանակում է նաև աստվածաբանական իմաստով փրկություն, ազատագրում մեղքից (տես, օրինակ՝ «Dictionary.com» 3-րդ իմաստը, (http://dictionary.reference.com/browse/redemption)): Մեր կարծիքով՝ սա ամենևին էլ պատահական չէ. Հագանահի մարտիկը երդվում էր կյանքը զոհել՝ իր ժողովրդին նաև կրոնական իմաստով չարիքից ազատագրելու («գեուլլա») համար: Կարելի է ասել՝ երդվում էր դառնալ փրկիչ՝ «քրիստոս»:

[**] Կրոնական գործոնի կարևորությունն ակնհայտ է դառնում հետևյալ վիճակագրական տվյալներից. ըստ 2009 թ. անցկացված և 2012 թ. հրապարակված սոցիոլոգիական հարցման արդյունքների՝ իսրայելցի հրեաների 80 %-ը հավատում է աստծուն, 70 %-ը հավատում է հրեաների ընտրյալությանը, 65 %-ը Թորան (Հնգամատյանը) և դրանում եղած պատվիրանները համարում է աստծո կողմից տրված, 55 %-ը հավատում է փրկչի գալստյանը, 85 %-ը «կարևոր» կամ «շատ կարևոր» է համարում հրեական կրոնական տոներն ավանդույթի համաձայն նշելը, 61 %-ը կարծում է, որ «պետությունը պարտավոր է հետևել, որ երկրում հասարակական կյանքն ընթանա հրեական կրոնական ավանդույթներին համապատասխան» (տես «Евреи в Израиле верят». «Jewish.ru». Глобальный еврейский on-line центр (http://www.jewish.ru/israel/days/2012/01/news994304172.php)):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ա) պետական գաղափարախոսությունը հասարակության մեջ և բանակում հայրենասիրության սերմանման և, որպես դրա արդյունք, արատավոր բարքերի դեմ պայքարի հաջողությանը նպաստող գործոն է: Հետևաբար՝ Հայաստանի Հանրապետությունում ազգային արժեքների վրա հիմնված պետական գաղափարախոսության որոշակիացումը դրականորեն կանդրադառնա նաև բանակում կարգապահության ամրապնդման վրա,

բ) պետական գաղափարախոսության կարևոր բաղադրիչներից է ազգային պետության մասին ուսմունքը: Հայրենասիրության տարածմանը նպաստելու համար այդ գաղափարախոսությունը պետք է ազգային պետության համար ուրվագծի խոստումնալից հեռանկար՝ հույսով* համակելով պետության քաղաքացիներին,

գ) կրոնական և աշխարհիկ նպատակների համընկնումը ուժեղացնում է գործունեություն ծավալելու անհատի շարժառիթը: ՈՒստի ցանկալի է, որ պետական գաղափարախոսության տարածումն ստանա նաև Հայ Առաքելական Եկեղեցու գործուն աջակցությունը: Մասնավորապես՝ պետական գաղափարախոսության տարածման ընթացքում շեշտվի, որ, ինչպես նշել են Հայ եկեղեցու գործիչներն ու մտածողները, ազգանպաստ և պետականամետ գործունեությունը մերձավորին ծառայելու միջոց է և քրիստոնեական առաքինություն[54], որը կարող է լինել հայ մարդու առաքելությունն աշխարհում,

դ) պետական գաղափարախոսության տարածմանը զուգահեռաբար պետք է ավելի ազդեցիկ դարձնել հայրենասիրության տարածման սոցիալ-իրավական գործոնները՝ զինծառայողների և զինծառայություն անցածների սոցիալ-իրավական պաշտպանության համակարգի ու զինծառայությանն առնչվող օրենսդրության կատարելագործմամբ:

---

* Հայ ժողովրդի պարագայում, օրինակ, մեր մեջ արդեն իսկ բավական տարածված հավատն առ այն, որ հայ ժողովուրդն ի վերջո վերադարձնելու է Արևմտյան Հայաստանը կամ դրա մի մասը:

[54] Տես, օրինակ, *Պողոս պատրիարք Աղրիանուպոլսեցի*, Խրատի թանգարան: Սբ. Էջմիածին, 2011, էջ 53–68:

ГОСУДАРСТВЕННАЯ ИДЕОЛОГИЯ КАК ФАКТОР, СПОСОБСТВУЮЩИЙ РАСПРОСТРАНЕНИЮ ПАТРИОТИЗМА В ОБЩЕСТВЕ И АРМИИ

А. К. ЯЛАНУЗЯН, полковник, заместитель главного редактора военно-научного журнала «Айкакан банак» ИНСИ МО РА

РЕЗЮМЕ

Актуальными проблемами в Вооруженных Силах, являются достижение эффективности предотвращения и профилактики чрезвычайных происшествий в войсках и обеспечение высокого уровня дисциплины как на коллективном, так и индивидуальном уровнях. Решение этих проблем включает борьбу с неуставными отношениями и негативными морально-этическими явлениями среди лиц призывного возраста. К числу основных причин подобных явлений относятся недостаточный уровень или вообще отсутствие патриотизма. В связи с этим представляется полезным обратиться к опыту стран, достигших высоких результатов в деле патриотического воспитания молодежи и военнослужащих. По ряду параметров одной из таких стран является Израиль.

Эффективность системы военно-патриотического воспитания Израиля обусловлена двумя основными факторами: 1) высокой степенью идеологизированности государства и общества, т. е. наличием государственной идеологии (сионизма), 2) особенностью этой идеологии, которая заключается в совпадении чисто мирских целей (объединение всех евреев и укрепление национального государства) с религиозными (избавление («геулла») Израиля и всего мира от Вселенского зла). Такое совпадение мирских и религиозных целей, а также осознание своей мессианской миссии в планетарном масштабе усиливает мотивацию служения Родине и повышает уровень патриотизма еврейского населения.

Для преодоления многих кризисных явлений в армянской действительности представляются целесообразными разработка и внедрение в Армении государственной идеологии, которая бы зиждилась на идее общенационального государства с многообещающим будущим, ожидание которого стимулировало бы патриотизм и стремление служить Отчизне и народу. В распространении и укоренении этой идеологии значительная роль должна быть отведена Армянской Апостольской Церкви.

STATE IDEOLOGY AS A FACTOR CONTRIBUTING TO DISSEMINATION OF PATRIOTISM IN THE SOCIETY AND THE ARMY

A. K. YALANUZYAN, Colonel, Deputy Editor-in-Chief, «Haikakan Banak» Defense-Academic Journal, INSS, MOD, RA

SUMMARY

Achieving efficiency in averting and preventing emergencies in the Armed Forces and providing highest discipline both on team and individual levels are urgent problems in the Armed Forces. Handling these problems anticipates fighting against non-statutory relations and negative moral and ethical phenomena among draft-age people. Poor patriotism or even the absences of it at all, are among the main causes in the list for suchlike phenomena. Thus, it seems helpful to refer to the experience of those states, which have achieved great results in the patriotic upbringing of the youth and the servicemen. Israel is one of these countries according to a number of features.

The efficiency of the system of military-patriotic upbringing in Israel is stipulated by two main factors: 1) the highly ideologized level of the state and the society, i.e., the presence of state ideology (Zionism), 2) the peculiarity of that ideology, which is embraced in the coincidence of purely secular goals (unification of all the Jews and strengthening the national state) with religious ones (the redemption (Geula) of Israel and the whole world from universal evil). Such a coincidence of secular and religious goals, as well as the perception of their messianic mission on a planetary scale enhance the motivation of serving for the Homeland and elevate patriotism among the Jewish population.

So as to overcome a lot of crisis phenomena in the Armenian reality it seems reasonable to elaborate and incorporate a state ideology in Armenia, which would be based upon the idea of a national state with a promising future, expectations of which would stimulate patriotism and the aspiration to serve for the Homeland and the nation. And the Armenian Apostolic Church should be assigned a significant role in the dissemination and inculcation of such an ideology.

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ*

Մ. Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ, քաղաքական գիտությունների թեկնածու,
ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի վերլուծական կենտրոնի ռազմավարական խաղերի խմբի պետ

Ռազմավարական խաղերը կազմակերպվում են ինչպես ուսումնական, այնպես էլ կիրառական քաղաքականության մշակման նպատակներով: Անգլալեզու գրականության մեջ դրանք հիմնականում կոչվում են «*wargame*»՝ «պատերազմական խաղ»:

Պատերազմական խաղերի կանոնները ստեղծել ու մշակել են պրուսական բանակի լեյտենանտ Գեորգ Լեոպոլդ ֆոն Ռայսվիցը և նրա սպաները: 1824 թ. Ռայսվիցը հրատարակում է ռազմական խաղերի (գերմ.՝ *Kriegsspiel*) վերաբերյալ առաջին գիրքը՝ «Զորաշարժը ռազմական խաղի ձևով ներկայացնելու հրահանգ» վերնագրով («*Anleitung zur Darstellung militärischer Manöver mit dem Apparate des Kriegsspieles*»)[1]:

Մինչև 20-րդ դարի կեսը «պատերազմական խաղ» տերմինը ավելի նեղ իմաստ էր արտահայտում, այն է՝ պատերազմական իրավիճակներ մոդելավորող վարժանքներ, որոնք կազմակերպվում էին ռազմավարությունների ուսումնասիրության և ստուգման, օպերատիվ-մարտավարական գործողությունների փորձարկման և կատարելագործման նպատակներով: Եթե սկզբում պատերազմական խաղերը կիրառվում էին պրոֆեսիոնալ զինվորականների ուսուցման նպատակով, ապա հետագայում լայն տարածում ստացան նաև քաղաքացիների շրջանում՝ որպես ժամանց:

Խաղի էությունը հետևյալն էր. ստվարաթղթի վրա տեղագրական քարտեզի նմանությամբ պատկերվում էր իրական (անցյալի կամ ներկայի) կամ հորինված ռազմադաշտ: Վեցանկյունների բաժանված քարտեզի վրա տեղակայվում էին յուրային և հակառակորդի զորքն ու սպառազինությունը ներկայացնող ֆիգուրները:

---

* Հոդվածի համար հիմք է ծառայել 2013 թ. օգոստոս–սեպտեմբեր ամիսներին ԱՄՆ-ի Պաշտպանական ազգային համալսարանի (ՊԱՀ) Կիրառական ռազմավարական ուսուցման կենտրոնում հեղինակի վերապատրաստումը, որի նպատակը ռազմավարական խաղերի կազմակերպման գործում ՊԱՀ-ի առաջատար փորձի ուսումնասիրությունն էր:

[1] Տես *Peter P. Perla.* The Art of Wargaming: A Guide for Professionals and Hobbyists. Annapolis, 1990, P. 25:

Խաղացողները հերթով, ըստ կանոնների, տեղաշարժում էին ֆիգուրները՝ փորձելով հասնել գերազանցության և հաղթել հակառակորդին[2]:

20-րդ դարի կեսերից պատերազմական խաղերում մոդելավորվող միջավայրն ընդգրկեց նաև քաղաքականության ոլորտը: 1970-ական թվականներից ԱՄՆ-ի առաջատար գիտահետազոտական կենտրոնները (հատկապես՝ ՌԷՆԴ կորպորացիան) պատերազմական խաղերի մեթոդաբանության առանձնահատուկ տարրերն սկսեցին կիրառել ռազմաքաղաքական հարցերի վերլուծության և քաղաքականության պլանավորման նպատակով[3]: Ավելին. «պատերազմական խաղ» տերմինն սկսեց կիրառվել անգամ ռազմական բնագավառի հետ կապ չունեցող ոլորտներում, օրինակ՝ բիզնեսում, նշանակելով այնպիսի նմանարկումային խաղեր (անգլ. *conflict simulation*, կամ պարզապես *consim*), որոնք կազմակերպվում էին ճգնաժամային իրավիճակների ուսումնասիրության և քննարկման, ինչպես նաև որևէ խնդրի լուծման ռազմավարության մշակման նպատակով: ՈՒստի իմաստային շփոթից խուսափելու համար հայերենում այսպիսի նմանարկումային խաղերը նպատակահարմար է անվանել ոչ թե պատերազմական, այլ՝ ռազմավարական *(strategic)*:

Այսօր ռազմավարական խաղերի միջոցով, օպերատիվ-մարտավարական հարցերից բացի, փորձաքննվում են նաև այլ պրոբլեմներ: Մասնավորապես՝ խաղաղ պայմաններում փորձարկվում են նոր մարտական համակարգերի հնարավորություններն ու արդյունավետությունը, ուսումնասիրվում են զինվորական կանոնակարգին վերաբերող խնդիրներ, օրինակ՝ տարբեր պատերազմական իրավիճակներում ինչ հետևանքներ կարող են առաջանալ վերադասի հրամանները չկատարելու դեպքում, և այլն: ՈՒսումնասիրվում են նաև պատերազմական իրավիճակներում տեղեկույթի փոխանցման ձևերն ու հնարավորությունները և օպերատիվ գնահատման առանձնահատկությունները, ճգնաժամային իրավիճակներում առաջնորդին անհրաժեշտ որակները և այլն: Վերջին դեպքում ուսումնասիրության օբյեկտը խաղի մասնակիցն է, իսկ առարկա՝ խաղում նրա դրսևորած վարքը: Նման խաղերում, որպես կանոն, լինում են այսպես կոչված դատավորներ *(umpire),* որոնք խաղի արդյունքներով գնահատում են մասնակիցների գործողությունները:

Ռազմավարական խաղերը նաև տարատեսակ ծրագրերի փորձաքննման, տարբեր հարցերի վերաբերյալ շահագրգիռ կողմերի միջև համաձայնության և համագործակցության արդյունավետ գործիք են: Ընդ որում, աշխարհի առաջատար պետություններում պետական գերատեսչությունները հաճախ համագործակցում են ռազմավարական խաղերում մասնագիտացած մասնավոր կամ պետական գիտահետազոտական կենտրոնների հետ[4]:

---

[2] Տես *Philip Sabin.* Simulating War: Studying Conflict Through Simulation Games. London, 2012:

[3] Տես *Mark Herman, Mark Frost, Robert Kurz.* Wargaming for Leaders: Strategic Decision Making from the Battlefield to the Boardroom. New York, 2008, PP. 34, 36:

[4] Տես *Sylvia Babus, Kathryn Hodges, Erik Kjonnerod.* Simulations and Institutional Change: Training US Government Professionals for Improved Management of Complex

ԱՄՆ-ում նման հայտնի մասնավոր կազմակերպություններից կարելի է նշել «Բուզ Ալեն Համիլտոն կորպորացիան» *(«Booz Allen Hamilton Inc.»),* որը կառավարման, տեխնոլոգիաների և անվտանգության ոլորտներում խորհրդատվական ծառայություններ է մատուցում կառավարության քաղաքացիական հատվածի և պաշտպանական ու հետախուզական գերատեսչություններին, ինչպես նաև մասնավոր առևտրային ընկերություններին[5]:

Իսկ ԱՄՆ-ի պետական համակարգում պետական պաշտոնյաների և բարձր որակավորում ունեցող փորձագետների ներգրավմամբ ռազմավարական խաղեր անցկացնող առաջատար կենտրոններից մեկը Պաշտպանական ազգային համալսարանի Կիրառական ռազմավարական ուսուցման կենտրոնն (ԿՌՈՒԿ) է, որը պաշտպանական-անվտանգային ոլորտի խնդիրները փորձաքննելու պատվերներ է ստանում ԱՄՆ-ի պաշտպանության նախարարությունից և պետական այլ գերատեսչություններից (Պետդեպարտամենտ, Կոնգրես և հետախուզական ընկերակցության անդամ կազմակերպություններ)[*]:

Ռազմավարական խաղերի կազմակերպման գործում առաջին և թերևս ամենակարևոր փուլը խաղարկվելիք խնդրի ճշգրիտ ձևակերպումն է, ինչից մեծապես կախված է խաղի արդյունավետությունը[**]:

Emergencies Abroad. «Journal of Contingencies and Crisis Management», December 1997, Vol. 5, Issue 4:

[5] Տես կազմակերպության պաշտոնական կայքը «Booz Allen Hamilton» (http://www.boozallen.com/):

[*] ԱՄՆ-ի ՊԱՀ-ի ԿՌՈՒԿ-ի մասնագետները ռազմավարական խաղերը բաժանում են մի քանի տեսակի: Դերային *(role playing)* խաղերում յուրաքանչյուր մասնակցի տրվում է կոնկրետ դեր, որին համապատասխան նա պետք է որոշումներ կայացնի: Այս տեսակի խաղերը լինում են մրցակցային, համագործակցային և զուգահեռ: Վերջին դեպքում տարբեր թիմերի տրվում է միևնույն առաջադրանքը: Հաջորդակից *(pathway)* խաղերում ներկայացվում է նախնական սցենար, որում մշակող թիմը խաղի ընթացքում կատարում է փոփոխություններ՝ մասնակիցների կայացրած որոշումներին համապատասխան: Այս տեսակի խաղերը օգտակար են հատկապես քաղաքական, ռազմական, դիվանագիտական, տնտեսական ռազմավարությունների փորձաքննության համար: Մշակումային *(policy)* խաղերի միջոցով ռազմաքաղաքական ղեկավարությանը ներկայացվում են խորհրդատվական առաջարկություններ, իսկ գործընթացային (*process*) խաղերում նմանարկվում է որոշումների ընդունման միջգերատեսչական գործընթացը: Սակայն խաղերի այս դասակարգումը պայմանական է, և դրանց տարատեսակների որոշ հատկանիշներ կարող են համընկնել (տես ԿՌՈՒԿ-ի պաշտոնական կայքը «CENTER for APPLIED STRATEGIC LEARNING» (http://casl.dodlive.mil/exercises/)):

[**] Պաշտպանական-անվտանգային ոլորտի հարցերի ուսումնասիրության համար լայնորեն կիրառվող հետազոտական մեթոդներից է ՍՎՈՏ վերլուծությունը (անգլ. *SWOT– strengths*, *weaknesses*, *opportunities*, *threats*, այսինքն՝ ուժեղ և թույլ կողմեր, հնարավորություններ, սպառնալիքներ), որի միջոցով երևան են հանվում կազմակերպության (քաղաքական ուղղվածության ռազմավարական խաղերի դեպքում որպես կազմակերպություն ուսումնասիրվում են պետությունները, բիզնես բնագավառին վերաբերող խաղերի դեպքում՝ կորպորացիաները) ուժեղ և թույլ կողմերն ու արտաքին միջավայրում նրա հնարավորություններն ու նրան սպառնացող վտանգները:

Կախված այն բանից, թե խաղի միջոցով ինչ խնդիր է լուծվում, պետության ուժեղ և թույլ կողմերը պարզելու նպատակով կարող են ուսումնասիրվել դրա քաղաքական համակարգը,

Այդ իսկ պատճառով խաղի նախապատրաստման ընթացքում մշակող կենտրոնի փորձագետները հաճախակի հանդիպումներ են ունենում պատվիրատու կազմակերպության ներկայացուցիչների հետ, որպեսզի ստանան խաղարկվող խնդրի վերաբերյալ որքան հնարավոր է մանրամասն տեղեկություններ: Հաճախ ստեղծվում է խաղից առաջ փորձնական խաղեր անցկացնելու անհրաժեշտություն, ինչը հնարավորություն է տալիս կատարելու բովանդակային և տեխնիկական շտկումներ:

Խաղի նախապատրաստմանը մասնակցում են ինչպես առանձին ոլորտների մասնագետներ, այնպես էլ մասնագիտական տեղեկույթը խաղի մեջ ներմուծող մեթոդաբան-տեխնոլոգներ, որոնց հիմնական գործառույթը խաղի կառուցվածքի մշակումն է, ճշգրիտ դերերի բաշխումը մասնագետներին, խաղի ընթացքում նրանց հարաբերվելու կանոնների սահմանումը: Սա, այսպես կոչված, փորձնական խաղերի (*pre-game*) փուլն է:

Փորձնական խաղերի միջոցով վերջնամշակվում է խաղի սցենարը, որը նրա հիմքն է: Սցենարը խաղարկվող խնդրին առնչվող ապագա իրավիճակի ամենահավանական իրատեսական մոդելավորումն է՝ ներկա միտումների օբյեկտիվ վերլուծության հիման վրա*:

Խաղի մեթոդաբան-տեխնոլոգները պետք է հմտորեն մշակեն սցենարը, որպեսզի խմբերը խնդիրը խաղարկելու ժամանակ չհայտնվեն փակուղում:

Սցենարի մշակումն ավարտելուց հետո կազմակերպիչները կազմում են լրացուցիչ տեղեկանքների փաթեթներ, որոնք նախքան բուն խաղի անցկացումն ուղարկվում են մասնակիցներին, որպեսզի նրանք ավելի ամբողջական պատկե-

ռազմական ներուժը, բնական ռեսուրսները, սոցիալ-տնտեսական իրավիճակը, ժողովրդագրական վիճակը, քաղաքացիական հասարակության կայացածության աստիճանը և այլն: Արտաքին միջավայրի հետազոտության համար որպես կանոն դիտարկվում են այն գործոնները, որոնք կապված չեն ուսումնասիրվող պետության վարած քաղաքականության հետ, սակայն ազդում են նրա արտաքին և ներքին քաղաքականության վրա՝ ինչպես ընձեռելով հնարավորություններ, այնպես էլ ստեղծելով մարտահրավերներ: Գործոնները կարող են լինել քաղաքական, տնտեսական, ռազմական, սոցիալական և այլ բնույթի:

* Մասնագիտական գրականության մեջ ներկայացվում են սցենարների մշակման տարբեր մեթոդներ: Հիմնական մեթոդները երկուսն են՝ կանխատեսումը՝ ներկայից ապագա մոդելավորման մեթոդը *(forecasting),* և հակառակը՝ ապագայից ներկա նախագծումը, որի ժամանակ տեխնոլոգները մոդելավորում են ապագայի մի իրավիճակ և հետահայաց վերլուծությամբ փորձում են պարզել, թե որ դեպքում կարող է ստեղծվել այն *(backcasting)* (սցենարների մշակման մեթոդաբանության մասին ավելի հանգամանորեն տես *Pierre Wack.* Scenarios: Uncharted Waters Ahead. Harvard Business Review, September-October 1985, N 85516 (http://www.damianbrunold.ch/files/testing/Wack.pdf); *Paul J. H. Schoemaker.* Scenario Planning: A Tool for Strategic Thinking. «Sloan Management Review», Winter 1995, Vol. 36, Issue 2 (http://www.ftms.edu.my/pdf/Download/UndergraduateStudent/WK4_SR_MOD001074_Schoemaker_1995.pdf); *Wolfgang Jonas.* A Scenario for Design. «Design Issues», Spring 2001, Vol. 17, N 2 (http://echo.iat.sfu.ca/library/Jonas_01_scenario.pdf); *Peter Bishop, Andy Hines and Terry Collins.* The current state of scenario development: an overview of techniques. «Foresight», 2007, Vol. 9, N 1 (http://www.universitiesuk.ac.uk/aboutus/whatwedo/PolicyAnalysis/UKHigherEducation/Futures/Documents/current_state_of_scenario_development_FORESIGHT.pdf)):

րացում կազմեն խաղարկվող իրավիճակի մասին և խաղի ընթացքում հանդես գան հնարավորինս իրատեսական առաջարկություններով:

Խաղերն անցկացվում են բաց կամ փակ ռեժիմով և կարող են տևել մեկ օրից մինչև մի քանի ամիս՝ կախված հետազոտվող խնդրի բարդությունից: Խաղի մասնակիցները կարող են ներկայացնել ինչպես առանձին անհատների, այնպես էլ պետություններ, միջազգային կազմակերպություններ, ոչ պետական կազմավորումներ, տարբեր խմբավորումներ և այլն:

Միջգերատեսչական ձևաչափով հարցերի քննարկման նպատակով կազմակերպվող խաղերին մասնակցում են շահագրգիռ գերատեսչություններում որոշումներ մշակողներն ու ընդունողները: Նրանց կարող են կցվել նաև առանձին ոլորտների փորձագետներ, որոնցից խաղարկվող պրոբլեմի բնույթի բերումով կարող է պահանջվել քննարկվող հարցերի գաղտնիության պահպանում:

Խաղն անցկացնում են համակարգողն ու մեթոդաբան-տեխնոլոգներից կազմված աջակցող խումբը, որոնք վերահսկում են, որ մասնակիցները հետևեն մեթոդաբանների սահմանած կանոններին: Յուրաքանչյուր խաղի համար որոշվում է թիմերի քայլ-գործողությունների *(moves)* թիվը, հաջորդականությունը և դրանց համար տրամադրվող ժամանակը: Աջակցող խումբը որոշումների ընդունման գործում մասնակիցներին օգնելու նպատակով խաղի ընթացքում նրանց է տրամադրում սցենարում ներկայացված տեղեկույթը պարզաբանող տեսանյութեր, ձայնագրություններ, տպագիր նյութեր (խաղի ընթացքում ներկայացվող նյութերը կոչվում են «ներարկվածք» *(inject)*: Խմբի գործառույթներից է նաև մասնակիցների դրդումը այլընտրանքային մեթոդների որոնմանը, ընդունվող որոշումների հետևանքների մասին տեղեկացումը, դիտավոր լարվածության կամ անորոշության ստեղծումը և այլն:

Խաղի ընթացքում ձևավորվող ինտերակտիվ միջավայրում մասնակիցների միջև տեղի է ունենում սիներգիկ փոխգործություն, ինչը նպաստում է նոր գաղափարների և եզրահանգումների ձևավորմանը*: Այս հանգամանքով է մեծապես պայմանավորված ռազմավարական խաղերի ակտիվ կիրառումը ժամանակակից ուսումնական հաստատությունների նորարարական կրթական ծրագրերում[6]:

Բուն խաղի ավարտից հետո սկսվում է վերլուծության փուլը. մասնակիցները հայտնում են իրենց տպավորությունները և գնահատում խաղի ընթացքը: Նրանք կարող են առաջարկություններ անել խաղերի անցկացման որակը բարելավելու վերաբերյալ: Հաճախ մասնակիցները այնպիսի մտքեր են արտահայտում, որոնք

---

* Հաճախ ռազմավարական խաղը շփոթում են ուղեղային գրոհի հետ *(brainstorming),* մինչդեռ վերջին դեպքում մասնակիցների միջև մրցակցությունը առանցքային գործոն չէ՝ ի տարբերություն ռազմավարական խաղից: Ռազմավարական խաղում կան տարբեր շահեր հետապնդող սուբյեկտներ, և խաղի հիմնական նպատակը այդ սուբյեկտների փոխազդեցությունից ստացվող տեղեկույթի փորձաքննությունն է, ինչը հնարավորություն է տալիս գործող ռազմավարությունների մեջ կատարելու փոփոխություններ կամ մշակելու նորերը: Բացի այդ, ռազմավարական խաղում կա հստակ դերաբաշխում, և լինում են հաղթողներ ու պարտվողներ (տես *Փիտեր Փ. Փեռլա*, Նշ. աշխ.):

[6] Հանգամանորեն տես *Մ. Ս. Ավետիսյան, Դ. Մ. Մանասյան,* Ռազմավարական խաղերը՝ որպես կիրառական ուսուցման գործիք: «Աշխատանքային տետրեր», 2012, հմ. 4:

կազմակերպիչները հաշվի չէին առել: Սա խաղը մշակողների համար օգտակար փուլ է:

Վերլուծության ժամանակ առաջին հերթին պետք է պարզել, թե արդյոք խաղը ճիշտ է կազմակերպվել և որքանով է նպաստել հարցի փորձաքննության արդյունավետությանը: Այս հարցին պատասխանելով՝ փորձագետները ի հայտ են բերում խաղի նախագծային թերությունները, որոնք հաշվի են առնվում հաջորդ խաղերի կազմակերպման ժամանակ:

Այնուհետև ոլորտային փորձագետները վերլուծում են խաղի բովանդակային մասը: Այս փուլում մեկ անգամ ևս քննվում են ներկայացված տեղեկությունը, մասնակիցների արտահայտած գաղափարները, ընդունած որոշումները և նրանց միջև ձևավորված փոխազդեցության տիպերն ու առանձնահատկությունները: Փորձագետները նաև կարող են առաջարկել խաղին առնչվող այնպիսի խնդիրներ, որոնք մասնակիցները չեն քննարկել, և իրադարձությունների զարգացման այլընտրանքային սցենարներ:

Ավարտական փուլում ոլորտային փորձագետները պատրաստում են «հետձեռնարկումային զեկուցում» *(after action report),* որը խաղի անցկացումից մոտ մեկ ամիս անց հանձնվում է պատվիրատուին: Զեկուցման մեջ ներկայացվում են խնդրին առնչվող գործոնները, ինչպես նաև դրանց հաշվառմամբ մշակված առաջարկությունները, որոնք բաժանվում են ըստ ոլորտների՝ քաղաքական, ռազմական, տնտեսական, տեխնոլոգիական և այլն: Առաջարկությունները կարող են փաստաթղթի մեջ ներառվել որպես ռազմավարական գնահատումներ, որոշումների նախագծեր, կարճաժամկետ, միջնաժամկետ կամ երկարաժամկետ ծրագրեր և այլն:

ԱՄՆ-ի ՊԱՀ-ի մոդելի տեղայնացմամբ ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի (ՊԱՀՀ) ստեղծման ծրագրով նախատեսվում է համալսարանի ԱՌՀԻ-ի կազմում ունենալ Ռազմավարական խաղերի կենտրոն: Այդ նպատակով 2012 թ. դեկտեմբերին ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ում ձևավորվել է ռազմավարական խաղերի խումբ, որն զբաղվում է ռազմավարական խաղերի մեթոդաբանության, խաղերի տեսության, սցենարային պլանավորման գործիքարանի, ՍՎՈՏ վերլուծության և գիտավերլուծական մեթոդների ուսումնասիրությամբ և դրանց կիրառմամբ ռազմավարական մշակումների պատրաստմամբ: Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի Ռազմավարական խաղերի կենտրոնի հիմնական գործառույթներն են լինելու համալսարանի հետազոտական և ուսումնական ծրագրերում ներգրավումը, մասնավորապես՝ աջակցություն փորձագիտական ներուժի համադրմամբ պետության անվտանգային քաղաքականության մշակման համար ռազմավարական ուղենիշների ստեղծմանը, ՊԱՀՀ-ում Պաշտպանական-անվտանգային համակարգի արդյունավետության մակարդակի բարձրացմանն ուղղված միջգերատեսչական վերապատրաստման դասընթացի, ինչպես նաև «Ռազմավարական անվտանգության քաղաքագիտություն» ու «Պաշտպանական-անվտանգային ռեսուրսների կառավարում և կիբեռանվտանգություն» մագիստրոսական ծրագրերի համար ռազմավարական խաղերի մշակումն ու կազմակերպումը:

ՆՈՐ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ. «ԻՍԼԱՄԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ» ԵՎ ՆՐԱ ԱՐՄԱՏՆԵՐԸ, ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ, ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Դ. Մ. ՄԱՆԱՍՅԱՆ, պատմական գիտությունների թեկնածու,
ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի գիտական-վերլուծաբան

Վերջին տարիներին Սիրիայում և Իրաքում իսլամական արմատական ուժերի դերի աճման ու կրոնահամայնքային հակամարտության խորացման համատեքստում 2014 թ. հունիսի 29-ին Սիրիայի և Իրաքի տարածքում «Իսլամական պետության» ստեղծումը ի հայտ եկավ որպես ինչպես տարածաշրջանային, այնպես էլ միջազգային մասշտաբով լրջագույն սպառնալիք: Սույն գործոնները առավել հրատապ են դարձնում Սիրիայում և Իրաքում տեղի ունեցող խորքային փոփոխությունների վերագնահատման համատեքստում «Իսլամական պետության» առաջացմանը նպաստող գործոնների, խմբավորման գաղափարախոսության, նպատակների, ռազմական և ֆինանսական ռեսուրսների, ինչպես նաև այդ սպառնալիքի չեզոքացման հնարավոր ուղիների և առկա խոչընդոտների վերլուծությունը:

«ԻՍԼԱՄԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ» ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Իրաքում սուննի իսլամական ուժերի ակտիվացմանը նպաստեց 2003 թ. Իրաքում Ս. Հուսեյնի վարչակարգի փլուզումն ու Իրաքում տասնամյակներ շարունակ գոյություն ունեցող երկու կրոնական համայնքների՝ շիաների և սուննիների միջև ուժային նոր հարաբերակցության ձևավորումը: Առաջին անգամ շիաները հնարավորություն ստացան Իրաքի իշխանական կառուցվածքում ձեռք բերելու գերակա դիրքեր[1]: Ս. Հուսեյնի բաասական սուննի աշխարհիկ վարչակարգի տապալումից և գոյություն ունեցող անվտանգության համակարգի կազմալուծումից հետո հազարավոր սուննի արաբների համար տարբեր սուննիական խմբավորումներին անդամակցելը դարձավ Իրաքի նոր շիա իշխանությունների դեմ պայքարի հիմնական ուղիներից մեկը: Նման իրավիճակը, հետագայում նաև Իրաքի նոր շիա իշխանությունների կողմից սուննի ուժերին Իրաքի իշխանությունից մեկուսացնելու ակտիվ քայլերն սկսեցին պարարտ հող ստեղծել Իրաքում սուննի արմատական ուժերի ազդեցության մեծացման համար[2]:

2004 թ. Աբու Մուսաբ ալ Զարկաուին ԱՄՆ-ի և նրա իրաքյան դաշնակիցների դեմ պայքարելու համար ստեղծեց «Ալ Քաիդան Իրաքում» ահաբեկչական

---

[1] Իրաքի բնակչության կրոնահամայնքային և էթնիկական կազմի, ներքաղաքական զարգացումներում նրանց դերի մասին հանգամանորեն տես *Ն. Հովհաննիսյան,* Արաբական երկրների պատմություն, հ. III: Ե., 2005, էջ 428–551:

[2] Տես *Z. Beauchamp*. The Real Roots of Iraq's Sunni-Shia conflict. «Vox», 20 June 2014 (http://www.vox.com/2014/6/20/5827046/who-are-sunnis-who-are-shias):

խմբավորումը: Ալ Զարկաուիի մահից հետո 2006 թ. այդ խմբավորման և սուննիական այլ ապստամբական խմբավորումների միությամբ, որին հետագայում միացան Իրաքի այլ սուննի ցեղեր, «Ալ Քաիդան Իրաքում» խմբավորման հիմքի վրա 2006 թ. ստեղծվեց «Իրաքում իսլամական պետություն» խմբավորումը: 2010 թ., երբ խմբավորման առաջնորդ դարձավ Ալ Բաղդադին, կազմակերպությունը Իրաքի զգալի սուննի բնակչություն ունեցող նահանգներում ձեռք բերեց մեծ ազդեցություն: Ժամանակի ընթացքում խմբավորմանը միացան նաև Ս. Հուսեյնի վարչակարգում կարևոր դիրքեր ունեցած մի շարք կադրային սպաներ՝ զինվորականներ ու հետախույզներ[3]:

Մի քանի գործոններ, այդ թվում՝ 2011 թ. սկսված սիրիական ճգնաժամի խորացումը և այդ համատեքստում Իրաքում ու Սիրիայում կրոնահամայնքային՝ շիա–սուննի, հակամարտության ծավալումն ու իսլամական արմատականության տարածումը, ինչպես նաև տարածաշրջանում իրանամետ շիա առանցքի և սուննի ուժային կենտրոնների միջև ընթացող պայքարը, այդ համատեքստում Սաուդյան Արաբիայի՝ Իրաքում, Սիրիայում և Լիբանանում Իրանի ազդեցության թուլացմանն ուղղված քայլերը և այդ նպատակով սուննի արմատական ուժերին ցուցաբերվող աջակցությունը «Իրաքում իսլամական պետություն» խմբավորման համար ստեղծեցին Սիրիայի սուննիներով բնակեցված շրջաններում ծավալվելու նոր հնարավորություններ՝ նոր անդամների հավաքագրմամբ: 2013 թ. ապրիլին Ալ Բաղդադին հայտարարեց Իրաքում և Սիրիայում իր ուժերի միացման և «Իսլամական պետություն Իրաքում և Լևանտում» (ԻՊԻԼ) խմբավորման ստեղծման մասին: Օգտվելով Սիրիայում և Իրաքում կենտրոնական իշխանությունների թուլությունից՝ ԻՊԻԼ-ը կարճ ժամանակում զգալի ազդեցություն ձեռք բերեց Սիրիայի արևելյան շրջաններում՝ Ալ Ռակկայում, Իդլիբում, Դեր Զորում, Հալեպում, ինչպես նաև 2013 թ. վերջին, օգտվելով սուննի ուժերին մեկուսացնելու Իրաքի նախկին վարչապետ Ն. Մալիքիի քաղաքականությունից, Իրաքի արևմտյան և հյուսիսարևմտյան նահանգներում (Անբար և այլն) ստացավ զգալի աջակցություն (հիմնականում՝ սուննի ցեղախմբերի կողմից)[4]: 2014 թ. հունիսին «Իսլամական պետությունը» իր վերահսկողության տակ առավ Իրաքի Մոսուլ քաղաքը և, համախմբելով Իրաքում և Սիրիայում իր վերահսկողության տակ գտնվող տարածքները, 2014 թ. հունիսի 29-ին հռչակեց Սիրիայի և Իրաքի տարածքում «Իսլամական Պետություն» անվանումը կրող խալիֆայություն ստեղծելու մասին:

ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ

«Իսլամական պետությունը» սուննի ծայրահեղական խմբավորում է, որը հետևում է Ալ Քաիդայի առավել արմատական գաղափարախոսությանը՝ սալաֆի-ջիհադական ուղղվածությամբ[5]:

---

[3] Տես *Anthony H. Cordesman, Sam Khazai.* Iraq in Crisis. Center for Strategic and International Studies (CSIS), May 2014 (http://csis.org/files/publication/140513_Cordesman_IraqInCrisis_Web.pdf):

[4] Տես նույն տեղում:

[5] Խմբավորման գաղափարախոսության մասին ավելի հանգամանորեն տես *H. K. Gambhir*. Dabiq: The Strategic Messaging of the Islamic State. Institute for the Study of War,

Խմբավորումը հետևում է բռնության կիրառման միջոցով «մահմեդական համայնքը» անհավատներից մաքրելու գաղափարին՝ ձեռնարկելով տարատեսակ բռնություններ նրանց նկատմամբ, ովքեր չեն հետևում իրենց գաղափարախոսությանը, նրանց հայտարարելով «անհավատ» (քրիստոնյա և այլն) և դասալիք (շիա և այլն): Խմբավորումը կարևորում է վերադարձը իսլամի վաղ շրջանի ավանդույթներին և մերժում է ավելի ուշ շրջանում տեղի ունեցած «նորարարությունները», որոնք, ըստ խմբավորման, մահմեդականներին շեղում են ճշմարիտ ուղուց:

Ըստ խմբավորման՝ միայն օրինական իշխանությունը կարող է իր վրա վերցնել ջիհադի առաջնորդությունը, իսկ ոչ մահմեդական պետությունների դեմ պայքարում առաջին քայլը պետք է լինի իսլամական հասարակությունը «մաքրելը»: Այլ կերպ ասած՝ «Իսլամական պետությունը» համարում է, որ Իսրայելի դեմ ընդհանուր պայքարում առաջին քայլը պետք է լինի դասալքված, ջիհադ իրականացնելու իրավունք չունեցող պաղեստինյան սունnի խմբավորման՝ ՀԱՄԱՍ-ի դեմ պայքարը[6]:

«Իսլամական պետության» առաջնահերթ նպատակն է Իրաքի և Լևանտի (Սիրիա, Լիբանան, Հորդանան, Պաղեստին, Իսրայել) տարածքում խալիֆայության ստեղծումը, որի կազմում պետք է աստիճանաբար ներառվեն նաև մահմեդական բնակչություն ունեցող այլ տարածքներ:

Ըստ խմբավորման գաղափարախոսության՝ մահմեդական համայնքը պետք է կառավարվի Մահմեդ մարգարեի իրական հետնորդի՝ խալիֆի առաջնորդությամբ՝ խալիֆայության կրոնական և քաղաքական ղեկավարության ներքո և իսլամական օրենքի՝ շարիաթի նորմերի հիման վրա: «Իսլամական պետության» մի շարք գաղափարական դրույթներ անընդունելի են համարվում սունnիական, առաջին հերթին՝ արաբական աշխարհի կրոնական գլխավոր կառույցների կողմից (օր՝ Ալ Ազհար, Մեքքա և այլն):

ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Տարաբնույթ աղբյուրների ուսումնասիրությունը վկայում է, որ «Իսլամական պետության» կառավարման համակարգն ունի վերևից ներքև կառավարվող աստիճանակարգության բնույթ: Խալիֆ Աբու Բաքր ալ Բաղդադին պետության հոգևոր և աշխարհիկ ղեկավարն է: Նա ունի տեղակալներ, կառավարիչներ ու ներկայացուցիչներ Իրաքում և Սիրիայում: Պետության կառավարումը կազմակերպվում է զանազան մարմինների միջոցով: Ամենակարևորներից են համարվում Ռազմական խորհուրդը, որը պատասխանատու է ռազմաճակատում ձեռնարկվող օպերացիաների պլանավորման և ռազմական հրամանատարությանն

15 August 2014 (http://www.understandingwar.org/sites/default/files/Dabiq%20Backgroun der_ Harleen%20Final.pdf); *D. Kirkpatrick*. ISIS' Harsh Brand of Islam Is Rooted in Austere Saudi Creed. «The New York Times», 24 September 2014 (http://www.nytimes.com/2014/09/25/world/middleeast/isis-abu-bakr-baghdadi-caliph-wahhabi.html?_r=1):

[6] Տես «Why Islamic State has no sympathy for Hamas». «Al Monitor», 29 July 2014 (http://www.al-monitor.com/pulse/originals/2014/07/islamic-state-fighting-hamas-priority-before-israel.html):

ուղղորդման համար, ինչպես նաև Պաշտպանության, անվտանգության և հետախուզության խորհուրդը, որը պատասխանատու է նաև խալիֆի անձնական անվտանգության համար: Գործում են դատական, տեղեկատվական, ֆինանսական, հարկային, կրթական հարցերով զբաղվող մարմիններ, ռազմիկների ներգրավման հարցերով զբաղվող խորհուրդ և այլն: Խորհրդատվական խորհրդի (Շուրա) խնդիրն է վերահսկել, որպեսզի խորհուրդների և տարբեր մարմինների կողմից ընդունվող որոշումները համապատասխանեն շարիաթի նորմերին[7]:

Համապատասխան աղբյուրների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ «Իսլամական պետության» կառավարման համակարգում զգալիորեն ներգրավված են և մեծ դերակատարում ունեն Ս. Հուսեյնի կառավարման շրջանում Իրաքում ծառայած նախկին զինվորական սպաները[8]:

Սիրիայում «Իսլամական պետության» վերահսկողության տակ գտնվող շրջաններում, այդ թվում՝ մայրաքաղաք հռչակած Ալ Ռակկա քաղաքում Բաշար ալ Ասադի վարչակարգի նախկին կառավարության աշխատողները, ընդունելով «Իսլամական պետության» իշխանությունը, շարունակում են կատարել իրենց գործառույթները: Միայն ոստիկանության, անվտանգության և այլ ուժային կառույցներ համալրվել են «Իսլամական պետության» զինյալներով: «Իսլամական պետությունը» ձեռնարկել է այդ շրջանների սոցիալական վիճակի բարելավմանն ուղղված մի շարք քայլեր, մշակել և վարում է նոր գնային քաղաքականություն, հիմնել է նոր հարկային համակարգ: Իրականացվում են նաև «փափուկ ուժի» տարածման ծրագրեր (սոցիալական տարբեր ծառայությունների, կրոնական դասախոսությունների և այլ միջոցներով)[9]:

ՌԱԶՄԱԿԱՆ ՆԵՐՈՒԺԸ ԵՎ ՖԻՆԱՆՍՆԵՐԸ

Մի շարք աղբյուրների տվյալներով՝ «Իսլամական պետությունը» Սիրիայում ունի 40-50 հազար, իսկ Իրաքում՝ 20-30 հազար զինյալ: Խմբավորման շարքերում կան 3000-ից ավելի օտարերկրյա ռազմիկներ՝ Ֆրանսիայից, Անգլիայից, եվրոպական այլ պետություններից, ԱՄՆ-ից, Չեչնիայից և այլն, ինչը իրական վտանգ է ստեղծում այդ պետությունների մահմեդական համայնքներում արմատական գաղափարների տարածման և Արևմուտքում ջիհադական ուժերի ակտիվության մեծացման համար[10]: ԻՊԻԼ-ն ունի անհամաչափ պատերազմ վարելու բավական մեծ փորձ ու հմտություն, փորձառու և բանիմաց հրամանատարներ ու ռազմական մասնագետներ, ինչպես նաև մեծ քանակությամբ զենք ու զինամթերք[11]:

---

[7] Սիրիայում «Իսլամական պետության» կառավարման առանձնահատկությունների վերաբերյալ ավելի հանգամանորեն տես *Charles C. Caris and Samuel Reynolds*. «ISIS Governance in Syria. Middle East Security Report 22». Institute for the Study of War, July 2014 (http://www.understandingwar.org/sites/default/files/ISIS_Governance.pdf):

[8] Տես նույն տեղում:

[9] Տես նույն տեղում:

[10] Տես *Dumitru Chican*. Again about Dai'sh: «global caliphate» or «Iraqi enclave»? «Geostrategic Pulse», 5 September 2014, N 174:

[11] Տես *Abdel Latif al-Mansouri*. The Iraqi «Islamic Caliphate» and the causes of success. «Geostrategic Pulse», 20 September 2014, N 175:

Մի շարք արևմտյան փորձագետներ այն կարծիքին են, որ «Իսլամական պետության» ռազմական հզորությունը ուղղակիորեն կախված է նրա ֆինանսական հնարավորություններից, որոնց շնորհիվ պետության ղեկավարությունը կանոնավոր կերպով վճարում է իր զինյալներին, ինչպես նաև խոշոր ծախսեր կատարում տարաբնույթ ծրագրերի իրականացման, զենքի ու զինամթերքի ձեռքբերման և այլ նպատակներով: «ՌԷՆԴ Քորպորեյշնը», ուսումնասիրելով «Իսլամական պետության» ֆինանսների, կառավարման և այլ համակարգեր, եկել է այն եզրակացության, որ ֆինանսական հոսքերի հիմնական մասը պայմանավորված է Սիրիայում և Իրաքում վերահսկվող տարածքներում գտնվող նավթահանքերի (մոտ 10-ից ավելի) շահագործմամբ, սև շուկայում նավթի վաճառքով (հիմնականում՝ Թուրքիայի օժանդակությամբ): Այդ եկամուտները, ըստ տարբեր աղբյուրների, կազմում են օրական շուրջ 1-2 մլն ԱՄՆ-ի դոլլար[12]: Անշուշտ, ֆինանսական միջոցների մի մասն ստացվում է Պարսից ծոցի միապետություններից՝ կրոնական (սալաֆիական) տարբեր հիմնադրամների, անհատների միջոցով և այլ ուղիներով: Որոշակի եկամուտներ է ապահովում նաև խմբավորման կողմից վերահսկվող տարածքներում իրականացվող նոր հարկային և գնային քաղաքականությունը: Որպես լավ կազմակերպված հանցագործ խմբավորման դասական օրինակ՝ այն մեծ եկամուտներ է ստանում կողոպուտի, բռնության և նման այլ ճանապարհներով: Դրա վառ օրինակ է 2014 թ. հունիսին Մոսուլի զավթման ժամանակ բանկերից հարյուրավոր միլիոն դոլարների առգրավումը: Որոշ աղբյուրների համաձայն՝ «Իսլամական պետության» ֆինանսական կարողությունը հասնում է շուրջ 2 մլրդ դոլլարի, ինչը նրան դարձնում է աշխարհի ամենահարուստ ահաբեկչական խմբավորումը[13]:

«ԻՍԼԱՄԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ» ՈՐՊԵՍ ՍՊԱՌՆԱԼԻՔ. ՉԵԶՈՔԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԸ

«Իսլամական պետության» կողմից Սիրիայում և Իրաքում իր վերահսկողության տակ գտնվող տարածքներում կրոնական և էթնիկական զտումները, սունիի արմատականության տարածումը և այլ պետություններում ջիհադական ցանցի տարածման վտանգը տարաբնույթ սպառնալիքներ են ստեղծում ինչպես տարածաշրջանային, այնպես էլ արտատարածաշրջանային պետությունների համար[14]: Այս համատեքստում ԱՄՆ-ի նախաձեռնությամբ արդեն ակտիվ քայլեր

[12] Տես *Patrick B. Johnston and Benjamin Bahney*. Hitting ISIS Where It Hurts: Disrupt ISIS's Cash Flow in Iraq. «RAND Corporation», 13 August 2014 (http://www.rand.org/blog/2014/08/hitting-isis-where-it-hurts-disrupt-isiss-cash-flow.html); *Howard J. Shatz*. How ISIS Funds Its Reign of Terror. «RAND Corporation», 8 September 2014 (http://www.rand.org/blog/ 2014/09/how-isis-funds-its-reign-of-terror.html):

[13] Տես «How an arrest in Iraq revealed ISIS's $2bn jihadist network». «The Guardian», 15 June 2014 (http://www.theguardian.com/world/2014/jun/15/iraq-isis-arrest-jihadists-wealth-power):

[14] Այս մասին տես *J. Dobbins*. Does ISIL Represent a Threat to the United States? «RAND Corporation», 3 October 2014 (http://www.rand.org/blog/2014/10/does-isil-represent-a-threat-to-the-united-states.html?utm_source=rand_social&utm_medium=hootsuite_rand&utm_

են ձեռնարկվել «Իսլամական պետության» դեմ պայքարի ռազմավարության մշակման ուղղությամբ: Ռազմավարությունը նախատեսում է. ա) օդային հարվածներ Իրաքում (սկսվել են օգոստոսին) և Սիրիայում (սկսվել են սեպտեմբերի վերջին) «Իսլամական պետության» դիրքերին, ինչպես նաև նավթահանքերին ու գլխավոր ենթակառուցվածքներին, բ) տարաբնույթ օժանդակություն Իրաքում «Իսլամական պետության» դեմ պայքարող ցամաքային ուժերին, այդ թվում՝ Իրաքի անվտանգության ուժերին, և Քրդական զինված ուժերին՝ Փեշմերգային, գ) խմբավորման ֆինանսական աղբյուրների ոչնչացմանն ուղղված քայլերի ակտիվացում, դ) տարածաշրջանային դաշնակիցների՝ Թուրքիայի, Հորդանանի, Ծոցի միապետությունների հետ ձեռնարկումների ինտենսիվ համադասում: «Իսլամական պետության» դեմ պայքարի շրջանակում ԱՄՆ-ը նախատեսում է նաև զինել ու վարժեցնել Սիրիայի չափավոր ընդդիմադիր ուժերին[15]: Նախատեսվում է, որ ծրագրի հիմնական մասը կիրականացվի Հորդանանում, սակայն կենտրոններ կլինեն նաև Լիբանանում, Թուրքիայում և այլ պետություններում: Մյուս կողմից՝ Վաշինգտոնը և նրա եվրոպական դաշնակիցները հայտարարել են, որ «Իսլամական պետության» դեմ պայքարում չեն կիրառի ցամաքային ուժեր:

Հարկ է նշել, որ «Իսլամական պետության» դեմ պայքարում սուննի ուժային կենտրոններին (Թուրքիա[16], Սաուդյան Արաբիա և այլն) ներգրավելու խնդիրը բավական բարդ է, քանի որ այդ պետությունները կարող են հույս տածել իրանամետ շիական առանցքը թուլացնելու համար օգտագործել «Իսլամական պետության» ներուժը:

Այս առումով հարկ է նշել ևս մի քանի գործոն, որոնք ազդում են «Իսլամական պետության» դեմ պայքարում Թուրքիայի դերակատարության վրա[17].

• Քրդական գործոնի ակտիվացման վտանգը: Այստեղ հարկ է նկատի ունենալ, որ թուրք-սիրիական սահմանային քրդաբնակ շրջաններում քրդերի և «Իսլամական պետության» զինյալների միջև պայքարը հազարավոր քրդերի ստիպել

campaign=hootsuite_rand_social); *B. M. Jenkins*. Iraq Observations. «RAND Corporation», 19 July 2014 (http://www.rand.org/blog/2014/06/iraqobservations.html?utm_source=rand_social &utm_medium=hootsuite_rand&utm_campaign=hootsuite_rand_social):

[15] Տես «Statement by the President on ISIL». «The White House», 10 September 2014 (http://www.whitehouse.gov/the-press-office/2014/09/10/statement-president-isil-1):

[16] «Իսլամական պետության» վերաբերյալ Թուրքիայի դիրքորոշման մասին տես «Turkish President Erdogan on ISIS and Regional Security» (Video). «Council on Foreign Relations», 22 September 2014 (http://www.cfr.org/turkey/turkish-president-erdogan-isis-regional-security/p33485):

[17] Այդ մասին ավելի հանգամանորեն տես *Gönül Tol*. Is Turkey Finally Ready to Aid Military Strikes Against ISIS? «Middle East Institute», 26 September 2014 (http://www.mei.edu/content/article/turkey-finally-ready-aid-military-strikes-against-isis); *Sinan Ülgen*. Turkey's ISIS Crisis. «Carnegie Europe», 2 October 2014 (http://carnegieeurope.eu/2014/10/02/turkey-s-isis-crisis/hqxm); *Kemal Kirişci*. Turkey's ISIS Dilemma: To Fight or Not to Fight. «Brookings», 3 October 2014 (http://www.brookings.edu/blogs/up-front/posts/2014/10/03-turkey-isil-dilemma-kirisci):

է մեկնել Թուրքիա, ինչպես նաև թուրքական ուժերին՝ ակտիվացնել իրենց գործողությունները թուրք-սիրիական սահմանում: Անկարան պահանջում է Սիրիայի հետ սահմանագծում ստեղծել անվտանգության գոտի: Միևնույն ժամանակ, Թուրքիային անհանգստացնում է «Իսլամական պետության» դեմ սիրիացի քրդերին աջակցության հնարավոր ցուցաբերումը, քանի որ հաշվի է առնում սիրիացի քրդական ուժերի և Թուրքիայի Քրդական բանվորական կուսակցության միջև տարաբնույթ կապերի առկայությունը,

• Իրաքում շիաներին արևմտյան օժանդակության դեպքում Իրանի ազդեցության մեծացման վտանգը,

• Սիրիայում Ասադի դիրքերի ամրապնդման վտանգը,

• Թուրքիայում մեծաթիվ սիրիացի փախստականների առկայությունը, ինչն ավելի է բարդացնում ջիհադական տարրերի բացահայտումը և մեծացնում Թուրքիայում «Իսլամական պետության» կողմից ահաբեկչական նպատակներով նրանց օգտագործման վտանգը:

«Իսլամական պետությունը» լուրջ սպառնալիք է Իրանի համար ոչ միայն կրոնագաղափարական, այլև աշխարհաքաղաքական տեսանկյունից: Իրանի համար մեծ վտանգ է ներկայացնում այն հանգամանքը, որ «Իսլամական պետությունը» պայքարում է արաբական աշխարհում Իրանի հիմնական դաշնակիցների՝ Բաղդադի և Դամասկոսի դեմ: Իրանը տարաբնույթ օժանդակություն է ցուցաբերում Իրաքում «Իսլամական պետության» դեմ պայքարում (ռազմական, ֆինանսական, համապատասխան մասնագետների և հետախուզական տվյալների տրամադրում, Իրաքում իրանամետ շիական ուժերի համախմբում և այլն)[18]: Մյուս կողմից՝ Իրաքում «Իսլամական պետության» հաջողությունները կարող են ստիպել Թեհրանին՝ նվազեցնելու Ասադի օժանդակման համար նախատեսվող ռեսուրսները, մասնավորապես, որոշ աղբյուրների հավաստմամբ, Թեհրանը շուրջ 20.000 շիա զինյալների Սիրիայից տեղափոխել է Իրաք[19]:

Թեհրանը նաև զգուշանում է, որ «Իսլամական պետության» դեմ պայքարը կարող է հանգեցնել Իրաքում ոչ միայն ԱՄՆ-ի դերի աճման, այլև մեծացնել տարածաշրջանի սուննիական պետությունների (Թուրքիա, Սաուդյան Արաբիա և այլն) ներգրավումը իրաքյան զարգացումներում: Ներկայիս զարգացումների համատեքստում Իրաքի տարածքային ամբողջականության խախտումը կարող է որոշակի կերպով ներգործել Իրանի ներքին քաղաքական իրադրության կայունության վրա:

Իրաքում և Սիրիայում ստեղծված իրավիճակի հետևանքով «Իսլամական պետության» դեմ պայքարը ամենայն հավանականությամբ կպահանջի բավական երկար ժամանակ: Կան նույնիսկ մասնագետներ, որոնց կարծիքով լուծումը

[18] Տես ««Iranians are Terrified»: Iran's ISIS Nightmare». «National Interest», 11 July 2014 (http://nationalinterest.org/blog/the-buzz/iranians-are-terrified-irans-isis-nightmare-10856):

[19] Տես *Dalia Dassa Kaye*. The Fallacy of Iranian Leverage: Why the Turmoil in Iraq Will Weaken the Islamic Republic. «Foreign Affairs», 26 June 2014 (http://www.foreignaffairs.com/articles/141605/dalia-dassa-kaye/the-fallacy-of-iranian-leverage):

ոչ թե ռազմական ոլորտում է, այլ կրոնական, քաղաքական, սոցիալական հարթություններում[20]:

Որոշ մասնագետներ էլ համարում են, որ «Իսլամական պետության» և Սիրիայում գործող այլ ահաբեկչական ուժերի (ջաբհաթ ալ նուսրա և Խորասան) վերջնական կործանումը հնարավոր է միայն սիրիական ճգնաժամի կարգավորման և երկրում ուժեղ կենտրոնական իշխանության առկայության պայմաններում: Մյուս կողմից՝ հարկ է հաշվի առնել, որ եթե «Իսլամական պետության» դեմ պայքարում Բաղդադն աջակցում է ԱՄՆ-ին, որն այստեղ ունի զգալի թվով դաշնակիցներ (շիա խմբավորումներ, քրդական ուժեր և այլն), որոնք պատրաստ են «Իսլամական պետության» դեմ ցամաքային գործողություններին, ապա Սիրիայում ԱՄՆ-ը չունի դաշնակից ցամաքային ուժեր և հարվածներ է հասցնում՝ առանց գործողությունները համադասելու Ասադի վարչակարգի հետ: Ներկայումս ԱՄՆ-ը չի համագործակցում նաև Իրանի հետ, որը Իրաքում, Սիրիայում և Լիբանանում ոչ միայն ունի հզոր լծակներ՝ ի դեմս շիա ուժերի, այլև իր դաշնակիցների միջոցով «անհամաչափ պատերազմ» վարելու հարուստ փորձ:

Ըստ որոշ մասնագետների՝ կարող են նաև դժվարություններ լինել՝ կապված օդային հարվածների հետ, քանի որ Սիրիայում «Իսլամական պետության» զինյալները հնարավորություն ունեն տարաշարժեր կատարելու և խառնվելու խաղաղ բնակչության զանգվածների հետ: Կա նաև կարծիք, որ արևելյան Սիրիայում «Իսլամական պետության» դեմ պայքարը կարճաժամկետ հեռանկարում ձեռնտու է հենց Ասադին և կարող է ամրապնդել նրա դիրքերը երկրի արևմտյան ու կենտրոնական շրջաններում[21]:

«Իսլամական պետության» դեմ պայքարի հաջողությունն զգալի չափով կախված է Իրաքում ներքաղաքական իրավիճակի կայունացման հեռանկարներից, այդ թվում՝ Իրաքի նորանշանակ վարչապետ Ալ Աբադիի վարած քաղաքականությունից: Իրաքի ներքաղաքական ճգնաժամի կարգավորումը ենթադրում է երկրի իշխանական, այդ թվում՝ ուժային, կառույցների առանցքային պաշտոններում սուննիական խմբավորումների կողմից պահանջվող ներկայության ապահովում՝ և՛ Իրանի, և՛ Սաուդյան Արաբիայի շահերի հաշվառմամբ, քրդերի հետ հարաբերությունների կարգավորում և այլն: Դա բավական բարդ գործընթաց է, եթե հաշվի առնենք Մերձավոր Արևելքում հատկապես կրոնահամայնքային գոր-

[20] Այս մասին ավելի հանգամանորեն տես «Iraq's Role in the Long War Against ISIS». Interview with *R. C. Crocker*. «Council on Foreign Relations», 25 September 2014 (http://www.cfr.org/middle-east-and-north-africa/iraqs-role-long-war-against-isis/p33502?cid=nlc-public-the_world_this_week-highlights_from_cfr-link2-20140926&sp_mid=47065356&sp_rid=YnBvZ2hvc3lhbkBnb WFpbC5jb20S1):

[21] Ավելի հանգամանորեն տես «The Air Campaign Against ISIS: Understanding What Air Strikes Can Do – and What They Can't». «Council on Foreign Relations», 30 September 2014 (http://blogs.cfr.org/davidson/2014/09/30/the-air-campaign-against-isis-understanding-what-air-strikes-can-do-and-what-they-cant/):

ծոնի օգտագործմամբ ծավալվող Իրան–Սաուդյան Արաբիա աշխարհաքաղաքական դիմակայությունը[22]:

Հարկ է նկատի ունենալ, որ 2011 թվականից 3 մլն սիրիացի լքել է երկիրը, իսկ 6,4 մլն մարդ համարվում է ներքին տեղահանված: Բնակչության այս հսկայական տեղաշարժերը սիրիական զարգացումների պայմաններում հանգեցրել են համայնքային անկլավների ստեղծմանը, ինչը նպաստավոր գործոն է արմատականության տարածման համար: Մյուս կողմից՝ վերջին տարիներին Սիրիայում և Իրաքում տեղի ունեցող զարգացումները հանգեցրել են Հալեպից մինչև Բաղդադ սուննիներով բնակեցված չվերահսկվող հսկայական տարածքի առաջացմանը՝ տարաբնույթ ուժերի և մեծ քանակության զենքի առկայությամբ, ինչը ևս պարարտ հող է սուննի արմատական ուժերի գործունեության համար: Քանի որ «Իսլամական պետությունը» և նմանատիպ գաղափարախոսություն ունեցող ուժերը կարող են միայն տարածվել և ամրապնդվել սուննի բնակչության շրջանում, պարզ է, որ խմբավորման դեմ ռազմավարության հաջողությունը առաջին հերթին ենթադրում է Իրաքի և Սիրիայի սուննի համայնքների հետ աշխատանք՝ «Իսլամական պետության» դեմ պայքարում նրանց ներգրավման նպատակով[23]: Անշուշտ, այդ ամենն իր հերթին հնարավոր է միայն Իրաքում և Սիրիայում ներքաղաքական ճգնաժամի կարգավորման դեպքում՝ այդ պետությունների իշխանական կառույցներում սուննիների շահերի հաշվառմամբ:

«Իսլամական պետության» ստեղծումն ու նրա հակաշիական ուղղվածությունը վտանգ են ներկայացնում նաև Ադրբեջանի աշխարհիկ վարչակարգի, ինչպես նաև Ադրբեջանի շիա առաջնորդների համար, քանի որ Իրաքում շիա–սուննի հակասությունների խորացումը կարող է ազդել Ադրբեջանի վրա, որտեղ բնակչության մեջ գերակշռում են շիաները և առկա են սալաֆիական ուժեր: Հարկ է հաշվի առնել, որ կրոնագաղափարական տեսանկյունից Ադրբեջանի շիաները ավելի մոտ են Իրաքի շիաներին, քան Սիրիայի ալավիներին: Իրաքում են գտնվում շիական աշխարհի գլխավոր սրբավայրերը (Նաջաֆ, Քերբալա), իսկ Իրաքի շիաների հոգևոր առաջնորդ Այաթոլլա Ալի Սիսթանին մեծ թվով հետևորդներ ունի շիա ադրբեջանցիների շրջանում[24]:

Մյուս վտանգը վերջին տարիներին Իրաքում և, հատկապես՝ Սիրիայում պայքարող սուննի արմատական խմբավորումների (հիմնականում՝ Ջաբհաթ ալ

[22] Այս մասին ավելի հանգամանորեն տես *F. Gregory Gause*. Beyond Sectarianism: The New Middle East Cold War. Brookings Doha Center Analysis Paper, July 2014, N 11 (http://www.brookings.edu/~/media/research/files/papers/2014/07/22%20beyond%20sectarianism%20cold%20war%20gause/english%20pdf.pdf):

[23] Այս մասին ավելի հանգամանորեն տես «A Strategy to Defeat the Islamic State, Middle East Security Report 23». Institute for the Study of war, September 2014 (http://www.understandingwar.org/sites/default/files/Defeating%20ISIS.pdf):

[24] Տես Bayram Balci, Kenan Rovshenoglu. Shia-Sunni Sectarianism in the Middle East and Its Echo in Azerbaijan. «Carnegie Endowment for International Peace», 27 June 2014 (http://carnegieendowment.org/2014/06/27/shia-sunni-sectarianism-in-middle-east-and-its-echo-in-azerbaijan):

Նուսրա և «Իսլամական պետություն») շարքերում ադրբեջանցիների ներգրավման փաստն է: Դա կարող է սալաֆի-ջիհադական ահաբեկչական ցանցի ընդլայնման դեպքում լուրջ կերպով սպառնալ Ադրբեջանի ներքին անվտանգությանը՝ հանգեցնելով երկրի բնակչության շրջանում արմատական գաղափարների տարածմանը և ջիհադական ահաբեկչական ցանցի ստեղծմանը: Սալաֆի-ջիհադական ցանցում ադրբեջանցիների ներգրավման և Ադրբեջանում նրանց ցանցային կապերի տարածման դեպքում այդ ուժերը՝ որպես կրոնամոլեռանդ ու մարտունակ ռեսուրս կարող են տարբեր եղանակներով օգտագործվել նաև ՀՀ-ի և ԼՂՀ-ի դեմ:

Հայ ազգի համար այս ենթադրական սպառնալիքի հետ մեկտեղ տեղի են ունենում «Իսլամական պետության» գոյության ու գործունեության հետ կապված իրադարձություններ, որոնք զգալի չափով ողբերգական են մեր ազգի որոշ հատվածների համար: Խոսքը Սիրիայում և Իրաքում, ինչպես նաև մասամբ Լիբանանում, երկար ժամանակ գոյություն ունեցած, ընդունող պետության մեջ լիովին մերված ու մեծ կշիռ ունեցող հայկական համայնքների մասին է: Սիրիայի և Իրաքի տարածքում խալիֆայության ստեղծումը իսլամական արմատականության աճման պայմաններում ավելի է խորացնում տարածաշրջանում քրիստոնյաների նկատմամբ անհանդուրժողությունը և արագացնում Մերձավոր Արևելքի քրիստոնյա համայնքների, առաջին հերթին՝ հայ համայնքի վերացման գործընթացը: Այդ երևույթը, որը տեղի է ունենում Մեծ Եղեռնի 100-ամյակի շեմին և միահյուսվում է ցեղասպանության փաստի ժխտման թուրք-ադրբեջանական քաղաքականությանը, նպատակ ունի քայքայելու մեր առավել կենսունակ համայնքներից մեկը, ոչնչացնելու ցեղասպանության պահպանված նյութական փաստերը և նոր հարված հասցնելու հայ ազգին:

ПОЛИТОЛОГИЯ

СУЩНОСТЬ И ОРГАНИЗАЦИЯ СТРАТЕГИЧЕСКИХ ИГР

М. С. АВЕТИСЯН, кандидат политических наук, Руководитель группы стратегических игр аналитического центра ИНСИ МО РА

РЕЗЮМЕ

В настоящее время стратегические игры (часто называемые также «военными играми») проводятся как в образовательных целях, так и при выработке политических решений. В статье рассматривается методология проведения деловых стратегических игр, которые охватывают широкий спектр областей, таких, как экономика и предпринимательство, оборона, политика и государственное управление и т. д. Основными методами организации стратегических игр являются SWOT-анализ, теория игр, сценарное планирование и т. д.

В статье иллюстрируется опыт передовых западных государственных

(Центр прикладного стратегического обучения Университета национальной обороны США) и негосударственных (Корпорация «Буз Ален Гамильтон») организаций, занимающихся проведением стратегических игр, и подчеркивается важность подобных игр в процессе стратегического планирования, подготовки и принятия управленческих решений в масштабах от предприятия до государства.

НОВЫЕ РЕАЛИИ НА БЛИЖНЕМ ВОСТОКЕ – «ИСЛАМСКОЕ ГОСУДАРСТВО»: КОРНИ, ИДЕОЛОГИЯ, РЕСУРСЫ

Д. М. МАНАСЯН, кандидат исторических наук, старший ученый-аналитик ИНСИ МО РА

РЕЗЮМЕ

Создание на территории Ирака и Сирии «Исламского государства» как новой реалии на Ближнем Востоке придает значительную актуальность проблеме всестороннего освещения данного феномена.

Формирование организации «Исламское государство Ирака и Леванта» (ИГИЛ) непосредственно связано с процессами, возникшими в Ираке после свержения режима Хусейна в 2003 г. Эскалация в этой стране конфликта между шиитами и суннитами, а также начавшийся в 2011 г. сирийский кризис создали благодатную почву для усиления влияния фундаментальных суннитских сил. «Исламское государство» является экстремистской суннитской группировкой, которая придерживается наиболее радикальной идеологии Аль Каиды с салафитской-джихадской направленностью.

Цель «Исламского государства» заключается в объединении «чистых», т. е. адептов суннитского вероисповедания, мусульман мира под религиозной и политической властью основанного им Халифата.

Система управления «Исламского государства» носит иерархический характер с централизацией власти. Находящиеся под его контролем территории в Сирии и Ираке управляются назначенными управляющими и соответствующими органами, которые находятся в подчинении у Халифа. ИГИЛ обладает не только большим числом боевиков, оружия и боеприпасов, но и значительными финансовыми ресурсами, основная часть которых обеспечивается за счет эксплуатации захваченных в Сирии нефтепромыслов и пожертвований со стороны различных салафитских фондов. Как исповедующая экстремистскую суннитскую идеологию организация и непримиримый противник шиитских мусульман, ИГИЛ пользуется поддержкой ряда суннитских государств Ближнего Востока (Турции, Саудовской Аравии и т. д.), которые стремятся посредством этой организации ослабить влияние шиитской оси Иран–Ирак–Сирия.

Под руководством США уже разработана стратегия борьбы против «Исламского государства». Однако эффективность ее осуществления может оказаться под вопросом вследствие неопределенных перспектив урегулирования иракского и сирийского кризисов, тенденций активизации курдского фактора в регионе и продолжающегося противостояния суннитских государств и проиранской шиитской оси.

Создание ИГИЛ оказывает серьезное влияние на безопасностные интересы ряда государств Ближнего Востока.

Для Турции в борьбе против «Исламского государства» существует ряд обстоятельств, заставляющих ее действовать с определенной осторожностью, это, в первую очередь, опасность активизации курдского фактора и усиления влияния Ирана в Ираке, наличие большого количества сирийских беженцев в Турции и т. д.

Для Ирана создание на огромной территории враждебного ему государства является серьезным препятствием для оказания помощи Асаду по суше, а также снижением потенциала этой помощи вследствие необходимости оказания поддержки шиитам Ирака. В то же время развитие ситуации в Ираке и Сирии чревато определенным негативным воздействием на внутриполитическую стабильность ИРИ.

Создание «Исламского государства» и его антишиитская направленность представляют опасность также для светского режима Азербайджана и его шиитских лидеров, поскольку эскалация шиитско-суннитского противостояния в Ираке может оказать влияние и на Азербайджан, где среди населения преобладают шииты, а также наличествуют салафитские силы.

Другая опасность заключается в том, что за последние годы в рядах суннитских радикальных группировок в Ираке и, в особенности, в Сирии (в основном – Джабат аль-Нусра и «Исламское государство») сражается немало азербайджанцев. В случае расширения салафитско-джихадской террористической сети это может стать серьезной угрозой для внутренней безопасности Азербайджана в результате распространения среди его населения идей суннитского радикального фундаментализма и создания джихадской террористической сети.

Создание на территории Сирии и Ирака воинственного халифата в условиях роста исламского радикализма усиливает в регионе нетерпимость в отношении христиан и ускоряет процесс ликвидации их общин на Ближнем Востоке, в первую очередь – армянской общины. Это явление, происходящее накануне 100-летия Геноцида, сплетаясь с турко-азербайджанской политикой отрицания факта геноцида, преследует цель ликвидации одной из наших наиболее жизнеспособных и консолидированных общин, уничтожения сохранившихся материальных свидетельств геноцида и нанесения нового удара армянской нации.

POLITICAL SCIENCE

THE ESSENCE AND ORGANIZATION OF STRATEGIC GAMES

M. S. AVETISYAN, PhD in Political Science, Head of Strategic Gaming Group, Analytical Center, INSS, MOD, RA

SUMMARY

At present, strategic games (often referred to as «war games») are conducted both for educational purposes and policy decision-making. The article considers the methodology of conducting strategic war games that cover a wide range of fields, such as economics and business, defense, politics and public administration, etc. The main methods of organizing strategic war games are SWOT-analysis, game theory, scenario planning, etc.

The article illustrates the practices of leading western public (Center for Applied Strategic Learning, National Defense University, US) and private («Booz Allen Hamilton» Inc.) organizations engaged in the conduct of strategic games, and emphasizes the importance of such games in strategic planning, preparing and making management decisions ranging from the enterprise to the state scale.

NEW REALITIES IN THE MIDDLE EAST – «ISLAMIC STATE»: ROOTS, IDEOLOGY, RESOURCES

D. M. MANASYAN, PhD in History, Senior Research Fellow, INSS, MOD, RA

SUMMARY

The establishment in the territory of Iraq and Syria of the Islamic State as a new reality in the Middle East adds considerable relevance to the problem for comprehensively covering this phenomenon.

The formation of the organization «Islamic State of Iraq and the Levant» (ISIL) is directly related to the processes arisen in Iraq after the overthrow of Saddam's regime in 2003. The escalation of the conflict in this country between Shiites and Sunnis, as well as the Syrian crisis started in 2011, have created a fertile ground for increasing the influence of fundamental Sunni forces. The Islamic State is an extremist Sunni group that adheres to the most radical ideology of Al Qaeda with the Salafi-Jihadist orientation.

The purpose of the Islamic State is to bring together «the pure», i.e. Sunni religious adherents, and the Muslims of the world under religious and political power of the Caliphate founded by it.

The administration system of the Islamic State is hierarchical with the centralization of power. The territories in Syria and Iraq under its control are administered by the appointed governors and the relevant bodies, which are subordinate to the Caliph. The Islamic State has not only a large number of

fighters, weapons and ammunition, but also considerable financial resources, the main portion of which is provided by the exploitation of captured oil fields in Syria and donations from various Salafi funds. As an organization professing Sunni extremist ideology and as an implacable opponent of the Shiite Muslims, the Islamic State enjoys the support of a number of Sunni states in the Middle East (Turkey, Saudi Arabia, etc.) that seek weakening the influence of Shiite Iran – Iraq – Syria axis through this organization.

Under the US guidance a strategy has been developed for the struggle against the Islamic State. However, the effectiveness of its implementation can be called into question due to the uncertain prospects of the settlement of the Iraqi and Syrian crises, the trends of intensification of the Kurdish factor in the region and the continuing opposition of the Sunni states and pro-Iranian Shiite axis.

The establishment of Islamic State has a serious influence on the security interests of a number of states in the Middle East.

In the struggle against the Islamic State there are some circumstances for Turkey that force it to act with certain caution, it is, first of all, the danger of the Kurdish factor intensification and strengthening of Iran's influence in Iraq, the presence of a large number of Syrian refugees in Turkey, etc.

The creation of a hostile state on the vast territory is a serious obstacle for Iran to aid Assad on land, as well as a decrease in the potential of this assistance as a result of the need to support the Shiites of Iraq. At the same time, developments in Iraq and Syria are fraught with some negative impact on Iran's domestic political stability.

The establishment of the Islamic State and its anti-Shiite orientation pose a risk also to the secular regime of Azerbaijan and its Shiite leaders, as the escalation of the Shiite-Sunni conflict in Iraq may have an impact on Azerbaijan too, where the population is mainly Shiites, as well as Salafi forces are present.

Another danger lies in the fact that in recent years within the Sunni radical groups in Iraq and, in particular, in Syria (mainly Dzhabat al-Nusra and the Islamic State) many Azerbaijanis fight. In the case of expansion of the Salafi-Jihadist terrorist network, it can be a serious threat to the internal security of Azerbaijan as a result of the spread of ideas among its population of the Sunni radical fundamentalism and the formation of Jihadist terrorist network.

The establishment in the territory of Syria and Iraq of a militant caliphate in terms of the surge of the Islamic radicalism in the region reinforces the intolerance against Christians and accelerates the process of elimination of their communities in the Middle East, first of all – the Armenian community. This phenomenon, which occurs on the eve of the 100th Anniversary of the Armenian Genocide, interwoven with the Turkish-Azerbaijani policy of denial of the fact of the Genocide, is aimed at the elimination of one of our most viable and consolidated communities, the destruction of the survived physical evidence of the Genocide, and the new strike to the Armenian nation.

ՀՀ ԶՈՒ-ում ծխախոտի գործածումը դադարեցնելու մասին Պաշտպանության նախարարի հրամանի շրջանակներում և համաշխարհային հակածխախոտային օրվա կապակցությամբ, շաբաթ՝ 2014 թ. մայիսի 31-ին, ՀՀ ՊՆ վարչական կենտրոնական շենքում տեղի ունեցավ «Հանրային իրազեկում» խորագրով կլոր սեղան, որին մասնակցում էին ոլորտի անվանի մասնագետներ, ՀՀ Զինուժի ներկայացուցիչներ, մանկավարժներ, հոգեբաններ և տարբեր շահագրգիռ կազմակերպությունների անդամներ:

Եղան զեկուցումներ ու ըստ էության արտահայտվողներ:

Խմբագրությունը նպատակահարմար գտավ տպագրել Պաշտպանության նախարարի ավագ խորհրդական Բաբկեն Վարթանյանի ելույթ-զեկուցումն այն առումով, որ դրանում ՀՀ ԶՈՒ-ի ծխախոտազերծմանը տրված է համազգային հնչեղություն՝ չարի և բարու, մեղքի և առաքինության հավերժական պայքարի, հայ կոչվելու իրավունքի մասին դատողություններով և առնչություններով գաղափարականության և որոշակիորեն՝ Հայ Ազգային Գաղափարախոսության հետ:

ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ ԾԽԱԽՈՏԱԶԵՐԾՈՒՄԸ ԵՎ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ

Բ. Վ. ՎԱՐԹԱՆՅԱՆ, ՀՀ Պաշտպանության նախարարի ավագ խորհրդական, «Հայք» գիտահետազոտական-ծրագրային հասպարտության հիմնադիր տնօրեն

«Չգիտե՞ք, որ Աստծո տաճար եք դուք, և Աստծո Հոգին է բնակվում ձեր մեջ: Եթե մեկն Աստծո տաճարն ապականի, Աստված էլ նրան պիտի ապականի. որովհետև սուրբ է Աստծո տաճարը, որ դուք եք»:
(Ա. Կորնթացիս 3.16-17)

«Կարիքներ կան, որոնց բավարարումը ստրկացնում է մեզ՝ դարձնելով մեզ գերի մեր կրքերի և ցանկությանց: Չկա ավելի աղետալի բան, քան կրքերի ու անիմաստ կարիքների լուծը»:
Գ. Նժդեհ

Ես առաջարկում եմ, կոչ եմ անում և խնդրում եմ, որ Հայ իրականությունում և, մասնավորապես, մեր Հայոց բանակում իսպա՛ռ ծխախոտազերծման խնդիրը նախ դիտվի Հայ Ազգային Գաղափարախոսությամբ, և երկրորդ՝ այն կենսագործվի նույնպե՛ս Հայ Ազգային Գաղափարախոսությամբ:

Ինչո՞ւ: Որովհետև ծխախոտի գործածմամբ անձնական, հասարակական ու ազգային անդրադարձը՝ վնասը՝ որպես երևույթ, առաջին հերթին հավատքով գաղափարին է վերաբերում և գաղափարի հարց է. մեզ՝ հայերիս համար՝ Հայ Ազգային Գաղափարախոսության հարց:

Հետևապես, այս իրականության լույսի ներքո Հայ Ազգային Գաղափարա-

խոսությամբ տոգորված հայը, կինն ու տղամարդը և, խոսելով անմիջականորեն մեր մասին, հայ զինվորականը, պետք է անպայմա՛ն զերծ լինեն ծխախոտից կախվածությունից, ծխախոտամոլությունից, հետևապես և դրա բազմատեսակ, բազմաբնույթ վնասներից: Իսկ եթե արդեն իսկ այդ կախման մեջ են, ապա Հայ Ազգային Գաղափարախոսությունը ամենազորեղ ու ամենաարագ ազդող միջոցն է հայ մարդուն, հայ զինվորականին ազատելու ծխախոտից կախվածությունից և որոշ տեսանկյունից էլ կարելի է ասել՝ ազատելու գերվածությունից:

Ես ամենայն համոզվածությա՛մբ եմ անում այս հաստատումը, սակայն կարող է որևէ մեկին հետաքրքրել այն հարցը և հարկ լինի պարզաբանել, թե ո՛ր գաղափարախոսության մասին է խոսքը. այդ ո՛ր գաղափարախոսությունն է, որ այդպիսի զորություն ունի, արդյոք 70 տարիների ընթացքում մեզ բռնամատուցված մարքսիզմի, լենինիզմի, դարվինիզմի կամ այժմ էլ կապիտալիզմի (գլոբալիզմի) գաղափարախոսությունը: Այս հարցերի պատասխանները «ո՛չ» են, որովհետև այդ «իզմերից» և ոչ մի գաղափար չի կարող մարդուն, մեր դեպքում՝ հա՛յ մարդուն և, մասնավորապես, հա՛յ զինվորականին ազատագրել ծխախոտից գերվածությունից: Այդ մարդասիրական ձեռնարկու՛մը, գո՛րծը կարող է կատարվել (մեր՝ հայերիս դեպքում)՝ Հայ Ազգային Գաղափարախոսությամբ, որը բխում է և հիմնված է Աստուծո հավատքի վրա, որ մեզ շնորհված է Քրիստոսի Ավետարանով և Խաչով:

Եվ, ըստ երևույթին, հարկ է ու օգտակար է միշտ նկատի ունենալ, որ մեր ազգային գաղափարը սկիզբ է առել Հայկ Նահապետի՝ հավատքի նկատմամբ ունեցած վստահությունից ու ըստ այնմ՝ ազատության նկատմամբ հավատարմությունից, որով իր տոհմի ու հետագայում հայ ազգի ազատությունը սակարկության չդրվեց, այսպես կոչված, լավ կյանքի հաճույքների համար: Հայ ազգի նահապետը նախ՝ չհրապուրվեց չարի «լավ կյանքի» խոստումներից ու երկրորդ՝ չվախեցավ ահավոր թշնամու զորության քանակական առավելությունից. հավատքով քաջացավ, զորացավ և գետի՛ն տապալելով անարգ թշնամուն՝ հաղթեց ու ազատ ապրեց: Եվ Աստուծո հավատքո՛վ այդ ազատասիրությունը մեր ազգի մեջ հարատևել, գործել է դարերի ընթացքում, այն սրբագործվել է 301 թ. հայ ազգի Աստվածաշնորհ քրիստոնեացմամբ, կերտել է հոգևոր, քաղաքակրթական ու ազգային-ազատագրական հաղթանակներ ու դրանք հասցրել է մինչև բացառիկ փորձություններով լի մեր ժամանակաշրջանի մայիսյան հաղթանակները, որոնք մենք տոնում ենք:

Արդարև, մեր ազգային այդ գաղափարը՝ Հայ Ազգային Գաղափարախոսությունն է, որ միշտ հաղթանակել է, որի շնորհիվ մենք այսօր կանք և հայերեն ենք մտածում, խոսում: Այսուհետև և մի՛շտ էլ հաղթանակելու է, քանի որ բխում է հավերժական սուրբ Աստվածությունից և հիմնված է դրա վրա Ավետարանով և խաչով: Իսկ ա՛յդ գաղափարախոսությամբ հայի մարմնական հաճույքը չէ առաջնային, այլ՝ հաճույքը հոգեկան ու բարոյական, որոնց պետք է ենթարկվի և ծառայի մարմինը: ՈՒ ահա այս գաղափարախոսությա՛մբ է, որ հայ զինվորականը չի՛ ծխելու, այսինքն՝ չի՛ խեղելու իր մարմինը՝ անպետք դարձնելով այն թե՛ իր անմիջական զինվորական լիարժեք ծառայության համար, և թե՛ ծառայելու

համար իր հոգուն, այսինքն՝ իր իրական *ես-ին*, որպեսզի՝ իմաստավորելով իր այս ժամանակավոր և կարճ կյանքը՝ արժանանա հավերժական կյանքին: Այսինքն՝ գտնելու հավերժական կյանքում իրեն վերապահված հարազատ տեղը իր հարազատ նախնիների, մեծերի, սրբերի մեջ:

ՈՒրեմն՝ ՀՀ պաշտպանության նախարարության ղեկավարության կողմից առաջադրված՝ Հայոց բանակի ծխախոտազերծման նպատակն ու ծրագիրը, նախևառաջ, ***գաղափարական, որով և բարոյական հիմք ունեցող հարց է,*** որն արագ և վերջնականորեն լուծվում է տրամաբանելով՝ ըստ այնմ: ՈՒ մեր հավատքի այդ տրամաբանությամբ, նորի՛ց նշենք, այսպես կոչված կամ դիտված հաճույքի համար, որը իրականում պատրանք է, չի՛ կարելի վնաս հասցնել մարմնին, որով և մարմնավոր կյանքին, որպեսզի դրանով վնաս չհասցվի նաև հոգուն, այսինքն՝ հավերժական կյանքին:

Իսկ եթե հակառակ մեր ազգի հոգևոր, գաղափարական և բարոյական նշված դրույթների, այնուամենայնիվ հարց տրվի, թե *ինչու* չի կարելի, *ինչն* է արգելում մարդու, հայի, հայ զինվորականի ազատ կամքի դրսևորումը՝ վարվելու իր մարմնի հետ ինչպես ինքը կամենա, այդ հարցադրման պատասխանը կլինի. արգելում է մեր հավատքը, եթե, իհարկե, այն իսկապես ունենք և դրան հավատարիմ ենք: Իսկ այդ հավատքով արգելում է նաև մեր մարդկային-ազգային գաղափարը և բարոյականությունը, ու ըստ այնմ՝ մեր գիտակցությունը և ոչ վերջին հերթին՝ մեր խիղճը:

Եվ խնդրի այս իմաստավորմամբ դարձյալ շեշտենք, որ հայության և մեր դեպքում՝ Հայոց բանակի ծխախոտազերծումը ***գաղափարի՛ հարց է: Գաղափար, որով հայ մարդը, զինվորականը պետք է անպայման փոգորված լինի…***

Գոյություն ունեն գաղափարներ, որոնք կենսունակություն են հաղորդում, բարձրացնում են մարդուն, ազգերին, մարդկությանը, և կան գաղափարներ, որոնք կենսազրկում ու անկման են տանում դրանց: Եվ դա լինում է, քանի որ ըստ այդ շինծու, կեղծ և կորստաբեր գաղափարների՝ երկու կյանք չկա, կա մեկ կյանք, այն, որ տեսնում ենք. և չկա նաև անմահ հոգի, հետևապես՝ չկա նաև ուրիշ կյանք, հատկապես՝ չկա երկնային հավերժակա՛ն կյանք: Եվ քանի որ այս տեսանելին է միակ կյանքը, որի իմաստավորումը՝ դրանում առավելագույնը 80-90-100 տարիների ընթացքում այսպես կոչված լավ ապրելը ու վերջին հաշվով՝ հաճույքն է, ապա այն դառնում է առաջնային, հիմնական, հետևապես և բոլոր միջոցներով ու ամեն գնով դրան հասնելը, այսինքն՝ առավել ու առավել հաճույք զգալը, տրամաբանական ու օրինական: Եվ այդպես մտածողը կասի. քանի որ դա օրինական է, ապա իմ մարմնի հետ ես կարող եմ անել ինչ որ կամենամ՝ բացարձակապես ազատորեն (օրինակ՝ որոշ երկրներում երեխային ասվում է. գնա՛, ինչ ուզում ես արա, եթե դա քեզ դուր է գալիս, դո՛ւ ես քո մարմնի տերը և ուրիշ ոչ ոք…): ***Բայց մենք՝ հայերս, ինչպես և մարդկության, բարեբախտաբար, դեռ մեծ մասը, հավատում ենք, որ հոգի ունենք, հոգի՛, որը Մենդելեևի աղյուսակի տարրերից բաղկացած չէ, և «հող էիր՝ հող դարձար» օրինաչափությանը ենթակա չէ, այլ երկնային բաղադրություն ունի, երկնքին է ենթակա և հավերժական է:*** ՈՒ այդ հավատքով ու դրա գաղափարով և բարոյականությամբ է, որ մեր ազգի

դարավոր կյանքի ընթացքում մեր հայրերն ու մայրերը, տատերն ու պապերը իրենց երեխաներին, թոռներին և սերունդներին ուսուցանում, դաստիարակում էին, որ մարմինդ քոնն է, սակայն բարոյական իրավունք չունես մարմնիդ հետ անելու ինչ ուզենաս, առավել ևս՝ ֆիզիկապես և բարոյապես խեղելու ու նաև ժամանակից շուտ շարքից դուրս հանելու, փչացնելու և պատճառ դառնալու, որ մարմինդ ի վիճակի չլինի լիարժեքորեն ու երկնային սահմանվա՛ծ ժամանակով ծառայի հոգուդ, որով և ծառայի այն Տվողին՝ Արարիչ Հորը:

Այս մասին տաղանդավոր զորավար և բացառիկ մտավորական Գարեգին Նժդեհը նաև հետևյալն է ասել. ***«Նա, որ կյանքի նպատակը համարում է կրավորական հաճույքները, որպես հայ չի կարող լինել անչնվեր»***: Մենք էլ ավելացնենք՝ հա՛յ զինվորական, սպա՛, գեներա՛լ, ուզո՞ւմ ենք լինել առավել հզոր ու առավել պիտանի մեր ազգին, երկրին և պետությանը, եթե այո՝ այդ մասին Նժդեհը դարձյալ ասում է. ***«Եղի՛ր պարզ, որպես սպարտացի, քանզի որքան նվազ կարիքներ ունենաս, այնքան ավելի օգտակար կլինես ժողովրդիդ»***: Եվ Նժդեհն ավելացնում է, կրկնե՛մ. ***«Կարիքներ կան, որոնց բավարարումը ստրկացնում է մեզ՝ դարձնելով մեզ գերի մեր կրքերի և ցանկությանց: Չկա ավելի աղեխրալի բան, քան կրքերի ու անիմաստ կարիքների լուծը»***:

Եվ մեր կողմից մի հարց էլ, որը, սակայն, ըստ իս, թվացյալ հարց է, թեև շատերի կողմից կարող է համարվել շատ կարևոր, նույնիսկ՝ էական: Եվ դա ծխախոտազերծության գործում կամքի, կամք ունենալու հարցն է: Սա անվանեցի թվացյալ, քանի որ կամքի առկայությունը և դրա զորությունը (այլ խոսքով՝ կամքի գործելը կամ չգործելը) պայմանավորված է մարդու, մեր դեպքում՝ հայ մարդու, մասնավորապես՝ հայ զինվորականի՛, սպայի՛ գաղափարի, բարոյականության, խղճի ու ըստ այնմ՝ ինչպե՛ս ապրելու պարտաճանաչության գիտակցությամբ: Հայը, հայ զինվորականն ու սպան, եթե քրիստոնյա հավատացյա՛լ է, ունենալո՛վ այդ հավատքից բխող և դրա վրա հիմնված հատկությունները, կունենա նաև հավատքի այն անհրաժեշտ գիտակցությունը, որով ծխախոտամոլության (ինչպես և ամեն տեսակի արատավոր փորձությունների) պարագայում կասի՝ կրկնելով իր Տիրոջ՝ Աստվածորդու խոսքերը՝ «Հետիս գնա, չա՛ր սատանա», ու դեն կվանի իրենից մոլությունը՝ մեղքը…

Եվ դրա հետ մի պահ, եթե երկինք էլ նայի և մանավանդ խաչակնքվի ու ասի. «Օգնի՛ր ինձ, քե՛զ եմ ապավինում, Արարիչ Հա՛յր», ապա (դարձյալ ըստ մեր նախնյաց հավատքի) նա կստանա ***այնպիսի՛ կամքի ուժ և զորություն***, որով ոչ միայն կկարողանա ծխախոտն ընդմիշտ ճզմել, իր կյանքից վերացնել, այլև կկարողանա չար թշնամու տանկերը, հրթիռներն ու ինքնաթիռներն ավելի վստահորե՛ն ճզմել և դրանց սպառնալիքն իսպա՜ռ վերացնել իր ազգից, հայրենիքից և պետությունից:

Մեր Տերն ասել է. «Հավատա՛ և կփրկվես», իսկ մենք, քանի որ հավատում ենք կամ առնվազն, կարելի է ասել, ուզո՛ւմ ենք հավատալ, ***չպետք է վախենանք ծխախոտից***, ինչպես և ամեն չարիքից, ու այնժամ համարձակորեն կվանենք դրանք: Եվ դրա համար լավ կլինի, որ միշտ հիշենք 1563 տարի առաջ՝ 451 թ. մայիսի 25-ին՝ Ավարայրի ճակատամարտի նախօրեին, զորավար Սուրբ Վարդանի

կոչը Հայոց բանակին: Հիշենք և կատարենք: Նա ասաց. «***Վախը*** (մենք էլ ավելացնենք նաև՝ մեր կամքի ու կարողությունների նկատմամբ տարակույսը, կասկածը) ***թերահավատության նշան է, թերահավատությունը մենք վաղուց ենք մերժել, նաև վախը*** (և մեր կամքի և կարողությունների նկատմամբ տարակույսն ու կասկածը) ***թող փախչեն մեր մտքերից ու խորհուրդներից***»:

Եվ մեր կամքը կլինի՛ միշտ զորեղ, անկոտրում ու հաղթական, օգնությամբն Աստուծո: Եվ ամե՜ն փառք Նրա՛ն:

Վերջաբանի փոխարեն

(նախօրոք ասված՝ ի պատասխան հատկապես որոշ անձանց հնարավոր հարցի)

Մոտ 17 տարի առաջ Երևանում, «ՀԱՅՔ» հաստատության մի գիտաժողովում, Արցախի հոգևոր առաջնորդ Պարգև եպիսկոպոս (այն ժամանակ դեռ եպիսկոպոս էր) Մարտիրոսյանի զեկուցումից հետո իմ լավ բարեկամ ու անկեղծ գործակից, Հայաստանի անվանի գիտնականներից մեկը, նկատի ունենալով Պարգև սրբազանի զեկույցում կյանքի մի դրվագի մասին հավատքի հաստատումը, ինձ դիմելով հարց տվեց. «Դուք այս չեղած օրերին մի հոյակապ գիտաժողով կազմակերպեցիք, բայց այդ հաստատումները, որ հնչեցին, մի՞թե կարելի է գիտական համարել»: Պատասխանեցի. «Պարգև սրբազանի զեկույցում հնչած հաստատումները գիտական չեն, դրանք գե՛ղգիտական են»:

– Դուք վստա՞հ եք դրանում:

– Ավելի քան վստահ եմ՝ հավատում եմ:

Հարգելի ընթերցող, նախօրոք ուզում եմ ասել, որ սա՛ է դարձյալ լինելու իմ պատասխանը, եթե որևէ մեկն այս գրության համար ինձ նման հարց տա:

ДУХОВНАЯ БЕЗОПАСНОСТЬ

ИЗБАВЛЕНИЕ ОТ КУРЕНИЯ В АРМЯНСКОЙ АРМИИ И АРМЯНСКАЯ НАЦИОНАЛЬНАЯ ИДЕОЛОГИЯ

Б. В. ВАРТАНЯН, Старший советник Министра Обороны РА, директор-учредитель Научно-исследовательского программного института «Айк»

РЕЗЮМЕ

Курение является злом, не только калечащим физическое здоровье человека, общество, но и суетной утехой, не соответствующей:

– армянской духовности (христианской вере) и истекающей из нее

– Армянской идейности (Армянской национальной идеологии) и

– армянской моральности (армянской национальной моральной системе ценностей).

Именно поэтому избавление от порочной зависимости от курения является также общенациональной проблемой восприятия добра и зла, добродетели и греха, а также пробным камнем для испытания собственной воли, в этом случае – армянского военного.

SPIRITUAL SECURITY

GETTING RID OF SMOKING IN THE ARMENIAN ARMY AND THE ARMENIAN NATIONAL IDEOLOGY

B. V. VARTANYAN, Senior Advisor to the RA Minister of Defense, Founding Director, «Haik» Research-Academic Program Institute

SUMMARY

Smoking is an evil, which doesn't only destroy physical health of the person, the society and in our case – the Armenian military, but also is a vain pleasure, incompatable with the Armenian spirituality: the Christian faith and proceeding from it – the Armenian national ideology and morality. At the same time a smoking-free environment in the Armenian Army will witness even a more strong will of the Armenian military personnel.

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Տեղեկատվական ոլորտում իրագործվող հարձակողական ու պաշտպանական օպերացիաները արդեն վաղուց դարձել են առաջատար պետությունների և, առաջին հերթին, ԱՄՆ-ի վարած պայքարի կարևոր միջոցներից մեկը՝ ստանալով էական տեսական սատարություն: Այս ոլորտում զգալի թվով գիտակիրառական մշակումներ են կատարվում նաև ՀՀ-ում: Սակայն տվյալ առումով հայ իրականության մեջ մեր կարծիքով կա մի կարևոր պրոբլեմ՝ պայմանավորված երկու հանգամանքով: Առաջինն այն է, որ մեր մասնագետները միանգամայն օբյեկտիվ պատճառներով համեմատաբար ուշ ներգրավվեցին այս ոլորտում կատարվող հետազոտական աշխատանքներում, ուստի շատ հետ չմնալու համար աշխատեցին հնարավորինս արագ հաղթահարել սկզբնական փուլերը: Որպես հետևանք՝ մեր գիտական գրականության մեջ գրեթե չկան աշխատություններ՝ նվիրված ոլորտի հիմնարար հասկացությունների պարզաբանմանը: Երկրորդ հանգամանքն այն է, որ ընդհանրապես չկան այդ հասկացությունների համընդհանուր ճանաչում ստացած սահմանումներ:

Այս պրոբլեմի պատճառով ոչ մասնագետը չունի տվյալ ոլորտի հիմնական հասկացությունների մեծ մասի վերաբերյալ հստակ պատկերացում, ինչը դժվարացնում է նրա հետ գործնական աշխատանքը, մինչդեռ տեղեկատվական անվտանգության հիմնական օբյեկտը մարդն է: Դրան գումարվում է նաև հայերենի համապատասխան տերմինաբանության անբավարար մշակվածությունը, երբեմն թույլ տրված հապճեպությունն ու անշրջահայացությունը: Ուստի խմբագրությունը հույս ունի, որ հրապարակելով սույն հոդվածը, որում փորձ է արվում համակարգված ձևով ներկայացնելու տեղեկատվական պայքարի հիմնական հասկացություններն ու առանձնահատկությունները, օգտակար կլինի մեր Զինված ուժերի անձնակազմի համար:

Խմբագրություն

Ա. Ռ. ՂԱԼԵՉՅԱՆ, ՀՀ ԶՈՒ-ի ԳՇ Ռազմավարական պլանավորման վարչության բաժնի պետի պաշտոնի ժամանակավոր կատարող

Հասարակության զարգացման ներկայիս փուլը բնութագրվում է տեղեկութային բնագավառի դերի աճմամբ: Տեղեկութային բնագավառը տեղեկույթ հավաքող, մշակող, փոխանցող և օգտագործող սուբյեկտների, տեղեկույթի պահպանման, մշակման ու հաղորդման կազմակերպատեխնիկական միջոցների, ինչպես նաև այդ գործընթացներում առաջացող հասարակական հարաբերությունների ամբողջությունն է: Այս բնագավառը, կատարելով հասարակական կյանքի համակարգման և կարգավորման կարևոր գործառույթ, ակտիվ ազդեցություն է գործում ազգային անվտանգության քաղաքական, տնտեսական, ռազմական և այլ բաղադրիչների վրա: Ասվածից պարզ է, որ պետության կարևոր խնդիրներից է տեղեկութային անվտանգության ապահովումը:

Տեղեկութային անվտանգության կարևոր մասն է տեղեկատվական անվտանգությունը*, այսինքն՝ տեղեկատվական ոլորտում** ազգային շահերի պաշտպանվածության վիճակը[1]:

Այսպիսով՝ կարող ենք ասել, որ «տեղեկատվական անվտանգությունը» կապված է սուբյեկտի և տեղեկույթի փոխազդեցության, սուբյեկտի մեջ տեղեկույթի թափանցման հետ և մի վիճակ է, որում գլխավորը ոչ թե բուն տեղեկույթի, այլ՝ այդ տեղեկույթը կրող սուբյեկտի անվտանգությունն է: Այսինքն՝ «տեղեկատվական անվտանգությունը» սուբյեկտի (հասարակության) այն վիճակն է, որում տեղեկույթի և սուբյեկտի փոխազդեցության հետևանքով սուբյեկտի մեջ առաջացած փոփոխությունը սպառնալիք չի հարուցում նրա ֆիզիկական ու հոգեկան առողջության, ինչպես նաև հասարակության ու պետության համար: Նույն տերմինով հաճախ անվանում են նաև այն գործընթացը, որը միտված է այդ վիճակի հաստատմանը, մասնավորապես՝ պետության հակազդեցությունը ազգային մշակույթի, ավանդական հոգևոր արժեքների նենգափոխման և հասարակության մեջ քայքայիչ գաղափարների ներդրման սպառնալիքներին[2]:

Նկատենք, որ տեղեկույթի նկատմամբ կա երկակի (դուալիստական) մոտեցում, ըստ որի՝ ժամանակակից հասարակության մեջ տեղեկատվական ոլորտն ունի երկու բաղադրիչ՝ տեղեկութատեխնիկական (մարդու ստեղծած տեխնիկայի արհեստական աշխարհը) և տեղեկութահոգեբանական (կենդանի բնությունը):

---

* Լատիներեն *informatio* (անգլերեն՝ information, ռուսերեն՝ информация) տերմինը ժամանակին հայերեն թարգմանվել էր «տեղեկատվություն» բառով: Եթե նայենք 1950–1960-ական թթ. բառարանները, ապա «ինֆորմացիա» բառի դիմաց տրվում է երկու իմաստ. 1. տեղեկությունների հաղորդում, տեղեկացում, իրազեկում, 2. տեղեկություններ, տվյալներ: Սակայն հետագայում սկսեց գերակայել «ինֆորմացիա» տերմինը երկրորդ իմաստով: Օրինակ՝ գենը կրում է օրգանիզմի զարգացման մասին «ինֆորմացիա», կամ՝ շտեմարաններում պահվում է զանազան բնույթի «ինֆորմացիա» («տեղեկատվություն» տերմինը նման դեպքերում կիրառելի չէ): Անգամ կա էական տարբերություն «տեղեկութային» և «տեղեկատվական» անվտանգությունների միջև: Մեր հանդեսն իր հիմնադրման օրից տարբերակում է «տեղեկույթ» և «տեղեկատվություն» հասկացությունները, սակայն հայերենում, ցավոք, գրանցում է ստացել սխալ՝ «տեղեկատվություն», տերմինը, որն արտահայտում է և՛ «տեղեկույթ», և՛ բուն «տեղեկատվություն» հասկացությունները: Սույն հոդվածում դրանք զանազանված են, ընդսմին «տեղեկույթն» ունի ավելի լայն իմաստ՝ ներառելով նաև «տեղեկատվությամբ» տարածվող տեղեկությունները (տես «Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու»: Ե., 2006, էջ 273 (http://issuu.com/5420/docs/texekatu?e=3902245/2725897)), իսկ «տեղեկատվություն» տերմինը վերաբերում է միայն այն տեղեկույթի հաղորդմանը, որն ի սկզբանե նախատեսված էր հրապարակման համար: – *Խմբ.*:

** Տեղեկատվական ոլորտը ներառում է տեղեկութային բնագավառի այն հատվածը, որը վերաբերում է հասարակության, մարդկային խմբերի, առանձին անհատների մտածելակերպի, կողմնորոշումների, արժեքային համակարգի, աշխարհայացքի, հուզականի վրա ազդեցություն գործելու նպատակով հրապարակման կամ տարածման համար նախատեսված տեղեկույթին:– *Խմբ.*:

[1] Տես «Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության հայեցակարգ», ՀՀ Նախագահի 2009 թ. հունիսի 26-ի հմ. ՆԿ-97-Ն կարգադրության հավելված (http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=52559):

[2] Տես *А. А. Данилевич, Д. В. Лоскутов, О. К. Рогозин*. «Информационная безопасность». «Война и мир». Справочник (http://www.voina-i-mir.ru/chapter/1):

Ինչ վերաբերում է տեղեկատվական անվտանգության ներկայացված սահմանմանը, ապա այն համահունչ է տեղեկատվական ոլորտում ՀՀ ազգային շահերն արտահայտող նպատակներին (հետևաբար՝ ազգային անվտանգության խնդիրներին), այն է՝ «տեղեկատվության բնագավառում մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պահպանումը»[3]:

Պաշտպանության բնագավառում ՀՀ տեղեկատվական անվտանգության ապահովման խնդիրները ներառում են նաև՝

– «հավանական հակառակորդի տեղեկատվաքարոզչական և հոգեբանական գործողություններին ակտիվ հակազդեցությունը, դրա ձևերի ու միջոցների մշտական կատարելագործումը,

– պաշտպանության բնագավառում տեղեկատվական անվտանգության գծով մասնագետների պատրաստումը»[4]:

Տեղեկատվական անվտանգության ապահովման հիմնական միջոցը տեղեկատվական պայքարն է: Այն հիմնված է տեղեկույթի հիմնարար՝ մարդու հոգեկանի վրա ազդելու հատկության վրա. տեղեկույթը, կտրվելով արտացոլման օբյեկտից[5], ստանում է ինքնուրույն գոյություն, դառնում հիշողության բովանդակություն, այսինքն՝ որպես առանձին գործոն մասնակցում է հոգեկան պրոցեսներին՝ կերպափոխվելով պատկերացումների, գիտելիքի, հմտությունների և ունակությունների:

Մարդու նկատմամբ տեղեկութահոգեբանական ազդեցության միջոցների կիրառումը կարող է հանգեցնել՝ ա) մարդու հոգեկանի կամ հոգեբանական առողջության փոփոխության, բ) անձնավորության արժեքների, կենսական դիրքորոշումների, կողմնորոշիչների, աշխարհայացքի փոփոխության[6]: Մարդու վրա տեղեկութահոգեբանական ազդեցությունը կարող է լինել ինչպես կառուցողական, այնպես էլ քայքայիչ բնույթի:

Տեղեկութային հասարակության մեջ առանձնահատուկ կարևորություն է ստանում տեղեկատվական տարածությունը, որն ընդհանուր երևակայական (վիրտուալ) տեղեկութային տարածության այն մասն է, որը նախատեսված է տեղեկատվական փոխազդեցությունների համար: Այսպիսով՝ տեղեկատվական տարածությունը բաղկացած է տեղեկատվական փոխազդեցության մեջ գտնվող օբյեկտներից և այդ փոխազդեցության տեխնոլոգիաներից[7]: Տեղեկատվական

---

[3] «ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարության նախագիծ», հավելված «Հիմնական տերմիններ և հասկացություններ»: «ՀԲ», 2006, հմ. 2:

[4] Տես «Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության հայեցակարգ»:

[5] Տես «Информация». «Философский энциклопедический словарь». М., 1989, с. 222:

[6] Տես *С. А. Зелинский.* Информационно-психологическое воздействие на массовое сознание, СПб., 2008 (http://www.mediagram.ru/netcat_files/108/110/h_1eaef80e566efbfa041bafd712f9 b13c); *Т. И. Ежевская.* Психологическое воздействие информационной среды на современного человека. «Психопедагогика в правоохранительных органах», 2009, № 2 (http://cyberleninka.ru/article/n/psihologicheskoe-vozdeystvie-informatsionnoy-sredy-na-sovremennogo-cheloveka):

[7] Տես *В. С. Игнатов, Д. В. Пименова.* Информационное пространство: структура и

տարածության տեխնոլոգիական ու կազմակերպական բաղադրիչներն են տեղեկատվահեռահաղորդակցային ենթակառուցվածքը (երկրի տարածքում բաշխված համակարգիչները, որոնք որպես ցանց միմյանց հետ կապված են կապի և հեռահաղորդակցության միջոցներով) և մեքենայական կրիչների վրա գտնվող տեղեկատվական ռեսուրսները (տվյալների ավտոմատացված շտեմարանները, Համացանցի վեբ-կայքերում բաշխված տեղեկութային ռեսուրսները և այլն): Տեղեկատվական տարածության մյուս բաղադրիչը՝ տեղեկատվական փոխազդեցության մեջ գտնվող օբյեկտները, ներառում է տեղեկույթի և տեղեկատվության աղբյուրները (քաղաքական գործիչներ, մշակութային ընտրախավի ներկայացուցիչներ, փորձագետներ, հատուկ տեսակի տեղեկույթի (կինո, թատրոն, գովազդ) արտադրողներ, ԶԼՄ-ներ և այլն):

Տեղեկատվական տարածությունն ունի հետևյալ հիմնական հատկությունները.

– մշտապես փոփոխվում է, ուստի մշտական տեղեկատվական գերիշխանության հասնելը շատ դժվար է,

– ունի անհամասեռ կառուցվածք. կան սպառողի ուշադրությունը գրավող և վանող ոլորտներ,

– ունի օտար միջամտությունից պաշտպանված և չպաշտպանված հատվածներ,

– համապիտանի է. չկա մարդկային գործունեության որևէ բնագավառ, որի կենսագործունեությունը չառնչվի տեղեկատվական տարածության հետ,

– ուղղակիորեն կապված չէ իրական տարածության հետ,

– ունի ազգային առանձնահատկություններ:

Տեղեկատվական պատերազմը կարելի է սահմանել որպես օտար տեղեկատվական տարածությունում կատարվող չարտոնված գործունեություն[8]: Տեղեկատվական պատերազմը բնութագրվում է տեղեկութային զենքի կիրառմամբ:

Կան «տեղեկութային զենք» հասկացության բազմաթիվ սահմանումներ: Դրանց մեծ մասում թվարկվում են կա՛մ տեղեկութային զենքի տեսակները, կա՛մ էլ այդ զենքի ազդեցության օբյեկտները[9]: Նման մոտեցումը թերի է, որովհետև տվյալ դեպքում հնարավոր չէ սահմանման մեջ ներառել տեղեկութային զենքի բոլոր (այդ թվում՝ ստեղծվելիք) տեսակները կամ դրա ազդեցության բոլոր օբյեկտները: Տեղեկութային զենքի առավել ընդհանուր սահմանումը հետևյալն է. ալգորիթմ, որը հնարավորություն է տալիս մի տեղեկութային համակարգը կառավարելու մյուսի շահերին համապատասխան՝ օգտագործելով կառավարվող համա-

функции. «Известия высших учебных заведений. Поволжский регион», 2007, № 3 (http://cyberleninka.ru/article/n/informatsionnoe-prostranstvo-struktura-i-funktsii):

[8] Տես նաև *Հ. Բ. Ատանեսյան.* Коммуникативные аспекты политических конфликтов. Е., 2005, сс. 50–75:

[9] Տես, օրինակ, *Ն. Պ. Шеховцев, Ю. Е. Кулешов.* Информационное оружие: теория и практика применения в информационном противоборстве (http://pentagonus.ru/publ/materialy_posvjashheny/2000_nastojashhij_moment/informacionnoe_oruzhie_teorija_i_praktika_primenenija_v_informacionnom_protivoborstve/122-1-0-2215); *Ռ. Шафрански.* Теория информационного оружия (http://psyfactor.org/infowar3.htm):

կարգ մուտք գործող կամ դրանում մշակվող տեղեկույթը, այդ համակարգում կիրառվող տեղեկութային տեխնոլոգիաները կամ միջոցները: Այսպիսով՝ տեղեկութային զենք են այն հատուկ միջոցները, տեխնոլոգիաները և տեղեկույթը, որոնք հնարավորություն են տալիս օտար տեղեկատվական տարածության վրա ազդելու միջոցով զգալի վնաս հասցնելու ընդդիմադիր կողմի կարևոր կենսական շահերին:

Տեղեկատվական պայքարի ոլորտում տեղեկութային զենքը կերպափոխում է թիրախային օբյեկտի* հետ առնչվող տեղեկատվական տարածության համապատասխան հատվածը և այդ միջոցով ուղղորդում օբյեկտի վարքագիծը: Դրա համար տեղեկութային զենքը օտար տեղեկատվական տարածություն է ներմուծում հետևյալ տեսակների տեղեկույթ. ազդեցության օբյեկտին անհայտ, աղավաղված կամ էլ տեղեկույթի մշակման նոր կանոններ (կասկած սերմանելով նախկին կանոնների ճշմարիտության նկատմամբ):

Տեղեկութային զենքը չի ոչնչացնում տեղեկատվական տարածությունը, այլ օգտագործում է այն, հարմարեցնում իրեն՝ ստեղծելով նոր հատվածներ: Տեղեկութային զենքի ազդեցությամբ թիրախային համակարգի գործունեությունը կերպափոխվում է կամ դադարում: Տեղեկութային զենքով խոցվածության աստիճանը չափվում է խոցված տեղեկութային համակարգի այն մասի տեղեկութային ծավալով, որը կա՛մ ոչնչացվել է, կամ էլ ծառայում է օտար համակարգի նպատակներին:

Տեղեկութային զենքի առանձնահատկություններն են.

– կառավարելիությունը, որի շնորհիվ ապահովվում է թիրախի վրա տեղեկութային ազդեցությունը տվյալ ժամանակում և տվյալ մասշտաբով,

– ծածուկությունը, որն էապես դժվարացնում է հակառակորդի կողմից տեղեկութային ազդեցության և ազդեցության աղբյուրի հայտնաբերումը,

– համապիտանիությունը, այսինքն՝ թիրախը հնարավորինս շատ կողմերից կամ շատ թիրախներ խոցելու հնարավորությունը,

– կիրառման արդյունավետության համեմատությամբ փոքր ինքնարժեքը,

– դյուրամատչելիությունը, որի շնորհիվ խիստ դժվար է վերահսկել նրա տարածումը և ազդեցության մասշտաբը:

Տեղեկութային հասարակությանը բնորոշ է տեղեկատվական-հոգեբանական հակամարտությունը, որը տեղեկատվական-հոգեբանական հարաբերությունների երկու կամ ավելի մեծ թվով սուբյեկտների շահերի բախում է, երբ սրվում կամ լուծվում են տեղեկութային տարածությունում իշխանության կամ քաղաքական ղեկավարման հետ կապված հակասությունները**:

---

* Ամերիկյան մասնագետները տեղեկատվական ոլորտի տեղեկութային զենքի ազդեցության առավել կարևոր օբյեկտներ են համարում օտար պետության ժողովրդի և նրա ռազմաքաղաքական ղեկավարության կամքը, ԶՈՒ-ի անձնակազմը, ազգային մշակույթը (տես *А. В. Манойло*. Государственная информационная политика в особых условиях: Монография. М., 2003 (http://www.evartist.narod.ru/text24/0022.htm)):

** Դրանք տեղեկութային հասարակության մեջ եղած բոլոր տեսակի (սոցիալական, քաղաքական, կրոնական, ազգային և այլ) հակասությունների արտացոլումն են:

Տեղեկատվական-հոգեբանական հակամարտության հիմնական փուլերն են.

ա) *տեղեկատվական ընդդիմամարտությունը*, որի ժամանակ սոցիալական սուբյեկտների միջև ծագող հակասությունները լուծվում են աշխատանքային կարգով, կրում են տեղային բնույթ, չեն կարող վնաս հասցնել ազգային շահերին և նույնիսկ կատարում են կարգավորող դեր՝ հնարավորություն ընձեռելով հասարակության խմբերի (միջազգային ասպարեզում՝ պետությունների) միջև հակասությունները հայտնաբերելու դեռ սաղմնային փուլում,

բ) *շահերի բախման փուլ*, երբ հակասությունները կարող են սրվել՝ հակամարտության մեջ ներքաշելով նոր սուբյեկտների, հնարավոր են սադրանքներ: Այս փուլում հակամարտության կողմերի հարաբերությունները համապատասխանում են խաղաղ գոյակցության օրենքներին, սակայն հակամարտությունը լուծել հնարավոր է միայն կողմերի համատեղ փոխհամաձայնեցված ջանքերով,

գ) *տեղեկատվական-հոգեբանական ագրեսիա*, երբ կողմերից մեկի օգտին հակամարտության լուծումը կարող է վնաս հասցնել պետական շահերին: Կողմերը կամ առնվազն նրանցից մեկը նախապատվություն են տալիս հակառակորդի նկատմամբ «ուժ», այսինքն՝ տեղեկութահոգեբանական ազդեցություն կիրառելուն, կողմերը բաժանվում են ագրեսորի և զոհի,

դ) *տեղեկատվական-հոգեբանական պատերազմ*, որի ժամանակ հակամարտությունն ստանում է համընդգրկուն մասշտաբ, կողմերից առնվազն մեկը կիրառում է տեղեկութային զենք:

Հարկ է նշել, որ այս բաժանումը ինչ-որ չափով պայմանական է*, որովհետև փուլերի տարանջատման չափանիշները միանշանակ չեն: Դրանք էլ ավելի անորոշ են դառնում հետևյալ գործոնների ազդեցությամբ[10].

– տեղեկութային հասարակություններով պետությունների թվի աճում,

– համաշխարհային տեղեկութային ենթակառուցվածքների արագ տեմպերով ստեղծում, դրանց վերածում միջազգային հանրության կենսագործունեության հենքային տարրի,

– նշանակալի ձեռքբերումներ մարդու գիտակցության, կամքի և զգացմունքների վրա ազդելու ունակ տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման գործում,

– համակարգչային և հեռահաղորդակցային համակարգերին վնաս հասցնելու ծրագրային-տեխնիկական միջոցների ակտիվ զարգացում,

– մի շարք պետությունների տեղեկութային տարածությունների պաշտպանության միջոցների ու մեթոդների զարգացման անբավարար մակարդակ,

---

* Այդ փուլերը կարող ենք նաև անվանել «տեղեկատվական պայքար» ընդհանուր տերմինով՝ յուրաքանչյուր փուլը բնորոշելով պայքարի ինտենսիվության աստիճանով: Ըստ այդմ՝ պայքարի ինտենսիվության ամենաստորին աստիճանը կհամապատասխանի տեղեկատվական ընդդիմամարտությանը, իսկ ամենաբարձրը՝ տեղեկատվական պատերազմին (տես *С. Гриняев.* Взгляды военных экспертов США на ведение информационного противоборства. «Зарубежное военное обозрение», 2001, № 8):

[10] Տես *Л. В. Воронцова, Д. Б. Фролов*. История и современность информационного противоборства. М., 2006 (http://www.twirpx.com/file/199402/):

– պետությունների մեծ մասի տեղեկատվական քաղաքականությունների անկատարություն:

Տեղեկատվական պայքարի օբյեկտ կարող է լինել տեղեկատվական տարածության ցանկացած տարր կամ հատված, այդ թվում՝ տեղեկութային հասարակության մեջ սոցիալական, քաղաքական ու հոգեբանական հարաբերությունների համակարգերը: Տեղեկատվական պայքարի սուբյեկտներն են՝

– պետությունները, նրանց դաշինքներն ու միությունները, միջազգային կազմակերպությունները,

– ոչ պետական անօրինական (այդ թվում՝ անօրինական միջազգային) զինված կազմավորումներն ու ահաբեկչական, ծայրահեղական, ապակառուցողական կրոնական կազմակերպությունները,

– անդրազգային ընկերությունները,

– մեդիա- կորպորացիաները (ԶԼՄ-ներ) և այլն:

Տեղեկատվական պայքարի նպատակներին հասնելու համար կիրառվում են հետևյալ միջոցները.

ա) *տեղեկատվահոգեբանական իշխում*, որը իրավիճակի վերաբերյալ տեղեկութային անընդհատ հոսքը հավաքելու, մշակելու և բաշխելու ունակությունն է՝ միևնույն ժամանակ խանգարելով հակառակորդին անելու նույնը: Տեղեկատվական իշխումը կարող է սահմանվել նաև որպես օպերացիայի իրականացման այնպիսի տեմպի ապահովման ունակություն, որը գերազանցում է հակառակորդի տեմպը: Տեղեկատվական իշխման կարելի է հասնել յուրային տեղեկատվական աղբյուրների հզորության մեծացմամբ:

բ) *տեղեկութային զենքի անհամաչափության օգտագործում*. դրա շնորհիվ հնարավոր է պայքարել նույնիսկ ավելի հզոր սուբյեկտի դեմ: Տեղեկատվական անհամաչափությունը տեղեկութահոգեբանական ազդեցության և տեղեկութային զենքի առավել կարևոր բնութագրերից է: Դրա շնորհիվ են, օրինակ, ահաբեկչական խմբավորումները կարողանում քարոզչական պատերազմ մղել իրենցից անհամեմատ ավելի հզոր կազմակերպությունների՝ պետությունների դեմ: Տեղեկատվական անհամաչափության պատճառը ցանկացած տեղեկութային տարածության բազմարժեքությունն է և դրանում խոցելի կողմերի մշտական առկայությունը:

Տեղեկատվական պայքարի գլխավոր առանձնահատկություններն են՝

– նախապատրաստական փուլի գաղտնիությունը (այդ թվում՝ տեղեկատվական ուժերն ու միջոցները հակառակորդի հետախուզության համար աննկատ կերպով տարաշարժելու հնարավորությունը),

– հարվածի հանկարծակիությունը,

– քողարկման և իրական նպատակների թաքցման համար նպաստավոր պայմանները, ուրիշի անունից գործելու հնարավորությունը,

– տեղեկատվական ագրեսիայից նյութական հետքեր չմնալը, ինչի շնորհիվ հնարավոր չէ պարզել և պատասխանատվության ենթարկել ագրեսորին,

– հակառակորդին հեռվից (առանց նրա տարածք ներխուժելու) հարվածելու հնարավորությունը,

– տեղեկատվական հարձակման դեմ հակառակորդ պետության ռազմական ներուժի անզորությունը,

– տեղեկատվական հարվածի ծանրության աստիճանի համեմատելիությունը հակառակորդի տարածքում ռազմական գործողությունների հետևանքների հետ (օրինակ՝ խուճապ, տեխնածին աղետների առաջացում, ֆինանսաբանկային համակարգի կազմալուծում և այլն),

– տեղեկատվական հարվածին համարժեք պատասխան տալու դժվարությունը,

– դաշինքների ու միությունների ստեղծման դժվարությունը, հաճախ բարեկամ – թշնամի հստակ սահմանազատման անհնարինությունը,

– բնակչության տարբեր խավերի վրա տեղեկութային ազդեցության տարբերակվածությունը՝ պայմանավորված լսարանի առանձնահատկություններով,

– տեղեկութային ազդեցության կործանարար հետևանքների ակնառու վկայություններ չլինելը. բնակչությունը չի էլ զգում, որ ենթարկվում է այդպիսի ազդեցության, ուստի չի կարողանում գործի դնել պաշտպանական մեխանիզմները:

Տեղեկատվական պայքարի կարևոր բաղադրիչն է հակազդեցությունը հակառակորդի տեղեկութահոգեբանական ազդեցությանը: Վերջինիս չեզոքացումը ենթադրում է հետևյալ հիմնական միջոցառումները.

ա) *կանխարգելում.* երբ բացահայտվում են սպառնալիքները, և գնահատվում է քայքայիչ տեղեկութահոգեբանական ազդեցության միջոցների կիրառման վնասը: Առաջնահերթ է հակառակորդի տեղեկութահոգեբանական ազդեցության ուժերի և միջոցների ու հարվածի ուղղության պարզումը,

բ) *կանխարգելում.* ենթադրում է միջոցառումներ, որոնք նվազեցնում են հակառակորդի տեղեկութահոգեբանական ազդեցության նկատմամբ բնակչության ընկալունակությունը: Դրա հիմնական գործիքը հակաքարոզչությունն* է և բնակչությանը այդ ազդեցության իրական նպատակների, միջոցների ու հնարավոր հետևանքների պարզաբանումը,

գ) *բնակչության վրա տեղեկութահոգեբանական ազդեցության ընդհատում (թուլացում),* օրինակ՝ քարոզչական նյութերի ոչնչացում, հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման դադարեցում և այլն,

դ) *տեղեկութահոգեբանական ազդեցության հետևանքների վերացում.* այդ ազդեցության արդյունավետության պատճառների և տեղեկութահոգեբանական պաշտպանության խոցելի տեղերի բացահայտում, հոգեվերականգնողական միջոցառումներ և այլն:

Տեղեկատվական պայքարը պետք է բավարարի հետևյալ պահանջներին.

– ակտիվություն, որն ապահովվում է նպատակների ու խնդիրների որոշակիությամբ, կանխիչ ազդեցությունների կազմակերպմամբ,

* Հակաքարոզչության հնարներից են՝ ա) հովանոցի հնարը, երբ թույլ չի տրվում, որ օտար հաղորդագրությունը հասնի հասցեատիրոջը, բ) ճագարի հնարը, երբ հաղորդագրությունը չեզոքացվում է այլ հաղորդագրությունների հանրագումարային ազդեցությամբ, գ) անիվի հնարը, երբ հաղորդագրությունը զանգվածային գիտակցության հետին պլան է մղվում ավելի ուշագրավ հաղորդագրության հրապարակ նետումով, դ) փոխարինման հնարը, երբ հերքումը հիմնվում է ոչ թե հաղորդագրության բովանդակության, այլ աղբյուրի վարկաբեկման վրա, և այլն:

– հրատապություն և կոնկրետություն, որոնք ապահովվում են առավել կարևոր պրոբլեմներին նպատակամիտվածությամբ,

– մշտականություն, ինչը ենթադրում է բնակչության բարոյահոգեբանական վիճակի վերաբերյալ տեղեկույթի մշտական հավաքում և վերլուծություն՝ հակազդեցության ընթացիկ խնդիրներին համապատասխան,

– դինամիկություն և պատեհաժամություն, որոնք ապահովվում են իրավիճակի փոփոխություններին արագ արձագանքմամբ,

– մատչելիություն, ինչը ենթադրում է պարզ՝ բնակչության համար հասկանալի, փաստարկների օգտագործում,

– զգացմունքների հարուցում, այսինքն՝ ազդեցություն ոչ միայն մարդկանց բանականության, այլև զգացմունքների վրա:

Տեղեկութահոգեբանական հակազդեցության արդյունավետությունն ապահովվում է շնորհիվ այն բանի, որ պլանավորվում և իրականացվում է անընդհատ և համալիր կերպով՝ քայքայիչ ազդեցության առանձնահատկությունների, բնակչության իրական բարոյահոգեբանական վիճակի և ստեղծված իրավիճակի հաշվառմամբ:

Այսպիսով՝ համաշխարհային զարգացման արդի փուլը էական փոփոխություններ է առաջ բերել անվտանգության նկատմամբ ավանդական մոտեցումներում: Եթե նախկինում վճռորոշ էին պետությունների մրցակցության ոչ միայն ռազմական, այլև քաղաքական, տնտեսական հնարավորությունները, ապա այսօր առաջ են եկել նոր պարամետրեր, որոնք պայմանավորում են ազգային անվտանգության համակարգում պետության տեղեկատվական ոլորտի անվտանգության տեղն ու դերը[10]:

[10] Տես «Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության հայեցակարգ»:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Воздушная армия кибер-операций КК ВВС США» (http://pentagonus.ru/publ/22-1-0-1069).
2. *Г. Дерен*. Грядущая цифровая война (http://pentagonus.ru/publ/22-1-0-1249).
3. *В. Жуков*. Взгляды военного руководства США на ведение информационной войны (http://pentagonus.ru/publ/22-1-0-175).
4. *О. А. Остапенко, П. А. Маслихов*. Обеспечение информационно-психологической безопасности. Воронеж, 2013 (http://kafedrasib.ru/index.php/o-kafedre/izdaniya-kafedry/uchebnye-posobiya/352-o-a-ostapenko-p-a-maslikhov-obespechenie-informatsionno-psikhologicheskoj-bezopasnosti-ucheb-posobie).
5. *Г. Почепцов*. Информационные войны. М., 2000.
6. *А. Н. Резник*. Информационное противоборство в условиях вооруженного конфликта: содержание, технологии, тенденции. Диссертация на соискание ученой степени кандидата политических наук. М., 2004 (http://www.dissercat.com/content/informatsionnoe-protivoborstvo-v-usloviyakh-vooruzhennogo-konflikta-soderzhanie-tekhnologii-).

ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ ՀԱՅԱՏԵՑՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՏԱՎՈՐՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆՈՐՄԵՐԻ ԽԱԽՏՈՒՄ ՆԱԽԱԳԱՀ ԻԼՀԱՄ ԱԼԻԵՎԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ

Ա. Գ. ԷԼԻԲԵԳՈՎԱ, քաղաքական գիտությունների թեկնածու, ՀՀ Նախագահի աշխատակազմի «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի ծառայության պետ

Ժամանակակից աշխարհում հաճախ հանդիպում ենք այնպիսի երևույթի, ինչպիսին «օտարատեցությունն» է, օտարերկրացիների կամ օտար մշակույթի նկատմամբ տածած ատելությունը, հիվանդագին վախը[1]: Հաճախ արտաքին թշնամու կերպարը միավորում և համախմբում է հասարակությանը, իսկ կոնկրետ օբյեկտի վրա բացասական ընկալումների ու զգացումների կենտրոնացումը շեղում է ուշադրությունը ներքին պրոբլեմներից:

Տվյալ միտումը կարելի է դիտարկել հայերի և Հայաստանի մասին Ադրբեջանի բարձրաստիճան անձանց այն պաշտոնական հայտարարությունների օրինակով, որոնք հեղինակը առանձնացրել է Ադրբեջանի Նախագահ Իլհամ Ալիևի ելույթների պաշտոնական լրատուի մշտազննման ընթացքում: Հեղինակի կարծիքով՝ առանցքային գործոնը անկախության տարիներին Ադրբեջանի ղեկավարության պաշտոնական հռետորաբանության մեջ հայատեցության տարածման հարցի իրավական կողմն է:

Հետազոտության ընթացքում հեղինակը կատարել է 2004–2014 թթ. Ադրբեջանի Նախագահ Ի. Ալիևի պաշտոնական ելույթների բովանդակային վերլուծություն, որի նպատակը հայերի ու Հայաստանի Հանրապետության հանդեպ ռասիզմի և օտարատեցության տարրեր պարունակող դրույթների հայտնաբերումն էր: Ընդսմին պարզվեց, որ Ի. Ալիևի արտահայտությունները խախտում են մի շարք միջազգային նորմեր և պարտավորություններ, որոնք Ադրբեջանն ստանձնել է՝ անդամակցելով տարբեր կազմակերպությունների (ՄԱԿ, ԵԱՀԿ, Եվրոպայի Խորհուրդ):

Միջազգային իրավունքը միանգամայն հստակ կերպով է որակում ռասիզմը և օտարատեցությունը՝ դրանք հայտարարելով ժամանակակից հասարակության համար անթույլատրելի երևույթներ: Ադրբեջանի իշխանությունների ռասայական բնույթի ցանկացած արտահայտություն կամ գործողություն պետք է ունենա միջազգային-իրավական հետևանքներ և դիտվի որպես այն պարտավորությունների խախտում, որոնք երկիրն ստանձնել է ըստ միջազգային պայմանագրերի, այդ թվում՝ ՄԱԿ-ի, ԵԱՀԿ և Եվրոպայի Խորհրդի հիմնարար դրույթների, որոնք

[1] Տես *Է. Դ. Աղայան,* Արդի հայերենի բացատրական բառարան: Ե., 1976, էջ 1594, *նաև*՝ «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», հ. 4: Ե., 1980, էջ 792:

արգելում են պատերազմի և ագրեսիայի քարոզչությունը: Մասնավորապես՝ համաձայն ՄԱԿ-ի Կանոնադրության և Միջազգային իրավունքի սկզբունքների մասին Դեկլարացիայի՝ Ագրեսիվ պատերազմը խաղաղության դեմ ուղղված հանցագործություն է, որի համար նախատեսվում է միջազգային իրավունքով սահմանված պատասխանատվություն: Միավորված ազգերի կազմակերպության նպատակների և սկզբունքների համաձայն՝ պետությունները պարտավոր են ձեռնպահ մնալ ագրեսիվ պատերազմների քարոզումից[2]:

Մինչդեռ Ադրբեջանի ղեկավարության ռազմատենչ հռետորաբանությունը ագրեսիվ պատերազմի քարոզման վառ օրինակ է: Ահա Ադրբեջանի նախագահ Ի. Ալիևի հայտարարություններից մեկը. «Մենք բանակցություններ կվարենք այնքան ժամանակ, քանի դեռ հույս կունենանք, որ այդ միջոցով կվերականգնվի երկրի տարածքային ամբողջականությունը: Եթե տեսնենք, որ դա անհնար է, Ադրբեջանական պետությունը իր տարածքային ամբողջականությունը կվերականգնի՝ օգտագործելով ռազմական եղանակը»[3]:

Քանի որ Ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման վերաբերյալ բանակցությունները շարունակվում են առ այսօր և չեն տալիս Ադրբեջանի համար ցանկալի լուծումը, այդ պետության նախագահը հաճախ է դիմում ագրեսիա ձեռնարկելու սպառնալիքի: Որպես օրինակ բերենք Ի. Ալիևի հայտնի հայտարարությունն այն մասին, թե ադրբեջանցիների հիմնական թշնամիներն են «համաշխարհային հայությունը և նրա ազդեցության տակ գտնվող երկերեսանի, կոռուպցիայի և կաշառակերության մեջ թաղված քաղաքական գործիչները»[4]:

Հարկ է նշել մի կարևոր հանգամանք. Ադրբեջանի պաշտոնատար անձանց ռազմատենչ հայտարարությունները փաստորեն հակասում են ոչ միայն միջազգային իրավունքին, այլև այդ երկրի ազգային օրենսդրությանը, համաձայն որի՝ դրանք կարող են որակվել որպես «սադրանք ցեղասպանության իրագործմանը» (Ադրբեջանի Քրեական օրենսգրքի 104 հոդված) և «ագրեսիվ պատերազմ սանձազերծելու հրապարակային կոչեր» (Ադրբեջանի Քրեական օրենսգրքի 101-րդ հոդված)[5]:

---

[2] «3. Բոլոր անդամներն իրենց միջազգային վեճերը կարգավորում են խաղաղ միջոցներով, այնպես, որ վտանգի չենթարկվեն միջազգային խաղաղությունը, անվտանգությունն ու արդարությունը: 4. Բոլոր անդամները միջազգային հարաբերություններում ձեռնպահ են ցանկացած պետության տարածքային ամբողջականության կամ քաղաքական անկախության նկատմամբ և կամ Միավորված ազգերի նպատակներին անհարիր որևէ այլ ձևով ուժի գործադրումից կամ դրա սպառնալիքից» (տես «Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրություն», գ. 1 «Նպատակները և սկզբունքները», հոդ. 2, կետ 3, 4: Ե., 2005, էջ 6):

[3] «Речь Ильхама Алиева на церемонии прощания с Национальным Героем Мубаризом Ибрагимовым и старшим лейтенантом Фаридом Ахмедовым», 07.11.2010 (http://ru.president.az/articles/1013).

[4] «Заключительная речь Ильхама Алиева на конференции, посвященной итогам третьего года реализации «Государственной программы социально-экономического развития регионов Азербайджанской Республики в 2009-2013 годах»», 28.02.2012 (http://ru.president.az/articles/4423).

[5] Տես «Уголовный кодекс Азербайджанской Республики» 31.01.2005 (http://www.legislationline.org/ru/documents/action/popup/id/14108/preview):

Այս սահմանմանը համապատասխանող հատկանշական օրինակ է Ադրբեջանի Նախագահ Իլհամ Ալիևի հետևյալ արտահայտությունը. «Մենք հետագայում ևս Հայաստանին պետք է պահենք հնարավորինս մեկուսացված վիճակում… Ես բազմիցս եմ ասել, որ պատերազմը շարունակվում է: Ավարտվել է պատերազմի առաջին փուլը: Եթե Հայաստանը չի ցանկանում, որ սկսվի երկրորդ փուլը, ապա պետք է ճիշտ հետևություն անի, կամավոր կերպով հեռանա գրավված հողերից: Միգուցե այդ դեպքում քարտեզի վրա ապագայում կարող է մնալ անկախ հայկական պետությունը»[6]:

Ինչ վերաբերում է միջազգային իրավունքի նորմերին, ապա թշնամանքի լեզուն արգելված է մի շարք միջազգային փաստաթղթերով: Այսպես. «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի» 7-րդ հոդվածի համաձայն՝ «Բոլոր մարդիկ սույն Հռչակագրով հաստատված հավասարությունը խախտող որևէ խտրականությունից, սադրանքից պաշտպանվելու հավասար իրավունք ունեն»[7]: «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային համաձայնագրի 20-րդ հոդվածի 2-րդ կետում ասված է, որ «Ազգային, ռասայական կամ կրոնական ատելության ցանկացած քարոզչություն, որն իրենից ներկայացնում է խտրականության, թշնամանքի կամ բռնության հրահրում, արգելվում է օրենքով»[8]:

Միջազգային պրակտիկայում, բացի ընդհանուր մոտեցումներից, կան նաև փաստաթղթեր, որոնք կոնկրետ կերպով արձանագրում են Ադրբեջանի Հանրապետությունում հակահայկական քարոզչության և օտարատեցության առկայությունը: ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների բյուրոյի՝ «Ադրբեջանի կողմից հակահայկական քարոզչությունը և ատելության տարածումը՝ որպես բանակցային գործընթացի համար լուրջ խոչընդոտ» վերնագրով հատուկ զեկուցման մեջ նշվում է հետևյալ կարևոր փաստը. «Հայերի նկատմամբ ազգամիջյան ատելության և Հայաստանի Հանրապետության նկատմամբ ատելություն բորբոքող ադրբեջանական բարձրաստիճան քաղաքական ղեկավարության հայտարարությունները խախտում են այն բոլոր դրական պարտավորությունները, որոնք շարադրված են Կոնվենցիայի 2-րդ հոդվածում, մասնավորապես՝ «ռասայական խտրականությունը դատապարտող» ընդհանուր պարտավորությունը, «բոլոր հնարավոր միջոցներով և առանց հապաղման ձգտել …. բոլոր ռասաների միջև փոխըմբռնմանը նպաստելուն» ընդհանուր պարտավորությունը»[9]:

---

[6] «Речь Ильхама Алиева на официальном приеме по случаю национального праздника Азербайджана – Дня Республики», 28.05.2014 (http://ru.president.az/articles/11948).

[7] Տես «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր», 10 դեկտեմբերի 1948 թ., հոդ. 7 (http://www.un.am/res/Human%20Rights/Armenian%20Documents/UDHR_arm.pdf):

[8] Տես «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային համաձայնագիր, 16 դեկտեմբերի 1966 թ., հոդ. 20, կետ 2 (http://www.idcarmenia.am/sites/default/files/attachments/dahsnagir.pdf):

[9] Տես «Anti – Armenian propaganda and hate dissemination carried out by Azerbaijan as a serious obstacle to the negotiation process» (HDIM.DEL/382/08), 7 October 2008 (http://www.osce.org/odihr/34195?download=true):

ՄԱԿ-ի Ռասայական խտրականության վերացման կոմիտեի նիստում (2005 թ. մարտի 15) մտահոգություն է արտահայտվել հայերի ճակատագրի վերաբերյալ, որովհետև նրանք Ադրբեջանում ենթարկվում են հալածանքների և թաքցնում իրենց ազգային ինքնությունը, քանի որ Ադրբեջանի Հանրապետության կողմից վերահսկվող տարածքում 1999 թ. անցկացված մարդահամարի ժամանակ միայն 650 մարդ է իրեն հայ անվանել[10]: Կոմիտեն Ադրբեջանին հանձնարարել է հետազոտություններ կատարել ռասայական խտրականության դրսևորման, մասնավորապես՝ էթնիկ հայերի հանդեպ դրա կիրարկման դեպքերի արդյունավետ գնահատման և վերլուծության նպատակով[11], ինչը, այդուհանդերձ, չի արվել:

Ռասայականության և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովը, ուսումնասիրելով Ադրբեջանում բնակվող էթնիկ հայերի պրոբլեմները, 2011 թ. հաշվետվության մեջ[12] նշում է, որ երկրում կան ազգությամբ հայեր, որոնք զրկված են որպես Ադրբեջանի քաղաքացիներ իրենց իրավունքներն իրացնելու հնարավորությունից և, մասնավորապես, սոցիալական պաշտպանությունից:

Ադրբեջանական հասարակության մեջ հայերի պիտակավորման մասին է հանգամանորեն գրում իր հետազոտության մեջ նաև փորձագետ Սևիլ Հուսեյնովան[13]: Նա նշում է, որ Ադրբեջանում «հայ լինելը» գործնականում նշանակում է լինել «թշնամի» կամ «ուրիշ»:

Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային համաձայնագրի համատեքստում այս պրոբլեմին է անդրադարձել նաև Ադրբեջանի գծով Խորհրդատվական կոմիտեն: Իր առաջին եզրակացության մեջ խորհրդատվական կոմիտեն Ադրբեջանի իշխանություններին կոչ է արել հակազդեցություն ցուցաբերելու հայկական ծագում ունեցող անձանց նկատմամբ անհանդուրժողության դրսևորմանը և զանգվածային լրատվության միջոցներով ատելության ու անհանդուրժողության տարածմանը: Փաստաթղթի համաձայն՝ Ադրբեջանի իշխանությունները պետք է նաև կանխեին որոշ խմբերի նկատմամբ նախապաշարմունքների և նրանց պիտակավորման տարածումը[14], ինչը մինչ օրս նույնպես չի արվել:

---

[10] Տես «Summary Record of the 1691st Meeting» (CERD/C/SR.1691), 15 March 2005 (http://www.bayefsky.com//summary/azerbaijan_cerd_c_sr_1691_2005.pdf):

[11] Տես «Concluding observations of the Committee on the Elimination of Racial Discrimination: Azerbaijan» (CERD/C/AZE/CO/4), 14 April 2005 (http://docstore.ohchr.org/SelfServices/FilesHandler.ashx?enc=6QkG1d%2fPPRiCAqhKb7yhsgoRhGEAt5PtvE5DMv2FiPf6vS2Paad5VjIOdskpMvV%2frdfAMleaWz3l0uxlj4vRDQPUY5Ga1cL43dDkwrJQdaZS0XIRSsGvAIhoeFHGCdYr):

[12] Տես «ECRI обеспокоена судьбой этнических армян, живущих в Азербайджане». «Xenophobia prevention initiative», 01.06.2011 (http://stopxenophobia.org/?p=2366):

[13] Տես *Sevil Huseynova.* Ethnicity As Social Status And Stigma: Armenians In Post-Soviet Baku. Published by Heinrich Böll Foundation (http://ge.boell.org/downloads/Sevil.pdf):

[14] Տես «Advisory Committee on the Framework Convention for the Protection of National Minorities. Opinion on Azerbaijan» (ACFC/INF/OP/I(2004)001). Adopted on 22 May 2003, Strasbourg, 26 January 2004 (http://www.refworld.org/publisher,COESFCPNM,,,447d91c34,0.html):

Հատկանշական է, որ Թվիտեր սոցիալական ցանցում Ադրբեջանի նախագահի միկրոբլոգում տեղադրված նրա հակահայկական արտահայտությունները ևս ենթակա են Կիբեռհանցավորության մասին կոնվենցիային, որ լրացուցիչ արձանագրության մեջ հստակ կերպով նշվում է համակարգչային միջոցներով ռասիզմի և օտարատեցության գործողությունների կատարման քրեականությունը[15]: Օրինակ՝ ինչպես նշում է ամերիկյան *«Գլոբալ փոսթ»* (*«Global Post»*) առցանց թերթը, Թվիտերում Իլհամ Ալիևի ընթերցողները կարճ ժամանակահատվածում ստացել են Հայաստանի վերաբերյալ նրա 30-ից ավելի հաղորդագրություններ, որոնք որոշակիորեն դիվանագիտական չէին և, ըստ էության, կարող են համարվել վիրավորական[16]:

Քաղաքագիտական տեսակետից Ադրբեջանում օտարատեցությունը հնարավորություն է տալիս հեշտությամբ ձեռնածության ենթարկելու հասարակական գիտակցությունը՝ ուշադրությունը իրական պրոբլեմներից շեղելով ձեռնածուին ձեռնտու թիրախի վրա: Կոնկրետ պրոբլեմից հասարակության ուշադրությունը շեղելու համար Ադրբեջանում հաճախ օգտագործվում է «արտաքին թշնամու» կերպար, որի դերում հանդես են գալիս հայերը: Օրինակ՝ Ադրբեջանում 2010 թ. խորհրդարանական ընտրությունների ժամանակ լուրջ խախտումների մասին համաշխարհային ԶԼՄ-ների բազմաթիվ հրապարակումների պարագայում Նախագահ Ալիևը օգտագործում է ուշադրությունը շեղելու մեթոդը. «Արտասահմանյան մամուլում կային Ադրբեջանի մասին բավական թվով իրականությունը չարտացոլող, միանգամայն կեղծ, զրպարտչական բնույթի հաղորդագրություններ: Մենք հետաքրքրվեցինք այդ հանգամանքով և համոզվեցինք, որ դրանց մի զգալի մասը հրապարակված է հայկական լոբբիի պատվերով»[17]:

Միևնույն ժամանակ, Ադրբեջանում օտարատեցության բռնի սերմանումը չի կարող արդարացվել խոսքի և արտահայտությունների ազատությամբ, քանի որ դրա նորմերը և հիմքային իրավունքները նույնպես կարգավորվում են միջազգային իրավունքով: Այսպես. Եվրոպայի Խորհրդի Խորհրդարանական վեհաժողովն ընդունեց քաղաքական հռետորաբանության մեջ ռասիզմի, օտարատեցության և անհանդուրժողության դրսևորումների մասին բանաձև[18], որում նշվում է, որ ՄԻԵՀ-ի 10-րդ և 11-րդ հոդվածներում նշված իրավունքները կարող են

[15] Տես «Additional Protocol to the Convention on Cybercrime, concerning the criminalisation of acts of a racist and xenophobic nature committed through computer systems». Strasbourg, 28.01.2003 (http://conventions.coe.int/Treaty/en/Treaties/Html/189.htm):

[16] Տես «Azerbaijan's president launches Twitter rant against Armenia». «Global News Blog», 20.11.2012 (http://www.globalpost.com/dispatches/globalpost-blogs/weird-wide-web/azerbaijan-president-ilham-aliyev-twitter-rant-armenia):

[17] «Речь Президента Азербайджана Ильхама Алиева в торжественном собрании, посвященном 60-летию Национальной Академии Наук, Баку», 15 декабря 2005 г. (http://archive.today/9yHj):

[18] Տես «О проявлениях расизма, ксенофобии и нетерпимости в политической риторике» (Резолюция № 1345), 29 сентября 2003 г. (http://www.coe.int/t/r/parliamentary_assembly/%5BRussian_documents%5D/%5B2003%5D/% 5BSept_2003%5D/Res%201345%20Rus.asp):

սահմանափակվել այնպես, որ չհանգեցնեն ռասիզմի, օտարատեցության կամ անհանդուրժողության առաջացմանը, հրահրմանը, տարածմանը, քարոզմանը, արդարացմանը կամ հիմնավորմանը:

Իր գաղափարախոսության բռնի սերմանման համար անհատապաշտական համակարգը առավել հաճախ ձգտում է հասարակության մեջ վախ տարածելու: Ահաբեկչության այդ մարտավարությունը ենթադրում է վախի մթնոլորտի, անկայունության և մարդկանց մեջ անվտանգության պահանջմունքի ստեղծում[19]:

Նման մարտավարություն հաջողությամբ կիրառում է նաև պաշտոնական Բաքուն: Մի դրվագ Նյու Յորքում 2012 թ. մայիսի 4-ին կայացած ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի նիստում Ադրբեջանի Նախագահ Իլհամ Ալիևի հայտարարությունից. «Ադրբեջանը տարբեր ճանապարհներով է ենթարկվել ահաբեկչության: Ադրբեջանի Հանրապետությունը վերածվել է իր սահմաններից դուրս կազմակերպված ահաբեկչական գործունեության անմիջական թիրախի: Հայաստանի Հանրապետությունը կատարել է Ադրբեջանի քաղաքացիական բնակչության և ենթակառույցների դեմ ուղղված տասնյակ ահաբեկչական գործողություններ, որոնք խլել են ավելի քան 2 հազար ադրբեջանցիների կյանք»[20]:

Այսպիսով՝ տարբեր ժամանակ և տարբեր առիթներով Ադրբեջանի Նախագահ Իլհամ Ալիևի պաշտոնական ելույթներից կատարված մեջբերումները ցույց են տալիս Ղարաբաղյան հակամարտության կարգավորման՝ հեղինակի կարծիքով գլխավոր պրոբլեմներից մեկը. երկու հասարակությունների համատեղ բնակության, հաղորդակցության և փոխգործության ժամանակ ֆիզիկական անվտանգության պրոբլեմը:

Դա հատկապես կարևոր է Ադրբեջանի ղեկավարության կողմից Հայաստանին և հայ ժողովրդին պատմական ու տարածքային պահանջների ներկայացման համատեքստում: 2007 թ. մարտի 10-ին ադրբեջանական և թուրքական սփյուռքի կազմակերպությունների ղեկավարների Առաջին համաշխարհային համաժողովի բացման ժամանակ Ի. Ալիևն իր ճառում ասաց. «Իրենց պատմական հողերից ադրբեջանցիներին դուրս մղելու, այդ տարածքում առասպելական «Մեծ Հայաստան» ստեղծելու նպատակով հայերը տասնյակ տարիներ ադրբեջանական ու թուրք ժողովուրդներին կանոնավոր կերպով ենթարկել են գաղափարախոսական, ռազմական և մշակութային ագրեսիայի …: 1918 թ. ադրբեջանական հողերում ստեղծվեց հայկական պետություն, որին որպես մայրաքաղաք զիջեցինք Ադրբեջանի կարևորագույն մշակութային կենտրոններից մեկը՝ Իրևանը»[21]:

Այս միտքը սայթաքում չէ, այլ հակահայկական քարոզչական ռազմարշավի միանգամայն լավ մտածված բաղկացուցիչ մասը, ինչի վկայությունն է Իլհամ Ալիևի պաշտոնական ելույթներում այդ դրույթի հաճախակի կրկնումը:

---

[19] Տես *Арлин Одергон.* Отель «Война». Психологическая динамика вооруженных конфликтов. М., 2008, с. 132:

[20] «Речь Ильхама Алиева на совещании Совета Безопасности ООН в Нью-Йорке», 04.05.2012 (http://ru.president.az/articles/4845).

[21] «Алиев: Азербайджан не будет использовать геноцид для разжигания вражды». «РИАНОВОСТИ», 30.03.2008 (http://m.ria.ru/world/20080330/102521124.html):

«Նախիջևանը հնագույն ադրբեջանական հող է: Նախիջևանում պատմական հուշարձանները, կրոնական ճարտարապետական հուշարձանները, բոլոր տեղանունները պատկանում են ադրբեջանական ժողովրդին: Ադրբեջանական ժողովուրդը դարեր շարունակ ապրել և ստեղծագործել է այդ հիասքանչ երկրամասում, մեր ժողովրդի նկատմամբ անարդարություն է թույլ տրվել, քանի որ Զանգեզուրը՝ բուն ադրբեջանական հողը, անջատեցին Ադրբեջանից և հանձնեցին Հայաստանին…. անկախության տարիներին՝ 1918 թ., Ադրբեջանական Ժողովրդավարական Հանրապետության ընդունած որոշման հիման վրա Իրևանը՝ մեր բուն հողը, հանձնվել էր Հայաստանին: Այնպես, ինչպես մի քանի տարի անց բոլշևիկյան խորհրդային իշխանությունը հայերին հանձնեց Զանգեզուրը»[22]:

Մի ուշագրավ մեջբերում ևս. «Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի պատմական մասն է: Ադրբեջանցիները դարեր շարունակ բնակվել են Լեռնային Ղարաբաղում, իսկ հայերն այս վայրերում սկսել են ապրել մոտ երկու հարյուր տարի առաջ….»[23]:

Վերը շարադրվածից կարելի է հանգել հետևյալ եզրակացության. պաշտոնական քարոզչության կառույցների նպատակամետ և համակարգային աշխատանքը ուղղված է ադրբեջանական հասարակության մեջ հայատեցության արմատավորմանը: Բնակչության զանգվածային գիտակցության վրա ներգործության տարբեր հնարների կիրառումը, ինչը հակասում է ինչպես միջազգային իրավունքի նորմերին, այնպես էլ ԱդրՀ ՔՕ-ին, ստեղծում է մի վտանգավոր միտում, որի պատճառով նույնիսկ Ղարաբաղյան հակամարտության խաղաղ լուծման դեպքում Ադրբեջանի քաղաքացիների մի քանի սերունդ սոցիալական մակարդակով արդեն յուրացրել է հայերի՝ որպես «արտաքին թշնամու» կերպարի էթնիկական կողմնորոշումը: Դա նաև մեծացնում է միջէթնիկական հողի վրա հակամարտության սրման հնարավորությունը:

Տվյալ պրոբլեմին բազմիցս ուշադրություն է հրավիրել հայկական կողմը: Մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության Նախագահ Սերժ Սարգսյանն իր ելույթներում բարձրացրել է այդ հարցը միջազգային լսարանի առջև: «Բաքուն հայատեցությունը դարձրել է պետական քարոզչություն՝ հասցնելով այն առավել քան վտանգավոր մակարդակի: Սա միայն մեր գնահատականը չէ. այս մասին ահազանգում են նաև ռասիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարի միջազգային մասնագիտացված կառույցները: Առավել վտանգավոր է, երբ հայատյաց գաղափարները խորանում են ադրբեջանցիների երիտասարդ սերնդի մեջ՝ վտանգելով նաև խաղաղ գոյակցության ապագան:

Մերժելով ու ոչնչացնելով ամեն հայկականը՝ Բաքուն համառությամբ շարունակում է բոլոր մակարդակներով և ամենուր, այդ թվում և այստեղ՝ ՄԱԿ-ի շրջա-

[22] «Речь Ильхама Алиева на торжественной церемонии, посвященной 90-летнему юбилею Нахичеванской Автономной Республики», 08.04.2014 (http://ru.president.az/articles/11477):

[23] «Ильхам Алиев выступил на сессии Парламентской ассамблеи Совета Европы», 24.06.2014 (http://ru.president.az/articles/12149):

նակներում, տարածել կեղծ մեղադրանքներ Հայաստանի, Լեռնային Ղարաբաղի և հայերի մասին: ...»[24]:

Այսպիսով՝ ինչպես ցույց է տալիս Ադրբեջանում պաշտոնական մակարդակով քարոզվող օտարատեցության պրոբլեմը շոշափող միջազգային իրավական փաստաթղթերի վերլուծությունը, կան պատժման հստակ մեխանիզմներ, որոնք պետք է կիրառվեն համաշխարհային հանրության առջև ստանձնած պարտավորությունները խախտող երկրի նկատմամբ: Սակայն գործնականում չի արձանագրվել Ադրբեջանի կամ իր ելույթներում ռասիզմ ու հայատեցություն քարոզող դրույթներ օգտագործող նրա ղեկավարության նկատմամբ իրական պատժամիջոցների կիրառման որևէ դեպք:

Նման պայմաններում հայկական կողմի համար առաջնահերթ խնդիր է Ադրբեջանի կողմից միջազգային իրավաքաղաքական նորմերի և սկզբունքների կանոնավոր խախտումներն ապացուցող փաստագրական նյութի հավաքումը և տարբեր միջազգային հարթակներում տարածումը:

[24] «Նախագահ Սերժ Սարգսյանի ելույթը ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 66-րդ նստաշրջանում», 23.09.2011 (http://www.president.am/hy/statements-and-messages/item/2011/09/23/news-107/):

ИНФОРМАЦИОННАЯ БЕЗОПАСНОСТЬ

К ВОПРОСУ ОБ ОСНОВНЫХ ПОНЯТИЯХ ИНФОРМАЦИОННОЙ БОРЬБЫ

А. Р. ГАЛЕЧЯН, временно исполняющий обязанности начальника Отдела Управления стратегического планирования ГШ ВС РА

РЕЗЮМЕ

Главными особенностями информационной борьбы являются: возможность ведения эффективной асимметричной борьбы; скрытность стадии подготовки операции; внезапность нанесения удара по противнику; возможность маскировки и сокрытия истинных намерений; отсутствие необходимости физического вторжения на территорию противника; возможность нанесения жертве агрессии ущерба, сравнимого с результатами военных действий на его территории; трудности обнаружения источника информационной агрессии, определения степени опасности выявленных атак, а также истинных масштабов и целей агрессии; трудности выбора системы мер реагирования на информационно-психологическую агрессию и т. д.

Противодействие информационно-психологическому воздействию противника, являющееся фазой информационной борьбы, предполагает: а) *прогнозирование* выявления угроз и оценки ущерба от деструктивного психологического воздействия; б) *профилактику* и *осуществление* собственных информационно-психологических операций в целях снижения восприим-

чивости и подверженности населения информационно-психологическому воздействию; в) *ликвидацию последствий* негативного информационно-психологического воздействия и т. д.

НАСАЖДЕНИЕ АРМЕНОФОБИИ В АЗЕРБАЙДЖАНЕ КАК НАРУШЕНИЕ МЕЖДУНАРОДНЫХ НОРМ НА ПРИМЕРЕ ОФИЦИАЛЬНЫХ ВЫСКАЗЫВАНИЙ ПРЕЗИДЕНТА ИЛЬХАМА АЛИЕВА

А. Г. ЭЛИБЕГОВА, кандидат политических наук, начальник службы ГНКО «Центра общественных связей и информации» аппарата Президента РА

РЕЗЮМЕ

Переговоры вокруг мирного урегулирования Карабахского конфликта продолжаются уже 20 лет и поскольку не находят решения в пользу Азербайджана, Президент Ильхам Алиев часто прибегает к угрозе агрессии с употреблением оскорбительных выражений в адрес Армении и армянского народа. На примере официальных высказываний Президента Азербайджана можно проследить распространение и пропаганду расизма и ксенофобии, что является вопиющим нарушением норм международного права и обязательств, принятых Азербайджаном в связи с членством в международных структурах. Проблема пропаганды в Азербайджане арменофобии с культивированием «образа врага» в лице армян актуальна не только в плане подрыва переговорного процесса, но и в контексте возможности дальнейшего совместного проживания двух обществ при успешном мирном урегулировании конфликта, на что неоднократно обращала внимание армянская сторона.

INFORMATION SECURITY

TO THE ISSUE OF MAIN NOTIONS OF INFORMATION WARFARE

A. R. GHALECHYAN, Acting Head of the Department of the Directorate of Strategic Planning of the General Staff of the RA Armed Forces

SUMMARY

The main peculiarities of information warfare are: possibility of waging an effective asymmetric warfare; security of operations preparation stages; surprise of striking an enemy; possibility of disguising and covering up true intentions; lack of possibility of physical incursion into the enemy's territory; possibility of causing damage to the victim of aggression comparable with the effects of

hostilities on his territory; difficulties of detecting the source of information aggression, determining the degree of peril of the revealed attacks, as well as real scales and goals of the aggression; difficulties of chosing the system of measures for reacting to the information and psychological aggression, etc.

The counteraction to the enemy's information and psychological impact, which is a phase of information struggle, contemplates: a) *predicting* threat detection and assessment of damage from destructive psychological impact; b) *prevention* and *implementation* of own information and psychological operations for reducing population's perceptiveness and susceptibility to influence; c) *elimination of the consequences* of the negative information and psychological impact, etc.

CULTIVATION OF ARMENOPHOBIA IN AZERBAIJAN AS A VIOLATION OF INTERNATIONAL NORMS IN TERMS OF PRESIDENT ILHAM ALIYEV'S OFFICIAL STATEMENTS

A. G. ELIBEGOVA, PhD in Political Science, «Information and Public Relation Center» SNCO under the Administration of the President of Armenia
Head of office

SUMMARY

Negotiations on the peaceful settlement of the Karabakh conflict have been on the table for already 20 years, and as far as no resolution has been reached in Azerbaijan's favor, President Ilham Aliyev often resorts to the threat of aggression with insulting statements addressed to Armenia and the people of Armenia. In terms of the Azerbaijani President's official statements one can track dissemination and propaganda of racism and xenophobia, which is an outrageous violation of the norms of International Law and commitments complied with Azerbaijan due to its membership in international structures. The problem of propaganda of Armenophobia in line with the cultivation of the «image of the foe» represented by Armenians is urgent not only with regard to undermining the negotiation process but also in the context of the possibility of further coexistance of the two societies with the successful peaceful settlement of the conflict, a point which the Armenian side has once and again drawn attention to.

ՌԱԴԻՈԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆԸ ԿԵՆՍՈԼՈՐՏՈՒՄ ՈՒ ՆՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԴՈՒ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ

Հ. Յ. ՍԱՅԱԴՅԱՆ, գնդապետ, աշխարհագրական գիտությունների թեկնածու, զորամասի հրամանատարի տեղակալ,
Ա. Ս. ՍԱՐԴԱՐՅԱՆ, երկրաբանահանքաբանական գիտությունների թեկնածու, ԵՊՀ երկրաֆիզիկայի ամբիոնի դոցենտ

Մեր մոլորակի առաջացման հենց սկզբից նրա կազմի մեջ մտել են ռադիոակտիվ տարրեր, որոնք էական դեր են խաղում ինչպես Երկրի ընդերքում, այնպես էլ մակերևույթին տեղի ունեցող պրոցեսներում ու երևույթներում:

Ռադիոակտիվությունը ատոմի միջուկի ինքնաբերական տրոհումն է, որի ժամանակ անջատվում են որոշակի էներգիայով մասնիկներ և կոշտ էլեկտրամագնիսական ճառագայթում: Ընդսմին ռադիոակտիվ տրոհման երևույթի վրա չի կարող ազդել որևէ արտաքին գործոն՝ ճնշում, ջերմաստիճան, խտություն և այլն: Նման հատկությամբ օժտված տարրերը կոչվում են ռադիոակտիվ:

Ռադիոակտիվության երևույթի հայտնաբերումից հետո շատ արագ պարզվել է, որ այն շրջակա միջավայրի ու մարդու վրա գործում է ինչպես վնասակար, այնպես էլ օգտակար ազդեցություն: Մասնավորապես՝ բուժիչ նպատակով լայն տարածում են ստացել ռադոնային ջրերն ու ցեխը: Վնասակար ազդեցությունը հատկապես ցայտունորեն արտահայտվել էր Հիրոսիմայի և Նագասակիի միջուկային ռմբակոծությունից հետո: Ռադիոակտիվ երևույթների վնասակար ազդեցությունից բնակչությանը զերծ պահելու համար միջազգային հանրությունը դեռ 1955 թ. ստեղծել է հատուկ հանձնաժողով*:

Ներկայումս գիտական աշխարհում բավական մեծ հետաքրքրություն է ներկայացնում մարդու օրգանիզմի վրա ռադիոակտիվության ազդեցության համակողմանի ուսումնասիրությունը՝ ինչպես դրանից պաշտպանվելու, այնպես էլ բուժ-

* ՄԱԿ-ի *Ատոմային ճառագայթման հարցերով գիտական կոմիտեն*, որն ստեղծվել է Գլխավոր ասամբլեայի 1955 թ. դեկտեմբերի 3-ի հմ. 913(x) բանաձևով՝ մարդու օրգանիզմի և շրջակա միջավայրի վրա ռադիոակտիվ ճառագայթման ազդեցության մասին տեղեկույթի հավաքումն ու գնահատումը կազմակերպելու համար:–*Խմբ.:*

ման մեջ կիրառելու նպատակով: Հետազոտությունները ցույց են տալիս, որ մարդկությունը ավելի քիչ է տուժում այժմ աշխարհում գործող 195 ատոմակայաններից (եթե դրանք վթարի չեն ենթարկվում), որոնցում գործող ռեակտորների թիվը 434 է, քան շրջակա միջավայրի այլ երևույթներից, օրինակ՝ կենցաղում ածուխի օգտագործումից, օդային տրանսպորտից օգտվելուց, հերմետիկ բնակարաններում ապրելուց և այլն: Ընդսմին մարդու տարեկան միջին ճառագայթահարման 88 %-ը բնական աղբյուրներից է (ռադիոակտիվ նյութերի հանքեր, տիեզերական ճառագայթում և այլն), 12 %-ը՝ մարդածին աղբյուրներից, որոնցից 11 %-ը՝ բժշկական միջամտությունից և միայն 1 %-ը՝ միջուկային արդյունաբերությունից:

Մարդու օրգանիզմի վրա իոնացնող ճառագայթման բացասական ազդեցության հետևանքներից է այնպիսի ախտաբանությունների առաջացումը, ինչպիսիք են՝ ճառագայթային հիվանդությունը, լեյկոման, քաղցկեղը, մուտացիան (գենետիկ փոփոխություններ), անպտղությունը կամ վիժումը, ծնված երեխաների սեռերի անհավասարակշռությունը, մազաթափությունը և այլն: Ճառագայթահարման հետևանքները պայմանավորված են ճառագայթման տեսակով, տևողությամբ, ծավալով և էներգիայով:

Ճառագայթային հիվանդությունն ըստ կլինիկական ձևի լինում է սուր և քրոնիկական: ՈՒսումնասիրություններով պարզվել է, որ մարդու օրգանիզմի տարբեր օրգաններ նույն աղբյուրի գործողության հետևանքով ճառագայթահարվում են տարբեր չափով. ձեռքերը, ոտքերը և գլուխը ավելի քիչ են ճառագայթահարվում, քան սեռական օրգանները: Բացի այդ, ռադիոակտիվ ճառագայթները քայքայիչ ազդեցություն են գործում հյուսվածքների վրա:

Երկրագնդի, այդ թվում նաև ՀՀ, բնակչության 95 %-ի ճառագայթահարման բաժնաչափը կազմում է տարեկան 0,3–0,6 միլիզիվերտ (մԶվ)*, ինչը ներկայումս համարվում է բնականոն, սակայն մոլորակի բնակչության 5 %-ն ստանում է այդ նորմայից մի քանի տասնյակ անգամ ավելի մեծ բաժնաչափ: Օրինակ՝ Բրազիլիայի Պոսուս-դի-Կալդաս քաղաքի հյուսիսային բարձրադիր հատվածում բնակչության ճառագայթահարումը մեկ տարվա ընթացքում կազմում է 800 մԶվ, որը միջին բաժնաչափից մոտ 2500 անգամ ավելի է, այդ իսկ պատճառով տվյալ տեղանքը համարվում է բնակության համար ոչ պիտանի: Սակայն նրանից 600 կմ հեռավորության վրա՝ մերձծովյան շրջանում, մարդիկ ստանում են 400 մԶվ ճառագայթում, և դա նրանց համար համարվում է բնականոն: Գուարապարիում, որտեղ բնակվում է 1200 մարդ, ճառագայթահարման բաժնաչափը մեկ տարում կազմում է 175 մԶվ, իսկ Հնդկաստանի Տամիլանդ քաղաքում, որտեղ ապրում է 70000 մարդ, այն կազմում է 200 մԶվ, որը նորմայից 400 անգամ ավելի է: Այդ տարածքները ռադիոակտիվության տեսակետից համարվում են մեր մոլորակի թեժ գոտիներ: Թեժ գոտի է նաև մեր հարևան Իրանի Իսլամական Հանրապե-

* *Զիվերտ*՝ իոնացնող ճառագայթման արդյունավետ և համարժեք բաժնաչափերի արտահայտման համար Միավորների միջազգային համակարգում (ՍԻ) ընդունված միավոր. 1 Զվ-ն 1 կգ կենսաբանական հյուսվածքի կլանած այն էներգիան է, որի ազդեցությունը հավասար է կլանված 1 Գր գամմա-ճառագայթման ազդեցությանը:–*Խմբ.:*

տության Ռամսար քաղաքը, որտեղ ճառագայթահարման բաժնաչափը կազմում է տարեկան 400 մՁվ:

Աշխարհում ռադիոակտիվության տարածքային ցուցանիշների տեսանկյունից առավել բարձր ցուցանիշներով երկրների թվին են պատկանում Ֆրանսիան, Նիգերիան և Մադագասկարը: Մինչդեռ Հայաստանի Հանրապետության տարածքը ռադիոակտիվ ճառագայթման տեսանկյունից գտնվում է նորմալ գոտում:

Պարզվել է, որ մարդու օրգանիզմի ճառագայթահարումը հիմնականում տեղի է ունենում ռադոնի ճառագայթման հետևանքով: Ռադոնը բնության մեջ հանդիպում է մի քանի իզոտոպների ձևով, որոնցից առավել կայունը ^{222}Rn-ն է, և մարդկանց ճառագայթահարման մոտ 75 %-ը տեղի է ունենում հենց այդ իզոտոպի ճառագայթման հետևանքով: Քանի որ ^{222}Rn-ը 7,5 անգամ ծանր է օդից, այն կուտակվում է նկուղային և ցածր հարկերում, ինչի հետևանքով, անկախ տարվա եղանակից, ցածր հարկերի բնակիչները ռադոնի ինտենսիվությունը նվազեցնելու համար պետք է օրվա մեջ մի քանի անգամ օդափոխեն իրենց բնակարանները: Հետաքրքրական է, որ բնակարանի տարբեր սենյակներում ճառագայթման ինտենսիվությունը լինում է տարբեր, օրինակ՝ լոգարանում երեք անգամ ավելի, քան խոհանոցում:

Բնակարաններում ռադիոակտիվությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ դրանով օժտված են մեծ թվով շինարարական նյութեր: Ամենատարածված շինանյութերը՝ փայտը, աղյուսը և բետոնը, պարունակում են որոշակի քանակությամբ ռադոն: Մեծ ռադիոակտիվությամբ են օժտված գրանիտը, տուֆը և պեմզան: Շվեդիայում տարիներ շարունակ որպես շինանյութ օգտագործվել է կավահողը, որի օգտագործմամբ կառուցվել է մինչև 700000 բնակարան: Սակայն պարզվել է, որ մեծ չափով ռադիոակտիվ տարրեր կլանելու իր հատկության հետևանքով կավահողը բավական ռադիոակտիվ է: Այդ իսկ պատճառով տվյալ շենքերը հիմնականում քանդվել են, և ներկայումս Շվեդիայում կավահողը որպես շինանյութ չի օգտագործվում: ԱՄՆ-ի Այդահո և Ֆլորիդա նահանգներում, ինչպես նաև Կանադայում բետոնի կազմի մեջ օգտագործվել է կալցիում-սիլիկատային շպատ, որը ևս օժտված է մեծ ռադիոակտիվությամբ: Մեծ ռադիոակտիվություն ունի նաև հրակայուն աղյուսը:

Նվազագույն ռադիոակտիվությամբ են օժտված Կանադայի, Չինաստանի և Հոլանդիայի, առավելագույն ռադիոակտիվությամբ՝ ԱՄՆ-ի, Ֆրանսիայի և Մադագասկարի շինանյութերը:

Մարդկանց ճառագայթահարումը կապված է նաև կենցաղային ջրերի հետ: Կանադայում կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ջրի ծորակը բացելուց հետո առաջին յոթ րոպեի ընթացքում ռադոնի քանակն աճում է, իսկ 15 րոպե հետո դառնում է նորմային մոտ: Բնության մեջ առանձնացնում են ռադիոակտիվ ուրանային, թորիումային և ռադոնային ջրեր: Ջրերի ռադիոակտիվությունը առաջանում է այն ժամանակ, երբ դրանք ողողում են ուրանի, թորիումի և այլ ռադիոակտիվ տարրերի հանքաշերտերը: Ջուրը համարվում է խմելու, եթե դրանում ուրանի պարունակությունը 1 լ-ում կազմում է $5x10^{-5}$գ, իսկ ռադոնինը՝ 50

էմանից* պակաս: Միևնույն ժամանակ, կա միտում խստացնելու նորմատիվները: Այսպես. ԱՄՆ-ի Կոլորադո նահանգում մակերևութային ջրերում ^{239}Pu-ի թույլատրելի պարունակությունը 15 պիկոԿյուրիից իջեցվել է մինչև 0,15 պԿի[1]:

Առանձնահատուկ ուշադրության են արժանի ռադիոակտիվ թափոնների պահման ու վնասազերծման պրոբլեմները: Առավել մեծ քանակությամբ ռադիոակտիվ թափոններ (միջուկային թափոններ) առաջանում են էլեկտրաէներգիայի արտադրության, հետազոտական և արդյունաբերական գործունեության հետևանքով[2]: Առանձնացվում են երեք տիպի ռադիոակտիվ թափոններ՝ պինդ, հեղուկ և գազային, որոնցից յուրաքանչյուրի պահման համար մշակված են համապատասխան պահանջներ:

Ռադիոակտիվ անվտանգության ապահովման ուղղությամբ որոշակի աշխատանք է տարվում նաև Հայաստանում: Վերջերս ՀՀ բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոնի» աշխատողների կատարած ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Երևան քաղաքի տարբեր վարչական շրջաններում խմելու ջրի մեջ ռադոնի պարունակությունը խիստ տարբեր է: Այսպես՝ Արաբկիրի և Շենգավիթի շրջաններում խմելու ջրի մեջ ռադոնի քանակությունը մի քանի անգամ բարձր է նորմայից, իսկ Էրեբունի և Քանաքեռ շրջանների ցուցանիշները համապատասխանում են նորմային[3]: Այսպիսով՝ այս ոլորտում պետք է պարբերաբար կատարել մշտազննումներ և միջոցներ ձեռնարկել նորմայից բարձր ռադիոակտիվությամբ ջրով շրջաններում ինտենսիվությունը նվազեցնելու համար:

Երևան քաղաքի Քանաքեռ, Նորք, Արաբկիր, Հաղթանակի այգի, Փոքր Կենտրոն և Զեյթուն շրջաններում, ինչպես նաև Մխիթար Հերացի, Չարենց և Աբովյան փողոցներում կատարված ուսումնասիրություններով պարզվել է, որ Երևանի կենտրոնում ռադոնի ինտենսիվությունը նորմայից մեծ է[4], այդ իսկ պատճառով հնարավորինս պետք է նվազեցնել կենտրոնի բնակարանային շինարարության տեմպերը:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ նշենք, որ բնական աղբյուրներից բնակչության ճառագայթահարման վտանգը նվազեցնելու հիմնական ուղիներն են.

---

* Էման՝ ռադիոակտիվ աղբյուրների տեսակարար ծավալային ակտիվության չափման արտահամակարգային միավոր. 1 էմանը հավասար է 1 լիտրի հաշվով 100 պիկոԿյուրի ակտիվության:

[1] Տես *Ա. Макхиджани.* Опасное воздействие на кости: предельно допустимые уровни загрязнения плутонием в питьевой воде (http://www.ieer.org/ensec/no-33/no33russ/badtobone.html):

[2] *Вольфганг Нойман.* Утилизация ядерных отходов в Европейском Союзе: рост объемов и никакого решения (http://gef.eu/uploads/media/GEF-11-12_RU_Nuclear_waste_management_web.pdf):

[3] Տես *Մ. Գ. Բաբայան,* Սեյսմոակտիվ տարածքների ռադոնային վտանգի գործոնները Երևան քաղաքի օրինակով: Երկրաբնապահպանություն մասնագիտությամբ, տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, ԵՊՀ: Ե., 2005:

[4] Տես նույն տեղում:

ա. վարչական տարածքներում բնակչության բնական աղբյուրներից ճառագայթահարման մակարդակի մշտագննում, բարձր մակարդակի ճառագայթահարված խմբերի հայտնաբերում և անհրաժեշտ բուժկանխարգելիչ միջոցառումների իրականացում,

բ. շենքերի և շինությունների կառուցում այն վայրերում, որոնք ունեն գամմա-ճառագայթման նվազագույն ցուցանիշներ,

գ. շենքերի կառուցման համար բնական ռադիոնուկլիդների ցածր պարունակությամբ շինանյութերի օգտագործում,

դ. շինությունների անհրաժեշտ մակարդակի օդափոխության ապահովում,

ե. շենքերի կառուցման և վերակառուցման ժամանակ ճառագայթումային վերահսկողության ապահովում:

ՀՀ տարածքում ռադիոակտիվ տարրերի տարածման տեսակետից ժամանակակից հետազոտությունների արդյունքները պետք է պարտադիր կերպով հաշվի առնվեն նաև զինծառայողների բնակավորման պլանավորման ժամանակ: Զորանոցների, կացարանների, տարբեր տեխնիկական միջոցներով դիտարկման հենակետերի, բացազատման վայրերի՝ ռադիոակտիվ ֆոնի տեսակետից ճիշտ ընտրությունը հնարավորություն կտա խուսափելու անձնակազմի առողջությանը սպառնացող մի շարք վտանգներից: Կարևոր հանգամանք է նաև այդ շինությունների կառուցման ժամանակ շինանյութերի ճիշտ ընտրության հարցը: Այս միջոցառումներն անշուշտ կնպաստեն մեր զինծառայողների, ամբողջ բնակչության առողջության պահպանմանը, ուստի և պետության պաշտպանունակության մեծացմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Ю. А. Банникова.* Радиация–дозы, эффекты, риск. М., 1990.
2. *В. А. Мейер, П. А. Ваганов.* Основы ядерной геофизики. Л., 1989.
3. *Г. Фор.* Основы изотопной геологии. М., 2006.
4. «Environmental Epidemiology. Understanding Public Health». Ed. by Paul Wilkinson. Open University Press, 2006.
5. «Facts and Figures. Key nuclear energy data». «World Nuclear Association» (http://world-nuclear.org/info/Facts-and-Figures/).

ЭКОЛОГИЧЕСКАЯ БЕЗОПАСНОСТЬ

РАДИОАКТИВНОСТЬ В БИОСФЕРЕ И ЕЕ ВОЗДЕЙСТВИЕ НА ЧЕЛОВЕКА И НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ

А. Я. САЯДЯН, полковник, кандидат географических наук, заместитель командира войсковой части, А. С. САРДАРЯН, кандидат геолого-минералогических наук, доцент кафедры геофизики ЕГУ

РЕЗЮМЕ

Естественная радиоактивность – самопроизвольный распад атомных ядер, встречающихся в природе. В биосфере повсюду действуют естественные источники радиоактивности. И человек, как и все живые организмы, всегда подвергался естественному облучению. Внешнее облучение происходит за счет излучения космического происхождения и радиоактивных нуклидов, находящихся в окружающей среде. Внутреннее облучение создается радиоактивными элементами, попадающими в организм человека с воздухом, водой и пищей.

Для количественной характеристики воздействия излучения на человека используют единицы: биологический эквивалент рентгена (бэр) – зиверт (1 Зв =100 бэр). 88 % облучения происходит от естественных источников, 11 % – при медицинских процедурах (рентген) и лишь 1 % вследствие деятельности АЭС. Если суммарная доза облучения превышает определенный предел, то это может привести к болезням и даже смерти человека.

ECOLOGICAL SECURITY

RADIOACTIVITY IN THE BIOSPHERE AND ITS IMPACT ON THE MAN AND THE ENVIRONMENT

A. Y. SAYADYAN, Colonel, PhD in Geography, Deputy Commander of military Unit, A. S. SARDARYAN, PhD in Geology and Mineralogy, Associate Professor at the Chair of Geophysics, YSU

SUMMARY

Natural radioactivity is the spontaneous decay of atomic nuclei found in the nature. Natural sources of radioactivity happen everywhere in the biosphere. And the man, just like every other living organisms, has always been exposed to natural radiation. External radiation occurs due to the emission of cosmic origin and radioactive nuclides found in the environment. Internal radiation emerges

from radioactive elements, which gets into the human body with air, water and food.

To quantify the effects of radiation on the man the following units are used: the biological roentgen-equivalent (rem) – sievert (1 Sv=100 rem). 88 % of radiation comes from natural sources, 11 % – from medical procedures (x-ray) and only 1 % as a result of the activities of the nuclear power plants. If the integral radiation dose exceeds a certain limit, it can lead to a human being's illnesses and even death.

ՀԱՅԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ (1914 – 1918 ԹԹ.)

1-ին կամավորական ջոկատ. կենտրոնում՝ հրամանատար Անդրանիկը

Երկրորդ կամավորական ջոկատի երդումը
(հրամանատար՝ Դրաստամատ Կանայան (Դրո))



3-րդ կամավորական ջոկատի զորահանդեսը Էջմիածնում
(հրամանատար՝ Համազասպ)

3-րդ կամավորական ջոկատն անցնում է Զանգվի կամուրջով

4-րդ կամավորական ջոկատը
(հրամանատար՝ Արշակ Գավաֆյան (Քեռի))

5-րդ կամավորական ջոկատի հեծելազորը
(հրամանատար՝ Սարգիս Մեհրաբյան (Վարդան))

Գեներալ Կալիտինը ողջունում է մարտից հաղթանակով վերադարձած
6-րդ կամավորական ջոկատին
(հրամանատար՝ Հայկ Բժշկյանց (Գայ))



Զվարթնոց վանքի վանահայրը օրհնում է 7-րդ կամավորական ջոկատին
(հրամանատար՝ իշխան Հովսեփ Արղության))

ՌԱԶՄԱԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՑԱՆՑԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ռ. Գ. ԽԱՉԱՏՐՅԱՆ, բժշկական գիտությունների թեկնածու,
ՀՀ առողջապահության նախարարի խորհրդական

Ժամանակակից առողջապահության զարգացման կարևոր խնդիրներից է այնպիսի միասնական տեղեկատվական ցանցի ստեղծումը, որը հնարավորություն տար հիմնավորված կառավարային որոշումներ ընդունելու համար հավաքելու, մշակելու և օգտագործելու անհրաժեշտ տեղեկույթ: Նման համակարգի կարևորությունն էլ ավելի մեծ է պաշտպանության բնագավառն սպասարկող բժշկության մեջ, քանի որ այստեղ ամեն օր անհրաժեշտ է լինում ապահովել բազմաթիվ ստորաբաժանումների ու բուժհամալիրների միջև, ինչպես նաև նրանց ու ռազմաբժշկական համակարգի կառավարման համակարգի միջև հավաստի տեղեկույթի օպերատիվ ու անխափան փոխանակում:

Ներկայումս ՀՀ Զինված ուժերի ռազմաբժշկական ծառայության համակարգում տվյալները հիմնականում պահպանվում են փաստաթղթային ձևով՝ թղթային կրիչներով, և ապակենտրոնացված, ինչը ծախսատար է, բարդացնում է փաստաթղթաշրջանառությունը, ինչպես նաև մեծացնում է դրանց կորստի կամ վնասման հավանականությունը: Բուժսպասարկման կազմակերպման և կառավարման հարաբերությունների նկատմամբ նշված մոտեցումները կարող են հանգեցնել զինծառայողների բուժման ու բուժհետազոտության գործում լուրջ խոչընդոտների:

ՈՒստի առկա պայմաններում ավելի է կարևորվում ռազմական ոլորտի բուժսպասարկման գործունեության մեջ օպերատիվ, լիարժեք ու ճշգրիտ տեղեկատվական բազայի ներդրումը, դրա հետևողական զարգացման, մասնագետ բժիշկների կողմից օգտագործման հարմարավետության արդյունավետության ապահովումը:

Ռազմաբժշկական հաստատություններում տեղեկատվության միասնական համակարգի ներդրման նպատակներից է նաև բուժսպասարկման գործընթացում տեղեկույթի շրջանառության հետ կապված ծախսերի կրճատումը, ինչպես նաև այդ տեղեկույթի բազմակողմանի ու լիարժեք վերլուծության ապահովմամբ բուժական և հետազոտական միջոցառումների արդյունավետության մեծացումը[1]:

[1] Տես *П. А. Крупнов, Н. Г. Коршевер.* Оптимизация управления медицинским обеспечением воинских частей в мирное время. «Проблемы стандартизации в здравоохранении», 2007, № 5:

Այս խնդրի լուծման համար նպատակահարմար է ռազմաբժշկական ոլորտում ներդրել տեղեկույթի շրջանառության ու ավտոմատացված կառավարման համակարգերի միասնական ցանց:

Ռազմաբժշկական համակարգում ժամանակակից տեղեկատվական մեխանիզմների ներդրման հիմնական նպատակներ կարելի է համարել բժշկական տեղեկույթի ստացման, մշակման ու պահման վրա կատարվող ծախսերի կրճատումը, անցկացվող բուժախտորոշիչ միջոցառումների լիարժեք ու համակողմանի վերլուծության հնարավորության ապահովումը, բուժման ընթացքի վերահսկման մեխանիզմների օպտիմալացումը, բարձր մակարդակի հաշվետվողականության ապահովումը և մի շարք այլ գործոններ, որոնք էապես կանդրադառնան ոլորտի բուժապահովման վրա[2]: ԶՈՒ-ի բժշկական ծառայության և կառավարման մարմինների գործունեության մեջ միասնական տեղեկատվական ենթակառուցվածքների հետևողական զարգացումը ենթադրում է ռազմաբժշկական հաստատություններում գոյություն ունեցող տեղեկատվական բազաների միավորում միասնական հաշվողական կորպորատիվ ցանցի մեջ:

Այստեղ առաջ է գալիս փոխպայմանավորված բարդության հաղթահարման անհրաժեշտություն. բժշկական միասնական տեղեկատվական մեխանիզմները, մի կողմից, ապահովում են առաջադրված խնդիրների օպերատիվ լուծման անվիճելի առավելություն, իսկ մյուս կողմից՝ զգալի բարդություններ կան դրանք ՀՀ ԶՈՒ-ի ռազմաբժշկական ծառայության կառավարման միացյալ համակարգի մեջ ինտեգրելու գործում: Տվյալ բարդությունները հնարավոր է հաղթահարել միասնական տեղեկատվական ցանցի ստեղծման գործի նկատմամբ հետևողական մոտեցումներ մշակելու միջոցով, այն է՝ ստեղծելով արդյունավետ կերպով գործող համակարգ, որն ավելի մեծ չափով կհամապատասխանի ներկայումս ռազմաբժշկական ծառայությանն առաջադրվող խնդիրներին, կապահովի ծառայության որակի հետագա կատարելագործման ու զարգացման լիարժեք հնարավորություններ:

Միասնական տեղեկատվական համակարգով ապահովվում է ոլորտին վերաբերող հիմնական տվյալների պահպանման առավել հուսալի և ծախսային առումով արդյունավետ համալիրը՝ ի հաշիվ հիմնական տվյալների էլեկտրոնայնացման կենտրոնացման, պահպանման անվտանգության, պահուստային արխիվացման և այլ առավելությունների[3]:

Համակարգի ներդրումն էապես կնպաստի ռազմաբժշկական ծառայության ոլորտի վարչական մարմինների համար ոլորտին վերաբերող անհրաժեշտ տեղեկությունների հասանելիության մեծացմանը, կազմակերպական ընթացակարգերի

[2] Տես *А. М. Шелепов, В. С. Тылту.* Автоматизированная информационная система управления в современной организации лечебного процесса в работе начальников урологических отделений округов и флотов МО РФ в мирное время. «Актуальные проблемы организации медицинского обеспечения войск в XXI веке». Материалы научной конференции. СПб., 2004, с. 22:

[3] Տես *C. Reineck, K. Finstuen, L. M. Connely, P. Murdock.* Army Nurse Readiness Instrument: Psychometric Evaluation and Feld Administration. «Military Medicine», 2001, Vol. 166, № 11:

հեշտացմանը, ինչի շնորհիվ որոշումների կայացման համար պահանջվող տեղեկությունները առաջնահերթությունների տեսանկյունից կլինեն ավելի մատչելի ու ծանոթանալու առումով սակավ ժամանակատար: Որպես այդպիսին՝ միասնական տեղեկատվական համակարգը նաև արդյունավետ գործիք է ռազմաբժշկական ծառայության ոլորտի բուժհաստատությունների գործունեության վերահսկման և թափանցիկության մեծացման գործում:

Այդ ցանցում տեղեկատվության ձևավորման ու կիրառման գործում մասնագետ բժիշկների ներգրավման բարդություններից խուսափելու համար անհրաժեշտ կլինի հստակ կերպով սահմանել նման համակարգի գործառության միասնական սկզբունքներ և կազմակերպել դրա համար անհրաժեշտ մեթոդիկա, ինչպես նաև ամբողջ շտեմարանի գիտագործնական ուսուցման համապատասխան դասընթացներ: Մասնավորապես՝ նոր կադրերի պատրաստման ժամանակ պետք է համապատասխան դասընթացով ուսուցանել միասնական տեղեկատվական համակարգի կիրառության տեսական ու գործնական առանձնահատկությունները, իսկ գործող զինվորական բժիշկների համար նախատեսել և անցկացնել վերապատրաստման դասընթացներ՝ բոլոր առկա հնարավորությունների օգտագործմամբ[4]:

Միասնական տեղեկատվության ապահովման գործում կարևոր դեր ունեն տվյալների ընտրության, մուտքագրման (արձանագրման), մշակման, կուտակման և հաղորդման եղանակները, տեղեկույթի համակարգված պահումն ու պահանջված ձևերով տրամադրումը, նոր ներդրվող տարբերակների փոխակերպումը և այլն[5]: Միասնական տեղեկատվական ցանցի ստեղծումը պահանջում է տվյալների մշակման տեխնիկական միջոցների ամբողջ համալիրի օգտագործում՝ տեղեկատվության բոլոր ձևաչափերի միացյալ համակարգի վերջնական ապահովմամբ[6]:

Տվյալների շտեմարանների կառավարման բոլոր մեթոդները պետք է նախատեսված լինեն տեղեկույթը պահելու, մշակելու և կիրառելու համար: Մուտքագրումից հետո տեղեկույթը, պահվելով էլեկտրոնային հաշվիչ մեքենայի հիշողության մեջ, անհրաժեշտության դեպքում կարող է դուրս բերվել ցուցասարքի էկրան կամ տպիչով փոխանցվել թղթային կրիչի վրա, ինչպես նաև սահմանված դեպքերում ու կարգով կարող է հիշողության կրիչներով տեղափոխվել կամ տրամադրվել այլ մասնագետների: Այդուհանդերձ, այս բոլոր ընթացակարգային հարաբերությունները ենթակա են կարգավորման ոլորտի պատասխանատու ղեկավարների (նա-

[4] Տես *Դ. Հ. Դումանյան, Ս. Գ. Գալստյան*, Ռազմաբժշկական կրթության ոլորտի բարեփոխումների ռազմավարությունն ու մարտավարությունը Բոլոնյան գործընթացի շրջանակներում: «ՀԲ», 2011, հմ. 4:

[5] Տես *Ա. Վ. Նազարյան,* Տարերային աղետների և արտակարգ իրավիճակների ժամանակ համաճարակաբանական տվյալների բազայի ստեղծման մեթոդոլոգիան և կառուցման սկզբունքները: Բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, 2004, էջ 103:

[6] Տես *В. Я. Гельман*. Компьютерные коммуникации в медицине. СПб., 2000, с. 21:

խարարի և գլխավոր շտաբի պետի գլխավորությամբ) իրավական ակտերով ու նորմատիվներով:

Վերջին տարիներին ՀՀ պաշտպանության նախարարության համակարգի մեջ մտնող բժշկական հաստատություններում որոշակի թվով գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքներ են կատարվել ախտորոշիչ գործընթացների ավտոմատացման, տեղեկատվության միասնականացման խնդիրների լուծման, ռազմաբժշկական հաստատությունների մեթոդաբանական և զինվորական բժիշկների գիտական գործունեության կատարելագործման ուղղությամբ: Այդ աշխատանքների ուսումնասիրությունը վկայում է, որ առաջարկվող համակարգչային տեխնոլոգիաները մասամբ են բավարարում կլինիկական պրակտիկայի արդի կենսական պահանջներին և ներկայացվում են՝ առանց հաշվի առնելու դրանց օգտագործման հարմարավետությունը, առաջարկվող ձևաչափերով էականորեն չեն ազդելու բուժախտորոշման որակի բարձրացման վրա: Բժշկական համակարգչային տեխնոլոգիաները գործնականում գրեթե զուրկ են այնպիսի հիմնարար գործառական տարրերից, որոնք լիարժեք կավտոմատացնեն բուժական գործընթացի և տեղեկատվության կառավարման կազմակերպական փուլերը, հատկապես՝ հիվանդությունների ընթացքի վերահսկողությունը, հիվանդության ծանրության ու բարդությունների կանխատեսումը:

Առաջարկվող տեղեկատվական համակարգի մոդելը, իր մեջ պարունակելով տեղեկատվական համակարգի երեք հիմնական փուլաշրջանները՝ *տվյալների հավաքում, տվյալների վերլուծություն և տվյալների ելք*, իր փոխկապվածության շնորհիվ հնարավորություն կընձեռի արագ և ամենապարզ ձևով վերլուծելու տվյալները տեղեկատվական համակարգի ցանկացած մակարդակներում և վերլուծված արդյունքների հիման վրա կատարելու ճիշտ ու անհրաժեշտ որոշումների ընդունում, ինչպես նաև ձեռնարկելու կոնկրետ գործառություններ (տես նկ. 1):



Նկ. 1. Զինված ուժերի բժշկական ապահովման միասնական տեղեկատվական ցանցի գործառությունների փոխադարձությունը

ՀՀ-ում ռազմաբժշկական գործունեության շրջանակներում միասնական տեղեկատվության ապահովման խնդիրների պարզաբանման նպատակով իրականացվել են նաև զինվորական բժիշկների անանուն սոցիոլոգիական հարցումներ՝ հոսպիտալային և զորային օղակներում (տես աղ. 1):

Աղյուսակ 1

ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ԲՈՒԺՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐ*

Հ/Հ	ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿ	ՄԻՋԻՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ	
		Հոսպ. օղակի բժիշկներ	*Զորային օղակի բժիշկներ*
1.	Միասնական տեղեկատվական մեխանիզմների ու նորագույն տեխնոլոգիաների ներդրման քաղաքականության հետևողականություն	4,5	3,3
2.	Մասնագետ բժիշկների գործունեության կայուն որակական առաջընթացի անհրաժեշտություն	4,6	4,0
3.	Բուժանձնակազմի աշխատանքային տեխնոլոգիաների զարգացում՝ ի հաշիվ ընթացիկ ու նախորդ բուժհետազոտությունների մասին համապատասխան տեղեկատվության իրական ժամանակային ռեժիմով ստացման	4,5	3,4
4.	Միասնական տեղեկատվության կիրառման հետևանքով ռազմաբժշկական գործունեության մեջ աշխատատարության նվազեցում	4,3	3,8
5.	Բժշկական ապահովման ընթացակարգերում լրացուցիչ փաստաթղթաշրջանառության կրճատում	4,4	4,2
6.	Բուժսպասարկման կազմակերպման համար անհրաժեշտ տեղեկույթի մատչելիության ու ճշգրտության պահանջների արդիականացում և զարգացում	4,7	3,5

Հարցման են ենթարկվել 20-ական բժիշկներ հոսպիտալային և զորային օղակներից: Միասնական տեղեկատվական մեխանիզմների ու նորագույն տեխնոլոգիաների ներդրման հետևողական քաղաքականության վերաբերյալ հոսպիտա-

* Սույն հետազոտությունը հիմնված է հոդվածի հեղինակի կողմից ՀՀ ԶՈՒ-ի ռազմաբժշկական համակարգի հոսպիտալային և զորային օղակներում զինվորական մասնագետ բժիշկների շրջանում 2012 թվականին անցկացված անանուն հարցումների արդյունքների վրա (1-5 բալային գնահատմամբ, 5-ը առավելագույնն է):

լային օղակի բժիշկների միջին գնահատականը կազմել է 4,5 միավոր: Զորային օղակի բժիշկների միջին գնահատականը կազմել է 3,3 բալ, ինչը նշանակում է, որ այդ օղակի բժիշկները համեմատաբար մեծ տեղ չեն տալիս միասնական տեղեկատվության ապահովման հարցերին: Առավել բարձր գնահատականի են արժանացել հետևյալ հարցերը.

– «Բուժանձնակազմի աշխատանքային տեխնոլոգիաների զարգացում՝ ի հաշիվ ընթացիկ ու նախորդ բուժհետազոտությունների մասին համապատասխան տեղեկատվության իրական ժամանակային ռեժիմով ստացման» հարցը հոսպիտալային օղակի բժիշկները գնահատել են միջինը՝ 4,5 բալ, իսկ զորային օղակի բժիշկները՝ 3,4 բալ,

– «Բուժսպասարկման կազմակերպման համար անհրաժեշտ տեղեկույթի մատչելիության ու ճշգրտության պահանջների արդիականացում և զարգացում» հարցը հոսպիտալային օղակի բժիշկների կողմից ստացել է 4,7 բալ, իսկ զորային օղակի բժիշկների կողմից՝ 3,5 բալ:

Տեղեկատվական համակարգի արդյունավետ կիրառության համար առաջարկվում են հետևյալ տեղեկութային մակարդակները: *Առաջնային տեղեկութային մակարդակը* ներառում է բոլոր հոսպիտալները և զորամասերի բուժկետերը՝ որպես տեղեկատվական համակարգի առաջնային օղակների: Այն համարվում է տվյալների ձեռքբերման հիմնական աղբյուրը: *Տեղեկատվական համակարգի երկրորդ (միջին) մակարդակը* ներառում է ԶՈՒ-ի զորամիավորումները, իսկ *համակարգի երրորդ, կամ վերին, մակարդակը* վերաբերում է ՀՀ Զինված ուժերի ռազմաբժշկական վարչությանը: Տեղեկատվական համակարգի վերին մակարդակում տվյալները հավաքվում են բոլոր հոսպիտալներից և զորամասերից: Այն տեղեկատվական համակարգի կենտրոնական մարմինն է, որտեղ կատարվելու են տվյալների վերջնական վերլուծություն և հրապարակում:

Տվյալների վերլուծությունը հնարավորություն է տալիս պարզելու դրանց տարածվածությունը և օրինաչափությունները: Տվյալները վերլուծվում են ըստ գործառութային տարբերակների՝ ըստ զորակոչի, ըստ տարածաշրջանների և զորամասերի, ըստ ներկայացման ձևերի՝ գրաֆիկական, աղյուսակային և քարտեզային: Տվյալների ելքի փուլում կատարվում է վերլուծված և մշակված *տվյալների հիման վրա որոշումների կայացում՝ կանխարգելում կամ պլանավորում:* Կախված ընդունված որոշումից՝ միջոցառումների պլանավորում կամ միջոցառումների իրականացում, կոնկրետ գործառությունները հնարավոր են դարձնում ստեղծված իրավիճակի *գնահատումը,* որը տեղեկատվական համակարգի *հետադարձ կապն է* (տես նկ. 2):

Այդպիսով՝ ՀՀ Զինված ուժերի ռազմաբժշկական ծառայության ոլորտի արդյունավետ գործունեության հրատապ ու կարևոր խնդիրներից է միասնական էլեկտրոնային տեղեկատվական համակարգի ներդրումը՝ որպես ավտոմատացված կառավարման համակարգի ստեղծման սկզբնական փուլ: Ակնկալվում է, որ կապահովվեն ՀՀ Զինված ուժերի ռազմաբժշկական ծառայության տեղեկույթի ամբողջականությունն ու դրա առավելագույնս արդյունավետ օգտագործումը: Համակարգի ներդրումը ենթադրում է ռազմաբժշկական ծառայության համակար-

գի բազմակողմանի արդիականացում՝ տեղեկատվական և հեռահաղորդակցման նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ: Քննարկվող համակարգի նորամուծական լուծումների շնորհիվ կապահովվի զինծառայողներին, նրանց ընտանիքների անդամներին և ՀՀ օրենսդրությամբ վերջիններիս հավասարեցված անձանց բժշկական ծառայությունների արդյունավետ որակյալ մատուցումը: Համակարգի ներդրումը կնպաստի նաև ռազմաբժշկական ծառայության ոլորտում վիճակա-



Նկ. 2. Ռազմաբժշկական համակարգում միասնական տեղեկատվային շտեմարանի մակարդակները և նպատակային կիրառությունը

գրական հաշվառման բարելավմանը, համապատասխան շտեմարաններում տեղեկույթի կուտակումը հնարավորություն կտա կատարելու խորացված բազմակողմանի վերլուծություններ և դրանց հիման վրա կանխատեսումներ, մշակելու և իրագործելու տարբեր կանխարգելիչ ծրագրեր, կատարելու ճշգրիտ հաշվարկումներ՝ բժշկական ծախսերի չափը որոշելու համար, ինչի շնորհիվ կապահովվեն ֆինանսական ռեսուրսների խելամիտ տեղաբաշխումն ու արդյունավետ կառավարումը:

ՏԵՂԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐՈՒՄ ՀՀ ԶՈՒ-Ի ԵՎ ԱՅԼ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԲՈՒԺՇԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Ս. Գ. ԳԱԼՍՏՅԱՆ, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊԲՀ ռազմաբժշկական ֆակուլտետի պետ, Ա. Վ. ՆԱԶԱՐՅԱՆ, բ/ծ մայոր, բժշկական գիտությունների թեկնածու, ԵՊԲՀ ռազմաբժշկական ֆակուլտետի պետի տեղակալ, Գ. Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆ, բ/ծ փոխգնդապետ, ԵՊԲՀ ռազմաբժշկական ֆակուլտետի ԲԾԿՄ ամբիոնի պետ, Կ. Մ. ԱԹՈՅԱՆ, բ/ծ գնդապետ, ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության բժշկական ապահովման վարչության պետ

ՆԱԽԱԲԱՆ

Ռազմական գործողությունների հաջողությունը մեծապես պայմանավորված է համակողմանի ապահովման[1] որակով և արդյունավետությամբ: Ապահովման ճիշտ կազմակերպման համար անհրաժեշտ է, որ այն լիովին համապատասխանի ռազմական գործողությունների բնույթին, կիրառվող ռազմավարությանն ու մարտավարությանը և այլ պարամետրերի: ՈՒստի ապահովումը կազմակերպելիս պետք է հստակ պատկերացում ունենալ ապագա ռազմական գործողությունների, դրանց վարման եղանակների, կիրառվող ուժերի ու ՍՈՏ-ի, հակառակորդի ռազմական գործողությունների թատերաբեմի աշխարհագրական առանձնահատկությունների մասին: Ռազմական գործողությունների ապահովման տեսակ է բուժապահովումը, որը այն միջոցառումների համալիրն է, որոնք նպատակաուղղված են ԶՈՒ-ի մարտունակության պահպանմանը, անձնակազմի առողջության ամրապնդմանը, բուժօգնության պատեհաժամ ցուցաբերմանը և վիրավորների ու հիվանդների առողջության, մարտունակության (աշխատունակության) վերականգնմանը[2]:

ՈՒստի նպատակահարմար ենք համարում համառոտակի վերլուծել տեղային պատերազմների փորձը՝ հնարավոր ապագա պատերազմի բնույթը կանխատեսելու և դրան համապատասխան բուժապահովման համակարգ մշակելու համար: Տվյալ կանխատեսումներն ու դրանց հիման վրա ապագա բուժապահովման համակարգի տեսական մշակումը հատկապես կարևոր են ՀՀ-ի համար, քանի որ տարածաշրջանում տիրող լարված ռազմաքաղաքական իրադրությունը, որի վրա տարաբնույթ ազդեցություն են գործում Արևմուտք – Ռուսաստան դիմակայությունը, Մերձավոր Արևելքում ծայրահեղական մահմեդական շարժումների ծավա-

[1] Ռազմական գործողությունների ապահովումը այն միջոցառումների համալիրն է, որոնք ձեռնարկվում են ի շահ զորքերի (ուժերի) մարտական պատրաստության մեջ պահելու, դրանց մարտունակությունը պահպանելու և հաջողությամբ ու ժամանակին առաջադրված խնդիրների կատարման համար բարենպաստ պայմաններ ստեղծելու համար (տես «Военно-энциклопедический словарь». М., 2002, с. 1017):

[2] Տես նույն տեղում, էջ 892:

լապաշտական ակտիվացումը, ինչպես նաև մեր հանրապետության ռեսուրսների սահմանափակությունը, զրկում է մեզ «փորձի և սխալի» սկզբունքով գործելու հնարավորությունից:

Մարդկության պատմության ներկա ժամանակաշրջանը տեղային պատերազմների, հակամարտությունների, հեղափոխությունների ու սոցիալական ցնցումների, կրոնական մոլեռանդության բռնկումների, ցեղասպանությունների ու բռնի տեղահանումների, ահաբեկչական ու հակաահաբեկչական գործողությունների, բնական ու տեխնածին աղետների մի անվերջանալի շղթա է:

Ամբողջ 20-րդ դարը և 21-րդ դարի սկիզբը երկու համաշխարհային ու բազմաթիվ տեղային պատերազմների, կայսրությունների փլուզման, նոր պետությունների առաջացման, ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի, պետությունների միջև սահմանների փոփոխման, ազգերի ինքնորոշման և այդ իրավունքի ոտնահարման, դաժան ահաբեկչությունների ու միլիոնավոր զոհերի պատմություն է:

Ներկայումս աշխարհում ռազմաքաղաքական իրավիճակը բնորոշվում է հակասական միտումներով:

Մի կողմից, միջազգային հարաբերություններում սկսել են նկատելի դեր կատարել տնտեսական, քաղաքական, գիտատեխնիկական, բնապահպանական և տեղեկատվական գործոնները: Պատճառը պետությունների մեծ մասի տնտեսական և քաղաքական դիրքերի ամրապնդումն է, կառավարման գործընթացում միջազգային քաղաքական, տնտեսական, ֆինանսական և տեղեկատվական մեխանիզմների կատարելագործումը: Մյուս կողմից՝ ռազմական բաղադրիչը չի կորցրել իր վճռորոշ նշանակությունը:

Գիտության և տեխնիկայի արագ զարգացման, ռազմական ոլորտում նորագույն տեխնոլոգիաների ներդրման հետևանքով զինված պայքարի միջոցները ձեռք են բերել նոր որակ՝ հնարավորություն տալով ոչ միայն զենքի կինետիկ էներգիայի հաշվին ավերելու և ոչնչացնելու հակառակորդի կենդանի ուժին, ենթակառուցվածքը, բնակավայրերը, այլև առաջ բերելու մոլորակի մասշտաբով բնական աղետներ[3]: Այժմ՝ 5-րդ սերնդի պատերազմներում, վերացել են երբեմնի ավանդական այնպիսի հասկացությունները, ինչպիսիք են ռազմաճակատը, թիկունքը, զորքի օպերատիվ դասավորությունը, մարտակարգը, ուժերի կենտրոնացումը գլխավոր հարվածի ուղղության վրա և այլն[4]: Հարձակվող կողմի համար հասանելի է դարձել պաշտպանվող պետության ամբողջ տարածքով մեկ ցրված օբյեկտներից յուրաքանչյուրը: Իսկ դա նշանակում է, որ ապահովման միջոցները ևս պետք է հնարավորինս պլանաչափ ձևով բաշխված լինեն ամբողջ տարածքով մեկ:

Է՛լ ավելի առաջադիմական է «ցանցակենտրոն» պատերազմի հայեցակարգը, որը մշակել են «ՌԵՆԴ Քորփորեյշն» կազմակերպության մասնագետները:

[3] Տես *С. Г. Чекинов, С. А. Богданов*. О характере и содержании войны нового поколения. «Военная мысль», 2013, № 10:

[4] Տես *Լ. Գ. Այվազյան,* Եվրոպական զորային կառույցների և ռազմական արվեստի զարգացման դինամիկան պատմական հոլովույթում: «ՀԲ», 2011, հմ. 1–2:

Ըստ այդ հայեցակարգի՝ մարտադաշտը տեղեկութային տարածության հատված է, որտեղ տեղաբաշխված պայքարի միջոցները միավորված են մեկ-միասնական տեղեկատվական ցանցով, և նրանց ընդհանուր հզորությունն էապես գերազանցում է նրանց հզորությունների գումարը[5]:

Սակայն հարկ է նշել, որ տեսական մշակումների հիման վրա վերաստեղծված այս պատկերը բնորոշ է հզոր ռազմական, ռազմատեխնիկական ներուժ ունեցող տերության և համեմատաբար թույլ փոքր պետության միջև ռազմական բախմանը, քանի որ փոքր պետությունների միջև տեղի ունեցած պատերազմները գրեթե չեն վերլուծվում: Եվ դա միանգամայն հասկանալի է, քանի որ ռազմական գիտությունը զարգացած է մեծ պետություններում:

Մինչդեռ ՀՀ-ի դեմ Ադրբեջանի չհայտարարված հնարավոր պատերազմը կունենա միանգամայն այլ բնույթ: Եվ այստեղ պետք է ցավով նշել, որ Արցախյան պատերազմը չի ենթարկվել խոր մասնագիտական վերլուծության, ինչն ունի և օբյեկտիվ, և՛ սուբյեկտիվ պատճառներ: Սակայն որոշ վերապահումներով ու ճշգրտումներով կարելի է անցած դարի որոշ տեղային պատերազմների օրինակով վերարտադրել ՀՀ-ի ու ԼՂՀ-ի դեմ Ադրբեջանի հնարավոր պատերազմի ուրվանկարը:

Ղարաբաղյան պատերազմի սկզբնական շրջանում հայկական կողմի կանոնավոր բանակ չունենալն ու Զինված ուժերի շինարարության փորձի պակասը որոշակի դժվարություն առաջացրին տվյալ փուլում պետության ռազմական համակարգի ստեղծման ու զարգացման համար: Ռազմաքաղաքական իրավիճակի սրընթաց փոփոխություններն իրենց հերթին դժվարացնում էին ոլորտի զարգացման օրինաչափությունների հայտնաբերումը:

Միևնույն ժամանակ, ՀՀ և ԼՂՀ սահմանամերձ շրջաններում Ադրբեջանի կողմից հրադադարի ռեժիմի պարբերական խախտումները, դիվերսիոն-հետախուզական խմբերի ներթափանցման կրկնվող փորձերը, հարևան երկրի ղեկավարության ռազմատենչ հռետորաբանությունը որոշ չափով հավանական են դարձնում տարածաշրջանում մարտական գործողությունների վերսկսումը: Կարելի է վստահաբար ասել, որ դրանք կունենան տեղային պատերազմի բնույթ:

Սահմանամերձ տարածքների ոչ հոծ բնակեցվածությունը, արդյունաբերական և տնտեսական ենթակառուցվածքների, պետական, մարզային ու համայնքային նշանակության օբյեկտների միմյանց մոտ գտնվելը ենթադրում են տեղային պատերազմին տարբեր պետական կառույցների զինված ստորաբաժանումների մասնակցություն:

Համաձայն «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության», «ՀՀ քաղաքացիական պաշտպանության» և «Վտանգավոր տարածքից բնակչության տարահանման կարգը հաստատելու» մասին օրենքների՝ արտակարգ, այդ թվում՝ պատերազմական, իրավիճակում ՀՀ տարածքում ստեղծվում են ՀՀ պետական կառավարման պետական, մարզային ու տարածքային մար-

[5] Տես *С. Н. Гриняев.* «Сетевая война» по-американски. «Независимое военное обозрение», 5 февраля 2002 г.:

միններ (լիազորված մարմիններ), որոնց կողմից կազմակերպվող և իրականացվող միջոցառումներից են աղետի շրջանում բնակչության տարահանումն ու տեղաբաշխումը, բնակչության բուժապահովումը, վտանգավոր տարածքների հայտնաբերումը, փրկարարական, վնասազերծման ու վարակազերծման աշխատանքների կազմակերպումը և այլն:

Կախված մարտական իրադրությունը պայմանավորող գործոններից՝ մարտական գործողություններ վարող խմբավորումը, բացի բանակի կանոնավոր ստորաբաժանումներից, կարող է ներառել նաև ներքին զորքերի, ոստիկանության, ազգային անվտանգության, այդ թվում՝ սահմանապահ զորքերի, և այլ ստորաբաժանումներ: Այդ դեպքում մեծանում է վերը նշված պետական կառույցների բուժծառայությունների խնդիրների ծավալը, առաջանում է հատուկ խնդիրների լուծման անհրաժեշտություն:

Տեղային պատերազմներում տարբեր ինտենսիվության մարտական գործողությունների բուժապահովման փորձը վկայում է, որ անհրաժեշտ է ապահովել տարբեր գերատեսչությունների բուժծառայությունների փոխգործելիություն և աշխատանքի կատարյալ ներդաշնակություն, մինչդեռ մեր պայմաններում հրամանատարաշտաբային զորավարժությունների արդյունքները ցույց են տալիս, որ տարբեր պետական գերատեսչությունների ու նախարարությունների բուժծառայությունների միջև համագործակցությունը դեռ չի հասցված պատշաճ մակարդակի, և կան մի շարք խնդիրներ: Ընդ որում, տուժածներին բուժօգնության կազմակերպումը պայմանավորող գործոններից են՝ գործնականում միաժամանակյա մեծաթիվ սանիտարական կորուստները, խոցվածների մի զգալի մասի համար անհետաձգելի բուժօգնության կենսականորեն ցուցված լինելը, բուժօգնությունը վնասվածքի ստանալու վայրում ցուցաբերելու անհրաժեշտությունը, հատուկ, այդ թվում՝ բարձր, տեխնոլոգիական բուժօգնության և ստացիոնար բուժման կարիք ունեցողների մեծ թիվը և այլն:

Ոստիկանության և ներքին զորքերի բուժծառայությունների հիմնական խնդիրը պետական կարևոր օբյեկտների, բեռների, տարահանված բնակչության, շարասյուների, պահպանվող օբյեկտների մերձակայքում հակառակորդի դիվերսիոն-ահաբեկչական խմբերի ոչնչացումը, ներքին կարգուկանոնի պահպանությունն իրականացնող ուժերի բուժապահովումն է, իսկ արտակարգ իրավիճակների նախարարության բժշկական ծառայության խնդիրը խաղաղ բնակչության և փրկարարական-վերականգնողական աշխատանքներում ընդգրկված անձնակազմի բուժապահովումը, ապա բանակի բուժծառայության խնդիրը՝ մարտական գործողություններ վարող ստորաբաժանումների բուժապահովումն է, և այլն:

Վերը նշված պետական կառույցների բուժծառայությունները բուժապահովման ընթացքում օգտվում են ինչպես գերատեսչական բուժծառայության հնարավորություններից (առանձին բժշկական ջոկատներ, հատուկ նախանշանակման բժշկական ջոկատներ, հոսպիտալներ), այնպես էլ ՀՀ առողջապահության նախարարության ընձեռած հնարավորություններից (քաղաքացիական բուժհիմնարկներ):

Տեղային պատերազմներում տարբեր պետական կառույցների ուժերի ու միջոցների համատեղ կիրառումը ի հայտ բերեց մի շարք խնդիրներ՝ դրանց բուժծա-

ռայությունների ու քաղաքացիական առողջապահության համակարգի համագործակցության տեսանկյունից:

Դրանք են՝

• տարբեր պետական կառույցների բուժծառայությունների համատեղ կիրառման իրավական-նորմատիվային հիմքի անկատարությունը,

• պետական տարբեր կառույցների բուժծառայությունների միասնական կառավարման համակարգ չլինելը:

Մեր կարծիքով՝ վերը նշված խնդիրները պայմանավորված են տարբեր պետական կառույցների բուժծառայությունների համագործակցության բովանդակության, ձևերի ու մեթոդների վերաբերյալ դրանց կառավարող մարմինների տեսակետների տարբերությամբ, կառավարման տարբեր մակարդակներում (պետական, մարզային) նման աշխատանքների փորձի պակասով, ինչպես նաև իրավական-նորմատիվային հիմքի անկատարությամբ:

Պատերազմների փորձի վերլուծությունը ցույց է տալիս, որ այն դեպքերում, երբ համատեղ գործող տարբեր պետական կառույցների զինված ստորաբաժանումները գործել են յուրաքանչյուրն իր կառավարման մարմնի ղեկավարությամբ, նրանց գործողությունները կրել են չհամաձայնեցված, անկանոն բնույթ, ինչի հետևանքով դրանց արդյունավետությունը եղել է խիստ ցածր մակարդակի, կամ էլ պատերազմը կամ դրա մի որոշ փուլ տանուլ է տրվել (Հայրենական մեծ պատերազմի 1-ին փուլ, Չեչենական 1-ին պատերազմ և այլն): Նույնը վերաբերում է նաև բուժապահովմանը:

Իսկ այն դեպքերում, երբ տարբեր պետական կառույցների համատեղ գործող զինված ստորաբաժանումները ղեկավարվել են մեկ միասնական կառավարող մարմնի կողմից, թե՛ մարտական, թե՛ բժշկական ապահովման արդյունավետությունը եղել է բարձր մակարդակի: Ընդ որում, միասնական մարմինը ղեկավարել է բանակի կառավարման սկզբունքներով ու մեթոդաբանությամբ:

Տարբեր պետական կառույցների բուժապահովման համակարգերի միավորման օրինակ է Աղետների բժշկության համառուսաստանյան ծառայությունը (ԱԲՀԾ), որի խնդիրն է բժշկական օգնություն ցուցաբերել վթարներից, բնական ու տեխնածին աղետներից, ահաբեկչական գործողություններից և զինված հակամարտություններից (այդ ամենը միավորվում է «արտակարգ իրավիճակ» հասկացությամբ) տուժածներին: ԱԲՀԾ-ն գործառութային առումով միավորում է՝

– ՌԴ առողջապահության նախարարության աղետների բժշկության ծառայությունը,

– ՌԴ պաշտպանության նախարարության աղետների բժշկության ծառայությունը,

– ՌԴ քաղաքացիական պաշտպանության գործերով, Արտակարգ իրավիճակների և բնական աղետների հետևանքների վերացման, Ներքին գործերի նախարարությունների, Սպառողների և մարդու բարեկեցության իրավունքների պաշտպանության ոլորտում հսկողության դաշնային ծառայության, գործադիր իշխանության այլ դաշնային մարմինների, ՌԴ սուբյեկտների գործադիր իշխանության մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, Բժշկական

գիտությունների ռուսաստանյան ակադեմիայի և ոլորտի հետ առնչվող այլ կազմակերպությունների ուժերն ու միջոցները:

2008 – 2012 թթ. ԱԲՀԾ շտաբը կատարել է 1505 արտակարգ իրավիճակների մշտազննում և համադասել է դրանց բժշկական-սանիտարական հետևանքների վերացումը[6]:

Գրականության տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ շատ երկրներ ռազմական ընդհարումների ժամանակ, բացի ռազմաբժշկական ծառայության ուժերից, մեծ չափով օգտագործում են նաև քաղաքացիական առողջապահության բուժհաստատությունների ներուժը: Ընդ որում, գոյություն ունեցող միջոցների արդյունավետ օգտագործման համար ընդհանրապես առաջարկվում է ռազմական ընդհարումների ժամանակ կազմակերպել քաղաքացիական առողջապահության և ռազմաբժշկական ծառայության ուժերի սերտ համագործակցություն:

Այսպես. Կորեայի պատերազմի ժամանակ օգտագործվել են քաղաքացիական բուժհիմնարկներ, որոնք սկզբում ծավալվել են 60 մահճակալի, հետագայում՝ 200 մահճակալի չափով: 1986 թ. Լիբանանի դեմ պատերազմում Իսրայելի սահմանամերձ քաղաքացիական հիվանդանոցները վերածվել են հոսպիտալների: Զինվորական բժշկական անձնակազմով ուժեղացված բուժհիմնարկներում ծավալվել են բժշկական տեսակավորման, վերակենդանացման, անհետաձգելի բուժօգնության, վիրաբուժական և արյան բանկի բաժանմունքները: Յուրաքանչյուր հոսպիտալ օրական վիրաբուժական օգնություն է ցույց տվել 300 վիրավորի[7]:

ԱՄՆ-ի բանակի ռազմաբժշկական ծառայության մշակած ծրագրի համաձայն՝ նախատեսվում է վիրավորների և հիվանդների տարահանում ինչպես ռազմաբժշկական կենտրոններ, այնպես էլ քաղաքացիական բուժհիմնարկներ ու պատերազմի վետերանների հոսպիտալներ: Մասնավորապես՝ ԱՄՆ-ը Մեծ Բրիտանիայում ստեղծել է 15 ռազմական հոսպիտալ, իսկ անգլիական կողմն անհրաժեշտության դեպքում պետք է իր քաղաքացիական բուժհիմնարկներից տրամադրի 40000 մահճակալ[8]:

Վերը շարադրվածի հիման վրա կարելի է գալ հետևյալ եզրահանգումների.

1. զորքերի միացյալ խմբավորումների բուժապահովումը կարող է արդյու-

---

[6] Տես *Հ. Ֆ. Գոնչարով, Ա. Յա. Ֆիսուն, Բ. Վ. Բոբիյ.* О развитии Всероссийской службы медицины катастроф на современном этапе. «Военно-медицинский журнал», 2013, N 10:

[7] Տես *Հ. Մ. Դարբինյան.* Ռազմական բժշկությունը հանրապետության առողջապահության համակարգում: «ՀԲ», 2011, հմ. 4, նաև՝ *А. П. Пантюхов.* Организация оказания медицинской помощи военнослужащим НАТО при проведении наземной операции в современных вооруженных конфликтах. «Организация медицинского обеспечения зарубежных стран» (https://www.google.ru/url?sa=t&rct=j&q=&esrc=s&source=web&cd=1&ved=0CBwQFjAA&url=http%3A%2F%2Fwww.bsmu.by%2Fmilitarymedicine%2F3fe053cd1d08e4a8767c6dae5e1aa1e4%2F&ei=9k02VKbIAqfSygOS8IL4AQ&usg=AFQjCNEa4KO3S9KEUsvU8twJyAJ1GY8QrA&cad=rjt):

[8] ԱՄՆ-ի ռազմական բժշկության վերաբերյալ հանգամանորեն տես *Jack E. McCallum.* Military Medicine: From Ancient Times to the 21st Century. California, 2008:

նավետ լինել, եթե կատարվի բանակի բուժծառայության և նրա գործունեության սկզբունքների ու մեթոդաբանության հիման վրա,

2. անհրաժեշտ է, ըստ տարածքային սկզբունքի, նախօրոք մանրակրկիտ կերպով վերլուծել բժշկական-մարտավարական իրավիճակը պայմանավորող գործոնների համալիրը և տեղային պատերազմներում ընդգրկվող զինված ստորաբաժանումների միասնական կառավարող մարմնի ու դրա բուժծառայության գործունեությունը համապատասխանեցնել այդ պայմաններին:

Թեև ոլորտը կարգավորվում է վերը հիշատակված օրենսդրական ակտերով, սակայն Հայաստանի Հանրապետության համապատասխան պաշտոնական փաստաթղթերում թերի են տարբեր պետական կառույցների բուժծառայությունների համագործակցությունը կանոնակարգող դրույթները:

Մարտական գործողությունների վերսկսման դեպքում կարևոր է բուժապահովման ոլորտում լուծել հետևյալ խնդիրները.

1. պատերազմի սկզբնական փուլում բուժծառայությունը գործելու է խաղաղ պայմանների ուժերով ու միջոցներով, իսկ զորահավաքային ռեսուրսների արագ ներգրավումը կապված կլինի որոշակի դժվարությունների հետ, ուստի հարկ է միջոցներ նախատեսել բուժկազմի արագ զորահավաքման ու տեղերում բաշխման համար,

2. սանիտարական, այդ թվում՝ օդային, տրանսպորտի համալրում մինչև անհրաժեշտ թվաքանակը,

3. սահմանամերձ շրջաններում մասնագիտացված բուժօգնության ցուցաբերումը կապված է դժվարությունների հետ, այն կենտրոնացված է մայրաքաղաքում, ուստի կծագի դեպի կենտրոնական օղակ մեծ թվով վիրավորների ու հիվանդների տարահանման անհրաժեշտություն,

4. կառավարման ինչպես հանրապետական, այնպես էլ տարածքային մակարդակներում տարբեր պետական կառույցների բուժծառայությունների միջև համագործակցության համակարգը կանոնակարգված չէ:

Վերը նշված խնդիրների լուծման համար առաջարկում ենք հետևյալ միջոցները.

• կառավարման լիազորված մարմնի կազմում ստեղծել բուժծառայության միասնական կառավարման ենթամարմին,

• ըստ օպերատիվ կառավարման պլանի՝ հստակ կերպով սահմանել տարբեր պետական կառույցների բուժծառայությունների ենթակարգությունը,

• հստակ կերպով սահմանել զորքերի միացյալ խմբավորման բուժծառայության կառավարող մարմնի գործունեության ձևերն ու մեթոդները,

• ստեղծել հստակ կերպով ու անխափան գործող ավտոմատ կառավարման համակարգ,

• կանխատեսել բուժապահովման համալիրի միջոցառումների (բուժտարահանում, սանիտարական վերահսկողություն, հակահամաճարակային, բժշկական գույքով ապահովում) ծավալները և որոշել դրանց իրագործման հաջորդականությունը,

• միօրինականացնել կառավարման, հաշվառման և հաշվետվության փաստաթղթերը,

• մշակել և իրականացնել միջոցառումներ՝ նպատակաուղղված կառավարման տարբեր մակարդակների (պետական, տարածքային) լիազորված մարմիններում ընդգրկված տարբեր պետական կառույցների բուժծառայությունների համագործակցության գործնական հմտությունների կատարելագործմանը (հրամանատարաշտաբային զորավարժություններ, վարժանքներ, զորավարժություններ),

• ըստ վարչական բաժանման սկզբունքի՝ կանխատեսել տարբեր պետական կառույցների բուժծառայությունների աշխատանքի ծավալները և հստակ կերպով պլանավորել դրանց համագործակցությունը:

ВОЕННАЯ МЕДИЦИНА

АКТУАЛЬНОСТЬ ВНЕДРЕНИЯ В ВОЕННО-МЕДИЦИНСКОЙ СИСТЕМЕ ЕДИНОЙ ИНФОРМАЦИОННОЙ СЕТИ

Р. Г. ХАЧАТРЯН, кандидат медицинских наук, советник Министра здравоохранения РА

РЕЗЮМЕ

Одной из актуальных задач сферы медицинского обеспечения Вооруженных сил РА, требующей незамедлительного решения для оптимизации военно-медицинской деятельности, является внедрение единой информационно-электронной системы, в качестве стартового этапа к созданию автоматизированной системы управления. В результате этого внедрения будут обеспечены как целостность информации в системе военно-медицинской службы РА, так и ее оптимальное использование. Решение этой проблемы предполагает многопрофильное совершенствование военно-медицинской системы с использованием новейших информационных технологий и механизмов телекоммуникации.

К ПРОБЛЕМЕ ВЗАИМОДЕЙСТВИЯ МЕДИЦИНСКИХ СЛУЖБ ВС И ДРУГИХ ГОСУДАРСТВЕННЫХ СТРУКТУР РА В ЛОКАЛЬНЫХ ВОЙНАХ

С. Г. ГАЛСТЯН, доктор медицинских наук, профессор, начальник ВМФ ЕГМУ, А. В. НАЗАРЯН, майор м/с, кандидат медицинских наук, заместитель начальника военно-медицинского факультета ЕГМУ, Г. Р. ВАРДАНЯН, подполковник м/с, начальник кафедры военно-медицинского факультета ЕГМУ, К. М. АТОЯН, полковник м/с, начальник Управления медицинского обеспечения спасательной службы МЧС РА

РЕЗЮМЕ

Анализируется опыт локальных войн последних десятилетий с целью прогнозирования характера военных действий в случае их возобновления Азербайджаном и разработки соответствующей системы военно-медицинского обеспечения. На основе анализа делается вывод о том, что возможная война будет иметь локальный характер, но в то же время близость расположения объектов производственно-экономической инфраструктуры, объектов государственного, областного и местного значения подразумевает участие в войне вооруженных подразделений и других структур – внутренних войск, полиции, службы национальной безопасности, в том числе – пограничных войск, и т. д.

Опыт военно-медицинского обеспечения локальных войн различных интенсивностей свидетельствует, что необходимо обеспечить слаженность взаимодействия и работы медслужб разных госструктур. Однако результаты командно-штабных учений свидетельствуют, что это взаимодействие пока еще не на должном уровне, и существует ряд проблем, в частности: несовершенство нормативно-правовой базы для совместного применения медслужб разных госструктур, отсутствие системы единого управления этими медслужбами.

Для решения этих проблем предлагается: в составе полномочного органа управления, создаваемого при чрезвычайных ситуациях согласно законодательству РА, предусмотреть суборган единого управления медслужбами разных госструктур; согласно плану оперативного управления четко определить субординацию вовлекаемых в медобеспечение действующих сил медслужб; определить методы и способы деятельности управляющего органа объединенной медслужбы действующей группировки войск; создать надежную систему автоматического управления; прогнозировать объемы мероприятий медобеспечения и определить их последовательность; унифицировать управленческие, учетные и отчетные документы; разработать и осуществить мероприятия, нацеленные на совершенствование практических

навыков взаимодействия медслужб различных госструктур, включенных в полномочные органы управления разных уровней, а также учреждений системы гражданского здравоохранения республики; согласно принципу административного деления прогнозировать объемы работ медслужб разных госструктур и планировать их взаимодействие.

MILITARY MEDICINE

THE URGENCY OF ADOPTING AN INTEGRATED INFORMATION NETWORK IN THE MILITARY MEDICAL SYSTEM

R. G. KHACHATRYAN, PhD in Medicine, Advisor to the Ministry of Health, RA

SUMMARY

One of the urgent issues in the sphere of medical service in the RA Armed Forces, which requires an immediate solution to optimize the military medical practice is the adoption of an integrated information electronic system as an initial stage to the creation of the automated management system. This adoption will result in providing both the information integrity in the Military Medical Service of the RA, as well as its effective use. Handling this problem pre-supposes the multi-faceted improvement of the military medical system with the use of up-to-date information technology and telecommunication mechanisms.

THE PROBLEM OF COORDINATION BETWEEN MEDICAL SERVICES OF THE ARMED FORCES AND OTHER RA STATE STRUCTURES IN LOCAL WARS

S. G. GALSTYAN, M. D., Professor, Head of the Faculty of Military Medicine, YSMU, A. V. NAZARYAN, Major of Medical Service, PhD in Medicine, Deputy Head of the Military Medical Department, YSMU, G. R. VARDANYAN, Lieutenant Colonel of Medical Service, Head of the Chair of the Military Medical Department, YSMU, K. M. ATOYAN, Colonel of Medical Service, Head of the Medical Support Department of the Rescue Service, RA Ministry of Emergency Situations

SUMMARY

The experience of local wars of recent decades is analyzed to predict the nature of hostilities in case of their resumption by Azerbaijan and to develop appropriate system of military-medical support. Based upon the analysis it is concluded that a possible war will be local in nature, but at the same time, the

proximity of production and economic infrastructure facilities, those of state, regional, and local significance implies the participation of armed units and other structures – internal troops, police, national security service, including frontier troops, etc.– in the war.

The experience of military-medical support of local wars of various intensities indicates that it is necessary to ensure coherence of activity of medical services of different state structures. However, the results of command and staff exercises show that this coordination is still not at an appropriate level, and there are a number of problems, particularly: imperfection of normative legal framework for the joint application of medical services of different state structures; lack of an integrated system of managing these medical services.

To solve these problems it is proposed to: provide a subsidiary body of an integrated management of medical services of different state structures in the composition of plenipotentiary administrative body set during emergency situations according to the RA Legislation; complying with the plan of operational management clearly define the subordination of acting forces of medical service being involved during medical support; determine the methods and ways of activities of the administrative body of the unified medical service of operating group of troops; create a reliable system of automatic control; predict the scale of measures on medical support and determine their sequence; unify the administrative, accounting and report documents; develop and implement activities targeted at improving practical skills of coordination between medical services of different state structures included in plenipotentiary administrative bodies of different levels, as well as institutions of the civil healthcare system of the Republic; in line with the principle of administrative division predict the capacity of medical service activities of different state structures and plan their coordination.

ՑԱԾՐ ԱՄՊԱՄԱԾՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ ԵՂԱՆԱԿԱԳԻՏԱԿԱՆ-ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՄԵԹՈԴՈՎ («ԷՐԵԲՈՒՆԻ» ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

Մ. Վ. ԵՓՐԵՄՅԱՆ, կապիտան, օդերևութաբանական ծառայության պետ, ԵՊՀ ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի հայցորդ, Հ. Ա. ՄԵԼՔՈՆՅԱՆ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության Հայպետհիդրոմետի փոխտնօրեն

Թռիչքների օդերևութաբանական ապահովման առաջնային կարևորության տարրերից է ամպերի ստորին սահմանների բարձրությունների (ԱՍՍԲ) որոշումը[1]: Դրանց վերաբերյալ բավարար հավաստի կանխատեսումներ անելու համար անհրաժեշտ է թռիչքների շրջաններում կամ թռիչքուղիներում, տեղական ֆիզիկաաշխարհագրական պայմանների հաշվառմամբ մանրակրկիտ կերպով ուսումնասիրել ընդհանուր օդերևութաբանական իրավիճակը. ճնշման դաշտերի, օդային զանգվածների և մթնոլորտային ճակատների տեսակները, դրանց շարժման ուղղությունները, արագությունները, զարգացումները, գործնականում դիտվող եղանակային պայմանները, գետնամերձ շերտում և ազատ մթնոլորտում քամիների ուղղություններն ու արագությունները:

Համաձայն ՄԱԿ-ի կազմում գործող Համաշխարհային օդերևութաբանական կազմակերպության (ՀՕԿ) տերմինաբանության՝ 72 ժամվա համար արված եղանակային կանխատեսումները կոչվում են կարճաժամկետ (ԿԿ), իսկ 12 ժամվա կանխատեսումները՝ գերկարճաժամկետ (ԳԿ): ԳԿ-ն հիմնականում վերաբերում է օդերևութաբանական տվյալներով ավիացիայի ապահովմանը: Ընդսմին այս դեպքում բացի ԳԿ-ից, տրվում են նաև մի քանի րոպեանոց կանխատեսումներից մինչև 3-ժամյա կանխատեսումներ, որոնց կոչում են ընթացիկ կանխատեսումներ (ԸԿ, նաուքաստինգ - *Nowcasting*)[2]: Այս կանխատեսումները վերաբերում են

[1] Տես *О. Г. Богаткин.* Информационно-справочная книга авиационного метеоролога. Книга 1, СПб., 2010, с. 110; «Руководство по практическим работам метеоподразделений авиации, ВВС РФ». М., 1992, с. 126:

[2] Տես *О. Г. Богаткин.* Информационно-справочная книга..., сс. 109–113; *С. П. Бочкин.* Диагноз и прогноз продолжительности сложных метеорологических условий. Автореферат диссертации на соискание ученой степени кандидата географических наук. Воронеж, 2006, сс. 89–90; «Руководство по практическим работам ...», сс. 178–188; «Руководство

մթնոլորտի ուղղաձիգ շերտավորման փոփոխություններին, ճնշումային համակարգերի և մթնոլորտային ճակատների տեղաշարժմանը, ինչպես նաև առանձին օդերևութաբանական տարրերի մեծություններին և դրանց տարածաժամանակային փոփոխություններին:

Այսպիսով՝ եղանակի կանխատեսումները կատարվում են զանազան մեթոդներով, որոնցից հիմնականներն են արտարկման, եղանակագիտական (փորձային), վիճակագրական, ադվեկցիոն, հիդրոդինամիկական, վերահաղորդման ձևավորված և այլ մեթոդներ:

Սույն աշխատանքում փորձ է արվում «Էրեբունի» օդանավակայանի շրջանի օրինակով մշակել ցածր ամպամածության* կարճաժամկետ և գերկարճաժամկետ կանխատեսումների մեթոդիկա: Աշխատանքի կատարման համար օգտագործվել են այդ շրջանի ավիաօդերևութաբանական դիտակետի 2000–2010 թթ. դիտարկումների տվյալների շարքերը, գետնամերձ շերտի և մինչև 1500 մ բարձրության (*AT-850*) եղանակագիտական քարտեզները, ռադիոխորազննիչի հաղորդած տվյալների հիման վրա մշակված գրաֆիկները, ինչպես նաև մեծաթիվ գրականություն և գիտական հրապարակումներ:

Ընդհանրապես ցածր ամպամածության բարձրությունների որոշումը տեսողական, իսկ առանձին դեպքերում՝ նաև գործիքային եղանակներով կապված է որոշակի բարդությունների հետ, քանի որ ամպերի ստորին բարձրությունները ունեն բավական բարդ կառուցվածք (նկ. 1): Դա մթնոլորտի ուղղաձիգ տեսանելիության աստիճանական նվազման, այնուհետև ամբողջությամբ վերացման մի շերտ է, որի հզորությունը կարող է հասնել 100–500 մ-ի (1–3 շերտերը), ինչպես նաև անմիջականորեն ամպերի ստորին մակերևույթների ներքևում գոյություն ունի այսպես կոչված հագեցած օդի շերտ (1–2 շերտը՝ 50–150 մ միջին հզորությամբ), որն ազատ մթնոլորտում ստեղծում է մշուշի էֆեկտ[3]:

Բացի ցածր ամպամածության ստորին սահմանների բարդ կառուցվածքից, դրանք ըստ տարածքի ֆիզիկաաշխարհագրական առանձնահատկությունների ևս ունեն բավական բարդ բնույթ: Այսպես. մինչև 200 մ բարձրության վրա գտնվող ամպամածությունը ընդամենը 500–1000 մ գետնամերձ հեռավորության վրա 3-5 րոպեում կարող է ունենալ 40–50 %-ի հասնող տարբերություն: Եթե ընդունենք, որ միջին ստանդարտներով թռիչքավայրէջքային վազքուղու (ԹՎՈՒ) երկարությունը 2000–2500 մ է, ապա ցածր ամպամածության բարձրությունները մեկ ԹՎՈՒ-ի վերևում մի քանի րոպեի ընթացքում կարող են ունենալ 2-3 արժեք[4]:

по авиационной метеорологии». Международная организация гражданской авиации-ICAO. Изд. 11, 2010, сс. 64–65:

* Ցածր ամպամածությունը այն ամպամածությունն է, որի դեպքում գետնի մակերևույթից 200–300 մ բարձրությունների վրա գտնվում են ամպերի ստորին սահմանները:

[3] Տես *Օ. Գ. Богаткин.* Информационно-справочная книга..., сс. 109–113; *Օ. Գ. Богаткин, В. Д. Еникеева.* Анализ и прогноз погоды для авиации. Изд. 2. Ленинград, 1992, сс. 84–86; *Օ. Գ. Богаткин, Г. Г. Тараканов.* Авиационные прогнозы погоды. СПб., 2007, сс. 44–48; *С. П. Бочкин.* Диагноз и прогноз продолжительности ..., сс. 65–66:

[4] Տես *Օ. Գ. Богаткин.* Информационно-справочная книга..., сс. 109–113; *С. П. Бочкин.* Диагноз и прогноз продолжительности ..., сс. 65–66:

Այս փոփոխությունները հատկապես ակնառու են բարդ ռելիեֆային պայմաններում գտնվող օդանավակայաններում, ինչպիսին է նաև «Էրեբունի» օդանավակայանը:

Ցածր ամպամածության ԿԿ և ԳԿ անելու համար պետք է առաջին հերթին պարզել երկու կարևոր հարց[5], այն է.

1. եթե կանխատեսման ժամանակ արդեն դիտվում է ցածր ամպամածություն, ապա՝

ա) արդյոք այն կպահպանվի կանխատեսվող ժամանակահատվածում և

բ) եթե կպահպանվի, ապա ինչպիսին կլինի դրա արժեքների ընթացքը:

2. Եթե կանխատեսման ժամանակ ցածր ամպամածություն չի դիտվում, սակայն դրա առաջացման համար կան «բարենպաստ» եղանակային պայմաններ, ապա՝

ա) արդյոք կանխատեսվող ժամանակահատվածում կդիտվի ցածր ամպամածություն,

բ) եթե կանխատեսվում է ցածր ամպամածություն, ապա ինչպիսին կլինեն դրա արժեքները:



Նկ. 1. Ցածր ամպամածության ստորին սահմանների կառուցվածքը.
1 – կոնդենսացիայի մակարդակ, 2 – ամպերի ստորին սահմանը, 3 – հագեցած օդի վերին սահմանը, 1-2 – մշուշի (մառախուղի) շերտ, 2-3 – անցողիկ շերտ:

Վերլուծությունների արդյունքները ցույց են տալիս, որ ցածր ամպամածության բարձրությունները կարող են ավելի նվազել (այսինքն՝ կարող է դիտվել եղանակի վատացում), եթե դիտվում են հետևյալ օդերևութաբանական երևույթներից մեկը կամ մի քանիսը միաժամանակ. օդի վերընթաց հոսանքներ, տաք օդի ադվեկցիա համեմատաբար սառը մակերևույթների վրա, օդի հարաբերական խոնավության աճում, մթնոլորտային ճնշման նվազում, ցանկացած տեսակի մթնոլորտային ճակատի ներխուժում, օդի ջերմաստիճանի նվազում, մանրամաղ և գերսառած տեղումներ, գետնամերձ քամու՝ 2 մ/վրկ-ից փոքր արագություններ:

Ցածր ամպամածությունը կարող է բարձրանալ (այսինքն՝ կարող է դիտվել եղանակի լավացում), երբ դիտվում են հետևյալ օդերևութաբանական երևույթ-

[5] Տես *О. Г. Богаткин.* Информационно-справочная книга..., сс. 109–113; *О. Г. Богаткин.* Авиационная метеорология. Ленинград, 2005, сс. 159–169; *В. И. Блохина.* Авиационные прогнозы погоды. Учебное пособие по дисциплине «Авиационные прогнозы». М., 2004, сс. 46–49:

ներից մեկը կամ մի քանիսը միաժամանակ. օդի վարընթաց հոսանքներ, գետնամերձ քամիներ 5 մ/վրկ և ավելի, ազատ մթնոլորտում՝ 10-15 մ/վրկ և ավելի արագություններով, ցուրտ օդի ադվեկցիա (սակայն այս դեպքում կարող են առաջանալ ադվեկցիոն տիպի մառախուղներ), մթնոլորտային ճնշման աճում, մթնոլորտային ճակատի անցում կամ քայքայում, տեղումների դադարում, օդի ջերմաստիճանի աճում:

Այսպիսով՝ ինչպես երևում է, ցածր ամպամածությունը (այդ թվում՝ մառախուղները) կարող է առաջանալ ինչպես օդի ադվեկցիոն պրոցեսների, այնպես էլ վերընթաց հոսանքների դեպքում, երբ շատ կարևոր են մթնոլորտում խոնավության քանակությունը, քամիների բնույթը, ինվերսիոն շերտի առկայությունը: Այս օդերևութաբանական պայմանները կարող են պահպանվել 2-3 ժամից մինչև 6-9 ժամ՝ կախված պրոցեսի հզորությունից, ինտենսիվությունից, տարածքի բնույթից, մթնոլորտային տեղումներից, քամիների արագությունից և այլ հանգամանքներից:

Հաճախ կարող են առաջանալ այնպիսի իրավիճակներ, երբ կանխատեսումներ անելու ժամանակ դիտվող ցածր ամպամածության բարձրությունները ունենում են բավական բարդ բնույթ, այսինքն՝ կարճ ժամանակամիջոցում կարող են դիտվել ԱՍՍԲ-ի զգալի տատանումներ: Այս դեպքում խորհուրդ է տրվում ևս մեկ անգամ մանրակրկիտ կերպով ուսումնասիրել ընդհանուր եղանակագիտական դաշտը, եղանակի փոփոխությունների միտումները, դրանց ինտենսիվությունները, և կանխատեսումները կազմել համաձայն գերակշռող պրոցեսների:

Ինչպես արդեն նշել ենք, ցածր ամպամածությունը ավիացիայի համար այն գլխավոր օդերևութաբանական տարրերից է, որի միջոցով որոշվում է թռիչքի բարդության աստիճանը: Այս առումով բավական բարդ ու պատասխանատու խնդիր է նշված տարրերի համար ավիացիոն կանխատեսումներ անելը՝ հատկապես այն դեպքերում, երբ ամպամածության ստորին սահմանները գտնվում են 300 մ-ից ցածր բարձրությունների վրա, և դիտվում է խիստ փոփոխական արժեքներով հորիզոնական տեսանելիություն: Հաշվի առնելով այս ամենը՝ ուսումնասիրել ենք բավական մեծ թվով գրականություն և մինչ այժմ մշակված և աշխարհում լայն տարածում գտած ԿԿ և ԳԿ բազմաթիվ մեթոդներ[6]: Կանխատեսումների այդ մեթոդների վերլուծությամբ հանգել ենք այն եզրակացության, որ դրանց շարքում առավել արդյունավետ է եղանակագիտական-վիճակագրական մեթոդը, և դրանց գրեթե բոլորի հիմքում դրված են՝ օդի և ցողի կետի ջերմաստիճանները, ցողի կետի պակասուրդի, գետնամերձ քամու արագությունների և մթնոլորտային ճնշման արժեքները:

Ցածր ամպամածության կանխատեսումներ Ե. Ի. Գոգոլևի (եղանակագիտական-վիճակագրական) մեթոդով: Գետնամերձ շերտում օդի և ցողի կետի ջերմաստիճանների և ԱՍՍԲ-ի միջև գոյություն ունի սերտ կապ. որքան փոքր է ցողի կետի պակասուրդը (օդի և ցողի կետի ջերմաստիճանների տարբերությունը), այնքան ցածր է ամպամածության բարձրությունը, և հակառակը: ՈՒստի Ե. Ի. Գոգոլևը

[6] Տես «Наставление по метеорологической службе авиации Вооруженных сил СССР (НАМС-86)». М., 1987, сс. 65–82:

առաջարկում է այդ կապն օգտագործել ցածր ամպամածության բարձրությունների կանխատեսման համար[7]:

2000–2010 թթ. դիտարկումների տվյալների շարքերում մենք առանձնացրել ենք մինչև 500 մ ԱՍՍԲ-ի ժամանակ դիտված օդի ու ցողի կետի ջերմաստիճանների արժեքները, որոնց միջև հաստատվել են համահարաբերակցական կապեր: Նկ. 2-ում տրված են 100 մ և ավելի ցածր, 200-100 մ, 300-200 մ և 500-300 մ ԱՍՍԲ-ի դեպքերում օդի և ցողի կետի ջերմաստիճանների միջև համահարաբերակցական կապերի գրաֆիկները: Դրանց հավասարումները և համահարաբե-



Նկ. 2. 500 մ և ավելի ցածր ամպամածության կանխատեսումները՝ օդի և ցողի կետի ջերմաստիճանների միջև համահարաբերակցական կապերի հաստատման միջոցով

րակցական գործակիցները բերված են աղ. 1-ում, որից երևում է, որ մինչև 500 մ բարձրությունների վրա դիտվող ամպամածության պայմաններում օդի և ցողի կետի ջերմաստիճանների միջև համահարաբերակցական կապերի գործակիցները *(R)* բավական մեծ են. դրանք տատանվում են 0,98–0,99 սահմաններում:

Ցածր ամպամածության կանխատեսումների այս մեթոդից օգտվելու կարգը հետևյալն է: ՈՒնենալով որոշակի ժամանակամիջոցի համար օդի և ցողի կետի ջերմաստիճանի կանխատեսման արժեքները՝ դրանք տեղադրում ենք գրաֆիկում և որոշում ամպամածության հավանական բարձրությունը այդ պահին: Տվյալ մեթոդը կարող ենք օգտագործել օրվա ցանկացած ժամանակահատվածի ինչպես կարճաժամկետ, այնպես էլ գերկարճաժամկետ և ընթացքային կանխատեսումների համար:

[7] Տես *Օ. Գ. Богаткин.* Информационно-справочная книга..., сс. 109–113; *Օ. Գ. Богаткин.* Авиационная метеорология, сс. 159–169; *Վ. Ի. Блохина.* Авиационные прогнозы погоды, сс. 46–49; «Руководство по практическим работам ...», сс. 178–188:

Աղյուսակ 1

500 ՄԵՏՐ ԵՎ ԱՎԵԼԻ ՑԱԾՐ ԱՄՊԱՄԱԾՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ՝ ՕԴԻ ԵՎ ՑՈՂԻ ԿԵՏԻ ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՀԱՄԱՀԱՐԱԲԵՐԱԿՑԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ՀԱՎԱՍԱՐՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՀԱՄԱՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐԸ

Կորի համարը	Ամպամածության բարձրությունը,	Կապի հավասարումը x՝ օդի ջերմաստիճան y՝ ցողի կետի ջերմաստիճան	Համահարաբերակցության գործակիցը
1	500–300	y = 0,771x – 4,21	R = 0,99
2	300–200	y = 0,813 – 2,55	R = 0,98
3	200–100	y = 0,905 – 1,3464	R = 0,99
4	100 մ և ավելի ցածր	y = 0,962 – 0,6329	R = 0,99

«Էրեբունի» օդանավակայանի շրջանում ԱՍՍԲ-ի կանխատեսման համար մշակված այս մեթոդը կարող է ապահովել նույնքան հավաստիություն, որքանով հավաստի կլինեն կանխատեսումները օդի և ցողի կետի ջերմաստիճանների համար: Վերջիններիս վերաբերյալ արված կանխատեսումների և դիտված փաստացի արժեքների վիճակագրական տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանց հավաստիությունը ԳԿ-ի և ԸԿ-ի համար մոտ 85–90 % է, իսկ ԿԿ-ի համար՝ մոտ 80 %: Այսինքն՝ համապատասխան հավաստիությամբ էլ կարող ենք կանխատեսել ԱՍՍԲ-ը*:

* Նշենք, որ աշխատանքի վերջնական արդյունքները ներդրվել են և հաջողությամբ օգտագործվում են «Էրեբունի» օդանավակայանի օդերևութաբանական ծառայությունում, ինչի վերաբերյալ կա համապատասխան ակտ:

ВОЕННАЯ МЕТЕОРОЛОГИЯ

ПРОГНОЗ НИЗКОЙ ОБЛАЧНОСТИ ПО СИНОПТИКО-СТАТИСТИЧЕСКОМУ МЕТОДУ (НА ПРИМЕРЕ АЭРОДРОМА «ЭРЕБУНИ»)

М. В. ЕПРЕМЯН, капитан, начальник метеорологической службы,
Соискатель кафедры физической географии и гидрометеорологии ЕГУ,
Г. А. МЕЛКОНЯН, кандидат физико-математических наук, заместитель директора Армгосгидромета Министерства чрезвычайных ситуаций РА

РЕЗЮМЕ

В работе изучены метеорологические данные за 2000–2010 гг. относительно температуры воздуха, точки росы и высоты нижней границы облаков при низкой облачности (высота не превышает 300 м) и до 500 м. Между этими элементами метеорологического обеспечения полетов существует взаимосвязь. На основании этих связей была выявлена корреляция между тем-

пературами воздуха и точки росы при низкой облачности и облачности высотой до 500 метров. С использованием этих корреляций разработана методика краткосрочного (на 72 ч.), сверхкраткосрочного (на 12 ч.) и текущего (от нескольких минут до 3 ч.) прогнозов низкой облачности и до высоты 500 м.

Сравнение расчетных данных, определенных по предлагаемой методике, со статистическими данными позволило определить вероятность сбывания прогнозов, которая для сверхкраткосрочных и текущих прогнозов составила около 85–90 %, а краткосрочных – 80 %.

MILITARY METEOROLOGY

THE FORECAST OF LOW CLOUDINESS BY THE SYNOPTIC-STATISTICAL METHOD (BY THE EXAMPLE OF «EREBUNI» AIRDROME)

M. V. YEPREMYAN, Captain, Head of the Meteorological Service,
Graduate Student at the Chair of Physical Geography and Hydrometeorology, YSU,
H. A. MELQONYAN, PhD in Physical and Mathematical Sciences,
Deputy Head of Hydrometeorology and Monitoring State Service of Armenia,
Ministry of Emergency Situations, RA

SUMMARY

This article studies meteorological data of 2000–2010 on air temperature, dew point and the height of cloud lower bound at low cloudiness (the height doesn't exceed 300 m) and up to 500 m. These elements of meteorological flight support are interconnected. Based on these connections a correlation between air and dew point temperatures at low cloudiness and cloudiness up to 500 m was revealed. A method of short-term (validity period to 72 h.), very short-term (validity period to 12 h.) and nowcasting (validity period from some minutes to 3 h.) forecasts of low cloudiness and clouds up to the height of 500 m was developed using these correlations.

The comparison of calculation data (determined by the proposed) method with statistical data allowed identifying the probability of forecasts realization, which was about 85–90 % for very short-term and nowcasting forecasts, and 80 % – for short-term forecasts.

ՀԱՅԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

Մ. Լ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր

Առաջին համաշխարհային պատերազմը, որի 100-ամյակը լրացել է այս տարի, տեղի է ունեցել պետությունների երկու խմբավորումների միջև. մի կողմից՝ Համաձայնության երկրները (Անգլիա, Ֆրանսիա, Ռուսաստան, 1917 թվականից՝ ԱՄՆ), մյուս կողմից՝ Քառյակ միությունը (Գերմանիա, Ավստրո-Հունգարիա, Թուրքիա, Բուլղարիա), ընդամենը՝ 38 պետություն: Պատերազմական գործողություններն ընդգրկեցին Եվրոպայի, Ասիայի, Աֆրիկայի և Հեռավոր Արևելքի տարածքները:

1914 թ. օգոստոսի 1-ին բռնկված համաշխարհային պատերազմը և գերմանական խմբավորմանը Թուրքիայի անդամակցությունը արթնացրին հայ ժողովրդի որոշակի հույսերը՝ ռուսական զենքի օգնությամբ ազատագրելու Արևմտյան Հայաստանը և վերականգնելու կորսված հայկական պետականությունը: Հուսադրող էր պատերազմի մեջ Ռուսաստանի մտնելու գլխավոր նպատակը, որը հայտարարվել էր նրա պաշտոնական շրջանների կողմից, այն է՝ «արևելքի քրիստոնյաների ազատագրումը»[1]:

Պատերազմի տարիներին Ռուսական կայսրությունում բնակվող 2 միլիոն 54 հազար հայերը ռուսական բանակին տվեցին ավելի քան 250 հազար զինվոր[2]: Հայ ժողովուրդը թերևս առաջին անգամ էր նման թվաքանակով մարդ զորակոչում ռուսական բանակ: Հայերի այսքան մեծ ակտիվությունը Ռուսաստանի հետ պատմական համագործակցության նոր դրսևորում էր, մի ավանդույթի, որը ձևավորվել էր 1806–1812, 1828–1829, 1853–1856, 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմների ժամանակ: Հայերի մղումը պայմանավորված էր Արևմտյան Հայաստանի տարածքը թուրքական լծից ազատելու, նրա բնիկ ժողովրդին՝ հայության արևմտյան հատվածին, օսմանյան բռնատիրությունից ու ֆիզիկական բնաջնջման վտանգից, ազգային և սոցիալ-կրոնական ճնշումից փրկելու վաղեմի բաղձանքով:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Ռուսաստանի բանակում բարձր պաշտոններում ծառայել են՝ Մոսկովյան զինվորական օկրուգի հրետանու պետ հրետանու գեներալ Անդրեյ Ադամի Աթաբեկովը (1913–1916 թթ.), Թուրքեստանյան զինվորական օկրուգի հրետանու պետ գեներալ-լեյտենանտ

[1] Տես «Հայկական հարց», հանրագիտարան: Ե., 1996, էջ 41:

[2] Տես «Հայ ժողովրդի պատմություն», հ. 6: Ե., 1981, էջ 547:

Լևոն Ավետիքի Պոզոևը (Պոզոյան) (1916 թ.), Վիտեբսկի պարետ և կայազորի պետ, ապա Պետրոգրադի պարետ գեներալ-լեյտենանտ Ստեփան Գերասիմի Քալանթարովը (1914–1918 թթ.), 7-րդ բանակի հրետանու տեսուչ գեներալ-լեյտենանտ Արտեմի Սողոմոնի Վարտանովը (1916 թ.), Գլխավոր շտաբի զորահավաքային բաժնի պետ գեներալ-մայոր Իվան Սերգեյի Բաղրամովը (Բաղրամյան), Պետրոգրադի ԶՕ-ի զորքերի գլխավոր հրամանատարի տեղակալ գեներալ-մայոր Լևոն Ֆադեյի (Թադևոսի) Տիգրանովը (1917 թ.), Պետրոգրադի ԶՕ-ի շտաբի պետ գեներալ-մայոր Յակով (Հակոբ) Գերասիմի Բագրատունին (1917 թ.), Կովկասյան 2-րդ հեծելազորային կորպուսի շտաբի պետ գեներալ-մայոր Իվան Վասիլի Ախվերդովը (Հախվերդյան) (1916-1917 թթ.), 7-րդ կորպուսի շտաբի պետ գեներալ-մայոր Վլադիմիր Պետրոսի Լազարևը (Լազարյան) (1916 թ.), Կովկասյան ռազմաճակատի շտաբի պետի տեղակալ գեներալ-մայոր Գավրիիլ (Գաբրիել) Կորգանովը (Ղորղանյան) (1917–1918 թթ.), հեծելազորային բանակի հրամանատարին կից գեներալ-հանձնակատար գեներալ-մայոր Վասիլի Միքայելի Թամաշևը (Թամաշյան) (1916 թ.), Կովկասյան բանակի ճարտարագործական վարչության պետ գեներալ-մայոր Վաղարշակ Տեր-Հակոբյանց-Տեր-Մարկոսյանցը[3]:

հետևակի գեներալ
Պյոտր Իվանի Օգանովսկի

հրետանու գեներալ
Անդրեյ Ադամի Աբաբեկով

Հայազգի զինվորականներից շատերը եղել են կորպուսի, դիվիզիայի, զորաջոկատի, բրիգադի, գնդի հրամանատար: Կովկասյան 4-րդ բանակային կորպուսի հրամանատար էր հետևակի գեներալ Պյոտր Իվանի Օգանովսկին (1915–1917 թթ.), 7-րդ հեծելազորային կորպուսի հրամանատար՝ հեծելազորի գեներալ Գեորգի Ալեքսանդրի Թումանովը (Վարշավյան ԶՕ), Անդրամուրյան 1-ին հեծյալ բրիգադի հրամանատար՝ գեներալ-լեյտենանտ իշխան Կոստանտին Ալեքսանդրի Թումանովը (Թումանյան) (1916 թ.), հրետանային 46-րդ բրիգադի հրամանատար՝ գեներալ-մայոր Գեորգի Ավետիքի Պոզոևը (Պոզոյան) (1916 թ.), Երևանյան զորաջոկատի և նահանգի զորքերի պետ՝ գեներալ-մայոր (հետագայում՝ գեներալ-լեյտենանտ) Ֆոմա (Թովմաս) Իվանի Նազարբեկովը՝ (1915–

[3] Տես Ռուսաստանի Պետական ռազմապատմական արխիվ (ՌՊՌՊԱ), ֆ. 409, ց. 1, գ. 16833, թթ. 1–3, նույն տեղում, գ. 50942, թթ. 1–11, նույն տեղում, գ. 46528, թ. 1, *Г. Аветисян.* Генералы-армяне в Российской империи. Е., 2007; *Մ. Կարապետյան*, Հայազգի զինվորականները ռուսական բանակում (XIX դարի վերջ – XX դարի սկիզբ): Ե., 2008; *նույնի՝* Генерал-лейтенант Ованес Ахвердян. Е., 2003:

1917 թթ.), հայկական Հավաքական զորաջոկատի հրամանատար՝ գեներալ-մայոր Անդրանիկ Օզանյանը (1917 թ.), Կովկասյան 2-րդ հրաձգային դիվիզիայի 8-րդ գնդի հրամանատար, ապա Վանի զորաջոկատի պետ (1915–1916 թթ.) գեներալ-մայոր (հետագայում՝ գեներալ-լեյտենանտ) Մովսես Բաբայի Սիլիկովը (Սիլիկյան), Անդրբայկալյան 1-ին հրետանային բրիգադի հրամանատար՝ գեներալ-մայոր Իսայի Իսայու Ակիմովը (Հովակիմյան) (1916 թ.), հրետանային 6-րդ բրիգադի հրամանատար՝ գնդապետ (հետագայում՝ գեներալ-մայոր) Ռուբեն Ավետիքի Պոզոևը (Պոզոյան) (1916 թ.), Կովկասյան 1-ին կազակային դիվիզիայի հրամանատար՝ գեներալ-մայոր Տիգրան Դանիլի Արյութինովը (Հարությունյան), 22-րդ Կովկասյան հրաձգային գնդի հրամանատար՝ գնդապետ Պավել Պետրոսի Բեժանբեկը, 23-րդ Կովկասյան հրաձգային գնդի հրամանատար՝ գեներալ-մայոր Ալեքսանդր Գաջաևը (Հաջոյան)[4]:

գեներալ-լեյտենանտ
Լևոն Ավետիքի Պոզոև

Տարբեր զորատեսակներում և ռազմաճակատներում մեծ դեր ունեցան նաև գեներալ-լեյտենանտ Ալեքսանդր Ռոմանի Ալախվերդովը (Մելիք-Ալախվերդյան), գեներալ-մայորներ Նիկոլայ Մեժլումի Մելիք-Շահնազարովը, Պավել Դմիտրիի Մելիք-Շահնազարովը, Դավիդ Գրիգորիի Բեբուտովը (Բեբուտյան), Պավել Սեմյոնի Սուլթան-Շահը, Արսենի Սերգեյի Դոլուխանովը, գնդապետներ Կոստանտին Բեգլարի Դոլուխանովը, Նիկոլայ Արտեմի Կոստանովը և շատ ուրիշներ[5]:

Արխիվային փաստաթղթերի և նյութերի հիման վրա կատարված մեր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 1914-1918 թթ. առաջին համաշխարհային պատերազմին մասնակցել է 30 հայազգի գեներալ, որոնցից՝ մեկ հետևակազորի գեներալ, մեկ հրետանու գեներալ, մեկ հեծելազորի գեներալ, հինգ գեներալ-լեյտենանտ, քսաներկու գեներալ-մայոր:

Եվրոպական (ռուսական) ճակատում առաջին իսկ մարտերում աչքի ընկած հայ սպաներից էին 81-րդ հետևակային դիվիզիայի շտաբի պետ Լևոն Տիգրանովը, գեներալներ Անդրեյ Աթաբեկովը, Գեորգի Թումանովը: Վերջինս 13-րդ հեծելազորային դիվիզիայի հրամանատարի պաշտոնից առաջ քաշվեց՝ նշանակվելով 7-րդ հեծելազորային կորպուսի հրամանատար, ստացավ հեծելազորի գեներալի աստիճան: Աթաբեկովը նշանակվեց Մոսկովյան ՁՕ-ի հրետանու պետ:

Լևոն Տիգրանովը հյուսիսային և հարավարևմտյան ճակատներում 1914 թ. սեպտեմբերից մինչև 1915 թ. մայիս Վիսլա, Պիլիցա, Ռադոմկե գետերի և Իվանգորոդ, Լոձ, Դրոգոբիչ, Պերեմիշլ, Ֆրեդրոպոլ, Բրեստ քաղաքների շրջաններում մղված թեժ մարտերում ցուցաբերած արիության համար պարգևատրվեց Սբ.

[4] Տես նույն տեղում:

[5] Տես նույն տեղում:

Վլադիմիրի 4-րդ աստիճանի՝ սրով և ժապավենով, Սբ. Վլադիմիրի 3-րդ աստիճանի՝ սրով և ժապավենով շքանշաններով, թանկարժեք զենքով և շնորհակալագրերով: 1914 թ. օգոստոսից մինչև 1917 թ. ապրիլ, մասնակցելով մարտերին, վիրավորվելով, նորից շարք վերադառնալով, ծառայեց 81-րդ, ապա՝ 106-րդ հետևակային դիվիզիաների շտաբի պետի, 321-րդ Օկայի հետևակային գնդի հրամանատարի, 42-րդ բանակային կորպուսի շտաբի արշավանքային-տնտեսական վարչության պետի պաշտոններում, պարգևատրվեց նոր շքանշաններով: 1916 թ. դեկտեմբերի 6-ին Տիգրանովին շնորհվեց գեներալ-մայորի կոչում: 1917 թ. մարտի 28-ին նրան տեղափոխեցին Պետրոգրադի զինվորական օկրուգ՝ որպես օկրուգի շտաբի հերթապահ գեներալ: 1917 թ. սեպտեմբերի 25-ին Ռուսաստանի ժամանակավոր կառավարության հրամանով Լ. Տիգրանովը նշանակվեց Պետրոգրադի ԶՕ-ի զորքերի գլխավոր հրամանատարի տեղակալ[6]:

գեներալ-մայոր
Գաբրիել Ղորղանյան

Եվրոպական ճակատում 1914 թ. օգոստոս – սեպտեմբեր ամիսներին ծավալված Գալիցիական ճակատամարտում և Լյուբլին – Խոլմյան օպերացիայում աչքի ընկած հայ սպաներից էին 14-րդ բանակային կորպուսի հրետանու տեսուչ գեներալ-լեյտենանտ Արտեմի Վարտանովը, 19-րդ հրետանային բրիգադի 6-րդ մարտկոցի հրամանատար փոխգնդապետ Կոստանտին Դոլուխանովը, գրենադերական հրետանային բրիգադի 2-րդ դիվիզիայի հրամանատար գնդապետ (հետագայում՝ գեներալ-մայոր) Գեորգի Պոզոևը:

Վարշավա-Իվանգորոդյան, Պերեմիշլյան, Լոձի ռազմական օպերացիաներում իրենց քաջությամբ և սխրագործություններով աչքի ընկած հայազգի զինվորականներից էին, գեներալ-լեյտենանտ Արտեմի Վարտանովի հետ մեկտեղ, հրետանավոր կապիտան Գեորգի Վասիլի Բաբաջանովը և պորուչիկ Դենիս Գեորգիի Պոզոևը: Նոյեմբերյան և դեկտեմբերյան մարտերում ցուցաբերած արիության համար Վարտանովը պարգևատրեց Սբ. Վլադիմիրի 4-րդ աստիճանի՝ սրով և Սբ. Աննայի 1-ին աստիճանի սրով՝ շքանշաններով[7]:

Ավստրո-գերմանական զորքերի դեմ 1915-1916 թթ. ծավալված ռազմական գործողություններին ակտիվ մասնակցություն ունեցան փոխգնդապետներ Կոստանտին Դոլուխանովը, Քրիստափոր Արարատովը (հետագայում՝ գեներալ-մայոր), Թուրքեստանյան ԶՕ-ի հրետանու պետ գեներալ-լեյտենանտ Լևոն Պոզոևը, գեներալ-լեյտենանտ Արտեմի Վարտանովը, 46-րդ հրետանային բրիգադի հրամանատար Գեորգի Պոզոևը, 78-րդ հրետանային բրիգադի շտաբս-կապիտան Նիկոլայ Աբամելիքովը, 3-րդ գրենադերական հրետանային բրիգադի պրապորշ-

[6] Տես ՌՊՌԱ, ֆ. 409, ց. 1, գ. 168633, թթ. 1–8, *Մ. Կարապետյան*, Հայազգի զինվորականները ռուսական բանակում ..., էջ 33–38, 79–81:

[7] Տես *Կ. Փահլևանյան*, Ռուսական կայսրության Զինված ուժերի հայ հրետանավորները (XIX դարի վերջ – XX դարի սկիզբ): Ե., 2013, էջ 97–107:

չիկ Նիկոլայ Օհանովը, փոխգնդապետ Կոստանտին Յուզբաշևը (Յուզբաշյան), 52-րդ հրետանային բրիգադի կապիտան Բաղդասար Բաղդասարովը, 19-րդ հրետանային բրիգադի կապիտան Գեորգի Բաբաջանովը, 65-րդ հրետանային բրիգադի պորուչիկ Դենիս Պոզոևը, Սիբիրյան 1-ին ծանր հրետանային բրիգադի պորուչիկ Գալուստ Մելիք-Հարությունյանը, պրապորշչիկ Արշակ Քոսյանը և շատ ուրիշներ:

գեներալ-մայոր Հակոբ Բագրատունին և գեներալ-մայոր Անդրանիկ Օզանյանը

Եվրոպական ճակատում 1915 թ. սկզբին մղված մարտերում արդյունավետ գործողություններ ձեռնարկելու համար Կոստանտին Դոլուխանովն ստացավ գնդապետի աստիճան, իսկ Ժասլիկ-Վալիգրոդ հատվածում ընթացած մարտերում ցուցաբերած քաջության համար պարգևատրվեց Սբ. Գեորգիի 4-րդ աստիճանի շքանշանով: Մարտերում կատարած անձնական սխրագործության համար պրապորշչիկ Նիկոլայ Օհանովը պարգևատրվեց Սբ. Աննայի 4-րդ աստիճանի շքանշանով՝ «Արիության համար» մակագրությամբ, պորուչիկ Դենիս Գեորգիի Պոզոևը՝ Սբ. Ստանիսլավի 3-րդ և Սբ. Աննայի 3-րդ աստիճանի շքանշաններով: 1916 թ. փետրվարի 22-ից մինչև մարտի 19-ը Մենարժե, Մալի, Պլոցկ և Վախ բնակավայրերի մատույցներում մղված թեժ մարտերում ցուցաբերած խիզախության համար Քրիստափոր Արարատովը պարգևատրվեց Սբ. Վլադիմիրի 4-րդ աստիճանի շքանշանով՝ սրով և ժապավենով[8]:

Կովկասյան ճակատում առաջին իսկ մարտերում աչքի ընկած հայ սպաներից էր Երևանյան հեծյալ ջոկատի շտաբի պետ Գավրիիլ Կորգանովը (Գաբրիել Ղորղանյան), որը 1914 թ. դեկտեմբերի 6-ին նշանակվեց 39-րդ դիվիզիայի շտաբի պետ: Այդ դիվիզիայի 154-րդ գնդի զինվորները դեկտեմբերի 22-ին՝ Սարիղամիշի ռազմական օպերացիայի հենց սկզբում, Ղզլքիլիսայի շրջանում գերի վերցրին թուրքական 9-րդ կորպուսի հրամանատարին, 106 սպայի և մեծ քանակությամբ ռազմաավար: Հարկ է նշել, որ այդ գնդի սպաների մեկ երրորդից ավելին հայեր էին: Դեկտեմբերյան մարտերի համար Ղորղանյանը պարգևատրվեց Սբ. Ստանիսլավի 2-րդ աստիճանի շքանշանով և Սբ. Աննայի շքանշանով՝ սրով և ժապավենով: Գաբրիել Ղորղանյանը նշանակվեց Կովկասյան ռազմաճակատի շտաբի պետի տեղակալ[9]:

Հայտնի են Սարիղամիշյան, Ալաշկերտյան, Տրապիզոնի, Համադանի, Դիլմանի, Վանի և այլ օպերացիաներին ու ճակատամարտերին ակտիվորեն մաս-

[8] Տես նույն տեղում, էջ 110–113:

[9] Տես Հ. *Ակիտիսյան*, Հայոց ազգային միասնության հաղթանակը, 1918 թ. մայիս: Ե., 1998, էջ 18:

նակցած շատ հայ սպաների անուններ: Կովկասյան 2-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար գեներալ-մայոր Թովմաս Նազարբեկյանն աչքի ընկավ Դիլմանի ճակատամարտում, որտեղ սխրանքներ գործեց և Անդրանիկը: Նազարբեկյանը նշանակվեց Մուշ-Բիթլիսյան, ապա՝ Կարամուջյան զորաջոկատի պետ: Մովսես Սիլիկյանը 8-րդ գնդի հրամանատարն էր, 1915-1916 թթ.՝ Վանի ռուսական զորաջոկատի պետը[10]: Իվան (Հովհաննես) Հախվերդյանը Տրապիզոնում տեղակայված 127-րդ հետևակային դիվիզիայի շտաբի պետն էր, գեներալ-մայորի աստիճան ստանալուց հետո նշանակվեց Կովկասյան 2-րդ հեծելազորային կորպուսի շտաբի պետ[11]: Գնդապետ Պավել Բեժանբեկը Կովկասյան 22-րդ հրաձգային գնդի հրամանատարն էր, գնդապետ Կոստանտին Յուզբաշևը (Յուզբաշյան)՝ 201-րդ Նոտիյան հետևակային գնդի հրամանատարի տեղակալը, գնդապետ Լ. Չարուխչևը (Չարուխչյան)՝ 17-րդ թուրքեստանյան հրաձգային գնդի հրամանատարի տեղակալը[12]:

գեներալ-մայոր
Իվան Ախվերդով
(Հախվերդյան)

Գնդապետ Ռուբեն Պոզոևն իր սխրագործություններով աչքի ընկավ Սարիղամիշյան օպերացիայում, պարգևատրվեց Սբ. Վլադիմիրի 3-րդ աստիճանի շքանշանով՝ սրով, նշանակվեց 6-րդ հրետանային բրիգադի հրամանատար[13]: Կովկասյան ճակատում 1916-1918 թթ. ծավալված մարտական գործողություններին ակտիվ կերպով մասնակցեցին 21-րդ հրետանային բրիգադի փոխգնդապետ (հետագայում՝ գեներալ-մայոր) Քրիստափոր Արարատովը, 44-րդ հրետանային բրիգադի կապիտան Վալենտին Դեմիրտաշևը, Կովկասյան 1-ին առանձնացված հրետանային դիվիզիոնի կապիտան (հետագայում՝ փոխգնդապետ) Իոսիֆ Տիգրանովը, 19-րդ հրետանային բրիգադի գնդապետ Կոստանտին Դոլուխանովը[14], Կազակային պարտիզանական զորաջոկատի Կուբանյան հարյուրյակի շարքայիններ Լևոն Կասպարովը, Գրիգոր Ավանեսյանցը, Խաչատուր Քալամենյանցը, Իվան Առաքելովը: Նրանք առաջինն էին Կովկասյան ռուսական բանակի կազակային զորամասերի հայ կամավորներից, որ արժանացան Սբ. Գեորգիի շքանշանին՝ «Թուրքերի դեմ մարտերում ցուցաբերած անձնազոհության և սխրագործ աշխատանքի համար»[15]:

Քյուրդամիրի ուղղությունում, Բաքվի, Դերբենդի և Պետրովսկի (ներկայումս՝ Մախաչկալա) շրջաններում «Թուրքական զորքերի դեմ անձնազոհ աշխատանքի

[10] Տես *Г. Аветисян.* Генералы – армяне в Российской империи, сс. 142–143, 218:

[11] Տես *М. Карапетян.* Генерал-лейтенант Ованес Ахвердян, с. 9:

[12] Տես Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 121, ց. 1, գ. 41, թթ. 160–161, նույն տեղում, գ. 1, թ. 47:

[13] Տես *Г. Аветисян,* Генералы – армяне в Российской империи, с. 211:

[14] Տես *Կ. Փահլևանյան*, Նշ. աշխ., էջ 137–139:

[15] Տես Կրասնոդարի երկրամասի պետական արխիվ, գույքագրային հմ. 9418, թ. 2:

և սխրագործությունների համար» Գեորգիյան խաչի 3-րդ և 2-րդ աստիճանների շքանշաններով պարգևատրվեցին նույն զորաջոկատի 1-ին սահմանապահ հարյուրյակի ավագ ենթասպա Մանուկ Խաղդաջևը, եֆրեյտորներ Արշակ Հարությունովը և Արզուման Մանուչարովը[16]: 1918 թ. մայիս–դեկտեմբեր ամիսներին ծանր մարտերում ցուցաբերած արիության համար Կովկասյան ճակատի Գլխավոր հրամանատարի հրամանով Գեորգիյան խաչի 4-րդ և 3-րդ աստիճանի շքանշաններով պարգևատրվածների թվում էին Զապարոժյան հարյուրյակի շարքայիններ Արշակ Աղաբեկովը, Մկրտիչ Մելքումովը, Բոգդան Ավագովը, զինվորներ Եղիշ Կասպարովը, Ստեփան Հարությունովը, Հակոբ Հակոբյանը և ուրիշներ: Գեորգիյան խաչի երեք՝ 1-ին, 2-րդ և 3-րդ աստիճանի շքանշաններով պարգևատրվածների թվում էին կազակային զորաջոկատի 2-րդ դաշտային մարտկոցի շարքային Արսեն Հախումովը և 1-ին Սահմանապահ հարյուրյակի եֆրեյտորներ Արշակ Հարությունյանը և Արզուման Մանուչարովը, երկուական Գեորգիյան խաչերով պարգևատրվեցին 1-ին Սահմանապահ հարյուրյակի եֆրեյտոր Հովհաննես Ֆարգոդյանը, 2-րդ դաշտային մարտկոցի շարքայիններ Խաչատուր Ավանեսովը, Հովհաննես Միրզոևը, Լևոն Ալահվերդյանը, 1-ին լեռնային-ձիավոր մարտկոցի ռմբարկու Վարազ Մկրտչյանցը և ուղեկցորդ Հապետ Հովհաննեսյանցը, Սուրբ Գեորգիի շքանշանով պարգևատրվեցին ՈՒմանյան հարյուրյակի կրտսեր ենթասպաներ Մարտիրոս Սարկիսովը, Միրոն Խաչատուրովը, Իվան Բալաևը, Արմենակ Միսկարյանցը, 4-րդ դաշտային մարտկոցի ֆելդֆեբել Հովհաննես Գելյանը, նշանառու Լևոն Խալաֆյանը, հետախույզներ Իսրայել Դադաևը, Մկրտիչ Տեր-Մինասովը, 1-ին ծանր մարտկոցի ռմբարկու Նավասարդ Սանդարյանցը, ճարտարագործական վաշտի սակրավոր Ավետիս Ամիրովը, ֆելդֆեբել Սեմյոն Հայրապետովը և շատ ուրիշներ[17]:

գեներալ-լեյտենանտ Մովսես Սիլիկյան

գեներալ-մայոր Քրիստափոր Արարատով

Նշենք, որ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայերը Կովկասյան բանակում ունեին մեծ տեսակարար կշիռ: 1917 թ. սկզբի դրությամբ, ռուսները կազմում էին Կովկասյան բանակի անձնակազմի 42, ուկրաինացիները՝ 30, հայերը՝ 10, վրացիները՝ 8, գերմանացիները՝ 4, լեհերը՝ 1,5 տոկոսը: Մնացած մասը կազմում էին բելառուսները, թաթարները, հրեաները և լատիշները: Ինչ վերաբե-

[16] Տես նույն տեղում, էջ. 9–10:

[17] Տես նույն տեղում, էջ. 2–16, *նաև՝ Մ. Լ. Կարապետյան,* Հայերը ռուսական բանակի կազակային զորամասում առաջին համաշխարհային պատերազմի տարիներին: «ՀԲ», 2005, հմ. 1:

ռում է բանակի սպայական կազմին, ապա սպաների 60 %-ը ռուսներ էին, 10 %-ը՝ ուկրաինացիներ, 8-9 %-ը՝ հայեր, ապա նոր՝ վրացիները, լեհերը և այլ ազգությունների ներկայացուցիչներ[18]:

Կովկասյան ճակատում հայ ժողովրդի հազարավոր զավակներ մարտնչել են հայկական ազգային զորամասերի կազմում: Նրանցից սկզբնական շրջանում կազմավորվեցին կամավորական չորս (1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ) ջոկատներ, որոնց հրամանատարներ նշանակվեցին ազգային-ազատագրական պայքարում թրծված հայդուկներ Անդրանիկը, Դրոն, Համազասպը, Քեռին: Ավելի ուշ կազմավորվեցին 5-րդ, 6-րդ և 7-րդ հայկական ջոկատները, և կամավորների թիվը 1915 թ. գարնանը հասավ 6500-ի[19]:

Դրաստամատ Կանայան (Դրո)

Համազասպ

Հայկական 1-ին կամավորական ջոկատը (հրամանատար՝ Անդրանիկ), որը կազմավորվել էր 1914 թ. հոկտեմբերի 23-ին Սալմաստում գեներալ Չեռնոզուբովի զորաջոկատի կազմում, գործում էր Սալմաստ–Վան ուղղությամբ: Ջոկատի 1200 անդամների մեծ մասը արևմտահայեր էին: Ջոկատը աչքի ընկավ հատկապես Դիլմանի ճակատամարտում (1915 թ. ապրիլ), այնուհետև ակտիվորեն մասնակցեց Վանի (1915 թ. մայիս) և Բիթլիսի (1916 թ. փետրվար) ազատագրմանը[20]:

Հայկական 2-րդ կամավորական ջոկատը 1915 թ. ապրիլ–մայիս ամիսներին գեներալ Նիկոլաևի Բայազետյան զորաջոկատի կազմում մասնակցեց Վանի և նրա հարավարևելյան շրջանների (1915 թ. մայիս–հունիս), Մուշի ու Բիթլիսի (1916 թ. փետրվար–ապրիլ) ազատագրմանը[21]:

Հայկական 3-րդ կամավորական ջոկատը ռուսական Կարադերբետյան զորաջոկատի կազմում մասնակցեց Սարիղամիշի օպերացիային (1914 թ. դեկտեմբեր – 1915 թ. հունվար), այնուհետև՝ Վանի, Մուշի և Բիթլիսի ազատագրմանը[22]:

Հայկական 4-րդ կամավորական ջոկատի մարտական ուղին ձգվեց Սարիղամիշից մինչև Ռևանդուզ (Իրան): 1914-1916 թթ. ջոկատը 2-րդ և 3-րդ հայկա-

[18] Տես ՌՊՌՊԱ, ֆ. 2320, ց. 1, գ. 212, թ. 4, *նաև*՝ նույն տեղում, ֆ. 2548, ց. 1, գ. 3, թթ. 358–359:

[19] Տես *Մ. Լ. Կարապետյան*, Հայկական զինվորական կազմավորումները Կովկասյան ռազմաճակատում Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին: «ՀԲ», 1999, հմ. 2:

[20] Տես ՀԱԱ, ֆ. 121, ց. 1, գ. 3, թ. 1 – 31, նույն տեղում, գ. 16, թ. 3:

[21] Տես նույն տեղում, գ. 3, թ. 8, 14, 15, նույն տեղում, գ. 1, թ. 1 – 18, նույն տեղում, գ. 16, թթ. 3–5:

[22] Տես նույն տեղում, գ. S., թթ. 20 – 21, նույն տեղում, գ. 3, թթ. 1 – 31:

կան ջոկատների հետ մասնակցեց Վանի, Մուշի, Բիթլիսի համար մղված ծանր մարտերին և գրավմանը: Հայկական 4-րդ կամավորական ջոկատը 1916 թ. հունվար–հունիս ամիսներին ռուսական բանակի Սուլդուզի զորաջոկատի կազմում մասնակցեց Ռևանդուզի (Իրան) գրավմանը, որտեղ և մայիսի 30-ին գրոհներից մեկի ժամանակ թշնամու գնդակից հերոսաբար զոհվեց ջոկատի հրամանատար, ժողովրդական հերոս Քեռին[23]:

Հայկական 5-րդ կամավորական ջոկատը (հրամանատար՝ Վարդան) կազմավորվեց Երևանում: Աշխատանքներն սկսվել էին դեռ 1914 թ. դեկտեմբերին: Սակայն Կովկասյան բանակի զինապահեստներում հրացաններ չլինելու պատճառով ջոկատը չկարողացավ մասնակցել պատերազմի առաջին շրջանի մարտական գործողություններին:

Արշակ Գավաֆյան (Քեռի)

Հայկական 6-րդ ջոկատը (կոչվել է նաև հնչակյան 6-րդ խումբ) կազմավորվեց Կարակուրտում՝ գեներալ Բարաթովի գլխավորած զորաջոկատի կազմում: Ջոկատը 1915 թ. դեկտեմբեր – 1916 թ. հունվար ամիսներին մասնակցեց Էրզրումի օպերացիային, 1916 թ. փետրվար-մարտ ամիսներին գրավեց Էրզրումը: Նրա առաջին հրամանատարը ռուսական բանակի սպա կապիտան Հ. Ջանփոլադյանն էր, իսկ քիչ ուշ նրան փոխարինեց պորուչիկ Գ. Ավշարյանը, որը 1915 թ. ամռանը Շարյան գետի ափին ծավալված մարտական գործողություններում ևս զոհվեց: Ավշարյանին փոխարինեցին Հայկ Բժշկյանը (Գայ), ապա՝ Պանդուխտը (Միքայել Սերյան):

7-րդ հայկական ջոկատը (հրամանատար՝ իշխան Հ. Արղության) կազմավորվեց 1915 թ. աշնանը Երևանում և ջոկատների պահեստային ուժն էր: Հետագայում այդ ջոկատն անցավ հյուսիսային Իրան և աչքի ընկավ հատկապես Ռևանդուզի ճակատամարտում[24]:

Մարտերում ցուցաբերած խիզախության և քաջության համար հայ կամավորներից շատերը պարգևատրվեցին շքանշաններով ու մեդալներով, այդ թվում նաև Գեորգիյան խաչերով: Այսպես. միայն 2-րդ կամավորական ջոկատի անձնակազմից (հրամանատար՝ Դրո) 1914 թ. հոկտեմբերի 23-ից մինչև 1916 թ. հունիսի 1-ը Գեորգիյան խաչով պարգևատրվեց 76 կամավորական (որոնցից երկուսը՝ առաջին աստիճանի), 138 հոգի պարգևատրվեց մեդալներով[25]: Մարտական գործողություններին ակտիվորեն մասնակցելու համար Գեորգիյան խաչի 2-րդ և 4-րդ աստիճանի շքանշաններով պագևատրվեցին նաև «Արարատյան զորաջոկատի» կազմում մարտնչող (2-րդ, 3-րդ, 4-րդ ջոկատներ) տասնյակ կամավոր-

[23] Տես նույն տեղում, գ. 9, թթ. 78–79:

[24] Տես նույն տեղում, գ. 3, թ. 19:

[25] Տես ՀԱԱ, ֆ. 121, ց. 3, գ. 16, թ. 3:

ներ[26]: 1914-1916 թ թ. մարտերում ցուցաբերած քաջության և հերոսության համար Գեորգիյան խաչի 1-ին և 2-րդ աստիճանի շքանշաններով պարգևատրվածների թվում էր 2-րդ կամավորական ջոկատի հրամանատարի տեղակալ պորուչիկ Գարեգին Նժդեհը[27], 3-րդ աստիճանի Գեորգիյան շքանշանով պարգևատրվեցին հայկական 4-րդ կամավորական ջոկատի հրամանատարի տեղակալ Միքայել Արզումանովը, նույն ջոկատի վաշտի հրամանատար պարսկահայ Շերմազան (Շերամ) Տեր-Անդրեասյանը, վաշտի հրամանատարի տեղակալ Միքայել Պարիկյանը և ուրիշներ[28]: Ռազմի դաշտում զոհվեց ավելի քան 700 կամավորական[29]:

Գարեգին Նժդեհը (կենտրոնում) իր կամավորական ջոկատի հետ

1915 թ. դեկտեմբերից մինչև 1916 թ. օգոստոս ընկած ժամանակահատվածում հայ կամավորական ջոկատները վերակազմավորվեցին. նրանց հիմքի վրա ստեղծվեցին վեց հայկական հրաձգային գումարտակներ, որոնցում 1917 թ. հունվարի 1-ի դրությամբ ծառայում էր 5179 մարդ, նրանցից 174-ը՝ սպա[30]:

Հայկական 1-ին գումարտակը 39-րդ դիվիզիայի կազմում մեծ սխրանքներ գործեց Քիլքիթի և Երզնկայի շրջանում 1916 թ. հունիսի 25-ից 27-ը մղված կատաղի մարտերում: Ըստ շտաբային զեկուցագրի՝ հունիսի 25-ի լույս 26-ի գիշերը հրամայվել էր գրոհել թուրքական դիրքերի վրա: Հայկական 1-ին գումարտակն

[26] Տես ՌՊՌՊԱ, ֆ. 551, ց. 3, գ. 20, նույն տեղում, գ. 9, թ. 200:

[27] Գարեգին Նժդեհը 1-ին և 2-րդ աստիճանի Գեորգիյան խաչի շքանշաններով պարգևատրվելուց բացի, ներկայացված էր պարգևատրման նաև Գեորգիյան խաչի 3-րդ և 2-րդ, Սուրբ Աննայի 4-րդ՝ «Քաջության համար» մակագրությամբ և Սուրբ Վլադիմիրի 3-րդ աստիճանի շքանշանների (տես Վրաստանի կենտրոնական պետական արխիվ (ՎԿՊԱ), ֆ. 1, ց. 2, գ. 85, թթ. 1–6):

[28] Տես ՀԱԱ, ֆ. 121, ց. 1, գ. 9, թ. 75:

[29] Տես նույն տեղում, ֆ. 57, ց. 5, գ. 56, թ. 2:

[30] Տես ՌՊՌՊԱ, ֆ. 2100, ց. 1, գ. 44, թթ. 175–176:

արագ կատարեց առաջադրանքը. առաջանալով լեռնաշղթայով և միանալով հարևան զորամասերին՝ գրավեց Բալինթափակ գյուղի մոտ գտնվող 2300, 2350 և 2660 բարձունքները: Դրանից հետո թուրքերը, կրելով մեծ կորուստներ, հեծելազորի պաշտպանությամբ սկսեցին նահանջել: «Այս առաջին ճակատամարտի ժամանակ իր կազմավորումը նոր ավարտած գումարտակը դրսևորեց բարձր մարտական ոգի, հիանալի կարգապահություն և անդրդվելի տոկունություն: Կորցնել ամբողջ անձնակազմի կեսից ավելին (55 տոկոսը) ու նորից գործը գլուխ բերել՝ հաճախ վեր է մինչև իսկ հին ու փորձված զորամասերի ուժերից»[31]: Հուլիսի 11-ին հայկական 1-ին գումարտակը ծանր մարտերից հետո 39-րդ դիվիզիայի առաջապահ զորամասերի հետ առաջիններից մեկը մտավ Երզնկա:

Իշխան Հովսեփ Արղության

Ռազմաճակատի պարսկական հատվածում իրեն լավագույնս դրսևորեց 3-րդ հրաձգային գումարտակը՝ գնդապետ Արտեմ Տեր-Նիկողոսյանի հրամանատարությամբ: Հուլիսի 29-ից մինչև օգոստոսի 9-ը գումարտակն անընդհատ արշավանքների, կռիվների ու ընդհարումների մեջ էր: Օգոստոսի 2-ից 8-ը տեղի ունեցած արյունահեղ մարտերում գումարտակը, կրելով մեծ կորուստներ՝ 140 սպանված, 20 վիրավոր ու անհայտ կորած, թուրքերից ազատագրեց Քեմիշլու, Դուրու և Սիակով գյուղերը[32]:

Պարսկական ռազմաթեմում մեծ սխրանքներ գործելով՝ իրենց փայլուն կերպով դրսևորեցին 4-րդ և 6-րդ հայկական հրաձգային գումարտակները:

Հուլիսի 31-ի լուսաբացին հայկական 4-րդ գումարտակը, թեժ մարտերից հետո ռուսական զորամասերի հետ տիրելով շրջակա բարձունքներին, գրավեց կարևոր ռազմավարական նշանակություն ունեցող Սագիզը: Այդ հաղթանակի առթիվ Սագիզի զորաջոկատի պետ գեներալ Կուլեբյակինը փոխգնդապետ Հովսեփյանին հղեց հեռագիր, որում ասվում էր. «Շնորհավորում եմ գումարտակին առաջին հաղթանակի և մարտական մկրտության առթիվ: Շնորհակալություն փայլուն մարտական աշխատանքի համար: Այսօր անձամբ եղա Ձեր գրված անառիկ դիրքերում և տեղում գնահատեցի հայ հրաձիգների ջանքն ու սխրագործությունը»[33]:

Հայկական գումարտակի սխրագործությունն ու անձնվիրությունը բարձր գնահատեց նաև կորպուսի հրամանատար գեներալ Չեռնոզուբովը[34]:

---

[31] Տես ՀՀԱ, ֆ. 121, ց. 1, գ. 15, թթ. 6–7; *Գ. Ղորղանյան*, Հայերու մասնակցությունը համաշխարհային պատերազմին Կովկասյան ռազմաճակատին վրա 1914–1917 թթ.: «Հայրենիք»: Բոստոն, 1927, հմ. 12, էջ 112:

[32] Տես ՀԱԱ, ֆ. 121, ց. 1, գ. 17, թթ. 1–4:

[33] Տես նույն տեղում, գ. 18, թթ. 2–29:

[34] Տես նույն տեղում:

1917 թ. հունիսի 18-ին 4-րդ և 6-րդ հրաձգային գումարտակները գրավեցին ռազմավարական տեսակետից կարևոր դիրք ունեցող Փենջվինը: Փենջվինի շրջանում 4-րդ գումարտակի մղած մարտական գործողությունների և նրա անձնակազմի ցուցաբերած տոկունության ու սխրագործության մասին նրա հրամանատարը գրում էր. «…կոշիկները, համազգեստները, սպիտակեղենը և զինամթերքը ամբողջովին մաշվել էին: Բոլորը մերկ էին, կիսաքաղց: Արևադարձային շոգին, մերկ մարմինները ծածկելու համար կրում էին ձմեռային վերնաշապիկներ, հաճախ էլ՝ շինելներ էին հագնում: Հրաձիգները հյուծվել էին մարտական ծանր առաջադրանքների կատարումից: Չնայած այդ ամենին՝ տարած հաղթանակներից նրանց ոգին բարձր էր, և մարտիկները անտրտունջ կատարում էին իրենց պարտքը՝ քաջ գիտակցելով, որ անհրաժեշտ է վերջնականապես հաղթել դարավոր թշնամուն»[35]:

Գեներալ Նիկոլաևը իր շտաբի և հայ հրամանատարներ Արամի, Վարդանի, Դրոյի, Խեչոյի հետ Վանի ազատագրումից հետո, 1915 թ.

Հայկական 6-րդ հրաձգային գումարտակը՝ փոխգնդապետ Միքայել Մելիք-Մուրադյանի գլխավորությամբ, մեծ սխրանքներ գործեց Սագիզի շրջանում 1916 թ. օգոստոսի 6-ից մինչև 10-ը տեղի ունեցած կատաղի մարտերում: Հունիսի 15-ից 17-ը տևած արյունահեղ մարտում գումարտակը գրավեց Բիստանը և նրա անառիկ դիրքերը: Գումարտակի սխրագործությունները ողջունեցին Կովկասյան բանակի Գլխավոր հրամանատար գեներալ-լեյտենանտ Պրժևալսկին և կորպուսի հրամանատար գեներալ-լեյտենանտ իշխան Վոդբոլսկին, դիվիզիայի հրամանատար գեներալ Կարպովը[36]:

Ռազմական գործողություններում իրեն լավագույնս դրսևորեց նաև հայկական 5-րդ հրաձգային գումարտակը՝ գնդապետ Պավել Բեկ-Փիրումյանի գլխա-

[35] Տես նույն տեղում, էջ. 2–29:

[36] Տես նույն տեղում, էջ. 11:

վորությամբ, որը կազմված էր հիմնականում դարաբաղցիներից: 1916 թ. հուլիսի 12-ից մինչև օգոստոսի վերջը նա անընդհատ արշավանքների, կռիվների և ընդհարումների մեջ էր: Գումարտակը Կովկասյան 7-րդ կորպուսի կազմում մասնակցեց Պարսկաստանի Դրիթկա-Ռայաթ գյուղի և Ասխաբա լեռան մոտ 1916 թ. օգոստոսի 9-ին տեղի ունեցած նշանավոր ճակատամարտին, որում ռուսական զորքը գլխովին ջախջախեց թուրքական 4-րդ (Դարդանելյան) դիվիզիան: Այդ ճակատամարտում, բացի մեծ ռազմական ավարից, ռուսական զորքերին գերի հանձնվեցին 2000 թուրք զինվորներ և 60 սպա[37]: Միայն օգոստոսյան մարտերի համար մարտական պարգևների ներկայացվեց գումարտակի ամբողջ սպայական կազմը, իսկ քիչ անց՝ ևս 50 տոկոսը: Գումարտակի մի շարք հայ զինվորներ պարգևատրվեցին Գեորգիյան խաչերով ու մեդալներով:

Գեներալ Օգանովսկին (աջից երկրորդը)
իշխան Հ. Արղությանի (աջից երրորդը) ջոկատի զորատեսին.
1915 թ.

1916 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին 5-րդ գումարտակը գեներալ Կուլեբյակինի գլխավորած Սոուջ-Բուլաղի զորաջոկատի կազմում, համագործակցելով հայկական 4-րդ և 6-րդ գումարտակների հետ, գրավեց Բանե քաղաքը:

1916 թ. դեկտեմբերի 13-ից մինչև 15-ը տևած կռիվներում գումարտակը մյուս զորամասերի հետ գրավեց Վանի շրջանի Աթաման գյուղը և Ոստանի ուժեղ ամրացված թուրքական դիրքերը[38]: Գեներալ Գ. Ղորղանյանի վկայությամբ՝ զորասյան ռազմական գործողությունների և մարտերի ծանրությունը գրեթե ամբողջովին ընկել էր հայ հրաձիգների վրա, նրանց գործողությունները «ապացուցում

[37] Տես նույն տեղում, գ. 19, թ. 10:

[38] Տես նույն տեղում, թթ. 1–24:

են մարտիկների բարձր ռազմական ոգին, կուռ կարգապահությունը և իրենց վրա դրված պարտքի կատարյալ գիտակցությունը»[39]:

Միայն 1917 թ. հունիսի 15-ից 17-ը Բիստանի (Իրան) ճակատամարտին մասնակցելու համար Գեորգիյան խաչի և այլ բարձր պարգևների էին ներկայացվել ավելի քան 68 հայ հրաձիգներ[40]: Բայց քիչ չէին նաև զոհվածները, որոնց թվում էին 4-րդ գումարտակի պրապորշչիկ Հովհաննես Խաչիյանը, գումարտակի հրամանատար Սուրեն Բազյանը և շատ ուրիշներ[41]:

1917 թ. Ռուսաստանում տեղի ունեցած փետրվարյան հեղափոխությունից հետո ռուսական բանակում ազգային զորամասերի ստեղծման քաղաքականության շնորհիվ հայկական կանոնավոր գումարտակներն ընդարձակվեցին, և նրանց հիմքի վրա կազմավորվեցին վեց հայկական հրաձգային գնդեր, որոնք մտան գործող բանակի կազմի մեջ: Նրանցից դեռևս կազմավորման ընթացքում գտնվող 2-րդ և 5-րդ գնդերն իրենց հռչակեցին «մահապարտների գունդ» պատվավոր անունով:

1917 թ. նոյեմբերին վերոհիշյալ գնդերի զարգացման և ընդարձակման շնորհիվ և նրանց հիմքի վրա կազմավորվեց հայկական Առանձին բանակային կորպուսը, որը նաև ռուսական զորքերի հետ, ապա Կովկասյան ճակատից նրանց հեռանալուց հետո՝ ինքնուրույնաբար ստանձնեց ռազմաճակատը պահելու ծանրագույն պարտականությունը: Հայկական կորպուսի հրամանատարը ռուսական բանակի հմուտ և փորձված զորապետ գեներալ-լեյտենանտ Ֆոմա (Թովմաս) Իվանի Նազարբեկովն էր: Կորպուսի կազմում կային երկու հրաձգային դիվիզիա, հրետանային, հեծելազորային բրիգադներ և մի շարք այլ առանձին մասնագիտացված զորամասեր ու ստորաբաժանումներ: Կորպուսի զորամասերը 1917 թ. նոյեմբեր – 1918 թ. մայիս ամիսներին անհավասար, ծանր, բայց հերոսական մարտեր էին մղել թվով մի քանի անգամ գերազանցող թուրքական զորաբանակների դեմ: Նրա զորամասերը վճռական դեր էին խաղացել 1918 թ. մայիսի 22-ից 29-ը տեղի ունեցած Սարդարապատի, Բաշ-Ապարանի և Ղարաքիլիսայի ճակատամարտերում տարած հաղթանակներում, որոնք վճռորոշ նշանակություն ունեցան ինչպես հայ ժողովրդին ֆիզիկական բնաջնջումից փրկելու, այնպես էլ նրա պետականության վերականգնման գործում[42]: 1918 թ. հուլիսի 19-ի տվյալներով՝ Առանձին հայկական կորպուսի մարտական կազմը այսպիսին էր. Երևանի

[39] *Գ. Ղորղանյան*, Նշ. աշխ., էջ 117:

[40] Տես ՀԱԱ, ֆ. 121, ց. 1, գ. 19, թ. 11:

[41] Առաջին աշխարհամարտի տարիներին Կովկասյան ճակատում հայկական կամավորական ջոկատների և հրաձգային գումարտակների կազմավորման և մարտական գործունեության մասին հանգամանորեն տես *Մ. Կարապետյան*, Հայկական կամավորական խմբերը և ազգային գումարտակները Կովկասյան ռազմաճակատում (1914–1917 թթ.): Ե., 1999, *նաև՝ նույնի՝* Հայկական զինվորական կազմավորումները Կովկասյան ռազմաճակատում …, *Ռ. Օ. Սահակյան,* Մարտական գործողությունները 1914 թ. Կովկասյան ռազմաճակատում. Սարիղամիշյան օպերացիան: «ՀԲ», 1996, հմ. 3–4:

[42] *Մ. Լ. Կարապետյան*, Հայկական զինվորական կազմավորումները Կովկասյան ռազմաճակատում …:

զորաջոկատ՝ 491 սպա, 14040 զինվոր, Ներքին Ախտայի զորաջոկատ՝ 150 սպա, 2172 զինվոր, Դիլիջանի զորաջոկատ՝ 162 սպա, 2157 զինվոր, Նոր Բայազետի ջոկատ՝ 15 սպա, 403 զինվոր, ընդամենը՝ 19590 մարդ, որոնցից՝ 818 սպա, 18772 զինվոր[43]:

Հայ կամավորները ֆրանսիական զորքերի կազմում

Կովկասյան ճակատում, բացի կորպուսից, կազմավորվեցին նաև Անդրանիկի Հավաքական ջոկատը (կոչվել է նաև Հայկական հատուկ հրաձգային դիվիզիա) և մի շարք ոչ կանոնավոր զորամասեր, որոնց անձնակազմերի մի զգալի մասը կազմում էին արևմտահայերը: 1918 թ. մարտի դրությամբ արևմտահայ կանոնավոր և ոչ կանոնավոր ուժերը միասին ունեին 25 հազարանոց անձնակազմ[44]:

Առաջին համաշխարհային պատերազմում Թուրքիայի դեմ պատերազմին իրենց ակտիվ մասնակցությունն ունեցան նաև արտասահմանի հայերը: Պատերազմի տարիներին նրանք նյութական և բարոյական օգնություն ցուցաբերեցին իրենց մարտնչող եղբայրներին: Բագրատ եպիսկոպոսի կազմած մի զեկուցագրից հայտնի են դառնում որոշ նվիրատուների անունները: Այսպես. հայ կամավորական ջոկատների համար 1355 ռուբլի էր ստացվել Նյու Յորքից՝ Պետրոգրադի ռուսական արտաքին բանկի միջոցով, 450 ռուբլի 7 կոպեկ՝ Նյու Յորքի սեբաստացիների ՈՒլաշ խմբից, 3409 ռուբլի 10 կոպեկ՝ Ամերիկայի ազգային պաշտպանության հանձնաժողովից[45]: 5000 ռուբլի ստացվել էր Կահիրեի հայկական կոմիտեից՝ 600 ռուբլի՝ Ժնևի հայ ուսանողներից, 175 ռուբլի՝ Հյուսիսային Ամերիկայի Չելսի քաղաքի «Վասպուրական» ուսումնական ընկերությունից, 250 ռուբլի՝ Նյու Յորքի Երզնկաց ընկերությունից: Բացի այդ, կամավորների ընտանիքների օգտին նվիրատվություններ են ստացվել և Մարսելի «Հայ երիտասարդաց

[43] Տես ՀԱԱ, ֆ. 121, ց. 1, գ. 6, թ. 24, *նաև՝ Կ. Հարությունյան*, Հայկական ազգային կազմավորումները 1918–1945 թթ.: Ե., 2002, էջ 18 – 19:

[44] Տես *Ա. Նազարյան*, Հայկական զորամասերի կազմավորում Կովկասյան ճակատում (1914–1918 թթ.): Ե., 1999, էջ 193:

[45] ՀԱԱ, ֆ. 288, ց. 1, գ. 3, թթ. 4 – 5:

միությունից»՝ 600 ռուբլի, Եդեսիայից՝ մատաղացու երինջի վաճառքից նվեր Գր. Սարգսյանից՝ 100 ռուբլի, Եդեսիայից՝ Ապրեսյանից, Ի. Ղազարյանից և Մ. Գաբրիելյանից՝ 10-ական ռուբլի և այլն[46]:

Հազարավոր սփյուռքահայեր պատերազմին մասնակցում էին զենքը ձեռքներին մարտնչելով այն երկրների բանակների կազմում, որտեղ բնակվում էին առաջին համաշխարհային պատերազմի տարիներին: Ֆրանսիայի, Անգլիայի և ԱՄՆ-ի բանակներ զորակոչված հայ մարտիկների թիվն անցնում էր 50 հազարից[47]: 1916 թ. նոյեմբերին ֆրանսիական զորքերի կազմում ձևավորվեց նաև Արևելյան լեգեոնը[*], որի անձնակազմը համալրված էր Ֆրանսիայից, Եգիպտոսից, Ամերիկայից, Կիպրոսից և այլ երկրներից եկած հայ կամավորներով: Հայկական լեգեոնը մարտական մկրտություն ստացավ 1918 թ. սեպտեմբերի 19-ին Արարայի ճակատամարտում: Հետագայում նա անգլո-ֆրանսիական զորքերի կազմում մասնակցեց Սիրիայի և Լիբանանի համար մղված մարտերին: 1918 թ. մայիսին Հայկական լեգեոնի կազմում կար չորս գումարտակ, հայ լեգեոնականների թիվը հասնում էր 4000-ի[48]: Թուրքական զորաբանակների դեմ մղված Արարայի ճակատամարտում աչքի ընկնելու համար 25 հայ մարտիկներ ֆրանսիական հրամանատարության կողմից պարգևատրվեցին «Մարտական խաչ» շքանշանով[49]:

Այսպիսով՝ կարող ենք ասել, որ հայ ժողովուրդը ակտիվ կերպով մասնակցել է առաջին համաշխարհային պատերազմին և մեծ զոհողությունների գնով զգալի ներդրում ունի հայ ժողովրդի դարավոր թշնամի Թուրքիայի դեմ Ռուսաստանի տարած հաղթանակում: Հայ ժողովրդի զավակները մարտնչել են գրեթե բոլոր ռազմաճակատներում և տարբեր զորատեսակների կազմում ինչպես Ռուսական կայսրության, այնպես էլ նրա դաշնակից երկրների բանակների կազմում, և իրենց մարտական հմտությամբ ու հերոսական սխրանքներով հարստացրել են հայ ժողովրդի փառավոր մարտական ավանդույթները:

---

[46] Տես ՀԱԱ, ֆ. 288, ց. 1, գ. 140, թթ. 93 – 98, «Հորիզոն» 1916 թ. փետրվարի 23:

[47] Տես «Հայ ժողովրդի պատմություն», հ. 6, էջ 547:

[*] 1918 թ. նոյեմբերի 15-ին ֆրանսիական կառավարության որոշմամբ Արևելյան լեգեոնը վերանվանվեց Հայկական լեգեոն (տես *Ա. Հ. Գարամանուկյան*, Հայկական լեգեոնը պատմական, իրավական ու քաղաքական հարցերու լույսին տակ: «ՀԲ», 1996, հմ. 2, 3 – 4, *նաև՝ Ռ. Հ. Գասպարյան*, Հայկական լեգեոնը (1916 – 1920 թթ.): «ՀԲ», 1996, հմ. 1):

[48] Տես *Տ. Հ. Պոյանյան*, Հայկական լեգեոնը: ՈՒոթրթաուն, 1965, էջ 107:

[49] Տես *Ռ. Գասպարյան*, Հայկական լեգեոնը (1916 – 1920 թթ.): «ՀԲ», 1996, հմ. 1, էջ 11:

ՊԱՏՄԱՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՄԵԹՈԴԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

Ա. Կ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, պատմական գիտությունների թեկնածու,
ՀՀ Պաշտպանության նախարարի մամլո քարտուղար

Պատմահամեմատական մեթոդը բնական և սոցիալական գիտությունների ոլորտում լայնորեն կիրառվող մեթոդ է, որի էությունն այն է, որ համեմատության միջոցով հայտնաբերվում են ընդհանուրն ու առանձնահատուկը այն երևույթներում, որոնք ծագումնաբանորեն և պատմականորեն կապված են միմյանց հետ, համագոյակից են կամ միանման, այսինքն՝ որոնց միջև նկատվում է որոշակի «ազգակցություն»[1]: Պատմահամեմատական մեթոդը հնարավորություն է տալիս պարզելու և առաջարկելու հետազոտվող օբյեկտի զարգացման էվոլյուցիայի մակարդակները, տեղի ունեցած փոփոխությունները, որոշելու այդ զարգացման միտումները, այսինքն՝ նաև կանխատեսելու:

Պատմահամեմատական մեթոդի կիրառման ելակետը հետազոտվող օբյեկտների միջև «ազգակցության»՝ միանմանության հայտնաբերումն է, այդ օբյեկտների միավորումը խմբերի մեջ, որոնց ներսում էլ կատարվում է պատմական համեմատությունը: Մեթոդը կիրառելիս շեշտը կարող է դրվել կամ օբյեկտների համեմատության, կամ էլ ժամանակի ընթացքում դրանցում կատարված փոփոխությունների հայտնաբերման վրա: Մեթոդի կիրառման համար էական է հետազոտվող օբյեկտների կամ երևույթների հաջորդական շղթայի, այնուհետև՝ հետազոտվող համակարգերի տարրերի միջև համապատասխանության կառուցումը[2]:

Գոյություն ունեն պատմահամեմատական մեթոդի հետևյալ տարատեսակները. 1) պատմազուգորդական մեթոդ, որը ի հայտ է բերում միևնույն կամ տարբեր օբյեկտների տարրերի միջև եղած հարաբերությունները, 2) պատմատիպաբանական համեմատություն, որը ծագումով միմյանց հետ չկապված երևույթների նմանությունը բացատրում է զարգացման միանման պայմաններով, 3) պատմածագումնաբանական համեմատություն, որի դեպքում երևույթների նմանությունը բացատրվում է նրանց ծագումնաբանական «ազգակցությամբ», 4) կառուցվածքա-

---

[1] Տես *А. П. Огурцов*. Сравнительно-исторический метод. «Энциклопедия эпистемологии и философии науки». Под ред. И. Т. Касавина. М., 2009 (http://epistemology_of_science.academic.ru/769/%D1%81%D1%80%D0%B0%D0%B2%D0%BD%D0%B8%D1%82%D0%B5%D0%BB%D1%8C%D0%BD%D0%BE-%D0%B8%D1%81%D1%82%D0%BE%D1%80%D0%B8%D1%87%D0%B5%D1%81%D0%BA%D0%B8%D0%B9_%D0%BC%D0%B5%D1%82%D0%BE%D0%B4):

[2] Տես նույն տեղում:

տիպաբանական մեթոդ, որի դեպքում մի որոշակի կառուցվածք հանդես է գալիս որպես կառուցվածքային տիպ՝ այլ կառուցվածքների վերլուծության համար[3]:

Պատմահամեմատական մեթոդով կարելի է վերլուծել միմյանցից հարյուրամյակներով ու նույնիսկ հազարամյակներով բաժանված իրադարձություններ: Օրինակ՝ Ա. Կլեյմենովը այդ մեթոդը կիրառել է Ալեքսանդր Մակեդոնացու միջինասիական արշավանքն ուսումնասիրելու համար[4]: Հեղինակը հետազոտվող երևույթը՝ Ալեքսանդրի արշավանքները, համեմատել է Միջին Ասիայում տեղի ունեցած այլ հակամարտությունների հետ, որոնք պատմագիտության մեջ ավելի լավ են ուսումնասիրված, մասնավորապես՝ 19-րդ դարում Միջին Ասիա ռուսական զորքերի ձեռնարկած արշավանքների և Աֆղանստան բրիտանացիների ներխուժման հետ: Վերջիններիս և Ալեքսանդրի արշավանքներում ընդհանուրը եվրոպացիների համար անսովոր բնակլիմայական պայմաններն են, հետևակի և հեծելազորի առկայությունը, ընտանի կենդանիների՝ որպես քարշող ուժի օգտագործումը: Ա. Կլեյմենովը պատմահամեմատական մեթոդի հիման վրա բացատրում է, թե ինչու է Ալեքսանդր Մակեդոնացին իր արշավանքի ընթացքում փոխել բանակի մատակարարման համակարգը՝ աստիճանաբար հրաժարվելով տեղի բնակչությունից սննդամթերք վերցնելուց. 19-րդ դարում թե՛ ռուսները, թե՛ բրիտանացիները իրենց արշավանքների ընթացքում լուրջ խնդիրներ են ունեցել՝ կապված սննդամթերքի, ջրի, վառելափայտի պակասի հետ: Բրիտանացիները 1839 թ. Կանդահարի դեմ ռազմարշավի ընթացքում հազար գլուխ անասուն են կորցրել՝ կեր չլինելու պատճառով: Խնդիրներն ավելի են բարդացել ամռան սաստիկ շոգի ու ճմռան սառնամանիքի պատճառով: Հնուց հայտնի «Պատերազմը պատերազմ է սնուցում» սկզբունքը այդ տարածքում չէր գործում: Հոդվածագրի կարծիքով՝ տրամաբանական է ենթադրել, որ նույն խնդիրներին է բախվել նաև Ալեքսանդրի զորքը, ինչն էլ ստիպել է նրան փոխել մատակարարման համակարգը և օգտվել նախկին Աքեմենյան տերության ենթակառուցվածքներից:

Նույն սկզբունքով հեղինակը բացատրում է Ալեքսանդրի զորքի ապշեցուցիչ արագաշարժությունը, մասնավորապես՝ այն փաստը, որ նա 3 օրում անցել է մոտ 278 կմ, այսինքն՝ օրական 92,5 կմ: 19-րդ դարում ռուսական արշավանքի փորձի վերլուծության հիման վրա հեղինակը ենթադրում է, որ Ալեքսանդրի ջոկատը շարժվել է առավոտյան, երեկոյան և գիշերվա ժամերին՝ խուսափելով օրվա ամենաշոգ ժամերին տեղաշարժվելուց: Պատմահամեմատական մեթոդի հիման վրա նա ենթադրում է նաև, որ Ալեքսանդրը, ինչպես և ռուսական զորքերը 19-րդ դարում, Միջին Ասիայի անապատներում բախվել է վառելափայտի պակասի հետ և այդ պատճառով ստիպված է եղել կարգադրել, որ զինվորներն իրենց հետ վերցնեն եփած սնունդ 6 օրվա համար[5]:

---

[3] Տես նույն տեղում:

[4] Տես *А. А. Клейменов*. Применение сравнительно-исторического метода при изучении среднеазиатской кампании Александра Македонского. «Роль университетов и музеев в проведении гуманитарных научных исследований: Материалы 6-й международной научно-практической конференции». Тула, 2011, сс. 76–79 (http://www.academia.edu/5282609/_-_):

[5] Տես նույն տեղում:

Մեկ այլ հետազոտող՝ Ֆ. Հոլտը, պատմահամեմատական մեթոդի հիման վրա զուգահեռներ է տանում Ալեքսանդրի միջինասիական արշավանքի և 19-րդ դարում բրիտանացիների՝ Աֆղանստան կատարած ներխուժման միջև[6]:

Այսպիսով՝ պատմահամեմատական մեթոդը հնարավորություն է ընձեռում նոր գիտելիք ստանալու նույնիսկ հազարամյակներ առաջ տեղի ունեցած իրադարձությունների մասին, նորովի քննելու իրադարձություններն ու անսպասելի եզրակացություններ անելու՝ պայմանով, որ համեմատվող օբյեկտները ճիշտ ընտրվեն: Այսպես. ըստ Ա.Կլեյմենովի՝ ճիշտ չէր լինի զուգահեռներ տանել Ալեքսանդրի արշավանքների և 13-րդ դարի սկզբին Չինգիզխանի արշավանքների միջև, որովհետև երկրորդ դեպքում տարածաշրջան է ներխուժել ոչ թե հետևակից ու հեծելազորից բաղկացած նստակյաց-հողագործական պետության բանակը, այլ՝ քոչվորների հեծյալ զորքը, որը սովոր էր ապրելու անապատում: Ճիշտ չէ նաև Ալեքսանդրի արշավանքների համեմատությունը Աֆղանստան խորհրդային զորքերի և առավել ևս՝ ամերիկյան զորքերի ներխուժումների հետ, ինչն անում է վերը հիշատակված Ֆ. Հոլտը:

Տվյալ հոդվածում մենք փորձել ենք առանձնացնել 20-րդ դարի վերջի էրիտրեա-եթովպական պատերազմի և Կարգիլյան բարձունքների համար Հնդկաստանի ու Պակիստանի զինված բախման դասերը[*]:

ԷՐԻՏՐԵԱ-ԵԹՈՎՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Երկարամյա դիմակայությունից հետո 1993 թ. անկախություն հռչակեց Էրիտրեա նորակազմ պետությունը, որը գտնվում էր Եթովպիայի հյուսիսում և նրա ելքն էր դեպի ծով: Նորակազմ պետության ու Եթովպիայի միջև տարածքային վեճ կար: 1997 թ. հակամարտությունը կրկին սրվեց, սակայն կողմերը ակտիվ մարտական գործողություններ չէին ձեռնարկում: Եթովպական բանակի թվակազմը մոտ 100 000 էր, այն զինված էր մոտավորապես 300 միավոր խորհրդային Տ-55 ու Տ-62 տանկերով և նույնքան էլ ՀՄՄ-1, ԶՓԴ-60 և այլ զրահամեքենաներով[7]: Հրետանին ևս մեծ թիվ չէր կազմում. հիմնականում՝ խորհրդային 85, 100, 122, և 152 մմ տրամաչափի քարշակվող միջոցներ, որոշ քանակությամբ ռեակտիվ համազարկային կայանքներ, իսկ օդուժը թեև փոքրաթիվ չէր, սակայն բաղկացած էր հիմնականում հնացած խորհրդային ՄիԳ-21, ՄիԳ-23 կործանիչներից, Մի-8 ու Մի-24 ուղղաթիռներից (ընդամենը՝ մոտ 80-90 միավոր), իսկ օդաչուների մասնագիտական որակավորումը բարձր չէր: Էրիտրեական բանակի թվակազմը մոտ 50 000 էր, մարտական տեխնիկան բաղկացած էր գրեթե նույն զինատեսակներից, միայն քանակը՝ համարյա կրկնակի պակաս:

1998 թ. մարտական գործողություններ սկսեց Էրիտրեան՝ զորք մտցնելով վի-

[6] Տես նույն տեղում:

[*] Տվյալ պատերազմների ընտրությունը պայմանավորված է ադրբեջանա-հայկական ընդդիմամարտության ռազմաքաղաքական պայմաններին դրանց ռազմաքաղաքական պայմանների՝ մի շարք նմանություններով, որոնք ակնառու են դառնում հետագա շարադրանքից:

[7] Տես *И. Коновалов.* Война между Эфиопией и Эритреей. «Чужие войны». Под. ред. Р. Пухова. М., 2012, сс. 85–88:

ճելի Բադմե քաղաք-շրջանը: Եթովպիան արձագանքեց մի փոքր ուշ, սակայն արդեն մեկ ամիս անց՝ 1998 թ. հունիսին, մարտական գործողություններն ստացան լայնածավալ բնույթ: Կար երեք ռազմաճակատ, որոնք իրարից բավական հեռու էին: Սակայն հուլիսին սկսվեցին անձրևները, և առանց այն էլ դժվարանցանելի տարածքները դարձան անանցանելի: Կողմերը դադար վերցրին և սկսեցին վերազինվել՝ տարբեր երկրներից ձեռք բերելով իրենց ունեցած տեսակների տանկեր, զրահամեքենաներ և հրետանային միջոցներ[8]:

Երկու կողմերն էլ զգալիորեն թարմացրին հատկապես իրենց ավիացիան: Սկզբում Էրիտրեան Բելառուսից (այլ տվյալներով՝ ՌԴ-ից) գնեց մինչև 10 միավոր ՄիԳ-29 կործանիչ[9]: Եթովպիան, ճիշտ գնահատելով իրադրությունը, նախ, կատարելագործեց ունեցած հին խորհրդային կործանիչները, ապա ՌԴ-ից գնեց ութ Սու-27 կործանիչ, ընդ որում, վեցը՝ համեմատաբար կատարելագործված Սու-27 ՍԿ մակնիշի[10]: Կողմերը ձեռք բերեցին նաև Սու-25 գրոհային ինքնաթիռներ (Եթովպիան՝ ավելի ժամանակակից ռուսական տարբերակը), ինչպես նաև ուղղաթիռներ:

Պատերազմն ավելի մեծ ուժգնությամբ վերսկսվեց 1999 թ. փետրվարին, կրկին ավելի ակտիվ էր Էրիտրեան: Նա լայնածավալ հարձակում սկսեց նույն շրջաններում: Արդեն փետրվարի վերջին եթովպական բանակը բոլոր երեք ճակատներում վարում էր լայնածավալ հարձակողական գործողություններ: Բադմե քաղաքի շրջակայքում՝ մոտավորապես 60 կմ ճակատով, Եթովպիան կուտակել էր վեց դիվիզիա և մեծաքանակ զրահատեխնիկա: Թեև զորքերի խտությունը բավական մեծ էր, սակայն որակյալ ամրաշինական կառույցներով հագեցած էրիտրեական պաշտպանական բնագիծը հեշտությամբ չէր տրվում[11]:

Համառ մարտերից հետո մի կերպ գրավելով Բադմե քաղաքը՝ եթովպական զորքերն շտապեցին ամրապնդել հաջողությունը և, զարգացնելով հարձակումը, դուրս եկան Զալամբեսայի շրջան, որտեղ նրանց կանգնեցրեց էրիտրեական զորքերի համառ դիմադրությունը: 4 կմ ճակատով տանկային լայնածավալ գրոհի ընթացքում խոցվեց 57 տանկ, և հարձակումը տապալվեց: Արյունահեղ մարտերը եթովպական կողմին մեծ հաջողություն չբերեցին:

Տարբեր գնահատականներով՝ եթովպական լայնածավալ հարձակումները միայն 1999 թ. փետրվար-մարտ ամիսներին արժեցել են մոտ 15 -17 հազար զինվորի և սպայի կյանք[12]: Հակառակորդի անձնակազմի կորուստներն անհամեմատ փոքր էին:

---

[8] Տես «Ethiopia And Eritrea. Acrimonious divorce». «IISS Strategic Comments», March 2010, Vol. 6, N 2; *М. Жирохов, М. Шаповаленко.* Последняя Классическая война XX века. «История авиации», 2002, № 1, с. 58:

[9] Տես *Б. Кузык, Н. Новичков, В. Шварев, М. Кенжетаев, А. Симаков.* Россия на мировом рынке оружия. Анализ и перспективы. М., 2001, сс. 300–301:

[10] Տես նույն տեղում:

[11] Տես «Africa Research Bulletin», 1999, Vol. 36, N 2, P. 13424; *T. Negash and K. Tronvell.* Brothers at War. Making Sense of the Eritrean-Ethiopian War. Ohio Press University, 2001, P. 2:

[12] Տես «Ethiopia plans renewed offensive». «Jane's Intelligence Review», 01.04.2000; «No compromise for Eritrea and Ethiopia». «Jane's Intelligence Review», 01.01.2001:

1999 թ. մարտական գործողությունների ժամանակ կողմերը փորձեցին լայնորեն օգտագործել ավիացիան: Եթովպիան ձգտում էր լիովին ոչնչացնելու մոտավորապես 10 անգամ պակաս էրիտրեական ՌՕՈՒ-ն դեռ գետնի վրա: Ինքնաթիռները մշտապես փորձում էին ռմբակոծել էրիտրեական օդանավակայանները, սակայն շոշափելի արդյունքի չէին հասնում: Եթովպական ավիացիան, մասնավորապես՝ նոր ռուսական գրոհային ինքնաթիռները և ուղղաթիռները, համեմատաբար հաջող էր գործում ցամաքային զորքերին աջակցություն ցուցաբերելիս:

Յուրաքանչյուր օդային մարտում կողմերը կիրառում էին նոր մարտավարական հնարքներ: Սակայն ամեն անգամ հաղթող էր դուրս գալիս ավելի ծանր և հզոր Սու-27-ը: 1999 թ. և 2000 թ. օդային մարտերում եղել է նաև դեպք, երբ երկու Սու-27 դուրս են եկել չորս ՄիԳ-29-ի դեմ, որոնք օդային կառավարման կետ չունեին, և մարտն ավարտվել է առաջինների հաղթանակով: 1999 թ. փետրվարի 26-ի մարտում կողմերը, մեծ հեռավորությունից իրար վրա Պ-27 հրթիռներ արձակելով, հաջողության չհասան և ստիպված դիմեցին օդային մերձամարտի: Առանց կողմերից մեկի առավելության՝ երկար պտտվեցին մեկը մյուսի շուրջը, քանի որ և՛ օդաչուները մոտավորապես նույն հմտությունն ունեին (մի կողմից՝ ռուսներ, մյուս կողմից՝ ուկրաինացիներ), և՛ մոտավորապես նույնն էր կործանիչների ճկունությունը*: Սակայն այս մարտում ՄիԳ-29-ը հերթական անգամ տանուլ տվեց իր հիմնական թերության պատճառով՝ կարճ ժամանակահատվածում ծախսելով վառելիքի պաշարը: Էրիտրեական ՌՕՈՒ-երի հիմնական կործանիչներն սկսեցին որոնել մարտից դուրս գալու ուղիներ: Մարտից փախչող ՄիԳ-29-երին «գտան» Սու-27-ից արձակված մերձահար հրթիռները: Ըստ տարբեր աղբյուրների՝ եթովպական կործանիչները խոցել էին 3-5 ՄիԳ-29[13]:

Ամռան կեսին կրկին սկսվեցին հորդառատ անձրևները, ու բանակները կրկին սկսեցին վերազինվել և ուժեր կուտակել: 2000 թ. պատերազմին կողմերը պատրաստվում էին նույն տեմպերով, գնեցին մեծ քանակությամբ տեխնիկա, մասնավորապես՝ հրետանային: Ռուսաստանի Դաշնությունը զինում էր երկու կողմին էլ: Եթովպիայի բանակն ուներ 350 000 մարդ, իսկ Էրիտրեայինը՝ 250 000, ընդսմին երեք ճակատներից և ոչ մեկում Եթովպիան չուներ 1,5 անգամից ավելի քանակական առավելություն[14]:

2000 թ. մայիսի 12-ին հիմնականում Բադմե քաղաքի ուղղությամբ սկսվեց եթովպական բանակի լայնածավալ հարձակումը, որը զարգանում էր բավական

* Ըստ ռուսական բազմաթիվ աղբյուրների՝ երկու կողմից էլ որպես օդաչուներ հիմնականում գործել են ռուս և ուկրաինացի մասնագետներ:

[13] Տես *Александр В. Котлобовский.* Оправдавший предназначение. «Авиация и Время», 2007, № 6; *М. Жирохов, М. Шаповаленко.* Последняя Классическая война XX века. «История авиации», 2002, № 2; *М. Жирохов, М. Шаповаленко.* Последняя Классическая война XX века. «История авиации», 2002, № 3; *Jacek Wasilewski.* Wojna etiopsko-eritrejska w powietrzu, cz. I. «Lotnictwo», 2005, N 5; *նույնի՝* Wojna etiopsko-eritrejska w powietrzu, cz. II. «Lotnictwo», 2005, N 6:

[14] Տես *Ի. Կոնովալով*, Նշ. աշխ., էջ 85–88:

հաջող[15]: Եթովպական զորքերը գործում էին ոչ կարծրատիպային եղանակով, նրանք գաղտնի կերպով հակառակորդի թիկունք էին տեղափոխել դիվերսիոն ուժեր, որոնց լրակցված էին հրետանային ու հակատանկային միջոցներ: Հիմնական ուժերի ճակատային հարվածների հետ միաժամանակ նրանք անակնկալ կերպով թիկունքից հարվածեցին հակառակորդին:

Հրետանու և ավիացիայի կենտրոնացված հարվածներով ուղեկցվող գրոհներով մի քանի շաբաթում ջախջախվեց էրիտրեական 13 դիվիզիա: Արդեն մայիսի 25-28-ը եթովպական բանակը սպառնում էր մտնել Էրիտրեայի մայրաքաղաք Ասմերա: Եթովպացիները գործում էին խելամտորեն, հարվածները հասցնում էին արագ, հաճախ խուսափում էին ճակատային գրոհներից, քաղաքները հիմնականում շրջանցում էին՝ դրանց դեմ ուղղելով գրոհող խմբեր, ավիացիա և հրետանի: Արևելքում ևս եթովպական բանակը գրեթե գրավել էր Ասեբ ծովային քաղաքը, երբ պատերազմն ավարտվեց: Պատերազմի ընթացքում կողմերը միասին ամենահամեստ տվյալներով ունեցել են 30-40 հազար զոհ: Հրադադարի կնքումից հետո տարածաշրջան մտցվեց միջազգային խաղաղապահ զորք, սակայն երբ Էրիտրեան միջազգային արբիտրաժային դատարանով հետ ստացավ Բադմեի շրջանը, իրավիճակը կրկին սրվեց: Կողմերն այսօր զորքերը պահում են մարտական վիճակում, իրադրությունը մշտապես լարված է, հաճախակի են երկուստեք սադրանքներն ու զոհերը:

ԿԱՐԳԻԼՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Էրիտրեա-եթովպական պատերազմի հետ գրեթե միաժամանակ Հնդկաստանի հյուսիս-արևմուտքում ընթանում էր մեկ այլ պատերազմ: Հնդկաստանի այդ հատվածում են գտնվում Կարգիլյան բարձունքները, որոնց միջին բարձրությունը 3800-4000 մետր է, որոշ գագաթներինը՝ 5000-5300 մ[16]: Քանի որ այդ տարածքին հավակնում է նաև Պակիստանը, հնդկական զորքը հսկում է այն: Սեպտեմբերից հետո տարածքը դառնում է անանցանելի և հնդկական զորքը դուրս է բերվում այնտեղից: Հսկողությունը վերահաստատվում է միայն մայիսի վերջին–հունիսին[17]:

1998 թ. փետրվար-մարտ ամիսներին Պակիստանի բանակի լավ պատրաստված թեթևազեն լեռնագրոհային հետևակը՝ մինչև 5000 մարդ, գաղտնի գրավեց լքված բարձունքները: Հնդկական կողմը մայիսի սկզբին սովորականի նման փորձեց կրկին զբաղեցնել իր մարտական դիրքերը, սակայն ընկավ Պակիստանի բանակի դարանը: Ի պատասխան՝ հնդկական բանակը մայիսի 26-ին սկսեց «Վիջայ» անվանումն ստացած ռազմական օպերացիան, որում տեղանքի բար-

[15] Տես «Ethiopia plans renewed offensive». «Jane's Intelligence Review», 01.04.2000; «Africa Research Bulletin», 2000, Vol. 37, N 5, P. 13959:

[16] Տես *Pradeep P. Barua.* The State at War in South Asia. Lincoln: University of Nebraska Press, 2005, P. 261:

[17] Տես «Managing Armed Conflicts in the 21st Century». Ed. by Adekeye Adebajo and Chandra Lekha Sriram. London: Frank Cass Publishers, 2001, PP. 192–193; *М. Барабанов.* Индо-пакистанский конфликт в Каргиле. «Чужие войны», сс. 102–104:

դության պատճառով ակտիվորեն ներգրավված էին միայն հատուկ լեռնային պատրաստում անցած զորքը, հրետանին և ավիացիան[18]:

Հունիսի վերջին հնդկական զորախմբի կազմում արդեն կար ավելի քան 730000 զինվոր ու սպա, սակայն բուն մարտական գործողություններին մասնակցում էին միայն ընտրյալ ստորաբաժանումները[19]:

Հնդկական կողմի սպառազինության մեջ կային մոտավորապես 300 միավոր հրետանային միջոցներ, մեծ մասամբ՝ հաուբիցներ և ականանետներ, որոնք կարող էին կրակել մեծ անկյան տակ[20]: Տարածաշրջանում կուտակվել էր նաև ավելի քան 300 հնդկական ինքնաթիռ՝ հարվածներ հասցնելու և հետախուզության համար: Յուրաքանչյուր բարձունք գրավվում էր լուրջ պատրաստությունից՝ հետախուզությունից, հզոր օդային և հրետանային հարվածներից հետո, գրոհներն ուղեկցվում էին անմիջական օդային ու հրետանային աջակցությամբ: Կային բարձունքներ, որոնք գրավվեցին միայն 5000 հրետանային կրակոցից հետո: Հնդկական կողմը նշում է, որ ընդհանուր առմամբ ծախսվել է մոտ 250000 հրետանային արկ, հիմնականում՝ 155 մմ տրամաչափի[21]: Մարտական գործողություններն ավարտվեցին հուլիս ամսին հնդկական կողմի հաղթանակով: Պակիստանցիների օջախային պաշտպանությունը ճնշվեց միայն նշված միջոցներով և նշված մարտավարությամբ:

ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

– Թեպետ Էրիտրեայի բնակչությունը մոտ 4 մլն է[22], Եթովպիայի բնակչությունը՝ մոտ 85 մլն[23], սակայն Եթովպիայի զորքերի քանակական առավելությունը ամենևին էլ համարժեք չէր բնակչության թվի քսանապատիկ գերազանցությանը:

– Ինտենսիվ մարտական գործողություններն արագորեն (4-5 ամսում) սպառում էին Էրիտրեայի ու Եթովպիայի բոլոր տեսակի պաշարները, ինչին հաջորդում էին դադարն ու սպառազինության նոր մրցավազքը:

– Էրիտրեայի ու Եթովպիայի զորքերի լայնածավալ ցամաքային մարտական գործողություններին բնորոշ էր զոհերի մեծ թիվը, հատկապես՝ ամրաշինական կառույցների հաղթահարման ժամանակ:

– Էրիտրեա-եթովպական պատերազմում երկու կողմերի զրահատանկային միավորները չէին կարողանում գործել հետևակից անջատ, քանի որ ընկնում էին հակառակորդի դարանը, մասնավորապես՝ ավիացիայի ու հրետանու կրակի տակ:

---

[18] Տես *Shaukat Qadir.* An Analysis of the Kargil Conflict 1999. «RUSI Journal», April 2002, Vol. 147, Issue 2 (http://indianstrategicknowledgeonline.com/web/An%20Analisys%20Kargil%20Conflicts.pdf):

[19] Տես *Մ. Բաղաբանով,* Նշ. աշխ., էջ 102:

[20] Տես «1999 Kargil Conflict» (http://www.globalsecurity.org/military/world/war/kargil99.htm):

[21] Տես նույն տեղում:

[22] Տես «World Population Prospects: The 2012 Revision» (http://esa.un.org/unpd/wpp/unpp/panel_population.htm):

[23] Տես նույն տեղում:

– Միևնույն ժամանակ, եթե կողմերից որևէ մեկը անգամ սահմանափակ, բայց լավ կազմակերպված գործողությունների էր դիմում այլ զորատեսակներով, ինչպիսիք են ավիացիան, հատուկ նախանշանակման զորքերը և այլն, ապա լուրջ մարտավարական հաջողությունների էր հասնում: Խոսքը վերաբերում է օդային հարվածներին, ՌԷՊ-ին, մեծ դեր ունեին եթովպացիների դիվերսիոն գործողությունները, մասնավորապես՝ հակառակորդի թիկունքում և թևերում գործող մարտական խմբերը՝ մինչև անգամ ուժեղացված գումարտակի կազմով:

– Կարգիլյան պատերազմում հնդկական կողմի մեծաքանակ զորքերը միաժամանակ մարտական խնդիրներ չէին կատարում, հիմնականում գործում էին առավելագույնը գումարտակի կազմով: Զրահատեխնիկա բոլորովին չկար, մեծ տեղ էր հատկացված հրետանուն և ավիացիային: Չկար դասական համազորային մարտ:

– Բարձր լեռնային տեղանքում մարտական գործողությունները հնդկական կողմից պահանջում էին լրացուցիչ ջանքեր հետախուզության ապահովման, զորքերի տեխնիկական և թիկունքային ապահովման համար:

– Հնդկական ավիացիան իր պրակտիկայում առաջին անգամ համեմատաբար մեծ քանակով կիրառում էր կառավարվող ավիառումբեր, որոնց արդյունավետությունը մեծ էր: Լինում էին դեպքեր, երբ բարձունքին հասցված հզոր օդային և հրետանային հարվածներից հետո այն գրավում էին ընդամենը 30-40 հոգանոց խմբով:

– Հնդիկ հրամանատարները միաբերան պնդում են, որ Կարգիլյան պատերազմում հնդկական բանակի խորհրդային և արևմտյան բոլոր հրետանային միջոցներից լավագույնը 155 մմ-ոց շվեդական ՖՀ-77Բ հաուբիցն էր, որի առավելություններն ընդունում էին նույնիսկ պակիստանցիները[24]: Պատերազմից հետո Հնդկաստանը որոշեց մեծացնել այս զինատեսակի ձեռքբերման ծավալները:

– Կարգիլյան պատերազմում օդային հարձակման գերճշգրիտ միջոցները, լուծելով սահմանափակ խնդիրներ, գործում էին արդյունավետ կերպով: Մինչդեռ էրիտրեա-եթովպական պատերազմում եթովպական ավիացիայի մոտ տասնապատիկ գերազանցությունը և էրիտրեական տարածքի ռմբակոծությունները էական արդյունք չտվեցին: Օդային հարձակման միջոցների հարցում նույն իրավիճակն էր նաև 1994 թ. ապրիլից մինչև հուլիսը Հյուսիսային և Հարավային Եմենների միջև ընթացած պատերազմում, երբ կողմերն ակտիվորեն իրար վրա էին արձակում խորհրդային Լունա Մ., Տոչկա մարտավարական և Սկադ - Է օպերատիվ-մարտավարական հրթիռներ: Ընդհանուր առմամբ այս կարճատև պատերազմի ընթացքում երկու կողմից քաղաքների ուղղությամբ արձակվել է շուրջ 300 հրթիռ, որոնք, սակայն, հիմնականում նշանակետին չհասնելու պատճառով մեծ ազդեցություն չունեցան մարտական գործողությունների արդյունքի վրա[25]:

[24] Տես *Shaukat Qadir.* An Analysis of the Kargil Conflict 1999; «World Defence Almanac 2002-2003», PP. 282–283:

[25] Տես *В. Куделев.* Вооруженный конфликт между Северным и Южным Йеменами. «Чужие войны», с. 44:

– Եթովպական պատերազմի օդային մարտերի մանրամասն նկարագրությունը ցույց է տալիս, որ ՄիԳ-29-երի համար ճակատագրական էր թռիչքի փոքր հեռավորությունը, փոքր ռմբատարողությունը, ընդամենը երկու միջին հեռահարության հրթիռ կրելու հնարավորությունը, ինչպես նաև կրակի կառավարման համակարգի այլ խնդիրներ: Սու-27-ը սովորաբար կրում է վեց նման հրթիռ: Պատերազմից հետո Էրիտրեան ստիպված եղավ գնել ռուսական Սու-27-ինքնաթիռներ[*]:

ՄիԳ-29-երի առումով նույն վիճակն էր նաև Կարգիլյան պատերազմում: Բարձրլեռնային պայմաններում խորհրդային արտադրության ոչ մի ինքնաթիռ և հարվածային ուղղաթիռ չկարողացավ մարտական խնդիրը կատարել անհրաժեշտ որակով[26]: Ի վերջո առաջադրանքների կատարման հիմնական բեռն ընկավ ֆրանսիական Միրաժ-2000 կործանիչի վրա, որին ՄիԳ-29-երը ընդամենը 20 րոպե էին կարողանում ուղեկցել[27]: Ֆրանսիական այս կործանիչները գերճշգրիտ հարվածներ էին հասցնում Մատրա PGM 1000 կգ-անոց ռումբերով, որոնք արդյունավետ կերպով խոցում էին հակառակորդի հենակետերը և թիկունքային ռազմաբազաները[28]: Նկատենք, որ հարվածների համար խորհրդային կործանիչն ընդհանրապես չկիրառվեց:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Պատմահամեմատական մեթոդի հիման վրա կարելի է եզրակացնել, որ Էրիտրեա-եթովպական և Կարգիլյան պատերազմների վերոնշյալ առանձնահատկությունները (դրանցից մի քանիսը) կարող են բնորոշ լինել մի շարք էական գծերով այդ պատերազմներին նման այլ հակամարտությունների, այդ թվում՝ աղրբեջանա-հայկական հնարավոր պատերազմին: Սրանով է պայմանավորված այդ առանձնահատկությունների ուսումնասիրման արդիականությունը:

---

[*] Երևան եկան նաև այլ խնդիրներ, մասնավորապես պարզվեց, որ միջին հեռահարության ռուսական համապատասխան հրթիռները այնքան էլ հուսալի չէին. հաշվվել է մոտ 24 արձակում, որոնք չեն հասել նշանակետին:

[26] Տես «Lessons from Doda, Kishtwar and Jammu» (Article N 546). «Institute of Peace and Conflict Studies», 17.08.2001 (http://www.ipcs.org/article_details.php?articleNo=546 &submit); *Джоунс Родни.* Ядерная стратегия Пакистана: в поисках гарантированного сдерживания. «Ядерное распространение», январь-март 2000, Вып. 34, с. 37; *А. А. Шилин.* Стратегический баланс в Южной Азии. М., 2004, сс. 108–109:

[27] Տես *Ю. Голдаев.* Мираж-2000 в Каргильском конфликте 1999 г. (http://www.airwar.ru/history/locwar/asia/mirag2000/mirag2000.html); *Philip Camp.* The Mirage-2000 at Kargil (http://www.bharat-rakshak.com/IAF/History/Kargil/PCamp.html):

[28] Տես *S. Ved.* Operation Safedsagar: A New Chapter in History of Military Aviation. «Bharat Rakshak Monitor», 1999, Vol. 2 (2):

«ՀԱՏՈՒԿ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ» ՀԱՅԱՋԻՆՋ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Հ. Հ. ՀԱՏԻԿՅԱՆ, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի հայցորդ

1915–1916 թթ. երիտթուրքական կառավարության իրագործած ցեղասպանության հետևանքով արևմտահայությունը կանգնեց բնաջնջման վտանգի առաջ, տեղի ունեցան նաև ասորիների, իսկ հետագայում՝ հույների զանգվածային կոտորածները:

Երիտթուրքերի գործունեության ժամանակահատվածում քրիստոնյաների բռնի մահմեդականացման հարցը ներքին գործերի նախարար Թալեաթը առաջ քաշեց Սալոնիկում Իթթիհատի 1910 թ. համագումարում: Հարցը կուսակցության քաղաքական ծրագրի վերածվեց Բալկանյան պատերազմից անմիջապես հետո: Ծրագիրը քննարկվել էր երիտթուրքերի գաղտնի ժողովներում, որոնք կայացել էին 1914 թ. մայիսին, հունիսին և օգոստոսին, և, հետազոտողների կարծիքով, որպես փաստաթուղթ թվագրվում է մոտավորապես 1914 թ. դեկտեմբեր–1915 թ. հունվար (փաստաթղթի վրա ամսաթիվ ու տարեթիվ չկա)[1]: Ծրագիրն ստորագրել էին Իթթիհատի հինգ գործիչներ՝ Թալեաթը, Բ. Շաքիրը, Մ. Նազիմը, Ջանփոլադը, գնդապետ Սեյֆին[2]:

Առաջին համաշխարհային պատերազմը պատեհ առիթ էր արևմտահայությանը ամենադաժան հալածանքների և ֆիզիկական բնաջնջման ենթարկելու համար: Մեծ Եղեռնի իրագործման առաջին ազդանշանը եղավ 1914 թ. հունվարին սկսված պետական համակարգում հայերի պաշտոնանկությունը, որին հաջորդեցին հայերի զինաթափումը և ունեցվածքի բռնագրավումը: Նրանք, ովքեր չէին ընդունում մահմեդականություն, խմբերով, ժանդարմների հսկողության տակ, ամայի վայրերում ենթարկվում էին հատուկ նպատակով ստեղծված «Թեշքիլաթի մահսուսայի» (Հատուկ կազմակերպության) հրոսակախմբերի հարձակմանը:

Պատմագրության մեջ «Թեշքիլաթի մահսուսայի» ստեղծման ժամանակի վերաբերյալ միանշանակ կարծիք չկա: Տարբեր թուրք և արտասահմանցի հետազոտողներ առաջ են քաշում այս հարցի կապակցությամբ տարբեր վարկածներ[3], սակայն մենք առավել հակված ենք ընդունելու Է. Ցյուրիխերի տեսակետը, ըստ որի՝ «Հատուկ կազմակերպության» ստեղծման պաշտոնական ամիսն ու տարեթիվը պետք է համարել 1914 թվականի օգոստոսը: Դրա հետ մեկտեղ, Ցյուրիխերը «Իթթիհատական գործոնը. «Միություն և առաջադիմություն» կոմիտեի դերը

---

[1] Տես *Վ. Գուպտ*, Հայերի ցեղասպանությունը. աշխարհի հնագույն քրիստոնյա ժողովրդի ողբերգությունը: Ե., 2002 թ., էջ 235:

[2] Տես *Ռ. ՍաՖրաստյան*, Օսմանյան կայսրություն. Ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876–1920 թթ.): Ե., 2009, էջ 171:

[3] Ավելի հանգամանորեն տես *Հ. Ավակյան*. Геноцид армян: механизмы принятия и исполнения решений. Е., 2013, сс. 93–96:

1905–1926 թթ. թուրքական ազգային շարժման մեջ» մենագրությունում մեկնաբանում է. «Այդ կազմակերպությունը արդյունավետ կերպով գործող գաղտնի ծառայություն էր, որը Էնվերի անմիջական ենթակայության տակ էր և ֆինանսավորվում էր Ռազմական նախարարության գաղտնի ֆոնդերից: Կազմակերպությունը շատ կարևոր դեր ունեցավ առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ: Սակայն, ըստ երևույթին, «Թեշքիլաթի մահսուսայի» կազմավորումն ընդամենը նախկինում ստեղծված իրավիճակի հետևանք էր: Այլ մենագրություններից պարզ է դառնում, որ թուրք «ֆիդայիները»՝ Էնվերի հետնորդները, արդեն 1912–1913 թթ. հանդես էին գալիս որպես առանձին խմբերի անդամներ: Այդ աղբյուրներում «Թեշքիլաթի մահսուսայի» անվանումը հաճախ է օգտագործվում որպես տվյալ խմբերի անվանում»[4]:

«Թեշքիլաթի մահսուսան» կազմավորվեց «Միություն և առաջադիմություն» կուսակցության Կենտրոնական կոմիտեի «Ֆիդայիների կազմակերպության» հենքի վրա: «Ֆիդայիների կազմակերպությունը» ձևավորվեց «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնի ստեղծմանը զուգահեռաբար՝ 1906 թ. Սալոնիկում: Սկզբում այն հանդես եկավ որպես հատուկ կառույց, որն օգտագործվում էր երիտթուրքական կազմակերպության հակառակորդներին, ինչպես նաև կուսակցության համար վտանգավոր դարձած անդամներին վերացնելու համար: Կազմակերպությունում գործում էին խստագույն կարգապահական կանոններ: Նրա անդամները պարտավոր էին անհապաղ կատարել տրված հանձնարարությունները, հակառակ դեպքում 24 ժամվա ընթացքում կենթարկվեին պատժի:

«Ֆիդայիների կազմակերպությունը» գործում էր բացառապես Իթթիհատի Կենտկոմի հրամաններով: Կազմակերպության գոյության ընթացքում թուրք ֆիդայիները կատարել են մի շարք հանցագործություններ և քաղաքական բնույթի սպանություններ: Օրինակ՝ Կենտկոմի որոշմամբ թուրք «ֆիդայիները» 1909 թ. ապրիլից մինչև 1911 թ. հուլիս կազմակերպել և իրագործել են երեք ընդդիմադիր լրագրողների՝ Հասան Ֆեհմիի, Ահմեդ Սամիմի և Զեքիի[5] սպանությունները: Հիմնվելով որոշ փաստերի վրա՝ կարող ենք պնդել, որ «Միություն և առաջադիմություն» կուսակցության անդամ, 1909 թ. Ադանայի դեպքերի հետաքննության հանձնաժողովի նախագահ Հակոբ Պապիկյանի վաղաժամ մահը ևս անմիջականորեն կապված էր նրանց հետ:

«Ֆիդայիների կազմակերպության» կերպափոխումը «Թեշքիլաթի մահսուսայի» սկսվեց 1911–1912 թթ. և ավարտվեց Բալկանյան պատերազմի տարիներին:

1919 թ. երիտթուրքերի դատավարության ժամանակ մեղադրյալ Արիֆ բեյը («Հատուկ կազմակերպության» անդամ նախկին պատգամավոր Անկարայից) հարցաքննության ժամանակ ցուցմունք տվեց, որ Բալկանյան պատերազմի վերջերին, երբ հայտարարվեց ընդհանուր զորահավաք, ռազմական նախարարության միջոցով ինքը, Ազիզ բեյը (Թուրքիայի հասարակական անվտանգության ծա-

[4] *E. Zurcher.* The Unionist Factor. The Role of the Committee of Union and Progress in the Turkish National Movement 1905–1926. Leiden, 1984, P. 59; *Ա. Ավակյան.* Գենոցիդ արմյան:….

[5] Տես *Ա. Ավակյան.* Գենոցիդ արմյան: ..., c. 97:

ռայության տնօրեն), «Միություն և առաջադիմություն» կուսակցության անդամներ դոկտոր Նազիմ բեյը և Սուլեյման Ասքերը հիմնեցին «Թեշքիլաթի մահուսան»[6], որը դարձավ հայաջինջ քաղաքականության ամենահզոր գործիքներից մեկը:

1914 թ. հուլիսի 21-ի զորակոչից անմիջապես հետո երիտթուրքերի կենտրոնական կոմիտեն ստեղծեց «Թեշքիլաթի մահուսան» և հրոսակախմբեր, որոնք իրենց նպատակներով և կազմով միանգամայն տարբեր էին: Հրոսակախմբերը կազմավորվեցին ներքին գործերի և արդարադատության նախարարությունների հրահանգով ազատ արձակված դատապարտյալ ոճրագործներից, որոնք չէին ընդունվել ռազմական նախարարությունից կախում ունեցող «Թեշքիլաթի» մեջ: Բանտերից ոճրագործներին ազատ արձակելիս կուսակցությունը հանրությանը մոլորեցնելու համար լուրեր տարածեց, թե իբր բանտերից արձակված ոճրագործները օգտագործվելու են ռազմի դաշտում, մինչդեռ նրանց ուղարկեցին նախապես որոշված վայրեր՝ հայերին կոտորելու համար[7]:

«Թեշքիլաթի» քաղաքացիական թևը՝ Բեհաեդդին Շաքիրի գլխավորությամբ, իրագործում էր նախապես ծրագրված հայաջինջ քաղաքականություն:

Կառույցը կազմված էր չորս մասից.

– բանտերից ազատված հանցագործներից ստեղծված ջոկատներից: Թուրքիայի բանակի հրամանատարության անունից «Թեշքիլաթին» ուղղված փաստաթղթի 2-րդ և 3-րդ կետերից պարզ է դառնում, որ «հատուկ ծառայության շարքերը համալրելու նպատակով ազատ են արձակվել 2267 բանտարկյալներ ու դատապարտվածներ, հատուկ նպատակի գործադրման համար կազմակերպվող 531 հոգանոց ջոկատը անհրաժեշտ է համալրել և ուղարկել նշված վայրեր»[8],

– ժանդարմներից և գավառական ոստիկանությունից (85 հազար անդամ), որոնց ռազմական դատարանները բնութագրեցին որպես «ժանդարմների, որոնք ենթարկվել էին Հատուկ կազմակերպության ուժերին… և որոնք հայերի վրա հարձակումներ և զազրելի գործեր են իրականացրել»[9],

– քրդական ցեղերի ներկայացուցիչներից: Երիտթուրքերը քրդերին ոչ միայն հնարավորություն տվեցին ազատ գործելու, այլև զինեցին ու դրդեցին հարձակվելու անզեն հայ բնակչության վրա: Արևմտյան Հայաստանի վիլայեթներում հարկեր հավաքելու և դասալիքներին հետապնդելու պատրվակով կազմակերպեցին հայկական գյուղերի վրա հարձակումներ, խաղաղ բնակչության թալան ու սպանություններ: Այս գործողություններում գլխավոր դերը վերապահված էր քրդական «Համիդիե» գնդերին[10],

---

[6] Տես *Ա. Հ. Փափազյան*, Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի: Ե., 1989, էջ 63–65:

[7] Տես *Գրիկեր*, Եռզղատի հայասպանության վավերագրական պատմություն: Նյու Յորք, 1980, էջ 263:

[8] Տես *Ա. Հ. Փափազյան*, Նշ. աշխ., էջ 62:

[9] Տես նույն տեղում:

[10] Տես *Т. Акчам.* Турецкая национальная «Я» и Армянский вопрос. М., 1995, с. 90:

– Բալկաններից և Կովկասից եկած փախստականներից, որոնք բանտերից ազատ արձակված հանցագործների հետ մարտական պատրաստում էին անցնում ռազմական նախարարության վերահսկողության ներքո[11]:

«Թեշքիլաթի մահսուսայի» գործունեության գլխավոր նպատակը «Տեղահանության մասին» օրենքի կատարումն էր՝ հայերի բնաջնջմամբ: Դրա համար երիտթուրքերի կենտկոմի նիստերից մեկում ստեղծվեց երեք հոգուց կազմված հանձնախումբ՝ Երեքի կոմիտե, որում ղեկավար դերը պատկանում էր Բ. Շաքիրին: Կոմիտեն ՆԳ և ռազմական նախարարությունների հետ համատեղ մշակեց ջարդերի պլան:

Երեքի կոմիտեի հաստատած «Լրիվ ոչնչացման միջոցներն ու դրանց կիրառումը» փաստաթղթում գրված էր. «Այն քաղաքում և գյուղաքաղաքում, որտեղ կա հայ, ՆԳ նախարարության տեղական ներկայացուցիչների հետ մենք կորոշենք, թե նրանցից ում պետք է առաջին հերթին ոչնչացնել և յուրաքանչյուր շրջան կուղարկենք պահանջված թվով այդ ուժերից՝ բանտերից արձակված հանցագործների: Նրանք ճանապարհների մեր նշանակած հարմար հատվածներում սրի կքաշեն հայերի քարավանները: ՆԳ նախարար Թալեաթն այդ քաղաքների վարչական աշխատողներին կհրահանգի, որ հայերին պատերազմական շրջաններից դուրս բերելու պատրվակով խումբ-խումբ, օրը երկու անգամ ոստիկան-զինվորների հսկողության տակ տվյալ ճանապարհով ուղարկեն որոշված տեղը: Ոստիկան պաշտոնյաները, համաձայն այս հրամանի, հայերին կհանձնեն նրանց սպասող հատուկ կազմակերպությանը՝ չեթեներին, և կվերադառնան, իսկ չեթեներն այդ հայերին մինչև վերջին մարդը կսպանեն և, որպեսզի հանրային առողջությանը չվնասեն, դիակները կգցեն նախապես պատրաստված փոսերը և կթաղեն: Ահա այս ձևով հաջորդաբար կիրականացնենք բնաջնջումը»[12]:

«Միություն և առաջադիմություն» կուսակցության Կենտկոմը «Հատուկ կազմակերպության» տեղական ստորաբաժանումներին և Իթթիհատի ակումբներին հրահանգել էր. «Նկատի ունենալ, որ հայկական կոմիտեները ռումբեր և ատրճանակներ են պահում (զինամթերքի մի մասը գտնվել է Սիրիայում և Սվազում), ստեղծել են կամավորական գնդեր՝ մեծ մասամբ կազմված թուրքահայերից, հետապնդում են երկիրն ապատակելու նպատակ և ծրագրում են թիկունքից հարվածելու թուրքական բանակին: Այդ ամենի մասին նյութեր են հայտնաբերվել նրանց կազմակերպություններում և հրատարակչություններում: Նկատի ունենալ, որ Թուրքիայի կառավարությունը չի կարող աչք փակել և հանդուրժել այդ կազմակերպությունների գոյությունը… որ նման կոմիտեներն անկայունության աղբյուր են, չի կարելի նրանց օրինական համարել: ՈՒ նաև այն, որ դրանք վերացնելու համար պահաջվում են առանձնահատուկ միջոցներ, մենք, համաձայնելով զինվորական ընդհանուր հրամանատարության հետ, ընդունեցինք հետևյալ որոշումը՝ պետք է նախապատրաստական միջոցառումներից հետո անմիջապես փակել նահանգներում գործող դաշնակցական, հնչակյան և նույնանման այլ կոմիտեների կենտրոնները: Այդ կոմիտեներում հայտնաբերված փաստաթղթերը

[11] Տես «Բնօրրան», 1995, թիվ 1, էջ 91, 92:

[12] «Le crime de silance: Le génocide des Arméniens». Paris, 1984, P. 78.

բռնագրավել՝ թույլ չտալով, որ դրանք ոչնչացվեն: Կոմիտեների բոլոր գործող ղեկավարներին ու անդամներին, որոնք կառավարության համար վտանգավոր և վնասակար են, պետք է անմիջապես ձերբակալել, կենտրոնացնել հարմար վայրերում՝ նրանց փախուստն անհնար դարձնելու համար: Խուզարկե՛ք կասկածելի վայրերը և գտե՛ք թաքցրած զենքերը: Հայերի դիմադրությունը կանխելու համար, նախ, դիմեք տեղի բանակային կենտրոններին՝ անհրաժեշտ միջոցառումներն ապահովելու համար: Բոլոր փաստաթղթերը պետք է ուսումնասիրվեն, իսկ ձերբակալված անձինք հանձնվեն զինվորական ատյանին: Ձերբակալվածների անունները և կենսագրական մանրամասները, մահապատժի վճիռներն անպայման ուղարկեք»[13]:

Հայերի տարագրության վայրերը երկուսն էին: Առաջինը՝ հյուսիսային գոտին, ձգվում էր Բաղդադի երկաթուղու երկայնքով: Այստեղ քշվում էին Արևմտյան Հայաստանից տարագրվածները, որոնցից տեղ է հասել 150 հազար մարդ: Երկրորդը՝ հարավային գոտին, Եփրատի ափերն էին: Այստեղ տեղահանվեցին հիմնականում կիլիկիացիները, որոնցից տեղ հասավ 180-200 հազար մարդ: Թուրքական կառավարությունը հատկապես դաժանաբար էր վարվում Արևմտյան Հայաստանի հայության հետ, համեմատաբար մեղմ էին կիլիկիահայերի պայմանները: Վերաբերմունքի այս տարբերությունը շարունակվեց նաև տարագրության վայրերում: Հյուսիսային գոտում կանայք ու երեխաները զրկված էին իրենց ազգական տղամարդկանց աջակցությունից, գտնվում էին խստագույն հսկողության տակ և հանձնված էին ժանդարմների քմահաճույքին՝ փակված ճամբարներում՝ բաց երկնքի տակ, կիզիչ արևից անպաշտպան, որտեղ մշտապես տնօրինում էին վարակիչ հիվանդությունները: Ձկային սնունդամթերք, ջուր, բուժօգնություն, արգելվում էր կառուցել տնակներ և զբաղվել արհեստագործությամբ:

Հարավային գոտու հայերի վիճակը համեմատաբար տանելի էր, վարչական վերահսկողությունը հետզհետե մեղմանում էր, տրամադրվում էր ալյուրի ինչ-որ չափաբաժին, օգնություն էր ստացվում դրսից, թույլատրվեց զբաղվել առևտրով ու արհեստով, տուն կառուցել:

Հայերի երկու հատվածների վիճակների այս տարբերությունը բացատրվում է այն հանգամանքով, որ կառավարությունը նպատակ ուներ ամբողջությամբ ոչնչացնել Արևմտյան Հայաստանի հայ բնակչությանը, իսկ դրա սահմաններից դուրս բնակվող, այդ թվում՝ Կիլիկիայի հայերին, ցրել Միջագետքով՝ տնտեսական կյանքը զարգացնելու համար:

Տեղահանությունը, փաստորեն, հայերի բնաջնջման քողարկված ձև էր: Յոթ արևելյան նահանգների 1,2 միլիոն հայությունից շուրջ 300 հազարին հաջողվեց անցնել Կովկաս, մյուսներն սպանվեցին իրենց բնակավայրերում կամ տարագրվեցին, շուրջ 200 հազար կին ու երեխա էլ հափշտակվեցին: Այս նահանգներից ավելի քան 50 հազար վերապրողներ հասան Հալեպ՝ տարագրության քարավանների «ժամադրավայրը»[14]:

Ինչպես նշում է Հ. Բարբին, «Աբու-Հերերան փոքրիկ տեղանք է Եփրատի

[13] «Ալիք» օրաթերթ, 1985 թ. հոկտեմբերի 28:

[14] Տես «Արմենիա», 1985 թ. հոկտեմբերի 19:

ափին՝ Մեսքենեից հյուսիս, և անապատի ամենավատ մասն է: Այստեղ բլրի վրա տեղավորվել են 240 հայ: Նրանք բառացիորեն մեռնում են քաղցից: Ռաքքան Եփրատի ձախ ափին է տեղակայված. այնտեղ բնակվում էր 5000-6000 հայ՝ ամեն տանը 50-60 մարդ: Եփրատի աջ ափին հազարավոր հայեր ժանդարմների հսկողության տակ էին և սպասում էին, թե երբ մահը իրենց համար տեղ կազատի ավելի հեռու գտնվող համակենտրոնացման ճամբարում: Ռաքքայից հյուսիս՝ Զիաբեթում, 1800 հայ կար: Այստեղ սովը համատարած էր: Նույն վիճակում էին Սաբզե գյուղում բնակվող հայերը»[15]:

Թեշքիլաթի հայաջինջ գործողություններից բերենք ևս մեկ օրինակ: «Երբ 1915 թ. մարտին ռուսական զորքերը մոտեցան 1914 թ. ռուս-թուրքական սահմանին, Կարսի, Բաթումի, Արդահանի, Օլթիի և Արդվինի թուրքերն էմիսարների գլխավորությամբ ապստամբեցին, գրավեցին մի քանի քաղաք ու գյուղ: Տեղի հայերը կուտակվեցին Արդահանում (7000 հոգի) և Օլթիում (1500 հոգի): Մարտի 15-ին Արդահան է գնում ազգությամբ քուրդ Աբդուլահը 200 հեծյալով և հսկում է հայերի կոտորածը: Աբդուլահի հրոսակները և տեղի թաթարներն ու աջարացիները հարձակվում են հայերի տների վրա, դուրս քաշում տղամարդկանց ու սպանում իրենց տան շեմին: Սպանվում են նաև մեծ թվով կանայք և երեխաներ: Նրանց մեծ մասին փակում են տներում և այրում: Նույն կերպ վարվեցին նաև Օլթիում: Մոտ 8000 հայ ոչնչացվեց այդ երկու բնակավայրերում»[16]:

Թեշքիլաթը առանձնահատուկ իրավունքներով օժտված մի մարմին էր, որը ոչ միայն պետք է կատարեր ցեղասպանների հրամանները, այլև պատժեր այդ հրամանները կատարելուց խուսափող, թերացող կամ խղճահարություն ցուցաբերող պաշտոնյաներին: Կազմակերպությունը օգտվում էր լիակատար արտոնություններից և կարող էր հաշվեհարդարի ենթարկել նույնիսկ բարձր պաշտոնյաների: Թալեաթը հեռագրով տեղական իշխանություններին հանձնարարեց հայերին պաշտպանող քրիստոնյաներին և նրանց հետ համագործակցող մահմեդականներին հանձնել ռազմական դատարան[17]: Վալիները պարտադիր կերպով պետք է աջակցեին Թեշքիլաթի առջև դրված խնդիրների լուծմանը, հակառակ դեպքում վերջիններս կամ նրանց ենթակաները ազատվում էին զբաղեցրած պաշտոններից կամ ոչնչացվում էին:

Երիտթուրքերի դատավարության ժամանակ քաղաքացիական հետաքննության հանձնաժողովի տնօրեն Համիդ բեյի ցուցմունքի համաձայն՝ Անկարայի վալի Մահար բեյը հեռացվել է պաշտոնից, իսկ Դիարբեքիրի վալին ոչնչացրել է իր երկու կայմակամներին այն բանի համար, որ նրանք դեմ են եղել հայերի տեղահանությանը, ինչպես նաև արաբների դեմ գործադրվող բռնություններին և սպանություններին[18]:

«Թեշքիլաթի մահսուսան» չէր կարող իրագործել իր հրեշավոր ծրագրերը,

---

[15] *Հ. Բարթի*, Սարսափի երկրին մեջ. նահատակ Հայաստան: Կ. Պոլիս, 1919, էջ 140–145:

[16] «Osterrerich Armenien», Bd 8, 1918, s.b. 223.

[17] Տես *Ա. Ավակյան.* Геноцид армян. По документам судебного процесса младотурок. Е., 1989, с. 45:

[18] Տես *Ա. Հ. Փափազյան*, Նշ. աշխ., էջ 47:

եթե ապահովված չլիներ հավաստի տեղեկութային շտեմարանով: Ստեղծված գործակալական ցանցի միջոցով Թեշքիլաթի ղեկավարությունը կարողացել է տիրապետել իրավիճակին, գնահատել այն և գործել համակարգված ձևով: Այս առումով ղեկավարները գործակալական ցանցի ստեղծման ու համալրման գործում ցուցաբերել են բավական մեծ հմտություններ և ունակություններ: Մասնավորապես՝ Տրապիզոնում տեղահանության և կոտորածի վերաբերյալ դատավարության նյութերը հնարավորություն են տալիս հստակ պատկերացում կազմելու Թեշքիլաթի գործակալական ցանցի կառուցվածքի, ինչպես նաև գաղտնի աշխատանքում ներգրավման առանձնահատկությունների մասին: Այսպես. Տրապիզոնի վալի Ջեմալ Ազմի բեյը «օգտագործել է Մեհմեդ Ալիին՝ նկատի ունենալով, որ նա սերտ առնչություն ունի լքյալ գույքի, ռազմական արտակարգ հարկային պաշտոնյաների, ռազմական շինությունների, կապի հանձնաժողովների, զինվորական, հեռախոսային և անձնագրերի ստուգման տեսուչների, ինչպես նաև Կարմիր մահիկի հիվանդանոցի և Կանանց ընկերության հետ»[19]: Այս հանգամանքը հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ Ջեմալ Ազմին Թեշքիլաթի համակարգում գործել է ռեզիդենտի (մշտական լիազոր ներկայացուցիչ), իսկ Մեհմեդ Ալին՝ օպերատիվ լայն հնարավորություններով օժտված գործակալի կարգավիճակով: Նշված դատավարության նյութերի համաձայն՝ որպես մեղադրյալ հանդես է եկել Տրապիզոնի գաղտնի գործակալության տեսուչ Մուստաֆա էֆենդին, որն էլ, ղեկավարելով ռեզիդենտի և գործակալի աշխատանքները, անմիջականորեն կազմակերպել է Տրապիզոնի հայերի տեղահանությունն ու կոտորածը:

Թեշքիլաթն առանձնահատուկ ուշադրություն էր դարձնում, որ հակառակորդի շարքերում ունենա տեղեկատվության հուսալի աղբյուր: Պատահական չէր, որ Բ. Շաքիրը, պաշտոնական հարաբերություններ ունենալով ՀՀԴ ղեկավարության հետ, Էրզրումում կազմակերպված ՀՀԴ 8-րդ համագումարում ուներ իր լրտես գործակալը, որից ստանում էր մանրամասն տեղեկություններ, մանավանդ, որ համագումարի մասնակիցները գործում էին անզգուշորեն՝ նիստերն ավարտելուց հետո իբր գաղտնի հավաքվում էին ռուսական հյուպատոսությունում, որտեղ կայացած քննարկումների մասին նույնպես Բ. Շաքիրը մանրամասն տեղեկություններ էր ստանում[20]:

Այսպիսով՝ դեռ առաջին համաշխարհային պատերազմի նախաշեմին երիտթուրքերի ցեղասպան ծրագրի, դրա իրագործման համակարգված միջոցների, ձևերի ու մեթոդների մշակվածության պայմաններում արևմտահայությունը անորոշության մեջ էր. չուներ գործողության, ծրագիր, մարտավարություն և հստակ կողմնորոշում:

Հայոց ողբերգության պատճառներից մեկն էլ այն էր, որ չկար մի կառույց, որն զբաղվեր անհրաժեշտ տեղեկույթի ձեռքբերմամբ, ստուգմամբ, մշակմամբ և օգտագործմամբ: Օսմանյան կայսրության հատուկ ծառայությունների ձեռնարկած քայքայիչ գործունեությանը հակազդեցության մեխանիզմներ չլինելու պայմաններում հայ ազատագրական շարժման ղեկավարները չէին տիրապետում հավաստի տեղեկությունների և արագ փոփոխվող իրավիճակին:

[19] Նույն տեղում, էջ 167, 168:

[20] Տես «Teskilati Harpte Teskilati Mahsusa». «Vakit», 15–17.11.1933:

«Հատուկ կազմակերպությունը» այն կառույցներից էր, որն Օսմանյան կայսրության պարտությունից հետո էլ չդադարեցրեց իր գոյությունը, այլ դարձավ թուրքական ազգայնական շարժման ձևավորման կարևոր գործոններից մեկը[21]: 1919–1922 թվականներին՝ ազգայնական շարժման տարիներին, «Հատուկ կազմակերպության» հնարավորությունները, մասնավորապես՝ Կովկասում նրա ստեղծած ընդարձակ գործակալական ցանցը, բոլշևիկների հետ հարաբերություններում որպես խաղաքարտ էր փորձում օգտագործել Էնվեր փաշան, որը նաև հույսեր էր տածում հիմնելու այդ կազմակերպության հիման վրա համամահմեդական հեղափոխական կոմիտե[22]:

«Հատուկ կազմակերպության» համակարգում Կովկասի ուղղությամբ աշխատանքը կենտրոնացված էր «Արևելքի մասնաճյուղի Կովկասի բաժնում», որը ղեկավարում էր լեյտենանտ Աղնանը[23]:

«Կովկասի բաժնից» բացի, «Հատուկ կազմակերպության» թարգմանչական բյուրոյում կար երկու ենթաբաժին, որտեղ կենտրոնացվում էր Հարավային և Հյուսիսային Կովկասին վերաբերող հետախուզական ու բաց տեղեկությունը: Այդ երկու ենթաբաժիններն էին «Հյուսիսային Կովկասի թղթապանակը» և «Հարավային Կովկասի թղթապանակը»[24]:

«Հատուկ կազմակերպության» վերահսկողությամբ գործող քաղաքական «Կովկասի կազմակերպությունը» հիմնվել է 1914 թ.: Դրա նպատակն էր Կովկասում ապստամբական իրավիճակի ստեղծումը: Հյուսիսկովկասյան ժողովուրդների ներկայացուցիչներից բացի, այդ կազմակերպության մեջ ներգրավված էին նաև մահմեդական վրացիներն ու ադրբեջանցիները[25]: 1915 թվականին Ստամբուլում նման կազմով ստեղծվեց «Կովկասի միության կոմիտեն»: Հատկանշական է, որ վերը նշված «Հյուսիսային Կովկասի քաղաքական կոմիտեն» 1918 թ. հոկտեմբերի 30-ին ստորագրված Մուդրոսի զինադադարից հետո վերանվանվեց «Հյուսիսային Կովկասի վտարանդիների բարեգործական կազմակերպություն»: Հատուկ ծառայություններին բնորոշ գործելաոճի համաձայն՝ թուրքական հետախուզության գործակալները որպես քողարկման միջոց լայնորեն օգտագործում էին այս կամ այն բարեգործական կազմակերպությունները, որոնց անունից էլ հանդես էին գալիս իրենց գործունեության ընթացքում: Դա հնարավորություն էր տալիս պատերազմից տուժած մահմեդական բնակչությանը «օգնություն» ցուցաբերելու պատրվակով լինելու ռազմաճակատի տարբեր տեղամասերում, վերականգնելու մարտական գործողությունների ընթացքում խաթարված կապը, տալու հրահանգներ և հավաքելու հետախուզական բնույթի տեղեկություններ:

«Հատուկ կազմակերպությունը» այն կառույցներից էր, որի հիման վրա

[21] Տես *Ա. Ավագյան*, Հյուսիսկովկասյան քաղաքական վտարանդիությունը Թուրքիայի արտաքին քաղաքականության համատեքստում. 1920-1971 թթ.: Ե., 2011, էջ 25–27:

[22] Տես Архив внешней политики Российской Федерации, ф. 04, Секретариат Чичерина, оп. 39, папка 232, д. 52987, л. 28:

[23] Տես *Ա. Ավագյան*, Հյուսիսկովկասյան քաղաքական վտարանդիությունը ..., էջ 27:

[24] Տես նույն տեղում, էջ 5:

[25] Տես նույն տեղում, էջ 27:

ստեղծվեցին և զարգացան թուրքական հատուկ ծառայությունները: Մասնավորապես՝ 1920 թ. փետրվարի 18-ին ստեղծվեց Ռազմական ոստիկանությունը, իսկ 1921 թ. ապրիլի 1-ին՝ Հետախուզության վարչությունը: Այս երկու կազմակերպությունների ստեղծմամբ դրվեցին ներքին և արտաքին հետախուզական ծառայությունների հիմքերը:

Հատկանշական է, որ 1922–1926 թթ. ակտիվ հետախուզական գործունեության շրջանում Գլխավոր շտաբի հետախուզական վարչությունը օգտագործում էր դեռ «Հատուկ կազմակերպության» ստեղծած գործակալական ցանցը[26]:

Այսպիսով՝ «Հատուկ կազմակերպությունը» հանրապետական Թուրքիայի ներկայիս հետախուզական կառույցների հիմքն է: Նրա ժառանգորդը՝ Թուրքիայի ներկայիս Ազգային հետախուզական կազմակերպությունը *(MIT),* ավելի կատարելագործված միջոցներով ու մեթոդներով, ինչպես նաև հսկայական մարդկային ու ֆինանսական ռեսուրսներով շարունակում է հակահայկական գործունեությունը գրեթե նույն ձեռագրով և օպերատիվ-հետախուզական գործողությունների այն տրամաբանությամբ, որ բնորոշ էր Հայոց ցեղասպանության գործիք դարձած «Հատուկ կազմակերպությանը»:

[26] Տես նույն տեղում, էջ 136:

ВОЕННАЯ ИСТОРИЯ

УЧАСТИЕ АРМЯН В ПЕРВОЙ МИРОВОЙ ВОЙНЕ

М. Л. КАРАПЕТЯН, доктор исторических наук

РЕЗЮМЕ

В Первой мировой войне, столетие начала которой отмечалось в этом году, в армиях государств Антанты, и в первую очередь – Российской империи, самое активное участие приняли армяне. Так, из 2 млн 54 тыс. армян, проживавших в Российской Империи, 250 тыс. сражались на различных фронтах, в основном – на Кавказском фронте. Более 50 тыс. армян сражались в армиях других государств Антанты. В частности, на Ближневосточном фронте в составе французских сил сражался Восточный (Армянский) легион.

Подобная мотивированная активность армян объяснялась надеждой на поражение Оттоманской империи (Турции) и освобождение Западной Армении и ее автохтонного армянского населения от гибельного турецкого ига. Армян в значительной мере вдохновляли декларированная русским правительством цель вступления в войну – освобождение христианских народов от турецкого ига, а также обещание Франции дать автономию армянам Киликии под протекторатом Франции.

Кроме призыва в ряды российской армии армян, из них были сформированы действовавшие в ее составе семь армянских добровольческих дружин, позднее преобразованных в шесть регулярные армянские батальоны, в дальнейшем сведенные в шесть армянских полков.

Многие храбрые армянские офицеры выдвинулись на командные посты в царской армии. Так, славные традиции армянского оружия продолжили и развили 3 полных генерала, 5 генерал-лейтенантов, 22 генерал-майора.

Армяне отличились во многих сражениях, многие удостоились различных наград, и очень многие пали на поле боя смертью храбрых.

Однако вековые чаяния армянского народа из-за вероломства великих держав так и не сбылись.

В статье использован богатый архивный материал.

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ПРИМЕНЕНИЯ СРАВНИТЕЛЬНО-ИСТОРИЧЕСКОГО МЕТОДА

А. К. ОГАНЕСЯН, кандидат исторических наук,
Пресс-секретарь Министра Обороны РА

РЕЗЮМЕ

Сравнительно-исторический метод – это метод, используемый в естественных и социальных науках, с помощью которого путем сравнения выявляется общее и особенное в родственных, генетически и исторически связанных формах, достигается познание различных исторических ступеней развития одного и того же явления или двух разных, но родственных и сосуществующих явлений. Метод позволяет выявить и сопоставить уровни эволюции изучаемого объекта, произошедшие изменения, определить тенденции развития, т. е. прогнозировать с определенной долей вероятности.

Существуют различные типы социально-исторического метода: 1) сравнительно-сопоставительный метод, который выявляет соотношение элементов внутри одной и той же формы или между различными формами; 2) историко-типологическое сравнение, объясняющее сходство не связанных по своему происхождению явлений одинаковыми условиями развития и выдвигающее исторически конкретную форму в качестве идеального типа для сопоставления различных форм; 3) историко-генетическое сравнение, когда сходство явлений объясняется как результат их родства по происхождению; 4) структурно-типологический метод, в котором определенная структура выступает в качестве сконструированного типа для анализа иных структур.

В статье рассматриваются конкретные события эритреа-эфиопского и

индо-пакистанского (Каргильская война) конфликтов, по мнению автора, по ряду признаков позволяющих благодаря сравнительно-историческому методу распространить некоторые выводы на возможную азербайджано-армянскую войну.

АРМЕНОЦИДНАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ «ОСОБОЙ ОРГАНИЗАЦИИ» В ГОДЫ ГЕНОЦИДА АРМЯН

А. А. АТИКЯН, соискатель Института истории НАН РА

РЕЗЮМЕ

Секретная «Особая организация» («Тешкилати махсуса») была сформирована Центральным комитетом младотурок в августе 1914 г. Она находилась под непосредственным руководством Энвера-паши и финансировалась из секретных фондов Военного министерства. Организация состояла из: а) отрядов специально выпущенных из тюрем преступников, б) жандармерии и провинциальной полиции, в) представителей курдских племен, г) переселенцев с Балкан и Кавказа.

Главной целью «Особой организации» были депортация и истребление армян. По указанию министра внутренних дел Турции Талаата-паши армян под предлогом переселения из зон боевых действий депортировали, а по пути их ждали головорезы «Особой организации», которые вырезали их до последнего человека, трупы же забрасывали в заранее выкопанные ямы. Для депортации армян были выделены две зоны: северная, вдоль Багдадской железной дороги, и южная – вдоль Евфрата. В целом, из 7-и восточных вилайетов были выселены 1,2 млн армян, из которых лишь 300 тысячам удалось бежать на Кавказ, остальные были убиты в своих домах или депортированы.

MILITARY HISTORY

THE PARTICIPATION OF THE ARMENIANS IN THE WORLD WAR I

M. L. KARAPETYAN, Doctor of History

SUMMARY

The Armenians took the most active part in the World War I, the centenary of which was marked this year, being in the armies of the Entente powers, and in the first place – of the Russian Empire. So, from 2 million and 54 thousand Armenians living in the Russian Empire, 250 thousand of them fought on

different frontlines, mainly – on the Caucasian front. More than 50 thousand Armenians fought in the armies of the other Entente powers. In particular, the Eastern (Armenian) legion («La Légion d'Orient») fought on the Middle East front as part of the French forces.

Such motivated activity of the Armenians was explained by the hope for the defeat of the Ottoman Empire (Turkey) and the liberation of Western Armenia and its autochthonous Armenian population from the disastrous Turkish yoke. The Armenians were largely inspired by the goal of entering into the war declared by the Russian government – the liberation of Christian peoples from the Turkish yoke, and by the promise of France to grant autonomy to the Armenians of Cilicia under the French protectorate.

Besides the draft of the Armenians to the Russian Army, seven Armenian volunteer squads were raised within, which later were transformed into six regular Armenian batallions, and then turned into six Armenian regiments.

Many brave Armenian officers were nominated to command posts in the Tsarist Army. Thereby, the glorious traditions of the Armenian arms continued and gave 3 «full» Generals, 5 Lieutenant Generals, 22 Major Generals.

The Armenians distinguished themselves in many battles, many of them were honored with various awards, and many died a hero's death in the battlefield.

However, the age-old aspirations of the Armenian people have not come true because of the disloyalty of the great powers.

A rich archival material is used in this article.

SOME ISSUES OF APPLYING THE COMPARATIVE HISTORICAL METHOD

A. K. HOVHANNISYAN, PhD in History, Press Secretary of the RA Defense Minister

SUMMARY

The comparative historical method is a method used in the natural and social sciences, with the help of which through comparison the general and specific features in kindred, and genetically and historically related forms are revealed, the cognition of various historical stages of development of one and the same phenomenon or two different but kindred and coexisting phenomena is achieved. The method allows detecting and comparing the evolution levels of the object of interest, and the changes having occured, identifying the development trends, i. e. predicting with certain degree of probability.

There are various types of socio-historical methods: 1) comparative-contrastive method detecting the ratio of the elements inside one and the same

form or between different forms; 2) historical and typological comparison explaining the similarity of phenomena not related in their origin by identical conditions of development and highlighting a historically specific form as an ideal type for comparing different forms; 3) historical and genetic comparison, when the similarity of phenomena is explained as a result of their affinity by origin; 4) structural-typological method, in which a certain structure comes as a designed type for the analysis of other structures.

The article deals with certain events of Eritrea-Ethiopian and Indo-Pakistan (the Kargil War) conflicts, which, according to the author, due to a number of features allow drawing some conclusions on a possible Azerbaijani-Armenian war through comparative historical method.

THE ARMENOCIDAL ACTIVITY OF THE «SPECIAL ORGANIZATION» IN THE YEARS OF THE ARMENIAN GENOCIDE

H. H. HATIKYAN, Graduate Student at the Institute of History, NAS, RA

SUMMARY

The secret «Special Organization» («Teshkilâti Mahsusa») was established by the Central Committee of the Young Turks party in August, 1914. It was under the direct guidance of Enver Pasha and was financed from the secret funds of the Military Ministry. The Organization consisted of a) detachments of criminals specially released from prisons, b) the gendarmerie and the provincial police, c) representatives of the Kurdish tribes, d) settlers from the Balkans and the Caucasus.

The main goal of the «Special Organization» was to deport and exterminate the Armenians. At the behest of Turkey's Minister of Internal Affairs Talaat Pasha, the Armenians were deported under the pretext of resettling them from the zones of combat actions. The thugs of the «Special Organization» waiting for the Armenians on their way slaughtered them to the last man, and threw the corpses into the pits which had been dug beforehand. Two zones were assigned for deporting the Armenians: the northern one – along the Baghdad railway, and the southern one – along Euphrates. Overall, 1,2 million Armenians were displaced from 7 eastern vilayets, and only 300 thousand of them managed to escape to the Caucasus. The rest was murdered in their houses or deported.

ՀԱՄԱՐԻ ԲԱՌԱՐԱՆ

Դ. Ս. ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ, գնդապետ, Ն. Ս. ՄԿՐՏՉՅԱՆ, մայոր,
Լ. Հ. ՊԱՊԻԿՅԱՆ, մայոր

ՀԱՅ-ՌՈՒՍԵՐԵՆ-ԱՆԳԼԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ

անկայունություն – нестабильность; instability

անհանդուրժողություն – нетерпимость; intolerance

անհատապաշտական համակարգ – авторитарная система; authoritative system

անհատապաշտություն – авторитарность; authoritarianism

աշխարհայացք – мировоззрение; world outlook, world-view

ապագաղտնագրում – дешифровка; decryption, decoding

ապահարմարում – дезадаптация; deadaptation

առում – аспект; aspect

աստիճանակարգվածություն – иерархичность; hierarchy

աստվածաճանաչողությունն – богопознание; knowledge of God

արատ – 1. порок, 2. дефект; 1. vice, 2. defect

արատավոր բարքեր – порочные нравы; vicious habits

արժեհամակարգ – տես *արժեքային համակարգ*

արժեքային համակարգ – ценностная система; value system

արտարկում – экстраполяция; extrapolation

բաժնեմաս – доля; share

բարոյահոգեբանական – морально-психологический; moral and psychological

– բարոյահոգեբանական ապահովում – морально-психологическое обеспечение; moral and psychological support

– բարոյահոգեբանական հետաճ – морально-психологическая деградация; moral and psychological degradation

– բարոյահոգեբանական մթնոլորտ – морально-психологическая атмосфера; moral and psychological atmosphere

– բարոյահոգեբանական վիճակ – морально-психологическое состояние; moral and psychological state

գաղափարախոսականացվածություն – идеологизированность; ideologizing

գաղափարախոսականություն – идеологизация; ideologization

գաղափարախոսություն – идеология; ideology

գերակայություն – приоритет; priority

գործառում – функционирование; functioning

դատողություն – 1. рассудок, 2. рассуждение, 3. суждение; 1. reason, 2. reasoning, 3. opinion, judgement

– գնահատումային դատողություն – оценочное суждение; evaluative judgement

դիտարկում – 1. наблюдение, 2. рассмотрение; 1. observation, 2.

consideration
դրույթ – положение; thesis
եղանակագիտություն – синоптика; weather forecasting
ենթակարգություն – подчиненность, субординация; subordination
զինծառայողների բնակավորում – квартирование военнослужащих; quartering
զինվորական առաջնորդություն – военное лидерство; military leadership
ընթացակարգ – процедура; procedure
ընթացիկ կանխատեսում – текущий прогноз; nowcasting forecast
ընտրազատում – отбор; selection
ընտրողականություն – избирательность; selectivity, selectiveness
թղթային կրիչ – бумажный носитель; treeware, hard-copy form
թվակազմ – контингент; contingent
թվային տեխնոլոգիա – цифровая технология; digital technology
ինքնաբերական տրոհում – спонтанное деление, спонтанный распад; spontaneous fission
ինքնամաքրում – самоочищение; self-purification
ինքնասպանագետ – суицидолог; suicidologist
ինքնարտահայտում – самовыражение; self-expression
ինքնություն – տես *նույնականություն*
իրադրություն – обстановка; situation
իրազեկիչ – информатор; 1. informer, 2. informant
իրավագիտակցություն – правосознание; legal awareness, juridical consciousness
իրավախախտում – правонарушение; infringement of law, violation of law
իրավակարգ – правопорядок; law order, legal order
իրավասություն – компетенция; competence
խաղ – игра; game
– դերային խաղ – ролевая игра; role playing
– հաջորդակից խաղ – пошаговая игра; pathway game
– նմանարկումային խաղ – имитационная игра; consim, simulation game
– ռազմավարական խաղ – стратегическая игра; strategic war game
խաղաղապահական – по поддержанию мира; peacekeeping
խաղաղարարական – миротворческий; peacemaking
խավ – 1. страта, 2. жила, 3. ворс; 1. stratum, 2. strata, 3. pile, nap, 4. mine
խելամիտ պաշտպանություն – разумная оборона; rational defense
խորազննում – зондирование; sensing, probing
ծխախոտազերծում – избавление от курения; getting rid of smoking
ծխախոտամոլություն – зависимость от курения; smoking addiction
կամային ոլորտ – волевая сфера; volitional sphere
կանխում – предотвращение, пресечение; prevention
կարգադրագիր – 1. разнарядка, 2. наряд; 1. order, 2. duty
կարգազանցություն – 1. проступок, 2. нарушение порядка; breach of order, violation of order
կարգապահական վաշտ – дисципли-

нарная рота; disciplinary company
կարգապահություն–дисциплина; discipline
–կատարողական կարգապահություն – исполнительская дисциплина; implementation standard, implementation discipline
կարգասիրություն–дисциплинированность; discipline
կարգուկանոն – порядок; order
կարծրատիպ – стереотип; stereotype
կացութաձև – уклад; lifestyle, setup
կեղծագործում – симуляция; simulation
կողմնորոշիչ–ориентир; landmark, guideline
հակամարտային – конфликтный; conflict
–հակամարտային իրավիճակ – конфликтная ситуация; conflict situation
–հակամարտային տարր – конфликтный элемент; conflict element
հակամարտայնություն–конфликтность; proneness to conflict
համազգեստով քաղաքացի – гражданин в форме; citizen in uniform
համընդհանրացում–глобализация; globalization
հայաջինջ գործունեություն – армеоцидная деятельность; Armenocidal activity
հայատեցություն – арменофобия; Armenophobia
հայեցակարգ–концепция; concept
հայտանիշ – 1. признак, 2. симптом; sign, symptom
հանցակազմ – состав преступления; corpus delicti, legally defined crime
հանքաշերտ–рудный пласт; stratum of ore
հոգեխոցվածք – психическая травма; psychic trauma
հոգեկերտվածք – духовный облик; spiritual make-up
հոգեհուզական վիճակ – психоэмоциональное состояние; psychoemotional state
հռետորաբանություն – риторика; rhetoric, speechcraft
ձևախախտում–деформация; deformation, deformity
ձևաչափ – формат; format
ձևարկված հաստատություն – формализованный институт; formalized institution
ճառագայթահարում–облучение; radiation, irradiation
ճնշում–подавление; suppression
մարդու անվտանգություն – безопасность человека; human security
մարտական – боевой; 1. combat, 2. fighting, 3. battle
–մարտական պատրաստականություն –боевая выучка; warfare skills, battle training
–մարտական պատրաստություն – боевая готовность; combat readiness
–մարտական պատրաստում – боевая подготовка; combat training
մարտակարգ – боевой порядок; order of battle, battle-array
մարտահրավեր–вызов; challenge
մեկնակերպ–версия; version
մենաշնորհային իրավունք – монопольное право; monopoly right
մշտազննում – мониторинг; monitoring
մտացրումային խանգարում – диссо-

циативное нарушение; dissociative disorder
նախաձեռնողականություն – инициативность, предприимчивость; zeal, being initiative, initiativeness
նախանշանակում – предназначение, назначение; mission, purpose, predestination
ներքին ղեկավարում – внутреннее руководство; internal leadership, innere fuhrung
նմանակում – аналогизация; analogizing
նմանարկում – имитация; imitation
նորագոյացություն – новообразование; new formation, new growth
նվազարկում – минимизация; minimization
նույնականացում – идентификация; identification
նույնականություն – идентичность; identity
շարժառիթավորում – мотивация, мотивирование; motivation, justification
շեղում – 1. отклонение, девиация, 2. сдвиг; 1. deviation, 2. shift
շերտ – 1. полоса, 2. տես *խալ 1, 2;* 1.strip, 2. band, 3. belt, 4. zone
շերտավորում – 1. слоение, 2. отслоение, 3. расслоение; 1. foliation, 2. exfoliation, 3. delamination, 4. stratification
չափաբաժին – доза; dose
չափանիշ – критерий; criterion
պաշտպանական բարեփոխում – оборонная реформа; defense reform
պաշտպանունակություն – обороноспособность; defense potential, defense capability
պետականություն – государственность; statehood
պետութենակերպ կազմակերպություն – государствообразная организация; state-like organization
պետութենաշինություն – строительство государства; state-building
ռադիոակտիվություն – радиоактивность; radioactivity
ռազմահավաք – военные сборы; assembly, muster
ռազմարշավ – военная кампания; military campaign
սահմանակարգում – институционализация; institutionalization
սահմանային փոքր բարձրություն – предельно малая высота; nap-of-the-earth
սոցիալականացում – социализация; socialization
սոցիալական շերտավորում – социальное расслоение; social differentiation, social stratification
սրբազան պատերազմ – священная война; sacred war, holy war
վարչակարգ – режим; regime
վարք – поведение; behavior, conduct
– ինքնագրեսիվ վարք – аутоагрессивное поведение; autoaggressive behavior
– ինքնախեղիչ վարք – аутодеструктивное поведение; self-destructive behavior
վարքագիծ – линия поведения; line of action, mode of behavior
վարքականոն – кодекс; code of conduct
վերաբեռնում – перезагрузка; 1. rapprochement, 2. rebooting, 3. reloading
վերակարգ – наряд; duty

տագնապախռովություն – тревожность; anxiety, uneasiness
տարաշարժ – маневр; maneuver
տեղազննություն – 1. осмотр местности, 2. осмотр места; spot review, spot inspection
տեղեկատվական պատերազմ – информационная война; information warfare
տեղեկատվություն – информация, информирование, передача информации; informing, information sharing
տեղեկացվածություն – информированность, осведомленность, уведомленность; awareness
տեղեկուրացում – информатизация; informatization
տեղեկուրային պատերազմ – информационная война; information warfare
տեղեկույթ – информация; information
– տեղեկույթի արտազատում – извлечение информации; extraction of information
– տեղեկույթի գաղտնիացում – засекречивание информации; classification of information
տեղեկունակություն – информативность; informativeness
տվյալ – данные; data
– տվյալների մուտքագրում – ввод данных; data entry
– տվյալների շտեմարան – база данных; database
ցուցանիշ – показатель; 1. index, 2. indicator
փոխգործություն – взаимодействие; interaction
փորձաքննություն – 1. апробация, 2. экспертиза; 1. approbation, 2. expertise
փոխհամագործակցություն – взаимосотрудничество; reciprocal cooperation
քայքայիչ պաշտամունք – деструктивный культ; destructive cult
քննազրույց – собеседование; interview, interlocution
քրեաբանություն – криминалистика, криминология; criminalistics, forensic science
քրեածին վարք – криминогенное поведение; criminogenic behavior
– քրեածին վարքի պատճառականություն – причинность криминогенного поведения; causality of criminogenic behavior
քրեականացում – криминализация; criminalisation
օպտիմալացում – оптимизация; optimization
օտարատեցություն – ксенофобия; xenophobia

РУССКО-АРМЯНСКИЙ СЛОВАРЬ

авторитарная система – անհատապաշտական համակարգ
авторитарность – անհատապաշտություն
аналогизация – նմանակում
апробация – փորձաքննություն
арменофобия – հայատեցություն
арменоцидная деятельность – հայաջինջ գործունեություն
аспект – 1. տեսակետ, 2. առում, 3.

կողմ
безопасность человека – մարդու անվտանգություն
богопознание – աստվածաճանաչողություն
боевой – մարտական
– боевая выучка – մարտական պատրաստականություն
– боевая готовность – մարտական պատրաստություն
– боевая подготовка – մարտական պատրաստում
– боевой порядок – մարտակարգ
бумажный носитель – թղթային կրիչ
версия – մեկնակերպ
взаимодействие – 1. փոխգործություն, 2. համագործակցություն
взаимосотрудничество – փոխհամագործակցություն
внутреннее руководство – ներքին ղեկավարում
военный – 1. զինվորական, 2. ռազմական, 3. պատերազմական, 4. ռազմագիտական
– военная кампания – ռազմարշավ
– военное лидерство – զինվորական առաջնորդություն
– военные сборы – ռազմահավաք
волевая сфера – կամային ոլորտ
ворс – խավ
вызов – մարտահրավեր
глобализация – 1. համընդհանրացում, 2. համաշխարհայնացում
государственность – պետականություն
государствообразная организация – պետութենակերպ կազմակերպություն
гражданин в форме – համազգեստով քաղաքացի
данные – տվյալ
– база данных – տվյալների շտեմարան
– ввод данных – տվյալների մուտքագրում
девиация – см. *отклонение*
дезадаптация – ապահարմարում
деструктивный культ – քայքայիչ պաշտամունք
дефект – արատ
деформация – ձևախախտում
дешифровка – ապագաղտնագրում
диссоциативное нарушение – մտացրումային խանգարում
дисциплина – 1. կարգապահություն, 2. գիտաճյուղ, 3. կրթական առարկա
– исполнительская дисциплина – կատարողական կարգապահություն
дисциплинарная рота – կարգապահական վաշտ
дисциплинированность – կարգասիրություն
доза – չափաբաժին
доля – բաժնեմաս
духовный облик – հոգեկերտվածք
жила – 1. ջիղ, 2. հանքերակ, խավ
зависимость от курения – ծխախոտամոլություն
зондирование – խորազննում
игра – խաղ
– имитационная игра – նմանարկումային խաղ
– пошаговая игра – հաջորդակից խաղ
– ролевая игра – դերային խաղ
– стратегическая игра – ռազմավարական խաղ
идентификация – նույնականացում
идентичность – նույնականություն, ինքնություն
идеологизация – գաղափարախոսականություն

идеологизированность – գաղափարախոսականացվածություն
идеология – գաղափարախոսություն
иерархичность – աստիճանակարգվածություն
избавление от курения – ծխախոտազերծում
избирательность – ընտրողականություն
имитация – նմանարկում
инициативность – նախաձեռնողականություն
институционализация – 1. սահմանակարգում, 2. հաստատութենացում
информативность – տեղեկունակություն
информатизация – 1. տեղեկութացում, 2. տեղեկութավորում
информатор – իրազեկիչ
информационная война – 1. տեղեկութային պատերազմ, 2. տեղեկատվական պատերազմ
информация – 1. տեղեկույթ, 2. տեղեկատվություն
– засекречивание информации – տեղեկույթի գաղտնիացում
– извлечение информации – տեղեկույթի արտազտում
информирование – см. *информация 2*
информированность – տեղեկացվածություն
квартирование военнослужащих – զինծառայողների բնակավորում
кодекс – 1. օրենսգիրք, 2. վարքականոն
компетенция – իրավասություն
контингент – թվակազմ
конфликтность – 1. հակամարտայնություն, 2. գժտայնություն
конфликтный – 1. հակամարտային, 2. գժտային
– конфликтная ситуация – 1. հակամարտային իրավիճակ, 2. գժտային իրավիճակ
– конфликтный элемент – 1. հակամարտային տարր, 2. գժտային տարր
концепция – հայեցակարգ
криминализация – քրեականացում
криминалистика – քրեաբանություն
криминология – см. *криминалистика*
критерий – չափանիշ
ксенофобия – օտարատեցություն
маневр – տարաշարժ, զորաշարժ
минимизация – նվազարկում
мировоззрение – աշխարհայացք
миротворческий – 1. խաղաղարարական, 2. խաղաղարար
мониторинг – մշտազննում
монопольное право – մենաշնորհային իրավունք
морально-психологический – բարոյահոգեբանական
– морально-психологическая атмосфера – բարոյահոգեբանական մթնոլորտ
– морально-психологическая деградация – բարոյահոգեբանական հետամ
– морально-психологическая деградация – բարոյահոգեբանական հետամ
– морально-психологическое обеспечение – բարոյահոգեբանական ապահովում
– морально-психологическое состояние – բարոյահոգեբանական վիճակ
мотивация – շարժառիթավորում
мотивирование – 1. см. *мотивация,*

2. հիմնավորում
наблюдение – 1. դիտում, 2. դիտարկում
назначение – 1. նշանակում, 2. см. *предназначение*
нарушение порядка – կարգազանցություն
наряд – 1. վերակարգ, 2. կարգադրագիր
нестабильность – անկայունություն
нетерпимость – անհանդուրժողություն
новообразование – նորագոյացություն
облучение – ճառագայթահարում
оборонная реформа – պաշտպանական բարեփոխում
обороноспособность – պաշտպանունակություն
обстановка – իրադրություն
оптимизация – օպտիմալացում
ориентир – կողմնորոշիչ
осведомленность – см. *информированность*
осмотр – 1. դիտում, 2. քննում, 3. ստուգում
– осмотр места – տեղազննություն
– осмотр местности – տեղազննություն
отбор – ընտրազատում
отклонение – շեղում
отслоение – շերտավորում
передача информации – см. *информация 2*
перезагрузка – վերաբեռնում
поведение – վարք
– аутоагрессивное поведение – ինքնագրեսիվ վարք
– аутодеструктивное поведение – ինքնախեղիչ վարք
– криминогенное поведение – քրեածին վարք
– линия поведения – վարքագիծ
– причинность криминогенного поведения – քրեածին վարքի պատճառականություն
подавление – ճնշում
подчиненность – ենթակարգություն
показатель – ցուցանիշ
положение – 1. դրություն, վիճակ, 2. դրույթ, 3. կանոնադրություն, 4. դիրք
полоса – 1. շերտ, 2. զոլ, 3. գոտի
порок – արատ
порочные нравы – արատավոր բարքեր
порядок – 1. կարգ, 2. կարգուկանոն, 3. հաջորդականություն
правонарушение – իրավախախտում
правопорядок – իրավակարգ
правосознание – իրավագիտակցություն
предельно малая высота – սահմանային փոքր բարձրություն
предназначение – նախանշանակում
предотвращение – կանխում
предприимчивость – см. *инициативность*
пресечение – см. *предотвращение*
признак – հայտանիշ
приоритет – գերակայություն
проступок – կարգազանցություն
процедура – ընթացակարգ
психическая травма – հոգեխոցվածք
психоэмоциональное состояние – հոգեհուզական վիճակ
радиоактивность – ռադիոակտիվություն
разнарядка – կարգադրագիր
разумная оборона – խելամիտ պաշտպանություն
расслоение – շերտավորում

рассмотрение – դիտարկում, քննարկում
рассудок – դատողություն
рассуждение – դատողություն
режим – 1. վարչակարգ, 2. ռեժիմ, 3. աշխատակարգ, 4. բանելակարգ
риторика – 1. ճարտասանություն, 2. հռետորաբանություն
рудный пласт – հանքաշերտ
самовыражение – ինքնարտահայտում
самоочищение – ինքնամաքրում
священная война – սրբազան պատերազմ
сдвиг – շեղում
симптом – հայտանիշ
симуляция – կեղծագործում
синоптика – եղանակագիտություն
слоение – շերտավորում
собеседование – քննազրույց
состав преступления – հանցակազմ
социализация – սոցիալականացում
социальное расслоение – սոցիալական շերտավորում
спонтанное деление – ինքնաբերական տրոհում
спонтанный распад – см. *спонтанное деление*
стереотип – կարծրատիպ
страта – խավ, շերտ
строительство государства – պետաբենաշինություն
субординация – см. *подчиненность*
суждение – դատողություն
– оценочное суждение – գնահատումային դատողություն
суицидолог – ինքնասպանագետ
текущий прогноз – ընթացիկ կանխատեսում
тревожность – տագնապախռովություն
уведомленность – см. *информированность*
уклад – կացութաձև
формализованный институт – ձևարկված հաստատություն
формат – ձևաչափ
функционирование – գործառում
ценностная система – արժեքային համակարգ, արժեհամակարգ
цифровая технология – թվային տեխնոլոգիա
экспертиза – փորձաքննություն
экстраполяция – արտարկում

ENGLISH-ARMENIAN DICTIONARY

analogizing – նմանակում
anxiety – տագնապախռովություն
approbation – փորձաքննություն
Armenocidal activity – հայաջինջ գործունեություն
Armenophobia – հայատեցություն
aspect – 1. տեսակետ, 2. առում
assembly – ռազմահավաք
authoritarianism – անհատապաշտություն
authoritative system – անհատապաշտական համակարգ
awareness – տեղեկացվածություն
band – 1. ժապավեն, 2. ավազակախումբ, 3. շերտ
battle – մարտական
– battle training – see *warfare skills*
battle-array – see *order of battle*
behavior – վարք
– autoaggressive behavior – ինքնագրեսիվ վարք
– causality of criminogenic behavior –

քրեածին վարքի պատճառականություն
– criminogenic behavior – քրեածին վարք
– mode of behavior – see *line of action*
– self-destructive behavior – ինքնախեղիչ վարք
being initiative – see *zeal*
belt – 1. գոտի, 2. շերտ
challenge – մարտահրավեր
citizen in uniform – համազգեստով քաղաքացի
code of conduct – վարքականոն
combat – մարտական
– combat readiness – մարտական պատրաստություն
– combat training – մարտական պատրաստում
competence – իրավասություն
concept – 1. հայեցակարգ, 2. հասկացություն, 3. մտահղացում
conduct – see *behavior*
conflict – 1. հակամարտություն, 2. գժտություն, 3. հակամարտային, 4. գժտային
– conflict element – 1. հակամարտային տարր, 2. գժտային տարր
– conflict situation – 1. հակամարտային իրավիճակ, 2. գժտային իրավիճակ
consideration – 1. դիտարկում, 2. քննարկում, 3. նկատառում
contingent – թվակազմ
consim – նմանարկումային խաղ
corpus delicti – հանցակազմ
criminalisation – քրեականացում
criminalistics – քրեաբանություն
criterion – չափանիշ
data – տվյալ
– database – տվյալների շտեմարան
– data entry – տվյալների մուտքագրում
deadaptation – ապահարմարում
decoding – see *decryption*
decryption – ապագաղտնագրում
defect – արատ
defense capability – see *defense potential*
defense potential – պաշտպանունակություն
defense reform – պաշտպանական բարեփոխում
deformation – ձևախախտում
deformity – see *deformation*
delamination – շերտավորում
destructive cult – քայքայիչ պաշտամունք
deviation – շեղում
digital technology – թվային տեխնոլոգիա
disciplinary company – կարգապահական վաշտ
discipline – 1. կարգապահություն, 2. կարգասիրություն
dissociative disorder – մտացրումային խանգարում
dose – չափաբաժին
duty – 1. պարտականություն, 2. կարգաղրագիր, 3. վերակարգ
exfoliation – շերտավորում
expertise – փորձաքննություն
extrapolation – արտարկում
fighting – մարտական
foliation – շերտավորում
forensic science – քրեաբանություն
formalized institution – ձևարկված հաստատություն
format – ձևաչափ
functioning – գործառում
game – խաղ
– pathway game – հաջորդակից խաղ
– simulation game – see *consim*

– strategic war game – ռազմավարական խաղ
getting rid of smoking – ծխախոտազերծում
globalization – համընդհանրացում
guideline – see *landmark*
hard-copy form – see *treeware*
hierarchy – աստիճանակարգվածություն
holy war – see *sacred war*
human security – մարդու անվտանգություն
identification – նույնականացում
identity – նույնականություն, ինքնություն
ideologization – գաղափարախոսականություն
ideologizing – գաղափարախոսականացվածություն
ideology – գաղափարախոսություն
imitation – նմանարկում
implementation discipline – see *implementation standard*
implementation standard – կատարողական կարգապահություն
index – ցուցանիշ
indicator – ցուցանիշ
informant – իրազեկիչ
information – տեղեկույթ
– classification of information – տեղեկույթի գաղտնիացում
– extraction of information – տեղեկույթի արտազատում
– information sharing – see *informing*
– information warfare – 1. տեղեկատվական պատերազմ, 2. տեղեկութային պատերազմ
informativeness – տեղեկունակություն
informatization – 1. տեղեկութացում, 2. տեղեկութավորում
informer – իրազեկիչ
informing – տեղեկատվություն
infringement of law – իրավախախտում
initiativeness – see *zeal*
innere fuhrung – see *internal leadership*
instability – անկայունություն
institutionalization – 1. սահմանակարգում, 2. հաստատութենացում
interaction – փոխգործություն
interlocution – see *interview*
internal leadership – ներքին ղեկավարում
interview – 1. հարցազրույց, 2. քննազրույց
intolerance – անհանդուրժողություն
irradiation – see *radiation*
judgement – 1. դատավճիռ, 2. դատաքննություն, 3. see *opinion 2*
– evaluative judgement – գնահատումային դատողություն
juridical consciousness – see *legal awareness*
justification – see *motivation*
knowledge of God – աստվածաճանաչողություն
landmark – կողմնորոշիչ
legal awareness – իրավագիտակցություն
legally defined crime – see *corpus delicti*
lifestyle – կացութաձև
line of action – վարքագիծ
maneuver – տարաշարժ, զորաշարժ
military – 1. զինվորական, 2. ռազմական, 3. ցամաքազորային, բանակային
– military campaign – ռազմարշավ
– military leadership – զինվորական առաջնորդություն
mine – 1. ական, 2. խավ

minimization – նվազարկում
mission – 1. առաքելություն, 2. ներկայացուցչություն, 3. առաջադրանք, 4. նախանշանակում
monitoring – մշտազննում
monopoly right – մենաշնորհային իրավունք
moral and psychological – բարոյահոգեբանական
– moral and psychological atmosphere – բարոյահոգեբանական մթնոլորտ
– moral and psychological degradation – բարոյահոգեբանական հետաճ
– moral and psychological state – բարոյահոգեբանական վիճակ
– moral and psychological support – բարոյահոգեբանական ապահովում
motivation – շարժառիթավորում
muster – see *assembly*
nap – see *pile*
nap-of-the-earth – սահմանային փոքր բարձրություն
new formation – նորագոյացություն
new growth – see *new formation*
nowcasting forecast – ընթացիկ կանխատեսում
observation – դիտում, դիտարկում
opinion – 1. կարծիք, 2. դատողություն
optimization – օպտիմալացում
order – 1. հրաման, 2. կարգադրագիր, 3. կարգ, 4. կարգուկանոն
– breach of order – կարգազանցություն
– law order – իրավակարգ
– legal order – see *law order*
– order of battle – մարտակարգ
– violation of order – see *breach of order*
peacekeeping – խաղաղապահական
peacemaking – խաղաղարարական
pile – խավ
predestination – see *mission 4*
prevention – կանխում
priority – գերակայություն
probing – see *sensing*
procedure – ընթացակարգ
proneness to conflict – հակամարտայնություն
psychic trauma – հոգեխոցվածք
psychoemotional state – հոգեհուզական վիճակ
purpose – 1. նպատակ, 2. see *mission 4*
quartering – զինծառայողների բնակավորում
radiation – 1. ճառագայթում, 2. ճառագայթահարում
radioactivity – ռադիոակտիվություն
rapprochement – վերաբեռնում
rational defense – խելամիտ պաշտպանություն
reason – 1. պատճառ, 2. դատողություն
reasoning – դատողություն
rebooting – վերաբեռնում
reciprocal cooperation – փոխհամագործակցություն
regime – վարչակարգ
reloading – վերաբեռնում
rhetoric – 1. ճարտասանություն, 2. հռետորաբանություն
role playing – դերային խաղ
sacred war – սրբազան պատերազմ
selection – ընտրազատում
selectiveness – see *selectivity*
selectivity – ընտրողականություն
self-expression – ինքնարտահայտում
self-purification – ինքնամաքրում
sensing – խորազննում
setup – see *lifestyle*
share – բաժնեմաս
shift – 1. շեղում, 2. տեղափոխում
sign – հայտանիշ
simulation – կեղծագործում
situation – իրադրություն

smoking addiction – ծխախոտամոլություն
social differentiation – սոցիալական շերտավորում
socialization – սոցիալականացում
speechcraft – see *rhetoric*
spiritual make-up – հոգեկերտվածք
spontaneous fission – ինքնաբերական տրոհում
spot inspection – see *spot review*
spot review – տեղազննություն
state-building – պետութենաշինություն
statehood – պետականություն
state-like organization – պետութենակերպ կազմակերպություն
stereotype – կարծրատիպ
strata – խավ, շերտ
stratification – շերտավորում
– social stratification – see *social differentiation*
stratum – խավ
stratum of ore – հանքաշերտ
strip – 1. շերտ, 2. զոլ
subordination – ենթակարգություն
suicidologist – ինքնասպանագետ
suppression – ճնշում
symptom – see *sign*
thesis – դրույթ
treeware – թղթային կրիչ
uneasiness – տագնապախռովություն
value system – արժեքային համակարգ, արժեհամակարգ
version – մեկնակերպ
vice – 1. տեղակալ, 2. արատ, 3. աքցան
vicious habits – արատավոր բարքեր
violation of law – see *infringement of law*
volitional sphere – կամային ոլորտ
warfare skills – մարտական պատրաստականություն
weather forecasting – եղանակագիտություն
world outlook – աշխարհայացք
world-view – see *world outlook*
xenophobia – օտարատեցություն
zeal – նախաձեռնողականություն
zone – 1. գոտի, 2. շերտ

ԳԻՏԱԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ռ. Վ. Աղուզումցյան, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,
Ն. Հ. Առաքելյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Լ. Ս. Արզումանյան, բանասիրական գիտությունների դոկտոր,
Գ. Ե. Բաղդասարյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Ս. Ա. Գալստյան, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Ս. Գ. Գալստյան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Հ. Ա. Գևորգյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Կ. Ս. Դանիելյան, կենսաբանական գիտությունների թեկնածու,
աշխարհագրական գիտությունների դոկտոր,
Բ. Ն. Հարությունյան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Վ. Մ. Հարությունյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Հ. Հ. Մաթևոսյան, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
Ա. Հ. Մանթաշյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Մ. Մ. Մարգարյան, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Է. Գ. Մինասյան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Մ. Մ. Միրիջանյան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Կ. Ս. Մոսոյան, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Յու. Ս. Չիլինգարյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Ռ. Ա. Սաֆրաստյան, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
Ա. Հ. Սիմոնյան, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
Հ. Ս. Սիսակյան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

НАУЧНО-КОНСУЛЬТАЦИОННЫЙ СОВЕТ:

Р. В. Агузумцян, кандидат психологических наук, доцент;
Н. У. Аракелян, академик НАН РА;
Л. С. Арзуманян, доктор филологических наук;
Б. Н. Арутюнян, доктор медицинских наук, профессор;
В. М. Арутюнян, академик НАН РА;
Г. Е. Багдасарян, академик НАН РА;
С. А. Галстян, доктор филологических наук, профессор;
С. Г. Галстян, доктор медицинских наук, профессор;
Г. А. Геворкян, академик НАН РА;
К. С. Даниелян, кандидат биологических наук, доктор географических наук;
А. А. Манташян, академик НАН РА;
М. М. Маргарян, доктор политических наук, профессор;
Г. Г. Матевосян, член-корреспондент НАН РА;
Э. Г. Минасян, доктор исторических наук, профессор;
М. М. Мириджанян, доктор медицинских наук, профессор;
К. С. Мосоян, доктор технических наук, профессор;
Р. А. Сафрастян, член-корреспондент НАН РА,
А. Г. Симонян, член-корреспондент НАН РА,
А. С. Сисакян, доктор медицинских наук, профессор;
Ю. С. Чилингарян, академик НАН РА

SCIENTIFIC-ADVISORY COUNCIL:

R. V. Aghouzoumtsian, Candidate of Psychological Sciences, Docent;
N. H. Arakelian, Full Member, NAS RA; *L. S. Arzumanyan,* Doctor of Philology;
G. Y. Baghdassarian, Full Member, NAS RA; *Yu. S. Chilingarian,* Full Member, NAS RA; *K. S. Danielyan,* PhD in Biology, Doctor of Geography;
S. A. Galstyan, Doctor of Philology, Professor;
S. G. Galstyan, Doctor of Medical Sciences, Professor;
H. A. Gevorkian, Full Member, NAS RA; *B. N. Harutyunyan,* Doctor of Medical Sciences, Professor; *V. M. Haroutyounian,* Full Member, NAS RA;
A. H. Mantashian, Full Member, NAS RA;
M. M. Margaryan, Doctor of Political Sciences, Professor;
H. H. Matevosyan, Corresponding Member, NAS RA;
E. G. Minasyan, Doctor of Historical Sciences, Professor;
M. M. Miridjanian, Doctor of Medical Sciences, Professor;
K. S. Mossoyan, Doctor of Technical Sciences, Professor;
R. A. Safrastyan, Corresponding Member, NAS RA;
A. H. Simonyan, Corresponding Member, NAS RA;
H. S. Sissakian, Doctor of Medical Sciences, Professor

Ի գիտություն հեղինակների և ընթերցողների

ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսն ընդգրկված է ԲՈՀ-ի կողմից հաստատված «Դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների արդյունքների հրապարակման համար ընդունելի ամսագրերի ցանկում»:

Հոդվածները պետք է ներկայացվեն հայերեն լեզվով, երկու օրինակով՝ շարված 1,5 ինտերվալով, մինչև 10 համակարգչային էջ ծավալով, հոդվածին կից պետք է լինեն նրա ռուսերեն և անգլերեն ամփոփումները մինչև 2 էջ ծավալով:

Հեղինակները պետք է վկայակոչեն օգտագործված առավել կարևոր աղբյուրները:

Հեղինակները պատասխանատու են հոդվածներում բերվող փաստերի հավաստիության և գաղտնիության պահանջների պահպանման համար:

Հեղինակների դիրքորոշումը պարտադիր չէ, որ համընկնի խմբագրության դիրքորոշման հետ:

Դիագրամները, սխեմաները, գծագրերը, նկարները, լուսանկարները պետք է լինեն հստակ, տպագրության համար պիտանի:

Հոդվածներում պետք է վերծանված լինեն օգտագործվող ռազմամասնագիտական հապավումները:

Ձեռագրերը հետ չեն վերադարձվում:

Հոդվածները հրապարակվում են պարտադիր գիտական փորձաքննություն անցնելուց հետո:

Նյութերի մասամբ կամ ամբողջությամբ արտատպումը թույլատրվում է միայն խմբագրության գրավոր համաձայնությամբ:

К сведению авторов и читателей

Военно-научный журнал Института национальных стратегических исследований им. Д. Канаяна МО РА «Айкакан банак» включен в утвержденный ВАК-ом «Список приемлемых журналов для публикации результатов докторских и кандидатских диссертаций».

Статьи следует представлять на армянском языке, в двух экземплярах, в пределах 10 компьютерных страниц, напечатанных в 1,5 интервала, с приложением резюме на русском и английском языках объемом до 2-х страниц.

Авторы должны давать сноски на использованные наиболее важные источники.

Авторы ответственны за достоверность и несекретность фактов, приводимых в статьях.

Позиции авторов не обязательно совпадают с позицией редакции.

Диаграммы, схемы, чертежи, рисунки, фотоснимки должны быть исполнены в четком изображении, пригодными для печати.

В статьях должны быть раскрыты употребляемые военно-специальные аббревиатуры.

Рукописи не возвращаются.

Статьи публикуются после прохождения обязательной научной экспертизы.

Перепечатка частично или полностью материалов допускается только с письменного разрешения редакции.

For the information of the authors and readers

Defense-academic journal «Haikakan banak» of Drastamat Kanayan Institute for National Strategic Studies of the Defense Ministry of the Republic of Armenia is included into «The list of acceptable magazines for the publication of the results of doctors and candidates' dissertations», affirmed by the Superior Attesting Commission.

The articles should be submitted in Armenian. Please, supply two copies. Articles are to be 1,5 spaced and should not exceed 10 computer pages in length. Provide Russian and English summaries (2 pages maximum).

Authors should give footnotes for the sources used.

Authors are responsible for the accuracy and the non-confidential nature of the facts given in the articles.

Opinions expressed herein are those of the authors and are not necessarily those of the editorial board.

Diagrams, schemes, drawings, pictures and photos should be of clear print quality.

Please explain special military acronyms.

Manuscripts are not returned.

Articles get published after obligatory scientific examination.

Partially or fully re-printing of materials is allowed only by written permission of the editorial staff.

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

Պատասխանատու քարտուղար՝ *Տ. Մ. Անտոնյան*
Ռազմագիտական խմբագրման բաժնի պետ՝ *Զ. Դ. Ասատրյան*
Թարգմանչության և խմբագրման բաժնի պետ՝ *Ա. Մ. Մովսիսյան*
Տեխնիկական բաժնի պետ՝ *Վ. Ռ. Խալաֆյան*

Ձևավորող նկարիչ՝ *Դ. Ա. Փարվանյան*

Լուսանկարիչ՝ *Ա. Դ. Ներսիսյան*

Տեխնիկական խմբագրումը՝ *Վ. Ռ. Խալաֆյանի*

Տեքստերի թարգմանությունը՝ *Ն. Ս. Մկրտչյանի, Լ. Հ. Պապիկյանի, Ք. Վ. Փիրոյանի*

Համակարգչային ապահովումը՝ *Ա. Ա. Խաչատրյանի, Ս. Ռ. Հակոբջանյանի, Ա. Հ. Սարուխանյանի*

Սրբագրիչ՝ *Ն. Հ. Բաղդասարյան*

Խորհրդատվություն անգլերեն տեքստերի վերաբերյալ՝ *Մ. Ս. Ավետիսյանի, Ա. Հ. Հակոբյանի, Ա. Ա. Մարտիրոսյանի*

Խմբագրության հասցեն՝ Երևան, Կ. Ռիլնեցու փողոց, 56/6, հեռ. 28-54-25, 28-12-94
Էջ ՀՀ ՊՆ կայքում՝ http://www.mil.am/arm/index.php?page=105
Պաշտոնական բլոգ-կայք՝ http://razmavaraget.wordpress.com
Էլ. փոստ՝ haykakanbanak@mil.am

© ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2014 թ.

Ստորագրվել է տպագրության 14.10.2014: Թուղթը՝ օֆսեթային: Ձևաչափը՝ 70×100 1/16:
Տեքստը՝ 264 էջ + 8 էջ ներդիր: Պայմանական տպագրական 19,5 մամուլ: Տպաքանակը՝ 500:
Տառատեսակները՝ «Արիալ», «Թայմս» և «Բալթիկա»: Տպագրությունը՝ օֆսեթ:
Վկայական՝ 523: Դասիչ՝ 69263: ISSN 1829-0108

Տպագրվել է «Աստղիկ» և «Լիմուշ» տպարաններում

ՀՀ Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը
և կորպուսի հրամանատար գեներալ-մայոր Իշխան Մաթևոսյանը (ձախից՝ երկրորդը)
սահմանամերձ գոտում գտնվող մարտական հենակետում.

2014 թ. սեպտեմբերի 9

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

АЙКАКАН БАНАК HAIKAKAN BANAK 3 – 4(81 – 82). 2014